



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

11944

338.4

K-25

25

Printed in Turkey

2001

2010



Printed in Turkey

Ա. ՌԵԻՏՐԱԿԱՆ

ԵՒ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

338.4  
u-25  
u.f.

Printed in Turkey

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԻՈՅ

ԵՒ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ՅԵՒՐՈՊԱ ԵՒ ՅԱՍԻԱ

ԵՐԿԱՍԻՐԵՑ

ՊԵՏՐՈՍ ՎԵՐ ԱԶՆԱԻՈՐ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1875

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ  
Չազմագեղար, Յակոբեան խան քիւ 12.

40367-աե.

Printed in Turkey

Ն Ա Խ Ա Շ Ա Ի Դ

Վանառականութեան արուեստին վերաբերեալ, որ պատուան օրս, հաստատուն գիտութեանց իբրեւ ճիւղ դասուած է, թէ յերոպա եւ թէ ուրիշ երկիրնիր բազմաթիւ հաստներ հրատարակուած են, որոց նպատակն եղած է առեւտրոյ գաղափարները ամեն ազգաց մէջ ազատաբար ծաւալել, Մեր ազգին մէջ ալ քանի մը սկզբնական գրուածք կը գտնուին: — Այս գիտութեանց մէջ աշխարհագրութիւնն ալ նշանաւոր տեղ մը կը բռնէ, մանաւանդ առեւտրական եւ արուեստագիտական աշխարհագրութիւնը:

Համազգային պատանեաց օգտակար ըլլալու փափարով ջանացիներ լեցնելու պատրաստ մը որ շատ զգալի եղած էր մերայնոց մէջ. ուստի համարձակեցանք ի յոյս ընծայել, առեւտրական եւ արուեստագիտական աշխարհագրութեան հաւարածոյ մը, որ հնգամեայ աշխատանց արդիւնք կը պարունակէ:

Իրուածքիս նիւթք են՝ եւրոպական ամեն տէրութեանց հողոյն բազմաթիւութեան ասիանը, բերքը, կլիմայն, առեւտուրն, կարեւոր գործարանքը, վանառաշահ քաղաքք եւ նաւահանգիստք, դրամատունք, դրամք, չափք եւ կշիռք: Եւրոպիոյ գործարանաց արդիւնքք եւ անոնց սպառման տեղիքք, եւ փոխադարձաբար այն գործարանաց հարկաւոր նախնական նիւթքն ու անոնց բնատեղիքք:

Առեւտրական պատմութեան համառօտ տեսութիւն մը նախադուռն եղած է գրութեանս:

Այս հատորով մի միայն եւրոպիոյ վրայ ընդլայնեցանք, — յայտմասին համամիտ բոլորովին առեւտրոյ մէջ գտնուող անձանց խորհրդոյն. — վասն զի եւրոպա գրեթէ աշխարհիս համբարանոցը եւ ամենուն հոգաբարձուն եղած է: —



24207-60

(164  
39)

Եթէ ազգն ալ օժանդակ ըլլայ մեր դժուարին ձեռնարկութեան եւ գովելի եռանդով մը քաջալերէ զմեզ, անստակոյս երկրորդ հասոր մը յաջորդ կ'ըլլայ յառաջիկայիս, որուն մէջ հողագնսոյն միւս չորս մասերու առեւտրոյն եւ բերող վրայ երկարօրէն կը խօսինք. որոց վրայ համառօտիւ այս հասորին մէջ ալ տեղեկութիւնք տրուած են :

Ընթերցողաց եւ ուղեւորաց դիւրութեան համար, ամեն երկրի յասուկ անուանքը իրենց տեղական հնչմամբքը գրուած են :

Ձմռաննք այս ալ յաւելելու թէ ճանապարհորդը եւս երկաթուղեաց ցանցակերպ մը կրնան զսնել գրքիս մէջ:

Տաճկաստանի մասին գալով՝ դիւրին է մակարեծել թէ ինչ դժուարութիւններ ունեցած ենք տեղեկութիւն հաւարելու, բնագմակնծիւն ըլլալով այս երկրին աշխարհագրութիւնը, չկարենալով զսնել մանաւանդ նախնեաց մը, կամ գոհացուցիչ գիրք մը, որուն կարենայինք հետեւիլ. — Ուստի յուսամ թէ մեր այս հնգամեայ աշխատութիւնը զոնէ առ այժմ օգտակար պիտի կարենայ ըլլալ : Հիմակու հիմայ միայն եւրոպիոյ եւ Ասիոյ Տաճկաստանին վրայ խօսեցանք. եթէ Եգիպտոսը, Առաքիան, Թունուզը եւ բոլոր Ափրիկիոյ Տաճկաստանը նկարագրէինք՝ մեր նպատակէն անպատճառ կը հեռանայինք. սակայն Ասիոյ Տաճկաստանը անզատելի կերպով կապուած ըլլալուն եւրոպականին՝ անկարելի էր զանց առնել զայն, մանաւանդ զի այս երկու մասերէն կը ծեւանայ այդ տէրութեան անմիջական ամբողջութիւնը :

Պ. Վ. Ա.



Ազնիւ քարեկամ

Անցեալները ձեր նոր յօրինած վաճառականական Աշխարհագրութիւնն ինծի ընթերցման խրկած էիք խնդրելով որ անոր վրայով կարծիքս յայտնեմ :

Կը փութամ այս մտերմական պարտքը կատարել այնչափ աւելի սիրով որ շատ ընտիր յատկութիւններ նշմարեցի ձեր երկասիրութեան մէջ: Նախ եւ առաջ դրուատեաց արժանի կ'երեւի ինձ ձեր եռանդը որ մեր մատենագրական այս վիճակիս մէջ ձեռնբափ չեղաք ոչ ժամանակի, ոչ տաժանելի աշխատութեան եւ ոչ դրամական գոհողութիւններէ: Գալով բուն իսկ գործոյն՝ ընդհանուր ակնարկութենէ մ'ետեւ՝ այնչափ լիովի գոհացուցիչ երեցաւ ինձի՝ որ կը համարձակիմ այս նիւթիս վրայ եւրոպայի մէջ հրատարակուած որ եւ է արդի գրքերուն հետ դասակցել: Սիրով տեսայ որ օգուտ քաղեր էք քե Ֆոանասցի քե Անգլիացի եւ քե Գերմանացի ու Իտալացի ազգի ազգի նորանոր հրատարակութիւններէն՝ մէջերէն ընտրելագոյն ոճն ընտրելով եւ ամենէն ալ հատրնտիր գիտելիքներ: Ձեր ընթերցած բազմաքիւ հմուտ մատենագիրները որոնց մեկ քանիին միայն անունն էք յիշատակած՝ նիւթոց յորդութեամբը ձեզի բնաւ խառնակութիւն պատճառած չեն, այլ յստակ դրութեան մը մէջ շարայարուելով կատարեալ միտքը յագեցնող պատկեր մը կազմած են: Տաճկաստանի մասին մինչեւ ցարդ ընթերցած չեմ՝ կը խոստովանիմ ոչ այնչափ ընդարձակ ոչ այնչափ ճշգրիտ եւ ոչ այնչափ կարեւոր ընտիր տեղեկութիւններ: Դիւրին է մակարեբել քե անոնք միայն զանազան մատենագիրներէ քաղելով՝ հաւաքած չէք՝ այլ քե տեղւոյս առաջին կարգի վաճառականներէն եւ քե ձեր անձնական փորձառութենէ եւ գործերէն օժանդակած էք:

Թերեւս կարենան ձեզի դիտողութիւն ընել քե ինչու միայն եւրոպայի վրայ խօսած էք: Որչափ ալ աշխարհիս այս մասը երկրիս գործառնութեանց կեդրոնը համարուի

եւ անոր վրայ գրելու առօրէ՛ ուրիշ ամենե՛ն նշանաւոր մատենքն ալ յիշատակելու պատենը ներկայացած ըլլայ՝ ինձ կը բուխ քե աւելորդ աշխատութիւն մը յանձն առած չէք ըլլար երէ գոնէ յաջորդ հատորիւ մը, խօսիք աւելի մանրապատում Միացեալ-Նահանգաց վրայ որոնք իրենց անսահման ազատութեամբն եւ գործունէութեամբն այս-չափ հիւանալի կերպով կը զարգանան, Ամազոնաց գետոյն երկայնքը կատարուած զանազան դեռ նոր խուզարկութեանց վրայ զայն բոլորն ալ նաւարկելի ընելով անոր ամենածիր մեծահարուստ աշխարհներէն օգտելու համար, Աւստրալիոյ եւ նոյն իսկ Ափրիկէի մէկ քանի տեղուանքն հետզհետէ ընդարձակող յարաբերութեանց վրայ, եւլն . եւլն: Ասոնք բերես մեր վաճառականաց նորանոր շաւիղներ պարզեն, կամ ընկերութիւններ կազմելու նպատենն որ ուղղակի այն աշխարհաց հետ գործելով՝ Եւրոպայի լծէն մասամբ գմեզ ազատեն եւ հարստութեան ու գործոց նոր ճամբաներ յորդեն մեր աշխատասիրութեանը:

Ինչ որ ալ ըլլայ ձեր երկասիրութիւնը ընտիր գործ մ'է որ ձեզի պատիւ եւ ազգիս օգուտ կը բերէ, ուստի եւ անոր յաջող ընդունելութեանը վրայ չեմ տարակուսիր՝ ոչ դպրոցաց մէջ միայն այլ նաեւ վաճառականութեան պարագոյդ կամ զայն յարգող անձանցմէ: Լեզուի մասին ալ գովելի ջանքեր ըրած էք զանազան հայերէն անուանքը գտնելու՝ որոնք մինչեւ ցարդ ոչ մէկ բառագրոց մէջ չէին գտնուեր: Նոյնպէս ընտիր գաղափար մ'ունեցեր էք իւրաքանչիւր աշխարհաց ամեն յատուկ անուանքը այն երկրին հնչմանը համեմատ ղենլ' որ շատ ողջամիտ խորհուրդ մը կ'երեւայ:

Կը յուսամ ի շահ հասարակաց՝ որ ձեր այս նոր մատենագրական փորձը պիտի յորդորէ գձեզ զանազան այլ եւս այսօրինակ գործոց ձեռնարկելու որոց ամենուն ալ յաջողութիւնը մաղթելով՝

Մնամ ձերդ


Թ. ԹԷՐԶԵԱՆ

# Յ Ա Ն Կ

	<i>Երես</i>
<b>Համառօտ պատմութիւն վաճառականութեան.</b>	<b>4</b>
Եւրոպիոյ գործարանաց գնած ու վաճառած ապրանք . . . . .	48
<b>Սեզղիա . . . . .</b>	<b>23</b>
<b>Շուես եւ Նարվեկիա . . . . .</b>	<b>64</b>
<b>Տանիմարգա . . . . .</b>	<b>76</b>
<b>Պելնիա . . . . .</b>	<b>83</b>
<b>Հոլանտա . . . . .</b>	<b>93</b>
<b>Դաղդիա . . . . .</b>	<b>102</b>
<b>Ջուիցերա . . . . .</b>	<b>139</b>
<b>Աւստրիա . . . . .</b>	<b>148</b>
<b>Գերմանիա . . . . .</b>	<b>162</b>
» Ալգաս եւ Լորեն . . . . .	190
<b>Սպանիա . . . . .</b>	<b>193</b>
<b>Բորդուգալ . . . . .</b>	<b>212</b>
<b>Ռուսաստան . . . . .</b>	<b>221</b>
<b>Յունաստան . . . . .</b>	<b>249</b>
<b>Իտալիա . . . . .</b>	<b>256</b>
<b>Տանկաստան Եւրոպիոյ . . . . .</b>	<b>285</b>
» Սահման ծովափունք . . . . .	284
» Յամոտային սահմանագլուխք, հրուանդանք եւ կղզիք . . . . .	286
<b>Եւրոպիոյ Տանկաստանի լեռնք, ծովք, ծոցք, նեղուցք քեք . . . . .</b>	<b>287</b>
Լինք, ցամաքային ուղղիք . . . . .	289
Երկաթուղիք, հեռագիր . . . . .	290
Նաւարկութեան վիճակը . . . . .	294
<b>Ասիոյ Տանկաստանի սահմանք, ծովք, լեռնք, քեք . . . . .</b>	<b>294</b>

	<i>Երև</i>
Լինք, երկաթուղիք, էլեկտրական հեռագիր, ծովեզերք և ցամաքային սահմանագիծք. ....	295
Օսմանեան պետութեան առեւտուր, բերք, վաճառա- բերութիւնք, վաճառահանութիւնք և առուեսք	296
Քուրդ .....	303
Վարդի իւղ .....	306
Կապեք .....	309
Ափիոն .....	311
Մազաք .....	315
Բամբակ .....	»
Խոզկաղին .....	320
Գլխոք .....	321
Ալաժար .....	322
Տորոն .....	323
Զիքոյ իւղ, ձէք .....	»
Խաղող և բազար .....	325
Թուղ .....	327
Գազի խէժ .....	528
Կննիք .....	»
Կանեփ և սեւ կորեակ .....	329
Օնառ, հաննային ջրեր, սգրուկ .....	»
Մեղք մեղրամոմ .....	330
Արմսիք .....	331
Մխախոս .....	332
Հիւանի ցիւքք, մեքաք ևն. ....	335
Մեքաղ .....	338
Մովափրիւր .....	342
Կենդանիք .....	343
Մաշկեղէնք .....	344
Եկրաքանութիւն և եկրազորութիւն. ....	346
Ալգեսան, գինի և մասքիք .....	345
Առուեսք .....	348

	<i>Երև</i>
Եւրոպիոյ և Ասիոյ Տանկասանի վաճառաւան ևս- ւանանգիւսք .....	349
Եւրոպիոյ Տանկասանի ներքին վաճառաւան քաղաքք .....	361
Ռումանիա .....	365
Սերվիա .....	367
Գարասաղ .....	368
Ասիոյ Տանկասանի վաճառաւան ներքին քաղաքք .....	369
Կղզիք .....	373
Գրաքք, չափք և կէիւք .....	376



Վ Ր Ի Պ Ա Կ Ք

Ուղիղ	Սխալ	երես	սող
չուխա	չուխա	9	24
զազի	զաչի	19	19
մի □ հզմղր.	մի հզմղր.	23	6
Կըռնզի	Կըռնչի	24	30
քաօլին	Քաօլին	28	15
զօդ	զօդ	30	20
որոնց	որ նց	32	7
Ֆուլգսղըն	Ֆսլգսղըն	33	16
տակառաչափ	աակառաչափ	35	2
սիւնօրէն	սիւնեբէն	38	18
բամբակեայ	բամպակեայ	42	21
Worcester	Woucester	56	13
s/	s	61	
Հօպրիօն	Նօպրիօն	124	18
Ռուանի	Ռուանիի	129	35
Սալցպուրկ	Սալցպո րկ	159	3
Պրէսլաւ	Պրիսլաւ	179	11
վաճառականութեամբը	վաճառականութեամբը	207	21
Բորդուգալ	Բորրուգալ	217	9
ichthyocolle	ichhyocolle	231	27
Լէսպոս	Լիսպոս	250	27
արևելից	րևելիցա	271	27
Տանկաստանի	Տանկաստանի	286	18
Իւսկիտար	Իւսկիտար	295	18
Կէմլէիք, Իզնիմիտ, Մու- տանիա	Կէմլէիք, Մուտունիա	»	24
Էրէկլի. Բիրասուն Թրա- պուզան	Էրէկլի, Բիրասուն	»	23
$\frac{5}{8}$ բաշի	$5 \frac{5}{8}$ բաշի	314	»
(տես § 4 <sup>o</sup> և 5 <sup>o</sup> )	(Տես § )	361	
Նոսդի (Saumon)	Նոսդի	52	27

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

□	Քառակուսի
§	Հատած. պարբերութիւն.
50 <sup>o</sup>	Յիսներորդ աստիճան.
Ել. հզր.	Ելեքտրական հեռագիր.
Հզմղր.	Հազարամէղր.
Ս. Լ.	Սդէրլին լիրա.
Ֆո.	Ֆոանց.
մ. կ.	Մէղրական կենդանար.
Բն.	Բնակիչ.
Մկւթ.	Մակերեւոյթ.
Տկուչի.	Տակառաչափ.
Վճուկն.	Վաճառական.
Հզիրմ.	Հազարակրամ.
Հրկրմ.	Հարիւրակրամ.
Մ.	Մէղր.
Սկր.	Սիւպէրկրօշէն
Դն.	Դանճեկան.
Տ.	Տէօնիւմ.
Խորնրդ.	Խորանարդ.
Զի.	Զիրա.
Բրմ.	Բարմազ.
Հզդ.	Հազդ.
Նօգ.	Նօգժա.

# Մ Ո Ւ Տ Ք

## Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

### Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

**Թ** ՈՒԻ Թէ Հնդկաստան վաճառականութեան որրոցն եղած ըլլայ, ինչպէս նաև եղած է արուեստից, գիտութեանց և ճարտարութեանց՝ որոնք մեր մէջն մտնելով կատարելագործուած են: Վաճառականութեան սկզբանց զաղափարն ունենալու համար պէտք է Հնդկաստանի մէջ առևտրոյ յառաջադիմութիւնն և շարունակ զարգացումն քննել: Հին զրբերն Արևելից ազգերն կը հռչակեն իրենց հմտութեանը, տաղանդին և բերքերուն համար՝ զորոնք ուրիշ ազգերը շատ կը յարգէին:

Պատմութեան ամենահին ժամանակաց մէջ՝ մի միայն ցամաքային հաղորդակցութիւններն կը ճանչնային և իրենց հարկաւոր կենդանիներն պէտք էր գտնել: Նոյն ժամանակն ուղտն ամենէն աւելի օգտակար եղաւ: Մեզի գլխաւոր վկայ, Ծնընդոց զիւրբն, որ կը պատմէ Թէ Իսրայելացիք և Յովսէփը զնոյ վաճառականներն ուղտեր ունէին: Ուղտն անխոնջ, համբերատար և լաւ բեռնակիր անասուն ըլլալովն՝ վաճառականը կրցան նաև ծանր բեռներով անապատներ անցնիլ: Ահա այս կերպով կը կատարուէր Արևելից վաճառականութիւնն, մասնաւորապէս Արաբիոյ ծոցին մերձակայ ազգերուն մէջ:

Նախ և առաջ՝ այս ճամբորդութիւններն երկիւղալից և բաղտախնդիր անձինք սկսան. բայց յետոյ անոնց ապահովութեան և հասնատութեանը վստահելով՝ բազմաթիւ վաճառականաց խմբեր, որոշեալ ժամանակներու մէջ ժողովեցան և զնայուն ընկերութիւն մը ձևացուցին՝ որ մինչև հիմա կարաւան անունը կը կրէ: — Կարաւանները՝ ընտիր զլուխներ ունին և կանոններու հպատակուած են: — Այնպիսի ճամբորդութիւններ կ'ընէին, որոնց տեղորութիւնն և երկայնութիւնը կը զարմացնէին այն ազգերը, որ այսպիսի վաճառականութեան վարժած չէին:

Այսպիսի ուղևորութիւններէ առաջ եկող վտանգը և խոնջը՝ դատել տուին մարդկան թէ՛ ծովու ճամբան աւելի յարմար կրնար ըլլալ շատ առիթներու մէջ, աշխարհիս այլևայլ կողմերու հետ հաղորդակցութիւննին դիւրացնելով: Նաւարկութեան առաջին փորձերն Միջերկրականի վրայ և Արաբիոյ ծոցին մէջ կատարուեցան: Ափրիկէ, Ասիա և հարաւային Եւրոպա ազատ էին: Տիւրքսի և Սիդոնի փիւնիկեցի բնակիչք՝ առաջին նաւաչուն ղէպ ի Հնդկաստան ըրին:

Առաջին աշխարհակալութիւննին Ռինոզովիւր (Rhinocele) եղաւ, Արաբիոյ ծոցին և Միջերկրականի ամենէն մօտ նաւահանգիստն. անտի Արևելից բերքերը՝ տիեզերաց նոյն ժամանակեայ ծանօթ մասերուն տարին: Գաւթի և Սողոմոնի Թագաւորութեան ժամանակ Հրէայք ալ մասնակից եղան վաճառականութեան, թէ Գասիոնգաբերի տիրելով և թէ Տիւրքսի Թագաւորին հետ մտերմութիւն ունենալով: Եւ Սողոմոն կարող եղաւ ծովու նաւարկութեան հմուտ նաւորդներով իր նաւատորմիդը մինչև Թարսիս և Ուփիր դրկելու: Այս նաւատորմիդը՝ ինչուան Սովիբերայ Թագաւորութիւնն կ'երթար (Ափրիկիոյ հարաւային արևելեան ափանց վրայ, ճոխ ոսկեհանքով և արծաթահանքով լի երկիր մը, որ նաև առատապէս ուրիշ ապրանք ալ կ'ընծայէր), ուսկից հրէից նաւերը կը բառնային: Կը պատմուի թէ ժամանակաւ այն հանքերն առատելական գումարներ տուած են Հրէից և թէ այն հարստութեամբ կանգնուած էր Երուսաղեմայ աշխարհածանօթ տաճարն: Սողոմոն

անձամբ այցելութեան ելաւ հօրը կալուածոց. ամբացուց եղովդը և Գասիոնգաբերը. և նաւատորմիկն վրայ այն երկիրներէն արքորած մարդիկը ղնել տուաւ, որոնք իր աշխարհակալութիւններէն ետքը՝ Տիւրքոս և Սիդոն քաշուեցան: Առանց անոնց օգնականութեան չէր կրնար յիւրախ իր դիտաւորութիւնները կատարել: Մեծամեծ նաւարկութեանց և ծովային վաճառականութեան նախնական պատիւն Փիւնիկեցոց կ'ընծայուի: Հին ազգաց պատմութեան մէջ՝ միայն Փիւնիկեցիք իրենց աշխարհակալութիւնները զինուր ըրած չեն. մի միայն իրենց վաճառականական յարաբերութեամբըը աշխարհներ ստացան և զանոնք ուրիշ ազգերէ շատ աւելի պահեցին: Բայց զըմբաղդաբար իրենց յարանուան մանրամասն վկայութիւն մը, իրենց ճարտարարուեստից վրայ մատեան մը և նաև իրենց մեծութեան յիշատակարան մը մնացած չէ: Ինչպէս որ Ֆենելոն Տելեմաքին մէջ կը նկատէ, « Ձիւր որ յազգաց անյողողող քան զնոսա, անկեղծ, հաւատարիմ, աներկական և դիւրընկալ օտարաց: Ոչ է պարտ այլ ինչ պատճառս խնդրել. անն պատճառք տիրապետութեան նոցա ընդ ծով, և բարգաւաճանաց տուրևառիկ շահաւէտութեան առ նոսա: »

Յունաստան և նաև յոնիական գաղթականութիւնը իրենց կարգն անցնելէն ետքը՝ Աղեքսանդրի աշխարհակալութիւնըն Հնդկաստանը և Հնդկաց մէկ մասն ծանօթացուցին Եւրոպիոյ: Աղեքսանդրիա քաղաքն նաև ինքն կառուց, որն որ Արևելից և Արևմտից ազգերուն մէջ վաճառականութեան ընդհանուր մթերանոցն եղաւ:

Մինչդեռ եզիպտացիք՝ Աղեքսանդրիոյ միջոցով, առևտրով կը հարստանային, Եւրոպիոյ ազգերն ղեռ վաճառականութեան զբաղած չէին: Երկրագործութեան կ'աշխատէին. միայն Սպանիա յարդի մետաղներ կը փոխէր եզիպտացի ապրանսց հետ:

Ասիոյ մէջ Պարսիկը՝ Հնդկաստանի վաճառականութեան որորոցին մօտ ըլլալով, կը ջանային նաւարկութիւնը խափանել. որովհետև նոյն ժամանակ աշխարհակալութեան առջևն առնել

Յշնամեաց դէմ զիրենք պաշտպանելն էր: Ուստի միայն ցամաքի ճամբով կը շարունակուէր Հնդկաց առատ բերքերուն և զեղեցիկ զործուածոց փոխանցութիւնն:

Վերջապէս հասաւ Հռովմայեցոց կայսրութեան ժամն. Օգոստոս՝ Երիստոսը նուաճեց և հռովմէական զաւառ մ'ըրաւ. Հռովմայեցոց շտալութիւնը և իրենց պաշտպանութիւնն ընդլայնեց վաճառականութիւնը. Հռովմ ճոխացաւ: Պալմիրա՝ Հնդկաստանի ապրանաց փոխանցութեան ճամբան եղած էր: Մարկոս Աւրելիոս, Բրիտանիէից Թուականին 166 տարւոյն՝ Ձինաստանի հետ առաջին տուրևառը փորձեց, Ուն-Իի՝ դեպրաններ ղրկելով, իր յարաբերութիւններն անցընելու դիտաւորութեամբ: Այս առարման վախճանը ինչ եղածն մեզի ծանօթ չէ. բայց այսչափ զիտենք թէ Հռովմայեցիք տուրևառիկ շահաւէտութիւնը շատ կը յարգէին:

Պարսկաստան՝ Պարթևաց Թագաւորութիւնն կործանելէն վերջը, Պարսկային ժոցին մէջ նաւահանգիստներ բացաւ. անտի նաւաչուն շատ աւելի ապահով և կարճատև կըլլար դէպ ի Հնդկաստան. այսպիսով ազգաց մէջ յարաբերութիւններն արագապէս անեցան:

Բայց յետոյ, Պարսից՝ Կոստանդնուպօլսոյ կայսերաց հետ ունեցած թշնամութիւնն և իրենց՝ Հնդկաստանի վաճառականութեան մէջ գտնուող հպատակաց միշտ աճող հակառակութիւնն, մեծ դէպքի մը տեղի տուին, որ վաճառականութեան վերադարձնէր շատ փոխեց:

Ձինաստան մշակող մետաքսն Պարսից վաճառականաց ձեռքն էր, որոնք խիստ բարձր գնով իրենց հակառակորդ Յունաց կը ծախէին: Յուստինիանոս ամէն կերպով ջանաց այս առաւելութիւնը Պարսից ձեռքէն խլելու. բայց անկարելի եղաւ յաջողիլ. սակայն անյուսալի ժամանակ մը՝ հասաւ իր փափաքանացը: Երկու Պարսիկ ճգնաւորք, Ձինաստան բարոզիչ եղած միջոցին, սկսան մետաքսի մշտութեան գրադիլ. յամենայնի տեղեկացան այս ապրանքին վրայ. յետոյ եղէգներու մէջ պահելով՝ առաջին շերամները Կոստանդնուպօլսոյ

բերին, և այս միջատները Յունաստան բուծեցին: Յետոյ Սիկիլիա սկսաւ դարձանուիլ և յետոյ Իտալիա: Այն ժամանակէն ի վեր Արևելք չկրցաւ առջի բանակութեամբ մետաքս հայթայթել Եւրոպոյ:

Նոյն ժամանակներուն Արարացիք հաւատոց զբահն զգեցած՝ սուր ի ձեռին տարածեցին իրենց մարգարէին վարդապետութիւնը, ընդարձակելով իրենց կալուածն՝ Ատլանտեան Ովկիանոսին արևունքէն մինչև Ձինու սահմանը: Երբէք պատմութիւնը այսպիսի արագ յառաջադիմութիւն նշանակած չէ: Մանավանդն նախ և առաջ Եգիպտոսը առին, յետոյ նուաճեցին զՊարսիկա, և եղան միանգամայն մարտիկք և հմուտ վաճառականք:

Տիրեցին մետաքսի մենավաճառանոցին, որ ամէն ժամանակաց յարգի ապրանքն է: Ուղղակի բարբեր երկիրներ գացին և անտի դարուն Թանկագին վաճառքն բերին: Վերջապէս Աղեքսանդրիա՝ արևոյեան ունեցաւ Պարսա քաղաքը, որուն միջոցով Եփրատայ և Տիգրիսի տիրելը և Ձինաստանի վաճառականութիւնը ծաղկեցընելը դիւրինացաւ:

Արարացոց առևտուրն ընդլայնեցաւ մինչև Սիամայ ժոցին միւս կողմն՝ որ նոյն ժամանակ Եւրոպոյի նաւարկութեան սահմանն էր: Սոււմադրա, Հնդկաց մեծ արշիպելագոսին այլևայլ կղզիքն և նաև Գանդոն իրենց զիւտոց նպատակ եղան: Գանդոնի մէջ այնքան բազմութեամբ հաստատուեցան որ Կայսրն զանոնք չվհատեցնելու համար, հրաման տուաւ իրենց ցեղէն դատաւոր մ'ունենալու: Արաբերէնն զրեթէ ամէն նաւահանգստաց մէջ կը հասկնային և կը խօսէին. և զարմանալի բանք թ. և ժ. Դարերուն մէջ իրենց ետէն գացող բրիտանիէց թիւն արդէն իսկ մեծ էր Ձինաստանի մէջ:

Այն ժամանակէն քիչ ետքն, Պօլոս Անդուրիոն ձենուացին. Բարսեղ ճարին առաջարկեց որ Հնդկաստանէ Աժտէրխան ապրանք բերել տայ, Վօլկայի ընծացքը բռնէ և Մոսկուայէն Ռիկա փոխադրէ զանոնք Մոսկովայի և Տունայի միջոցով՝ Անտի Եւրոպա պիտի անցնէին Պալդիկի ճամբով: Ականջ

չկախեցին: ԵՍէ այն ճամբան բռնէին՝ ապրանքը Սալէյի, Թունուզի և Ալճէրիի յելուզակներէն ազատ պիտի մնար: Եօթններորդ դարէն սկսեալ՝ Ամալֆի, Վենետիկ և յետոյ Բիզա մէկ աստիճան անկախութիւն ստանալով, սկսան ընտանեկան արուեստագիտութեան այլևայլ ճիւղերն ծաղկեցընել: Ամալֆի, Իտալիոյ վաճառական զաւառաց ամենէն հինն՝ Բիզայի նաւատորմին նախանձովը կործանեցաւ: Այս յետին քաղաքս քաւական ժամանակ վաճառականութեան մէջ պատուաւոր աստիճան մ'ունեցաւ: Բիզա՝ ամենէն ազատ քաղաքն էր, բայց ձենովացիք յափշտակեցին իրմէ Գորսիզան և Սիկիլիան, այնպէս որ՝ ԺՆ. դարուն սկիզբը Բիզա, այլ վաճառաշահ քաղաքաց կարգն չէր անցներ: Ֆիրենցէ յաջորդէց իրեն: Եւրոպիոյ միւս տէրութիւններն խիստ թիչ ուշադիր կ'ըլլային առևտրական գործառնութեանց: Զինուորական պատմութիւնը կը լեցընէ տարեգիրքը. աւանդութիւնն ալ մեզի կը ցուցընէ թէ՛ Անգլիացոցմէ զատ՝ ամէն ազգաց մէջ վաճառականութեան պատմութիւնն զանց առնուած է և կամ համառօտ և երկրորդական կերպով զրուած. և Մաքքիավելլիի հնարագիտութիւնն քննելը գերազանց կը համարին: Բայց զանք մեր ծրարորոն:

Իսնի որ Խալիֆայք Ասորոց տէրն էին, կը բաշխէրէին զքրիստոնեայս ուխտաւորութիւն ընելու յԵրուսաղէմ. վասն զի անոնց ուխտաւորութիւնն իրենց համար առևտրոյ աղբիւր մ'էր, որ շատ ոսկի և արծաթ կը շահեցընէր. բայց Օսմանեանք ԺԱ. դարուն մէջ տիրելով այն գաւառին, ուխտաւորք շատ վնար կը կրէին: Դարձեալ այն ատեն, ըստ Յովհաննու Յայտնութեան Գրքին՝ աշխրհիս վախճանին և Քրիստոսի դարձեալ երևալուն կ'սպասէին: Պետրոս ճգնաւոր՝ մտաց պատրաստութիւնն առիթ առնելով, բարոզեց թէ Խաչակիր պէտք է անհնազանդաց դէմ, և ամէն ակնկալութիւններէ աւելի յաջողեցաւ:

Նպիսկոպոսունք ժողով կազմելով հրատարակեցին թէ Աստուծոյ կամքն էր այն. ամէն կարգէ արք և կանայք զինուոր

գրուեցան. մի միայն մտածութիւնն Սուրբ Երկրին տիրելն էր: Եւ յիրաւի քրիստոնեայ Եւրոպան յաղթեց Փոքր Ասիոյ մէկ մասին, Ասորոց և Պաղեստինու, և Խաչն տնկուեցաւ Միոն լեռան վերայ: Նաև Կոստանդնուպօլիս, Երկրորդ Հոռովմը, յետին Կեսարներուն կայսերական զահուն վրայ, կէս դարու միջոց Փլանտրիոյ կոմս մը տեսաւ: Առաջին հարուածը յաջողեցաւ, բայց ետքը Խաչակիրք անկարող եղան իրենց կալուածները պահելու: Երեքտասաներորդ դարուն վերջերը՝ հալածուեցան Օսմանցոցմէ, երկու միլիոն անձ պատերազմի զոհ և ահագին գանձեր թողլով (1): — Աղետալի արկած, բայց մենք ըստ վաճառականութեան պիտի քննենք զայն, և կրնանք ըսել թէ ազգաց այս խառնուում պատճառ եղաւ տիեզերական քաղաքականութեան, և իրաւախոհութեան հորիզոնն ընդլայնեց: Երկու դարու միջոց Արևելք և Արևմուտք ի զուր հաղորդակցութիւնն իտրած էին: Ուխտաւորք և Խաչակիրք Ասիոյ մէջ շքեղութեան և պերճութեան և զարդուց նշանաւոր ճաշակ մը մտուցին. անկից ետքը հին արուեստք զարմամբ մ'ունենցան և ազգաց մէջ նոր արուեստք յայտնուեցան: Բայց ի սակից պետերը կը տնանկանային և իրենց ծառայքը և զերիները չարչարելու բաւական ոյժ չունենալով, բնականապէս կը հետեւէր թէ հին օրինաց անկումն և աւատական հիմնադրութեանց փոփոխումն ըլլայ ի խառնութիւն:

Սուրբ պատերազմին ժամանակ, Կոստանդնուպօլսոյ առմամբը, ձենովացոց և Վենետիկեցոց ձեռքը՝ յոնիական տէրութեան շատ զաւառներ անցան, և Արևելքի զլիսաւոր հայթայթիչքն և մատակարարողքն եղան: Վենետիկցի շատ գաղթականք Պօլիս հաստատուեցան, որ զեղիտութեան և շոայլու-

(1) Ըսել չէ թէ պատերազմին մէջ երկու միլիոն մարդ մեռաւ, հապա Սաբակիոսեանք սուրէն փախած և զասալք գիւտք ինչն ողորմելի մնացին, բորոտեցան և լամի պակասութենէն և աղտոտութենէն այս աստը բազմացաւ. նաև աստիկ չէր մը ծաւալեցաւ: Երբ հրահրութիւնները զազրեցան, վախճանած մարդկանց թիւը երկու միլիոն էր:

թեան քաղաք էր, և առանց ինչ ամենափոքր ընդդիմութեան առևտուրը ձեռուրնին անցուցին: Նոյն ատեն Յունաստան մշակող և գործուող մետաքսին տուրևառն՝ Կոստանդնուպօլիս կեդրոնացած էր: Վենետիկեցիք աղէկ մը տեղեկացան այս յարկի ապրանքին բերքին վերաբերեալ ամենայն ինչի և իրենց երկրին մէջ մշակել փորձեցին: Քիչ ժամանակէն Վենետիկոյ մետաքսեղէնքն սկսան Յունաստանիւ և Սիկիլիոյ հետ առաջնութիւնն մրցիլ: Այսպիսով Հասարակապետութիւնը հարստացաւ և առևտրոյ սահմանքն ընդլայնեցան: Մի և նոյն ժամանակ Վենետիկեցիք Պօլսոյ մէջ ունեցած առևտրական գերազանցութենէն առիթ քաղելով, Հնդկաց հետ ունեցած առևտուրնին ծաղկեցընելու ջանացին: Այսպէս, քանի որ Կատին կայսրութիւնը Կոստանդնուպօլսոյ աժոռոյն վրայ մնաց, Վենետիկեցիք ալ բոլոր Եւրոպիոյ գործակատարքն եղան:

Ճենովացիք շատ աղէկ կ'զգային այն առաւելութիւնն որ իրենց ախոյեանքը կը քաղէին Կոստանդնուպօլսոյ կայսերց միանալով. և զՎենետիկցիս այն բարեացմէ զրկելու համար՝ դարուն ամենէն արմատաւոր նախապաշարմունքը հանեցին. հերձուածող Յունաց միացան, Պապին պաշտպանութեան տակ եղող միապետութիւն մը գահէն վար ձգելու համար:

Յաջողեցան, և յաղթողը զանոնք վարձատրելու համար, ուրիշ պարզենքէ և արտօնութիւններէ զատ՝ տուաւ նաև իրրև կայսրութեան դաստակերտ Բերա, Կոստանդնուպօլսոյ զլիսաւոր արուարձանն. և իրենց ապրանաց արտահանութեան և մտնելուն իրաւանց զեղջմունք շնորհեց:

Ճենովացիք զգօնութեամբ և արժնութեամբ այն նպատաւոր տեղոյն առաւելութիւնները չէին փախցնէր: Իրենց վաճառատեղիքը ամրացուցին և իրենց գործատեղիքն մէյմէկ ամբողջութիւն ըրին: Խրիմը առին և Քէֆէն՝ իրենց Արևելից հետ ունեցած առևտրոյն գլխաւոր վաճառատեղին ըրին:

Մակայն Ճենովացիք նորութեանց և փոփոխութեանց հակաձէտ՝ և իրենց մէջ, ապստամբ խմբերու ամէն փոթորկաց և փոփոխակամութեանց ետևէ էին, մինչդեռ Վենետիկեցիք համ-

բերատար էին և խոհական խոհեմութիւն ունէին և բռնական կառավարութեան մը տակ մշտնջենաւոր խաղաղութիւն կը վայելէին:

Կոստանդնուպօլիս հաստատուած Ճենովացեաց հետ յաջողութեամբ չլրնալով մրցիլ, Աղեքսանդրիոյ հետ յարաբերութիւննին աճեցնելու զբաղեցան, զորն որ Պասրա քաղաքը դեռ մոռցուցած չէր: Եղիպտոսի սուլթանին հետ նոր վաճառակաճութեան նոր դաշնադրութիւն մ'ըրին, հիւպատոս մը անուանեցին որ Աղեքսանդրիա պիտի բնակէր, և ուրիշ մը ի Դամասկոս: Ասոնք հասարակաց բարուք զգեցեալ ըլլալով, Սուտանի իշխանութեան տակ վաճառականութեան դատերն պիտի տեսնէին: Անհիմն նախապաշարմունք տկարացան, և շահուց միութեամբն առաջին անգամուան համար ծագեցաւ ազատ և համարձակ առևտուր մը Քրիստոնէից և Մահմետականաց մէջ:

Ֆիորենցայի Հասարակապետութիւնն որ ի բնուստ ռամկապետական և արուեստական երկիր մ'էր, արդէն իսկ բաւական ինչամտութեամբ վաճառականութեան պարապած էր: Ծովային յարմար նաւահանգիստ չունենալով, Ֆիորենցացիք իրենց գործարանները կատարելագործեցին, և ընտիր ճաշկով ընտանեկան արուեստից նիւթեր պատրաստեցին: Իրենց ջուխան և մամաւորապէս մետաքսեղէնը Ճ.Գ. դարէն սկսեալ մեծ համբաւ ստացած էին: Եւրոպիոյ զանազան ազգաց հետ ունեցած յարաբերութիւններն բնականապէս գիրենք ստեւտրոյ ուրիշ ճիւղի մը ուղղեցին և առաջնորդեցին այսինքն սեղանաւորութեան:

Գործարաններէն շահուած չափաւոր վաստակոց վրայ, դրամոյ առևտրոյն շահադիտութիւնն եկամտոյ աղբիւր մը աւելցուց: Այս նոր ճիւղս շատ շահաւոր էր, նաև այն ժամանակ, որ դեռ ստակի շահը և փոխանակագրոյ զեղջմունքը չէին ճանչնար:

Ֆիորենցա՝ Եւրոպիոյ գլխաւոր և հարուստ քաղաքաց մէկն եղաւ, և ի վերջոյ Գոզիմ տի Մէտիչի, աննշան ընտանիքի մը զլուխ, յաջողութեամբ այն աստիճան հարստացաւ որ, և ոչ մէկ

իշխան կրնար անոր հաւասարիլ նոյն դարուն մէջ: Ֆիորենցա Սուտանի հետ փոփոխակի առևտուր ըրաւ, Եզիպտոսի մէջ Վենետիկեաց պէս առաւելութիւններ ստանալու նպատակաւ. և քիչ ժամանակէ վերջը Հնդկաց վաճառականութեան մէջ մաս մ'ունեցաւ. որովհետև Ֆիորենցացացոց Անգղիա մտուցած սպարանաց մէջ կը գտնուէին նաև բովիճայք: Ֆիորենցայի Հասարակապետութեան ղեկավարին գլխաւոր պաշտօնն բոլոր Սուտանի տարածութեան մէջ առևտրոյ ազատութիւնը խնդրել էր:

Հնդկաց վաճառականութեան վրայ գրեթէ ամենին տեղեկութիւն չկայ, բայց զիտենք թէ այն առևտն սկսեալ վաճառականութեան վրայ եղած զաղափարները կ'ընդլայնին: ԺՌ դարուն Հնդկաց վաճառականութեան վրայ գրուածք մը կայ, զոր Մարինո Սանդո, Վենետիկցի ազնուականը շարադրած է, որուն մէջ կը յայտնէ թէ ինչպէս վաճառականութիւն կ'ընէին Հնդկի վրայ հայրենեացը հետ:

Պաղլիկի ծովափանց բնակիչքը, որ մինչև նոյն առևտուրը և յեղուզակ էին, վերջապէս բարբարոսութիւննին նուազացուցին և սկսան իրբև վաճառական՝ դրացի ազգաց մէջ յաճախել: Գաղաբաժան ղէպքերը միացուցին զանոնք և զօրաւոր դաշնակցութիւնը հաստատուեցան, հաճեալոյի դաճեալ կցութիւն անուամբ:

Պրիւմ՝ անոնց հարաւոյ հետ ունեցած յարաբերութեանց մտերանոցն էր. հոն կը ժողուէին Իտալացիք և Վենետիկցիք. արևելից և նաև իրենց հայրենեաց բերբերուն փոխանակ, նաև հարկաւոր նիւթեր և Եւրոպոյ այլևայլ ապրանք և Գերմանիոյ և Պելճիոյ ամենէն ճոխ և հարուստ գաւառներէն եկող ոսկին և արծաթը կ'ընդունէին:

Մարգո Բօլո, Վենետիկցի ազնուականն փոքր Ասիայէն՝ Ասիոյ ամենէն արևելեան մասերը թափանցելը խորհած էր, մինչև Քան, Չինաստանու սահմանագլխոյն վրայ: Գաթային անցաւ՝ Բէքինէն մինչև ամենէն հարաւային զաւառները. ինքն է որ առաջին անգամ Պէնկալայի և Կազուրած թերակղզոյն վրայ կը խօսի: Ի դարձին Սէյլանը, Մալապարը պտտեցաւ և

մինչև Գամպայ ծոցն եկաւ: Պատմութեանցը մէջ բոլոր այն տեղերուն այն անուանքը կուտայ, որ ինչուան հիմա ևս կը կրեն: Ամէն տեղ շանացիք էր հայրենեացը վաճառականութիւնն ընդլայնել. բայց մէկ անձի ճիզն մեծ ազդեցութիւն չէր կրնար ունենալ, և ուրիշ ղէպք մը վաճառականութեան ընթացքին ազդեց:

Մենեմմատ Բ. Օսմանեանց սուլթանը՝ 1453 ին Կոստանդնուպոլիսն առաւ, այս հարուածքով Արևելից հին կայսրութեան մնացորդն կործանեց: Ճննովացիք հարկադրեցան Բերան և Խրիմը թողուլ: Կոստանդնուպոլիս ան Արևմտից ազգերու ազատ վաճառատեղի ըլլալէն դադրեցաւ: Անկից ետքը Հընդկաց բերբերն՝ միայն Եզիպտոսի ճամբով կրնային Եւրոպա գալ, ուր Վենետիկցիք աղէկ հաստատուած էին: — Այն ժամանակէն ճննովա, այնպէս շուտ ինկաւ որ՝ Միլանու դքսերուն և Գաղղիոյ թագաւորաց հպատակ եղաւ: Իւր քաղաքական զօրութեան պակասութիւնն իր վաճառականութիւնն ալ նուազցուց. որովհետև զինքն Սուտանի յարգել տուած էր և անով յաջողած: Ուրեմն Վենետիկ էր որ ԺԵ դարուն վերջերք՝ Արևելից բերբերն Եւրոպոյ կը հայթայթէր. այսպիսով իր վաճառականութեան մղում մը տուաւ, որուն նմանը չէր տեսնուած: Անգղիա՝ Եորգի և Լէնքէստրի պատերազմներու տառապանացը մէջն էր. Գաղղիա՝ դեռ Անգղիոյ ղէմ բացուած քաղաքական պատերազմին վնասները կը կրէր, միապետութիւնն չէր կրցած զօրանալ. ժողովուրդը խաղաղական արուեստից ամենէն չէր զբաղած, և երրորդ մասն ալ տղիտութեան վիճակին մէջ թաղուած էր: Սպանիա դեռ մասամբ մը Մաւրիտանացոց ձեռքն էր. Բորգուզալ յանգղանքար ծովային մեծամեծ զիւտերու կը պատրաստուէր, սակայն դեռ հմուտ նաւապետներ և նաւատիր չունէր: Ուստի վաճառականութիւնն զրեթէ, մի միայն Վենետիկցիցոց ձեռքն մնացած էր: Սակայն արուեստից ոգին կը զարգանար Պաղլիկի ծովափանց վրայ, և տեստոնեան Հաճար որուն սկիզբը ԺԱ դարուն կ'ըլլէ և զարգացուան ԺԳ դարուն մէջ, իր ամբողջական բարգաւաճումը

կ'առնէր: Համալուրկ, Լիւպէք, Ռոսորք, Պրեմաւ ալլը՝ Պալ-  
 թիկի բարբարոսները բշելէ և կրթելէ ետքը, անոնց շրջափակը  
 Գերմանիոյ, Գաղղիոյ, Անգղիոյ, Բորդուգալի, Ֆլանտրիոյ  
 Սպանիոյ և նաև Իտալիոյ մեծագոյն քաղաքներէն՝ 80 հատ ժո-  
 ղովեցին: Դաշնակցութիւնը տարածեցաւ դէպ ի Գոլոնես և Զե-  
 նոսի միջոցով, և արևելքէն ինչուան Նիմնի-Նովկորոտ: Ինչ-  
 պէս որ յիշեցինք վերը, Վենետկեցիք և Լոմպարտացիք Պրիւժ  
 կուզային Հնդկաց և Իտալիոյ բերքն հիւսիսի՝ բերքերուն հետ  
 փոխելու համար:

Հանսի դաշնակցութիւնն այնպիսի քաղաքներէ կը ձևանար,  
 որոնց իւրաքանչիւրն ալ իրենց մասնաւոր քաղաքական դա-  
 տաւորն ունէր:

Իրենց պաշտպանն՝ 1212 էն ի վեր Բրուսիա հաստատուած  
 տեւտոնեան կարգին մեծ տէրն էր: Երեք դարու միջոց այս  
 պաշտպանութեամբ կրցան Պալդիկի հարաւային ափանց, Տա-  
 նիմարքայի մէջ և Ֆինլանտիոյ ծոցին վրայ գտնուող երկիրնե-  
 րուն առևտուրն ընել: Իրեն ամենէն մեծ առևտրոյ աղբիւրն  
 ձկնորսութիւնն էր:

Անգղիա՝ վաճառք շահելու համար իւր դրիցը յետին առա-  
 շելութիւնն ի գործ դրաւ. 1326 ին Եղզարդ թագաւորը սկը-  
 սաւ Ֆլանտրիոյ քանի մը ոստայնանկները իրեն ձգելու: Բայց  
 դեռ երկայն ժամանակ ասուի արտահանութիւնն Անգղիոյ առ-  
 ևտրոյն գլխաւոր նիւթն էր: Օտար երկրի ապրանք Հանսի և  
 Լոմպարտացեաց ինամօքը Անգղիա կը մտնէր:

1217 ին, Նորվեկիոյ Հաքէն թագաւորին հետ դաշինք մը  
 հաստատեցին. ԺԲ. դարուն, Ովկիանոսի մէջ առջի նաւերն  
 շրջեցան, և հազիւ ԺԵ. դարուն կրցաւ նաւերը Միջերկրական  
 զրկել: Մէյմը որ նաւարկութեան ձեռնարկութեանց և առեւ-  
 տրական զբաղմանց վարժեցաւ, մեծ ճաշակ ստացաւ, և  
 պատմութիւնն պիտի ըսէ թէ ինչուան այն տեսնները անձա-  
 նօթ կատարելութիւն մը և զարգացում մը տուաւ:

Գաղղիա՝ Մարսիլիոյ և Հոդանոսի, Սպանիա՝ Պարսելու-  
 նայի միջոցով հաւասարապէս կ'ընդունէին օտար երկրի ապ-

րանքն: Հնդկաց և Ասիոյ բերքերուն փոխանակ ոսկի և ար-  
 ծածկ կամ իրենց երկրագործութեան բերքերն կու տային:

Գերմանիոյ մէջ՝ Աւկապուրկ, Նուրեմպերկ շարունակ յարա-  
 բերութիւններ ունէին Վենետկոյ, Ուլմի, Ռադիգպոնայի հետ.  
 և Գանուբայ վրայ էին Եւրոպիոյ արևելեան կողման անցիկ  
 ապրանաց քաղաքները: Այսպէս դիզուած հարստութիւններն  
 վաճառականութեան համար շատ աղէկ էին: Իրամատունք ալ  
 ամէն տեղ ծաղկեցան: — Ֆիորենցայի Մէտիչինները, ինչպէս  
 որ վերը ըսինք, գրաւի և փոխատուութեան տներ հաստատած  
 էին. այլևայլ քաղաքաց մէջ հաստատուած վեշտասան տները  
 գլխաւոր տան հետ հաղորդակցութիւն ունէին: Գաղղիոյ թա-  
 գաւորն և Անգղիոյ թագաւորն անոնց գլխաւոր պարտապան-  
 ներն եղան: Յետոյ Ֆուկկէրք և Աւկապուրկայ Վելսէրները թէ  
 հանճարով և թէ հարստութեամբ սկսան Մէտիչիններուն հետ  
 մրցիլ: ԺԶ. դարուն սկիզբն Նուրեմպերկի մէջ նաև գրաւի և  
 փոխատուութեան տուն մը բացուեցաւ, 1621 դրամատուն մը  
 և 1654 ի հրովարտակ մը հրատարակուեցաւ փոխանակու-  
 թիւնն և առևտրական իրաւագիտութիւնն կարգադրելու համար:

Անվերսա, Պալ, Սղրազպուրկ քաղաքներն նաև վաճառա-  
 կանական փոխանցութեանց մէջ նշանաւոր դասեր ստացեր էին,  
 և այսպիսով Վենետիկ շատ կողմանէ ախոյեան ստացած էր:

Մինչդեռ Վենետկեցիք, ԺԵ. դարուն վերջերը, դեռ վստա-  
 հուծեամբ լի էին իրենց հարստութեան անսահման հասնան  
 վրայ, երկու մեծ դէպք պատահեցան, որոնք իրենց հաշուին  
 մէջ չկար: Առաջինն Ամերիկայի գիւտն եղաւ, երկրորդն  
 արևելեան Հնդկաց երթալու ուղիղ անցից գիւտն՝ Բարեյուսոյ  
 Գիլան անցնելով: Հրաշայիք գիտութեան, հանճարոյ և յան-  
 դըզնութեան Բրիտանիոյ Գոլոմպոսի և Վասգօ տի Կամայի:

1480 տարիէն սկսեալ՝ Բրիտանիոյ Գոլոմպոսի բանուկ  
 միտքն յղացած էր արևմտեան կողմէն Հնդկաց հետ արագա-  
 գոյն հաղորդակցութեան ճամբայ մը գտնելու զաղափարն. նախ  
 և առաջ յատակագիծն իր հայրենակից ձեռնվարձոց առա-  
 ջարկեց, յետոյ Բորդուգալի թագաւորին: — ձեռնվայի

տխմարութիւնն և Բորղուզալի կնճիւռը զինքն վանեցին :  
Վերջապէս զինքը Սպանիոյ զոհեց որ՝ այսպիսով նոր աշ-  
խարհ մը գտնելու փառքը և արդիւնքն ունեցաւ :

Սպանիա անհուն ստացուածոց տէր եղաւ, որոնք թէ հանքի  
կողմանէ և թէ այլևայլ բերքերու կողմանէ ճոխ են : Գանձերն  
որ գետորէն Սպանիա հոսեցին, անկից բոլոր Եւրոպա սիրտե-  
ցան և տիեզերական արուեստից սնունդն եղան :

1416 էն սկսեալ՝ Բորղուզալցիք Ափրիկէի ծովափունքը  
բննեցին. 1497 ին Պարթէլէմի Տիսող՝ Հնդկաց ճամբան բացաւ.  
Վասգո տի Կամա՝ որ Յուլիսի 9 ին Լիսպոնայէ ելաւ, Բարե-  
յուսոյ Գլուխն շրջեց և Մալապարի ծովափանց հասաւ 1498.  
Մայիսի 22 ին: Բայց նոյն երկրին մէջ հաստատուելու հարկա-  
ւոր ոյժն և նաև ապրանքը չունենալով՝ պարտաւորուեցաւ վե-  
րըստին Բորղուզալ ղառնալ, ուր հասաւ 1499 Սեպտեմբերի  
14 էն : Համայն Եւրոպա զայն հիացման և երախտագիտու-  
թեան զգացմամբ ընդունեցաւ : Այս ուղևորութենէն քսան և  
չորս տարի ետքը, Բորղուզալցիք Մալագոյի տէրերն եղան՝  
ուր Արևելեան Հնդկաց հետ մեծ առուտուր կ'ընէին և ուր Զին  
և ճարտնացի վաճառականք միշտ կը յանախէին: Իրենց Կոայի(!)  
և Տիոչի հաստատութիւններովը Մալապարի ծովափանց կը  
տիրէին և անկից Եգիպտոսի Կարմիր ծովու միջոցով կատա-  
րած առևտուրն կրնային զաղբեցնել և խափանել :

Բարեյուսոյ Գլխէն մինչև Գանդոն գետը՝ իրենց նաւերը  
այն ամէն նաւահանգիստները յաճախեցին՝ ուր որ յարգի և  
սուղ ապրանք կը գտնուէին. և բոլոր այս ընդարձակածաւալ

(1) Կոս որ Ոսկեզօծ կը Թարգմանոի աներևոյթ եղած է. Կոս կամ Հինն Կա-  
մա իր փառաւոր ասպարէզն կատարեց հոն՝ ուր որ զամօհէն երկեց իր նը-  
ւազքը. այս օրուան օրս կանաչութեամբ ծածկուած մեծ շիրիմ մ'է. և այն  
քանանայից ու կրօնաւորաց բազմութիւնը որ հոն կը տեսնէք, զոգցես թէ միայն  
իրենց շիրիմ և մարած ազգատոհմերուն նշխարացը վրայ՝ մահուան պաշտօնը  
կատարելու համար մնացած են : (Esquisse sur l'Inde, Անգղիացի հարկարսպե-  
տէ մը. Լոնտրա տպուած 1824 ին):

ծովափանց երկայնքը (4,000 ասպարէզէն աւելի), ամրու-  
թեանց և հաշուետանց գօտիներ հաստատեցին : Կամայ կամաց  
Ափրիկէի հարուային ափանց երկայնքը, առևտրոյ ամէն  
նպաստաւոր տեղերուն տիրեցին, և Մատակասգարի և Մոլու-  
գեանց մէջ տեղուանքը շատ կղզեաց մէջ հաստատուեցան :  
Ամենուրեք յարգանք և պատուով ընդունուեցան և բարձրա-  
գոյն մեծարանք կը վայելէին. այն կղզեաց բնածիններուն սոր-  
վեցուցին փոխանակութեան պայմանները: Ալֆօնզ Ալպուբերք՝  
Բորղուզալցի սպարապետաց քաջագոյնը, Արևելից ամէն վա-  
ճառական ազգերը վանելու յանդուգն առաջարկութիւնն ու-  
նեցաւ : Հիւրմիւզը առնել տուաւ իր հայրենակցաց, որն որ  
Պարսկային ճոցին մտիցը կը տիրէ: Եգիպտացուց միայն Կար-  
միր ծովուն հին ճամբան մնաց, զոր Արաբացուց կատարի  
ընդիմութիւնն՝ Եւրոպոյ միւս ազգաց առևտրոյն պահեց :  
Վենետկեցիք շուտով զգացին թէ ինչ աստիճանի դառն կեր-  
պով կը մրցէին իրենց ախոյեանքը, Հնդկաց վաճառականու-  
թեան մէջ : Այս չարին առջևն առնելու համար, ազատութիւն  
տուին Սուտանի՝ Տալմացիոյ անտառներէն կտրելու, այնքան  
որքան պէտք է տասուերկու մեծ նաւերէ տորմիզ մը ձևացը-  
նելու համար. և Մամլիւքներու գունդ մը պատրաստուեցաւ  
հմուտ հրամանատարի մը պաշտպանութեան տակ : Խաղաղու-  
թեան արուեստքը՝ իրենց պաշտպանութեան համար՝ զինուց  
կը դիմէին : Հնդկաց Ովկիանոսին Բորղուզալցի տորմիզը ջախ-  
ջախեցաւ. բայց վաղվաղակի Մամլիւքներու տիրապետու-  
թիւնն կործանեցաւ Եգիպտոսի մէջ. Ասորիք և Պաղեստին  
Օսմանեանց Սէլիմ Ա. Սուլթանին հպատակեցան : Վենետիկ  
անմիջապէս միացաւ անոր. Սուլթանը շատ արտօնութիւններ  
չնորհեց անոնց, բայց բոլոր այս փոքրիկ առանձնաշնորհու-  
թիւնները ձախողեցան այն առաւելութեանց առջև որ՝ Գլխոյ  
նոր ուղղիքը տուեր էին Բորղուզալցուց : Գամպրէի հռչակա-  
ւոր դաշնադրութիւնն 1508 ին խոնարհեցուց Հասարակապե-  
տութեան հպարտութիւնն և իր զօրութիւնն ոչնչացուց. 1521  
ին Վենետկեցիք վէճը մէկդի Թողլով, ուզեցին որ Լիսպոնա

մտող բոլոր համեմեղէնքն միջին գնով գնեն Բորղուզալի թագաւորէն, սակայն առաջարկութիւնն մերժուեցաւ: Անկից ետքը՝ Վենետիկ աստիճանաւոր անկման շրջանի մը մէջ կը մտնէ: Այն ժամանակէն սկսեալ՝ Լիսպոնա, Հնդկաց վաճառականութեան զլխաւոր նաւահանգիստն եղաւ. բայց Բորղուզալ Սպանիոյ պէս իւր առևտրոյն յիփուծիւնը, արուեստից աւելաւորութիւնը պիտի բաւէր: Այնքան ճոխութիւնը աշխատութիւնը կ'անդամարութէին: ԺԸ. դարուն Բոմպայ շանաց ազգին մէջ արուեստից ոգին կենդանացընելու, գործարանները բաշխելով: Առաջնութեան պատիւը մասնաւորապէս մետաքսեղինաց և ապակեղինաց գործարաններուն տուաւ: Այս հաստատութիւններն զԱնգղիացիս խռովեցուցին: Վասն զի Գրոմվէլի և Հասարակապետականաց հանճարոյն արդիւնքն եղող նաւարկութեան միջոցով՝ Հոլանտացուց վաճառականութիւնն մարելէ ետքը, Բորղուզալի մէջ վաճառաց մթերանոցներ բացած էին և իրենց շահուն համար շատ աղէկ աշխատած էին. յարգի մետաղները Անգղիա կ'անցընէին և փոխադարձաբար իրենց գործարանաց բերքերը կը մտցընէին Բորղուզալ:

Բորղուզալ իրենց հարկատուն եղաւ, վասն զի Անգղիացիք հոն ճամբարիտ մենավաճառանոցներ հաստատեցին: Այն ժամանակէն սկսեալ Բորղուզալ աստիճանաւոր անկում մ'ունեցաւ. որովհետև ուր որ արուեստից ոգին կը շիջանի՝ նոյն տեղը առեւտուրն ալ կը նուազի:

1666 ին Լորտ Արլինկմըն, Արևելքէն թէյի առջի տերեւներն Եւրոպա բերաւ: — Անգղիացիք ան տարիներուն չէին յատար թէ՛ որ մը Հնդկաստանի տէր պիտի ըլլան: Հոլանտա միայն կրցած էր այն հեռաւոր ծովերուն մէջ Բորղուզալի նաւատրմիղն շախշախել (1):

(1) Հոլանտացուց և ուրիշ այլևայլ ազգերուն պատմութեան համար, որոնց միայ հարևանցի գրեցինք Հոֆմանին այս վերոյիշեալ գլուխը գնելով. ընթերցողը շատ աղէկ տեղեկութիւն կրնայ ստանալ Պ. Պլանքի գաղղիացուոյն վաճառականութեան և արուեստից պատմութիւնն գնելով.

Գաղաքական խորին հանճար մը, արուեստից մեծ գործունէութիւն մը և ազատութեան ի գործ դրուելը՝ որ մը Անգղիոյ քան զամենքը գերազանց նաւային զօրութիւն մը, վաճառականական հարստութիւն մը պիտի պարգևէին:

Գաղղիա և Մաճառստան ի բնուստ երկրագործ ժողովուրդներ ըլլալով՝ մասնակից չեղան Անգղիոյ հեռաւոր վաճառականութեան:

Գաղղիա թէև այնպիսի նաւապետներ և նաւաստիք ունեցած է, որոնք երբէք ոչ գիտութեամբ և ոչ յանդգնութեամբ ուրիշ ազգաց նաւապետներէն վար չէին մնար. սակայն Գաղղիա ականջ չկախեց անոնց: Գոլպերէն սկսեալ՝ նա մանաւանդ 1789 էն ետքը, Գաղղիոյ առևտուրը նրան չելապէս զարգացաւ: Խռովութիւնը՝ բոլոր ճամբաները բացաւ ազգին, և իրեն հանճարն ընդարձակելու միջոցները տուաւ: Հոս կը վերջացընենք մեր պատմութիւնը, վասն զի նոր շրջան մը կսկսի: Ակամայ համառօտապէս նշանակեցինք բոլոր այն մեծ դէպքը որոնք ճշտագետէ հասարակաց քաղաքականութեան յառաջադիմութեանը պատճառ եղան:

Բարիկ 5 Օգոստոս 1867.


ՄԱԿՍԻՄԻԼԻԱՆՈՍ ՀՕՅՄԱՆ

1641  
31  
24207-60



# Ե Ի Ր Ո Պ Ի Ո Յ Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ա Յ

ԳՆԱԾ ՈՒ ՎԱՃԱՌԱԾ ԱՊՐԱՆՔԸ



§ 1<sup>0</sup> Եւրոպիոյ նախնական նիւթ հայրաշրոյ երկիրք.

**1. Զգեսեղէնի վերաբերեալ ճիւրք.** — Բամբակը կուգայ Միացեալ Նահանգներէ, Անգլիան կղզիներէ, Անգլիական Հնդկացմէ, Չինաստանէ, Եգիպտոսէ, Ճափայէ, Էն. — Աւր՝ Հնդկաստան, Տանկաստան Ասիոյ, Հարաւային Ամերիկա (Լաբլադա, Քիլի կամ Չիլի. Բերու), Բարեյուտոյ Գլուխ, Ալճէրի, Աւստրալիա, Նոր Զելանտա. — Կանեփ, Վուռ, Հնդկաստան, Տանկաստան, Եգիպտոս: — Մուսակեղէն, Հիւսիսային Ամերիկա և Սիպերիա. — Անողորկ մոր՝ Հարաւային Ամերիկա (Լաբլադա, Պրազիլ), Պերպերիտան, Բարեյուտոյ Գլուխ, Հնդկաստան, Աւստրալիա, Տանկաստան:

**2. Գունասու նախնական ճիւրք.** — Գունասու փայտերը գրեթէ բոլորն ալ Հասարակածային Ամերիկայէն և Հարաւային Ամերիկայէ կուգան (Մեխիգո, Պրազիլ, Անգլիաներ, Էն) Հնդկաստան, Մալէզիա, Կուինէա կամ Կինէ (1) — Ուղան կարմիր՝ Մեխիգո, Միչին Ամերիկա, Պերպերիտան և Ճափա: — Լեղակ՝ Միչին Ամերիկա, Գոլուճպիա, Անգլիաներ, Հնդկաստան և Մալէզիա:

**3. Սպառման նախնական ճիւրք.** — Բրինձը կուգայ Հնդկաստանէ, Հնդկա-Չինէ, Չինաստանէ, Եգիպտոսէ, Մալէ-

(1) Անգլիացիք այս երկրէս ոսկւովը գրամ կոխելու սկսելով, իրենց ոսկեղանակի կիճէ անուանեցին. արժէքն գրեթէ մէկ ստեռլին է:

զիայէ, Միացեալ Նահանգներէ. — Խաճուէ, Անգլիան կըղզիք, Կույանա, Պրազիլ, Միչին Ամերիկա, Գոլուճպիա, Կուինէա, Ճափա, Հնդկաստան, Արաբիա, Ափրիկէի արևելեան ափուները. — Շաքարը կուգայ մասնաւորապէս Անգլիաներէ, Պրազիլէ, Միացեալ Նահանգներէ, Մասքարէյներ կղզիներէ. — Քաճաճ՝ Մեխիգո, Միչին Ամերիկա, Գոլուճպիա, Վենեցուէլլա, Պրազիլ, Կույանա, Անգլիան և Փիլիպպեան կըղզիք. — Թէլ՝ Չինաստան, Ճաբոն, Հնդկաստան, Հնդկա-Չին, Ովկիանիա. — Ծխախոտ՝ Միացեալ Նահանգք, Անգլիաներ, Միչին Ամերիկա, Պրազիլ, Բարսկուայ, Տանկաստան Ասիոյ, Հնդկաստան, Մանիլա, Էն: — Համեման՝ Մոլուքեան կըղզիք, Ճափա, Սուճադրա, Պոննէոյ, Փիլիպպեանք, Կուինէա, Մասքարէյներ կղզիք. Զանկեպար, Հնդկաստան, Չին, Արաբիա, հասարակածային Ամերիկա:

**4. Ռեհիմ, Խէժ, Եղ.** — Բաուչուճ կուգայ Պրազիլէ, Կույանայէ, Ճափայէ, Հնդկա-Չինէ, Էն: — Կուրքա-Բեբա, Մալաքքայի Թերակղզին և Մալէզիա. — Կոճը կը բազուի Կարմիր ծովու, Սահարայի և Սենեկալի կողմերէն. — Խէժ գաշի՝ Միչերկրականի արևելեան ծովափուները. — Իւղային ճիւրք (ձիճապտուղ, կինճիճ, արմաւ), Տանկաստան Ասիոյ, Հնդկաստան, Պերպերիտան, Մալէզիա, Ափրիկէի արևմտեան ծովափուները. — Կիսու Էն ծովափուրքի եղ՝ Հիւսիսային ծովք, Հարաւային ծովք և Խաղաղական Ովկիանոս:

**5. Բձեկական սուճիկ.** — Բինգիճ՝ Պրազիլ, Բերու, Մեխիգո. — Իրէքափուանճաճ՝ Պրազիլ. — Հալուէ, Հասարակածային Ափրիկէ. — Տգեճի կուգայ ընդհանրապէս Ամերիկայէ և Չինաստանէ. — Խաւեղեղ՝ Միչին Ասիա. — Ժալաք՝ (jalap) Ամերիկա. — Անալ՝ Ափրիկէ:

**6. Կարասեաց և շինուքեան փայտք.** — Կահենի՝ Հասարակածային Ամերիկա. — Հացի կամ Յալա Գանատա, Միացեալ Նահանգք. — Եփեճու կամ Ոպիազ՝ զլիաւորապէս Ափրիկէի ծովափանցմէ և Մատակասգար կղզիէն: Ուրիշ այլ ևայլ յարգի փայտեր կուգան նաև Հասարակածային Ամերի-

կայէն, Անգղիական Հիւսիսային Ամերիկայէն, Հնդկաստանէ  
և Ովկիանայէ :

**Չ. Մեհաղֆ.** — Ոսկին կուգայ մասնաւորապէս Գալի-  
ֆօրնիայէ, Մեխիգօյէ, Պրազիլէ, Վենեցուէլլայէ, Գոլուժ-  
պիայէ, Բերույէ, Պոլիվիայէ, Բրիտանական Ամերիկայէ,  
Աւստրալիայէ, Սիպերիայէ, Սուտանէ, Կուինէյայէ : — Արծա-  
քը կուգայ Արևմտեան Մեխիգօյէ, Միացեալ-Նահանգներէ,  
Բերույէ, Պոլիվիայէ, Պրազիլէ, Բիլիյէ, Սիպերիայէ, Աւստ-  
րալիայէ, ևն. — Պղինձը կուգայ Մեխիգօյէ, Բիլիյէ, Պրազիլէ,  
Բերույէ, Միացեալ-Նահանգներէ, Սիպերիայէ, Պարսկաստա-  
նէ, Ալճերիյէ և Աւստրալիայէ. — Սնդիկը՝ Գալիֆօրնիայէ :

**Տ. Լուսասու ճիւր.** — Քարածէրի (pétrole) զլիւսւոր  
աղբիւրքը Միացեալ Նահանգաց մէջ ևն :

**Ծ. Զանգազն.** — Կիւանօ կոչուած պարարտութիւնը,  
որ Յոնչոց կուտակուած, դիզուած ծիրտերէն առաջ կու գայ,  
կը զանտի Շինշա և Լոպոս կղզիքը (Բերու), Բիլիյի կողմերը,  
Բոլինեզիոյ շատ կղզեաց մէջ և Բարեյուտոյ Գլխոյ շրջակայքը :

Փղի և ձիագետոյ Ոսկրը՝ Ափրիկէէն կուգայ. իսկ Նարհ-  
վալինը և Մօսսինը Սկանտինաւեան և Ռուսաստան շրջապո-  
տոյ հիւսիսային ծովերէ կու գայ. Եգի Եղջիւրը առատապէս  
Հարաւային Ամերիկայէ կու գայ :

§ 2<sup>o</sup> Եւրոպիոյ գործարանաց արտադրանքս  
րանֆը ևւ ակոնց յրկուսն սեղերը .

**10.** Անգղիա, Գաղղիա, Բրուսիա, Պելճիա և Զուիցերա  
առատապէս կը ղրկեն իրենց բամբակեղէնը, ասուեղէնը և  
մեհախեղէնը. զլիւսւորապէս Ամերիկա (մասնաւորապէս  
Միացեալ-Նահանգք և Պրազիլ), Հնդկաստան, Տաճկաստան  
Ասիոյ, Եւրոպական ամէն գաղթականութիւնք, Եգիպտոս, ևն :  
Գաղղիա, Անգղիա, Գերմանիա, Զուիցերա, Աւստրիա, Պելճիա  
կը ղրկեն Բարիզու ըսուած ապրանք, Փերեզակաց ապրանք,

Լաքեղէն, Զգեսեղէն, բոլոր Ամերիկա, Ասիոյ Տաճկաստանի  
Հնդկաստանի, Եգիպտոսի, Եւրոպական գաղթականութեանց :  
Գաղղիա, Անգղիա, Բրուսիա և Զուիցերա կը ղրկեն նաև Ամե-  
րիկա, Արևելեան Հնդկաստան, Տաճկաստան, Զինաստան, Ճա-  
րոն և բոլոր Եւրոպական գաղթականութեանց, Պարսասեալ  
մորք, բացուած կաշի, զոհարեղէն, ծամացոյց, ակնեղէն,  
— Կարապիլը մեծաւ մասամբ Ամերիկա, Եւրոպական գաղթա-  
կանութեանց, Եգիպտոս, ևն կ'երթան : — Երկաթեղէնը, դա-  
նակեղէնը, զէնքը (Անգղիա, Բրուսիա, Գաղղիա, Պելճիա),  
ապակեղէնը, անօթեղէնը (Գաղղիա, Անգղիա, Բրուսիա,  
Աւստրիա, Իտալիա), Ամերիկայի համար արտադրութեան  
ապրանք են, կը ղրկուին նաև Ասիա, Ափրիկէ և Ովկիանիա :  
— Սեբեմայնքը (Անգղիա, Բրուսիա, Գաղղիա, Պելճիա) կը  
ղրկուին Հարաւային Ամերիկա, Անդիլեան կղզեաց, Մեխիգօ,  
Տաճկաստան, Արևելք և Եւրոպական բոլոր գաղթականու-  
թեանց : — Անգղիա, Գաղղիա, Պելճիա և Բրուսիա գիրքի. փո-  
րագրութեան, բուղբի և աշխարհացոյց Տալսակի, մեծ ար-  
տադրութիւն կ'ընեն դէպ ի Ամերիկա, Եւրոպական գաղթակա-  
նութեանց, Հնդկաստան և Տաճկաստան :

Գաղղիոյ, Սպանիոյ, Բորդուգալի, Իտալիոյ, Մաճառստանի  
Յունաստանի Գիւնիքերը կը ղրկուին մասնաւորապէս Ամերի-  
կա, Հնդկաստան, Ափրիկէ, Եւրոպական գաղթականութեանց  
և Ովկիանիա :



ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Ի Ր Ո Պ Ի Ո Յ

Ե Ի

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Մ Ե Ծ Ն Բ Ր Ի Տ Ա Ն Ի Ա

Կ Ա Մ

Ա Ն Գ Ղ Ի Ա

Ե Ի Կ Ա Մ

Մ Ի Ա Ց Ե Ա Լ Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Լայնութեան աստիճան 50°—60°. Բարիզու միջօրէականով:  
Մակերևոյթ 313,500 □ հազարամեղր. Բնակիչք 30,000,000  
—Վաճառական նաւ (առանց գաղթականութեանց և ստաց-  
ուածոց վաճառականական նաւերը հաշուելու) 28,620. —Տա-  
կառաչափ 5,806,970. Ել. հզր. 26,200 հզմհր. Խտուծիւն  
մարդկան առ մի հզմհր. 95 անձ :

§ 1<sup>0</sup> Նախագիտելիք, դիրք, բնական եւ քաղա-  
քական ընդհանուր բաժանմունք.

Իրաւամբ ըսուած է թէ Բրիտանական կղզիք միշտ առանձ-  
նաշնորհութիւն մը ստացած են խորհրդածութեան նիւթ

ըլլալու, և աշխարհիս միւս մասանց արուեստից և առևտրոյն օրինակ և զրգիւ ըլլալու : Արդարև Անգղիացիք երեք դարէ ի վեր առևտրական ընդարձակ ձեռնարկութեանց և արուեստագիտական մեծամեծ գործառնութեանց ձեռք զարկած են և միւս ազգաց եռանդը վառած :

Մեր Առեւտրական եւ արուեստագիտական աշխարհագրութիւնը՝ այս նշանաւոր երկրէս սկսինք, որ Եւրոպոյոյ ընդ արևմուտս յառաջացած և Հին ու Նոր աշխարհի ամենէն ուղիղ կապն է :

Մեծին Բրիտանիոյ անունը՝ որ Անգղիերէն կրէր Պրիդէյն կը կոչուի, ուրիշ բան չնշանակէր, եթէ ոչ՝ Բրիտանեան կղզեաց ամենէն նշանաւորը : Բայց որովհետև կառավարիչն և հրամայողը այս երկիրս է՝ անոր համար իր անունն ալ կամովին տարածուած է բովանդակ Բրիտանական կղզեաց և Անգղիոյ ինքնակալութեան բոլոր ստացուածոց և կալուածոց վրայ :

Բրիտանական կղզիներէ ձևացած տէրութեան պաշտօնական տիտղոսն է՝ Մեծին Բրիտանիոյ եւ Իռլանդիոյ միացեալ քաղաքութիւն :

Այս կղզիներս հիւսիսային լայնութեան 50-60 աստիճանաց տակ կ'իյնան և Գաղղիայէն Գալէյի անցքով և Մանիքայի նեղուցով կը բաժնուին : Ամէն կողմէն շրջապատած է ծովը. արևմուտքէն և հիւսիսէն Ատլանդական ովկիանոսը, որ արևելքէն Մեծին Բրիտանիոյ և Տանիմարքայի մէջտեղ Հիւսիսային կամ Գերմանական ծովը կը ձևացընէ :

Մեծն Բրիտանիա և Իռլանտա բաժնուած են մէկմէկէ՝ Իռլանտայի ծովով և Ս. Գէորգայ և Հիւսիսի լայն նեղուցներով :

Բրիտանական Արշիպելագոսին կղզեակներն են՝ Հեքթրտեանք, Որկադեանք և Շէդլընտ կղզիները, Մէն և Էնկլիսի և Ուայոյ կղզիները, և Գաղղիոյ ծով՝ Անկլո-Նորմանտեան կղզիք այսինքն ձըրզէյ, Կըռնչի և Օրինեի :

Մեծին Բրիտանիոյ կղզին երեք մաս կը բովանդակէ. Անգղիա, և Կալլէսի երկիրը կամ Վուէյս (Wales) և Սկոտիա : —Հիւսիսէն դէպ ի հարաւ կը տարածուի 900 հազարամերը

երկայն և որչափ հարաւ իջնայ՝ կ'ընդլայնի մինչև 460 հազարամերը տարածութեամբ արևելքէ արևմուտք : Հիւսիսային և արևմտեան կողմերը լեռնոտ են, իսկ մէջտեղուանքը քիչ լեռկայ և հարաւային կողմը գրեթէ տափարակ է : Գլխաւոր լեռներն են Կրեմբիրն և Ձէվիրդ յՍկոտիա, Մոնրէյն կամ Գեւթրիքն և Բիֆ լեռինք յԱնգղիա. և Գամպեան լեռինք՝ Կալլէսի գաւառին մէջ :

Կղզւոյն գլխաւոր գետերը Թէպէտե շատ երկայն չեն, սակայն խոր և ընդհանրապէս լայն են և նաւարկութեան յարմար բերան ունին : Գլխաւորներն են. Անգղիոյ մէջ Թէլմզ գոր Գաղղիացիք Դամիզ կը կոչեն, Հրմպըր, Մըրզէյ, Սիվլըն. Սկոտիոյ մէջ՝ Փորքն, Գէյ և Գլայս :

Մեծագոյն լճերն են Լոն Լոմրն և Լոնհըրս Սկոտիոյ մէջ : —Իռլանտան՝ քիչ մը ալեձև, բերրի սակայն ճախնային է և շատ գետեր ու լճեր ունի : Գլխաւոր գետերն են Շէնըն, Պէրոն, Սվիլ և Պոյն : Իսկ լճերէն նշանաւորներն են Լոննի և Լոնիերն, Քեյլարնի և Շէնընի լճերը :

Անգղիա կը բաժնուի 40 կոմսութիւն կամ շիր. Կալլէսի գաւառը 12. Սկոտիա 33. և Իռլանտա 32, որ չորս նահանգք բաժնուած են Ըլաղըր, Լէյնսղըր, Գոննոդ և Միւնսղըր :

§ 2<sup>o</sup> — Բնութիւն հողոյն. առաստաքիւն երկաթի, պղնձի, կապարի եւ անագի հսակաց.

Մեծն-Բրիտանիա երկրաբանական զարմանալի կազմութիւն մ'ունի. ամէն դարու ժայռ կը բովանդակէ : Երկաթը և հանքածուխը իր արուեստից ծաղկելուն մեծամեծ նպաստ եղած են : Իր հանքաց մէջ առաջին տեղին կը բռնէ հանքածուխը՝ որ սև աղամանդ ալ կը կոչեն : Այս հարստութեան պատճառաւ Անգղիացիք իրենց հայրենիքը հպարտութեամբ սեւ Հընդկաստան անուանեցին : Եւ Բրիտանիոյ արուեստից ծաղկելուն գլխաւոր պատճառն այս է :

Հանքածխոյ ընդարձակածաւալ շտեմարանները կրնանք երեք խումբ բաժնել. — Հիւսիսային, Միջին և Արևմտեան : Այս հաւաքածոյն՝ հանքածխոյ գլխաւոր զաւառն անուանելու է. Եւրոպոյոյ մէջ այս հրաշալի շտեմարանաց հաւասարող բան չկայ կ'ըսէ Ռէյնօ գաղղիացի տարրաբանը :

Հիւսիսային խումբ. — Այս շտեմարանները լեբանց զօտոյ մը կողերուն վրայ ըլլալով՝ զատ զատ աւազաններու շարք մը կը ձևացընեն, որոնց գլխաւորներն են Նորսհրմպըրլէն և Տրուսամ (և իբրև կեղրոն կը համարուի Նիւխալ), Գրմպըրլէն, Հուայդհէվն, Մէնչտըր, Կլասկօ և Էսիմպըրի կամ Էսիմպուրկ :

**Միջին խումբ.** — Ասոնց մէջ անուանի է Լէտցըբիւի շտեմարանը :

**Արևմտեան խումբ.** (Որուն մէջ կը համարուի Կալլէսի գաւառը) : Գլխաւոր շտեմարաններն են Մոնմըբիւր, Կլոսդըբիւր, Սրմսբրտդէիւր, Կլէմոնկընցիւր : Նիւուբորք, Գարսիժ, Մէրքըր-Գիսլիլ, Սվոնսի ամենէն ճոխ տեղերն են : Բայց այս աւազանաց մէջ ամենէն երևելիներն են Նիւխալ և Գարսիժ : Երկուքն ալ ծովեզերեայ դիրք ունին. և այս՝ շահընկալութեան համար մեծ առաւելութիւն մ'է : Ուստի բովբերէ եւլոյղ բեռնակառք կրնան ջրանցից և ծովային նաւահանգստաց շոգենաներուն մէջ պարպուիլ : Եւ ապացոյց մ'ալ այս է որ ամէն շարժ շոգենաներով անբաւ հանքածուխ կ'ընդունինք այս երկու մթերանոցներէ : Հաշուուած է թէ այս օրուան սպառմամբ (100 միլիոն տակառաչափ տարուէ տարի) մնացեալ հանքածուխը հազար տարուան մէջ կը վերջանան և կ'անհետանան :

Մեծն Բրիտանիոյ 3188 հանքածխոյ քրաներն ամէնը մէկէն 1866 տարուոյն մէջ 100 միլիոն տակառաչափէ աւելի արդիւնք տուին, որք 1850 ին ամէն քրայքն մէկտեղ հազիւ 50 միլիոն տակառ տուած էին : Շոգեշարժ մեքենայից գործածութենէն առաջ եկաւ այս արգասիքը : Միացեալ Թագաւորութեան մէջ միայն Իռլանտան զուրկ է հանքածուխէ :

1855 ին ածխահանքերէն 50,556,000 մ. կ. ածուխ երկրէն ղուրս ի վաճառ կը տարուէին. իսկ 1866 ին 100 միլիոն մ. կ. էն աւելի՝ երկրէն հանուեցաւ : Մետաղաց նկատմամբ ալ Անգղիան առաջին է. մտնող մետաղն աննշան է, որ հազիւ 13 միլիոն ֆրանկ արժէքի կը հասնի. մինչդեռ ղուրս ղրկուողը 700 միլիոն արժէքի է :

**Երկաթ.** — Անգղիա դեռ մի միայն երկիրն է՝ ուր երկաթը հանքածխոյ հետ միատեղ գտնուի և միատեղ հանուի : Երկաթը Անգղիոյ առաջին բերքերէն է : Եթէ Մեծն Բրիտանիոյ երկամն Գաղղիոյ երկամնէն աւելի ստորին ալ ըլլայ՝ սակայն ուրիշ ամէն վիճակաց մէջ ելածէն ալ աւելի ածան գնով կը ծախուի :

Կալլէսի գաւառը, Սդէմբըրդի կոմսուժիւնը, Եորգի կոմսուժիւնը, Շոքի, Տէրայիլի, Լէնքէտդըրի և Գրմպըրլէնի կոմսուժիւնները և Սլոյվսիան երկամահատաց գլխաւոր կեդրոններն են : Ամէն երկամահատաց մէջէն աւելի ծաղկած է Մէրքըր-Գիսլիլիւր՝ Կալլէսի գաւառին մէջ : Տարուան մը մէջ անգղիական ճարտարութիւնն 46 միլիոն մ. կ. երկաթ ի գործ կը հասնէ, և 1866 ին՝ 5,051,000 մ. կ. երկաթ ղուրս խաւրեց : Գրեթէ 600 բովբ ունի :

Անգղիոյ պողպատը ընդհանրապէս աղէկ ջուր ունի, մասնաւորապէս ի Շէֆֆիլտ և ի Պրմինկէմ : — Միացեալ Թագաւորութեան մէջ ծեծած պողպատ չգործուիր, հապա անբաւ ձուլած պողպատ ղուրսի երկիրներ կը ղրկէ :

Եւրոպոյոյ վաճառանոցաց վրայ Անգղիոյ Պղնձին հասնող չկայ : Ամենէն հարուստ պղնձահանքերն Կալլէսի գաւառին, Էնկլիսիլի, Գոնվուոյի, Տրվոնցիւրի և Իռլանտոյոյ են : Ասոնցմէ ելած արդիւնքը մինչև 5 կամ 600,000 տակառի կը հասնի, և 40 կամ 50 միլիոն ֆունդաց արժէքով : Գլխաւոր ձուլարաններն են Սվոնսիլի, Լիվըրուլի և Պրմինկէմի : Գաղղիոյ գործարաններէն մեծ մասը Անգղիայէն կ'ընդունին պղինձը :

**Կապարի** հանքերը (ընդհանրապէս արծաթախառն) տարին 100,000 տակառի և իբր 40 միլիոն ֆունդաց արժէքով արդիւնք կու տան Գրմպըրլէնի, Եորգի, Տէրայիլի, Սլոյվ-

սիոյ, Կալլէսի երկրին և Իռլանտիոյ մէջ կ'ելլէ կապարը:

**Մ.Տագրը՝** Մեծին Բրիտանիոյ բացուած հանքերուն ամենէն հին հարստութիւններէն մէկն է, վասն զի գրեթէ ստուգուած է թէ Փիւնիկեցի և Կարգեղոնացի նաւաստիք Կասիտերեան կղզիներէ անազ առնելու կու գային (1):

Կարգազինեայ կործանմանէն ետքը անազի վաճառականութիւնն անցաւ Մարսիլիոյ Փոկէսցոց ձեռքը, որոնք Նարպոնը իրենց գլխաւոր մտերանոցն ըրին: Գորնվուօլի և Տըվոնի կոմսութիւնները՝ տարին գրեթէ 24,000 տակառ անազ կը հանեն:

Ասիից զատ կը գտնուին նաև զինկ, քոպալթ, ալահանք, մասնաւորապէս ի Նորթհիլիչ (Չէսլըրի կոմսութեան մէջ), կը գտնուի նաև ընտիր կրանիթ կամ որձաքար յՍլովտիա և Գորնվուօլ. շինութեան աղւոր քարեր ի Բորդլէնտ (Տորսէլզիր) և գանազան տեղուանք. Թերթաքար ի Ուէսդմորլէնտ և Կալլէսի երկիրը, Բուսիլն ի Գորնվուօլ, ևն:

Ի հանքածխոյ և յայլևայլ մետաղաց եկամուտն մէկ միլիար ֆունսնգէ աւելի կը հաշուի:

§ 50— *Ջրեգերք, ծովախաղի որք բնական մեծ նաւահանգիստք կը ձեւացընեն, եւն.*

Ամեն երկիրներէ աւելի Բրիտանեան կղզիք պատրաստուած էին ծովային և նարտարարուեստ տէրութիւն մը կազմելու:

Իր բազմապտոյտ ափանց ընդարձակութիւնը (7000 հզմղր.) բազմամիւս ապաստանները՝ որ կ'ընծայէ նաւուց, ընդարձակ ծովախաղքը՝ որ բնական նաւահանգիստներ կը ձևացընեն, կարծես թէ կը հրաւիրէին զԱնգղիացիս ամենուրեք վաճառականական տեղեաց և համբարանոցաց հիմն ձգելու, որք օտարաց հետ հաղորդակցութիւնը դիւրացընեն: Այսպէս՝ Բրիտանեան նաւերու բազմութիւնը կը ծածկէ ծովերու երեսը: — Բա-

1 Տես Պլանքի. Պատմութիւն Վաճառականութեան և Արուեստից:

բերաղդաբար Եւրոպիոյ արեւմտեան ծայրը կեցած ըլլալով, և հին աշխարհին վերջին կայք, և Ամբրիկայի ճամբուն վրայ կղզիացեալ գտնուելով՝ անկախ, աշխարհիս շատ կղզիներուն վրայ ափրելով. և կերպով մը բռնած ըլլալով ամէն ծովերու մուտքն ու անցքը. բոլոր աշխարհիս նաւարկութեան գլուխ Մեծն Բրիտանիա՝ միանգամայն նպաստաւորեալ իւր ժողովըրդեան գործօն, քաջ և յանդուգն և յարատեղող հանձարէն, ունի առաջին կարգն ի մէջ տէրութեանց, որոց զօրութիւնը կայացած է մեծամեծ գործարանաց, վաճառաշահ քաղաքաց և արտաքին ստացուածոց վրայ:

Համառօտապէս բնենք Բրիտանական կղզեաց ափանց նշանաւոր տեղուանքը: — Արեւմտեան կողմանց ափունքը մեծաւ մասամբ խոր ծոցերով, քարակտուր սարաւանդներով և լեռնոտ Թերակղզիներով նշանաւոր են. նախ և առաջ դէպ ի հարաւային արեւմտեան կողմը երկնցած կը տեսնուի Գարնվուօլի Թերակղզին՝ աւարտեալ լէնտսէնտ կամ Ֆինիսդէրրայի գլուխներով. այս Թերակղզոյս հիւսիսակողմը կը զոգանայ Պրիսքըլի ջրանցք կոչուած մեծ ծովը. յետոյ ի մէջ ջրանցքին և Իռլանտիոյ ծովուն՝ է Կալլէսի երկիրն Թերակղզին, որ արեւմտեան կողմէն Գարնվուօլի զոգով աղեղնաձև կտրուած է:

Իռլանտիոյ ծովուն վրայ երեք նշանաւոր ծովաուաջք կան. որ են Մորգամպի գոգը, Սալվայի ծոցը և Գլայտի ծոցը՝ որ արեւմուտքէն գոցուած է Գանդլիի երկայն և նեղ Թերակղզիով: — Մեծին Բրիտանիոյ արեւելեան ափունքը ընդհանրապէս ցած են, մանաւանդ յԱնգղիա: զլխաւոր ծովաուաջքն են Դամիլի բերանը, Վաւի ծոցը, Հրմպրի բերանը, Ֆորթիի, Գէյի և Սըրրէյի ծոցերը:

Հարաւային ծովափունքը կարևոր ծոց չունին: Իռլանտիոյ արեւմտեան ծովափունքը քարակտուր և ժայռաւոր են: Հոն կը տեսնուին Կալուէյ և Տօնէկալ խորշերը. իսկ արեւելեան ծովեզերքը այնչափ բարձր չեն և քիչ ծովամուտք ունին, և սակայն կը գտնուի հոն Տըպլիմի խորշը:

1 Տես Պլանքի. Պատմութիւն Վաճառականութեան և Արուեստից:

§ 4<sup>o</sup> — Հաղորդակցութեան միջոցներ.

**Պետք եւ ջրանցք.** — Մեծին Բրիտանիոյ արեւելակողման գետերն են՝ Թէյմզ որ Օքսֆորտէն, Կրինիչէն եւ Լոնտրայէն անցնելով՝ հիւսիսային ծովը կը թափի : Հըմպր որ Հըլլ բաղբէն կ'անցնի եւ ձևացած է Դրէնդ եւ Ուզ գետերէ: Ֆորքն՝ Էտիմպուրկի ծոցը կը թափի: Մըրզէյ Իռլանտիոյ ծովը կը թափի. Սիվըրն Պրիսդըլի ջրանցքը: Ալժոն՝ Անգղիոյ հարաւակողմը: Շէննըն՝ Իռլանտիոյ մէջ, լճերէ կ'անցնի եւ Ովկիանոս կը թափի :

Մեծին-Բրիտանիոյ գետերը ջրանցքներով իրարու կապուած են, մանաւանդ Անգղիոյ մէջ: Տեսնելու արժանի բան է այս նաւարկելի գծերն որ ամէն կողմանէ երկիրը կը կտրեն: Բրիտանական կղզեաց գլխաւոր ջրանցքն են՝ Սկոտլոտի մէջ Քալէսոնիլն ջրանցքը, որ Միւրրէի ծոցը Ատլանտեան Ովկիանոսին հետ կը միաւորէ: Կլասկոյի ջրանցք որ Ֆորթհը Դլայտի կը կապէ:

Անգղիոյ մէջ. — Լիստէ Լիվըրուլ գացող ջրանցք որ Իռլանտիոյ ծովը՝ Հիւսիսային ծովու կը միացընէ:

Կրէդ—Դրէօն. Իռլանտիոյ ծովը Դրէնդի եւ Սիվըրնի կը միացնէ եւ Թէյմզի հետ հաղորդակցութիւն ունի Կրէդ ձէօնօցըն կամ Մեծ ջող անուանեալ ջրանցքին միջոցով:

Օքսֆորսի Ջրանցք որ Դամիզը Սիվըրնի կը միացընէ եւ որ հաղորդակցութիւն ունի ձէօնըլն ջրանցքին հետ:

Թէյմզի եւ Սիվըրնի ջրանցք. Թէյմզի գետակցոյն Իսիսի եւ Սիվըրնի մէջտեղ. Ատլանտեանը Հիւսիսային ծովուն կը միացընէ:

Ուիլտի եւ Պէրօի ջրանցք. Թէյմզի եւ Պրիսդըլի մէջտեղ, վերոգրելոյն պէս երկու ծովերը իրարու կը միացընէ:

Աւոլընի եւ Հրէսքրաիլի ջրանցքները որ Մէնչըստըրը Իռլանտիոյ ծովուն եւ Հիւսիսային ծովուն կը միացնեն:

Նշանաւոր է նաեւ Պրիւն—Աղղը ջրանցքը որ Մըրզէյի ջըրանցքին միջոցով Դրէնդը Սիվըրնի կը միացընէ 120էն 160 տա-

կառաչափով նաւերը կ'ընդունի եւ ժայռերու մէջէն եւ լերանցամէջերէն կ'անցնի:

Այս գլխաւոր ջրանցքները կամ իրարու կամ վաճառաշահ բաղբաց եւ կամ հանքերու կապուած են ուրիշ շատ մը երկրորդական ջրանցքներով:

Չմոռնանք նաև Իռլանտիոյ մէջ Արքայական ջրանցքը, մեծ ջրանցքը՝ որոնք Տըպլինէն Շէննըն կ'երթան եւ կերպով մը Իռլանտիոյ ծովը Ատլանտականին կը միացընեն:

**Երկարաղիւի եւ Հեռագիր:** — Անգղիա Եւրոպիոյ ամեն երկիրներէն աւելի երկամուղի ունի: Յիրաւի Անգղիոյ մէջ այնքան երկամուղի կայ՝ որ ամեն կարևոր բաղբ իրարու հետ հաղորդակցութիւն ունի ռէլլուէյներու միջոցով: Եւ սակայն կրնանք ըսել թէ Անգղիոյ եւ Սկոտլոտի երկամուղեաց ցանցակերպը 12 գլխաւոր գծերէ կը բաղկանայ, որոնք իրարու միացած են բազմաթիւ երկրորդական եւ երրորդական գծերով:

- 1. Արեւելեան գիծն Լոնտրայէ՝ Եարմըտն.
- 2. Հարաւային արեւելեան գիծը. Լոնտրայէ՝ Տուվր:
- 3. Հարաւային գիծը. Լոնտրայէ՝ Պրայդըն:
- 4. Հարաւային արեւմտեան գիծը. Լոնտրայէ՝ Տորչըստըր, Սաուդէմբըրէն անցնելով:
- 5. Արեւմտեան գիծը. Լոնտրայէ՝ Բլիմըտն, Պրիսդըլէն անցնելով:
- 6. Հիւսիսային արեւմտեան գիծը. Լոնտրայէ՝ Կլասկօ. անցնելով Պրիսկէմէն, Լէնքէստըրէն եւ Գարլայէն, Տիւրով մը Պէնկորի վրայ:
- 7. Հիւսիսային գիծն. Լոնտրայէ՝ Ինվէրնէս. անցնելով Բէմպրիճէն, Լինքօլէ, Եորքէ, Տիւրհամէ, Նիւքասլէ, Էտիմպուրկէ եւ Ապէրտինէ:
- 8. Կեդրոնական գիծ. Լոնտրայէ՝ Լիտս. անցնելով Լէյսդըրէ եւ Տէրպիլէ. Տիւրով մը Պրիսկէմի վրայ:
- 9. Ընդամէջ Լիվըրուլայ եւ Հըլլի գիծն. Մէնչըստըրէ եւ Լիտսէ անցնելով:

10. Ընդմէջ Մէրիբորդի եւ Նիւհասլի գիծն Գարլայլէ անցնելով:

11. Ընդմէջ Կրիմոնչի եւ Էսթիմպուրկայ գիծն. Կլասկոէն անցնելով:

12. Մանիգայի ծովափանց գիծն. Տորչըզըրէ Տոււրբոլոր Մանիքայի նաւահանգիստներն իրարու և Լոնտրայի կապելով: Ասոնցմէ զատ շատ երկրորդական զծեր կան որ նց վրայ տեղեկութիւն տալ չներէր մեր գրքուկը:

Էնկլիս կղզին (§ 1). — Յամաբ երկրի հետ կապուած է Մընէյի անցից վրայ ձգուած 3 1/2 հազարամեղր երկայնութեամբ ծովային խողովակական կամուրջ pont tunnel ով:

Իռլանտիոյ մէջ ալ շատ կը գտնուին. — Տըպլին միացած է Գորգ բաղբին երկամուղուով մը, որ կը ճղանայ ի Ուոլըրֆըրտ, ի Լիմէրիք և ի Բելարնի լճերը: Ուրիշ շաւրով մ'ալ կը հաղորդակցի ի Մըլլինկար և ի Կալվա, և երկրորդով մ'ալ Պելֆաստի հետ: Գիծեր ալ կան որ այս յետինէս Տուեն, Էլբակ, Էնդրիմ և Լոնտընտէրի կը տանին:

Վերջապէս Անգլիոյ երկամուղիքը 22,800 հզմղր կը բռնեն: Յետագայ թիւերը՝ Մեծին Բրիտանիոյ մէջ երկամեայ շաւղաց արագ անման վրայ գաղափար մը կու տան: 1851 տարուոյն երկամուղիք 11,000 հզմղր. տարածութիւն ունէին. այս օրուան օրս ինչպէս որ վերը նշանեցինք 22,800 հզմղր. երկայնութիւն ունին: 1851ին 85,000,000 ուղևոր կը հաշուէր, 1864ին 420,000,000 էն աւելի անձ գրուած է հաշուետոմարին մէջ: 1851ին 15,000,000 ս. լ. էին բովանդակ հասերը, իսկ 1864 ին 34,000,000 լիրայի կը հասնէին:

Ելէֆրակյան եւ ծովային հեռագիր եւ

Ասյակսեան մարտիս .

Ելքերական հեռագիրը՝ ամենէն հեռաւոր երկիրները հաղորդակցութեան մէջ դնելով՝ երկամուղեաց քաղաքականացու-

ցից մեծ զործը կը կատարելագործէ և կերպով մը ժողովուրդները և ազգերը մէկմէկու կը միացընէ: Քսան տարիէ ի վեր անկից ստացած արդիւնքնիս մեզի գուշակել կու տան թէ ինչ հիանալի և ճշմարտապէս սքանչելի ճակատագիր ունի այս գիւտս:

Եւրոպա և Միացեալ-Նահանգք եռանդեամբ ընդունեցան հեռալրոց այս նորատեսակ փոխադրութիւնը: Հիմա՝ Անգլիա, Գաղղիա, Գերմանիա, Պելճիա, Հոլանտա, Տաճկաստան և այլք բազմամիւս ցանցեր ունին՝ որոնք աշխարհագրական ընդհանուր տախտակի մը վրայ՝ հիւսուածքի մը ոստայններու կը նմանին: Եւրոպիոյ մէջ վաճառաշահ կամ թէ փոքր ինչ արուեստական քաղաք մը, տեղ մը չկայ՝ որ այս ելքերական զծերով ընդհանրութեան միացած չըլլայ:

Այս օրուան օրս Մեծն Բրիտանիա 8 անգամ ցամաք երկրի հետ կապուած է ծովային հեռագրով:

Տոււր միացած է Գալէյի և Օսդանտի: Ֆուլգըրն՝ Պուլոն-ելլի. Նիւնէյլը՝ Տիէրի. Ուէմըտո՝ Նորմանտեան կղզեաց և Շէրպուրի. Հոլիհէտ՝ Տըպլինի. Սկոտլիա՝ Պելֆաստի. — Հարաւային Կալլէսի երկիրը՝ Ուէլքըսֆըրտի (Իռլանտա) ու Անգլիոյ արևելեան ափունքը՝ Ստորին-Նահանգաց, Հանովրայի և Կիմբրիան. Պերակղզոյն՝ Հէլիոլանտ կղզիէն անցնելով: — Վալէնիա կղզին (Իռլանտա) Նոր-Երկրի (յԱմերիկա): — Ել. հզրը. երկրին մէջ 26,200 հզմղր. երկայնութեամբ ցանցակերպ մը կը ձևացընէ:

Լոնտրա մէկ կողմանէ հաղորդակցութիւն ունի Հնդկա-Չինու հետ՝ Գերմանիայէն, Աւստրիայէն, Եւրոպիոյ և Ասիոյ Տաճկաստանէն, Պարսկաստանէն, Պելուճիստանէն, Հնդկաստանէն և Պենկալայի ծոցին եզերքէն անցնող Պելքերով: Միւս կողմանէ Միացեալ-Նահանգաց հետ անդրատլանտեան մալխով՝ որ 1866 ին ձգուեցաւ և որ Իռլանտան Նոր-Երկրի կը միացընէ: — Այս օրուան օրս այս հեռագրական գիծը բովանդակ Միացեալ-Նահանգաց մէջէն կ'անցնի և հեռալրերը մինչև Սան-Ֆրանչիսքո (Նաղաղական Ովկիանոսին վրայ) կրնայ հասցը-

նել : Այս գիծը ղէպ ի հիւսիս կ'երկնայ Ովկիանոսի եզերքէն. բիչ առենէն Պնդրինկի ծոցը անցնելով պիտի միանայ ուսական և սիպերիական ցանցին հետ, որ ուղղակի Փնդրպուրկէ մինչև Քիախղա (չինական սահմանազուխ) կ'երթայ :

Քիչ մ'ալ վերոյիշեալ անդրաշխանտեան մալխոյն վրայ խօսինք :

Անտէրսըն քաջ նաւապետին հրամանին տակ, աշխարհածանօթ Կրէք Իոդէրն կամ Լեւիաքան հնագին շոգենաւը, 1865 տարւոյն յուլիսի 23ին ճամբայ ելաւ Իուլանտիոյ ծովափանցմէ ղէպ ի Նոր-Երկիր, անդրաշխանտեան մալուխն կրելով և զայն իր ետեւէն ի ծով ձգելով : Բայց զժբաղդաբար չյաջողեցաւ. մինչդեռ Նոր-Երկրի ափանց մերձեցած էին, մալուխը բրդաւ և անկարելի եղաւ զայն որսալ Ովկիանու անդնդոց մէջ : Յուսահատաբար բոլոր գործակատարք և նաւաստիք յետոյ դարձան յԱնգղիա : Սակայն չվհատեցան. դարձեալ գործառնութեան ձեռք զարկին և ընկերութիւնք խոստացան 1866ին, ուրիշ մալուխ ձգելու :

Ներեցէք ուրեմն վայրկեան մը այս 1866 ին մալուխը զիտելու : Յառաջին տեսլեան՝ հասարակ պարսնէ մը չտարբերիր. սոսկ բիչ մ'աւելի կարծր, պինդ և ամուր կ'երևայ : Սակայն այն կոշտ երևոյթովը հանդերձ մարդկային արուեստից յետինն և ամենէն հիանալի զուխ գործոցն է :

Ոչ կանացի պահուստանաց, գեղանաց՝ յարգի և թանկագին գոհարքը, ոչ ոսկեծել և ծաղկեկար զիպակրը և կերպասքը, և ոչ նաև ամենէն արուեստական մեքենայք՝ այս կոշտ մալխոյն չափ արուեստ և հանճար կը ներկայացնեն մեզի :

Այս մալխոյն կեղծոնը կարմիր պղնձեայ թելեր կան էլեքտրականութիւնը հաղորդելու համար. շրջանակը Կուժձա-Բէրքայի չորս խաւ. առանձնացեալ նիւթ, և վերջապէս մակերևոյթին վրայ քժանապատ երկաթեայ տասն թել՝ որ թաթաւման ժամանակ առաջ եկող ձկտումը կարենան կրել : —Այս մալխոյն մէկ հազարամէրը 800 հազարակրամէն բիչ մ'աւելի կը կշռէ, բայց չբոյ մէջ այս ծանրութեան կէսը կը կորսուի :

—Ռովանդակ երկայնութիւնը 4000 հզմղր. է և ամբողջական ծանրութիւնն զրեթէ 5000 ատկառաչափ :

Լեւիաթանը՝ որ Յուլիսի տասներեքին ելած էր Իուլանտայէ, նոյն ամսոյն 27ին հասաւ Նոր-Երկրի մառախլապատ ծովափանց, և ք որ անընդհատ ուղևորութենէ ետքը : Յետ կատարման այս անյուսալի գործոյս, իւրաքանչիւր օր ի հեռալրոց շահուած զուտ վաստակը 12,000 Ֆրանկաց կը հաշուի (1867) : Աւելի մասնաւոր տեղեկութիւն խնդրողները կրնան Սէզան Գաղղիացոյն Անդրաշխանտեան Մալուխ անուամբ տեսարակն ընթեռնուլ :

§ 6°. — Կլիմայ, Երկրագործութիւն

Բրիտանական կղզեաց կլիմայն ամպամած, խոնաւ և շատ փոփոխական է : Անձրևները յաճախ են և մէզերը մասնաւորապէս ծովափանց վրայ կը տիրեն : Սակայն օդը վատառողջ չէ : Սառնամանիք շատ չեն զիմանար : Ովկիանու սիւքը ձըմեռուան սաստկութիւնը կը բարեխառնեն և ամառուան եղանակը կը զովացնեն : Արևմտեան քամին յարատև է : 50°—60° ք տակ աւելի բաղք է կլիմայն բան թէ Միշին Ռուսաստան և Ասիոյ մէջ տեղուանքը : Կլիմային այսպիսի տարբերութեան պատճառը Ատլանտիանու և Կովք սղրիմ (1) ի հովերուն բարեխառն ազդեցութիւնն է, որոնց ուղղակի յանդիման կիյնան մեծն Բրիտանիա և Իուլանտա :

(1) Կովք սղրիմ : — Նշանաւոր չրի ընթացից կամ հոսանաց մէկն, այն է որ ընդ մէջ արևադարձի (inter-tropical) կամ Հասարակածային կը կոչուի. և օր Ովկիանու չրերը արևելքէ յարևմուտ կը տանի, երկրն թաւալման հակառակ ուղղութեամբ : —Կրնայ ըստիլ թէ ընդարձակածաւալ և խաղաղ ճօճմանք մ'է օր Ովկիանու հաւասարակշռութենէ կախումն ունի : Հռչակաւոր Կովք սղրիմը (Մէկիզոյի ծոցին հոսանքը) ասկից կը ծագէ : Միացեալ-Նահանգաց հարաւակողման ափունքը կը շրի և Պահամայի Նոր չրանցքէն կ'ելլէ, 2 մէրք առ մանրերկրորդ արագութեամբ, յետոյ ղէպ ի հիւսիս կ'ուղղի միշտ ընդլայն-

Անգղիոյ հողը բնականէ շատ բարեբեր չէ՝ սակայն լուսաւորեալ մշակութեամբ մը բերրի եղած է: — Քիչ աշխարհ կայ որ Անգղիոյ պէս պարարտ և լաւ ոռոգուած արօտ և դալարիք և աւելի գեր և ընտիր անասուններ ունենայ: — Արշառոց զարմանին շատ օգտակար է խոնաւ բարեխառնութիւնը:

Աշխատաւորք՝ զործատանց, նաւերու . հանքաց և վաճառատանց զբաղած ըլլալով՝ քիչ բազուկ կը մնայ երկրին մշակութեան, և այն պատճառաւ երկրին բերքն ալ առատապէս չբաւարէր բնակչաց: Միայն Իռլանտան՝ զրեթէ ամբողջապէս հերկագործ մնացած է: Այլ և այլ բերքերէ զատ՝ անտի շատ գետնախնձոր, վուշ և կանեկի կը բաղուի:

Անգղիոյ երկրագործաց միայն 2/7 ը իրենց մշակած հողերուն տէր են. ազարակի վարձկան ըլլալը ընդհանուր սովորութիւն մ'է: Կալուածները շատ աւելի բաժնուած են յարեւմտաւ քան թէ յարեւելս: Արեւմուտք շատ կարագ, պանիր և մրգօղի կը հայթայթէ:

Հարաւային կողմը՝ ասրաւոր կենդանեաց մասնաւոր ցեղերը կը պահուին: Նորտհըմպրլէնտ, Նորթօլզ, Սըֆօլզ, Էսսէքս կոմսութեանց մէջ ազարակները ամենէն աւելի կարգաւորեալ են: Դաշտերը ժանտ մացառներով բաժնուած են մէկմէկէ. ազարակաց ներքեւ մաքուր և շնորհալից բաժնուած է և այն հանգստութիւնը (comfort) կ'ընծայէ, որուն համար Անգղիացիք մեծամեծ ծախքեր կ'ընեն: — Էսսէքս, Գէնդ, Սըֆօլզ, Բէօլլընտ, Հէօրֆըլտ, Պէրքս, Հէնդս Հէօրըֆըլտ կոմսութեանց:

Նալով և Նոր Սկոտլոնտ մօտ 400 հզմզր լայնութիւն կ'ստանայ: Հոն դէպ յարեւելս կը գտնուայ, Նոր-Յրկրի հարաւային խութերը կ'եզերէ և իր ընթացքը կը շարունակէ և միշտ արեւելք երթալով կը բարեխառնէ Գաղղիոյ, Բրիտանեան կղզեաց և Նորվեկիոյ կիճմայն: Առաջատարը նաւերը Եւրոպայէն Ամերիկա երթալու համար Գանարեան կղզեաց լայնութեան աստիճանը կիշնան և հաստաշակածային հոսանքը կը բռնեն, որ զիրենք շուտ մը արեւմուտք կը տանի. — Իսկ Ամերիկայէ եկող առաջատարները ընդհակառակն Կոլմբ-սղրիմի ընծացքը կը բռնեն.

թիւները թագաւորութեան ամենէն ազնիւ և առատ ցորեանն կը հասցընեն: Շատ գաւառներ զործունէութեամբ գետնախնձորի մշակութեան կը պարապին: Գրեթէ 75,000 արտավար երկիր գայլուկ մշակուած է: Հարաւ և հարաւային-արեւմուտք զրեթէ իւրաքանչիւր մշակ իր պարտէզն ունի մրգօղի պատրաստելու համար: Հէօրըֆըլտ և Կլոսղըր համբաւաւոր են այս ըմպելոյս կողմանէ: Երկրին խոնաւութեանը և բնակչաց՝ մօի ունեցած ճաշակին պատճառաւ, մշակելի հողոյն կիսէն աւելին անասնոց սննդեան և արածման պահուած է:

Տիւրհամի կովերը՝ իրենց բազմութեանը և մօի լաւութեանը համար յարգի են: Հոչակաւոր են Այլիի (յՍկոտլոնտ) և Իռլանտիոյ եզինքը: Կովերը աղէկ և առատ կամ կու տան: Աշխարհածանձ են Չեսղըրի (Անգղիա) և Տընիօբի (Սկոտլոնտ) պանիրները: Համբաւաւոր են Անգղիոյ ոչխարները, ոմանք իրենց մսոյն և ոմանք բրդոյն համար:

Անուանի են մասնաւորապէս Նիու Գէնդ, Տիշլէյ, Սուութաուն (Southdown), Գոդսվոլտ ցեղերը, որոնք իրենց անունը Անգղիոյ հարաւային և հարաւային-արեւմտեան այլեայլ տեղերէն առած են:—Անգղիոյ ոչխարաց բուրդը՝ ներքին սպառման բաւական չըլլալով, զործարանները Աւստրալիայէն կ'ընդունին իրենց պիտանի բուրդը:

Անգղիոյ երկվարները՝ արաբական ցեղին և բուն անգղիական ցեղին միացմանէն առաջ եկած ցեղ մ'է և ընդհանրապէս ընտիր կառածիք երկվարներ են և առոյգ: Անուանի են Եորգ և Լինգօլն նահանգաց ձիերը:

Անգղիոյ խոզերու ցեղը, որ կարճ սրունք ունի, դիւրաւ կը գիրնայ և միւր համեղ է: Նիու-Լէյսղըրի, Համբըրիի, Միտլ Սէքսի, Պէքսշիրի ցեղերը մասնաւորապէս հոչակուած են: Պատուական է Եորգի ապուխտը: Բուն Մեծին-Բրիտանիոյ մէջ հաւեղէն քիչ կը գտնուի, և անոր համար Գաղղիա իրեն խիստ շատ հաւկիթ կը դրկէ:

§ 7° — Ճարտարութիւնք.

Անգղիական ցեղն իրեն հետ կը տանի միշտ իր անշինջ կնիքը: Ինչ որ կը հիմնէ նա՝ զօրութեան և մեծութեան կերպարանք մ'ունի: — Սաքսոն հանճարը կը պանծայ իր յողթած զժուարութեանցը վրայ: Հակիրճ. անգղիացին յանդուզն է և միանգամայն յամառ:

Ձէ թէ միայն Անգղիոյ մէջ՝ ամէն երկիրներէ աւելի զարգացած են ձեռագործք, հապա նաև ինքն եղած է արուեստից որրանը: Եւ ինքն նախ և առաջ հասկցաւ թէ արդի բողաքականութիւնը ճարտարարուեստական արդեանց հիմանցը վրայ կը հանգչի: — Բրիտանիոյ բնակչաց կէսը գործարանաց մէջ կ'աշխատին և անով կ'ապրին: Եթէ հիւսիսակողմը և թէ հարաւ արուեստական բաղաքաց կամ նաւահանգստաց մէջ մըտնանք՝ ամէնուն մէջ ալ մի և նոյն գործունէութիւնը՝ նոյն եռանդը և աշխատանաց մէջ յարատուութիւնը կը գտնանք: Երկաթուղիք, ջրանցք, ամենուրեք խաչաձև կը կտրեն զմիմեանս. ամէն տեղ կ'երևայ գործատանց և գործարանաց սիւներէն բարձրացեալ ծուխը, ամենուրեք կը սուլէ հալոցաց և տեղաշարժից շրջին: Վերջապէս այս է արուեստից զերաստիճան երկիրը:

Եւ սակայն անգղիական բարօրութեան հիմանց մէկն բամբակը այս յետին տարիներուն մէջ տազնապալի վիճակ ունեցաւ: 1860 էն առաջ միջին հաշուով, բամբակի մուտքը տարուէ տարի 1129 միլիոն ս. լ. էր. որուն 869 միլիոնը այսինքն  $\frac{3}{4}$  ը Միացեալ Նահանգացմէ կու գար: — Ամերիկոյ բողաքական պատերազմը շուտ մը այս բերքին մուտքը նըւազցոց: Բայց յետոյ այլ և այլ երկիրներ և Տոմկաստան բամբակ տնկուեցաւ և յաջողեցաւ, այնպէս որ 1865 տարւոյն վաճառամտութիւնքն դարձեալ գրեթէ 1 միլիարի կը մերձենար: Այս զուամրիս մէջ Եգիպտոսի մասը 177 միլիոն է, Պրագիլի 55 միլիոն, Չինաստանի 36 միլիոն, Միացեալ-Նահանգք միայն

190 միլիոն հայժայժեր էին: 1866 տարւոյն բամբակի մուտքը 1300 միլիոն ս. լ. ը. անցաւ: Անգղիա՝ այս հիւսուածքիս համար 3000 մանարան ունի:

§ 8° — Կարգաբանութիւն վիճակաց եւ ֆադաֆաց ռուս հասկեւսութեան արուեստից

**Արոս** ի կողմանէ Անգղիոյ ամենէն հարուստ զաւառներն են՝ Սըմբըսէդ, Կլոսդըր, Մոնմըտհ, Հէօրըֆըրտ, Շրոքշիր, Վուսդըր, Ուելլզա. այսինքն ընդհանրապէս արևմտեան զաւառները:

**Երկրագործութեան** պարապող կոմսութիւններն են՝ Լինքոլն, Էսսէքս, Գէնդ, Սըսսէքս, Սաուդէմըրըն, Պէտֆըրտ, Հէօրըֆըրտ, Պըքինկէմ, Օքսֆըրտ, Միտլսէքս:

**Հանգ եւ գործասուն.** — Նորտհըմպըրլէնտ, Եորդ, Նորֆոլք, Սըֆոլք, Գորնուօլ, Ձէսդըր, Լէնքէսդըր, Ուէսդմորլէնտ, Գըմպըրլէնտ, Ուտըվիք, Սդէֆֆըրտ, Տէրպի, Լէյտդըր: — Կալլէսի զաւառը՝ թէև քիչ բնակիչ ունի (1,100,000) բայց հարուստ է հանքածխոյ բովուց կողմանէ: — Երկու մասի կը բաժնուի. հիւսիսային Կալլէս և հարաւային Կալլէս: Յետինն աւելի արուեստական է և հոն ամենէն ծաղկեալ կոմսութիւնը Կլէմորկըն է: — Սկոտիան երկու բնական մաս բաժնուած է. Բարձր-երկիրք կամ Հալլէնտս (Highlands), և Յած երկիրք կամ Կաուլէնտս (Lowlands): Յետինքն աւելի բնակուած են, աւելի գործատուն և աւելի առևտուր ունին քան զառաջինն: Արուեստական կոմսութիւններն են՝ Լանարք, Ռէնֆրիու, Սդիլիլիսկ, Էտիսմպըրկ: — Իռլանտիոյ մէջ Տըպլին և Անդրիմ կոմսութեանց արուեստքը յառաջադէմ են:

Անաւասիկ այս չորս երկիրներուն իւրաքանչիւրոյն մէջ արուեստից մասնաւորութեամբ նշանաւոր տեղեաց պատկերացոյցը:

**Բամբակեղէն.** — Մէնչըսղըր, Պոլլըն, Պլէքպէօրն, Բրեսդըն. Ռոչտէլ, Վիկէն, Պէօրի, Աշղըն-էօնտէր-լայն. Սդրքորդ, Նորվիչ և Լոնտրա՝ Անգղիոյ մէջ. — Կլասկօ՝ Սկոտլանդի մէջ :

**Ասուեղէն.** — Լիտս, Հէլիֆաքս, Պրէտֆըրտ, Հըտէրսֆիլտ, Գէնտըլ, Ֆրոմ, Սըրաուտ, Գոլչսղըր, Շրիուզպէրի, Սնլիսպէրի, Էքսղըր, Դաունդըն, Գովընդրի, Նորվիչ, Նոդդինկէմ, Կլոսղըր. Լէյսղըր՝ Անգղիոյ մէջ. Կլասկօ և Բէրթն Սկոտլանդի մէջ :

**Կսաւեղէն.** — Վորինկըն, Լիտս, Պարնսլէյ, Էքսղըր՝ Անգղիոյ մէջ. Լիզպէօրն, Նիուրի, Պէլֆաաղ, Տրոկէտա, Գուդհիլլ, Մոնէկըն, Արմա, Սլիկօ, Կալվայ և Տըպլին՝ Իռլանտիոյ մէջ. — Կլասկօ, Տընտի, Բէզլէյ և Մոնդրօզ՝ Սկոտլանդի մէջ :

**Միսաւեղէն.** — Գովընդրի, Մաքսֆիլտ, Լոնտրա, Նոդդինկէմ, Տէրպի, Շէֆֆիլտ՝ Անգղիոյ մէջ. — Բէզլէյ՝ Սկոտլանդի մէջ, Տըպլին՝ Իռլանտիոյ մէջ :

**Երկաթեղէն.** Պղնձեղէն, դանակ, զմեղին, կղպակ եւ երկաթեայ գործիք, գրիչ, եւն : — Շէֆֆիլտ, Պրմինկէմ. Լոնտրա, Պարնսլէյ, Վուլվէրհամդըն, Բէզլէյ, Տըտլէյ, Բոդըրհամ, Շրիուզպէրի, Գոլլըպրուգտէլ՝ Անգղիոյ մէջ. — Մէրթըր Դիտվիլ, Սվոնսի, Նիթ՝ Կալլէսի գաւառին մէջ. — Դամբերին, Դլայտ, Վէօրքս՝ Սկոտլանդի մէջ :

**Շոգեաւած մեքենայ.** — Նիւքասլ և Կլասկօ.

**Գոհարեղէն.** — Շէֆֆիլտ, Պրմինկէմ և Լոնտրա :

**Խեցեղէն.** — Պէօրսլէմ, Նիւքասլ-էօնտէր-լայն, Սդրք, և Սդէֆֆըրտշիրի ալեալ բաղաբքը, Պրկինկէմ՝ Անգղիոյ մէջ. — Կլասկօ՝ Սկոտլանդի մէջ :

**Յախնապակ.** — Վուսղըր, Բէնիլվէօրտն և Սդէֆֆըրտշիրի : **Խաղախորդուրիւն, պատասուրիւն մարոյ, ձեռնոց, եւն.** — Լոնտրա, Պրիսղըլ, Վուսղըր՝ Անգղիոյ մէջ. Բէրտն՝ Սկոտլանդի մէջ. — Լիմբերիք Իռլանտիոյ մէջ :

**Ապակեղէն.** — Լոնտրա, Պրմինկէմ, Պրիսղըլ՝ Անգղիոյ մէջ. Կլասկօ՝ Սկոտլանդի մէջ :

**Թուղք.** Մէսսղըն, Հէօրըֆըրտ, Պատն, Եորզշիր, Կալլէսի երկիրը և Սկոտլանդի բանի մը կոմսուքիւնները :

**Կաւք.** Լոնտրա, ևն :

**Ճամաւոյց.** — Լոնտրա, Գովընդրի :

**Նաւաւորութիւն.** — Լոնտրա, Լիվըրքուլ, Կլասկօ և շատ նաւահանգիստներ :

§ 9<sup>o</sup> — Վաճառականութիւն.

Մեծին Բրիտանիոյ մէջ երկու կարողութիւնք այսինքն արուեստ և առևտուր անբաժանելի կերպով կապուած են իրարու : — Եւ յիրաւի առևտրոյ հաստատմամբ առաջ եկած է արուեստագիտութիւնը և այնու կարևորութիւն մ'ստացած : — Անգղիական հանճարը առևտրոյ մէջ կը գերազանցէ քան զամենայն ազգս և երբէք աննշան վաճառաշահութեան ձեռք չզարնէր : — Եւ իր շահն և վաստակը հանելով հանդերձ՝ զիտէ նաև իր պատիւը պահել : Սակայն այս ազգիս սեպհական հանճարէն աւելի՝ Մեծն Բրիտանիոյ վաճառականական յաջողակութիւնն իր կողքեցի դիրքէն կը կախուի, որ բնակիչները կ'ստիպէ իրենց հարստութիւնը նաւարկութեամբ դիզելու :

Ձկայ երկիր մը, որ իր առևտրական և ճարտարարուեստական կարգադրութեանց մէջ այսչափ ազատ ըլլայ : — Ամենայն արուեստք ազատաբար կը կատարուին : Արտահանութեան ամենևին մաքս չկայ և ներս մտնող նախնական նիւթերն ալ մաքսէ զերծ են. ամենայն խափանմունք վերցուած են :

**Վաճառաբերութիւնք.** — Ընդհանուր առևտրոյ վաճառաբերութիւնքն 1866 ին զրեթէ 7,380 միլիոն ֆունտը պ'ելլէր, որոնց 5 1/2 միլիարը օտար երկիրներէ կ'ընդունէր և մնացորդը բրիտանական կալուածներէ (922 միլիոն միայն Հնդկաստանէ) :

Ահաւասիկ վաճառաբերութեան զլլաւոր ապրանքը, իրենց կարևորութեան կարգաւ :

Ասուտ քամակ (1,938, միլիոն ֆունտը 1866 ին :

Ալիբրոտ բերք (745, միլիոն ֆռ.). բուրդ (449 միլ. ֆռ.). Թէյ (278 միլ. ֆռանգաց. անգուտ շաքար (270 միլ. ֆռ.). շինութեան և ուրիշ փայտեր, մասնաւորապէս Շուէտ և Նորվեկիայէն 261, միլ. ֆռ. խահուէ, անողորկ և հիւսուած մետաքս, ցորեն, անողորկ վուշ, լեղակ, գինի, ափիոն, Ճրագու Հնդկաստանու կերպաս, ռոմ, կէտի եղ, անմաքուր կանեփ, տորոն, անողորկ և պատրաստեալ կաշի, ծխախոտ, մորթ և մուշտակ, մոխիր և բոգաս, օղի, բրինձ, կտաւատ, որդան կարմիր, երկաթի ձող, պանիր, ևն :

1866ին Անգղիոյ ամենէն աւելի ապրանք հայժայժող երկիրներն են՝ առաջին Միացեալ-Նահանգք 1,171,000 միլ. ֆռանգաց, երկրորդ Գաղղիա 925 միլ. ֆռ., Ռուսաստան 500 միլիոն, Հոլանտա գրեթէ 300 միլիոն, վերջապէս Չինաստան 300 միլիոն ֆռ. ևն, ևն :

**ՎԱՃԱՆԱԽԱՆՈՒՄՆԵՐԻՆԸ.** (Բուն Անգղիոյ, գաղթականութեանցը և կալուածոց) 1866 ի արտադրութիւնքն 6000 միլ. ֆռանգաց կը հաշուէր, որոնցմէ 500 միլիոնը Հնդկաստան շրկուեցաւ :

Արտադրութեան զլխաւոր ապրանքն են՝ բամբակեայ հիւսուածք (1,552 միլ ֆռ.), ասուեղէն 543 միլ., կոածոյ երկաթ և պողպատ 370 միլիոն, բամպակեայ դերձան (343 միլիոն), զուտ շաքար, վշեղէն, երկաթեղէն, դանակեղէն, երկաթեայ, պղնձեայ և պղնձանէ գործուածք, ակնեղէն, ոսկեղէն, աղ, գլխարկ. ձուկ, գործուած անագ, առատ հանքածուխ, Թղթեղէն, ապակեղէն, որսի զնտակ, մետաքսեղէն, պատրաստեալ և անպատրաստ կաշի, ցորեն, ալիւր, օճառ, մոմ, անագ, սղած միս, տապեղարարութեան նիւթեր, Թամբի գործածք, հնացեալ երկաթք, իւղալից հնտեր, ոստրէ, կալաքար, օշնան, փերեզակաց ապրանք, խեցեղէն, երկաթուղեաց երկաթ (rail), մեքենայ, զէնք, արմտիք, խահուէ, արաթթ, որդնուկ, լեղակ, քաքաս, ունիազ, զունատու փայտ, փղոսկր, բօբոյի եղ, բօբօյի ընկոյզ, խէժ, եղէզ, համեմ, բամբակ, պղպեղ, Սակօ, Սարսաբարիլա, ադամանդ, մարգարիտ, շալ, ևն :

Անգղիական ապրանքը զլխաւորապէս Միացեալ-Նահանգաց, Ստորին-Նահանգաց, Գաղղիա և Տաճկաստան կ'երթան :

§ 10<sup>o</sup> — Փոխասուութեան Ընկերութիւնք, Ապահովագրութիւնք եւ զանազան Ընկերչակութիւնք.

Միացեալ Թագաորութեան փոխատուութեան տներէն ամենէն նշանաւորը և համբաւաւորը Անգղիոյ դրամասուցն է (Bank of England) Լոնտրա հիմնուած յամին 1694, և որ երկրորդական օժանդակներ ալ ունի Լիվրբուլ, Մէնչսթըր, Պրմինկէմ, Պրիսթըլ, Լիտս, Նիւքասլ, Հըլլ, Բլիմստհ, Բորդմստհ և Լէյսթըր քաղաքաց մէջ : — Ինքը կը հատուցանէ հասարակաց պարտիքը, իրեն ձեռքն է Տէրութեան զանձապետութիւնը և զրամակոխութիւնը՝ միանգամայն դրամաժողքեր կը հանէ որոնց արժէքն այս օրուան օրս բարձր է քան զ20 միլիոն ս. Լ. : Ամենէն ստորին արժէք ունեցող Թուրք 5 սղէրլինի է : Յետոյ կու գան Սկովսիոյ դրամասուցը հաստատեալ յէտիմպուրկ 1695 տարւոյն :

Սկովսիոյ առեւտրական դրամասուցը, հիմնեալ 1810ին : Իոլանցիոյ դրամասուցը՝ հիմնեալ ի Տըպլին 1738ին : — Ասոնց ամէնն ալ կրամաժողք կը հանեն՝ ինչպէս նաև ուրիշ առանձնացեալ կամ միարանութեամբ հաստատուած դրամատուներն ալ կը հանեն :

Հարկ է իբրև ամենէն ողջ փոխատուութեան ընկերութիւններէն մէկը սեպել Լոնցրայի հաւուեսուցը (Clearing-House)՝ որուն պաշտօնը և նպատակն է առևտրական հարակաշուութեանց կամ մասնաւորաց հաշիւները ստուգել դրամատանց միջնորդութեամբը :

Կան նաև բազմաթիւ խնայութեան արկղ և փոփոխակի օգնութեան Ընկերչակութիւններ :

Առևտրական և արուեստական ընկերութեանց ողին ամէն երկիրներէ աւելի ծաւալած և զօրաւոր է Անգղիոյ մէջ :

Ապահովագրութեան մեծամեծ ընկերութեանց կեդրոնը Լոնտրա է. Անգղիական Լլոյս (Lloyd Anglais) որուն սկիզբը՝ եօթնևտասաներորդ դարուն կ'ելլէ, Մեծին-Բրիտանիոյ եգական և միանգամայն ամենէն աւելի գործ տեսնող ընկերութեանց մէկն է. ոչ միայն իբր սոսկ ծովային ապահովագրութեան ընկերութիւն մը, հապա նաև ամենայն դիպաց տեղեկացուցիչ գործակալ:

Ծովային ապահովագրութեան ուրիշ շատ ընկերութիւններ՝ մեծ օգնութիւն կ'ընեն վաճառական նաւուց:

Երեսուն և չորս միլիար ֆրանկէն աւելի կը հաշուին Անգղիոյ մէջ հրդեհի դէմ ապահովութեան զրուած արժէքը և վեց միլիարի կենաց ապահովութեան համար:

Մեծին-Բրիտանիոյ մէջ շատ կը գտնուին ծովու, երկաթուղւոյ և կամ ջրանցից միջոցով փոխադրութեան ընկերութիւններ, անդրածովային հաղորդակցութեանց համար հեռագրական ընկերութիւնք. Լոնտրայի, Լիվրբուլի, և այլ բաղաբաց արուեստաշէն նաւակայից (Docks) ընկերութիւններ, ևն:

Նախ և առաջ նշանենք Արեւելեան եւ քերակղզւոյ ընկերութիւնը, որուն շոգենաւները Սաուդէմբըն, Լոնտրա և Լիվրբուլ նաւահանգիստներէն ելլելով՝ Սպանիա, Բորնոբալ, Միջերկրական, Հնդկաց Ովկիանոս, Արեւելեան Ասիա և Աւստրալիա կ'երթան կուգան: — Երկրորդ՝ Արեւմտեան Հնդկաց եւ Խաղաղականի Ընկերութիւնը որուն գլխատեղին է Լիվրբուլ, և որ Անդիլեանց, Մեխիգոյի ծոցին և Ամերիկայի արևմտեան ափանց երթևեկութիւնը կ'ընէ: — Շոգենաւուց ազգային ընկերութիւնը եւ Գիւնար ընկերութիւնը, որ Լիվրբուլի և Միացեալ-Նահանգաց մէջտեղ երթևեկութիւն կ'ընեն:

Արտօնութիւն ունեցող ընկերութիւն մնացած չէ, ի բաց առեալ Հոտտոնի ծոցինը, որ դեռ Անգղիոյ Հիւսիսային Ամերիկոյ մէջ ունեցած երկրին մէկ մասն կը բանեցնէ:

Հնդկաց հոչակաւոր ընկերութիւնն՝ որ Հնդկաց առևտրոյն մենավաճառութիւնն ստացած էր, և որ Հարաւային Ասիոյ մէջ մեծամեծ կալուածներ ունէր, 1838 էն ի վեր վերցուած է:

§ 11<sup>o</sup> — Գաղթութիւնք.

Եւրոպիոյ մէջ երկու նշանաւոր երկիր կայ ուսկից խիստ շատ մարդիկ կը գաղթեն, և են Մեծն Բրիտանիա և Գերմանիա: — 1862 տարւոյն, Անգղիայէն, Սկոտիայէն և Իռլանտայէն 400,000 անձ գաղթեցին:

Այս հոսանուտ ալեաց բուն աղբիւրն Իռլանտա է: Յիրաւի՝ Իռլանտա ամենէն աւելի բնակչաց խտութիւն ունեցող երկիրն է, և ուր միանգամայն ընկերական կարգադրութիւնը (մասնաւորապէս ճշեալ կրօնք մը, Անգղիոյ արհամարհանքը և կալուածատեարց իրենց հողէն հեռանալը՝ չնբէր որ դիրութեամբ ապրուի: Ուստի բնակիչք կը հարկադրին աւելի երջանիկ հայրենիք մը գտնելու:

Իռլանտացւոցմէ ետքը՝ Անգղիացիք Եւրոպիոյ ամենէն գաղթական ազգն են: Ի բաց առեալ բնութիւնին որ նաև զիրենք տեղափոխութեան կ'ստիպէ, զլիսաւորապէս թագաւորութեան այլևայլ կարգադրութիւնքն մեծ օժանդակ կ'ըլլան իրենց գաղթելուն: Օրինակ իմն. ընտանեաց կրտսեր որդիքը՝ կալուածոց ժառանգութեան մասնակցութենէն զուրկ ըլլալուն, հայրենիքէ հեռու երջանկութիւն և բաղդ խնդրելու կ'երթան:

Իսկ բաղաբացիք պղտիկուց շահադիտութեան ճամբուն մէջ մտած ըլլալով՝ դիրութեամբ և առանց վշտանալու կը լքեն իրենց հայրենիքը:

1865 ին Բրիտանական կղզիներէ չուող գաղթականաց թիւը 200,000 էր, այսինքն 61,000 Անգղիացի, 12,000 Սկոտիացի, 100,000 Իռլանտացի և բանի մը հազար օտարական: Գաղթականաց շատերը զլիսաւորաբար Միացեալ-Նահանգքը կ'ընտրեն իրենց բնակութեան տեղի և ոմանք ալ Աւստրալիան:

1871 ին Իռլանտայէն 72,000 անձինք գաղթեցին, որոնց 30700 կին էին, և ամէնն ալ ծաղիկ հասակի մէջ, այսինքն ամենէն տարւորը 35 տարեկան էր:

§ 12° — Անգղիական գաղթականութիւնի եւ կաշուածք.

Անգղիացոց զօրութիւնը միայն իրենց սքանչելի նաւատորմէն և ամխահանօք նպաստաւորուած տարօրինակ արուեստներէն առաջ եկած չէ, հապա նաև իրենց հիանալի գաղթականութիւններէն: Իրենց կալուածքը համայն զնտիս վրայ սփռուած են. և են երբեմն ընդարձակածաւալ և բարեբեր երկիրներ՝ Հարաւային Ասիոյ, Ովկիանիոյ և հիւսիսային Ամերիկայի մէջ. երբեմն առևտրոյ համար սքանչելի տեղեր, որոնց նպաստաւոր դիրքը հաղորդակցութիւնը կը դիւրացընեն հեռաւոր վաճառատեղեաց հետ. երբեմն հիանալի կերպով ընտրուած զինուորական դիրքեր, ծովամուտքը և անցքը բլրներու համար:

Մեծին-Բրիտանիոյ կալուածքն են՝ Եւրոպիոյ մէջ ձիպրաւդար, Մալթա Հելլոլանս:

Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մէկ մասն, Սեյլան կղզին, Հրնդկա-Ձիճու մէկ մասը Բուլաբիճանկ և Սինկաբուր կղզեաց հետ, և Հոնկոնկ կղզին ի Չինաստան:

Ափրիկէի մէջ՝ Ասէն Արարիոյ մէջ. և Կարմիր ծովուն բերանը Քէրիմ կղզին, և ուրիշ բանի մը կղզիք՝ Ափրիկէի հարաւային արևելեան և հարաւային-արևմտեան կողմերը:

Ափրիկէի մէջ ունին նաև Բարեյաւտոյ գլխոյ եւ Նադալի գաղթականութիւնները, ուսկից հարաւային Ափրիկէ կը թափանցեն: Մաւրիթիոյ կղզին, Բասիկ, Սէչէլ, Սուրբ Հէլինէ, Վերափոխուս, Գրիսան սա Գունա կղզիները. Սիւերալոնէ փոխները. Գաբոնս եւ Ոսկիափանց զանազան տեղուանքը. Լակոս (Կուինէա), Կամայիայի գաղթականութիւնը, ևն.

Ամերիկայի մէջ ունին՝ Գանասա, Նոր-Սկոթլան, Նոր-Պրուենսիս, Նոր-Երկիր, Թագաւորական կամ Գաբ-Պրոդոն կղզին. Եղուարդ իսլանի կամ Սուրբ Յովհաննու կղզին. Վանգուվեր կղզին. Բրիսանական Գոլումայիա եւ Ամերիկայի այլ և այլ հիւսիսային մասերը Պերմուրթեան կղզիք. Անգղիական

Կուլանա, Եուրադան կամ Անգղիական Հոնսուրաս, ճամալիա, Եւրոպիոյ, Պարուպա, Լուգայեան կղզիք. և Անգղիական արշակապետսին ուրիշ շատ կղզիքը. Մալլին կամ Ֆալլին կղզեաց մէջ հաստատութիւններ:

Ովկիանիոյ մէջ Աւստրալիա, Թամանիա, Նոր Զելանդա, Չեթիւմ, Սուրիլէն, Մաֆֆլարի և Բոլեմիլիոյ և Մալլինգիոյ մէջ բանի մը կղզիք. Լապլուան Պոնկեոյի մէջ. Սուամարայի հարաւակողմը Գոֆօ կղզին:

Բրիտանական տէրութիւնը այս ընդարձակ երկիրներու վրայ կը տիրէ, որոնց մակերևոյթը 14 միլիոն  $\square$  հազարամեղրի կ'եղէ և որոնց բնակչիքը 200 միլիոն անձ են:

§ 13° — Վաճառաւառի նաւահանգիստք.

Անգղիոյ մէջ.

**Ֆալմսհ.** Գորնուոլի մէջ՝ նեղուցին (որ Չէննըլ կը կոչեն) ամենէն արևմտեան և աղւոր նաւահանգիստը. Լիսպոնայի, Միջերկրականի և արևմտեան Հնդկաց համար նաւաչուռութեան մասնաւոր տեղի մ'է:

**Տըվոնբորդ.** Մեծ արտադրութիւն անագի և կապարի գործարան չուխայի, ասղնեգործի և սէրժի:

**Բլիմքսհ.** Անգղիոյ ամէն կարևոր քաղաքաց և զլիսաւոր նաւարանաց մէկը, երեք նաւահանգիստ ունի Գէրվուտըր, Մէօդնթուլ և Հէմօէզ: Առաջինը Բլիմ գետոյն բերնովը ձևացած է և պատասպարեալ ապաստան մ'ունի վաճառական նաւոց համար, երկրորդը որ քիչ խորութիւն ունի միմիայն վաճառական նաւերը կ'ընդունի և քարաշէն փամբը պաշտպանուած է: Երրորդը՝ Գամարի մօտ՝ պատերազմական նաւերը կ'ընդունի և 100 առագաստաւոր կրնայ պարունակել: Այս նաւահանգիստները պաշտպանուած են Ս. Նիկողայոս կղզւոյն բերդովը և պարսպօքը՝ որք քաղաքը կը շրջապատեն: Ի միասին 2000 նաւ կրնան բովանդակել:

**Էֆաղբ** (45,000 բն.) Համանուն գաւառին մէջ էքս զետոյն վրայ ուր 150 տակառաջափի նաւեր կրնան ելլել սահանայ միջոցով : Մեծ վաճառականութիւն նրբագոյն սէրժի, ասուէզէնի և չուխայի :

**Տարչադըր**. — Բանուկ վաճառականութիւն նրբագոյն սէրժի, արտար կենդանեաց և համբաւաւոր գարեջրոյ :

**Սաութհամթըն** (Southampton) (50,000 բն.) Մանիգայի լայն ծոցերէն մէկուն խորը, Ուայր կղզւոյն յանդիման : Սաքսօններուն ժամանակ Հանդըն կը կոչուէր : Հարաւային ծովափանց ամենէն վաճառաշահ նաւահանգիստն է : Անտի սուրհանդակ նաւերու կանոնաւոր գծեր կ'ելլեն և կ'երթան Միացեալ-Նահանգք, Անգլիեան կղզիք, Մեխիգօ, Պրազիլ, Արժամի դաշնակցութիւն, Արևելք, Աւստրիա, ևն :

Նաւահանգստին մէջ առանց դժուարութեան կը մտնեն 2500 տակառաջափի նաւեր : Նաւարկութեան շարժումն 8000 նաւ է, որոնց 2000 շոգենաւ են : Այս նաւահանգիստս Հաւրի հետ շատ յարաբերութիւն ունի :

**Բորդամբս**. Աւելի զինուորական նաւահանգիստ կը սեպուի բան թէ վաճառաշահ : Եւ սակայն ստէպ յարաբերութիւններ ունի Շէրպուրի հետ՝ որ իրեն միլիոնաւոր հաւկիթ և հաւ կը զրկէ, եւ Հաւրի հետ որ գետնախնձոր ևն. կը զրկէ : Այս բաղաբա իր շրջապատին մէջ կ'ընդունի Բորդսի բաղաբը. Կոսբորդը իրմէ կախումն ունի : Բորդամբսն Անգլիոյ ամենէն աղւոր նաւարանն ունի :

**Պրայըր**. (80,000 բն.) Կարևոր բաղաբ, որուն իբրև նաւահանգիստ կը ծառայէ Նիուհեյլն, թիչ մը դէպ ի արևելք :

**Հասլիսկլս**. Եղիած նաւահանգիստ էր. հիմա անկեալ :

**Հայսի**. Երկրորդական նաւահանգիստ մ'է Մանիգայի վրայ :

**Փայֆաղբ**. Ստէպ յարաբերութիւն ունի Պուլոնեբլին հետ : մեծ որս թիւնիկի :

**Տուլր**. Գալէյի անցից վրայ, որուն հետ յաճախ յարաբերութիւն ունի : Անգլիայէն Գաղղիա անցնելու ամենէն մօտ տեղն է :

**Քէմգլէյո**. Արևելեան ափանց վրայ պատուաբաւ նաւահանգիստ :

**Մարկըղ**. Յաճախեալ բաղանիք :

**Կրաուէնս**. Յաճախեալ նաւահանգիստ Գամիզի վրայ. նաւերով Լոնտրա գացող անցաւորաց շատը հոս կ'ելլեն : Հոս նաւ արտաքին վաճառականութեան գործածուող նաւերը երթալու և գալու ատեննին կը կասին և կը բնուիին :

**Լոնսըն** կամ Լոնտրա (3,300,000 բն.) Գամիզ գետոյն վրայ՝ Եւրոպիոյ ամենէն լայնատարած, վաճառաշահ և բազմամարդ բաղաբն է : Թէև ծովէն 75 հազարամէր հեռու է, սակայն յաջողութիւնը զայն ծովային բաղաբ մ'ըրած է : Անուանի է Սիդի կոչուած վաճառատեղին և յՅերանոցը :

Լոնտրայի մէջ Թէյմզ գետը, միջին հաշուով 400 մէր լայնութիւն ունի. և զրեթէ 8 հազարամէր տարածութեամբ նաւահանգիստ մը կը ձևացնէ :

Լոնտրայի նաւահանգիստը՝ Լոնտըն Պրիմէն մինչև Տէրդֆըրտ կ'երկնայ և միշտ լի է նաւերով : Սակայն միայն այս՝ անբաւական ըլլալով անգլիական նաւուց՝ Լոնտրայի վաճառականք արուեստաշէն նաւակայք այսինքն տորքքը շինելու գաղափարն ունեցան :

Տորքքու զլիաւորներն են՝ Ուէսլ Ինսիա Snffu, Լոնսըն Snffu, Սէնդ Բարհարայնս snffu, Իսլ Ինսիա Snffu, Գոմմէրըլ Snffu ևն :

Վերջապէս այս տորքքը Լոնտրայի բնական նաւահանգիստը տասնպատիկ կ'ընդարձակեն : — Անթիւ շոգենաւներ Մէկ բէնիյի կը տանին զճանապարհորդս՝ գետոյն ամէն կողմը :

Ներոնի կայսրութեան ժամանակէն առաջ ևս Լոնտըն՝ մեծ աւետրոյ տեղի եղած էր, ինչպէս որ կը զրէ Տակիտոս, Հոովմայեցի պատմաց առաջինն՝ որ զայն անուամբ յիշած ըլլայ :

Երրորդ դարուն սկիզբը՝ Հոովմայեցիք պարսպօք ամրացուցին զայն և Սեւերիոս կայսեր ժամանակ մեծակառոյց, ճոխ և միանգամայն Բրիտանացւոց մետրապօլիտն էր :

Այսպէս բարգաւաճեցաւ Լոնտընի աւետուրը : — Զոսիմոս

պատմիչը կ'ըսէ թէ 359 տարւոյն Լոնտրայի նաւերէն 800 հատը՝ ցորենի արտահանութեան գործածեցին Հոովմայեցիք։ Լոնտրն ի սկզբան դժուարաւ ծաղկեցաւ։ Թէպէտև նաւահանգստին գործունէութիւնը անցաւ Վասգօ տի Կամայի և Գրիստափոր Գոլոմպոսի դէպ ի արևելեան և արևմտեան Հնդկիս նաւաչուէն ետքը, և թէպէտ 1600 էն առաջ Արեւելեան Հրնդկաց Ընկերութիւն անուամբ ընկերութիւն մը հաստատուած էր ի Հնդկիս, բայց Լոնտրնի հետ առևտուր ընող նաւերը սակաւաթիւ էին։ Եւ յիրաւի, դար մը ետև չերթանք, Լոնտրն՝ արդի առևտրոյն բասներորդ մասն անգամ չունէր։

Արդի վիճակին գալով Պ. Լըկոյդ կ'ըսէ թէ α Լոնտրայի առևտրական շարժմունքը վսեմութիւն մ'ունի։ Այս քաղաքս անսահման զօրութեամբ ներշնչական ջրհան մ'է որ իրեն կը ձգէ տիեզերաց բոլոր փոփոխելի ապրանքն։ Լոնտրա ընդարձակ, անխոնջ, միշտ պատրաստ, միշտ բաց վաճառատեղի մ'է՝ որ անդադար իր տոբքերուն մթերանոցացը (warehouse) մէջ կը դիզէ ամէն ազգի ապրանաց մեծամեծ կոյտեր՝ զորս վաճառականք ամէն ժամ կը փնտռեն։ Լոնտրա՝ առևտրով հարստացած լայնատարած պահարան մ'եղած է, ուր հին և նոր աշխարհաց տէրութիւնները իրենց զբամական պիտոյքը հոգալու կու գան։ »

Եւրոպիոյ մէջ գրեթէ ամէն մեծամեծ ձեռնարկութիւնք այս քաղքիս գանձակալաց օգնութեամբ կը կատարուին։

Իրաւամբ ըսուած է թէ Լոնտրա աշխարհիս այն կէտն է՝ ուսկից ամենայն ինչ դիւրաւ կը ճառագայթէ ուրիշ երկիրներու վրայ։ Հեռագրական զծերը շնչերակաց նման ամէն կողմ կը տարածին, այնպէս որ, Լոնտրա՝ եթէ ոչ զլուխ՝ գոնէ քաղաքականացեալ աշխարհիս սիրտը կը սեպուի և ամէն լուր արագապէս կ'ընդունի և ամէնուն վրայ կը տեղեկանայ։

Գործարան մասնաւորապէս չուխայի, գալմանտի (calemande), այծեայ (շալի) սնդոյ, շարի, դիւլի, մարմաշի, ասղեն-գործոյ, բամբակեայ կտաւու, առածգական խիժէ հանդերձանաց, ասղի, դերձանի, զոնաւոր թղթոց, երկամեայ գործիք-

ներու, խեցեղինի, գարեջրոյ, կառաշինութիւն, մեծամեծ նաւակազմութիւնք, ևն։ Անուանի է մետաքսեղէնը։ — Ապակեղէնքը, ժամացոյցքը, զոհարեղէնը և դանակեղէնը կատարելագործուած են։

Վերջապէս, Լոնտրա՝ տիեզերաց ամենէն բանուկ նաւահանգիստն է. Անգղիացի նաւերն ամէն ծովերու վրայ կը շրջին, Մեծ Հնդկաց մասնաւոր առևտուրը կ'ընեն, և անգղիական գաղթականութեանց և բոլոր աշխարհիս կը տարածեն Լոնտրայի գործատանց ապրանքը։

Նաւային և շոգենաւուց բազմաթիւ ընկերութիւններ կը միացընեն զանիկա բոլոր նաւահանգստաց։

Այս նաւահանգստէս՝ աշխարհիս ամէն կէտերուն ալ սուրհանդակ նաւեր կ'ուղղին։ — Նաւարկութեան մեծ շարժմունքն է 17 կամ 18,000 առագաստաւոր նաւ՝ 3 կամ 4 միլիոն տակառաչափ կրելով, և 4560 շոգենաւէն աւելի, զրեթէ 2 միլիոն տակառաչափէն աւելի ընդունելով։ — Ծովեզերագնաց նաւերը միջին հաշուով են՝ 22,000 առագաստաւոր և 4500 շոգենաւ։ 5000 երկամուղեաց կառք (wagons) ամէն օր 90,000 տակառի ապրանք կը պարպեն այս քաղաքս։

**Հարվիչ.** (20,000) ընդարձակ և ապահով նաւահանգիստ Մդար գետոյն ըրանը. Բանուկ վաճառականութիւն ունի. Հուլանտայի հետ։

**Իբալիչ.** Աղէկ նաւահանգիստ է. վաճառականութիւն կոխած գարւոյ (drèche) և ցորենոյ։ — Ծովեզերեայ նաւարկութիւն։

**Եարմրիշ.** (25,000 բն.) Եար գետոյն վրայ. գետն իսկ իրրև ջրանցք կը ծառայէ Նորվիչ քաղաքը մտնելու և անկից դուրս դրկուող ապրանաց տարուբերին։ Ատենօք Անգղիոյ ամենէն բանուկ նաւահանգիստներէն մէկն էր։ Բնակչաց զըլխաւոր հարստութիւնն է բինկայի և Թիւնիկի որսը։

**Քիմկըսպրնէ Լօցեր-Հըլլ** կամ **Հըլլ.** (100,000 բն.) Հըմպըր ծովամտին ձախակողմը. վաճառաշահ և միանգամայն արուեստական քաղաք է, և Անգղիոյ չորրորդ վաճառաշահ

նաւահանգիստը կը սեպուրի: Գործատուն ասուեղինի, հիւսուածոց և օճառի. Բամբակի մանոց, շաքարի զտարան: Այս քաղաքս իր առևտրոյն նիւթերը ներքին քաղաքներէն, Շէֆֆիլտէ, Լիտտէ կ'ընդունի: Մեծ որս կ'իտու:

**ԿՈՒՂ.** Ուզ գետոյն վրայ. ասուեղինի արտահանութեան կողմանէ Հըլլի հետ կ'ընայ մրցիլ, բայց մեծ նաւերը չկրնար ընդունիլ:

**ՍԲԱՐԱՊՕՐՈՒ.** — Հիւսիսային Անգլիոյ գլխաւոր ջրաբաշխական տեղին է:

**Վիքպէ.** Հին քաղաք. Բանուկ վաճառահանութիւն պաղլեղի, որուն հանքերն երկու դար առաջ գտնուեցան իր շրջակայքը:

**Սընթրլէնս.** (80,000) Ուէրի բերանը ընդարձակ նաւահանգիստ. մեծ վաճառահանութիւն հանքածխոյ, գետնածխոյ, աղի և ապակւոյ:

**Շիլս.** Ծովային քաղաք, որ Նիւքասլի միակից կը սեպուրի, ինչպէս է նաև Դայնքմըսի Դայնի բերանը:

**Նիւֆասլ-Էօնթր-Դայն** կամ պարզապէս Նիւֆասլ (110,000 բն.) — Դայնի ձախ օփանց վրայ: Գետոյն երկու օփունքն ալ հանքածխոյ ընդարձակածաւալ մթերանոցներ կը ձևացընեն, որոնցմէ երկամուղեաց կառքերով և շոգեշարժ բեռնակառօք կը հանեն այն յարգի հանքածուխն որ աշխարհիս ամէն կողմը կը ճառագայթէ: Նիւքասլ ունի նաև հայելւոյ շատ գործարաններ, ունի ևս անօթեղէն և հիւսուածք: Անգլիոյ մէջ Լոնտրայէն ետքը այս քաղաքս կուզայ նաւուց ելևմըտից կարգով:

Արտահանութիւն անբաւ հանքածխոյ, կապարի, աղի, լոսղի ձկան, կարագի, ճրագւոյ և երկանաքարի (§ 2): Առևտրոյն շարժումն 10,000 նաւ է, 2,000,000 տկչփով:

Արևմտեան օփանց վրայ են:

**Ուալդիէվն.** Դըմարլէնտի հանքածխոյ արտահանութեան նաւահանգիստն է և գլխաւորապէս Իռլանտա, Արիբիկէ, Ամերիկա և Արևմտեան Հնդկաց կը ղրկէ:

**Վէտրֆինկլըն.** Արտահանութիւն հանքածխոյ և առագաստի լածի. և որս լոսղիի որ մինչև Լոնտրա ևս կը ղրկէ: **Գոֆֆելմըս.** Թէև ներքին քաղաք բայց Տէրվէնդի խառնման տեղն է. խոշոր չուխայի և վշեղինի գործատուն ունի:

**Մէրիբորդ.** Բամբակեղինի գործարաններ և ձկնորսութիւն: **Լէնքէպըր.** Աղէկ նաւահանգիստ. բանուկ վաճառակալութիւն Ամերիկայի հետ: Արտահանութիւն ասուեղինի, մոմի, և գործարան առագաստի լածի:

**Լիվըրու.** (400,000 բն.) Լէնքէպըրը գաւառին մէջ. Լոնտրայէն ետքն Անգլիոյ ծովային ղշխոյն. բազմամիւ հաղորդակցութիւններ ունի Մէնչսըրը զօրաւոր քաղքին հետ: Այս երկու դրացի քաղաքք մէկմէկու պակասը կը լեցընեն: Լիվըրուլ օտար աշխարհներէ այլևայլ նախնական նիւթեր և մասնաւորապէս բամբակ կ'ընդունի, և զանոնք Մէնչսըրը կ'անցընէ, ուր լաւ մը բանուելէ և մանուելէ ետքը այն ապրանքը դարձեալ Լիվըրու կ'իջնան, ուսկից աշխարհիս այլևայլ կողմերը կը տարածին:

Այս քաղաքս կանգնուած է Մըրզէյ գետոյն աջ ափանց վրայ, որուն բերանը 7 հազարամեղր լայն է:

Ինչպէս որ վերը յիշեցինք՝ Լիվըրուլի առևտրոյն մեծ նիւթը բամբակն է զոր Միացեալ-Նահանգացմէ կ'ընդունի. և դարձեալ մանուած և հիւսուած իրեն յետս կը դարձընէ, կ'ընդունի նաև այլևայլ սպառման հարկաւոր ապրանք Ամերիկայէ և Արևմտեան Հնդկաստանէ: Մի միայն Լիվըրուլ Եւրոպիոյ ուրիշ քաղաքներէն աւելի առևտուր ունի Ամերիկայի հետ: — Այս քաղքին և Ամերիկեան հասարակապետութեան և մասնաւորապէս Նիւ-Եորքի հետ անսահման առևտուր մը կ'ըլլայ ամէն տարի: — 1857ի՝ Միացեալ-Նահանգաց հետ ունեցած վաճառականութիւնը հազար միլիոն ֆունդէն աւելի էր: Յիրաւի, ժամանակ մը գործերը նուազեցան, բայց քանի մը տարիէ ի վեր օր ըստ օրէ վերստին աճեցան: Տարին 800,000 հակ բամբակ կը մտնէ: Ելլող և մտնող նաւուց միւր 10,000 է, ամենն ալ ծանրաբեռն և մեծ. ամէնը ի միասին.

5-6 միլիոն տակառաչափով : Այս դարուս սկիզբը առևտուրը 500,000 տակառաչափի չէր հասնէր :

Նաւահանգիստը լի է տորքերով , որոնց մէջ նշանաւորներն են Օլս snff, ձորնս Բ. Snff, Բիցկլսnff. Բուրնս Snff, Բրինս Բէնէնց Snff, Գլրէնս Snff, Պրուսովիք Snff, ևն. ընդ ամէնը 30 հատի չափ կը հաշուին :

Կիտու որսի համար նաւեր կ'երթան Կրէնլանտա : Լոնտոնայի հետ շարունակ հաղորդակցութիւն : Շինութիւն նաւոց : Աղահանք , շաքարի զտարան. գործարան գարեջրոյ, յախճապակոյ և օճառի :

**Պիբֆինէէս.** (50,000) Մըրգէյի ձախ ափանց վրայ, Զէսդըր նահանգին մէջ, Լիվրբուլի յանդիման :

**Զէսդըր.** Տիյ (Dee) գետոյն վրայ, 300 տակառաչափի նաւերը կ'ընդունի. Իռլանտիոյ հետ ունեցած առևտուրն ալ Լիվրբուլի անցած է : Թէև ձեռնոցի, հրացանի և թնդանօթի գնդակներու գործարաններ ունի, սակայն արուեստական քաղաք չեկարելիք : Անուանի է բամբակեղէնը :

**Միլֆրս.** Փեմպրոգ գաւառին մէջ աշխարհիս լայնատարած նաւահանգիստներէն մէկը : — Արտահանութիւն առատ հանրածխոյ :

**Նիսն.** Առատ հանքածուխ. — Երկաթի և պղնձի հալոց :

**Սըվոնսի.** (52,000) կարևոր նաւահանգիստ. մեծ արտահանութիւն հանրածխոյ : — Մեծամեծ գործարանք պղնձի :

**Պարսիք.** Բանուկ նաւահանգիստ. արուեստական քաղաք :

**Պրիսդըլ** (160,000 բն.) Սէօմըրսէդ և Գլոսդըր գաւառներուն մէջ բաժնուած , Սիվըրնի մօտ նաւահանգստով մը և Սվոն և Ֆրոմ գետերուն միացման տեղը. հանքային ջրեր ունի : — Նաւահանգիստն լրւ է , շաքարողով (rhum), խահուէով , բամբակով բարձուած նաւեր կ'ընդունի : Պրիսդըլ՝ որ երկայն ժամանակ Անգլիոյ երկրորդ վաճառաշահ քաղաքն էր, այս օրուան օրս ուժերորդ կարգի է : Առևտուրը մասնաւորապէս Արևմտեան Հնդկաց , Սպանիոյ, Բորդուգալի , Նոր-Երկրի,

անդրիական գաղթականութեանց, Կալլէսի երկրին և Իռլանտիոյ հետ է : Հոչակաւոր տօնավաճառ. նաւարան. Թնդանօթից ձուլարան. երկաթի և պղնձի հալոց. դարբնոց, հրահալելեաց գործատունք. շաքարի զտարան. պատրաստատեղիք ուտիին (terebenthine), ծծմբոյ, արջասպի. գործարան յախճապակոյ, ասուեղինի, ապակեղինի, առագաստի լամի, ասղնեգործոյ, մետաքսեղինի և բամբակեղինի : Ծովային բանուկ առևտուր :

ԱՆԳՂԻՈՅ ՆԵՐՔԻՆ ՎԱՃԱՌԱՇԱՀ ՔԱՂԱՔԻ

**Նորիցի.** (140,000) Թէյմզի վրայ, Լոնտոնայի հարաւային կողմը. հոչակաւոր հիւանդանոց մը կայ, որ Գուլիէլմոս Գ. կանգնել տուաւ նաւաստեաց համար. աստղաբաշխական երեւելի դիտարան մը , ուսկից միջօրեայն կ'անցընեն Անգլիացիք :

**Պասն.** (55,000) Սէօմըրսէդի մէջ. անուանի են հանքային ջրերը և բաղանիքը և արդէն իսկ անունն ալ կը յայտնէ : Համբաւուր է Թուլթը : Գործարան չուխայի :

**Ռիսին.** Բանուկ վաճառականութիւն կոխած գարւոյ և ալեր :

**Օֆսֆրս.** — Անուանի են համալսարանը և տպարանը :

**Կլուսդըր.** Գործարան ընտիր գնդաւեղի և ապակեղինի , օճառի և ղանակեղէնի : Վաճառականութիւնը խափանուած է Սիվըրնի վտանգալից նաւարկութեան պատճառաւ. սակայն Պէրբլէյի ջրանցքին բացմամբ ծանրաբեռն նաւերն անգամ կրնան մինչև հոս ելլել :

**Ձէլընիւմ.** (40,000) Անգլիոյ մէջ Պատհէն ետքը երկրորդ ջերմուկն է. անթիւ անցաւորք և բազմութիւն հիւանդաց այցելութեան կուգան հոս :

**Պըբիցիւմ.** Առևտուր ասղնեգործոյ և Թղթոյ :

**Պէսֆրս.** Վաճառականութիւն ցորենոյ և գործարան ասղնեգործոյ :

**Գուլչըսթըր.** Էսսէքս գաւառին մայրաքաղաքը. — Մեծ վաճառականութիւն առուի:

**Պէրրի.** (38,000) գործարան բամբակեղէնի:

**Նորվիչ.** (75,000) Վէնսըմ գետոյն բերնին մօտ. ծովային քաղաք մը կրնայ կոչուիլ, որովհետև ահագին նաւերն անգամ մինչև իր պարսպաց կը մերձենան: Նորվիչի սեպհական արուեստն առուելէն է, որ շատ յառաջացած է: Երբ Անգղիոյ Արևելեան և հարաւային կողմերը՝ ասուելէնը ժամանակ մը իր պայծառութիւնը կորսնցուց, այս քաղքին մէջ միայն անընդհատ և շարունակաբար յառաջադիմեց: Անուանի են նաև անդուսը, պոմպազէնը, աղւոր պազէնները և մանուած առուէ տամասկեան կերպասները:

**Վուսթըր.** (Woucester) (31,000 բն.) Անգղիոյ մեծ քաղաքաց մէկը. մեծամեծ գործարանք և վաճառականութիւն ձեռնոցի և ասուելէնի: Գործարան ընտիր յախճապակոյ (առաջինն Անգղիոյ մէջ), սնդոյ և ձենովայի յարգի թաւշոյ: — Վաճառականութիւն ցորենոյ, ածխոյ, գայլուկի, չուխայի, պանրոյ, տանձի և աղի:

**Մըրթըր Գէտվիլ** (Merthyr Tydvil). (107,000 բն.) Կալիլէսի երկրին մէջ արուեստական քաղաք. մերձակայքը երկամի հանքածխոյ բովը կան, որոնց բերքովը հարստացած է: — Տարուէ տարի 1,000,000 տակառաչափէ աւելի կը զրկէ ի վաճառօտար երկիրներ: Կլոմէրկանի գետոց նաւարկութիւնը շատ վտանգաւոր է, սակայն այս պակասը երկամուղիք կը զոցեն. և նոր ջրանցք մը բացուած է՝ ներքին քաղաքաց ապրանքը ծովեզերք իջեցնելու համար:

**Վորրիք** (Warwick). Վաճառականութիւն ցորենոյ և կոխած գարւոյ, պանրոյ, ածխոյ և կրաքարի:

**Գովնգըրի.** Գործարան չուխայի մետաքսեայ ժապակինու և դիպակաց:

**Վուլվիհամդըն.** (60,000) անուանի կղպակք, աղխք և երկամէ գործիք:

**Պրմինկէմ.** (300,000) Անգղիոյ կեդրոնը կանգնուած է,

կրնանք ըսել և երկամուղեաց եօթը զծով միացած է Թագաւորութեան այլևայլ քաղաքաց: Համբաւաւոր են պողպատի գործարանքը որ աշխարհիս մէջ ամենէն կատարելագործեալներն են: Պրմինկէմ Անգղիոյ երկրորդ արուեստական քաղաքն է և երկամուղէնի համար աշխարհիս մէջ առաջին: Մեծ համբաւ ստացած են զէնքը, հրազէնքը, դանակեղէնքը, գրիչները, ոսկեզօծեալ պղնձէ և վերնիճեալ թիթեղները. երկամեայ և պղնձանէ անկողիները: Վերոգրեալ ազգի ազգի երկամուղինաց համար Պրմինկէմ առաջին է Անգղիոյ մէջ յետոյ կու գայ Շէֆֆիլտ:

Շրջակայքը երկամահանք և առատ հանքածուխ կայ: Պրմինկէմի մօտ Սօհօ անունով տեղ մը կայ՝ ուր է շոգեշարժ տեղաշարժից աշխարհահամբաւ գործարանը:

**Շէֆֆիլտ.** (185,000) Էօրքշիրի մէջ հոչակաւոր են երկամէ պողպատէ գործուածքը, դանակեղէնքը (տես Պրմինկէմ): Գործարան կապերտի, զլխարկի, թղթոյ, սէկի, արչասպի, մետաղէ կոճակի, մանարան բամբակի, պաղլեղի և երկամի հանք:

**Պէօրթըն-օն-Գրէնդ.** Նշանաւոր իր էլլ գարեջրովը գործարան կերպասուց:

**Սդոն-Էօթօն-Գրէնդ.** Հանլէյ և Պէօրսլէմ, և ուրիշ քանի մը փոքրիկ քաղաքք, որ «The potteries» կ'անուանուին, որովհետև հողէ ամաններու մեծամեծ գործարաններ ունին:

**Գիսթերմինգլէր.** Անգղիոյ ամենէն ազնիւ ու պատուական կապերտները ունի:

**Սդուրպրիք.** Հայելեաց և հողէ ամաններու գործարաններ ունի:

**Տըսլէյ.** (45,000 Հանքածխոյ ընդարձակ բովը՝ որոնց մէկ մասը դար մը միջոց այրեցաւ: Երկամի զլխաւոր վաճառատեղեաց մէկն է:

**Հէօնդ Ինկլըն.** Մեծ Ուզգետոյն վրայ, գարեջուր, բանուկ վաճառականութիւն ցորենոյ, առուի, հանքածխոյ և փայտի:

**Պանկէօրի.** Անուանի է պանիրը, որ իր անուամբը կը ծախուի:

**Վուսսոյոն.** Նշանաւոր ձեռնոց:

**Քէֆահամ.** Թղթոյ և ասուոյ գործարան, ածխահանք և կապարի հանք:

**Սդոբբորդ.** Շրջակայքը առատ հանքածուխ կայ: Գործարան բամբակի, մետաքսի, մերենայի. երկամեայ և դեղին պղնձէ գործուածք:

**Սդալէյ-Պրին.** Բամբակի գործարանք:

**Մաքլաքիլս.** Մետաքսեայ հիւսուածոց համար 10,000 հոգիք կ'աշխատին:

**Լիմսդըր.** Նշանաւոր է մրգօղոյն տեսակաւը և կաշւոյ, ձեռնոցի, գլխարկի և ասուեղինի գործարաններովը:

**Մէնչսդըր.** (460,000) Իրվէլի վրայ, վեց կամրջով միացած է Սէլմրքի, որ իր արուարձանը կը սեպուի: Անգղիոյ բամբակեայ գործուածոց գլխաւոր տեղին է և հաւանականապէս աշխարհիս մեծագոյն արուեստական քաղաքն է: Միւս բամբակեղինուց քաղաքք են Մէնչսդըրի մօտերը և շրջակայքը՝ Բրեսդըն, Պլէֆայտօրն, Պէօրնլէյ, Վիկամ, Չօրլէյ, Աւոլըն-էօնսթը-Լայն, Օլսհամ, Պէրրի, Միսլըրն, Պոլըրն և Ռոչսալ: Մարմաշի, պագէնի, արբունի բեհեզի, Սաւոյ և մետաքսեղինաց կեդրոնն է: Դիպակաց լայնանիստ մթերանոցք կ'սքանչացնեն գուղևորս: Մէնչսդըր բամբակի արուեստին մետրապօլիտն ըլլալով 200 հիւստցէն և 30,000 ոստայնի գործիքէն աւելի ունի: Շատ գործարանք 15,000 արուեստաւոր ունին: Առևտուրը 300 մեծ տանց ձեռքն է:

**Լիսս.** (207,000) Մեծամեծ գործարանք և վաճառականութեան չուխայի, կապերտի, ասուեղինի, անօթեղինի, ապակեղինի, գլխարկի և Թղթոյ:

Լիսս, Պրէսմրք, Հէլիժաֆս և Հէօսթրաժիլս ասուեղինուց գլխաւոր վաճառատեղիներն են, միայն Լիտս 106 մանոց ունի:

**Փարլայ.** Մեծամեծ գործարանք նկարէն կտաւու, նանքինի, կաշւոյ, գլխարկի և դանակի. անուանի է պաքսիմատը: Եւ ուրիշ շատ արուեստական քաղաքք:

**ՍԿՈՎՏԻՌՅ ՎԱՃԱՌԱՇԱՀ ՔԱՂԱՔՔ ԵՒ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏՔ**

**Էսիմպուրկ.** (168,000) Մեծամեծ գործարանք կտաւու, պաղիսդի և գղակի: Լէյք, Էտինպուրկէ երկու մղոն դէպ ի հիւսիսային արևելք և իր նաւահանգիստն է: Գաղժականութեանց և արտաքին վաճառականութեան բաւական կեդրոն մ'է, 1869 ին 4430 նաւ մտան և ելան 980,400 տակառաչափով, արտահանութիւնքն 1,500,000 Լ. սղերլինի ելան:

**Ս.Սնան.** Համանուն գետոյն վրայ բնական աղէկ հանգրուան մ'ունի. մեծ արտահանութիւն. նաւարան, գործարան բամբակեղինի, պարանի:

**Նիւուրն-Սդիլօրդ.** Ձեռագործ ապրանք և ասուի վաճառականութիւն Լէնքէշիրիի հետ:

**Սդրաքուէր.** Ձեռագործ ապրանք, կաշեղէն և զամեղէն. ծովային հաղորդակցութիւն Կլասկոյի, Պէլֆասդի և Ուայդհէվընի հետ:

**Ս.յր.** Ծովային սքանչելի քաղաք, մեծ արտահանութիւն հանքածխոյ, բանուկ վաճառականութիւն և բազմամիւ գործարանք:

**Քորդ-Կլասկօ.** Երկար ժամանակ Կլասկոյի նաւահանգիստն էր. Գլայտի գլխաւոր նաւահանգիստն է և Ամերիկայի փայտ կ'ընդունի:

**Կրիմոն.** Սկոտիոյ արևմտեան ափանց վրայ ծովային մեծ քաղաք է, հոչակաւոր նաւուց և շոգեհաւուց շինութեամբը: Հոս ծնաւ ձէյմս Վօդ որ շոգեշարժ մեքենան հնարեց:

**Քէզլէյ.** Արուեստական քաղաք. Նշանաւոր է շալերովը, բեհեզովը և բամբակեայ դերձանովը: Շրջակայքը երկամահանք և ածխահանք կան, որոնք իր բազմամիւ երկամէ գործուածոց առատ նիւթ կը հայթայթեն:

**Կլասկօ.** (447,000) Սկոտիոյ ընդարձակագոյն քաղաքը և սկոտիական առևտրոյն և արուեստից գլխատեղին. բամ-

բակեղէնը իր զլխաւոր արուեստն է, սակայն հոս շատ հաւոցներ և դարբնոցներ կան:

**Տընսի.** (90,000) Դէյ գետոյն վրայ, Սկովտիոյ մէջ ասուեղինի և ձեռնոցից պատրաստութեան զլխատեղին է: Շատ ծաղկեալ բաղաբ և բանուկ վաճառականութիւն, 1869 տարւոյն 2500 նաւ ելան և մտան 472,000 տակառաւափով:

**Մօնրօզ.** Սկովտիոյ ամեն նաւահանգիստներէն աւելի ցորեն կը հանէ, բազմաթիւ գործարան, բինկայի որս:

**Ապէրսիմ.** Տիյ գետոյն վրայ: Գործարան չուխայի, ասուեղինի, զղակի և կտառու: Բինկայի որս: Վաճառականութիւն դերձանի, ասուեղինի սէրժի և ասղան:

1869 տարւոյն նաւարկութեան շարժումն 2900 նաւ էր 573,600 տակառաւափով:

**ԻՌԱՆՏԻՈՅ ՎԱՃԱՌԱՇԱՀ ՔԱՂԱՔԻ ԵՒ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏԻ**

**Պէլճապ.** Իւլսղէրի մայրաքաղաքը. զլխաւոր արուեստըն ասուեղէն և բամբակեղէն ըլլալով կը գերազանցէ զՏըպլին: Բանուկ վաճառականութիւն մասնաւորապէս Լիվրբուլի և Կլասկոյի հետ:

**Տըպլին.** (250,000) Վաճառականութիւն կտառու, սէրժի ձկան, կարագի, ասուի: Գործարան մետաքսի:

**Քիմկաղըն.** Տըպլինի նաւահանգիստն բանուկ վաճառականութեամբ, և Լիվրբուլ ու Հոլիհէտ գացող սուրհանդակ նաւուց կայարանն է:

**Վօլլըճըրդ.** Արուեստական բաղաբ, արտաքին և նաև ծովեզերեայ բանուկ վաճառականութիւն. միայն արտահանութիւնը տարուէ տարի 4,000,000 լ. սղէրլինի կ'ելլեն:

**Գորբ.** Միւնսղէրի մայրաքաղաքը, Լի գետոյն կղզիներէն մէկուն վրայ կառուցեալ:

1868 ի նաւարկութեան շարժումն 3630 նաւ էր՝ 839,200 տա-

կառաւախով: Մեծ վաճառականութիւն եղի, կաշտոյ, ճարպի, կարագի և առազաստի լսածի: Նաւաշինութիւն:

**Ռոսօմսօն.** Եէննընի գետակցաց մէկուն վրայ. գործարան ասուեղինի և մեծ վաճառականութիւն ցորենոյ:

**Լիմէրի.** Գործարան վշոյ, ասուի, թղթոյ և անուանի պարանի: Բանուկ վաճառականութիւն արջառու, ևն:

**14. Դրամբ, չափ և Կշիռք.**

Դ Ր Ա Մ Ք

Անգղիական դրամոց միութիւնը սղէրլին ոսկին է որ կը բաժնուի 20 շիլին:

1 Սովերայն կամ բառնտ սղէր.	= 20 Շիլին համաօտոմեամբ	£
1 Շիլին	= 12 Բէնս	» s
1 Բէնի	= 4 Ֆարթինկ	» d

1818 տարիէն ի վեր գործածական դրամքն են՝

Ոսկեդրամ	{ Սովերայն կամ £ = 20 Շիլին = Ֆռ. 25 <sup>(1)</sup> , 42
	{ 1/2 » = 10 » 12,56
	{ Գրառն = 5 » 5,60
Արծաթ	{ 1/2 = 2 <sup>1</sup> / <sub>2</sub> » 2,80
	{ 1849ի ֆիօրին = 2 » 2,24
	{ Շիլին » 1,42
Պղնձի դրամք.	{ 1/2 Շիլին » 0,56
	{ 1 Բէնի » 0,10
	{ 1/2 » » 0,05
	{ 1/4 » (Ֆարթինկ) » 0,025

Մեծին Բրիտանիոյ մէջ միայն ոսկեդրամք բռնի ընծացը ունին: Օրինապէս 40 շիլինէ աւելի արծաթադրամ չանցնիր. և մէկ Բէնի կամ կէս Բէնի դրամով միայն 12 Բէնս կրնայ հաստեցուիլ:

(1) Առևտրոյ մէջ սովորաբար սղէրլինը 25 ֆռանկաց կը հաշուի:

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՉԱՓՈՒՑ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնտրայի լայնութեան աստիճանին մէկ մանրերկրորդ զարնող ճօճանակին երկայնութիւնը, անգղիական չափուց և կշռոց դրութեան բնական միութիւնը եղած է:

Լոնտրայի լայնութեան աստիճանին մանրերկրորդ զարնող ճօճանակին երկայնութիւնը 39,1393 մատ է, որոնց 36 մատը կայսերական միօրինակ եարտն է Ֆահրէնէյդի 60<sup>0</sup> 1/2 ին:

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԱՓՔ

Ինչ կամ մատ (1/26 եարտի)	հարիւրորդամէրը	2,5399
Յուղ կամ ոտք (1/3 եարտ) = 12 ինչ, տասնորդամեղը		3,6479
Կայսերական եարտ	= 3 Ֆիդ. մէրը	0,9144
Ֆէթհըմ	= 2 եարտ	Մէրը 1,1288
Բօլ կամ Բէրչ	= 5 1/2 եարտ	» 5,0291
Ֆէրլըն	= 220 եարտ	» 201,1644
Մայլ կամ մղոն = 8 Ֆիւրլօնկ = 1760 եարտ)	»	1609,3149

ՄԱԿԵՐԵՒՈՅԹ

Քառակուսի եարտ	□ Մէրը	0,8361
Ռօտ (□ բէրչ)	»	25,2919
Ռուտ (1210 □ եարտ)	Կալ	10,1168
Էզր (4840 □ եարտ)	Հարիւրակալ	0,4047

ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Բայնդ (1/8 Կալօն)	համառօտագրութեամբ	p.	Լիդր	0,5679
Գուարդ 1/4 »	»	qt.	»	1,1359
Կայսերական Կէլլըն	»	gall.	»	4,5435
Բէք = 2 Կէլլըն	»	pk.	»	9,0869
Պէշլլ = 8 Կալօն = 4 բէք	»	b.	»	36,3476
Գուորդըր = 8 Պէշլլ	»	qr. հարրըր		2,9078
Սէք = 3 Պէշլլ	»	sa.	»	1,0904
Չէլարըն = 12 սէք	»	ch.	»	13,0857

ԿՇԻՌՔ

Յորենահատ (1/20 բէնիուայդի)	հարիւրորդակրամ	6,4799
Բէնիուայդ (1/20 ունկույ)	»	1,5552
Աունս կամ ունկի (1/12 դրոյ լիպրայի) կրամ	oz	31,1035
Լիպրա (բաունտ) դրոյ կայսերական (5760 ցրհտ. »		373,2419

Այս կշիւքը ղեղավաճառք կը գործածեն, առևտրոյ մէջ գործածուած բն են.

ԿՇԻՌՔ ԷՎԷՐՏԻՈՒԲՈՅՁ

Տրամ (1/16 ունկի)	կրամ	1,7718
Աունս (1/16 լիպրայի	»	28,3495
Էվէրտուրոյդ (7000 ցորենահատ)	»	453,5926
Կենդինար կամ բուխիդէլ (112 լիպրա) հզրակրամ.		50,8020
Տակառաչափ կամ Սօն (20 կենդինար)	»	1016,080

Աւելի սովորաբար


28 բաունտ tt	= 1 գուորդըր
4 գուորդըր 112 tt	= 1 հէօնորըտվայդ համառօտաբար cwt
20 հէօնորըտվայդ	= 1 Սօն



Ս Կ Ա Ն Տ Ի Ն Ա Ի Ի Ա

Կ Ա Մ

Շ Ո Ւ Ե Տ Ե Ի Ն Ո Ր Վ Ե Կ Ի Ա



Լայնութեան աստիճան 51°—71°:  
Մակերևոյթ 738,000 ք հզմղ. — Բնակիչ 5,700,000 անձ.  
—Վաճառական նաւ 9090. — Տակառաջափ 1,048,800. — Եւ.  
հզր. 8700 հզմղր. — Խտուժիւն մարդկան առ մի ք հազարա-  
մէղր 8 անձ :

1° —Նախագիտելիք: Դիրքի, քաղաքական եւ  
քնական բաժանմունքի .

Սկանտինաւեան թերակղզին բովանդակելով զՇուեա եւ Նոր-  
վեկիա, Եւրոպիոյ հիւսիսային կողմը կ'իյնայ ընդ մէջ 51° եւ  
71° լայնութեան աստիճանաց (Փալդէրպօ Գլխէն մինչև Հիւ-  
սիսային Գլուխ) եւ հիւսիսային-արևելեան կողմէն Ռուսաստա-  
նի կպած է Լաբոնիոյ պարանոցով . միւս կողմերը ծովը պա-  
տած է, այսինքն Սառուցեալ Ովկիանոսը հիւսիսէն, Ատլան-  
տեան Ովկիանոսը եւ Հիւսիսային ծովը Արևմուտքէն, Սքալէր-  
բաք, Բաղդէկաղ եւ Սուետ՝ Հարաւային արևմուտքէն, Պալդիկ  
ծովը՝ Հարաւէն, ու Պոթնեան ձոցը արևելքէն :

Ծովափունքը 10,000 հզմղր. կը տարածուի եւ Ֆորոս ըս-  
տած շատ նեղ ձոցեր ունին, որոնք նաւարկութեան զարգաց-  
մանը վերջի աստիճանի ձեռընտու են : Շատ մը մանր կղզի-  
ներ ցրուած են հիւսիսային եւ արևմտեան ափանց առջև, ինչ-  
պէս են Լոժնէն կղզիները, ևն : Բանի մը մեծեր ալ Պալդիկ  
ծովուն մէջ կը գտնուին, ինչպէս են Կոսլանց, Ալանց :

Շուեա ընդհանրապէս տափարակ է, իսկ Նորվեկիա գրեթէ  
բոլոր լեռնային: Սկանսինուեան Ալպեանց կամ Տոճրին լե-  
ռանց զօտին, որուն ամենէն բարձր կատարները 2600 մէղր կը  
հասնին, հիւսիսէն դէպ ի հարաւ կը կտրէ այս թերակղզիս :  
Կոլֆ սորիմը մինչև արևմտեան ծովափունքը կը հասնի եւ  
օղը շատ կը բարեխառնէ : Շուեաի ներսերը նուազ ցուրտ  
կ'ըլլայ բանձէ Նորվեկիա. վասն զի աս երկրիս դիրքը բարձր  
է՝ որ միջտիան չափով մինչև 600 մէղր կը հասնի: Զէրոյէն 5°  
վեր զուգաչերութեան գիծը այս երկրիս մէջ տեղէն կը կտրէ,  
Քրիստիանիայէն եւ Սդորհոլմէն անցնելով. իսկ 0° զուգաչե-  
րութեան գիծը Նորվեկիոյ հիւսիսային ծայրը կը ղյզի: Սկան-  
տինաւիս՝ ամառները կարճատե են, բայց ընդհանրապէս շատ  
առաք կ'ըլլայ օրերուն չափազանց երկայնութեանը պատ-  
ճառաւ :

Բուսաբերութիւնը բանի մը շարժուան մէջ հրաշալի արա-  
զութեամբ կը զարգանայ: Օդն ամէն տեղ առողջարար է:  
Շուեա որ եւ Շուետացոց լեզուով Շվեդիկէ, երեք մաս կը բաժ-  
նուի. Նորսլանց, Սվեդլանց կամ Միջին Շուեա, եւ Կեթլանց կամ  
Կոքթ : Այս բաժանմունքս 2½ Լէն կամ ոստիկանութիւն կը  
բաշխուին :

Նորվեկիա, շուետերէն Նորիկէ եւ Նորվեկիացոց լեզուով  
Նուրիկէ, երկու մաս կը բաժնուի. հարաւային Նորվեկիա եւ Հիւ-  
սիսային Նորվեկիա: Առաջինը կը բովանդակէ Ալեքուուս,  
Քրիստիանսանց, Պեթլէն եւ Տրոնդհիմ թեմերը. եւ երկրորդը կը  
բովանդակէ Կրոստէ կամ Նորսլանց թեմը՝ որուն ամենէն հիւ-  
սիսային մասը Ֆինմարք կը կոչուի: Ամէնը միանգամայն 17  
պալլութիւն կամ ամր կը ձևացընեն :

§ 2° — Բնակչաց վրայ համաձայն տեղեկութիւն .

Նորվեկիացի գեղացիք գրեթէ ամէնն ալ աղքատ են, եւ  
իրենք կը շինեն իրենց ձկնորսութեան, որսի եւ տնտեսութեան

գործիները և երբեմն ալ զարմանալի յաշողակումեամբ կը կազմեն զանոնք: Գրպանի պարզ դանակով մը, անոթներ կը փորեն և դարաններ կը քանդակեն և ամբողջ կարասի կը շինեն:

Նորվեկիոյ և Շուեաի ցուրտ կլիման կը ստիպէ զբնակիչս՝ գոյացական սնունդ առնելու քան Եւրոպիոյ հարաւակողման բնակիչքը:

Նորվեկիոյ գեղացիք օրը հինգ անգամ կերակուր կ'ուտեն: Լաբրնացիք կամ Սամմ Շուեաի և Նորվեկիոյ հիւսիսակողմը զատ ցեղ մը կը կազմեն Մոնղոլներէն իջած: Քաղաքականութիւն քիչ մտած է անոնց մէջ: Շատերը Թախառական են: Որտորոշութեամբ և ձկնորսութեամբ կ'ապրին և եղնիկի (renne) մտով և կամով կը սնանին. ամէն ընտանիք այս կենդանիներէն գոնէ 2—300 հատ ունին:

§ 3<sup>0</sup>—Երկրագործութիւն, կենդանիք և մետաղ.

**Քոչաք.** Սկանտինաւիա՝ կրանիթական և ցամաք հող ունի. կիզակաւուտներով կամ հողածխուտներով և լճերով լի է, և խնկապէս երկրագործութեան յարմար երկիր չէ: Կիսով չափ ծածկուած է սոճեաց և շոճեաց անտառներով, որոնք՝ երկրին երկու զլիսաւոր գոյքն են. կը գտնուին նաև շատ կաղնի, ոփի և ցարասի: Միայն անտառաց փայտահարութեամբը Նորվեկիա տարուէ տարի 90 միլիոն ֆունտ կը շահի: Իր փայտերը կ'երթան Գաղղիա, Անգղիա, Ստորին-Նահանգք, ևն: Նորվեկիոյ ծառոց մէջ ամենէն աւելի ցարասին կը դիմանայ դաժան կլիմաներու: Մինչև 66<sup>0</sup> լայնութեան դեռ ևս ուժեղ է: Այն աստիճանէն անդին ցրտոյն սաստկութենէն կը կարկամի ու կը զօ ան ոյ: Սիննիք, ուռնիք, բարտիք, լաստենիք (aune) և կաղամախք գրեթէ մինչև նոյն աստիճանը կը դիմանան: Կաղնիք, ոփիք, Թանթրուենիք մինչև 62<sup>0</sup> կերթան: Քանի մը ստլատու ծառեր (խնձորենի, կեռասենի, հաղարչենի) կ'աճին 64<sup>0</sup> և 65<sup>0</sup> լայնութեան տակ:

Երէզները բազմամիւ են. Շուեաի մէջ միայն 2,500,000 հարիւրակալ մշակուած երկիր կայ, իսկ Նորվեկիա միայն 700,000

Երկիրը բնակչաց աննդեան բուսական արմտիք չհասցընէր. Յորենոյ մշակութիւնը 62<sup>0</sup> լայնութենէն անդին չանցնիր. Հաճարը մինչև 64<sup>0</sup> լայնութեան, զարին և վարսալը մինչև 68<sup>0</sup> լայնութեան կը հասնին. —Գետնախնձորը ցրտոյ կը դիմանայ և առատապէս մշակուած է: Միայն Շուեա տարին 13 միլիոն հարիւրալիդր գետնախնձոր կը հասցընէ: Շուեաի մէջ ցորենոյ հունձը 15 միլիոն տակառաչափ է. — Հիւսիսակողմանք ուր ալ ծառերը չեն դիմանար, շատ օգտակար սնկեր առաջ կուգան, ինչպէս են մամուռ, լիքէն (lichen), որոնք բնակչաց և եղնիկի սննդեան կը ծառայեն, և ուրիշ շատ բաներու կը գործածուին, ինչպէս ներկ շինելու: Քանի մը տեղուանք բնակիչք տեսակ մը խմորով կը սնանին, որուն մէջ շոճոյ կեղև կը խառնեն, և ըմպելիք մը կը պատրաստեն ցարասոյ հոյզով խմորած.

**Կենդանիք.** —Արօտները և մարգագետինները (գրեթէ 2 միլիոն հարիւրակալ Շուեաի մէջ) համեմատաբար շատ լաւ են և կը սնուցանեն բազմամիւ ոչխարի և այծու հօտեր 1,600,000 գլուխ Շուեաի մէջ, եղջերաւոր չորքոտանիք 2 միլիոն և ձիք 400,000. Գրեթէ 500,000 ալ խոզ կայ նոյն երկրին մէջ.

Հիւսիսային կողմը յիշատակութեան արժանի է շատ յարգի կենդանի մը, որ կը կոչուի Ռէն (§ 2): Ասիկայ տեսակ մը եղջերու է, որուն կամը և միսը սննդեան կը ծառայեն, և բալխիւրներու լծուելով ձեան և սառերու վրայ մեծ միջոցներ կը կտրէ, զարմանալի երազութեամբ մը: Կայ նաև ջրշուն և ուրիշ մուշտակաւոր չորքոտանիներ (աղուէս, լուսանուն, կղնաքիս, ևն.) աղուամազ բաղեր (eider), որոնց փետուրը յարգի է: Լամիլնկ՝ կամ Նորվեկիոյ մուկերը՝ մեծ փնաս կու տան մշակաց. որովհետև շատ ցորեն կը կրեն իրենց խոր որջերուն մէջ մտնու մէջ ալ Նարվալներ կը գտնուին՝ որոնց ժանիքը գեղեցիկ

փղոսկր կ'ըլլան. ծովու փղեր (morse) նաև փղոսկր կու տան. ծովու հորձը որուն մորձը վաճառականութեան կարևոր նիւթ մ'է:

**Մեծաղբ.** — Մետաղը շատ կը գտնուին, մանաւանդ երկաթը որ ընտիր է և ամէն գաւառ կը գտնուի: Եւստ անգամ երկաթի հանքը երկրիս երեսէն կը սկսի, երբեմն երկաթէ աւահատե- բու ձևով, երբեմն ալ որսիտացեալ: 1865 տարւոյն 5 միլիոն մ. կ. էն աւելի երկաթ ելաւ: Երեսուն տարուան մէջ ճարտարութեան այս ճիւղին արդիւնքը կրկնապատկեցաւ:

Ուրիշ մետաղներն են Արծաթ՝ որ մասնաւորապէս կը զըւ- նուի Քոնկոպէրկ (Աքթրսիուսի Սեմբ) և Սալա (Միշին Շուետ). Պղինձ՝ որ մասնաւորապէս կը գտնուի Տալէգարլիս կամ Սդո- րա, Քորբերպէրկ (միշին Շուետ) և Բէրասա (Տրոնդհայմի Սեմբ). կապար, զինկ, զոպսլը և բիչ մը ոսկի (Էտէլֆորս Ի Կոմս): — Կոյ նաև հանքածուխ, բայց անբաւական, անոր համար գործարանները փայտածուխ և հողածուխ կը վառեն:

Մետաղական գոյացութեանց ամբողջական արժէքը կեւէ 40 միլիոն ֆունգաց:

Բազմաթիւ են նաև հանքային ջրերը, որոնք կը գտնուին Էրէպրօ, Իէնքէրինկ, Նորքէրինկ, ևն:

§ 4. — Ծաւսարութիւնք.

Շուետ՝ ճարտարարուեստից մէջ առաջինն ունի մետաղա- գործութիւնը: Ինչպէս որ ըսինք, երկաթը կ'եւլէ 5 միլիոն մ. կ. ի. իսկ Պղինձը՝ 23,000 մ. կ. ի :

Սկանտինաւիոյ ճարտարարուեստից համար զրեթէ՛ 40,000 հոգի կը զբաղին 3000 գործարանաց մէջ: Միայն Շուետի գոր- ծուածքին ամբողջական արժէքը տարին 110 միլիոն ֆո. են: Գործուած գլխաւոր նիւթերն են՝ բամբակէ կերպասներ, չուխա, շաբար, օղի:

**Սդոգարանները** Նորվեկիոյ մէջ 8000 հոգի կ'զբաղեցնեն: Սկանտինաւիա աղէկ տախտակ կը զրկէ Եւրոպիոյ շատ կող-

մերը: Նշանաւոր են նաև խաղախորդութեան գործարանները. — Քրիստիանիա և Պերկէն ձկան եղ կը պատրաստեն: —

Սկանտինաւիոյ մէջ ճարտարութեան գործունէութիւն մը կայ՝ բոլորովին տեղւոյն յատուկ՝ որուն սկիզբը շատ հին է, և այս է Ընհանեկան աշխատութիւնն որ կը կատարուի ձմեռ- ուան խաւարին և երկայն զիշերները:

Գեղացիք դուրսը շահաւոր զբաղմունք չգտնելով, տան մէջ կ'աշխատին և զարմանալի ճարտարութեամբ մը կը շինեն կահ կարասի, փայտէ ժամացոյց, զէնք, ևն (§ 2. .): Ոմանք ալ ոստայանակութիւն կ'ընեն:

Նաւաւեիմութիւնը ուրիշ ազգաց պիտոյից համար՝ Շուետաց և Նորվեկիացոց մասնաւոր ճարտարութիւն մ'է:

§ 5 — Զկնորութիւն ի Նորվեկիա.

Նորվեկիոյ պէս երկիր մը, որ խորին ծոցեր ունի, և բազ- մաթիւ կղզիներով շրջապատած է, ձկնորութեան մեծապէս յարմարութիւն ունի:

Չողածուկ, բինկա, ևն առատ կը գտնուին ծովափանց մօտ: Առաջնոյն որսը շատ շահաւոր է, անոր համար բոլոր Նորվե- կիացիք ասոր կ'զբաղին: Այս ձկնորութեան պատրաստու- թիւնները կ'սկսին՝ ղեկտեմբերի վերջերը ու յունուարի սկիզբ- ները. ամէնքն ալ մտադրութեամբ կ'աշխատին որ մը առաջ ճամբայ ելլելու: Կանայք կարևոր պաշարը կը պատրաստեն, այսինքն վարսակէ ու հաճարէ հաց, զարւոյ ալիւր, կարագ ք պանիր, խաշած ու չորցած միս. հագուստները կը նորոգեն, առագաստները կը կարկըտեն. մինչ Էրիկ մարդիկ գործիները կարգի կը դնեն: Եւ այսպէս ամէն բան պատրաստելէն ետև յաջողակ բամբին կը սպասեն:

Լոճոսէն կղզիք, որոնց բովերը վտանգաւոր ժայռերու յոր- ձանքներ պակաս չեն, մանաւանդ Մալսդեմ ըսուած սոսկալի- յորձանքը, նոյն ժամանակները որսական նաւերով լցուած են:

Այս նաւերէն շատերը փոքրադիր են և լաստափայտէ շին-

ուած, բարակ տախտակներով և մէկ առաջատու մը միայն ունին :

Նորվեկիացիք իրենց գործեսց կարևոր երկամը ընդհանրապէս կ'առնուն Անգլիայէն, աղն ալ արևմտեան Գաղղիայէն, Անգլիայէն, Բորդուգայէն և Սպանիայէն :

Այն օրերը՝ զօր հիւսիսային Նորվեկիա կ'անցունէ ձողածը կան որսի, հարաւային Նորվեկիան ալ կը պատրաստուի բինկայի որսորդութեան՝ որուն համար 6000 նաւ և 30,000 հոգի կ'ըրաղին՝ իսկ ձմեռը ասոնց պատրաստութեանը համար գրեթէ 50,000 հոգի կ'աշխատին: Տարեկան բերքն է 6-800,000 տակաւ:

Նորվեկիոյ ձկնորսութեան բոլոր բերքը տարին 57 միլիոն ֆունկաց կեւէ:

§ 6<sup>o</sup> — Ճարտարաուես եւ վաճառաշահ ֆաղափ.

**ՇՈՒՍՏ.** — Մալմօ. (22,000 բն.) Կէթլանտի մէջ, Շուետի հարաւային քաղաքաց մէկը. այս նաւահանգստէս կը զրկուին Ականիոյ նոխ արմտիքը :

**Հէլսինկլպորկ.** — Սունտ նեղուցին վրայ, ամուր քաղաք և նաւահանգիստ է :

**Գարլագրոնա.** — Նոյն գաւառին մէջ պատերազմական նաւահանգիստ, դէպ ի հարաւային արևելք :

**Գալմար.** — (Նոյն գաւառին մէջ, Արևելք) նաւաշինութեան և ձկնորսութեան նաւահանգիստ :

**Վիկպի.** — Կոթլանտ կղզւոյն վրայ, ատենօք Միջին դարուն ծաղկած նաւահանգիստ մ'էր, բայց հիմա ընկած :

**Իէնքէիկնկ.** — Կոթիոյ մէջ ներքին գլխաւոր քաղաքաց մին :

**Կոթէկպուրկ.** կամ Կոթէպուրկ (47,000 բն.) Կոթիոյ գլխաւոր նաւահանգիստը, Կոթայի բերանը, որ Շուետի ամենէն նաւարկելի գետն է, ասոր միջոցով Վեներ լճին հետ հաղորդակցութիւն ունի և անկից կ'ընդունի ափանց մօտ գտնուող

փայտերը և երկամը: Իր բանուկ վաճառականութեամբը կը միացընէ Գաղղէկաղը՝ Արևելեան Պալդիկի: Շուետի մէկ կողմէն միւս կողմը՝ վաճառաբերութեան մեծ տեղին է տէրութեան մէջ: Օտարաց հետ առևտրոյն շարժումն է 1800 նաւ, 50 միլիոն ֆունկ արժէքով :

**Նարվէրիկ** կամ Նուրբէրիկ (23,000 բն.) Կոթիոյ մէջ. Մոզալայի բերանը նաւահանգիստ ունի. չուխայի գործարանները նշանաւոր են: Ատոր մօտ է Նիքէրիկ ուսկից շատ տախտակ կ'արտահանուի :

**Սդոնհոլմ.** — (135,000 բն.) Մելաուն լիճը Պալդիկ ծովուն միացնող նեղուցին վրայ՝ սքանչելապէս կառուցուած Շուետի մայրաքաղաքն է: Շատ բանուկ նաւահանգիստ. շարունակ վերաբերութիւն ունի բոլոր Պալդիկի հետ (Փեդրպուրկ, Տանցիկ, Սդեղիին, Լիւպէք, Քորբենհակ), Անգլիոյ հետ (Լոնտըն, Հըլլ), Համպուրկայ, Ստորին-Նահանգաց, Գաղղիոյ հետ (Տէօնքէրք, Հաւր): Օտարաց հետ ունեցած առևտրոյն շարժումն է 1700 նաւ: Այս առևտրոյն արժէքը 60-70 միլիոն ֆունկաց կեւէ :

**Ուքալա.** — Մելաուն լճին ծոցերէն մէկուն վրայ, հռչակաւոր համալսարանով :

**Տանէֆորա.** — Երկամի և պղնձի հալոցներ ունի :

**Կէճլ.** — (Միջին Շուետ). Ծաղկած նաւահանգիստ. երկամի մեծ գործարաններ ունի. փայտ, խէժ, ռետին ևն. կ'արտահանէ:

**Ֆահլուն** կամ Ֆալուն. — Տալէգարիոյ գլխաւոր քաղաքը. նշանաւոր պղնձի և երկամի գործարաններով :

**Հէրնէսանս.** — Նորտլանտի մէջ նաւահանգիստ, ուսկից շատ տախտակ կ'եւէ ի վաճառ:

**Նորվեկիա.** — Բրիտանացան շարունակ վերաբերութիւն ունի Գաղղիոյ և Գերմանիոյ ծովային շատ քաղաքաց հետ:

**Արէնսալ.** — Արտաքին առևտրոյ բանուկ նաւահանգիստ:

**ՍղաՎանկեր.** — Զկնորսութեան համար Նորվեկիոյ ամենէն երեւիլի նաւահանգիստը:

**Քրիստիանիա.** (66,000 բն. արուարձաններովը), Նորվեկիոյ մայրաքաղաքը. շատ վաճառաշահ, բայց նաւահանգիստը դժուարամատոյց է: Անոր համար հասարակօրէն նաւերը Տրամվէն կը կենան՝ Նորվեկիոյ փայտը և կուպրը բառնալու, և օտար երկրի գործուածներն ու ապրանքը պարպելու համար:

**Պերկէն.** (30,000 բն.) արեւմտեան ափանց վրայ նաւահանգիստ. անուանի իբր մթերանոց հիւսիսային ձկնորսութեան և իր մեծ արտաճանութեամբը այսինքն շինութեան փայտ, կաշի, չոր և աղած ձուկ (մանաւանդ ձողաձուկ և բինկա):

**Տրոնդիայն.** կամ Բրոնսիլեմ (20,000 բն.) համանուն երկայն բարակ ծոցի մը վրայ, հանքերու և անտառաց մօտ:

**Համվերճրոս.** — Եւրոպիոյ ամենէն հիւսիսային նաւահանգիստը, ուր մի միայն ամառը բազմաթիւ վաճառական և ձկնորս նաւեր կ'երթան:

§ 7<sup>o</sup>. — Հաղորդակցութեան միջոցներ.

**Նաւարկելի ճամբաներ.** — Այս երկրիս հաղորդակցութեան ամենէն մեծ ճամբան ծովն է, դժբաղդարար այն ալ տարւոյն մէկ մասը սառերով կը գոցուի: — Պոմնիոյ ծոցը բոլորովին կը սառի բանի մը ամիս, այնպէս որ վրայէն ծանր սայլերով կրնան անցնիլ: Այս ծոցիս մէջ նաւարկութիւնը յունիսի կ'սկսի. իսկ Պալդիկի միւս մասերուն մէջ՝ միայն ապրիլ ամսէն մինչև սեպտեմբեր կը նաւարկուի: Մառուցեալ Ովկիանտսին մէջ նաւաչուումիւն չըլլար հոկտեմբերէն մինչև ցվերջ մայիսի. Ատլանդականին մէջ կը դադրի դեկտեմբերէն մինչև ապրիլ. միայն հիւսիսային ծովը չսառի: Գետերը շատ տեղ ժայռուտ և սահանաւոր ըլլալով և տարւոյն մեծ մասը սառով ծածկուած՝ նաւարկութեան չեն գար: Բայց Վեներ, Վեդեր, Մելաուն և Հիէլմար լճերը ամառը լի են նաւերով: Ներքին հաղորդակցութեան ամենէն նշանաւոր ճամբան է

Կոթայի խոր և լայն ջրանցքը, որ Վեներ և Վեդեր լճերը կը միացնէ և յետոյ Կեքա գետը և անոր ուղղութեան ջրանցքը՝ Վեների և Գաղղեկադի կը կապէ, են: — Բազմաթիւ վաճառական և պատերազմական նաւեր կ'անցնին նաւարկութեան այս հիանալի ճամբէն, որ 300 հազարամէդր երկայնք ունի:

**Մեկարուբիք.** — Շուետի զլխաւոր երկամուկիքը հետեւեալքն են. — 1. Արեւմտեան երկամուկին Սդոֆոլմէ մինչև Կոթեպոդկ, դէպ ի Քրիստիանիա ճիւղով մը: — 2. Հարաւային երկամուկիքը, որոնք առաջինէն բաժնուելով կ'երթան մէկ կողմէն Նորվեկիոյ վրայէն և միւս կողմանէ Իէնկէրինկի վրայէն. 3. — Հիւսիսային արեւմտեան երկամուկին Սդոֆոլմէ մինչև Իրէպո: — 4. Հիւսիսային երկամուկիք, որ Սդոֆոլմէ կ'երթան մինչև Ուբսալա, Ֆահլուն և Կէժլ: — 5. Նորտլանտի երկամուկիքը. — Նորվեկիոյ մէջ ալ երկամուկիք բազմանալու վրայ են: Նշանաւոր է Քրիստիանիայէ մինչև Տրոնդիայն գացող երկամուկին, որուն ճիւղը Էյսալայէն մինչև Քլոքըրն կերթայ Սդոբոլմի ուղղութեամբ:

§ 8<sup>o</sup> — Առեւտուր, վաճառահանութիւնք և վաճառաքերութիւնք.

Սկանտինաւեան ցամաքակղզին ի բնէ հրաշալի դիրք մը ունի ծովային վաճառականութիւն ընելու: Շուետի Էլեմտական առեւտուրը 300 միլիոն ֆուանդաց կ'ելլէ: Սկսեալ 1730 տարիէն մինչև 1830 տարին եղած հարիւրամեայ շրջանին մէջ՝ այս երկրին օտարաց հետ ունեցած առեւտրական փոխանակութեանց արժէքը միայն կրկնապատկուած էր. իսկ այս ետքի բառասուն տարիներու մէջ այս արժէքը վեցնապատիկ եղաւ:

**Վաճառաքերութիւնք.** — Շուետ մտնող ապրանք տարեկան գինն է 157 միլիոն ֆուանդ, իսկ Նորվեկիա մտնողաց 103 միլիոն: Մտնող ապրանքն են՝ զլխաւորապէս բամբակ, շաքար, խաճուէ, ծխախոտ, հիւսուածք, արմտիք (մանաւանդ

Նորվեկիա). բուրդ, գինի, աղ, ձեռագործ ապրանք, ապակեղէն, դանակեղէն, անօթեղէն, մետաքսեղէն, ևն:

**Վաճառահանութիւնք.** Ելլող ապրանք են վաճառ, տախտակ, կուպր, երկաթ, ձուկ, մորթ, պողպատ, պղինձ, կաշի, ձողաձկան եղ, բինկա ևն:

Շուկայէն ելլող ապրանք գինը 162 միլիոն է և Նորվեկիայինը 88 միլիոն ֆուանգ:

**Վաճառակից երկիրներ.** Սկանտինաւիոյ վաճառակից երկիրներն են զլիսաւորապէս մեծն Բրիտանիա, Գերմանիոյ Հաննուեւիլիք բաղաքը, Տանիմարգա, Գաղղիա, Ռուսաստան, Բրուսիա և Միացեալ Նահանգք: Անգլիա կը ծախէ բուրդ, բամբակ. Գաղղիա՝ տեսակ տեսակ գինիներ, շաքար, խահուէ, աղ, Բարիզու ապրանք. օտար երկիրներն ալ մետաքսեղէն, ապակեղէն, անօթեղէն և դանակեղէն ապրանք կը ծախեն:

§ 9<sup>o</sup> — Գաղթականութիւնք.

Շուկայ գաղթականութիւն մ'ունի Անգլիականց մէջ. Ս. Բարբուդիմէոս կղզին:

§ 10<sup>o</sup> — Դրամք, չափ եւ կշիռք.

Դ Ր Ա Մ Ք

Ոսկի	}	Տուգաղ	= Փուանգ 11,66
		1/2 Տուգաղ	= » 5,83
		Ռիքստալ, Դրամափող Շուկայ	= » 5,78
		Ռիքստալ, Նորվեկիոյ	= » 5,61
Արծաթ		Ռիքստալ ռիքսմիւնդ	= » 1,42
		2 1/2 Սքիլինկ	= » 1,12
	12 Սքիլինկ	= » 0,56	

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ա Կ Ա Ն Չ Ա Փ Ք

Մղոն Շուկայ	10, 1/2 առ աստիճան.	Հզմղր. 10,70
Մղոն Նորվեկիոյ	10 —	» 11,12

Ե Ր Կ Ա Յ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Չ Ա Փ Ք

Ոտք Շուկայ (Ֆոդ)	Հարիւրամէդր 29,69
Կանգուն Շուկայ	» 59,38

Ա Ր Տ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն Չ Ա Փ Ք

Դոննա Շուկայ	Կալ 49,33
--------------	-----------

Ը Ն Դ Ո Ի Ն Ա Կ Ո Ի Թ Ե Ա Ն Չ Ա Փ Ք

Քաննէ Շուկայ	Լիդր 2,61
Լաստ (նաւերու բեռը կշռելու)	մ. կ. 42

Կ Շ Ի Ո Ք

Լիպրա Շուկայ (սքալրունա)	Կրամ 25,08
--------------------------	------------

**Փոխառուութեան ընկերութիւնք.** Շուկայի մէջ՝ Շուկայի Թագաւորութեան դրամատունը. կալուածական վարկ: Նորվեկիոյ մէջ՝ Նորվեկիոյ գրաւադրական դրամատունը:



### Գ Լ ՈՒ Խ Գ .

## Տ Ա Ն Ի Մ Ա Ր Գ Ա



Հայնուժեան աստիճան 55° : —

Մկեժ . առանց Ֆէրօէր և Իսլանտա կղզեաց 38,200  հզրմղր :  
Բն . 1,700,000 հոգիք . վճռկն , նաւ 3740 . տկուչի . 224,198 :  
Խտուժիւն մարդկան առ մի  հզրմղր . 42 անձ :

### § 1° — Նախագիտելիք , դիրք , բնական եւ բաղաբանական բաժանումներ .

Տանիմարգա՛ կը բաղկանայ ցամաք երկրի (Կիմբրեան Քերտնիտն) մասէ մը և քանի մը կղզիներէ : 1864 տարւոյն պատերազմէն ետքը միայն Եուրլանտ և Դանիական արշիպելագոսը կը բովանդակէ , որուն գլխաւոր կղզիներն են Սէէլանտ , Ֆիոնեա , Լալանտ , Ֆալդեր , Լանկէլանտ և Պոռնհոլմ :

Տանիմարգայի սահմանն է արևելքէն՝ Պալդիկ ծովը . հիւսիսային-արևելքէն Գադգէկադ . հիւսիսէն Սքակէր-Ռաք . արևմուտքէն Զիւսիսային ծովը : Սուտն նեղուցը կը բաժնէ զայն դէպ ի արևելք՝ Շուետէն . Մեծ-Պելդը ծովու անցք մ'է Սէէլանտ և Ֆիոնեա կղզեաց մէջտեղ . Պոսիկ-Պելդը Ֆիոնիոյ և Կիմբրեան ցամաքակղզւոյն մէջ տեղն է : Սքակէն գլուխը վերջին ծայրն է՝ Եուրլանտի , դէպ ի հիւսիս , որ երկու մաս բաժնուած է՝ ծովու երկայն անցքով մը՝ որ Լիւ-Ֆիորս կը կոչուի :

Տանիմարգան տափարակ երկիր մ'է , և նշանաւոր գետ

չունի : Սէէլանտ կամ Զէլանտ կղզին ամենէն բարեբեր մասն է : Կլիմայն ընդհանրապէս առողջարար է և լայնութեան աստիճանին համեմատ ցուրտ չէ :

### § 2° — Երկրագործութիւն եւ բերք .

Տանիմարգայի մէջ երկրագործութիւնը յառաջացած է : Բնութիւնը լաւ պատրաստած էր երկրագործութեան՝ այս խոնաւ հողէ բաղկացեալ , ցած և թեթեւ մը խորտուրորտ երկիրը : Միայն Եուրլանտ՝ երէզներ ունի : Միւս բոլոր տեղուանք՝ երկիրը ծածկուած է արմտեաց գեղեցիկ արտերով , դաշտերով , կամ անտառներով , որոնց գլխաւոր ծառը ուխին է :

Առաւելապէս կը մշակուի վարսակ , հաճար , գարի , սեւաջորեն , ցորեն և գետնախնձոր : Արմտեաց արտահանութիւնը շատ բանուկ է : 2,500,000 հարիւրակալ հերկելի երկիր կայ : Տանիմարգացոց երկրագործութեան յառաջադիմութեան պատճառներն են՝ երկիր պարարտացընելը , ջրերը ցամբեցընելը (drainage) , ամէն տեղ ընդունուած լաւ գիւտեր զործածելը , կատարելագործուած գործիք բանեցընելը և երկրագործական ուսմանց զարգացումը :

Մարգագետիններն առաջին կարգի են : — Միլիոն մը եղջերաւոր չորքոտանի կը դարմանուի : Ամենէն յարգի արջառները Եուրլանտ և Սլիլէն կը գտնուին : Երկրորդը նաև առատ կաթնտու է : Երկարաց ընտիր ցեղերն են Սէէլանտի ցեղը , Լալանտ կղզւոյն և Ֆիոնիոյ ցեղերը . Եուրլանտի ցեղը (բեռնակիր աղւոր երկւարներ) , Բնաբաղբուբի ցեղը (զարդի ձիեր) :

Ոչխարի տեսակները (1,200,000 զլուխ) մանր են և միջին կարգի բուրդ ունին :

Մետաղ չկայ : Պոռնհոլմի մէջ հանքածուխ և շատ տեղուանք բառլին և հողածուխ կամ կիզակաւ կը տեսնուին :

§ 5<sup>0</sup> — Ճարտարաքիւն եւ ձկնորսութիւն.

Մովեզերեայ բնակիչք՝ ձկնորսութեան հարկաւոր նիւթերու շինութեան կ'գբաղին. իսկ ներքին գեղացիք ալ կտաւ, ասուեղէն և զլխարկ կը պատրաստեն: Գաղաքները բանի մը նշանաւոր զործարաններ ունին չուխայի, կերպասու, շաքար զտելու և ցրեհանութեան: Դրսէն եկած մետաղները, երկաթ, պողպատ՝ լաւ գործիք և անօթ կ'ըլլան: Հալոցաց արդիւնքը, մեծադիր դանակեղէնքը և դարբնոցները՝ օտարաց հետ կրնան մրցիլ: Ոսկերչութիւնն ու յախճապակը կիրթ ճաշակ մը կը փայլեցընեն: Սակայն Նաւաւիւնութիւնը և Ձկնորսութիւնը՝ Տանիմարգացոց ճարտարութեան նշանաւոր ճիւղեր են: Բազմաթիւ նաւեր ձողաձուկ որսալու կ'առազատտին զէպ ի Նոր-Երկիր և Իսլանտիոյ կողմերը, և բինկա և կէտ որսալու՝ Հիւսիսային ծովերուն այլևայլ կողմանքը:

§ 4<sup>0</sup> — Հաղորդակցութեան միջոցներ եւ Սոււնս անցիլը.

Շուղանտի ամենակարճ նաւարկելի գետերն՝ աննշան ճամբաներ են երթևեկութեան ապրանաց: Տանիմարգայի հաղորդակցութեանց շատը ծովով կ'ըլլայ: Պալդիկ ծովը՝ Գաղղէկաղի միացնող երեք անցից զլխաւորը Սոււնս է:

Շուէտի հարաւային մասին և Սէէլանտ կղզւոյն մէջտեղը սովորական ճամբան՝ որով նաւերը Պալդիկ կը մտնեն ու կ'ելլեն, Սոււնտ փառաւոր ջրանցքն է, որուն ամենէն նեղ տեղն ալ 4000 մեղր լայնութիւն ունի: Խորութիւնը 1 1/2-32 մեղր կը տարբերի: Այս նեղուցէն անցնող նաւերուն թիւն է՝ տարին 20,000—25,000: Առաջները նաւերը Տանիմարգայի տէրութեան տուրք մը կուտային, այն ալ փոխադարձաբար խնամք կը տանէր հոն նաւաստիներ պահելու և փարոսներ վառելու: Այս տուրքը

Սէպէտե Ծանիմարգայի բուական եկամուտ մ'էր՝ սակայն վաճառականութեան համար ծանր էր: 1857 ին ընդհանուր դաշնադրութեամբ այս տուրքը գնուեցաւ:

Մեծ-Պելդը բիչ յանախուած է իր խութերուն պատճառաւ. աշնան և ձմեռը փոթորկալից է, և այս յետին եղանակին մէջ երբեմն կը սառի:

Պզտիկ-Պելլըն ալ շատ ծանծաղուտներ ունի, և ջրոցը խիստ երազ ընթացիցը պատճառաւ նաւարկութիւնը կը դժուարանայ. ամենեւին չսառիք, բայց նաւարկելի չէ դեկտեմբերէն մինչև ապրիլ:

**Նրկաբուդիք.** Աարուս միացած է Ռանգստի և Վիպորիի Ֆրէստիսիա Հաստրալպէնի (Շլէզվիկի մէջ). Բորբենհակ միացած է մէկ կողմանէ Էլսլանտի և միւս կողմանէ Բորսէէրի Ռէսիլցէն անցնելով. Օսէնսէ միացած է Նիպորիի և Միսլէարդի:

Երկամուղեաց տարածութիւնն է 675 հազարամեղր:

§ 5<sup>0</sup> — Վաճառաքերութիւն եւ վաճառահանութիւն

Տանիմարգայի առևտուրն ատենօք ծաղկած էր, 1864 տարւոյն աղէտալի պատերազմէն ետքը շատ ինկաւ, որուն մէջ Քիէլ, Ալդոնա, Ֆլէնսպուրկ են. նաւահանգիստները կորսնցուց: Մտնող ապրանքն են՝ նախնական նիւթեր, հանքածուխ, մետաղք, շինութեան փայտ, Ամերիկոյ բերք, զինիք, մետաքսեղէնք, բամբակ ևն:

Գրեթէ 110 միլիոն ֆռանցաց արժէքով:

Արտահանութիւնն են՝ աղած ձուկ, ձկան եղ, արջառ, արմտիք, բլիթ, կնճրակ, բուրդ, մորթ, ճրագու. ցորեն, ալիւր, կարագ ևն: Ընդ ամենը գրեթէ 60 միլիոն ֆռանց:

Ամենէն աւելի Տանիմարգայի հետ վտճառականութիւն ընող երկիրներն են՝ Անգղիա, յետոյ Շուէտ, Նորվեկիա, Բրուսիա, Հոլանտա. Գաղղիա ևն:

§ 6° — Վաճառաշահ գիխաւոր ֆադաֆֆ.

**Քոբենհակ** կամ Բէօպէնհավն. (156,000 բն.) Տանի-մարգայի միմիայն մեծ քաղաքը և միանգամայն մայրաքաղաքը: Սէէլանտ կղզւոյն մէջ, Սունտ նեղուցին վրայ. առևտրոյ, մատենագրութեանց և գիտութեանց ծաղկեալ կեդրոն մ'է:

Նաւահանդիստը 500 նաւ կրնայ ընդունիլ և ապահով է: Երևելի են յախճապակէ ձեռագործքը, չուխայի, կտաւուց, օճառի, մետաքսեղինաց գործարանքը, մթերանոցքը, հերկելու գործիները, ժամացոյցքը, ևն: Վաճառաբերութիւնքն են՝ Հնդկաց ապրանք, գինի, օղի, գաղթականաց բերք, թէյ, հանքածուխ, երկաթ, փայտ ևն: Արտահանութիւնքն են՝ արմատիք, ձուկ, մուշտակ, կանեփ, կուպր, ճրագու ևն: Նաւարկութեան շարժումն է՝ 20,000 նաւ:

**Էլսընթոր** կամ Հէլսինկոր. (10,000 բն.) Սունտի վրայ նշանաւոր նաւահանգիստ: Ձիւնարան և շաքարի զտարան:

**Նիլֆելդին**. Փայտէրի մէջ ցորենոյ առևտուր կ'ընէ:

**Օսէնսէ**. (15,000 բն.) Ֆիննիոյ գլխաւոր քաղաքն է. կաշեգործութիւն, խաղաղորդութիւն և ձեռնոցի, օճառի և չուխայի գործարաններ ունի: Բայց նաւահանգիստը բանուկ չէ: Եռւղլանտի մէջ:

**Սառուս**. (11,000 բն.) Վաճառականութիւն ցորենոյ, բրդոյ, արմտեաց, արշառու, ճարպի և բինկայի:

**Ռանսէրս**. Ուր ձեռնոց կը շինուին: Արտահանութիւն աղած լոսդիի:

**Սալպուրկ**. (10,000 բն.) Լիմ-Ֆիրտի վրայ ձկնորսութեան և վաճառականութեան նաւահանգիստ է: Գործարան ձկանիւղոյ, հրագինուց, ձեռնոցի և օճառի:

§ 7° — Հեռաւոր կայուածք. Ֆեռօեր կղզիք, Իսլանսա, Կրեկչանսա, ևն.

**Ֆեռօեր** կղզիք՝ Բրիտանական կղզեաց հիւսիսային արևմտեան կողմը կ'իյնան. բաւական բնակուած արշիպելագոս մ'է, օղը շատ ցուրտ, և բերքն են արշառ և ոչխար, հողածուխ, սգորպուղ ախտին օգտակար տունկեր և էյսէր բաղերը. որոնք շատ ծանօթացեալ են իրենց փափուկ, տաքցուցիչ և ճնշուղ փեփոններովը: Այս կղզեաց բնակիչքը կը վաճառեն աղած ձուկ, ձկան իւղ, փետուր, բուրդ. և կը գնեն հետեղէն, ոգելից ըմպելիք, կտաւ, գաղթականաց ապրանք, կօշիկ ևն: Այս ապրանաց ներս մտնելու գլխաւոր տեղն է Թորքաւն:

**Իսլանսա**. (այսինքն սառներկիր, ice և land բառերէն) Եւրոպիոյ հիւսիսային-արևմտեան կողմը կ'իյնայ՝ և ի բնէ Ամերիկայի մաս կը սեպուի բան թէ Եւրոպիոյ: Թէպէտև Տանի-մարգայէն աւելի ընդարձակ է տարածութեամբ, բայց բնակիչն միայն 70,000 հոգիք են: Յուրտ երկիր մ'է, ընդհանրապէս անբեր, անուանի է գեղեցիկ տեսարաններովը, հրաբղխական բերքերովը, բնութեան հետաքրքրական առարկաներովը, որոնց մէջ նշանաւորներն են վեր ցայտող աղբիւրներն Կէյզէր քսուած: Հէկլա վառ հրաբուխն ալ գլխաւոր լեռներէն մէկն է: Արմտիք ատնջ չգար, բայց գետնախնձոր կը մշակուի, գեղեցիկ չորքոտանիներ կը դարմանուին: Կան զրեթէ 40,000 եղջիւրաւոր անասունք, 500,000 ոչխար, 60,000 ձի: Կղզւոյն գլխաւոր քաղաքն է Ռէյֆիավիլիք, որ պղտիկ նաւահանգիստ մ'է ձկնորսութեան և վաճառականութեան:

Տանիմարգա ունի նաև **Կրէկչանսա** Ամերիկայի հիւսիսային արևելեան կողմը. Ս. Խաչ կղզին Անդիլեանց մէջ: Տանի-մարգա ժամանակաւ այս արշիպելագոսին մէջ ունէր նաև Ս. Թովմաս և Ս. Յովհաննէս կղզիները՝ զորոնք Միացեալ-Նահանգաց տուաւ:

§ 14. Դրամք, չարիք եւայլն.

Դ Ր Ա Մ Ք

Ոսկի.	{	Կրկին Քրիստիան	Ճռանգ	41,80
		Քրիստիան	»	20,90
		Յրէտէրիգ	»	20,32
Արծաթ	{	Կրկին Ռիքստալ	»	5,58
		Ռիքստալ	»	2,79
		Կէս Ռիքստալ	»	1,40
		16 Շիլին	»	0,49
Պղինձ	{	4 Շիլին	»	0,47

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ա Կ Ա Ն Չ Ա Փ Ք

Մղոն Տանիմարգայի	14,77 առ աստիճան	Հզմդր	7,52
Իսլանտիոյ ծովային մղոն	9	»	12,36
Յամաբային հասարակ »	12	»	9,27

Ե Ր Կ Ա Յ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Չ Ա Փ Ք

Հռենոսի ոտք	Հարիւրորդամէյր	31,385
Կանգուն	»	62,77
Ծովային գիրկ (Յոն)	Մէյր	4,88

Ը Ն Դ Ո Ւ Ն Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Չ Ա Փ Ք

Քորենհակի Ֆիլդէլ	Լիդր	7,73
Քորենհակի Անքէր	»	37,62

Կ Շ Ի Ռ Ք

Մարկ	Կրամ	235,59
------	------	--------

Փոխասուութեան գլխաւոր Ընկերութիւնք. — Քորենհակի ազգային դրամատուն:



Գ Լ Ո Ւ Խ Գ.

Պ Ե Լ Ճ Ի Ս.

Լայնութեան աստիճան 50°—31°:  
 Մակերևոյթ 29,500 □ հզմդ. — Բնակիչ 5,000,000.  
 — Վաճառական նաւ 98 հատ. = Տակտաւաչափ 37,925.  
 — Ել. հզր. 5,400 հզմդր. — Խտուծիւն մարդկան առ □ հազարամէյր 170 անձ:

1° —Նախագիտելիք. դիրք, քաղաքական եւ քնական բաժանմունք.

Պելճիոյ Թագաւորութիւնը 1834 տարւոյն ձևացաւ. — Ստորին Նահանգաց հին Թագաւորութեան հարաւային մասէն: Սահմանն է՝ հարաւէն Լորէն գաւառը. հարաւային-արեւմուտքէն Քաղղիա. հիւսիսային արեւմուտքէն՝ Հիւսիսային ծովը. հիւսիսէն՝ արդի Ստորին-Նահանգաց Թագաւորութիւնը: Արեւելքէն նոյն Թագաւորութեան մէկ մասը, Բրուսիա և Լիւքսեմպուրկայ մեծ դքսութիւնը:

Պելճիոյ միջին լայնութեան աստիճանն 50°—31° է:  
 Երկիրը ընդհանրապէս դաշտային է, սակայն արեւելեան կողմերը լեռնոտ են: Արեւելքից Պելճիոյ ամենաբարձր լեռներն են:

Թագաւորութիւնը ինն նոր գաւառներ կը բաժնուի:  
 Արեւմտեան Ֆլանտր, Արեւելեան Ֆլանտր, Անկլերա, Հարաւային Պրապանդ, Հէնօ, Նամիւր, Լիէժ, Պելճիական Լիւպուրկ և Պելճիական Լիւսեմպուրկ:

§ 2° — Երկրագործութիւն, Հող.

Պելճիոյ հողը՝ ամէն տեղ հաւասարապէս բարեբեր չէ. Գաղղիական մասին մէջ և Ստորին-Նահանգաց մօտ փոփոխութիւն կը կրէ: Հիւսիսային կողմը ցած և դաշտային է, ուր է նաև Գամբիլն անապատը. և Լէմպուրկայ ճախճախուտը՝ Հոլանտայիններուն հետ կը խառնուին: Հարաւային կողմը՝ երկիրը ալեճև է մինչև Գաղղիա:

Պելճիան երկու գօտի կրնանք բաժնել. Բուսաբեր Պելճիա եւ Հանգային Պելճիա:

Բուսաբեր Պելճիա կը պարունակէ երկու Ֆլանտրները, Պրապանդը, Լէմպուրկը, Անվերսա գաւառը և Լիէժ և Հէնօ գաւառաց մէկ մասը: Երկրագործութիւնը այս գօտոյս տակ շատ յառաջացած է, և բնակչաց մեծագոյն մասը կ'ըբաղեցնէ:

Հանգային Պելճիա կը պարունակէ Նամիւր գաւառը, Լիւքսեմպուրկը և Լիէժ և Հէնօ գաւառաց մեծագոյն մասը: Հանրածխոյ բովերը Պելճիան գրեթէ երկու կըբաժնեն և շատ հազարամէղր լայնութեամբ գիծ մը ձևացնելով Մոնս բաղբէն մինչև Լիէժի շրջակայքը կը տարածին:

Սնտառները մասնաւորապէս Լիւքսեմպուրկ կ'երևան: Կիզակաւը կամ հողածուխը շատ տեղուանք կը գտնուի: Պելճիոյ ամենէն բարեբեր մասը Էսգոյի աւազանն է, որուն կեղքոններն են Պրիւժ, Կանտ, Անվերսա և Պրիւսել: Այս մասիս հողը լաւ մշակուած և շատ բարեբեր է և համեմատաբար բնակիչն ալ հոս ամէն գաւառներէ աւելի խիտ է: Արևելեան կողմը բաւական ընդարձակ անտառներ կան ուր կը գտնուին մայրիներ, փիճիք և հացիներ: Պարարտ մարգագետիններ բազմամիւ եղջերաւոր անասուններ կը սնուցանեն: Նոյն երկիրներուն մէջ որթ ալ կը մշակուի, սակայն դժբաղդաբար զինին շատ ազնիւ չէ: Պտուղները համեղ չեն և հազուադիւս, ջրեան, հասնար և վարսակ կը քաղուի:

Արևմտեան մասին մէջ՝ սքանչելի մարգագետիններ մեծ օգուտ ունին ընտիր կառածիղ երիվարաց և կաթնտու կովե-

րու: Այս մասիս կլիմային տակ լաւ բուսող տնկերն են ծխախոտ, կանեփ, տորոն, գայլուկ և մասնաւորապէս վուշ որ Թագաւորութեան հարստութիւններէն մէկն է:

Կրնայ ըսուիլ թէ ժողովրդեան բաւորը երկրագործութեան կ'ըբաղի, և սակայն արմտիք և գետնախնձորը ներքին սպաւման չեն բաւեր. ուստի Պելճիացիք հարկադրուած են օտարներէ գնելու:

§ 3° — Հանճի եւ ճարտարաւուստ.

Պելճիա և Մեծն Բրիտանիա, Եւրոպիոյ մէջ ամենէն աւելի հանճածուխ ունեցող երկիրներն են: Պելճիոյ տարեկան արդիւնքը 10 միլիոն տկուչփ. ածուխ է, որուն արժէքը 100 միլիոն ֆրանկը կ'անցնի: Արտահանութեան գրեթէ բոլորը Գաղղիա կ'երթայ, մնացածն ալ Ստորին-Նահանգաց: Գրեթէ 80,000 գործաւոր կ'աշխատին հանրածխոյ համար: 350 բովք կը համրուին որոնց զլիսաւոր կեղորոններն են Մոնս, Շարլըռուս և Լիէժ: (!):

Դիտելու արժանի է հետեւեալը թէ՛ հանրածխոյ ճարտարաւուստը Պելճիոյ ժողովրդեան աճելուն նպաստ եղած է: Յիբաւի՛ բնակչաց գործ և աշխատութիւն պարգևելովը՝ հարըստացուցած է այն գաւառները, և երեսուն տարուան միջոցին մէջ ժողովուրդը քան զկրկնապատիկը բազմացած է (?): Օրինակ. 1834ին Հանքային Պելճիոյ բնակիչը 1,542,000 էր, հիմա (1869) 3,000,000ի էլած է: Երկամը զլիսաւորապէս Շարլըռուսայի, Լիէժի և Նալլուրի շրջակայքը կը գտնուի: Զինկը Լիէժի գաւառին մէջ՝ գոր երկու մեծ բնկերութիւններ կը բանեցնեն և կը կոչուին Հին և Նոր-Լիբին: Այս զինկի

(1) Murray's Encyclopædia of Geography.  
(2) R. Cortambert. géographie commerciale et industrielle.

հանքերը տարին 36,000 տկուշի. կը մատակարարեն, որոնց արժէքը 27 միլիոն ֆունգաց կը հաշուին :

Պեւճիա՝ բանուկ ճարտարարուեստ ունի. հանքածխոյ բով-  
քերը մղում մը տուած են Հէնօյի և Լիէժի արուեստագիտու-  
թեան, ուր ամենէն աւելի փուռեր, դարբնոցներ, հալոցներ եւ  
հայեւեաց գործարաններ կը գտնուին. մանոցները, հիւտուա-  
ծոց գործարանները մասնաւորապէս արեւմտեան գաւառաց  
մէջ տարածուած են: Օրինակի համար բամբակեղէնը Կանտի  
զլխաւոր աշխատութեան ապրանքն է: Այս քաղաքը տարին  
գրեթէ 13 միլիոն հազարակրամ բամբակ կը հայթայթէ: — Բամ-  
բակեղինաց արտահանութիւնը 15 միլիոն ֆունգաց կը հաշուի:

Ատուեղէնը գլխաւորապէս Լիէժի գաւառէն և մասնաւորա-  
պէս Վերվիլէյէն կու գայ: Տարեկան 200 միլիոնի արժէք մը  
կ'ընծայեն:

Վշեայ և կանեփեայ հիւտուածքը Կանցի, Պրիւժի և Գուրդ-  
րէյի և Ռուլէյի մեծ գործարաններէն կ'ելլեն:

Այս ճարտարութիւնը Պեւճիոյ գործարանաց ամենէն աւելի  
պատիւ տուողներէն մէկն է: Ասղնեգործաց համար 120,000  
գործաւոր կին կգբաղին Պրիւսսէլ, Կանց, Պրիւժ, Անվերսա,  
Իբրը, Գուրդրէ, Մալին, ևն:

Միւս գլխաւոր ապրանքն են կաշի, մորթ, շաքար, զարե-  
ջուր, ծուղծ, ապակեղէն և հայելի:

Պարտիզաց խնամքը և ծաղկանց մշակութիւնը շատ յառա-  
ջացած է: Կանտի և ուրիշ քաղաքաց ծաղկական հանդէսքը լաւ  
կը յայտնեն Պեւճիացոց՝ ծաղկանց վրայ ունեցած խնամքը և  
ճաշակը:

§ 4<sup>o</sup> — Հաղորդակցութեան միջոցներ.

**1. Էսգօ.** — Էսգօ, Ֆլամերէն Շէլ՝ Պեւճիոյ վաճառակա-  
նութեան ծաղկմանը մեծ միջոց մ'է: Էսգօ՝ Պեւճիոյ մի միայն  
նաւարկելի գետն է, բայց ասոր բերանները Հոլանտայի մէջ  
են որոնք Զելանտի մէջ երկու սքանչելի հանդրուաններ

կը ձևացնեն. մէկը՝ արևելեան Էսգօ, միւսը արևմտեան Էսգօ  
կամ Հոնտ: Ծովախաղացքը զգալի են մինչև Կանտ, և թեթե-  
ւաբեռն նաւեր կրնան նաև աւելի վեր, մինչև Օտընարտ եր-  
թալ. Էսգօյի դշտոյն Անվեր կամ Անվերսա քաղաքն է:

Պեւճիոյ երկրորդական գետերն են Մէօզ՝ որուն կը խառ-  
նուի Սամպրը, Լիս և Ռիւբէլ որ Էսգօյի կը միանան:

**2. Զրանցք.** — Զրանցից կատարեալ ցանցակերպ մը Պել-  
ճիոյ շատ գետերը մէկմէկու կը միացնէ: Այն ջրի ընթացքները  
որ առաջ նաւարկութեան դժուարութիւն կը պատճառէին, հի-  
մա արուեստիւ լայնցած են և կողմնական ջրանցքներ ունին:  
Այս ջրանցքները՝ Պելճիոյ ամէն կողմը կը գտնուին և վաճա-  
ռականութեան ու արուեստից մեծ օգուտ ունին: Բայց մասնա-  
ւորապէս մէջ տեղուանքը և արևմտեան կողմը կը տեսնուին:  
Նշանաւոր են հետևեալ ջրանցքները. Պրիւժ Օսդանց և Էլ-  
լիւզ, Կանցէ Պրիւժ. Պրիւսսէլի և Լուվէնի ջրանքները, որ  
Պրիւսսէլէ և Լուվէնէ մինչև Ռիւբէլ կը տարածին. Մոնսէ  
Գոնսէ գացողը՝ որ Մոնսը Էսգօյի կը միացնէ. Գամբիի  
ջրանցքը, որ Նէքը (Ռիւբէլի գետակիցք) Մէօզի կը միացնէ.  
Հիւսիսային ջրանցքը՝ որ վերջինին կը միանայ և Հոնտոսի կը  
հաղորդակցի:

**3. Սրկաքուղի.** — Պեւճիա կտրուած է երկամուկեաց ցան-  
ցակերպէ մը՝ որ Գաղղիոյ երկամուկիները Հիւսիսային Գեր-  
մանիոյ երկամուկեաց կը միացնէ: Պեւճիոյ ցանցակերպին  
կեղրոնն է Մալին, ուսկից չորս գլխաւոր գծեր կ'ելլեն, որ են.

1<sup>o</sup>. Արեւելեան գիծ, դէպ ի Բրուսիա, Լուվէնէ, Լիէժէ և  
Վերվիլէյէ անցնելով, կ'երթայ մինչև Էսլաւաբէլ և Գուրմեր:

2<sup>o</sup>. Հիւսիսային գիծ, դէպ ի Հոլանտա, Անվերսայէ անց-  
նելով:

3<sup>o</sup>. Արեւմտեան գիծ, դէպ ի Հիւսիսային ծով, Կանցէ անց-  
նելով, ուսկից ճիւղ մը կը բաժնուի Ֆիւրնի և Օսդանցի վրայ:

4<sup>o</sup>. Հարաւային գիծ, դէպ ի Բաղղիա, Պրիւսսէլէ և Մոնսէ  
անցնելով, Գաղղիոյ հիւսիսային երկամուկոյն կը միանայ  
ի Վալանսիէն:

Յաւելունը նաև հետևեալ գծերը :

Կանգե՛ Գուրդե՛, Գաղղիոյ հիւսիսային երկամուղեաց միա-  
նալով ի Լիլ :

Լիեժե՛ Էսբրլին, Շարլրուայէ անցնելով և Գաղղիական  
Գրէյէ Մօպէժօժ գացող երկամուղեոյն միանալով : Այս ճամբան  
Բարիզէ Գուրնեը և Պէրլին երթալու ամենէն ուղիղ և կարճ  
գիծն է :

Պրիւսսէլէ՛ Արլօն, Նամիւրէ անցնելով և դէպ ի Լիւսեմ-  
պուրի և Մէց յառաջանալով :

Շարլրուայէ՛ Վիլրեօ Գաղղիոյ մէջ :

Պելճիոյ երկամուղեաց գիծը 3375 հազարամէդր տարածու-  
թիւն ունի :

5<sup>0</sup>—Վաճառարեւոյթիւն և Վաճառահանութիւն .

**Մճնող ապրանքն են .**

Արմօիք, երկամի բրածոյ, հիւսելի տնկեր, ուտին, կուպր,  
աղ, գաղթականաց բերք, բուրդ, ասուեղէն, ցորեան, ալիւր,  
չոր բանջար, կտրագ, արջառ, գինի, պղինձ, անողորկ և  
պատրաստեալ մորթ, վուշ, վշեայ հիւսուածք և քծան :

Պելճիոյ վաճառարեւոյթիւնը տարին 1480 միլիոն ֆռան-  
գաց է :

**Ելլող ապրանքն են .**

Հանքածուխ, երկամ, մեքենայ, մարմարիոն, հերձարար,  
վշեայ թել, ասղնեգործ, չուխա, վշեայ և բամբակեայ կտաւ,  
հայելի, ապակեղէն, ասուեղէն, խժուծ, զինկ, ողորկած և  
սղոցած քարեր, կառք, բոքի ածուխ (coke), շինութեան նիւ-  
թեր, գալլուկ, կապար, պանիր, ևն :

Տարեկան արտահանութիւնը 1500 միլիոն ֆռանգաց է :

Անցիկ ապրանաց վաճառականութիւնը 600 միլիոն ֆռան-  
գէն աւելի կը բերէ :

Պելճիոյ մէջ վաճառականութեան և ճարտարարուեստից  
մեծ ազատութիւն կայ : — Մտնող ապրանաց մաքսը ընդհան-

բապէս վերցուած է : Վաճառարեւոյթեան արդելը չկայ և  
Նախնական նիւթերը ազատ կը մտնան, բաց ի դերձանէն և  
մետարսէն : Մաքսատանց սակը (tarif) չափաւոր է :

Պելճիոյ հետ ամենէն աւելի վաճառականութիւնը բնող  
երկիրներ . — Պելճիա ամենէն աւելի ապրանք բերող տէ-  
րութիւններն են Գաղղիա, Անգլիա, Ստորին-Նահանգք, Բրու-  
սիա և Ամերիկա . և զխաւորապէս Պելճիոյ ապրանքն ընդու-  
նող երկիրներն են Գաղղիա, Անգլիա, Բրուսիա, Ստորին-Նա-  
հանգք, Զուիցերա և Ռուսաստան :

§ 6<sup>0</sup> — Գլխաւոր նաւահանգիստք .

**Նիւրբորդ .** Փոքր նաւահանգիստ մը Օսդանտայ ձախակող-  
մը դէպ ի Գաղղիա, որ բինկայի և ձողական որսի կ'ըբաղի :  
Շրջապատուած է չրշեղչներով՝ որոնց միջոցով մերձեկայ դաշ-  
տերը կրնան ոռոգուիլ :

**Օսպանս .** (20,000 բն .) Ֆլանտրիոյ մէջ, տէրութեան երկ-  
րորդ ծովային քաղաքն է : Նաւահանգիստը՝ զոր աւազակոյտք  
և կողիճք լեցուցեր էին, գրեթէ աւերած էին քաղաքն բանի  
մը տարւոյ միջոց, մեծ ջանիւր և աշխատանք ազատեցին զայն  
այս վտանգէն : Օսդանտայ ոտորկից խուժքը մեծ համարու ու-  
նին Եւրոպիոյ մէջ : Բազմութիւն նաւերու կը պատրաստուին  
այս նաւահանգստին մէջ՝ ձողական և բինկայի որսի երթա-  
լու համար : Գլխաւոր վաճառականութիւնը Անգլիոյ հետ է :  
Նաւաշինութիւն, զտարան շաքարի, գործարան լարեղինի, զի-  
հեղինի, կտաու, պազէնի, նկարէն կտաու, ասղնեգործի, սե-  
ղանի լամի, ևն : Անգլիայէ միջին Եւրոպա և Գերմանիա անց-  
նելու ամենակարճ ճամբան է :

**Պրիւս**, Ֆլամբրէն Պրուկիէ (50,000 բն .) Արևմտեան  
Ֆլանտրիոյ մայրաքաղաքը, թի և ծովահայեաց չէ բայց բաւա-  
կան բանուկ նաւահանգիստ՝ որ մինչև 400 տակառաչափով  
նաւերը կրնայ ընդունիլ, Օսդանտ և Էքրիւզ գացող չրանցից

միջոցով: Տարին 100 ի չափ նաև կ'ընդունի որոնց բեռն է գըլ-  
խաւորապէս աղ, գինի, ածուխ, շինութեան փայտ, ցորեան  
ևն: Գործարան սաղնեգործի, դերձանի, կտաւու և ասուեղինի:  
Վաճառականութիւն ցորենոյ, վշոյ, կանեփի, կնճրակի, զին-  
ւոյ և գաղթականաց նպարի: Հոս ծնած է Ժան աը Պրիւժ, որ  
իւղաներկ պատկերահանութիւնը հնարած է:

**Անվեր** կամ Անվերսա, Ֆլամերէն Անքուերբէն (123,-  
000 բն.) Համանուն գաւառին մայրաքաղաքը, Եւրոպիոյ ա-  
մենէն վաճառաշահ քաղաքներէն մէկը: Էսգո գետը հոս լայն և  
խորունկ է և աղեղնաձև սքանչելի նաւահանգիստ մը կը ձևա-  
ցընէ, որ 1000 նաւ կրնայ ընդունիլ: Վաճառարներութիւնըը,  
վաճառահանութեանէն բարձր են, և են՝ տեսակ տեսակ փայտ,  
խահուէ, բամբակ, կաշի, բուրդ, ձէթ, ծխախոտ, ևն: Գործա-  
րան շաքարի, պազէնի, սաղնեգործի, գինեւոյ ուլոյ, անուանի  
մոմոյ: Խաղախորդութիւն, բամբակի մանոց, ևն:

Նաւարկութիւնը տարին 4000 նաւու շարժմունք կը ներկա-  
յացնէ: Նաւարան: Անվերսա միշտ Ֆլամական արուեստից կեդ-  
րոնը եղած է:

**Աանս.** (130,000 բն.) Թէև ծովէն բաւական հեռու է, բայց  
դարձեալ նաւահանգստաց դասին մէջ կրնայ անցնիլ, որովհե-  
տեւ Էսգոյին միջոցով Անվերսայի, և չրանցից միջոցով Պրիւժի  
հետ հաղորդակցութիւն ունի: Այս երկու ճամբաներն ալ 400  
տակաւաչափի նաւ կրնան ընդունիլ: Չտարան շաքարի և աղի,  
բամբակի շատ մանոց կայ (§ 3): Բամբակի ճարտարարուեստը  
և վշոյ մանոցըը աշխատաւորաց բազմութիւն մը կը բաղեցնեն:  
Գործարան ծխախոտոյ. կտաւ, սաղնեգործ, գինիէ շինուածք,  
օճաւ: Այս քաղաքը Էսգոյի, Լիսի, Լիէվրըյի և Մօէրի գետա-  
խառնման տեղը կառուցուած է, 27 կղզիներէ ձևացած, որոնց-  
մէ շատը սքանչելի սալափունք ունին: Կանտ ծաղկելու վրայ է:

**Օսքուարս.** (§ 4.)

§ 9<sup>o</sup> — Ներքին գլխաւոր եւ վաճառաշահ  
ֆաշաֆֆ.

**Մալին.** (37,000 բն.) Ֆլամերէն Մեխլին, Անվերսա նա-  
հանգին մէջ Պելէիոյ երկաթուղեաց երկու կեդրոններէն մէկը  
(§ 4. 3.): Հռչակաւոր են սաղնեգործքը (Point de Malines)  
կոչուած, ընտիր են գարեջուրը և սպուխոտը (jambons): Վա-  
ճառականութեան գլխաւոր նիւթերէն մէկն են նաև փայտէ  
և խոշոր խսիրէ ածուները՝ որ շատ աման կը ծախուին: Վշոյ  
մեծ մանոցներ:

**Լուվէն.** (52,000 բն.) Պրապանդի մէջ: Առջի պայծառու-  
թիւնը չունի, բայց անուանի է գարեջրովը, շաքարի զտարա-  
նովը: Գործարան շոգամի և կնճրակի իւղոյ: Գեղեցիկ արա-  
հետով միացած է Մալինի:

**Գուերթ.** (24,000 բն.) Ֆլամերէն Գուերթի, Լիս գետոյն  
վրայ շրջակայքը կը մշակուին ընտիր վուշ, որուն տեսակը Եւ-  
րոպիոյ մէջ առաջին է: Գործարան ազնիւ կտաւու, սիամական  
կտաւու: Բամբակի մանոց: Բաղուն ցորենոյ, ծխախոտոյ և  
կնճրակի: Վաճառականութիւն կտաւու, լամի և սաղնեգործի:

**Իբը.** (15,000 բն.) Ֆլամերէն Իբերէն, Գուերթէյի հիւսի-  
սային-արևմտեան կողմը. կարևոր է վշոյ, բամբակի և բրդոյ  
ճարտարարուեստովը: Գործարան սէրժի, սաղնեգործոյ, ժա-  
պալինի, ասուեղինի: Խաղախորդութիւն. զտարան շաքարի:  
Վաճառականութիւն արջաուու, ցորենոյ, վշոյ և կանեփի:

**Գուուէ.** (32,000 բն.) Ֆլամերէն Տուուէի, Հէնօ գաւառին  
մէջ, Գաղղիոյ սահմանագլխին մօտ, Պելէիոյ ամենէն վաճառա-  
շահ քաղաքներէն մէկը: Գործարան անգղիական ոճով յախ-  
ճապակուոյ, հռչակաւոր կապերտից, գղակեղինի, բամբլողի,  
ոսկեզօծած արոյրի, թելի: Բամբակի մանոց:

**Մուս.** (28,000 բն.) Ֆլամերէն Պերկէն ի հնուց Հաննուիս  
Հէնօի մայրաքաղաքը: Հանքածխոյ հարուստ բովը, երկանա-  
քարի, կապարի հանք: Գործարան յախճապակուոյ, ապակեղինի,

բազմութիւն երկամեղինաց հալարաններու: Գործարան վշոյ, բամբակի և ասղնեգործաց: Զտարան շաքարի: Երկիրը կը բուսացնէ ցորեն, վուշ, կանեփ, պտուղ, կնճրակի եղ: Այս բաղաբը ծածկուած է շոգեշարժ մեքենաներու ծուխով, որոնք մերձակայ անխահանքը փորելու կը ծառայեն:

**Շարլըռուա.** Սամպրը գետոյն վրայ, շրջապատուած է երկամեղինաց հալարաններով և երկամի մեծ գործարաններով: Անխահանութիւնը, մետաղաբանութիւնը և ապակեղէնը 40,000 գործաւոր կ'զբաղեցնեն: Անուանի են գամերը, որոնք բոլոր Պելճիոյ սպառման կրնան բաւել: Անխահանք, գործարան ասուեղինի:

**Տիւան.** (5,000 բն.) Մէօզի մօտ. երկամի և սեւա մարմարոնի հանք: Կամսայ և կաշուեղէն:

**Նամիւր.** Ֆլամերէն Նամիւն, համանուն գաւառին մայրաքաղաքը: Նրջակայքը լի են երկամի հանքերով, որոնք բնակչաց շատը կ'զբաղեցնեն. քաղբին գործարանները այս մետաղէս հրազէն, դանակեղէն և գամ շինելու կը բանին: Գործարան զլխարկի, պողպատի: Արոյրի հալոց:

**Ըսթա.** (Լիէժ գաւառին մէջ). յանախեալ են հանքային ջրերը. ունի նաև փայտէ և թիթեղէ գեղեցիկ յօրինուածներ:

**Աւերդիէ.** (31,000 բն.) Ազնիւ չուխայի ծաղկեալ գործարաններ և վշոյ ճարտարարուեստից զլխաւոր կեղորոններէն մէկը:

**Լիէժ.** (105,000 բն.) Ֆլամերէն Լուիզ և գերմաներէն Լիւդովիս, համանուն գաւառին մայրաքաղաքը և անխային ճարտարութեանց կեղորոններէն մէկը: Քաղաքը և մօտակայ գեղորայք շատ հալոց ունին: Թափձու աշխատանաց և երկամի համար: — Ազնիւ չուխա, գամ, զինկ, ձուլածոյ պողպատ, սէրժ, ասղնեգործ, Թուլթ, շար, արքայաշուր, սև օճառ, կաշի, օղւոյ Թորանոց: — Հալոց: Ընդլայնեալ վաճառականութիւն համեմի: Մթերանոց վաճառականութեան ընդմէջ Գաղղիոյ, Գերմանիոյ և Հոլանտայի: Հռչակաւոր է Լիէժի զինարանը:

**Պրիւսսէլ** կամ Պրիւսէլ (200,000 բն.) Պելճիոյ մայրաքաղաքը, Պրապանդի մէջ, և ուժ կցորդ գեղերու բնակչօք

330,000 անձ: — Վաճառականութիւնը բանուկ է, և մեծ ճարտարարուեստ ունի: Գլխաւոր գործարաններն են ծխախոտոյ, կտառու, ասղնեգործի, սիամական կտառու, ֆլանէլի, մետաքսեղէնի, երիզի, զլխարկի, Թղթոյ, Թաւիշի, կառքի, շաքարի, ձեռնոցի, հիւսուածոց, մեքենայի, բիմիական արգասեաց: Պրիւսսէլ Թէն պղտիկ, բայց Եւրոպիոյ գեղեցիկ քաղաքներէն մէկն է: Երկամուղեաց համար տես (§ 4, 5):

§ 10. — Դրամբ, չափի եւ կշիռի.

Նոյն ընդ Գաղղիոյ:  
**Շախու սեղիւ.** — Պելճիոյ ազգային դրամատուն, Պելճիոյ դրամատուն:



Գ Լ Ո Ւ Խ Ե.

Ս Տ Ո Ր Ի Ն Ն Ա Ն Ա Ն Գ Ք

Ե Ի

Մ Ե Շ Դ Ք Օ Ո Ւ Թ Ի Ի Ն Լ Ի Ի Ք Ս Է Մ Պ Ո Ւ Բ Կ Ս Յ



Ս Տ Ո Ր Ի Ն Ն Ա Ն Ա Ն Գ Ք

Կ Ա Մ

Հ Ո Լ Ա Ն Տ Ա

Միջին լայնութեան աստիճան 52<sup>0</sup>.  
Մկւթ. 34,200 □ հզմղր. — Բն. 3,600,000 անձ. — Վճուկն.  
Նաւ 2160. — Տկուչի. 540,000:  
Խտուութիւն մարդկան առ □ հզմղր. 102 անձ:

§ 1<sup>o</sup> — Դիրք, ֆադաֆախսե եւ բնական  
բաժանմունք.

**Ասորին-Նահանգք** որ Հոլանտացոց լեզուով Նեփերլան-  
սէն կը կոչուի, և որ սովորաբար Հոլանտա կ'անուանենք  
իր զլիսաւոր գաւառաց մէկուն անուամբը, բուն ծովային վա-  
ճառաշահ և նաև գաղթականութեանց ապրանաց շտեմարանն է:  
Մահմանն է հիւսիսէն և արևմուտքէն Հիւսիսային ծովը. հա-  
րաւէն՝ Պելճիա. արևելքէն՝ Գերմանիա :

Գլխաւոր գետն են Հոննոս, Մէօզ և Էսզօ, իրենց բազմա-  
թիւ գետակցօքը:

Ամենէն լայնածաւալ ծոցը՝ Չայսթրի կամ Չուիսթրէլ ծոցն  
է, որ հարաւային ծով կը թարգմանուի: Գետարու ժամանակ  
Չայսթրի ծոցը Ֆլէլօ անուամբ լին Ժ'էր. 1282 տարւոյն  
ստակալի ողողմամբը ծոց մը ձևացաւ: Գերմանիոյ սահմանա-  
զլիսոց մօտ Տոլարդ ալ նոյնպէս 1277ի ողողմամբը ձևացած է:

Երկիրը ծովու երեսէն ցած ըլլալուն Հոլանտացիք ողողմանց  
ղէմ երկիրը պաշտպանելու համար ահագին թումբեր կանգ-  
նած են:

Հոլանտացոց մեծ աշխատանաց մէկն ալ ջրոց ցամաքե-  
ցումն է այլևայլ տեղուանք: Այս ետքի տարիներուն մէջ  
Հարլէմի մեծ լիճը ցամաքեցուցին և երկրագործութեան 27,000  
հարիւրակալ մշակելի երկիր աւելցուցին: Այս լիճը ԺՁ. դա-  
բու մեծ ողողմամբ մը ձևացած էր:

Ստորին-Նահանգք մետասան գաւառ կը բաժնուի: Հիւսի-  
սային Հոլանսա, Հարաւային Հոլանսա, Ուդրէֆդ. Զիլանս,  
Հիւսիսային Պրապանդ, Կէլք, Օվէր-Այսել, Տրէնդ, Կոնքի-  
կէն և Հոլանսական Լէմպուրկ: — Ասոնցմէ գատ կայ նաև  
Լիւսեմպուրկայ երկու մեծ դքսութիւն որուն վրայ գատօրէն  
պիտի խօսինք:

§ 2 — Երկրագործութիւն, արուեստ եւ քերֆ.

Ստորին-Նահանգաց երկրաբանութիւնը՝ նոյն աստիճանի  
տակ գտնուող եւրոպական երկիրներու հետ մի և նոյն է. սա-  
կայն ինչպէս որ ի հարկէ պէտք էր ըլլալ, ամէն երկիրներէ  
աւելի ջրային բուսոց տեսակներ ունի. և սակայն բնական  
անտառներ ամենեւին չկան, եղևնոյ, մայրոյ, կաղամախի և  
փիճիյի տնկարկութիւնք երբէք չեն յաջողիր. մինչդեռ ջրանցից  
ափունքը ընդհանրապէս ուռենուով հովանաւորած են:

Երկրագործութիւնը՝ զիւղական արուեստին մէջ ստորին  
ճիւղեր կը բռնէ. որովհետև երկիրը ի բնէ մարգագետիններու  
համար աւելի յարմար է քան թէ արմտեաց մշակութեան:  
— Գլխաւոր արմտիքն են՝ վարսակ, սեաւ ցորեան, գարի և  
հաճար, և սակաւ ինչ ցորեն հարաւային գաւառաց մէջ:

Մաղկաբանութիւնը շատ յառաջադիմած է, մանաւանդ  
Հարլէմի մէջ: Միւս նշանաւոր մշակութիւնքն են՝ գետնախնձ-  
ձոր, վուշ, կանեփ, շոլզամ, տորոն, մանանեխ, գայլուկ, ճա-  
կընդեղ և ծխախոտ: — Կերակրելէնի, կաթնեղինի և հաւեղինի  
մեծ արտահանութիւն կ'ըլլայ:

**Երկուր, անասունք.** Հոլանտայի մէջ կառածիգ երի-  
ւարաց մեծ խնամք կայ. ընտիր երիւարները հարաւային Հո-  
լանտա, Զիլանտ և Կրոնիկէն գաւառաց են: Ամենէն ընտիր  
և բազմաթիւ ոչխարները Ֆրիզ և Հարաւային Հոլանտա գաւա-  
ռաց մէջ կը դրամանուին. — Հիւսիսային Հոլանտայի ոչխարը  
անբաւ են:

Ստորին Նահանգաց աղած կարագը և պանիրները հուշակա-  
ւոր և արտահանութեան մեծ նիւթ մ'են:

**Չողածուկ, բիւկա.** Զկնորսութիւնը, մանաւանդ ձողա-  
ձկան և բիւկայի որսը Հոլանտայի հարստութեանց զլիսաւոր  
հիմն են: Հոլանտացի մը հետևեալ հոյարտ և յիշատակելի պա-  
տասխանը տուաւ Սիւլլիյի, որ կ'ըսէր, «Հերկումը և պարարտ  
արօտը տէրութեան մը երկու ստիւքն են». «Մենք», ըսաւ  
Հոլանտացին, «աւելի պիտի շահինք մեր նաւերուն ողնափայտ-

իւրը զծով հերկելով, բան թէ Գաղղիացիք իրենց երկիրը մշակելով: Եւ իրաւընէ Հոլանտացիք երկար ժամանակ խօսքերնին պահեցին: Բինկայի որսը՝ դար մը միջոց միմիայն Հոլանտացւոց ձեռքն էր: Այսօրուան օրս Անգղիացիք գերազանցած են զՀոլանտացիս այս արուեստիս մէջ: Հիմա միայն 130 Հոլանտացի նաւ բինկայի որսի կը պարապին: Սակայն ձողածկան որսը ամենէն շահաբեր ճիւղերէն մէկը մնացած է. ինչուան հիմա 14,000 նաւաստիք հիւսիսային ծովերու կը դիմեն, զէպ ի նոր-Երկրի խուծերը ձողածուկ որսալու համար:

**ԿՏԱԸ, ՆՈՒՍԱ, ԲԱԼԻՈ, ԽԸՆ.** Գործարանները մեծ գործունէութեան մէջ են և տէրութիւնը մեծ խրախոյս կուտայ անոնց: Բուն Հոլանտա և Ուղրէքը գաւառը կտաւ, չուխա, ընտիր Թաւիշ և Թուղթ կը գործեն:

Հանքածխոյ պակասութիւնը և հարձածաւալ երկրի մը վրայ հովուն ազգած ոյժը՝ կ'ստիպեն զՀոլանտացիս՝ հողմազացք գործածելու, իբր շարժիչ զօրութիւն հալոցաց մէջ, ևն:

Գործարանաց բերքերուն մէջ անուանի են Ուղրէքի և Լէյյաի ասուեղէնքը. Ուղրէքի, Հարլէմի և Ամսդերտամի մետաքսեղէնը. —Հարլէմի կտանները և՛ բամբակեղէնը. —Ամսդերտամի նրբագործ ակնեղէնքը. ազնիւ և աշխարհահամբաւ շաքար, Թուղթ, կաշի, չուան, զլխարկ, ժապաւէն, ստեղ ևն: —Հոլանտա ունի նաև տորոնի գործատուններ, զիհւոյ և այլևայլ ըմպելեաց Թորանոցներ, կղմինտրի և Թրծուն աղիւսից գործարաններ, ևն:

§ 5<sup>o</sup> — Հաղորդակցութեան միջոցք.

**ԴԵՏ ԵՒ ԶՐԱՆԳԸ.** —Ստորին-Նահանգաց մէջ ջրանցք և գետք հաղորդակցութեան աղէկ միջոցներ են: Ճանապարհորդք և ապրանք, աղէկ կառավարուած նաւերով, ամենայն դիւրութեամբ և երազութեամբ կ'երթան ու կու գան: —Հոլենդս (և իր բազմամիւ ճիւղերը) Մէօզ և Էսգօ զիւրին նաւարկութիւն մ'ունին: —Ամենէն սքանչելի ու խոր ջրանցքը Մեծ Զրանցքն է

որ Ամսդերսամ: Հէյսթր կ'երթայ. սակէ զատ անուանի է նաև Ամսդերսամ: Ռոդդերսամ գացող ջրանցքը՝ անցնելով Հարլէմ, Լէյս, Լահայ և Տէլճը քաղաքներէ: Նշանաւոր է նաև Հարլինկէնի ջրանցքը, որ այս քաղքէս Տոլլարդի ծոցը և Էմսի բերանը կը տանի Լուվարսթէն անցնելով

**Երկարուղիք.** —Ստորին-Նահանգաց երկամուղիքը դեռ նոր հաստատուած են. անուանի է Ամսդերսամ և Լահայ գացող զիծը՝ Հարլէմ անցնելով. Լահայէ՛ Ռոդդերսամ կ'երթայ. Ռոդդերսամ՝ Տորթէդ և Անվերսա, և Ռոդդերսամ Ուղրէք կ'երթայ. Ուղրէքէ՛ Արննէմ. Արննէմէ՛ Բրուսիա կ'անցնի:

§ 4 — Գլխաւոր ֆադաֆֆ եւ վաճառաշահ նաւահանգիստք.

**Ամսդերսամ.** (265,000 բն.) վաճառականական մայրաքաղաք և Թագաւորութեան առևտրոյն ամենէն մեծ նաւահանգիստը Y ծոցին հարաւային եզերք վրայ, այն տեղը ուր այս ծոցը կը միանայ Զայտէրզիյի, Ամսդէլ գետոյն բերանը:

Երեքտասաներորդ դարուն մէջ այս քաղաքը ձկնորսաց բնակարան էր, իսկ հիմա Եւրոպիոյ ամենէն վաճառաշահ քաղաքաց մէկն և նաւահանգիստը լի է միշտ օտարազգի նաւերով:

Նաւահանգիստը ընդարձակ և ապահով է և շատ տորքեր ունի. օտարաց հետ ունեցած նաւարկութեան շարժումը 5000 ծանրաբեռն նաւ է: Բոլոր աշխարհիս հետ վերաբերութիւն ունի. և աշխարհիս առաջին հաշուատեղիներէն մէկն է. օտարաց հետ զրեթէ 500 միլիոնի գործ կը տեսնէ: —Մեծ վաճառականութիւն համեմեղէնի, Թէյի, Հիւսիսոյ ցորենոյ, Գաղղիոյ զինւոյ և Սպանիոյ բրդոյ: Գործարան Թղթեղէնի, զարեջրոյ, ցքիի, ծխախոտոյ, օճառի, առագաստի լամբի և մալխոյ. ընտիր շաքարի բազմամիւ գտարան (§ 2): Մեծ ամեծ նաւարանք:

**Հարկեմ.** (30,000 բն.) — Մեծ վաճառահանութիւն կոծող-  
ըւտոր տնկերու և ծաղկի հնտերու: — Գործարան շարի և աս-  
ուեղինի: Բազմամիւ գործարան մանաւորապէս բամբակի:

**Սասաճամ կամ Ջաանճամ.** — Կի վրայ բանուկ նաւա-  
հանգիստ է. առևտուր փայտի, ցորենոյ, կիտոյ իւղի և այլևայլ  
ապրանսաց. շինութիւն նաւուց. մետաքսի և իւղի հողմավար  
աղբիք, գործարան Թղթոյ, մանանեխի և ծխախոտոյ: Անուա-  
նի է նաև Մեծն Պետրոսի յիշատակաւը, որ հոս սովորեցաւ  
նաւային արուեստը:

**Հօռն.** — Ջայէրզլիյի վրայ մեծ արտահանութիւն պանրոյ  
և կարագի:

**Կուսա.** — Մեծ արտահանութիւն իր անուանի պանրոյ և  
ծխաբաշի (բիբա) և մոմոյ: — Գործարան ծխաբաշի և մախոյ:

**Լէյս կամ Լէյսէն.** (38,000 բն.) Ստորին-Նահանգաց վշե-  
ղէնի և բամբակեղէնի ամենէն մեծ գործարաններն ունի: Ան-  
ուանի են նաև չուխաները:

**Լախայ կամ Լաիէյ.** (Հոլանտացոց լեզուով Ս. Կրաւեն-  
հակ) 90,000 բն.). — Թագաւորութեան մայրաքաղաքը և հա-  
րաւային Հոլանտայի գլխաւոր քաղաքն է, թէև աղւոր է սա-  
կայն արուեստք անշան և առևտուրը շնչին:

**Սֆիսամ** — Նշանաւոր է գինւովը, ուր շատ կը թորուի:

**Ռողղէրսամ.** (115,000 բն.) Մէօզի հիւսիսային ձիւղին  
վրայ, Ստորին-Նահանգաց երկրորդ վաճառաշան նաւահան-  
գիստն է և ղիրքը Ամսդէրտամէն աւելի յարմար է առևտրոյ:  
Քաղքին մէջէն շատ ջրանցք կ'անցնին, որոնք ամենէն խոշոր  
վաճառական նաւերն անգամ կ'ընդունին: Այս քաղաքը Ամըս-  
դէրտամի պէս գաղթականաց նպարի համար եւրոպական մե-  
ծամեծ մթերանոցներէն մէկն է: — Սուրհանդակ նաւեր կը  
միացնեն զայն Լոնտրա, Հըլլ, Լիվրբուլ, Անվերսա, Տէօնբէրք,  
Հաւր, Պորտո, Համպուրկ, Պէրկէն, Քօթէնհակ, Սդէրդին, Փե-  
ղըրպուրկ, Գատիզ, Պարսիւտնա, Մարսիլեա, Կոստանդնու-  
պօլիս և Նիւ-Յորք քաղաքաց են: — Նաւահանգատին շար-  
ժումը 5000 նաւ է. — Գինւոյ բազմամիւ թորանոցներ: — Առ-

ևւտուր տորոնի, ցորենոյ, հնտոյ, կարագի և պանրոյ: Ջտարան  
շաքարի. խաղախորդարան:

**Տորդ կամ Տուրդէն** (25,000 բն.) — Հարաւային Հոլանտայի  
մէջ Մէօզ գետին կղզիներէն մէկուն վրայ. մեծ վաճառակա-  
նութիւն բամբակեղէնի և ղերմանի:

**Միսլպուրկ և Վլիսիմկէն** (անգղիարէն Ֆլէտիմ). Եր-  
կուքն ալ Ջիլանտի մէջ Վալբերէն կղզոյն վրայ նաւահան-  
գիստներ են: Առաջինը ջրանցքի մը վրայ որ բաւական նաւեր  
կ'ընդունի. երկրորդը արևմտեան Էսօզի վրայ. բանուկ է և  
Անգղիոյ ու Տէօնբէրքի հետ յարաբերութիւններ ունի:

**Պուալը Տիււ.** — Հիւսիսային Պրապանդի մէջ՝ Տոմմէլ և  
Աա գետերու միացման տեղը՝ Հոլանտ անուանուած կտաւուց  
բազմամիւ գործատուներ ունի: — Գործարան ասուեղէնի,  
ղանակեղէնի, երկամեղէնի և ասելի:

**Ուպրէնդ.** (59,000 բն.) Ժանօթ՝ չուխայի և Թաւշոյ գործա-  
տամբքը:]

**Մապրիւնդ.** (30,000 բն.) — Մէօզի վրայ՝ Լիմպուրկայ մայ-  
րաքաղաքը: — Գործարան բամբակի, ասուեղէնի և Թղթոյ:

§ 5<sup>o</sup> — Առեւտուր.

Ստորին-Նահանգաց արտաքին վաճառականութիւնը 2 մի-  
լիար ֆուանգաց կ'ելլէ:

**Մսնոդ ապրանք.** — Մտնող ապրանսաց արժէքը հազար  
միլիոնը կ'անցնին և են՝ հանքածուխ, երկաթ, պղինձ և այլևայլ  
մետաղք (որովհետև Ստորին-Նահանգք զուրկ են ի բովուց),  
գաղթականաց ապրանք, բամբակ, վուշ, կանեփ, իւղալից  
հնտեր, բողաս, շինութեան փայտեր, մորթ, ցորեն, արմտիք,  
գինի, բրինձ, ևն:

**Միսոդ ապրանք.** — Արտահանութիւնը 900 միլիոն ֆու.ը  
կ'անցնին. և են՝ շաքար, տորոն, ըմպելիք, կարագ, տեղացի  
պանիր, արջառ, գի (արտքճ շըրօպու), իրենց գաղթականու-

Սեանց ասորանքը (ինչպէս խահուէ, շաքար, անմաքուր բամբակ, համեմ, ծխախոտ, չոր պտուղը, զորոնք կը փոխեն ցորենոյ, զործուածոց, բրդոյ, գինւոյ և ուրիշ ւերոպական ըմպելեաց հետ):

1868 տարւոյն ելլող և մտնող նաւուց թիւը 8600 էր 2,059,000 տկոչփով:

Ստորին-Նահանգք առևտրական շատ կարևոր յարաբերութիւններ ունին Բրուսիոյ և Մեծին Բրիտանիոյ հետ և յետոյ Պելճիոյ, Գաղղիոյ, Ռուսաստանի և Համպուրկայ հետ: Մալեզիոյ գաղթականութիւնք իր վաճառականութեան մեծ աղբիւրներէն մէկն է:

Բրուսիան Հոլանտայի 300 միլիոն ֆուանդաց ասորանք կը զրկէ, այսինքն՝ արմտիք, ժապաւէն, փերեզակաց ասորանք, կիտոյ ձար (fanons), մանկանէզ, երկաթ, գինի, փայտ և գունասու նիւթեր: Ստորին նահանգք ընդհակառակն կը զրկեն Բրուսիոյ 305 միլիոնի վաճառք, այսինքն խահուէ, տեսակ տեսակ դերձան, բամբակ, երկաթէ ձողեր, լեղակ, ծխախոտ, անզուտ շաքար, մորթ, կաշի ևն:

Անգղիա՝ կը զրկէ Հոլանտա 16,698,000 սղէրլին ոսկւոյ ապրանք, այսինքն՝ արջառ, բամբակ, ասուէ դերձան, բամբակեղէն, կանեփէ լարեր և բովիճայք: — Ստորին-Նահանգք կը զրկեն փոխադարձաբար անբաւ շաքար, կարագ, արջառ, պանիր ևն:

Հոլանտա՝ կ'ընդունի Պելճիայէն երկաթ, հիւսուածք, բուրդ և բրինձ, ընդ ամենը 120 միլիոնի: Եւ կը զրկէ վուշ, արմտիք, խահուէ և արջառ 132 միլիոն ֆուանդաց:

Գաղղիա՝ կը զրկէ Հոլանտա արմտիք, ասուէղէն, նորելուկ ասորանք և մետաքսեղէն 40 միլիոնի, և կ'ընդունի պղպեղ, խահուէ, քափուր և եղէզ շինելու համար շիխախայտ (rotin). ընդ ամենը գրեթէ 25 միլիոնի:

§ 6<sup>o</sup> — Ստորին-Նահանգաց Գաղղիականութիւնք.

Հոլանտացիք Ովկիանիոյ մէջ ունին Մալեզիոյ մէկ մեծ մասը և նախ և առաջ Սոնի արշիպելագոսը, որուն ամենէն մեծ

կղզիքն են Ճավա, Սումատրա, Մասուրա, Պանգա, Պայի, Լոմպոզ, Սումպաւա և Դիմոր: — Պոռնկո կղզւոյն մէկ մեծ մասը. Զէլէպեան կղզիք, Մոլուքեան կղզիք և Նոր-Կուլինայի մէկ մասը:

Ամերիկայի մէջ Հոլանդական Կուլյանա, Անդիլեան կղզեաց շատը, Քիւրասաօ, Ս. Եւսաֆէոս, ևն:

Ափրիկիոյ մէջ, Կուլինայի ափանց վրայ բանի մը տեղուանք (էլմինա, ևն):

Այս գաղթականութիւնք 19 միլիոն բնակիչ ունին: — Գաղթականութեանց Հոլանտայի հետ ունեցած առևտուրը 277 միլիոնի արժէք մը կը ներկայացնէ:

§ 7<sup>o</sup> — Դրամք, չարժիք և կշիռք.

	Դ Ր Ա Մ Ք		
Ոսկի	{ Տուգադ	=	Ֆուանդ 11,74
	{ Կիլեօմ	=	» 20,79
	{ Ռիքսդալէր, 2 1/2 Ֆիօրին	=	» 5,21
	{ 1 Ֆիօրին	=	» 2,08
Արծաթ	{ 25 Սէնդս	=	» 0,50
	{ 10 Սէնդս	=	» 0,20
	{ 5 Սէնդս	=	» 0,10

1835 տարիէն ի վեր մեղրական դրութիւն ընդունուած է: Կշոց միութիւնն է Բունդ = 1 հազարակրամ. Երկայնութեան » Էլլէ = 1 մէդր. Մակերևոյն » Պունտէր = 1 հարիւրակալ. Ընդունակութեան » Գան = 1 լիդր.

Մուտ կամ գաք = է 1 հարիւրակրամի. վաղ. = 4 հարիւրակրամի. Վիսսէ = 1 սղէր:

Ճարտարպետական միութիւնն է միլ = 1 հազարամէդր:

Փոխասուութեան ընկերութիւնք. — Ստորին-Նահանգական դրամատուն. — Ստորին-Նահանգական առևտուրը ընկերութիւն. — Ռոդդէրտամի դրամատուն:

§ 8<sup>o</sup> — Մեծ դիտարիւն Լիւսիսեմպուրիայ.

Լիւսիսեմպուրիայ Մեծ դքսութիւնը Ստորին-Նահանգաց Թագաւորին ստացուածքներէն մէկն է (առանց Թագաւորութեան մասն ըլլալու). և չեզոք վիճակ մը կը ձևացընէ Պելճիոյ, Գաղղիոյ և Բրուսիոյ մէջտեղը :

Երկիրը բարեբեր է. շատ անտառ, արջառ, խոզ, ոչխար, կանեփ և իւղալից տնկեր ունի : Որժը Մոզէլ գետոյն ափանց վրայ կը մշակուի :

Մակերևոյթը 2250 □ հազարամէր է : — Բնակիչը 200,000 — Մայրաքաղաքն է Լիւսիսեմպուրի Ալզէլ գետոյն վրայ. կրային բարի և մարմարիոնի քարահատներով, խաղախորդարաններով : — Գործարան յարգի կտաւուց. խեցեղէնի և թղձոյ :

Կիլեոմ-Լիւսիսեմպուրիայ երկամուղին՝ Լիւսիսեմպուրիէ Նամիւր և Մէց կ'երթայ : — Ուրիշ երկամուղի մը այս քաղաքս Գրէվ քաղքին կը միացընէ :

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Գ Ա Ղ Ղ Ի Ա . Կ Ա Մ . Յ Ռ Ա Ն Ս

Լայնութեան աստիճան 42<sup>o</sup> 51<sup>o</sup> : —

Միւթ . 9643 աշխարհագրական մղոն. — Բն . 36,600,000 Վճուկն. նաւ 25,500. — Տկուչի. 1,124,532. — Ել. հզր. 32,000 հզմզր. — Խտուծիւն մարդկան առ □ հզրմզր. 69 անձ :

§ 1<sup>o</sup> — Սահման, մակերեսոյք եւ բնակիչ.

Գաղղիա հիւսիսային լայնութեան 42<sup>o</sup>, 16' և 51<sup>o</sup> 5'ի, և արևելեան երկայնութեան 5<sup>o</sup> 55'ի և արևմտեան երկայնութեան 7<sup>o</sup>, 7'ի սակ կիլէայ. Գորսիգա կղզին ի բաց թողլով :

Սահմանն է Հիւսիսէն Պելճիա, Լիւսիսեմպուրի, Բրուսիա և Հոլանտեան գաւառք. Արևելքէն՝ Հոլանտեան գաւառք, Ալզաս և Լորեն, Ժիւրա, ձինեվոյայ լիճը և Վուարոն լեռինք, որ Զուիցերան կ'անջատեն, Ալպեան լեռինք և Ռոյա գետը որ զինքը Իտալիայէն կը բաժնեն. Հարաւէն Միջերկրական ծովը Պիրենեան լեռինք և Պիտասուս (Սպանիա). Արևմուտքէն՝ Ատլանտեանը. Հիւսիսային արևմտքէն՝ Մանիգա և Գալէյի անցըը որ զայն Անգղիայէն կ'անջատեն :

Բաց ի Մանիգայի բանի մը մանր կղզիներէն՝ Գաղղիա ունի նաև Ատլանտիանի մէջ Ուէսսան, Պէլ-Իլ, Նուարմուզիէ, Իէօ, Ռէ և Օլէբոն, և Միջերկրականի մէջ Լէրէն, Իէռ և Գորսիգա կղզիքը : — Մակերևոյթն է 528,576 (!) □ հզրմզր. — Բնակիչն է 36,469,000 անձ :

Գաղղիա՝ տարածութեամբ Եւրոպիոյ չորրորդ տերութիւնն է և բնակչաւ երրորդ :

Մայրաքաղաքն է Բարի կամ Բարիզ (1,800,000 բն) :

Գաղղիա բոլորովին բարեխառն գօտւոյ տակ ըլլալով, ոչ սաստիկ տաք և ոչ սաստիկ ցուրտ ունի՝ որոնք կանաչեղէնը կամ կը թմրեցընեն և կամ կը թողմեցընեն : Սակայն երկիրը ընդարձակ ըլլալով և զանազան դրիցը պատճառաւ բոլոր եւրոպական կլիմաներն ունի. այսինքն՝ հիւսիսային կողմը Անգղիոյ և Հոլանտայի մէջը, Օրլէանի և Դիւրէնի կողմերը՝ Լոմպարտիոյ սոժերը կը յիշեցընեն. արևմտեան կողմը ծովային կլիմայից հաւասարութիւնը և հարաւային կողմը Սպանիոյ և Իտալիոյ արփենին ունի :

Կլիմայից փոփոխութեան պատճառաւ հիւսիսային և հարաւային երկիրներու բոյսերը և ծառերը կը մեծնան Գաղղիա : Նարինջը՝ Միջերկրականի ափունքը կը մեծնայ : Զի՞՞նքնին ինչու ուան Ավինեօն կը հասնի. եգիպտացորենը խոտորնակի մինչև Լոդերի և Հոլանտի միացման տեղը կը բուսնի. որժը Լուառի

(!) T. Loua, sous-chef de la statistique générale de France.

բերնէն մինչև Մէօզի Գաղղիայէն ելած տեղը կը գտնուի. վերջապէս ցորեանը բոլոր Գաղղիոյ մէջ տարածուած է :

§ 2<sup>o</sup> — Բոյսք, հսակ եւ կենդանիք.

**Բոյսք.**—Արմտիքը ամենէն կարեոր և ամենէն տարածուած մշակութիւնն է. 13 միլիոն հարիւրակալ կը բռնէ և ներքին սպառման առատապէս բաւելէն յետոյ, օտար երկիրներ ալ կը շրջապահէ: Հաճարը հազուագիւտ է. եզրիպտացորենը Պիրենեանց մէջ կը գտնուի :

Գարին միայն Շամբաներ և Պրըզաներ կը մշակուի գարեջուր պատրաստելու և անասնոց սննդեան համար: —Վարսակը սակաւագիւտ է :

Գետնախնձորը արմտեաց պէս առատ է, 95 միլիոն հարիւրակալը բերք ունի և շատ գաւառաց մէջ կը մշակուի:

**Ուրբ.**—Գաղղիոյ մէջ միայն հիւսիսային գաւառները որո՞ք չեն հասցըներ, որովհետև կլիման ցուրտ և խոնաւ է և արևը առանց ջերմութեան ըլլալով խաղողները չեն եփիր:

Պատուական ընձերցողը կը ներէ Գաղղիոյ գինիներուն վրայ երկայնապէս խօսիլ. որովհետև ամէն երկիր և ամէն սեղանի վրայ անշուշտ կը գտնուի:

Գինւոյ բերքին նկատմամբ Գաղղիա վեց մեծ նահանգ կրնայ բաժնուիլ:

1. Հարաւայինը կը պարունակէ Գորսիգա, Արևելեան Պիրենեանք, Օտ, Հէրօ, իր Ֆրոնդինեանի և Լիւնէլի համբաււոր այգիներովը, Կար, Պուշ տը Ռօն, Վար, Ստորին Ալպք, Ծովային-Ալպք: Ըմպելւոյ գինիները և Ռուսիոյնի, Նարպօնի, Մոնթելիէի անուամբ ծանօթ գինիները որոնք անուանի են իրենց գոյնին համար և պիտանի օղոյ պատրաստութեան և կտրելուն համար. վասն զի զօրաւոր գինիներ են: Ասոնք հարաւային գաւառին մէջ կը հասնին :

2. Հարաւային արեւելեանը կը պարունակէ Ռօնի, Արտէշի, Վոզլիւզի գաւառները որոնց այգիները հոչակաւոր են Գոդսիւ-Ռօն անուամբ և եւրոպական համբաւ մ'ունին: Սէն-Ռէրէյ, Գոդ-Ռօդի, Շադօնէօֆ տիւ Բար, են... Լա Տրոմ, Էրմիդաֆի չպատուական գինիներովը. Լուառ, Հոդգալը-Իզէր, Սափուա, Հօդ Սափուա :

3. Արեւելեանը կը պարունակէ Էն, Ժիւրա գաւառները Արպուայի և Բօլինէիյի արտերովը. Տուպսի գաւառին և Ստորին Հուենասի գինիները որոնք Գերմանիոյ, Մօզէլի և Մէօզի և Մէօրթի գինիներուն կրնան հաւասարիլ իրենց հասարակ սակայն առատ տունկերովը. Մարնը, որուն ճերմակ և վըրփրալից գինիները, աշխարհած անօթ է Շամբաներ անուամբ, մասնաւորապէս Սիյէրի, Այ, Էրէրնէյ, Ռէյմա, Ալիզ, են. վիճակներէն կ'ելլէ: Ամէն տարի վաճառականութեան 7-8 միլիոն շիշ կը հայթայթեն: —Հօդ-Մարն և Օպ սքանչելի կարմիր գինիներ կ'ընծայեն: Իօն, Գոնէր, Ժուանէի, Օքսէր, Շապլիյ, Էրիէոյ այգիներով. Գոդ-Տօր՝ իր անման արտերովը (Ռոմանէ-Գօնդի, Գլովուօ, Շամպէրդէն, Նիւի, Պօն, Բօմար, Վօլնէյ ևն...): Սօն է Լուառը, իր Մագօնէ (Ռօմանէշ, Թօրէն, Ֆլէօրի, ևն...) գինիներովը, Պուրլոյներ գաւառը կը ձևացընեն որ Գաղղիոյ մէջ մի միայն խխոյեան Պօրտըլէի գաւառը ունի, և որուն հաւասարակշիռ չկայ համայն գետին վրայ:

4. Կեդրոնային գաւառ աւելի կարեոր քանակութեամբը բան թէ տեսակովը կը պարունակէ Լուարէ, Լուառ է Շէր, Նիէվը, Ալլի և Բիւյ-տը-Տօմ գաւառները :

5. Արեւմտեանը ունի իբրև կեդրոն Շարանդ և Ստորին-Շարանդ. ասոնք տարին 5 միլիոն հարիւրակալը գինի կը հայթայթեն որոնց մեծ մասը օղոյ պատրաստութեան սահմանուած են: Այս հոչակաւոր օղիները ծանօթ են մեզի. Գօնեագ, Ժարնաք, Անկուլէմ, Սէնդ, Լա Ռոշէլ, ևն. անուամբ: Էնտրը է-Լուառ գաւառը իր Սիվրէ և Ամպուազ, ևն կարմիր գինիները ունի: Մէն-է-Լուառ գաւառը իր Սօմիւր և Բարնէ ճերմակ գինիները :

6. Հարաւային-արեւմտաց զաւառը ունի իբրև կեղրոն Պօրթօ և Ժիրոնտ, Մէտօր (Սէն-ժիւլիէն, Մարիօ, Բօսեաք, ևն) բլուրները իրենց այնքան ճոխ և զանազան այգիներովը. մանրախիճ աւազոտ երկիրները ուր կը խայճին Կրավ (Սօղէոն, Բէսսաք) հոչակաւոր գինիները. ողողական երկիրները, որոնց բերքը Բալիւսի գինի կը կոչուի. Սէնդ-Էմիլեօն և Ֆրօնսաք քարային կողմուները, զՏորտոները Կարոնէ անշատող ալեձև դաշտերը, և իրենց Վէլն քանդղը սէօ մէր անուամբ գինիներովը, Կրավի գինիներուն կրնան հաւասարիլ: Տորտոները և իրենց Պէրժըրաք ևն գինիներովը. Լանտէր, Ստորին և Վէրին Պիրենեանք, Ժեօ՝ որ իր գինիները հոչակաւոր Արմանեաք օղտոյն պատրաստութեան կը գործածէ. Վերին-Կարոն (Թուլուզ, Միւրէ ևն). Լօ՝ Գահօր սև գինիներովը. Լօ-է-Կարոն, Դարն, Դարն-է-Կարոն, ազնիւ գինիներ կը մատակարարեն, Թէև Պորալէյիսէն ստորին են տեսակաւ<sup>(1)</sup>:

Ճակնդեղը գլխաւոր սննդարար նիւթ է և ասկից շաքար և ալքոհլ կը շինեն: Հիւսիսային գաւառաց մէջ շատ կը գտնուի: Կնճրակ (colza), շողգամ, զամըլին մասնաւորապէս հիւսիսային գաւառաց մէջ կը գտնուի:

Ազնուագոյն կանեփը Բիքարտի, Շամբաները և Անժու և ընտրելագոյն վշերը Ֆլանտր, Նորմանտի, Պրըղաները, Անժու և Կասգօները կը հասնին:

Վորելիզի և Ֆլանտրիոյ սորոնը առատ ըլլալով արտահանութեան նիւթ եղած է: Բրուսլը՝ Էօր-է-Լուառ, Լուառէ, Վօքլիւզ գաւառաց մէջ կը մշակուի:

Ծխախոտը տէրութեան ձեռքն է և Բա-տը-Գալէ, Լօ, Լօ-է-Կարոն գաւառաց և Գորսիգայի մէջ կը մշակուի:

Անտառները լի են շինութեան փայտերով, այրելի փայտերով, ոպիւիագով, ևն. ասոնց մէջ գլխաւորներն են մայրիք, ոպիիք, շագանակք, կաղամախք, Թանժրուենիք, շոճք, ևն:

(1) Բիժօնօ գաղղիացի աշխարհագետին բաժանմունքն են:

Մարգագետինները շատ են և վաճառականութեան 600 միլիոնի բերք կու տան: Կան նաև շատ արօտներ որ անասնոց ճարակման պահուած են:

**Աննգլանիք.** — Երկրագործութեան բարգաւաճումը ընտանի անասնոց թիւէն կը կախուի. որովհետև արջաւոր կը հայձայթէ մշակին՝ երկու կարևոր նիւթերը երկրի մը բարուրութեան համար. ստակ և բակոռ: Գաղղիա գրեթէ 400 էքրարին 26 եզ ունի և 390 կենդանի 1000 անձանց: Անուանի են Կասքոնեոյ, Օվէրներյի և Լանկըտորքի եզերը իրենց աշխատութեան. և Ֆլանտրիոյ և Նորմանտիոյ և Պրըղանիոյ կովերը իրենց կաթին համար, որոնք աննման են Գաղղիոյ մէջ և Անգլիոյ և Զուիցերայի ցեղերուն կրնան հաւասարիլ:

**Ոլլաւար, աւր.** — Գաղղիա գրեթէ 33 միլիոն ոչխար կը սնուցանէ, որոնք իրենց մսովը և բրդովը երկրագործական արուեստին ճոխ բերքերէն մէկը կը ձևացընեն: 110 միլիոն հզկրմ. բուրդ կուտան, բայց ասիկա Գաղղիոյ գործարանաց չբաւելով 40 միլիոն հզկրմ. ալ օտար աշխարհներէ կը գնեն: Անուանի են նաև Ռամպոլեյէյի և Մոշանի մերինոսներն որ պատուական բուրդ կուտան:

Մէկ միլիոն այծ կայ, և մասնաւորապէս Իզէր, Վար, Արտէշ լեռնային գաւառաց մէջ կը դարմանուին:

Նոզերը, որոնց միսը և ճարպը հասարակաց սննդեան մէջ կարևոր մաս մը կը կազմեն, 6 միլիոնի կը հաշուին: Բա-տը-Գալէ, Մէօզ, Անժու, Շամբաները և Սօն-է-Լուառ գաւառաց խոզերը առաջին կարգի են թէ տեսակաւ և թէ իրենց բերքերուն առատութեամբը:

**Ձի, էօ եւ ջորի.** — 3 միլիոն ձի, 400,000 էշ և 350,000 ջորի կայ. այս կենդանիներս մեծ ծառայութիւն կը մատուցանեն հերկագործութեան: — Նշանաւոր են Նորմանտիոյ, Պրըղանիոյ, Բէրշի, Ֆլանտրիոյ, Բուաղօյի, Շամբաներյի, Օռնի, Շէրի և Լիմուզէնի երկարները:

Մեղուաց դարմանը բոլոր Գաղղիոյ մէջ տարածուած է: Նորմանտիոյ, Պուրկօներյի, Պրըղաներյի մեղրամօր և Նարպոնի

և կաղինէ (Լուաուէ) յի մեղըը Գաղղիոյ երկրագործական բերոց մէջ նշանաւոր կարգ մը կը բունեն: —Շերամաբուծութիւնը և մետաքսի բերքը, որ թծենւոյ հետ անբաժանելի կապուած է, միայն հարաւային կողմերը կը յաջողի:

**Հանճային բերք.** —Քանի որ արուեստագիտութիւնը կը բարգաւաճի, այնչափ ալ հանքային բերքերու կարևորութիւնը կ'աւելնայ. արդի գիտերուն շնորհիւ հանքածուխ և երկաթը քաղաքականութեան և յառաջադիմութեան երկու մեծ միջնորդութիւն եղած են և միայն երկրագործութիւն չբաւէր ազգի մը հարստութեանը:

**Հանճածուխ.** —62 Հանքածխոյ բովը կան. զլիսաւորներն են. Լուաուի ջրշեղջիւնը (Սէնդ-էղիէն, Ռիվ տը ժիէ-Սէն Ծամօն), Հիւսիսի ջրշեղջիւնը (Անգէն, Վալանսիէն) և Սօն-է-Լուաու (Գրէօգօ, Պլանզի և Էրինաք) և շատ ուրիշներ:

Հանքածխոյ բերքը 111 միլիոն մ. կ. հազիւ կ'ելլէ, և ամենեւին չբաւէր նաւերու և գործարանաց, և պարտաւորուած է Գաղղիա՝ 10 միլիոն մ. կ. ամուխ զնելու Անգղիայէն, Պելճիայէն և Հունոսական Բրուսիայէն:

**Մրկաք.** —Երկաթի առատութեան կողմանէ Եւրոպիոյ մէջ Անգղիայէն ետքը Գաղղիան կու գայ: —244 բովը միշտ կը փորուին և 80 միլիոն մ. կ. անզուտ հանք կու տան և 35 միլիոն հրահալելի: —18,000 գործաւոր բովքերը փորելու կ'ըզբաղին: Գլխաւորներն են Շէր, Արտէն, Արիէժ, Նիէվըր, Մէօզ, Իզէր, Տորտոնեը, Օտ և Արևելեան Պիրենեանք: Միւս մետաղները՝ բնութիւնը բաւականապէս պարզած չըլլալով, Գաղղիա հարկադրուած է օտար երկիրներէ գնելու:

Կապարը հազուադիւտ է. զլիսաւոր հանքերն են՝ Բոնժիպօ, (Բիւլ տը Տօմ), Վիլլա (Լօզէր) և մասնաւորապէս Բուլլաուէն (Poullaouen) և Հիւէլկօզ (Huelgoat) (Ֆիւիսդէր): —Հազիւ 2,500,000 հզկրմ. բրածոյ կելլէ հալոցի համար, Այս հանքերէն ելած զուտ արծաթին կշիւը 5000 հզկրմը չանցնիր:

Պղնձի բերքն աննշան է: Վերին Վիէնի և Ստորին Լուաուի անագի հանքերն սպառած են:

Ձինկը Լանկըտորի մէջ կը գտնուի: Ուտի կրնանք հետեցընել թէ Գաղղիա միշտ հարկատու պիտի ըլլայ օտարաց ամէն մետաղի համար բաց ի երկաթէն, և թէ միշտ անոնցմէ պիտի խնդրէ իր արուեստից պիտանի այրելի մետաղքը, զորս իր հանքերը անբաւական չափով կը մատակարարեն:

§ 3<sup>o</sup> — Աղ եւ հանճային աղբիւրք.

727 միլիոն հզկրմ. աղ կ'ելլէ Գաղղիոյ մէջ, որուն 661 միլիոնը ծովային աղ է: —Օտի, Հէրօյի և Արևելեան-Պիրենեանց աղի խրամները զրեթէ 350 միլիոն հզկրմ. կը հայթայթեն. ևն: Աղուճակի բովքը տարուէ տարի 166 միլիոն հզկրմ. կու տան: Հանքային ջրերը ամէն կողմ կը գտնուին և բաւական շահ կը բերեն. Ստորին-Պիրենեանց, Վերին Պիրենեանց, Ալլիէ (Վիշի, Նէրի, Պուրպօն-Լարշամպօ) նահանգաց մէջ ամենէն բազմաթիւ են:

§ 4<sup>o</sup> — Քարահատք.

**Փարմարիոն.** —Գաղղիոյ մարմարիոնները թէ քանակութեամբ և թէ տեսակաւ կրնան Յունաստանիներուն հաւասարել: Ամենէն աւելի ծանօթներն են Պուլօնեըյի, Արկոնի, ժիվէյի, Լավալի, Գուզանսի, Պըըղանիոյ, Գրէյսարի, Սաւոյիոյ և Սէն-Պէայի մարմարիոնները:

**Փարգ եւ կաւ.** —Ամէն տեսակ կաւուտ հողերը կը զըտնուին Գաղղիա. սկսեալ Բաօլիցէն Սէնդ Իրիէյքս (Վերին-Վիէն) և Մանշ, ստեղծական կաւէն (argile plastique) Իոն, Ստորին-Սէն մինչև Բարիզու շրջակայից հասարակ կաւերը որ ծանօթ է terre glaise անուամբ:

Մարգը որ կրոյ բնածխատի հետ խառնեալ կաւ մ'է, և որ գաղղիարէն (marne) կը կոչուի յորդաւատ է և հերկագործութեան պատուական ծառայութիւններ կը մատուցանէ իբրև

հանքային աղբ: —Աւազն ալ հայելւոյ և բիւրեղի պատրաստութեան կը գործածուի:

Կրանիթը Վոժ, Նորմանտի և Պրըզաններ կը գտնուի: Պազալը Օվէրնէնը և Բիլէր սը Վալլիի կը կոչուի: Կուպրը՝ Օվէրնէնը և Էն: Հերձաքարը՝ Պուրկոններ:

**Կալիածոյ քար.** —Ամենէն կարևոր և աւելի բան զայլս փորձած քարահատքը կոփածոյ քարերն են: Ճոխագոյն խաւերն Միջին Գաղղիոյ են. ահա այն պատճառաւ է որ Հիւսիսային և հարաւային գաւառաց շէնքը փայտով և թրձուն աղիւսով կը կանգնուին: —Դոնէրի (Իոն), Գանի (Գալվատո) քարերը համբաւաւոր են չէ թէ միայն Գաղղիոյ մէջ հապա նաև Անդղիա և Միացեալ-Նահանգաց մէջ: —Ուազ, Էն, Մէօզ, Սէն-է-Մառն, Սէն-է-Ուազ, Սէն տեսակ տեսակ քարեր ունին որոնք մեծաւ մասամբ Բարիզու շէնքերուն կը գործածուին:

§ 5<sup>0</sup> — Ծովային եւ գետային ձկնորսութիւն.

Րինկա ձուկը Մանշի ափանց վրայ կ'որսացուի, աղկերը և թիւնիկը Ովկիանոսի ծովափանց վրայ, որժձուկը Միջերկրականի մէջ և ոտարէնները Կրանիայ (Մանշ), Գանդալ, լա Ռոշէլ (Ստորին Շարանդ) կ'որսացուին: 15,000 ձկնորսութեան փոքրիկ նաւեր կան, որոնք տարին 36-42 միլիոն ֆունկաց բերք կը բերեն:

Միայն Բարիզ տարուէ տարի 1,400,000 ֆունկաց անոյշ ջրոյ ձուկ կ'սպառէ:

§ 6<sup>0</sup> — Ճարտարարուեստ.

Պատրաստութիւն ձիրոյ. —Վար, Վոբլիւզ, Պուշտը-Ռօն, Կար, են. հարաւային գաւառաց մէջ (Էքս, են):

Պանիր. Սէն-է-Ուազ, Ժիւրա, Էն, Իզէր, Սասընած, Ալէյ-րօն, Մարօլ, Իզիւնէյ, Ստորին-Սէն են:

Գինւոյ օղի. —Երկու Շարանդները (Գօնեաք, Սէնդ, Անկուլէմ). Հէրօ (Սէլալ, Մոնբէլիէ, Պէզիէ). Արմանեաք, Մարմանտ: Սննդարար հայտեր. —Բարիզ, Գլեմօն, Մարսէյ, Նանսի, որոնք դեռ տեսակաւ Իտալիայինին չեն հաւասարիր:

Աղած ձուկ. —Ազկեր, ձողաձուկ, բինկա, ևն Նանդ, Սէղդ, Տիէր և բոլոր Գաղղիոյ ծովափունքը:

Գարեջրոյ Ղորձարան. —Ֆլանտրը, Բարիզ, Լիոն ևն:

Թորակ. —Սօմ, Բա-տը-Գալէ, որոնք եթէ գինին անքաւական ըլլայ, զրեթէ մէկ միլիոն էրզուիդը կը հասցընեն ցորենոյ, ճակնդեղի և զեանախնձորոյ ալքոհիլն հանելով:

Գորձարան ըմպելոյ. —Պօրտօ իր անխոնի ցրին (anisette) ունի, Մարսիլեան իր ապսէնդը կամ օշինդրը. Կրենուզը իր մրգօղին (ratafia), Տիժոն իր հաղարջօղին (cassis.) Բարիզ և Լիոն զամէնքը կը բովանդակեն:

Շաբարի զարան. —Լիլ. Բարիզ, Նանդ, Հաւր, Պօրտօ, Բա-տը-Գալէ. —Սօմ, Էն, Ուազ, Ռուան, Մարսէյ, ևն:

Ատուեղէն. —Լիլ, Ռուպէ, Դուրբուան. Ռէյմս, Ռէղէլ, Ամիէն, Բարիզ, ևն:

Ձուխա. —Սէտան. Էլպէօֆ. Լուվիէ. Սպլովիյ. Լիզիէօ. Օրլէան. Լիմոժ. Շաղոու. Մազամէ, ևն:

Մանուածք եւ բամբակեայ հիւսուածք. —Լիլ. Ռուպէ. Ամիէն. Սէն-Գանդէն, Ռուան. Ռօան (Լուառ):

Վեղէն եւ քրան. —Լիլ. Ռուպէ. Արմանդիէր. Լօրէն. Գամպրէ. Վալանսիէն, Պարօմ, Շոլէ (Մէն-է-Լուառ):

Առազասի լաք եւ չուան: —Բոլոր ծովափանց վրայ, բայց մանաւանդ Տէօնբէրք, Հաւր և Նանդ:

Մեհախեղէն. —Լիոն. Բարիզ. Թուր, Նիմ. Վիկան. Սէն-Շամն. Սէնդ-Էղիէն:

Ասղեգործ. —Բիւյ. Դանդալ. Բիւյ տը Տօմ. Լուառ. Վերին Լուառ Պայեէօ և Գան. Ալանսօն. Վալանսիէն. Շանդիէի Միլլըրըր (Վոժ) Լիլ. Արրա.

Նարոսաներկութիւն. —Լիոն. Լիլ. Սէն-Գանդէն. Ռուան. Բարիզ:

Խաղախորդութիւն եւ բոկեղէն. — Բարիզ. Ռուան. Թուր. Նանդ. Վալանսիէն. Ռուէ. Օրլէան. Շաղոռընօ. Մարսէյ:

Կօսկեղէն. — Բարիզ. Մարսէյ, Նանդ. Լիմոժ. Պօրսօ. Թուլուզ:

Չեննոց. — Կրընօպլլը. Բարիզ. Շօմօն. Վանսօմ. Լիւնը-ձիյ. Մարսէյ:

Օնառ. Մարսէյ. Սէղդ... ևն:

Ճրագու. — Բարիզ. .... ևն:

Մոմ. — Բարիզ, Մոնրէլիէ, Մարսէյ, Լիոն... Ռուպէ ևն: Անուախոսութիւնք. — Բարիզ. Լիոն. Մոնրէլիէ. Մարսէյ ևն:

Թուղք. — Անկուլէմ. Անսօնէյ. Էսսօն. Պըզանսօն. Ամիէն. Գալվասօ. Վոժ. ևն:

Գունաւոր բուղք. — Բարիզ. ևն:

Երկաթեղէն. — Սէնդ-Էղիէն. Թուլուզ. Պոզուր. ևն:

Բեւեռեղէն. — Վալանսիէն, Շարլըվիյ. Լէկլ. Ռիւկլ:

Ձէնք. — Սէնդ-Էղիէն. Շաղէլլըրօ, Բարիզ. Պուրժ. Թիւլ. Անկուլէմ:

Գանակեղէն. — Թիէր. Շաղէլլըրօ. Նօժան. Լանկըր. Գան. Բարիզ:

Մեքենայ. — Քրէօզէ. Ուլլէն (Ռոն). Բարիզ. Էնտրէ. (Նանդի մօտ) Միւլհուզ. Մարսիլէա. Հաւր. ևն:

Արուեստական պղնձան կարասեաց, եւ նմանողութիւնք պղնձանի. — Բարիզ:

Գոհարեղէն եւ ոսկեղէն. — Բարիզ, Մարսէյ, Լիոն, Թուլուզ, Պօրսօ:

Ժամացոյց. — Բարիզ, Պօլէ. Մօնպէլիար. Պըզանսօն. Ֆօսինէի:

Խեցեղէն. — Բարիզ. Նըվէր. Թուր. Լիւնէվիյ. Պօրսօ. Շուազի (Սէն), Գրէյ (Ուազ). Սարրըկըմին (Մօզէլ):

Յալանապակ. — Սէվր. Լիմօժ. Վիէրզօն. Պայէօ. Շամբրու:

Ապակեղէն. — Սէն-Կօպէն (հայեղի), Շօնի. Մոպէժօժ. Ռիվառ ժիէ. Բարիզ, Պազգարա:

Ոպնիագեղէն. — Բարիզ. Լիօն. Պօրսօ. Մուլէն, Դարպ:— Կառֆ. — Բարիզ, Թուլուզ, Լիօն, Պօրսօ, Մարսէյ. Պուլօն-էր-Սիւր-Մէր:

Նաւաւիմութիւն. — Պրէսդ. Շէրպուր. Լօրիան. Ռօշֆօր. Թուլօն. ամենէն աւելի հետեւալ բաղաբաց մէջ կը շինուի: Նանդ, Սէն-Նազէր, Պօրսօ, Հաւր, Մարսէյ, Թուլօն:

§ 7<sup>o</sup> — Հաղորդակցութեան միջոցներ.

**1. Գեօգր. Գաղղիոյ չորս գլխաւոր գետերն են.** Սէն, Լուառ, Կարօն, Ռօն կամ Հոռոյանոս. Կան նաև ուրիշ շատ երկրորդական գետեր:

Սէն գետը միայն Նօժան-Սիւր-Սէնէն մինչև Հաւր նաւելի է: Լուառը միայն 782 հզմղր. միջոց նաւարկելի է, որովհետև առանց հունիէ շարժուն աւազակուտով լի և ամառը կը ցամբի: Կարօն միայն 318 հզմղր. նաւելի է:

Ռօն՝ Միջերկրական կը թափի և 452 հզմղր. տեղ նաւելի է: Երկրորդական գետերն են՝ Մօզէլ, Շարանդ, Օնն, Վիլր, Սօմ, ևն:

**2. Ջրանցք.** — Բազմաթիւ են Գաղղիոյ մէջ. նշանաւորնեքնն ոժանք են՝

Պուրիօներ ջրանցքը, որ Սոնի վրայ Սեն-ժան քը Լօնէն կ'ելլէ և կը լմնայ ի լա Ռօօ-սիւր-Իօն:

Գանալ սիւ Միսի. Թուլուզէ մինչև Սէղդ: Եւ ուրիշ բազումք: Գաղղիոյ ճամբաները խիստ շատ են և այս դիւրութեան պատճառաւ փոխադրութեանց գինը աժան է:

**3. Երկաթուղիք.** — Գաղղիոյ երկաթուղիքը 1871 տարւոյն 16,370 հազարամեղր երկայնք ունէին:

Բարիզ գաղղիական երկաթուղեաց կեդրոնն է: Ասկից ուժգիծ կը ճառագայթեն բոլոր Գաղղիոյ վրայ:

4. Հիւսիսայ Երկաթուղիք. Բարիզէն բաժնուելով կ'ուղղի դէպ ի Դրէյ, և ճամբան երկու հիւղի կը բաժնուի, մէկն ուղ-

դակի և միւսը մեծ շրջան մը գծելով Բոնդուազի արեւմտա-կողմը. հոն դարձեալ կը ճղանայ դէպ ի Ռուան՝ Ժիգորէ անցնելով. Երբ Գրէյ հասնի՝ անկից դէպ ի Ամիէն, Արրա և Տուէ կ'երթայ. հոն վերստին երկու ճիւղ կը բաժնուի, մէկը դէպ ի Վալանսիէն՝ ուսկից Պելճիա կը մտնէ և Մօնս, Պրիւստէլ և Մալին բաղաբաց կը հանդպի: Միւս ճիւղը դէպ ի Լիլ կ'ուղղի, այն ալ Պելճիա կը մտնէ, Կանսէ կ'անցնի և Մալին կը հասնի, ուսկից նշանաւոր գիծ մը Լիլէժէ անցնելով Գերմանիոյ երկաթուղեաց կը միանայ Էսլաւաբէլ եւ Գօլօնըն հանդպելով. Ամիէնէ ուրիշ գիծ մ'ալ կը բաժնուի դէպ ի Ապրիլի և Պուլօնընը ուր կը վերջանայ անգղիական Ֆօլքսըըն նաւահանգըստին յանդիման:

Լիլ քաղքէն դէպ ի արեւմուտք գիծ մը կ'երթայ ի Հազըպուս. հոն գիծը երկու կը բաժնուի. մէկը դէպ ի Տօնիէր, Սէնդ-Օմէր և Գալլ՝ անգղիական Տուվր նաւահանգստին յանդիման. ուրիշ գիծ մ'ալ Տօնիէրէ՝ Գալլ և Գալլէյէ Պուլօնըն կ'երթայ: Ուրիշ շատ երկաթուղիք ալ դէպ ի Պելճիա և Հիւսիսային քաղաքաց կ'երթան:

2. Ռուանի և Հաւրի երկաթուղին. Տիէբ և Ֆէլան քաղաքաց վրայ զատ զատ գծերով:

Բարիզու մօտ այս երկաթուղւոյն մասն ըլլալով՝ գիծ մը կ'երթայ Սէն-ժիւրմէն և ուրիշ մը Վէրսայ և ուրիշ մասը Արժանդէոյ: — Մասնաւոր ճիւղ մ'ալ կ'երթայ դէպ ի Գան, Էվրէօ և Լիզիէօ քաղաքներէ անցնելով և կը ձգի մինչև Շէրպուր: Բարիզէ Ռուան և Բարիզէ Գան գացող գիծերը միկմէկու միացած են Էլպիտօժէ անցնող երկաթուղւոյն միջոցով:

3. Վէրսայի երկաթուղին կ'սկսի Բարիզու մէջ՝ Սէն գետոյն ձախ ախանց վրայ: Վէրսայէն այս գիծը կ'երթայ Շարդր՝ անկից Ման, Լաւալ, Ռէն (Rennes) և Սէն Պրիէօֆ և մինչև Պրէսդ: — Ճիւղ մը Ռէն քաղաքը Ռոսօնի կը միացընէ ուր այս գիծը կը միանայ Նանդէ՝ Վան, Լօրիան, Բէմբէր և Շադօլէն գացող երկաթուղւոյն. կան նաև ուրիշ երկաթուղիք որ կ'երթան Սէն-Մալօ, Մայլէն, Ֆուժէր և Ալանսօն:

Ման քաղքին մօտերէն քանի մը ճիւղեր ալ դէպ ի Անժէ և Թուր կ'ուղղին. — Սէն-Սիւր քաղքէն ճիւղ մը կը բաժնուի դէպ ի Տրէօ, Լէկլը, Արժանդօն, Ֆիէր, Վիւր և Կրանվիլ, և կը միանայ Բարիզէ Պրէսդ և Բարիզէ Շէրպուր գացող երկաթուղեաց: (Այս երկաթուղին և նախընթացը (2).) Արեւմտեան երկաթուղիէ ըստող ընդհանուր ցանցակերպը կը ձևացընեն):

4. Օրսէյի և Լիմուրի երկաթուղին. Սոյի վրայ ճիւղով մը: Այս գիծը ծաւալած չէ:

5. Օրլէանի երկաթուղին կը շարունակուի մէկ կողմանէ Թուրի և Պորսոյի երկաթուղւով, և միւս կողմանէ Վիէրզօնի երկաթուղւով. Նախ և առաջ Սէնի ձորամէջը կը բռնէ, Օրլէանի Լեոնարաշտակքը կը կտրէ և կը շրջի մէկ կողմանէ Լուարի և Վիէնի ձորամէջը և միւս կողմանէ Շէրի ձորամէջը: — Ճիւղ մը կը բաժնուի Օրլէանի երկաթուղիէն, և կ'երթայ Բօրպէյ, ուսկից դէպ ի Մօնդարժի կը ձգի: Օրլէանէ Պօրսօ գացող գիծը կ'անցնի Պուա, Թուր, Բուաղիէ և Անկուլէմ քաղաքներէ: — Բարիզէ Պօրսօ՝ աւելի ուղից ճամբով մը կըրնայ երթըցուիլ, այս շաւիղը Բարիզէ Օրլէան գացող երկաթուղիէն կը բաժնուի. ի Պրոլիինէի, Վանսօմէ անցնելով և կ'երթայ մինչև Մէդրէյ (Թուրի մօտ):

Թուրէ գիծ մը դէպ ի Նանդ կ'երթայ, Անժէ և Շալօն քաղաքներէն անցնելով և կը ձգի մինչև Սէն-Նազէր. Սալլընէ կ'երթայ, ուսկից երկաթուղի մը կ'ըլլայ դէպ ի Ռոսօն, Վան, Լօրիան, Բէմբէր. Շադօլէն և Լանսէրնօ. Բօնդիվի քաղքին վրայ ճիւղով մը: Ուրիշ երկաթուղիք ալ կը հաղորդակցեն Շալօնը՝ Շօլէ, Պրքուէր և Նիօր քաղաքաց, Նանդը՝ Լա Ռօս-սիւր-Իօնի և Սապլը ս'Օլօնի: — Քանի մը ճիւղեր ալ Թուրէ և Անժէյէ՝ Ման կ'երթան: Բուաղիէյի մօտ ճիւղ մը կը բաժնուի դէպ ի Նիօր, և անկից Լա Ռօսէլ և Ռօսօր:

Օրլէանէ Վիէրզօն գացող երկաթուղին այս յետին քաղքին մէջ երկու ճիւղ կը բաժնուի. մէկը կ'երթայ Պուրժ, Մուլէն, Գլէրմօն, Իսուար և Պրիուս և ընդհանրապէս Ալլիէ ձորամէջէն չբաժնուիր:

Վիերգոնէ ելլող երկրորդ գիծն ալ կ'երթայ Շաղոռու և կը ձգի մինչև Լիմոս և Լիմուզէնի լերինքը կտրելով Բերիկէտ կը հասնի. այս քաղաքը մէկ կողմէ միացած է Պորտոյի երկամուշուռոյն, միւս կողմանէ Աժէնի և երրորդաբար ալ Պրիվ, Ֆիժաֆ, Ռօսեզ, Վիլլերանց-սԱլէյրօն, Ալպի և Օրիլեաֆ քաղաքաց :

Հարաւային ցանցակերպ կոչուող երկամուշուռաց գծերէն մէկը Պորտոյէ ելլելով Պայօն կ'երթայ և արևմտեան Պիրենեանց ստորոտքէն անցնելով Սպանիա կը մտնէ. այս գիծը ճիւղեր ունի Արխաօնի և Մօն-սը-Մարսանի վրայ, ուր տեղ դարձեալ այս գիծը կը շարունակի դէպ ի Դարս և Պաննէ-սը Պիկօն և կը վերջանայ Բօ :

Ուրիշ երկամուշուղի մ'ալ Սէվէն լերինքը կտրելով Կարօնի և Գանալ տիւ Միտիյի շաւղացը կը նետակի, կը միացնէ Պորսօն՝ Սէրդի, Աժէն, Մօնդօպուն և Թուլուզ քաղաքներէ անցնելով :

Մօնդօպունէ և Թուլուզէ այլևայլ ճիւղեր կը բաժնուին դէպ ի Վիլլերանց սԱլէյրօն, Ֆիժաֆ, Պրիվ, Ալպի, Ռօսեզ և Օրիլեաֆ : Աժէն միացած է Բերիկէտի ինչպէս որ ըսինք. Թուլուզէ ճիւղ մը կ'եկէ դէպ ի Մօնդրքօ և Դարս :

Ճ. Բարիզէ Լիօն երկաքուղին, Պուրկօնէրլէ անցնելով, կ'երթայ Մըլէօն, Մօրէ (ուսկից ճիւղ մը կը բաժնուի դէպ ի Մօնդարժի և Նըվէր), Մօնդրօ (ուսկից ճիւղ մը կը բաժնուի Դրուայի վրայ), Սանս, Ժուաննի (որուն շրջակայքէն ճիւղ մը կը բաժնուի դէպ ի Օֆուէր և Գլամսի), Դօնէր, Տիժօն, Շալօն-Սիւր-Սօն, Մաֆօն և Վիլլերանց :

Այս գիծը նախևառաջ Սէնի, Ետոյ Իօնի, Արմանսօնի և Սօնի դաշտավայրերէն կ'անցնի :

Վիլ-Նէտլ-Սէն-Ժօրժէն գիծ մը Ժիլվիզի կ'իջնայ և հոն Օրլէանի երկամուշուղոյն միանալով Քօրպէլ և Մօնդարժի կ'երթայ : Տիժօնէ՝ Օֆսօն, Տօլ, Պզանսօն, Պէլժօր և Միւլիուզ գացող գիծը Բարիզէ-Լիօն երկամուշուղիէն կը բաժնուի : Տօլէ՝ գիծ մը կ'երթայ դէպ ի Լօն-ըր-Սօնիէ և Պուր. Սալէնի և Բօնդարլիէյի վրայ ճիւղով, որոնք Ժիւրա լերինքը անցնելով Նէօսաղէլ (Ձուիցերա) կ'երթան :

Ճեմօլա միացած է Լիօնի մի և նոյն երկամուշուղոյն՝ երկու ճիւղ բաժնուած գծով մը. մէկը Մաֆօնէ կ'եկէ և Պուրէ կ'անցնի. միւսը Լիօնէ կ'եկէ և Վերին Հոողանոսը կը շրջէ : Ճենօլայի այս գիծը՝ Բարիզէ Լիօն երկամուշուղին կը միացնէ Վիիդօր Էմմանուէլ երկամուշուղոյն : — Այս վերջի երկամուշուղին Մալօյայէն, Էֆա-լէ-Պեն, Շամպէրի և Սէնժան-սը-Մօրիէն քաղաքներէն անցնելով դէպ ի Սլպեանց գօտին կ'ուղղի, և Մօն-Գապօր և Մօն-Սընի լերանց տակէն փորուած ընդարձակ դիւնէլին միջոցով Գաղղիա կը մտնէ : — Ուրիշ գիծ մ'ալ Լիօնը՝ Սէնդ-Էդիէնի և Սէնդ-Էդիէնը Ռօանի կը միացնէ : — Ռօանէ այս գիծը կ'ուղղի դէպ ի Մուլէն, Նըվէր և Բարիզ. դարձեալ Ռօանէ ուրիշ ճիւղ մը կ'ուղղի դէպ ի Դարս և Բարիզէ Լիօն գացող երկամուշուղոյն կը միանայ : — Նըվէր՝ Մուլէն և Ռօան քաղաքներէն անցնելով՝ Լիօնէ Բարիզ գացող երկամուշուղին Պուրպօնէ կը կոչուի և մեծու մասամբ Լուառի ջրշէղջին մէջ կը մնայ :

Լիօնէ Միջերկական երկաքուղին՝ Բարիզէ Լիօն երկամուշուղոյն շարունակուածիւնն է, Հոողանոսը կ'եզերէ, Վալանս, Ալիմէօն Դարսաֆօն և Արլը մինչև Մարսիլիա կ'երթայ : Այնպէս որ երկայնաշաւիղ և փառաւոր երկամուշուղի մը բոլոր Գաղղիան կը կտրէ Հիւսիսային ծովէն մինչև Միջերկրական : — Լիօնէ. Սէն-Ռամպէրէ և Վալանսէ մէյմէկ ճիւղ կ'ուղղին դէպ ի Կրնօպլը. ուրիշ մը դէպ ի Բրիվա, չորրորդ մը Դարբանդրա, հինգերորդ մը Էֆա և վեցերորդ մը Թուլօն, ուսկից Նիս կ'երթայ :

Դարսաֆօնէ ճիւղ մը կը բաժնուի Պօֆէր և Նիմ կ'երթայ. Նիմէ երկու գիծ կ'եկեն, մէկը դէպ ի Ալէ, Լարվաս, Վիլլէօր և միւսը դէպ ի Մօնքէլիէ և Սէրդ :

Հարաւայ երկաքուղիք. — Սէրդը Պորտոյի միացնող գիծը՝ Ակս, Պլիէ, Նարպօն, Դարբասօն և Թուլուզ քաղաքներէ կ'անցնի նն : — Հարաւայ երկամուշուղի կը բովանդակեն նաև Պորտոյէ Պայօն գացող երկամուշուղին և զայլս. (Տես Օրլէանի երկամուշուղին 5.)

7. Սղրագլուրի կամ Արեւելեան Երկաթուղին կ'անցնի Մօ, Շալոն-սիւր-Մարն, Պար-լը-Տիւֆ, Նանսի, Լիւնէվիլ, Սաւրը-պուր և Սալէրն քաղաքներէ, մեծաւ մասամբ Մարնի շրշեղջը կը շրջէ, արևմտեան Արկոն, արևելեան Արկոն և հիւսիսային Վօփ լեռանց գոտիները կը կտրէ : Երբ Էքերնէյ հասնի՝ հիւղ մը կը ձգէ Ռեմս քաղաքին վրայ . Ռեմսէ ուրիշ գիծ մը Մէգիէր կ'երթայ ուր երկու հիւղ կը բաժնուի . մէկը զէպ Ի Ժիվէ, միւսը Մէսան, Մօնմէշի և Թիօնվիլ : Ռեմսէ դարձեալ երկաթուղի մը կ'երթայ Շալոն-սիւր-Մարն, Վէրսէօնի վրայ հիւղով մը : Նանսիի մօտակայքէն գիծ մը կ'երթայ Մէց և Ֆօրպալիս և հռենոսական Պաւլերայի և Բրուսիոյ երկաթուղեաց կը միանայ . Մէցէ՝ գիծ մը կը բաժնուի և Թիօնվիլ և Լիւսնէմպուրկ կ'երթայ :

Սղրագլուրէ երկաթուղի մը կ'երթայ Մայանս, Վայլէմպուրկի շրջակայքէն անցնելով ուրիշ հիւղ մը Պալ (Ձուհցերա) Գօլմարէ և Միւլհուզէ անցնելով :

Վերջապէս երկաթուղի մը Սղրագլուրը Բէլ քաղաքին կը միացնէ Լոսնոսի միւս ափանց վրայ :

Միւլհուզ ուղղակի ճամբով մը կապուած է Բարիզի հետ . այս երկաթուղին Սղրագլուրի երկաթուղիէն կը գատուի Բարիզու մօտերը և Նօման-Սիւր-սէն, Դրուա, Ծօսօն, Լանկըր, Վըզուլ և Պէլփօր քաղաքաց կ'երթայ : Այս երկաթուղին հիւղ մը կը ձգէ Գուլմիէ, Բրօվէն, Պար-սիւր-Սէն և Շաղիյօն-սիւր-Սէն քաղաքաց վրայ : Միւլհուզ հաղորդակցութիւն ունի նաև Տիօնի հետ՝ երկաթուղով մը որ Պալանսօն, Տօլ և Օֆսօն քաղաքներէ կ'անցնի :

Այս վերջին երկաթուղին միացած է Բարիզէ՝ Միւլհուզ գացող երկաթուղուոյն, Օֆսօնէ Կրէյ՝ և Կրէյէ Վըզուլ գացող երկաթուղուոյն միջոցով : Հակիրճ, երկու խոտորնակի զծեր, մէկը Ժօանվիյ և միւսը Էրիմալ քաղաքէն անցնելով Բարիզէ Միւլհուզ և Բարիզէ Սղրագլուր գացող երկաթուղիքը իրարու կը կապեն :

8. Վէնսէնի, Սէն-Մօրի և Լավարէնի երկաթուղին, որուն

ընթացքը կարճատև է : Պէտք է յաւելուլ նաև Բարիզի Գօսի երկաթուղին, որ այս քաղաքէն Էլլոլ ամէն երկաթուղիքը իրարու կը միացնէ :

### § 8<sup>0</sup>-Վաճառաւորութիւն եւ վաճառահանութիւն .

Մտնող վաճառքն են՝ բամբակ, մետաքս, ասր, հասարակ փայտ, մորթ և մուշտակ, պղինձ, երկաթ և ձուլածոյ, զինկ, անագ, կապար, հանքածուխ, վուշ, օտար աշխարհաց և գաղթականութեանց շաքար, խահուէ, սննդարար հայսք Իտալիոյ, ողջ անասուններ, եղ, իւլալից հնտեր, զոնատու նիւթեր, քրքում, զոնաւոր փայտ, մոխիր և բողաս, պարարտութիւն, ծծումբ, փետուր ևն : Յետոյ կուզան Արևելից, Իտալիոյ և Սպանիոյ ձէթը, Ճիսիստոյ տերև . միս . պտուղ . պանիր և կարագ . ծովու ձուկ, բրինձ, քարաօ և ոգելից ըմպելիք : Բամբակէ, բրդէ և վշէ թելեր, բամբակեղէն, ասուեղէն, մետաքսեղէն : Պատրաստ ներկ (լեղակ, որդան կարմիր) . քիմիական արգասիք, մեքենայ, մետաղէ շինուածք :

1869 վաճառաւորութիւնը 3153 միլիոն ֆրանկաց կ'էլլէր, 1870ինը 2781 միլիոն էր :

Ելլող ապրանքն են՝ մետաքս, բամբակ, օճառ, նորելուկ, ապրանք, բուրգ, փայտ, մուշտակ, փետուր, կանեփ և վուշ, ճարպ, շինութեան նիւթեր, գինի և օղի, զտած շաքար, հաւկիթ, կարագ և պանիր, պտուղ և հունտ, ողջ անասուն, ալիւրեւոր արմտիք, ցորեն, մետաքսեղէն, ասուեղէն, թուղթ, յախճապակի, քիմիական արգասիք, անուշեղէն, քրքում, ձէթ, զործած մորթ, ընտիր կաշի և բոկեղէն, Բարիզու ապրանք, ձի, շորի : — Բամբակեղէն, զգեստեղէն, հանդերձանք կանանց, լաթեղէն, ևն . պատրաստ ներկ և գոյն, տորոն, մետաղէ շինուածք, զէնք, դանակեղէն, մեքենայ, թել, կապերտ, ապակեղէն, ոսկեղէն, զոնարեղէն, ժամացոյց փառաւոր կան կարասիք, կառք, ոպնիստեղէն, պլինձանէ զործուածք, անուշանոտ եղեր, ջրեր ևն . ևն :

1869ի վաճառահանութիւնը 3075 միլիոն ֆռ. էր. 1870ինը 2860 էր պատերազմին պատճառաւ : Ասկից կը հասկընանք թէ 1870-71 պատերազմը որչափ վնաս տուաւ Գաղղիոյ :

Այն ժամանակէն ի վեր տէրութիւնը նախնական նիւթոց մտից վրայ վիճակագրական տուրք մը կ'առնու որ է 0,10 սանդիմ՝ պարունակող միութեանց վրայ, այսինքն սնտուկ, պարկ, տակառ, զլուխ :

§ 9<sup>o</sup> — Գլխաւոր նաւահանկիւսք.

**Տէօնքերք.** — (32,000 բն.) Հիւսիսային ծովուն վրայ. Գաղղիոյ զլխաւոր վաճառատեղիներէն մէկը: —Վուշ, կանեփ, իւզալից հնտեր, բուրդ, արմտիք, մետաղ, մետաքսեղէն, շաքար, ողելից նիւթեր և տորոն աղէկ կը վաճառուի հոս : Զըկնորսութեան համար առաջին կարգի նաւահանգիստ է: Լարեղէնի, ապակեղէնի, օճառի և աղի գործարաններ ունի:

**Գալէ.** — (13,000 բն.) Անգղիացի նաւերու երթևեկութեամբ Տուվրի հետ միացած է. ձկնորսութիւն ձողաձկան և բրինկայի. գործարան օճառի, գոսկի և թիւլի. շտեմարան Հոլանտայի գիհույ : Գալէ՝ Գաղղիայէն Անգղիա անցնելու ամենէն մօտ նաւահանգիստն է:

**Պուլօներ.** — (37,500 բն.) Գործարան շաքարի և կաշեգործութեան, ապակեղէնի, օճառի, բրդէ կերպասու: Վաճառականութիւն օղույ, գինույ, նուրբ ըմպելեաց, թէյի, մետաքսեղէնի, աղնեգործի և նուրբ կերպասու :

**Տիւք.** — (24,000 բն.) Մասնաւորապէս անուանի է աղածքով և փղոսկրեայ բանուածքովը: Բրինկայի, ձողաձկան և թիւլնիկի որս : Գործարան ասղնեգործոյ, լարեղէնի և ծխաբարձի. շաքարի գտարան: Յաճախ յարաբերութիւններ ունի Անգղիոյ, Ռուսաստանի, Սկանտինաւիոյ և նաև Սպանիոյ հետ:

**Էլպլեօճ.** (22,000) Սէն գետին վրայ համաբաւար և ազնիւ չուխայի գործարաններով :

**Յէֆան.** — (14,000 բն.) Զինորսութեան զլխաւոր նաւահանգիստներէն մին՝ որ 60,000 տկուչի. շինութեան փայտ կ'ընդունի Պալղիկէն. գաղթականաց նպարի շտեմարան է. Կիւպէր ըստած կերպասուց գործարան և բամբակի մանոց ունի :

**Լը Հաւր** կամ պարգապէս Հաւր. — (75,000 բն. հանդերձ Ինկուվիյի), Սէն գետին բերանը Բարիզու նաւահանգիստն է. տորքեր ունի և Մարսիլեայէն ետքը առաջնութեան կարգաւ ինքն կու գայ : Օտարաց հետ ունեցած վաճառականութիւնը 1202 միլիոն ֆռանցաց կ'ելլէ, և առաջին է Գաղղիոյ մէջ բամբակի, խահուէի, շաքարի, բարաօի, ոպնիւազի, զոնատու փայտերու, անողորկ մորթերու, տնկային և հանքային եղերու, ճարպի և ծխախոտոյ վաճառքին համար:

Հարէ գրեթէ 5 հզմդր. հետու են Հէփի երկու մեծ փարոսները, որ քանի մը տարիէ ի վեր ելեքտրական լուսով լուսաւորուած են :

Ստէպ ստէպ յարաբերութիւններ ունի Տէօնքերքի՝ ինչպէս նաև Պօրտոյի հետ Գաղղիոյ մէջ՝ և Անվերսա, Համպուրկ, Լիսպոնա, Գատիգ, Ճիպրալդար, Մալակա, Նիւ-Նորգ, Ռոդդէրտամ, մասնաւորապէս Սաուդէմբոլըն, Լոնտրա, Շըլլ, Տըպլին, Կլասիօ, Լիվրբուլ, Մալթա, Կոստանդնուպօլիս, Օտեսա, Քորեննակ, Փեղրպուրկ քաղաքաց հետ: —Եւ նաև Անդիլեան կղզեաց, Մելիթոյի, Պրագիլի, Բերուլի, Հիւսիսային Ամբրիկայի և Արևելեան Հնդկաց հետ : Այս քաղքիս մէջ նաւարան մը, խեցեղէնի, ծխախոտոյ, երկամեղէնի գործարաններ կան :

**Հօնփէօր և Պան՝** Անգղիոյ և Պալղիկի հետ յարաբերութիւններ ունի. յետինին նաւային շարժումը 142,000 տկուչիի կ'ելլէ : —Ունի նաև դանակեղէն և ասղնեգործ :

**Երպուր.** — (47,000 բն.) Մանշի վրայ առաջին պատեքազմական նաւահանգիստ. անգղիացի նաւերով միացած է Լին-Բէճիս, Բորզլէնտ և Սաուդէմբոլըն քաղաքաց : Վաճառականութիւնը որ ըստ օրէ ծաղկելու վրայ է: Այլ և գաղթականութեանց նպարներու շտեմարան է. հայելոյ, ասղնեգործի, մանուած բամբակի գործատուներ ունի:

**Մէն-Մալօ.** — (13,000 բն.) Փոքրիկ նաւահանգիստ. յարբերութիւններ ունի Անգղիոյ, Հիւսիսային երկիրներու, Սպանիոյ, Անգլիականց և Միացեալ-Նահանգաց հետ (176,000 տկուչի) : — Ցամաքի կողմանէ շատ վաճառաշահ բաղար է :

**Պրէսպ.** (80,000 բն.) — Գաղղիոյ պատերազմական ամենէն ապահով և ամենէն ընդարձակ նաւահանգիստն, Պրըզանիոյ Գորոէն գլխուն բովի ծոցին մէջ, Ովկիանոսի վրայ : Հաւրէ Նիւ-Եորգ գացող շոգենաւները հոս կը հանդպին : Հանդըրուանը մինչև 500 պատերազմական նաւ կ'ընդունի. սակայն մուտքն անձուկ և դժուարին է : Նաւարան. ձկնորսութիւն աղիերի և թիւնիկի. վաճառականութիւն գինւոյ, օղւոյ և գայեջրոյ :

**Նանդ.** — (115,000 բն.) Ստորին-Լուստի գլխաւոր քաղաքը, Լուստ գետոյն աջ ափանց վրայ՝ ծովէն 65 հզմղր. հեռու, բայց միջակ նաւեր կ'ընդունի այսինքն 300-400 տկուչի. մեծ նաւերը Բէմպէօֆ կը կենան : Իր բազմաթիւ հաղորդակցութեան ճամբաները, երկաթուղիքը, ջրանցքը և նաւքը և նաև դիրքը շատ վաճառաշահ ըրած են զինքը. բայց բանի մը տարիէ ի վեր իրեն ախոյեան մը կ'անգնեցաւ (Սէն-Նագեր) :

Քաղքէն բիչ մը վար էնտրէ կղզին կայ, ուր տէրութեան նաւերու համար շոգեշարժ մեքենաներ կը շինուին և ուր 2000 գործաւոր կը պարապին :

Սպանիոյ և Բորդուզալի գինւոյ վաճառականութիւն կ'ընէ. յարբերութիւն ունի Հնդկաց և Ափրիկէի հետ, նաւերն այն երկիրներուն ապրանքը կը բերեն, և Գաղղիոյ ապրանք կը տանին փոխադարձաբար : — Ձկնորսութիւն ձողաձկան. նաւաշինութիւն : Գործարան Էնսիէն կամ հնդիկ կտաւ (indien, պասմա) կոչուած կտաններու, բամբակեղէնի, մազոտ պաղէնի, սէրժի, առագաստի լաթի, մալխոյ, երկաթեայ գործեաց, մանարան բամբակի, շաքարի զտարան, գործատուն խեցեղէնի, ապակեղէնի և ըմպելեաց :

**Սէն-Նագեր** — Լուստի աջ ափանց վրայ, Նանդէն 56 հզմղր հեռու դէպ ի ծով. 1840 ին ձկնորսաց աւան մ'էր, հիւժա 16,000 բնակիչ ունի. շարժումն 600,000 տկուչի կ'ելլէ

և իր միշտ անուն գործունէութեամբը Գաղղիոյ մէջ նաւահանգըստաց չորրորդ կարգը կրնայ անցնիլ :

Շոգենաւերու կարգաւորեալ երթեկութիւնը կը միացընեն զինքը՝ Բորդուզալի, Սպանիոյ, Անգղիոյ, Ովկիանու և Մանչի վրայ գտնուող գաղղիական նաւահանգստաց, Անգլիականց, Մեխիգոյի, Չիլիյի, Գալիֆոնիոյ :

Վաճառաբերութիւնքն են շաքար, իւայտ, խահուէ, երկաթ և հանրածուխ, և արտահանութիւնքն արմտիք, շաքար, ևն :

Երկաթուղի մը կը միացընէ զինքը Նանդի և անկից Անժէ, Թուր, Օրլէան հանդպելով կ'երթայ Բարիզ :

**Լա Ռօսէլ.** — (20,000 բն.) Ատենօք ծաղկեալ, բայց նաւահանգիստը աւագով լեցուած ըլլալով՝ առջի գործունէութիւնը չունի :

Նաւային շարժումն 40,000 տկուչիի հազիւ կ'ելլէ : Առևտուր գինւոյ, օղւոյ, աղի, Թղթոյ, կերպասու : Գործատուն շաքարի, խեցեղէնի, ապակեղէնի : Երջեստայքը կը հասցընեն զին ի, օղի, աղ, կանեփ, կտուտա, արուեստական մանանեխ (moutarde), գետնածուխ, բար, պղնձի և երկաթի բովք :

**Ռօսֆօր.** — (30,000) Շարժող գետոյն վրայ, Գաղղիոյ պատերազմական հինգ նաւահանգստաց մէկը : — Նաւարան, զինարան, շաքարի զտարան, ձողաձկան մեծ որս : — Վաճառականութիւն աղի, ցորենոյ և օղւոյ :

**Սէնդ.** — (12,000) Օղւոյ անուանի գործարաններ. գրակեղէնի, պաղէնի, սէրժի, յախճապակոյ, խաղախորդութեան գործարաններ ունի : Երջեստայքը զինի, օղի և գինւոյ ոգիք կը հայթայթեն :

**Պօրսօ.** — (200,000 բն.) Ժիրօնտի մայրաքաղաքը, Կարօն գետոյն վրայ, Ովկիանոսէն 131 հզմղր. հեռու, որուն նաւահանգիստը 1000 նաւ կրնայ ընդունիլ :

Միջերկրականի հետ հաղորդակցութիւն ունի Կարօնով և Լանկըտօքի ջրանցքով, և միացած է Մանչի և Ովկիանոսի վրայ գտնուող գաղղիական նաւահանգստաց, Անգղիոյ (Լոնտրա, Պրիսթըլ, Տըպլին, Լիվըրուլ, Կլասկօ). Հիւսիսային ծո-

վաւ (Ռոդդէրտամ, Համպուրկ) Բորդուգալի (Լիսպոնա), Ամբրիկէի, Հարուային Ամբրիկայի, Բերնամպուք, Պահիա, Ռիօ-Հանէյրօ, Մօնղէվիտէօ, Պուէնօս-Այրլս, Հնդկաստանի, Զինաստանի, Մեխիգոյի, Վէնիցուէլայի, Լաբրադայի, Մանիլոյ և Աւստրալիոյ. բայց Սէն-Նագէրի և Հաւրի յառաջադիմութիւնը Պօրտոյի վաճառականութեանը կը դպչին : Պօրտո՝ Գաղղիոյ նաւահանգստաց երրորդ կարգը կը բռնէ. օտարաց հետ փոխանակութեանց գումարը 425 միլիոնի կելլէ : Պօրտոյի հարըստութիւնը Պօրտըլէի գինւոյն վաճառականութենէ առաջ եկած է, որն որ իր անուամբը շատ անգամ Պօրտօ կը կոչուի և որուն նմանը չգտնուիր բոլոր Գաղղիոյ մէջ : Շաքարի զտարան, արքայաշրոյ, խեցեղէնի, սպիտակ ապակեայ և մալխոյ գործարաններ ունի : Վաճառարեւութիւնն է նպար, տեսակ տեսակ խահուէ, խէժ, զոճատու նիւթեր, շաքար, բրինձ, Թէյ, հանքածուխ, փայտ, անողորկ մորթեր : Արտահանութիւնքն են՝ գինի, ոգելից նիւթեր, զուտ շաքար, ապակեղէն, հիւսուածք, ևն : Համբաււորքն են Շաղօ-Լաֆիթ, Շածօ-Լամուր, Շաղօ-Մարկօ, Նօ-Պրիօն գինիները, որ Մէտօքի ամենէն պատուական գինիներն են :

**Պայօն.** — (24,000). Ատուր գետոյն վրայ՝ վաճառաշահ, պատերազմական նաւերու շինութեան տեղ ունի. Ովկիանոսէն 4 հզրմէղր, հեռու է, շաքարի զտարան, օղտոյ, ապակեղէնի, խաղախորդութեան, չուխայի, գինւոյ գործատուններ ունի : Անուանի են Պայօնի չորջուղը և ապուխտը (jambon) : Այս քաղաքը, Սպանիոյ Գաղղիոյ հետ ունեցած տակտոյն կեղրոնն է : Նաւային հաղորդակցութիւն ունի Հաւրի, Պիլպայօյի և Սանդանտէր (Սպանիա) հետ : Փոխանակութիւնքը 68 միլիոնի գումար մը կը ձեւանեն :

Միջերկրականի վրայ :  
**Բորվանսը.** — Բերքիմեան (12,000 բն.) գործարան երկամի, չուխայի, ասղնեգործի և ասուեղինի : Երկիրը կը հասցընէ Ռիվալդի, Ժիւրանսօնի և Կրընաշի գինի. առատ ցորեն, պտուղ, շերամ և ազնիւ բուրդ :

**Շարպօն.** — (10,000). գործարան ժանգառի, կաշուոյ, ծոփային աղի, ներկի, անօթի, օղտոյ, գինւոյ ողտոյ, մետաքսեղինի : — Երկիրը առաջ կը բերէ ձէթ, ցորեն, գինի, ազնիւ մեղր, ԹԹԵՆի, շերամ : Վաճառականութիւնն է ցորեն, չուխա, մեղրամոմ, ևն :

**Ս.Աթ.** — (7200 բն.) Հէրօ գետոյն վրայ, ծովէն 2 հզմէղր. հեռու, Գանալ տիւ Միտի ջրանցքին բերանը, փորրիկ սակայն յաճախեալ նաւահանգիստ է. — Վաճառականութիւնն է Սպանիոյ ցորեն և ալիւր և Իտալիոյ գինի : Առևտուրն զխաւորապէս Գաղղիոյ արևմտակողման և Իտալիոյ և Սպանիոյ ծովափանց հետ է :

**Պէզիէ.** (14,000 բն.) Օղտոյ, գինւոյ ողտոյ, չուխայի, ձեռնոցի, ժանգառի գործարաններ ունի : Վաճառականութիւնն իր բերքերէն են՝ այսինքն մշկահոտ գինի, եղ, բալիբոլ, ևն :

**Սէդդ.** — (25,000) Լիօնի ծոցին վրայ, Թօ լճին մտիցը վրայ. երկամուղեաւ միացած է Պօրտոյի և Մարսիլիոյ, նաւերով Միջերկրականի վրայ ամէն Գաղղիացի նաւահանգստաց, Վալէնսիոյ, Պարսէլօնայի, ձենօվայի, Զիվիդա-Վէքքիայի, Պրանի, Ալճէրիի և Պօնի : — Սէդդ՝ Միջերկրականի վրայ Գաղղիոյ երկրորդ նաւահանգիստն է և մեծ վաճառատեղի Վիէնի և Լանկլոտօքի գինիներու, աղի, Արնէլքի և Ռուսաստանի արմըտեաց, Ամբրիկայի, Սպանիոյ և Ալճէրիի բրդերու, Անգղիոյ հանքածխոյ և երկամի, Հիւսիսի և Միացեալ-Նահանգաց փայտերու, Նոր-Երկրի և Իսլանտայի ձողաձկան : Վաճառարեւութիւնն շատ է, ինչպէս որ տեսանք. իսկ վաճառահանութիւնքն հարաւային գաւառաց բերքերն են : — Ապակեղէնի, կանաչ օճառի, խցանի, օղտոյ, ոգեաց, անուշահոտութեանց, ըմպելեաց գործարաններ ունի :

**Լի. Գէլ.** — (4500 բն.) Վաճառաշահ քաղաք, համանուն ջրանցքին վրայ. անուանի է մշկահոտ պատուական գինի : Գործարան օղտոյ, գինւոյ ողտոյ, ըմպելեաց և ձուլածոյ պողպատի :

**Պօզէր.** — (9000) Յուլիսի առջի օրերը մեծ տօնավաճառ

կըլլայ և հոս կը ժողովին բազմութիւն վաճառականաց : Բայց օրէ օր առջի պայծառութիւնը նուազելու վրայ է :

**Մարլը.** (20,000 բն.) Ռոն գետոյն վրայ. առատուր ցորենոյ, իւզի, գինոյ, մանանայի և ասրաւոր կենդանեաց :

**Մարսէյ.** կամ Մարսիլեա. — (300,000 բն.) Միջերկրականի զլխոյն, Գաղղիոյ գլխաւոր նաւահանգիստը, Լիօնի ծոցին արևելեան ծայրը: Աշխարհիս ամենէն ապահով նաւահանգիստներէն մէկն է, 300 մէրը երկայն և 65 լայն, բայց միայն 7 մէրը խոր. ուրիշ երեք փոքր նաւահանգիստներ ալ շինուած են, որոնք զատ անուամբ կը կոչուին և ասոր մասն են(1): — Միջերկրականի, Հնդկաց և Խաղաղական Ովկիանոսի վաճառոց համաբարանոցն է: Ասկից երեք երկամուղի կը բաժնուին. այսինքն մէկը դէպ ի Բարիզ՝ Լիօնէն անցնելով (862 հզմէր), միւսը Պօրտօ՝ Մէղղէն անցնելով և երրորդ մը դէպ ի ձնօվա՝ Թուլօնէն անցնելով: Ծովափունքը Լիվրուլի նման տղքքերով ծածկած է զորս անդրբո կը կոչեն:

Մէսամբրի Մաբիլիմ ընկերութիւնը և այլևայլ նուաշին ընկերութիւններ իրենց շոշենաւներովը Մարսիլեան կը միացնեն՝ Միջերկրականի ամէն նաւահանգստաց. ձնօվա, Լիփօնօ, Չիլիպա-Վէքքիա, Նաբւլի, Մէսսինա, Բիրէ, Չանագ-գալէսի, Կէլիպօլու, Սէլանիք, Կ. Պօլիս, Վառնա, Կալաց, Իպրայիլա, Սինօպ, Սամսօն, Միաիլի, Սագըզ-Ատասը, Իզմիր, Շիրա, Ռօտտոզօ, Պէյրուժ, Եաֆա, Աղէքսանդրիա, Վալէնսահիա, Թուրուզ, Հոնկ-Քոնկ, Սիւէզ, Բորդ-Սաիտ, Ատէն, Սինկաբօ, Սայկոն, Բոնդիշէրի, Մատրաս, Կալկադա, Ետօ:

Չանազան նաւային ընկերութիւններ վերոյիշեալ նաւահանգիստներէն զատ կը հանդպին նաև Պարսնէլօն, Գատիզ, Սեվիլլա, Գօրսիզա, Աղրիականի և Արշիպեղաքոսի նաւա-

(1) Մարսիլոյ սկիզբը Կարդագինի անվան ժամանակին կը միանայ, և հիմնադիրը Փոկէացիք են։ — Երբ Հռոմէացիք Կարդագինեացոց հետ կռուեցան միտրոսեան համար, Մարսիլեա իրենց համբարանոցը և դաշնակիցն եղաւ։ — Այս բաղաբա լի էր խանութներով, նաւարանով և իրեն սեպհական մեքենայիւր։

հանդիսաներուն, Եգիպտոս, Ալճէրի, Մարօզ, Ռողղերտամ, Համպուրի, Լիվրուլ, ևն:

Մարսիլոյ վաճառականութեան և գործատանց հարկաւոր նախնական նիւթերն են՝ ածուխ, հնտեղինի իւզ, ճարպ, ճրագու, մորթ, պղպեղ, շաքարի եղէզ, ևն: Շաքարը մասնաւորապէս Մարդինիքէն, Կուսալըբէն, Մատանզաւէն, Հաւանալէն և Պահիլայէն կ'ընդունին:

Գործարան նկարէն կտաւու, գլխարկի, կօշիկի, ըմպելեաց, գրականի, պողպէղի, բորակի, ապակեղինի, խցանի, գինեոյ ողոյ կամ ալքոհի և խաղախորդութեան: Անուանի են Մարսիլոյ օճառը և շաքարը որ երկու մեծ գործարանաց բերքն են: Շաքարի բուական զտարան կայ: Օտար երկիրներէ ընդունած ապրանոց փոխարէն ինքն ալ օճառ, զտած շաքար, մոմ, պտորաստ մորթ և սննդարար հայսեր, ևն: կը շրկէ:

Մարսիլոյ վաճառատեղին աշխարհիս վրայ առաջիններէն մէկն է արմտեաց, եղի, բրդերու, մետաքսներու, շաքարի, խահուէյի (Մարսիլեա սովորաբար իր խահուէները Պօրտօյէն կ'ընդունին, ինչպէս Ռիօյի, Միզօրի և Կուսարայի խահուէները), խէժի, մորթոյ, իւզալից հնտոց, զունատու նիւթոց և բամբակի համար:

**Ռուլօն.** — (95,000 բն.) Մեծ վաճառականութիւն կ'ընէ նաւերու հարկաւոր նիւթերու: Նուաբանը Գաղղիոյ մէջ առաջին է: Գաղղիոյ պատերազմական մեծ նաւահանգիստն է: Զուխայի, մետաքսէ կերպասուց, գլխարկի, գրակի, վճառի և ապակեղինի գործարաններ, աղէկ մալուխներ, և մննամօթից ձուլարան ունի: Խաղախորդարան:

**Անդիպ.** — (5,000 բն.) Աղած ձկան և ձէթի վաճառականութիւն:

**Նիս** կամ Նիցցա. — (48,000 բն.) Բանուկ նաւահանգիստ. Սպանիոյ, Իտալիոյ, Ալճէրիյի, Արևելքի, Սենեկալի, Ամերիկայի և Չինաստանի հետ յարաբերութիւններ ունի:

Օճառի, ծխախոտոյ և կտաւու գործարան. մետաքսի մանա-

րան, խաղախորդութիւն, Թղթոյ զործարան : Տարին 227,000 տկչփի. գործ կը տեսնուի :

Օղը մեղմ և տաք ըլլալուն կիտրոն և Թուրինչ աղէկ կը մեծան հոս :

§ 10<sup>o</sup> — Ներքին վաճառաւան ֆալաֆ.

Հիւսիսէն սկսեալ,

**Ս.միւէն.** —(65,000 րն.) Սօմ գաւառին մայրաքաղաքը : Գաղղիոյ հիւսիսակողման զլիսուոր վաճառատեղիներէն մէկն է. մասնաւոր վաճառականութիւնն է բամբակեղէն, վուշ, բուրդ, շաքար, զինի, եղ, աղ : Իւղրէխի Թաւիշի, Բաղիմիրի, կերպասու, կտաւու, ժապաւիւնի գործարաններ ունի :

**Ս.պըվիյ.** Նշանաւոր է չուխան և կտաւը :

**Լիլ.** —(100,000 րն.) Հաղորդակցութիւն ունի Բարիզու և Հիւսիսային ծովու հետ երկաթուղեաւ և ջրանցքով : Արտահանութիւն արմտեաց, վշոյ, իւլոյ, ալըոհլի, շաքարի, հանքածխոյ. բամբակեղէնի, բամբակեայ և ասուեայ դերձաններու զորս Ռուսլէյի և Դուրբուանի գործարանները կը գործեն, կերպասու, ասղնեգործոյ, մեքենայի : —Գործարան չուխայի, Սէրմի, Քուղիլի, ապակեղինի, քժանի, բամբակեայ մանուածոց և հիւսուածոց, խեցեղէնի, ասղնեգործոց և Թղթոյ :

**Տուէ.** —(24,000) Ջուլարան Թուրանութից, խաղախորդութիւն, վաճառականութիւն վշոյ :

**Պաֆֆաւա, Սիւրէյ և Սէն-Քիւրէն.** —Բիւրեղի, ապակաւոյ և հայելեաց գործարաններով :

**Վալանսիէն.** —(25,000) Պաղիսղ և մեծ վաճառականութիւն Point de Valenciennes ըսուած ասղնեգործոյ՝ նուրբ կտաւու և գամեղէնի :

**Արսու.** —Վաճառականութիւն գորենոյ, կնճրակի, իւլոյ և ճակղեղի, շաքարի, վշոյ և հետիկներու : —Գործարան բամբակի, պաղիսղի, ասղնեգործոյ, զարեջրոյ, կաշուոյ, զամի, օճառի, անժոյ :

**Պալէոլ.** —(10,000) գործարանը ասղնեգործոյ : Մալէօժ գործատուն խեցեղէնի :

**Մէն-Բանդէն.** —(33,000) Կեղրոն ձեռագործական գաւառի մը, որ 200,000 գործաւոր կը բանեցնէ : Շտեմարան բամբակէ և վշէ հիւսուածոց և Թելերու, բերքալի, մարմաշի, անկուածոց, բամբակեայ Թաւշոյ, շաքարի, զինւոյ ողեաց որ էն (Aisne) գաւառին մէջ կը շինուին : Անուանի և պաղիսղի, շարի, մարմաշի, պաղէնի, բերքալի, բամբակեղէնի, բիբէյի, քաշմիրի նման շալերու, քալիբոզի, սև օճառի, արծաթաթէլ հիւսուածոց, ասղնեգործոց գործարանները :

**Ռուսլէ.** —(65,000) և Դուրբուան (38,000) երկու (100,000) ճարտարարուեստ և վաճառաւան քաղաքը, նշանաւոր իրենց մանուածքովը և հիւսուածքովը :

**Ս.մամնիէր.** 16,000 Պելճիոյ սամմանաղլիսոյն վրոյ ազնիւ կտաւու գործարանը և վշեղինի մանարանը : — Սէն-Կոպլէն գործարան հայելեաց :

**Ռուան.** (100,000) Գաղղիոյ ամենէն վաճառաւան քաղաքաց մէկն է Սէն գետոյն վրայ, ծովէն 120 հզրմղր. հեռու, միանգամայն Թէ ծովային և Թէ գետային ծաղկեալ նուահանգիստ որ մինչև 250 տակառաջափով նաւ կ'ընդունի. Ռուան՝ նաւերու կարգաւորեալ երթևեկութեամբ միացած է Գաղղիոյ ամեն նաւահանգաւանց : Այս քաղքիս բովերն են Ս. Պօղոս կուռուած հանքային ջրերը : —Նշանաւոր են շաքարի զտարանները, աղաւոր խեցեղէնները և հետեալ նիւթոց գործարանները. չուխա, բովիճայք, անկլիկ, բամբակեղէն (որմէ տարին 30 միլիոն հազրկրմ. կը մանէ), բամբակեայ տեսակ տեսակ կերպաս, զգակեղէն և հազարաւոր ուրիշ ապրանքներ, որոնք Ռուանըրի կ'ըսուին : Մետաքսեղէն, զլիսարկ, պաղիւղ, օճառ, բողաս, լէղակ, ծխախոտ, նաշին, Թուղթ, եղջիւրեղէն, բամբակեղէն, վշեղէն, ասուեղէն, երկաթեղէն, կաշեղէն, զարեջուր, են : Ամեն տեսակ ապրանսաց առևտուր կ'ընէ, բայց մասնաւորապէս նպարի և փերեզակաց ապրանսաց :

Ռուանի վաճառականը Պուրիոններյի զինիները Անգլիա և

Հրանտա տակառներով, իսկ Տանիմարգա, Շուետ և Ռուսաստան հաղադակներով կը ղրկեն, վասն զի եթէ տակառի մէջ դրուի երկայնատե ծովաչուն զինւոյն զօրութիւնը կորսնցունեն կուտայ:

**Անիւ.** Գործարան հայելեաց: — Տընէն և Անգլէն նշանաւոր ամխահանօք:

**Սէտան.** — (10,000) Սահմանազխոյն մօտ քաղաքական ղէպքերով և արուեստականութեամբ նշանաւոր փորրիկ քաղաք մը: Համբուրն են իր նուրբ չուխան, և խաղաղորդութիւնը: — Շարլըվիլ. զամեղէնի և զինուց գործարաններով: — Գրէյ սքոնչելի խեցեղէնի գործարաններով:

**Մուլ.** նշանաւոր է չուխան: — Լօնիմու. աշխարհահամբաւ են խաղաղորդարանքը:

**Ռէմս.** — (60,000) Գաղղիոյ մեծ քաղաքաց մկը. զխաւոր ապրանքն են Շամբոննելի գինի, բուրդ, ցորեն: Գործարան չուխայի, բովիճէից, բամբուղի. ասուի կամ Ֆլանելի, սնդոյ, կերպասու, մարմաշի, դիպակի, բազմիրի, մետաքսեղինի և ասուեղինի, բամբակեղինի, գղակի, զլխարկի, պարսիմաղի են:

**Շօմօն.** Մարնի վրայ. նշանաւոր ձեռնոցներ ունի:

**Քարի** կամ Բարիզ. — (2,000,000) Սէն գետոյ վրայ, կեդրոն ամենայն հաղորդակցութեան ճամբաներու և հեռագրական գծերու. Լոնտրայի դրամագիտական (financière) ախոյեանն: Ճերջապէս, ինչպէս ռամկական լեզուով կ'ըսուի՝ Բարիզ Գաղղիոյ սիրտն է:

Բարիզու ներքին առևտուրն է բանջար, պտուղ, ձուկ, հաւեղէն, կարագ, պանիր, տլիւր, գինի և ողելից ըմպելիք, արջառ խահուէ, գաղթականութեանց նպար, տեղացի շաքար, ճարպ, կաշի, եղ, փայտ և հանքածուխ:

Գործատանց անուանի արդիւնքն են կօպլէն կապերտները, ժիլիէն ըսուած չուխան, սքանչելի ոպնիազեղէնք. կոտք, կան կարասիք, լարեղէնք, լամբեղէնք, խաղախորդութիւն, բուկեղէնք, տեսակ տեսակ թուղթ, առաջին կարգի մաղմմաղիքական, աստղաբաշխական և վիրաբուժական գործիք, զոհարե-

ղէնք, ոսկեղէնք, զէնք, ապակեղէնք, մոմ, ճրագու, լաւ ժամացոյց, շալ, մարմաշ, զգեստք, կերպաս, կտաւեղէն, ընտիր ձեռնոց, բիմիական արգասիք. մեքենայ, պղնձան, անուշահոտ օճառ և ջրեր, խաղալիք, անօթեղէն, շար, ժապաւէն, երկգմետաքսեղէն, արուեստաշէն ծաղիկք, աղէկ չորոյաղ, թանաքմետաքսէ զլխարկ, դանակեղէնք, երկաթուղիք (§ 7, 3<sup>o</sup>.):

Բարիզի շրջակայքը աւաններ կան, որոնց գործարանները իրեն համար կաշխատին:

Աստղաբաշխական դիտարան մը ունի, ուսկից կ'անցընեն Գաղղիացիք միջօրեական գիծը:

Պօնպլէ կը զրէ թէ, «Բարիզու արուեստական և առևտրական վիճակը շատ կերպարանափոխ եղած է այս յետին տարիներու մէջ: — Կ'ըսէ թէ պատերազմէն առաջ 20,000 աշխատաւոր կը պարապէին ոպնիազեղիւնի, 60,000 կահերու և հիմա այն գործաւորներէն մեծ մասը կը պակսի, կամ պատերազմական դաշտին վրայ նահատակ եղած են կամ ցրուած են և կամ ուրիշ երկիրներ գաղթած: — Պղնձանէ գործուածքը՝ որ Բարիզու զլխաւոր արուեստին մէկն է, այն ալ շատ ինկած է, նոյնպէս նաև կօշկարարութիւնը և արուեստաշէն ծաղկանց արուեստը»:

**Ռիւլլը.** Մեծ գործարանք զնդասեղի և զամեղինի:

**Ալանսօն.** — (14,000) Վանուականութիւն չուխայի, point d'Alençon ըսուած ասղնեգործոց և diamants d'Alençons ըսուած ակնեղէնի, կերպասու պագէնի և բիքէյի:

**Լսւվիէ.** — (12,000) անուանի է ազնիւ չուխայի գործարաններով:

**Ճիլգօր և Քօնիօսլմէր.** Գործարանք խաղախորդութեան:

**Ռէն.** — (50,000) Առևտուր ցորենոյ, շինութեան փայտի, կապարի, վշոյ, կաննփի, արջառու, ազնիւ կարագի: — Գործարան առագաստի լամի, պագէնի, խաղախորդութեան, թղթոյ, խեցեղինի, անուանի թելի: —

**Լանկիլը.** — (10,000) Համբաւաւոր դանակեղինի գործարաններ ունի:

**Լը Ման կամ Ման.** — (40,000) Շտեմարան կանեփի, ցորենոյ, ալիւրի, փայտի և երկամբի: Արեւմտեան մեծ վաճառատեղիներէն մէկն է կերպասու, արջառու ոչխարի և սպարառ հաւերու, որոնք անուանի են Մանի հաւ անուամբ: — Գործարան շատ ազնիւ մոմոյ, սաղնեգործոյ, էզամինի (etamine), գարեջրոյ, օճառի և խաղախորդութեան:

**Ա.ի, Վ.էրդիւ, Սիլըրի, Ա.վիզ, Մօրէոյ, Տրգի.** Հըռ-չակաւոր գինիներ ունին:

**Օրլէան.** — (50,000) Լուառի վրայ, միջին Գաղղիոյ զըլ-խաւոր քաղաքաց մէկը: Մեծ վաճառականութիւն գինւոյ, ցորենոյ, օղւոյ, բացախի: Շաքարի զտարան, գործարան ատուեղինի, յախճապակոյ, նկարէն կտաւու, թղթոյ, խաղախորդութեան, բամբակի գուրպայի, խեցեղինի և անթեղինի:

**Դրուա (Troyes 36,000)** Սէն գետոյն վրայ վաճառականութիւն բամբակի, թելի, դերձանի, Ֆիւրէն (futaine)ի, պագէնի, սէրժի. սաղնի, մեղրամոմոյ և մոմոյ: Գործարան կերպասու, զգակի, չուխայի, նաշիհի և թղթոյ:— Անուանի է Դրուայի սպիտակը (իւստիւպէճ) որ իր անուամբը blanc de Troyes կը կոչուի:

**Սէզան.** Նշանաւոր խաղախորդարաններովը և կաշեղէններովը:

**Ս.ճիէ .** (55,000 բն.) Մէն գետին վրայ, Լուառի միացման տեղէն չորս հզմդր. հեռու. շտեմարան արմտեաց, կանեփի, վշոյ, թերթաքարի, ածխոյ: — Գործարան կերպասու, նաշիհի, էզամինի, մեղրի: — Վաճառականութիւն գինւոյ, օղւոյ և մեղրամոմոյ:

**Թուր.** — (26,000 բն.) Բարիզէ՝ Նանդ գացող երկամուղին այս քաղքէն կ'անցնի: — Վաճառականութիւն գինւոյ, ցորենոյ, սալորչիլի: Գործարան մետաքսէ ամէն տեսակ գործուածոց, տամասկեան կերպասու, սերժի, չուխայի, մեղրամոմոյ և մոմոյ, ժապաւինի, երկամբէ թելերու, խեցեղինի և խաղախորդութեան:

**Տալո-Ուրնօ.** — Թուրէ՝ Վանտօմ գացող երկամուղւոյն

կայարաններէն մէկը: մեծ անուն ստացած են խաղախորդարանը, որ ամենէն հին և հարուստներն են:

**Պուրկէյ.** Պատուական գինի:

**Տիժօն.** — (40,000 բն.) Գործարան չուխայի, սէրժի, զլխարկի, բացախի, օղւոյ, արուեստաշէն մանանխի, մանարան բամբակի: Վաճառականութիւն ցորենոյ, գինւոյ, իւրոյ, կանեփի, վշոյ, երկամբի:

**Նիւի և Պօն** (44,000) Անուանի են գինիները:

**Պզանօն.** — (49,000 բն.) Գործարան ժամացուցի, խեցեղինի, կերպասու, մարմաշի, չուխայի, համեմանաց, զինուց, վառօդի և խաղախորդութեան:

**Պուրժ.** — (20,000). Գործարան չուխայի, դանակեղինի: Կանեփ, ցորեն, աղբորակ, անուանի բուրդ:

**Լիմօժ.** — (56,000 բն.) Միջին Գաղղիոյ զլխաւոր վաճառաշահ քաղաքը: — Գործատուն խոշոր կտաւու, բովիճէից են: — Շրջակայքը զարբոնց և էլ կամի հալոցք կան: — Վաճառականութիւն ցորենոյ, արջառու, ֆլանէլի, կաշոյ, յախճապակոյ, բրդոյ, ևն:

**Պլէրօֆօն-Քէրրան.** — (40,000) Վաճառականութիւն թղթ-թեղինի, չոր անուշոյ, կերպասու, կանեփի, վշոյ, չուխայի, գինւոյ, պանրոյ և կաշոյ: — Գործարան ծարրաքարի, բովիճէից, ոսկիւրակեղինի, խաղախորդութեան և բոկեղինի:

**Ս.ճօնէյ.** — (18,000) Անուանի են թղթեղէնը, կաշեղէնը և ճերմակ մետաքսէ մանուածքը: — Հոս հնարեցին Մօնկօֆիէ եղբարք օդապարիկը:

**Լիօն.** — (325,000) Միջերկրականէն 350 հզմդր. հեռու Սօն և Ռօն գետերուն միացման տեղը: Հարաւային արեւելեան կողմանց առևտրական մետրապօլիտը և Գաղղիոյ երկր ըզ մեծ վաճառատեղին է: Հաղորդակցութիւն ունի, ձինէվուայի լճին հետ Ռօնի միջոցով: Բարիզու, Մարսիլիոյ, Սէնդ Էդիէնի, Ռուանի, Պզանօնի, Զուիցերայի, Իտալիոյ և բոլոր Գաղղիոյ հարաւային-արևելեան գաւառներուն միացած է երկամուղնու: Մտնող ապրանքն են ցորեն, փայտ, ածուխ, կպրածիւթ, շի-

նումեան նիւթեր, զինի, պտուղ և այլևայլ սննդատու նիւթեր և անզուտ մետաքս են:

Լիօնի մետաքսի գործատունքը 80,000 գործիք և 150,000 աշխատաւոր ունին և աշխարհահամբաւ են իրենց արդիւնքը, մետաքսեղէնքը, մետաքսէ թաշկինակները, մետաքսաներկու-  
ձիւնը, թաւիշները, զառնաւուխտը, սնդուսը, ժապաւէնները, երիզքը, մարմաշը, ոսկեթել և արծաթածել սաղնեգործքը, շա-  
բերը, դիպակքը, կահ կարասիքը, չուխան են:

Յետոյ երկրորդական կարգաւ կուգան՝ կաշին, նկարէն կտաւ-  
քը, արուեստաշէն ծաղիկքը, զլխարկները, կնճրակի և ընկու-  
զի եղը, ըմպելիքը, զարեջուրը, չորտաղը, բիմիական արգա-  
սիքը են:

Գլխաւոր վաճառահանուածիւն ազգի ազգի մետաքսէ ապ-  
րանաց և Ռօնի գինւոյ:

**Դարաւ.** Անուանի է մուսլինը:

**Կորնուպը.** — (40,000) Գործատուն կտաւու: Գլխաւոր ապ-  
րանքն են Սասընածի ձեռնոցները և պանիրը, Շարդէօզի համ-  
բաւաւոր ըմպելիքը և երկամ:

**Սէնդ-Էդիէն.** — (100,000) Շատ վաճառաշահ քաղաք՝ որ  
օր ըստ օրէ բարգաւաճելու վրայ է: Ամեն կողմանէ գործա-  
րանաց ծխաններ կը բարձրանան, ամենայն ինչ ծխոյ մէջ թամ-  
խուած է և պէտք է ածխային մոխրոյ կամ շաղախի մէջ քալել:  
Սակայն այս սևուածեան ծխոյն մէջէն կ'ելլեն զաղղիական ար-  
ուեստագիտութեան ամենէն ազնիւ բերքերը, որ են՝ մետաքսե-  
ղէն, ժապաւէն, շաբ. թիւլ, թաւիշ, են: Կան նաև մեծ գործա-  
րաններ դանակեղինի, երկամեղինի և զինուոց: — Վաճառակա-  
նուածիւն ժապաւիսու, երկամի, պողպատի, զինուոց, ապակեղի-  
նի և հանրածխոյ:

**Անկուլէմ.** — (15,000) Մեծ գործարան թղթոյ: Առևտուր  
գինւոյ, Գոնեաքի օղւոյ, աղի, բրբուժի, երկամի, փայտի են: —  
Գործատուն խեցեղինի, դարբնոց և ձուլարան Սնդանօթից:

**Պօնդուպան.** — (25,000) Դառն գետին վրայ գործարան  
մետաքսէ և ասուեսոյ կերպասուոց, նաշիհի, ստուարամղթոյ

(մուզավա), չուխայի, ասուեղինի: — Նարտաներկուծիւն և  
խաղախորդուծիւն:

**Սէնդանդուսէն.** Մեծ վաճառահանուածիւն կաշւոյ: — Մա-  
զամէ և Ռօսէզ չուխայի գործարաններ:

**Թուլուզ.** — (120,000) Վաճառաշահ ընդարձակ քաղաք  
Կարօնի վրայ: Առևտուրը Սպանիոյ և Գաղղիոյ հետ է: — Գոր-  
ծարան ծխախոտոյ, չուխայի, մետաքսեղինի, շաբի, պագէնի  
են: — Վաճառականուածիւն եղի, շաբարի, լեղակի, երկամի և  
Սպանիոյ բրդոյ:

**Ռօֆօր.** Ավէյրօնի վիճակին մէջ գեղ մը. աշխարհահամ-  
բաւ է պանիրը:

**Պօնքլիէ.** — (50,000) Բանուկ վաճառականուածիւն գլխա-  
ւորապէս ժանգառի (vert de gris ou verdet), արջասպի, օղ-  
ւոյ, արքայաջրոյ, գինւոյ, գինւոյ ողւոյ, հոտանէտ նիւթոց, ըմ-  
պելեաց, բիմիական արգասեաց, չուխայի, ասուի, մետաքսե-  
ղինի, մարմաշի, բամբակէ կտաւուց, թերմոնի, չորպցեալ պղտ-  
ղոյ, ձիթոյ եղի, ազնիւ մոմոյ, սիամական կտաւու, և խաղախոր-  
դուծեան:

**Ճէֆա.** Զուիցերիայի սահմանագլխոյն մօտ. անուանի է  
պանիրը:

**Նիմ.** — (60,000) Գաղղիոյ առևտրական մետրապօլիտնե-  
րէն մէկը. անուանի շտեմարան զաղթականուածեանց նպարի,  
ցորենոյ, ալէր, Ռուանի ապրանաց, հնդիկ կտաւու, Պէսաէժի  
հանրածխոյ, Ալէյի մետաղի գործարանաց արդեանց, Կանժի,  
Վիկանի և Անտիզի մետաքսներու են:

**Սէնդէմիլեօն.** Ազնիւ գինի:

**Անգլիենօն.** — (40,000) Ռօն գետոյն վրայ. վաճառակա-  
նուածիւն ասուի, մետաքսի, բրբուժի, գինւոյ, օղւոյ. եղի, մեղ-  
րի, ղեղին մեղրամոմոյ, խէժի, տորոնի, կաշւոյ: — Գործատուն  
մետաքսեղինի և արքայաջրոյ:

**Տրակիենօն.** — (10,000) Վար վիճակին մէջ. վաճառա-  
կանուածիւն ազնիւ ձէթի իւղոյ:

**Էնֆա.** — (28,000) Վաճառականուածիւն գինւոյ, ազնիւ եղի,

օլոյ, ասուի, չուխայի, մետաքսեղինի: — Հանքային ջրեր ունի:

**Կրաս.** — (12,000) Վարի մէջ. Վլաճառականութիւն ազնիւ ձէթի իւղոյ և անուշահոտութեանց:

§ 11°. — Կաշուածք եւ գաղթականութիւնք

**Սերապիոյ մէջ՝** Գորս կամ Գորսիզա Միչերկրական ծովուն կղզիներէն մէկը, թէև ի բնականէ Իտալական կղզի մ'է, բայց 1768 տարիէն ի վեր Գաղղիոյ ձեռքն անցած. Սարտենիոյ հիւսիսակողմը կ'իյնայ և Բրովանսէ 150 հզրմղր. հեռու կ'իյնայ զէպ ի հարաւային-արևելք: Մովափանց մօտ բուստ կ'որսացուի. հողը բարբեր է, բայց մշակութիւնը երեսի վրայ ձըգուած (260,000 բն.). Գլխաւոր քաղաքն է Այաչչիո ուր ծնու Մեծն Պօնաբարթ 1769 տարւոյն: — Օրէցցա. Համբաւաւոր հանքային ջրեր ունի:

**Ափրիկիոյ մէջ՝** Ալժերի, Ափրիկէի հիւսիսակողմը: — Արևմտակողմանց վրայ Սէնէկալ, Կինէ. հարաւային-արևելեան կողմանց մօտ՝ Ռէիսիօն, Սէնդմարի և Մայոյ կղզիք:

**Ասիոյ մէջ՝** Բօնիբերի և Սորից-Գօեկեիս որուն մայրաքաղաքն է Սայիօն:

**Ամերիկայի մէջ՝** Անդիլեան կղզիներէն քանի մը հատը մասնաւորապէս Կուասըլուք և Մարդիիի. Գաղղիական Կուլյանա՝ Հարաւային Ամերիկայի հիւսիսային-արևելակողմը Սէնթիեր և Միխլոն կղզիք՝ Նոր երկրի ափանց մօտ:

**Ռվկիանիոյ մէջ՝** Նուվէլ-Գալէսօնի, Մարբիզ կամ Մէնսան կղզիք. Գահիղի կղզեաց և քանի մը մերձեկայ արշիպելղաքոսներու հոգարարձութիւնը:

Եւրոպայէ դուրս գտնուող Գաղղիական ստացուածոց բնակիչքը 5,000,000 անձ են:

§ 12° — Չափի, կշիռի եւ դրամի.

Գաղղիական չափուց և կշռոց և դրամոց դրւթիւնն ամենէն պարզն է միւնգամայն ամենէն աւելի յարմար՝ զիտուեան սկզբանց և առևտրական շահուց. և ամեն վաճառական ազգեր կամաց կամաց այս գաղղիական դրւթիւնը ընդունիլ սկսան: Միայն զլխաւոր միւթիւնները նշանակենք.

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԱՓՔ

Մեղր իր մասունքովը և բազմապատկովը:

ՃԱՆԱՊԱՐԶԱԿԱՆ ՉԱՓՔ

Հազարամեղր և միւլիամեղր:

ՄԱԿԵՐԵՒՈՒԹԱԿԱՆ ՉԱՓՔ

Բառակուսի մեղր, առ (100 □ մ.), հեկար:

ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՉԱՓՔ

Խորանաղ մեղր, սղէռ (փայտի համար). լիղր (հեղանիւթոց). հեկոլիղր (ցորենոյ և հեղանիւթոց):

ԿՇԻՌՔ

Հազարակրամ, Գէնդալ (100 հզրկրմ.) մեղրական սակաւնաչափ (1000 հզրկրմ.) սակաւնաչափ (1000 հզրկրմ.):

Գաղղիական դրամոց միւթիւնը ֆունսնգն է.

Ոսկի.	}	100 ֆունս	}	5 ֆունսգ.
		50 »		2 »
		20 »		1 »
		10 »		50 սանդիմ
		5 »		20 »

Պղնձէ դրամը են կրկին սանդիմ, սանդիմ, կէս-տէսիմ (սու) և տէսիմ:

Գաղղիոյ մէջ դրամամուղծ շատ կը գործածուի և Պանգ տը Յրանան ի շրջան կը հանէ:

§ 13°. — Դրամասունք եւ փոխասուռքեան ընկերութիւնք.

Փոխատուութեան ընկերութեանց հիմն՝ Պանգ սր Ֆուանս կամ Դաղղիոյ դրամատունն է, հիմնեալ 1800 տարւոյն 30 միլիոն ֆունգ դրամազլխով, որ հետզհետէ 91 և 182 միլիոնի բարձրացաւ: Փոխատուութեան, զեղջման և աւանդի դրամատուն՝ Պանք տը Ֆրանսը մի միայն դրամաժողով ի շրջան հանելու կարողութիւնը ունի: Այս դրամաժողովը 1865 տարւոյն 800 միլիոն էն վեր էին: Իր օժանդակները բոլոր Դաղղիոյ մէջ տարածուած են, և այն յաջողութիւնը, որով անցուցած է Դաղղիոյ բոլոր բաղաբական և առևտրական տազնապները, մեծ երաշխիք է որ հազուագիւտ դրամատուն մ'է Թէ Եւրոպիոյ և Թէ Ամերիկայի մէջ: Պանք տը Ֆրանսին բով կրնան դասիլ հետեւեալքը:

Գրէտի Ֆոնսիլէ (կալուածական վարկ), հաստատեալ յամին 1852:

Գրէտի Ակրիֆոլ (հերկագործական վարկ):

Գրէտի Մոպիլիէ (կարասեկան վարկ), որ արուեստական ընկերութեանց հաստատման և անոնց դրամաժողովոց ելլելուն կ'ըզաղի:

Սօսիէթ Ժէնէրալ բուր ժալօրիզէ յը սէվրօբրման սիւ գօւմէրս է սը լ'էնհիւսդրի. հիմնեալ 1859 ին որ կը գործէ իբրև դրամատուն փոխատուութեան, զեղջման և աւանդի:


Գօնրուար սեւօնդ, Սօսիէթ սը սէքօ է սը Գօնդ Գուրան և Սօսիէթ Ժէնէրալ. Դաղղիոյ մէջ առևտուրը և արուեստը բարգաւաճեցընելու համար հաստատուած են և կը շնանան Անգղիոյ Գլիբիկ Հաուսին պէս նպատակ մ'ունենալու:

Անուանի են նաև Սօսիէթ Գլիբիկ, Գրէտի Լիօնէ, Սօսիէթ Մարսէյէզ սը Գրէտի Էնհիւսդրիլ Գօմբրիալէ սը սէքօ:

Նաւային զանազան ընկերութիւններն են Մէսաքրի մարի-դիմ, Գօմբանի Մարսէյէզ սը նաւիկասիօն ա վարթօր. Գօմ-

բանի Ֆուանսէզ սէ պաղօզա էլիս սիւ Նօր. Գօմբանի դրամա-գաղղանդիւ. Գօմբանի սը նաւիկասիօն ժիւվիալ է Մարի-դիմ ևն:

Ապահովագրութեան ընկերութեանց մէջ նշանաւոր են Սօլէլ Եկլը և Էնսանսի:



Գ Լ Ո Ի Խ Է.

Չ Ո Ի Ի Յ Ե Ր Ա Կ Ս Մ Հ Ե Լ Ո Ի Ե Տ Ի Ա.



Լայնութեան աստիճան 47°. Մկւթ. 40,900 □ հզմդր. — Բն. 2,600,000 անձ. — Վճուկն. նաւ 5861. — Տկուչի. 699,910: — Ել. հզր. 3600 հզրմդր. — Խտուծիւն մարդկան առ □ հզմդր. 61 անձ:



§ 1° — Նախագիտելիք. դիրք, քաղաքական եւ բնական բաժանմունք.

Չուիցերա, Դաղղիերէն Սիւիս և Գերմաներէն Շուէյց, Թէև փոքրատարած է, և սակայն ա խարհիս ամենէն նշանաւոր երկիրներէն մէկը: Արևմտեան Եւրոպիոյ կեդրոնն է, և շրջագատուած է Դաղղիայէ, Գերմանիայէ և Իտալիայէ: Տարածութեան պզտիկութեանը և ի բնութենէ հաղորդակցութեան դժուարութիւններուն յաղթելով՝ վաճառականութեան և արուեստագիտութեան մէջ առաջին կարգի եղած է:

Իր գիւղական տեսարանն՝ իւր վաճառականական հարստութեան զլխաւոր պատճառներէն մէկն է: Ճամբորդութիւն և բնական տեսարան սիրող շրջայսժիկ անձանց ա մենէն յարգած էր-

կիրն է: Իւր դրից վսեմութիւնը, լճերը, հեղեղները և սառնարանները զամենը կ'զմայլեցնեն: Կլիման ընդհանրապէս առողջարար է և անհատնում զանազանութիւններ կ'ընծայէ: Մինչդեռ Ալպեանց զազամը յաւերժական ձմեռ մը կը տրի՛՛ ձորերու մէջ բայցը բարեխառնութիւն կը վայելեն: Այս պատճառաւ բերքերն ալ զանազան և բազմաթիւ են:

Զուիցերայի բարձր լեռները Ալպեան լեռինքն են որ՝ Արևմտեան և Արևելեան կողմերը բազմաթիւ գոտիներ կը ձևացնեն:

Այս լեռները այլևայլ անուններ կը կրեն, ինչպէս Կրիզոնաց Ալպեանք, Բենին Ալպեանք, Իւրիի Ալպեանք ևն:

Ամենէն բարձր լեռը Մոնդէ Ռօզա է (4636 մեղր):

Զուիցերա դաշնակցութիւն մը կը ձևացնէ 22 գաւառ բաժնուած, որք են՝ Կրիզոն, Սէն-Կալլէն, Թիւրիզի, Շաֆհուզ, Յիւրիխ, Արկովի, Պալ, Ափփենցել, Կլարիս, Շուից, Ուրի, Ունդերլայտէն, Ծուկ, Լուցեռն, Սոլթօ, Պեռն. Ֆրիպուրկ. Նեօտալէ, Վալլէ, Վօս, Ճինեվաա և Դեզէն:

§ 2<sup>0</sup> — Հանձնային եւ երկրագործական բերք.

**1. Մեծաղբ.** Թէև Զուիցերա բաւական հանք ունի, բայց ընդհանրապէս տեղացիք բանեցնելու չեն պարապիր: Երկամը ժիւրա, կապարը և զլնկը Կրիզոններէն կը հանեն: Քանի մը տեղ կը գտնուի զառկաքար, բիսմութ, զատիկ և ծարիր:

Քանի մը ջրի ընծացք՝ ինչպէս Հոենոս, Աար և Ռէօս ոսկի կը թաւալեն: Վանակն հասարակ է: Շատ տեղուանք աղւոր կրանիքներ և մարմարիտներ կը տեսնուին: Ծծումբը առատ է: Աղը զլխաւորապէս Պէքս և Վօտ գաւառներուն մէջ, կիզակաւը շատ տեղուանք, և հրափայտը այլևայլ գաւառներու մէջ կը գտնուի: (1)

(1) Հանքային ջրերը բազմաթիւ են հոչակաւոր են Լուէի և Սալս (Վալլէ), Փէնձէրս (Սէն Կալլէն), Շինցնախ և Պոսէն (Արկովի), Սէն Մաուրից (Կրիզոն):

**2. Բոյսը.** — Այս լեռնային երկիրը վեց բուսաբերական գօտի կրնայ բաժնուիլ: 1<sup>0</sup> Որժերու գօտի. որ 600 մեղր բարձրութիւնը չանցնիր. — 2<sup>0</sup> Եղևնեաց, ցորենոյ և պարարտ զալարեաց մինչև 900 մեղր. — 3<sup>0</sup> ուփիներու. բովանդակելով նաև մարգեր, գարոյ և հաճարի մշակութիւնը, մինչև 1400 մեղր. — 4<sup>0</sup> շօճերու սօսեաց, համեմեղինի ինչուան 1800 մէղր. — 5<sup>0</sup> մարգերու կամ Ալպեանց ըսուած գօտիք, մինչև 2700 մեղր բարձրութեան ուր միայն կարճահասակ ծառեր կը մեծանան. — 6<sup>0</sup> յաւիտենական ձևանց գօտի, ուր միայն մամուռ, բաղեղ և բարբէկ կը բուսնի:

Արմտիք մասնաւորապէս՝ Լուցեռն, Ծուկ, Սոլթօր, Պալ, Շաֆֆուզ, Թիւրիզի, Պեռն և Ֆրիպուրկ գաւառները կը հասնին: Որժը լայնածաւալ մշակութեան նիւթ է Յիւրիխ, Վօտ, (յետին տեսակը Տերմակ է և յարգի) Սեն-Կալլէն, Արկովի. Վալլէ, Դիզէն և Նեօտալէ գաւառներուն մէջ: Ընդամենն 900,000 հարիւրալիղը գինի կ'ելլէ: Կարմիր գինիներուն մէջ ազնուագոյններն Դեօմէնի և Վիլդէնբուր (Յիւրիխ), Լալօյի (Վօտ), Գոդի և Գօրսէյի (Նեօտալէ) են:

Ծխախոտը մասնաւորապէս Վօտ գաւառին մէջ կը մշակուի: Պտուղները համեղ են և շատ գաւառներու մէջ կը գտնուին:

Լեռներու վրայ տեսակ տեսակ բժշկական տնկեր կը բուսնին, զորս զեղացիք կը ժողվեն և կը ծախեն:

**3. Կենդանիք.** — Արօտներու պարարտութիւնը բնականապէս կամնտու աղէկ ցեղեր և ընտիր արջառներ առաջ բերած են: Գրեթէ 990,000 եղջիրաւոր անասուն կայ: Հոչակաւոր է Շուիցի ցեղը, որ Շուից, Ունդերվալտէն, Լուցեռն, Ծուկ, Յիւրիխ, Ուրի, Արկովի, Վալլէ, Ափփենցել և Կրիզոնաց մէջ կը դարձանուին:

Նշանաւոր են Զուիցերայի կովերը, որ առատ կամ կուտան: Եղանակին համեմատ, կենդանիք զանազան գօտիներու տակ կ'արածին. երբեմն ձորերու մէջ, երբեմն լեռանց կողերուն վրայ կամ զազամանց մօտ: Շատ հիւղերու մէջ Կրիչէրի և Ալպեանց ըսուած պանիրները կը շնեն, մասնաւորապէս Ֆրի-

պուրկ, Պեռն, Վօտ, Կրիզօն և Դեզէն գաւառներուն մէջ (§ 6, 5<sup>0</sup>) Այժմերը բազմաթիւ են (400,000) և անկէ կաթ կուտան:

Ոչխարները միջին աստիճանի յարգ ունին և բաւական խոշոր բուրդ կուտան և են (1,500,000): Երկվարները զօրաւոր և կառածիզ են: Ասոնք մասնաւորապէս Ժիւրայի մէջ կը դարմանուին:

§ 3<sup>0</sup> — Նաւարկելի և նաւթակեր.

Ջրի ընթացք դժուարաւ նաւարկելի են Ջուիցերայի մէջ, լեռներու մէջէն և զառ ի թափ տեղերէ անցնելնուն պատճառաւ: Միայն Աար միւս գետերէն աւելի տափարակ երկիրներէ անցնելով լի է նաւերու բազմութեամբ: Հոնտոնաւարկելի է Շաֆֆուզի սահանքին պատճառաւ: Լճերը շատ օգուտ ունին Ջուիցերայի մէջ, թէ վաճառաց և թէ ճանապարհորդաց անցուղարձին: Գլխաւոր լճերը երեք են՝ Լեմանի կամ ձինելվոնայի լիւն, Նեոսաղէլի լիւն և Յիւրիի լիւն: Կան նաև ուրիշ բանի մը երկրորդականներ, այսինքն Լուցեոն լիւն, Մօրադ, Պիեն, Վալէն և Պրիենց լճերը: Գօսդանցա լճին միջոցով բաւական առևտուր կը տեսնուի Գերմանիոյ և Ջուիցերայի մէջտեղ:

§ 4<sup>0</sup> — Երկաթուղիք.

Ջուիցերայի մէջ՝ վեց գլխաւոր ճամբայ կայ, և են.

Օլդընէ (1) Պալ:

Օլդընէ՝ Յիւրիի և անկից Սէն-Կալլէն և Գուար:

Օլդընէ՝ Լուցեոն և Տուկ:

Օլդընէ՝ Պեռնա և անկից Թոն, Ֆրիպուրկ և Լօզաննա:

Լօզաննայէ՝ Սիօն:

1 Օլդըն Սօլէօր նահանգին մէջ պատիկ բաղար մ'է, Աար գետոյն ձախալուցմբ, Աարպարկ բաղարէն 21 ասպարէզ դէպ ի հիւսիսային-արեւելք:

Օլդընէ՝ ձինելվոա, Սօլէօրէ, Նէօշաղէլէ և Լօզաննայէ անցնելով:

Ջուիցերայի երկաթուղիները Գաղղիական ցանցակերպին կը միանան երեք կէտերով, մէյմը Պալ, մէյմը Նէօշաղէլ և մէյմալ ձինելվոա:

Ջուիցերայի երկաթուղիք 1440 հզմր. տարածութիւն ունին:

Սէն Կօթար լեռան տակէն երկաթուղի մը անցընելու առաջարկութիւնը կայ, Գերմանիան իտալիոյ միացնելու համար:

§ 5<sup>0</sup> — Վաճառաքերտրիւն և Վաճառահանութիւն.

Մտնող ապրանքն են՝ նախնական նիւթեր, զործուած ապրանք. գաղթականաց նպար, երկաթեղէն և օճառ: Անզղիայէն կ'ընդունի բամբակ, բուրդ, մետաղ, մեքենայ, առատ նպար և մետաքս: Բրուսիայէն մետաղ, հանքածուխ, արմտիք, հիւսելի նիւթեր:

Իտալիայէն ձէթ, պտուղ, մետաքս, յարդ և զուճատու նիւթեր: Գաղղիայէն հիւսուածք, արմտիք, գինի, օճառ, զործիք և երկաթեղէն:

Վաճառամտութիւնն 465 միլիոն ֆրանկ է:

Ելլող ապրանքն են՝ ցորեն, պանիր, բիրշ-վասէր, մետաքսեայ և բամբակեայ հիւսուածք և ղերձան, անկուած, ժամացոյց, ոսկեղէն, յարդէ գլխարկ, փայտ, ծխախոտ, անողորկ կաշի, կարագ և ժապաւէն:

Ընդամենն 225 միլիոն ֆրանկ է:

§ 6<sup>0</sup> — Արոււսսֆ.

1. Միսսսսեղէն. — Ջուիցերայի մետաքսեղէնը օտար վաճառատեղիներ կը շրկուի և տարուէ տարի 10 միլիոն ֆրանկ

կը ներկայացնէ արտահանութիւնը: Ամբողջ մետաքսեղէնը 140 միլիոնի արժէք ունի: — Պալ և Յիւրիս այս ճիւղիս զլիսատեզիքն են և մեծ մանոցներ և ժապաւիւնի գործարաններ ունին: Շերասը Դեզէն գաւառին և Կրիզոններու մէջ կը դարձանուի:

**2. Բամբակեղէն.** — Բամբակեղէնը շատ աշխատաւորներ կ'զբաղեցնէ մասնաւորապէս Յիւրիս, ուր նկարէն կտաւներ կը շինուի, և Սէն—Կալլէն, Ալփիենցէլ և Կլարիս գաւառներուն մէջ՝ ուր արուեստաւորները գեղերու մէջ ցրուած են: Զուիցերայի մէջ գրեթէ 1,700,000 հիւստց (broche) կայ, բամբակեղէնը 100 միլիոն ֆունցի կ'ելլէ: Արտահանութիւնը 50 միլիոնը կ'անցնի:

**3. Յարդէ հիւսուածք.** — Յարդէ հիւսուածները շատ գաւառներու մէջ կը շինուին, մասնաւորապէս Վօհլէն (Արկօվիոյ մէջ): Արտահանութիւնը տարին 13 միլիոն ֆունցի կ'ելլէ:

**4. Ժամացոյց.** — Ժամացոյցագործութիւնը, ծաղկեալ արուեստագիտութիւն մ'է և մասնաւորապէս արեւմտեան գաւառաց մէջ բազմամիւ գործաւորներ կ'զբաղեցնէ: Ճիննվուա՝ գրպանի ժամացոյցներու համար անուանի գործարաններ ունի, յետոյ կուզան Վօտ և Նէօշաղէլ գաւառները: Շօտըֆոն և Լօբը, Ժիւրայի բարձրագոյն մասերուն մէջ (Նէօշաղէլի գաւառը) անուանի եղած են իրենց ժամացոյցներուն տարեկան թուոյն և կատարելութեանը համար: Զուիցերական ժամացոյցներուն թիւն տարին 400,000ի կ'ելլէ:

**5. Պանիր.** — Կրիսլէր ըստած պանիրը, որ արտահանութեան զլիսաւոր նիւթ մէ միայն Կրիսլէր (գաւառ Ֆրիպուրիայ) չշինուի, հապա բոլոր Զուիցերա: Սաննէն և Լամէն նահանգները Իւրզէրէն (Ուրի գաւառը) խիստ ազնիւ պանիրներ կը հայթայթեն: Հոչակաւոր են Վօտ գաւառին մակարած պանիրները (fromages crêmeux) և Կլարիս գաւառին կանաչ պանիրները: Պանիրները մասնաւորապէս գեղացիք կը շինենիրենց շալէ անուամբ գեղեցիկ հիւղերուն մէջ, սակայն տեղ տեղ ալ մասնաւոր գործարաններ կան:

§ 7<sup>o</sup> — Վաճառաշահ գլխաւոր ֆաղափ.

**Շաճնուզ** կամ Շաճնուզէն. (7000 բն.) Հռենոսի աշ փանց վրայ և Զուիցերայի հիւսիսային սահմանադրութիւնը: Վաճառականութիւն տեղացի զինւոյ, անցիկ վաճառաց Գերմանիոյ, ներքին Զուիցերայի և Գաղղիոյ մէջտեղ: Գործարան Հնդիկ կտաւու, Թղթոյ և ձուլածոյ պողպատի:

**Պալ** կամ Պազէլ կամ Պազիլէա (38,600 բն.) Մեծ բաղաք է Հռենոսի վրայ, այն տեղն ուր գետը ընթացքին գիրքը փոխելով՝ դէպ ի Հիւսիս կը վազէ: Զուիցերայի ամենէն վաճառաշահ քաղաքներէն մէկն է: Մթերանոց Զուիցերայի, Ամերիկոյ, Անգղիոյ, Գաղղիոյ, Հոլանտայի և Գերմանիոյ մէջտեղ: Ապրանքն ընդհանրապէս Հռենոսի ճամբով կ'երթան: Գործարան մետաքսեղինի, ժապաւիւնի, կտաւու, հնդիկ կտաւու, հնդկական ոճով Թաշիինակի, աղէկ Թղթոյ, զլխարկի, ազնիւ ձեռնոցներու են: Վաճառականութիւն ծխախոտոյ, կաշւոյ, նարտաներկութեան նիւթոց, ցորենոյ, գինւոյ, Թղթոյ և ձեռնոցի: Երկաթուղեաւ միացած է Գերմանիոյ, Յիւրիսի, Գօսդանցա լճին, Սէն-Կալլէնի, Լուկանոյի, Պէնի, Լոզաննայի, Ճիննվուայի, Գաղղիոյն:

**Աւար.** Արկովիոյ մէջ. գործարան մետաքսեղինի:

**Յիւրիս.** — (20,000) Համանուն լճին հիւսիսային ափանց վրայ, Լիմադ գետոյն բոխած տեղը: Գործարան բենեզի, մետաքսէ կերպասու, բամբակեղինի (§ 6. 2<sup>o</sup>) նարտաներկութեան են: Վաճառականութիւն ժապաւիւնի, մետաքսեայ Թաշկինակներու, սնդոյ, շարի, բամբակեղինի, բենեզի, հնդիկ կտաւու, չուխայի և մետաքսեղինի: Բաղբին մօտ՝ լճին վրայ մետաքսի շաղաք մը կայ:

**Տրուէնէլէս.** Թիւրկովիոյ մէջ. գործարան մետաքսեղինի:

**Սէն Կալլէն** կամ Սէն-Կալ. Գործարան բենեզի, վարագուրի (stors), չուխայի, բամբակեղինի, ազնիւ Թաշկինակի որ ինչուան Ամերիկա կ'երթայ: Վաճառականութիւն, մասնաւորապէս կտաւու:

**Ռօմանստօրց.** Գօսդանցա լճին վրայ՝ Զուխցերայի ամենէն բանուկ նաւահանգիստն է:

**Ս.Վիվեհցէլ.** Հանքային ջուր, գործարան կտաւու, բեհեզի, անկուածի և բամբակեղինի:

**Փուկ** կամ Յուկ. Համանուն լճին վրայ: Գործարան կտաւու և սուռեղինի: Վաճառականութիւն զինւոյ, ցորենոյ և շագանակի:

**Լուցէռն** կամ Լուչէռնա. — (12,000) Մանոց. վաճառականութիւն անցիկ վաճառոց, մասնաւորապէս Սէն-Կոմարի ճամբով՝ Իտալիոյ բրնձի, երկրին բերբերուն, գաղթականաց նպարի, մորթոյ բիրշվասէրի: Այս քաղաքս համանուն լճին հիւսիսային-արևմտեան կողմն կ'իյնայ:

**Սօլէօր.** — (46,000) Գործարան դանակեղինի, գլխարկի են:

**Պէռն.** — (30,000) Ասրի վրայ: Գործարան գոհարեղինի, ոսկեղինի, նուրբ յարդէ գլխարկներու, մետաքսեղինի, նարօտաներկութեանց, խաղախորդութեան, սպիտակ և ազնիւ կաշւոյ:

**Շօ քը Ֆօն.** — (17,000) Նէօշաղէլ գաւառին մէջ Գաղղիոյ սահմանադիսին մօտ: Գործարան ժամացոյցի. վաճառականութիւն ասղնեգործոյ:

**Լօֆլ.** — (10,000) Նոյն ընդ վերինն:

**Նէօսաղէլ.** — (10,000) Համանուն լճին արևմտեան ափանց վրայ: Գործարան նկարէն կտաւու, չուխայի ասղնեգործոյ, ժամացոյցոյ, գոհարեղինի, թղթոյ, երկամէ թէլի, չորըլաղի, բրդէ և բամբակէ հիւսուածոց: Պղնձի հալոց: Ազնիւ կարմիր գինի, հասարակ ցորեն, երկամ: Հանքային ջուր: Նէօշաղէլի մօտ է Պիլո ուր ժամացոյցի գործարան կայ:

**Իվէրսէօն.** Նէօշաղէլի լճին հարաւային ծայրը, անկից կ'անցնի ձինեւոյի երկամուղին: Գործարան հնդիկ կտաւու, տզնիւ կաշւոյ, խեցեղինի: Վաճառականութիւն անցիկ ապրանք լճին միջոցով՝ երկրին զինւոյն և ապրանքս ր Գաղղիոյ հարաւային մասէն գերմանական Զուխցերայ կ'անցնին: Զերմուկը:

**Ֆրիպուրկ.** — (10,000) կամ Ֆրայպուրկ Մեծ և գեղեցիկ քաղաք. գործարան չուխայի, ներկի, գլխարկի, խաղախորդութեան: Բանուկ վաճառականութիւն արշառու, Կրիւլէր պանրոյ և փսիածի:

**Փուռն.** Համանուն լճին հիւսիսային ծայրը, հոս կը վերջանայ Պէռնէ ելլող երկամուղին:

**Լուկանօ.** Համանուն լճին և Իտալիոյ սահմանազլխոյն վրայ. անուանի են մետաքսի մանոցները:

**Գուար** կամ Խուր. Կրիզօններու մայրաքաղաքը, Հոննուսի վրայ, Դիրօլի հարաւային-արևմտեան կողմերը: Գերմանիոյ և Իտալիոյ մէջտեղ եղող անցիկ վաճառոց գլխատեղի մ'է:

**Լօսան** կամ Լոզաննա. (20,000) ձինեվոյի լճին մօտ, հիւսիսային կողմը: Գործարան կտաւու, չուխայի, խաղախորդութեան: Վաճառականութիւն չուխայի, ոսկերչութեան, գոհարեղինի, կաշւոյ:

**Ճընէւ** կամ ձինեւոյ. — (41,000) Զուխցերայի մեծագոյն քաղաքը՝ Հոննուսի, համանուն լճէն քլխամ տեղը: Նշանաւոր ժամացոյցներովը (§ 6, 4<sup>o</sup>.) որոնք տարին 100,000 ի կ'ելլեն: Գործարան մերինոսէ շալերու, բիւրեղի, գոհարեղինի, ժամացոյցի ապակւոյ, յախճապակւոյ վրայնկարի, կիտուածի և նկարէն կտաւու:

**Փարուժ.** ձինեւոյի հարաւային կողմը, Արվ գետոյն վրայ. գործարան յախճապակւոյ և ժամացոյցի:

**Վէվէյ.** ձինեվոյի լճին հիւսիսային-արևելեան կողմը, Վօտ գաւառին զինիներուն վաճառականութիւնը կ'ընէ:

§ 8<sup>o</sup>. — Դրամք, չափի եւ կշիռք.

Դրամքը նոյն են ընդ Գաղղիոյ. — Գերմանական մասանց մէջ, տէխմը, այսինքն տասնորդը Պաց կը կոչուի, և հարիւրորդը Ռափի: —

Մղոն.	13,29 առ աստիճան.	= հզմդր.	8,369.
Ասպարէզ	23,56 » »	= »	4,800.
Ոտք.		= հրիւրմդր.	30.
Մեծ կանգուն (stab)		= »	120
Կանգուն (elle)		= »	60
Լծակ (perche)		= »	300
Արտավար (juchart)		= Կալ	36
Մասս (հեղանիւթոց համար)		= Լիդր	1,5
Վիրդէլ (հնտոց համար)		= »	15,0
Լիպրա (pfund)		= Կրաժ	500
Լօթ, = <sup>1</sup> / <sub>32</sub> Լիպրայի		= »	15,65

Փոխանակութեան ընկերութիւնք. — 67 Դրամատուն: 230 Խնայութեան արկղ:

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Ա Ի Ս Տ Ր Ի Ա .

Լայնութեան աստիճան 48°.

Մկլթ. 623,000 □ հզմդր. — Բն. 35,600,000 աւձ. — Վճուկն. նաւ 753 և ձկնորսութեան 4600. — Տկռչիք. 8000. Ել. հզր. 20,000 հզմդր. խտութիւն մարդկան առ □ հզրմդ. 36 հոգիք:

§ 1<sup>o</sup> Նախագիտելիք. դիրք.

Աւստրիա՝ Եւրոպիոյ սիրտը կրնայ սեպուիլ: — Սահմանն է

հիւսիսէն Սարսոնիա, Բրուսիա, Լեհաստան և Ռուսաստան. արևելքէն Ռուսաստան և Մոլդաւիա. հարաւէն Վալաքիա, Օսմանեան պետութիւն և Ադրիական ծովը. արևմուտքէն Իտալիոյ թագաւորութիւնը, Զուիցերա և Պաւիերա:

Ադրիականը՝ Աւստրիոյ կայսրութեան շատ գաւառները կը պատէ. ինչպէս են Իսդրիա, Մաճառստանի ափուները և Տալմացիա. և այս գաւառաց ափանց վրայ Դրիէսդի և Ֆիումէյի ծոցերը և Գաղղարոյի բերանները կը ձևացնէ: Նշանակենք նաև Տալմացիոյ ծովափանց մօտ Իլլիրիական կղզիքը:

Գլխաւոր գետերն են հիւսիսային կողմը Վիսդուլա, Էլպա և Տնեպեր. Դանուբ մէջտեղուանքը և արևելեան կողմը. Իգօնցօ հարաւային-արևմտեան կողմը:

§ 2<sup>o</sup> — Բերք, հանք ևւ այլն .

1. Երկրագործութիւն և երկրագործական բերք. — Ընդհանրապէս երկրին մշակութիւնը յաշող է: Եւ սակայն Մաճառստանի դաշտավայրից մէջ բուն սոյթքներ և մեծամեծ ճահիճներ կան և ամենաբարձր լեբանց վրայ դաժան և ամայի զագամներ կը գտնուին, ինչպէս Դիրօլ և Տալմացիա՝ ուր մեծաւ մասամբ երկիրը ապառաժուտ և անմշակ է: Երկրին և բարեխառնութեան փոփոխութիւնները (միջին հաշուով հիւսիսայ 10<sup>o</sup>էն մինչև 15<sup>o</sup> ի հարաւ) այլևայլ բերքեր կ'ընծայեն. ցորենը գրեթէ ամեն տեղ կը հասնի, (մասնաւորապէս Կալլիցիա և Մաճառստան) վարսակ զլխաւորապէս Մաճառստան նաև զինի մասնաւորապէս Մաճառստանի մէջ, ուր 340,000 հարիւրակալ երկիր որոնց մշակութեան պահուած է. Եգիպտացորեն՝ Մաճառստան կն. գետնախնձոր մանաւանդ Պոհնմիա, Գարնիօլա, արշիդբուտիւն Աւստրիոյ և Գարնիդիա. Գայլուկ Պոհնմիոյ մէջ. խաղալից հետեր, ծխախոտ, բրբուժ, կանեփ, վուշ, պտղատու ծառեր (խնձորի, տանձի կն.) և պարարտողաբեր: Կայսրութեան մէկ մեծ մասն ծածկուած է շօնոյ, սօճույ,

փիւնոյ, ուիւոյ, մայրոյ, կալամախոյ, ցախի և կուենոյ անտառներով :

Տալմացիոյ մէջ ձիթենիք և բամբակը յաջողած են :

**2. Կենդանիք.** — Կովու և եզան բազմամիւ զուարներ կը գտնուի (16 միլիոն գլուխ) ձի 3-4 միլիոն, ոչխար 36 միլիոն: Կենդանիք՝ Մաճառստան, Իրանսիլվանիա, Մորավիա և Սլեզիա լաւ կը դարձանուին: Վայրենի կենդանիները (առջ, զայլ, լուսանուն, կզնաքիս, աղուէս, այծեամն) աղէկ մորձեր կուտան, որոնք վաճառականութեան մեծ նիւթ մ'են:

**3. Մեատ.** — Աւստրիոյ մէջ շատ հասն կայ. ոսկին կը զըտնուի Մաճառստանի և Իրանսիլվանիոյ մէջ և տարին 7 միլիոն ֆունց կը բերէ: Արծաթն ի Մաճառստան, Պոնեմիա և Իրանսիլվանիա: Կապար և զինկ՝ Մաճառստան և Գարինդիա: Պղինձ, Իլլիրիա, Պոնեմիա, Իրանսիլվանիա և Մաճառստան: Անագ՝ Պոնեմիա: Երկաթ՝ Սղիրիա, Գարինդիա, Մաճառստան, Պոնեմիա, ևն: Զառնիկ՝ Պոնեմիա: Ծարբաքար՝ Մաճառստան: Մնդիկ՝ Գարինդիա: Աւստրիոյ աղուճակի հանքերը աշխարհիս մէջ ամենէն ճոխերն են, և են ի Կալիցիա, Սալցպուրկ, և նաև Մաճառստան Իրանսիլվանիա և Դիրոլ: Հանքածուխ շատ կը գտնուի մանաւանդ Պոնեմիա, Մորավիա, Սղիրիա, Գարինդիա, Մաճառստան և Կալիցիա: Հողածուխ՝ ի Մաճառստան:

Պատուական քարերու մէջ անտանի են՝ Պոնեմիոյ յակինթները (մեղսսիկ), շափիւղաները և սուտակները և Կարպաթեան լեռանց արևակները:

Բազմամիւ են հանքային ջրերը՝ մանաւանդ Պոնեմիոյ մէջ, ուր են Սէտլիցի, Գարլսպատի, Դէփլիցի, Բուլնայի, Յրունցէնսպատի և Մարիէնսպատի ջրերը ևն:

§ 3<sup>o</sup> — Արուեստ.

Աւստրիական կայսրութեան զլխաւոր ճարտարարուեստը են՝ չուխա, ասուեղէն (ի Պոնեմիա, Մորավիա, Սլեզիա, արշի-

դըսուծիւն և Իրանսիլվանիա): Բամբակեղէն, վշեղէն և քժան (արշիդըսուծիւն, Դիրոլ): Ասղնեգործ (Պոնեմիա): Գորգ՝ (արշիդըսուծիւն): Դղակեղէն՝ (արշիդըսուծիւն Պոնեմիա): Մորթ և կաշի՝ (արշիդըսուծիւն, Մաճառստան, Կալիցիա, Իրանսիլվանիա, Սղիրիա, Մորավիա, Դիրոլ): Երկաթէ գործուածք, մասնաւորապէս հերկագործական գործիք, ձուլածոյք, մանզաղ, տապար, պողպատեղէն (Սղիրիա, Գարինդիա, Վերին-Աւստրիա, Պոնեմիա): Ոսկեղէն և աստղձագործութիւն (արշիդըսուծիւն, Դիրոլ): Երաժշտական և չափաբերական գործիք, գոհարեղէն և ոսկեղէն (Վիէննա): Կառք և պատճառանաց և զարդուց նիւթեր (Վիէննա): Փայտէ ժամացոյց և փայտէ մեքենաներ (Ալպեանց և ուրիշ լեռանց մէջ): Քիմիական արգասիք (Վիէննա, Բրակա ևն.): Յախճապակ (արշիդըսուծիւն, Պոնեմիա): Գարեջուր (Վիէննա, Կրաց, Պոնեմիա, Կալիցիա, Տալմացիա, Դրիէսդ և Իլլիրիոյ ծովափանց մօտ): Ճակնդեղի շաքար (արշիդըսուծիւն, Պոնեմիա ևն.): Ալիւր և մանր ձաւար որոնց աղէկ տեսակները Մաճառստանէ կուգան: Աւստրիական աղացուած գարին (ցրսսս, Նէմցէ արփասը) որ երկրին գարիէն կը շինուի (միայն Բէշշի ջաղացքը այս գարիէն տարուէ տարի միլիոնաւոր մէցէն կ'աղան (մէկ մէցէն Աւստրիոյ = լիդր 61 1/2): Ծխախոտոյ գործարանները գրեթէ 40 միլիոն հզրկրմ. կը բանին :

§ 4<sup>o</sup> Առեւտուր.

**Վաճառաբերութիւն.** — Մտնող ապրանքն են՝ բամբակ և օտար երկրի բերք, Հարաւոյ պտուղներ, ծխախոտ, եղ, արմտիք, Ռուսաստանի ասուեղէն, Գաղղիոյ զինի և ուրիշ ըմպելիք, բրինձ, ձուկ, միս. Անգղիոյ հանքածուխ, շինութեան փայտեր, խնկեղէն, դեղ, ներկ, նկարեղէն կտաններ, խէժ, ուտին և կռէզ, զիբք, փորագրութիւնք, տորոն, սունկ, բամբակեղէն և կռէզ, անօթեղէն, նորելուկ ապրանք, փերեզակաց ապրանք, թանկագին և ազնիւ բարեր, ծովափրփուր և յարգի մե-

տաղներ, հիւսելի նիւթեր, գործուածք և արուեստի նիւթեր, Փոքր Ասիոյ բերք են: —

Մտնող ապրանց բովանդակ արժէքը 968 միլիոն ֆռանգաց կը հասնի:

**Վաճառահանութիւնք.** — Արտահանութեան ապրանքն են՝ ցորեն, արմտիք, ալիւր, պտուղ, ծխախոտ, Մաճառստանի գինի, Վիէննայի, Կրացի, Դրիէսդի զարեշուր, ըմպելիք, մորթ, միս, շինութեան փայտ, քիմիական արգասիք, աղ, ներկ. նկարէն հիւսուածք, մետաղ, անողորկ ապրանք (բուրդ ևն.) չուխա, պատրաստ զգեստք, բամբակեղէն, մետաքսեղէն, հերկագործական գործիք և մետաղեայ գործուածք, մատենագրութեան և արուեստից նիւթեր, աղէկ հայելիներ, ապակեղէն, երամշտական գործիք. բողաս, կաշի, կապար, սնդիկ, գոհարեղէն, երկաթեղէն, ասուեղէն, շալ, կենդանական մուր կամ ոսկրածուխ, ոպնիասեղէն ևն:

Արտահանութեան բովանդակ արժէքը 1070 միլիոն ֆռանգաց կ'ելլէ:

Աւստրիոյ առևտուրը գլխաւորապէս Բրուսիոյ, Յոլֆէրայնի, Տաճկաստանի, Արևելից, Յունաստանի, Ռուսաստանի և Իտալիոյ հետ է: —

Յամաբային առևտուրը 1,200 միլիոն ֆռանգաց կ'ելլէ, իսկ ծովայինը 300 միլիոն ֆռանգաց:

Քանի մը տարիէ ի վեր Աւստրիոյ կայսրը վաճառականութեան մեծ ազատութիւն շնորհած է: — Ինքնակալութեան վիճակաց ներքին մաքսատուները ամբողջապէս վերցուցան. նախնական և անողորկ նիւթերը՝ մտից տուրքէ մեծաւ մասամբ զերծ եղան: Բոլոր բացարձակ արգելքը եղծանցան: Գետային նաւարկութիւնն ազատ է. թէ և Դանուբական ընկերութեան տրուած առանձնաշնորհութիւնը բարձաւ, և սակայն այն ընկերութիւնը միշտ յառաջադիմելու վրայ է: —

§ 5. — Հաղորդակցութեան միջոցներ.

**1. Նաւարկելի նամբանք.** — Կայսրութեան գլխաւոր նաւարկելի նամբան Դանուբ գետն է, որ բոլոր Արևմուտքէն մինչև արևելեան ծայրը կը կտրէ. և միջին Եւրոպիոյ և Տաճկաստանի վաճառական մեծ նամբան է ուր շատ շոգենաւներ կը շրջին: — Նաւարկութիւնը մեծաւ մասամբ Դանուբական ընկերութեան ձեռքն է, որ 100 շոգենաւէն աւելի ունի: —

Յետոյ կուգան Ինն, Էնս, Վաակ, Կրան, Թէյս, Դէմս, Մարու, Տրաւա, Մուր, Սալա, Գուլբա. ուրիշ շրջեղջից մէջ էլլալա՝ Վոյսա գետակցին հետ. Վիստուլա՝ իր գետակցացը հետ. Սան, Տուսայէ և Բորաս: —

Գոսդանցա լիճը՝ որ Հոնոսի ընդլայնում մ'է: Կուարսա լիճը՝ որ միայն հիւսիսային ափամբքը Աւստրիայն կ'եզերէ: —

Պալադոն լիճը՝ Մաճառստանի մէջ, շատ ճախճախուտ է և բիչ խորութիւն ունի նպաստաւոր նաւարկութիւն մ'ունենալու համար: —

Յրանուա ջրանցքը՝ որ գ'անուբ Թէյսի կը զօղէ, որոնք կայսրութեան ամենամեծ գետերն են: —

Պէկա ջրանցքը՝ որ Թէյսէն Դէմսա կ'երթայ: —

Ադրիական ծովը՝ Աւստրիական ափանց վրայ (Իլլիրիոյ և Տալմացիոյ ծովափունքը) շատ խորշեր, կղզիներ և թերակղզիներ կ'ընծայէ, որոնք ապահով նաւահանգիստներ և պատսպարեալ ծոցեր կը ձևացընեն, և որոնց բնակիչքը վարժ նաւաստիք են:

**2. Արկարուղիք.** — Վիէննա՝ Աւստրիական ցանցակերպին կեդրոնն է: Վիէննայէ վեց երկաթուղիք կը ճառագայթեն. Վիէննայէ՝ Տրևոլոն, Բրակայէ անցնելով և անտի Պէրլին: Վիէննայէ՝ Գրագովիա և Լէմպէրկ:

Վիէննայէ՝ Բէշո և անկից Տէպլէբցին և Թլմըշվար: Վիէննայէ՝ Դրիէսդ, Կրացէ անցնելով, և Դրիէսդէն Վերո-

նայի, Մանդուայի վրայ կը ձգուի, Վենետիկ հանդիպելով : Վիէննայէ՛ Վերօնա, Լինցէ, Սալցպուրկէ, Ինսպրուքէ, Պրէննէր կրճէն և Դրէնդէ անցնելով :

Վիէննայէ՛ Միւնիխ, Լինցէ և Սալցպուրկէ անցնելով, Կլումտէնի վրայ ճիւղով մը :

Երկամուղեաց բազմամիւ ճիւղեր Մաճառատանի մէջ սըփուուած են և մասնաւորապէս Դանուբը և Թէյսը կ'եզերեն :

Աւստրիական երկամուղեաց երկայնութիւնն այսօրուան օրս 7087 հազարամեղր է :

§ 6° — Գլխաւոր Աւաւահանգիստք.

Իլլիրիոյ ծովափանց վրայ նախ և առաջ մեր աչքը Դրիեսդ (Trieste) փառաւոր և բանուկ նաւահանգիստը կը նշմարէ, համանուն ծոցին խորը 70,000 բնակչաւ : Բազմամիւ վաճառական շոգենաւուց հանգստատեղին է :

Այս շոգենաւներէն շատը Աւստրիական Լլոյտ ընկերութեան ըլլալով Հնդկաստան Եգիպտոս և Միջերկրականի ամեն կողմը կը շրջին, և մասնաւորապէս հաղորդակցութիւն ունին Անգոնայի, Յոնիական կղզեագ, Մալդիւի, Սիկիլիոյ, Եւրոպիոյ և Ասիոյ Տանկաստանի, Եգիպտոսի և Յունաստանի հետ :

Գլխաւոր առևտուրը աւստրիական զաւառաց և Տանկաստանի հետ է :

Վաճառարերութիւնքն են շարք, խահուէ, բամբակ, ձէթ, բամբակեղէն, վուշ, ասուեղէն, անողորկ մետաքս, եղջիւր, ծովափրիուր, աղիք և Փոքր Ասիոյ բերք են :

Դրիէսդի նաւուց թիւն է 2500, նաւահանգստին շարժուիմ 1869 ին 4500 բարձեալ նաւ էր հեռաւոր ուղևորութեան համար և 12,000 նաւ ծովափանց և մերձեկայ բաղաբաց, գիւղօրէից և կղզեաց համար. Դրիէսդ նոյն աստիճանը ունի հարաւային Գերմանիոյ մէջ ինչ որ ունի Համպուրկ հիւսիսային Գերմանիոյ մէջ :

Իլլիրիոյ ծովափանց վրայ են նաև

**Ռօվինեօ և Բօլա.** Իսդրիա Թերակղզւոյն արևմտեան ափանց վրայ, աղէկ նաւահանգիստներ են՝ որ ամենամեծ նաւերը կրնան ընդունիլ : — Ազնիւ գինիներ : — Վերջապէս նշանաւոր է նաև Մաճառատանի ծովեզերքը, Քուարնէքօ ծոցին խորը :

**Ֆիումէ** նաւահանգիստը : — Գործարան ծխախոտոյ, մետաքսեղինի, ազնիւ թղթոյ : Եարարի զտարան :

**Յէնկ** կամ Սէնիա. Աւստրիական Տալմացիոյ պատսպարեալ և ամուր նաւահանգիստ :

**Ծարա.** Տալմացիոյ ամրագոյն և ամենէն ապահով նաւահանգստաց մէկը : Վաճառականութիւն բալզօլայ (marasquin) :

**Սրալպրօ.** Բանուկ նաւահանգիստ :

**Ռակուզա.** Անուանի նաւարաններ ունի, նաւահանգիստը Կրալօզա կամ Սանդա-Գրօշէ կ'անուանուի և բաղքէն չորս հազարամեղր հետու է :

**Գաղղարօ.** Գաղղարօյի բերան կոչուած ծոցին վրայ . Եւրոպիոյ ամենէն աղւոր և ընդարձակ նաւահանգիստներէն մէկը :

§ 7° — Ներքին վաճառաւախ եւ գլխաւոր քաղաքք.

Հարաւէն սկսեալ .

**Լէյպպիս.** — (23,000) Մետաքսեղինի և յախճապակեոյ գործարաններ : Մեծ առևտուր անցիկ ապրանաց :

**Ռօվէրէօ.** Թաւշոյ և մետաքսէ կերպասուց գործարաններով :

**Դրէնդ** կամ Դրէնդա. — Ատիճէի վրայ մետաքսի անուանի գործարաններով :

**Պօյէն** կամ Պօլսաճօ. Իտալիոյ և Աւստրիոյ մէջտեղ վաճառականութեան մթերանոց է և անուանի տօնավաճառներ ունի : Դիւրօլայ ամենէն վաճառաշահ քաղաքն է :

**Պրիսէն.** — Ազնիւ գինի ունի :

**Քլակեմենտը.** — Մայրաքաղաք Գարինդիոյ. չուխայի, բամբակեղինի, սպիտակաղեղի (լուստիւպէն) գործատուներուն: Շաքարի գտարան:

**Վիլլալա.** — (2700) Տրաւայի վրայ. ասոր մօտ են Դէփլիցի հանքային ջրերը: Երկաթի, պղնձի, կապարի բովբ: — Հանքերն տարուէ տարի 40,000 կենդինար կապար կը հայթայթեն:

**Կրաց.** — (80,000 բն.) Մայրաքաղաք Սղիրիոյ. երկաթեղինի, պողպատեղինի, խեցեղինի և չուխայի գործարտներուն. անուանի է գարեջուրը: — Մայրաքաղաքին և Դրիէսդի մէջ տեղ տեղի ունեցող առևտրոյն կեդրոնն է: —

**Քարլսլաս.** — Մանաւտանի հարաւակողմը: Գործարան կտաւու և ասուեղինի: —

**Պրուբ.** — Սղիրիոյ անմաքուր երկաթին զլխաւոր մձերանոցն է: —

**Սյպրնէրց.** — Երկաթի անհատնում բովբ ունի: —

**Պազիաս.** — Հոս կը վերջանան Աւստրիոյ հարաւային երկաթուղիքը: Ռուսէլիի երկաթուղին մինչև հոս սլտի հասնի: — Ստորին Դանուբայ համար նաւաչուումեան նաւահանգիստ է:

**Սէմլին կամ Շէմլին.** — Դանուբայ վրայ. Տանկաստանի հետ բանուկ առևտուր ունի:

**Քէլդվարսին.** — Աշխարհիս ամենէն ամուր քաղաքաց մէկը. պատուական է գինին:

**Նէւասց.** — (20,000 բն.) Վաճառատեղի Տանկաստանի և միջին Եւրոպիոյ մէջտեղ: — Դանուբայ շոգենաւներուն հանգստատեղիներէն մէկն է:

**Դրմսվար.** — (32,000) Գործարան մետաքսի, ասուեղինի, երկաթեղինի, թղթոյ, ծխախոտոյ և ձիթոյ: Շրջակայքը առատ գինի և փայտ կը մատակարարեն:

**Թէրեզիօքօլ կամ Թէրեմեոլաս.** (56,000 բն.) Բանուկ վաճառականութիւն արջառու, մորթոյ, ասուեղինի, կաշոյ և ծխախոտոյ:

**Արաս** (34,000) Մարոս գետոյն վրայ. վաճառականութիւն ցորենոյ և ուլեր: Արջառու մեծ վաճառանոց:

**Շցէկէսին կամ Սցէկէսին** (69,000 բն.) Թէյսի և Մարոսի միացման տեղը. մեծ վաճառականութիւն եղի, ազնիւ գինւոյ, ծխախոտոյ և փայտի:

**Կրովարսին.** (29,000) Ազնիւ մարմարիոնի քարահատ և հանքային աղբիւրներ ունի:

**Տէպրէցին.** (43,000 բն.) Արուեստական քաղաք է. (ասուեղէն, կաշի, մորթ, կոշիկ, օճառ, ծխքորշ, օշնան և աղբորակ): — Մեծ վաճառականութիւն ծխախոտոյ և արջառու: Մեծ տօնավաճառ:

**Պօֆաի.** Համբաւաւոր են գինիները: Չորս տեսակ են. առաջինը իսկուրիւն (essence) կը կոչուի և արեւն չորացած խաղողներէ կը պատրաստուի: Վիէնայի արքունիքը միմիայն տէր են այս այգեստաններու, և այս գինիները երբէք վաճառականութեան մէջ չեն մտներ և շատ սուղ են:

**Էրլա.** — Անուանի է գինին:

**Շէմցից և Քրէմցից.** — Դանուբայ ձախակողմը. Մաճառստանի ամենէն ճոխ արծաթի հանքն ունին: — Նշանաւոր են նաև ոսկոյ, պղնձի, կապարի, երկաթի և ծծմբոյ հանքը:

**Պուսա կամ Օմէն.** — (55,000) Դանուբայ աջ ափանց և

**Քեոլ կամ Բեւոլ.** — (205,000) ձախ ափանց վրայ: Երկու քաղաք որ հաւասարապէս Մաճառստանի մայրաքաղաքը կ'անուանուին և երկաթեայ կամրջով մը միացած են մէկմէկու: Առաջինը տար ջրոց բաղանիք և ազնիւ գինի ունի: Երկրորդը կարեւոր տօնավաճառներ ունի, Մաճառստանի առևտրոյն կեդրոնն է և մեծ վաճառատեղի ցորենոյ, արջառու և գինւոյ:

**Ռաապ կամ Կիէօր** — (20,000) Մեծ գործարան քացախի և առևտուր ցորենոյ: — Դանուբայ շոգենաւուց հանգստատեղիներէն մէկն է:

**Կրսն կամ Էսցերկօմ.** — Վաճառականութիւն գինւոյ և ցորենոյ: — **Գօֆօնն.** — Մեծ վաճառականութիւն գինւոյ:

**Բրէսպուրկ.** կամ Բօգօֆի. — (46,000) Արշիդքսութեան

սահմանազլխոյն մօտ. մեծ առևտուր կ'ընէ արշիղքսուքեան հետ:

**Օսէնգաւ: րկ** կամ Սօքրօնի. — Նշանաւոր արչառու և խոզի վաճառատեղիներովը:

**Վիւէննա** կամ Վիւն. — (607,000) Արշիղքսուքեան և Ստորին Աւստրիոյ մայրաքաղաքն է՝ Դանուբ գետոյն վրայ: Կայսերական գործարան հայելեաց, յախճապակոյ. գործարան թաւշոյ, մետաքսեղինի, նկարէն կտաւու, ժապաւիտու, ասեղի. ֆէսի, երկաթեղինի և զոհարեղինի, ծովափրփուրէ շինուածոց: Համբաւուտոր է գարեջուրը, չուխան, մոմը, դաշնակները և երաժշտական գործիքը:

Բանուկ վաճառականութիւն ունի Տաճկաստանի, Իտալիոյ և Ռուսաստանի հետ: Բարիգէ և Լոնտրայէ՝ Կոստանդնուպօլիս երթալու և դառնալու սովորական ճամբաներէն մէկն է:

**Պրուն.** — (73,000) Մորավիոյ մայրաքաղաքը, հոչակաւոր իւր յարգի չուխաներովը և մեքենայութիւնը:

**Պրօքաւ** կամ Դրուպաւ. — Մայրաքաղաք Սլեզիոյ բանուկ վաճառականութիւն ասուեղինի և բորածոյ նիւթերու:

**Ռայխէնգաւ: րկ.** — (15,000) Պոհեմիոյ մէջ. նշանաւոր՝ չուխայի, բամբակեայ կերպասուց, հիւսուածոց և երկաթէ գործուածոց գործարաններովը:

**Ռէփից.** — Անուանի է հանքային ջրերը, ինչպէս նաև

**Քարլսպաս** ի ջրերը որք առաջնոյն հարաւային-արևմտեան կողմը կ'իյնան:

**Քրակա.** — (157,000) Մայրաքաղաք Պոհեմիոյ, Մոլտաւ գետոյն վրայ կեղքոն մեծ վաճառականութեան: Գործատուն չուխայի, մետաքսեղինի, բամբակեղինի, ասղնեգործոյ, նարտաներկութեան, զոհարեղինի, ոսկեղինի, զլխարկի, խեցեղինի, գարեջրոյ, յախճապակոյ, դերձանի, ապակոյ և թղթոյ:

**Իկաւ.** — (18,000) Գործարան կերպասու. վաճառականութիւն ցորենոյ. Արծաթահանք:

**Լիւնց.** — (30,000) Դանուբայ վրայ. գործարան ասուեղինի, մետաքսեղինի և նկարէն կտաւու. համբաւուտոր են կապերտքը և ասուեղէնքը:

**Սդէլեր.** — Աւստրիոյ բովբերէն ելած երկաթը և պողպատը կը պատրաստէ և կը գործէ. անուանի է դանակեղէնը,

**Սալցպու: րկ.** — (20,000) Համանուն դքսութեան մայրաքաղաքը՝ ճոխ հանքաց մէջտեղ կանգնուած: Նշանաւոր է աղը և աւաւս: Վաճառականութիւն աղի, երկաթի, պղնձի և երկանաբարի: Գործատուն պողպատի և պղնձանի: Բովբը տարուէ տարի 880 կենդինար պղինձ, 26,860 երկաթ, 260,000 աղ և 1350 մարք արծաթ կուտան:

**Հէրմանցաւ.** — (18,000) Դրանսիլվանիոյ մէջ. չուխայի մեծ գործարաններ և բանուկ վաճառականութիւն:

**Քրօնցաւ.** — (28,000) Դրանսիլվանիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է և անուանի է ճարտարաւուեստիւքը (չուխա, հիւսուածք, փայտէ սրուակ ևն.):

**Քարլսպու: րկ.** կամ Ալպ Յուլիանէ. — Դրանսիլվանիոյ ամենէն ճոխ ոսկեանաց մէջտեղ:

**Քլաւզնգաւ: րկ** կամ Գօլոսլար. — (25,000) Դրանսիլվանիոյ մայրաքաղաքն է:

**Լէթօլ** կամ Լլօլ կամ Լէմպէրկ. — (87,000) Գալիցիոյ մայրաքաղաքը, մեծ տօնավաճառներով. Ռուսիոյ և Աւստրիոյ հետ յանձնարարութեան ընդարձակ առևտուր ունի: Ասոր մօտերը ծծմբոյ ճոխ հանք մը կայ:

**Պրօշ.** — (25,000) մեծ առևտուր ունի ռուսական Լեհաստանի, Աւստրիոյ, հարաւային Ռուսաստանի և Ռումանիոյ հետ:

**Պրաօփա.** — (49,000) Ժամանակաւ Լեհաստանի մայրաքաղաքն էր. սակայն 1846էն ի վեր Աւստրիոյ միացած է: Աւստրիոյ և Լեհաստանի մէջ՝ տեղի ունեցող առևտրոյն զլխաւոր մներանոցներէն մէկն է: Մեծ վաճառականութիւն կ'ըլլայ Մաճառաստանի զինւոյ, մեղրամոմոյ, խոզի մազի ևն: — Ասկից ութ հզարը. հետու են՝

**Շվոսցովիս** ի ծծմբոյ հանքը և գործատուները:

**Վիլիխա** և **Պօխնիա** — Անուանի են իրենց աղուճակի հանքովը, որոնք Եւրոպիոյ մէջ ամենէն ճոխերն են:

§ 8<sup>0</sup> Դրամք, չափի եւ կշիռք.

Դ Ր Ա Մ Ք

(1867 ի Սեպտեմբերի 19 ին մուրհակը):

Ոսկի	}	Քրօնէ	= Ֆռանգ	34,38	
		1/2 քրօնէ	= »	17,19	
Արծաթ	}	2 Ֆիօրին	= »	4,90	
		1 Ֆիօրին	= »	2,45	
		1/4 Ֆիօրին	= »	0,61	
		Ընկերակցութեան կրկին թալէն	= »	7,31	
		»	պարզ թալէն	= »	3,68

Ինչուան նաև ամենէն հասարակ առևտրական փոխանցութեանց մէջ միշտ դրամաթուղթը զործածական են որոնց արժէքը գրեթէ մէկ ֆիօրինէ մինչև հարիւր ֆիօրին կը տարբերի և ի շրջան դրուած են Վիեննայի Ազգային դրամատեղն որ Կայսրութեան զխաւոր փոխատուութեան ընկերութիւնն է:

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ա Կ Ա Ն Զ Ա Փ Ք

Գերմանիոյ աշխրհգրկն մղոն 15 առ աստն.	= հզմդր.	7,408
Աւստրիոյ սուրհանդից.	» 4 1/2, 6 1/2 —	» 7,586
Պոհնմիոյ մղոն	16, » —	» 6,953
Մաճառաստանի մղոն	13,2 —	» 8,344

Ա Ր Տ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն Զ Ա Փ Ք

Վիեննայի Իօխ	Կալ	57,598
Մէցէն = 1/2 Իօխ	»	28,799

Ե Ր Կ Ա Յ Ն Ո Ի Թ Ե Ա Ն Զ Ա Փ Ք

Ոտք (Ֆուս)	= հարիւրամեղր	34,602
Քլաֆդեր = 6 ոտք	= մեղր	4,896
Կանգուն ասուեղինաց (elle)	= հարիւրամեղր	77,920

Ը Ն Դ Ո Ի Ն Ա Կ Ո Ի Թ Ե Ա Ն Զ Ա Փ Ք

Այմր Աւստրիոյ	Լիդր	56,892
Այմր Ստորին Մաճառաստանի	»	56,892
Այմր Վերին Մաճառաստանի	»	73,316
Աւժալ Դօքայի	»	50,554
Դրիէտղի զինւոյ օճնա	»	56,564
Աւստրիոյ ցորենոյ մէցէն	»	61,500
Դրիէտղի ցորենոյ մէցէն	»	60,733
» » սղայօ	»	62,614
» » բօլօնիք	»	30,367

Կ Շ Ի Ո Ք

Յօլֆէրայնի լիպրա (ֆուլտ)	Կրամ	500,000
Վիեննայի լիպրա	»	560,012
Լօղ = 1/32 լիպրայի	»	17,500
Շղայն = 20 լիպրա		
Սաուս = 275 լիպրա		
Տակառաջափ (լասղ) = 20 կենդինար. (ֆուլտ Վիեննայի):		

Գ Լ Ո Ւ Խ Թ .

**ԿԱՅՄԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ**

ԿԱՄ

ԲՐՈՒՍԻԱ . ՅՕԼՖԷՐԱՅՆ . ՇԻՒՍԻԱՅՅԻՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ  
ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ . ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԵՐՄԱՆԻԱ . ԵՒ ԱԼՋԱՍ  
ԼՕՐԷՆԻ ՄԷԿ ՄԱՍԸ

Լայնութեան աստիճան 45° էն 55° հիւսիսային .  
ՄԿԼԹ . 544,450 հզմրր . □ և Ալգաս ու Լօրէնի մէկ մասն  
զրեթէ 6650 □ հզմրր :  
Բն . 51,580,000 անձ . Ալգաս և Լօրէնի մէկ մասը ի միասին :  
Վճուկն . նաւ 5110 . տկուչի . 1,344,700 :

§ 1° — Նշանակութիւն Յօլֆերայնի .

Յօլֆերայն ըսելով՝ (zoll մաքս, verein միութիւն) Գերմանական մաքսամիութիւնն կ'իմացուի, որ Գերմանական վիճակաց շատերը մէկմէկու կը միացնէ, բաց ի հանսէտղիբ կամ վաճառակից քաղաքացի, Համպուրկ, Լիւպէք, Պրէմէն, և Մէրլէմպուրկաց մեծ դքսութիւններէն :

Բրուսիա՝ զլուս եղաւ այս միութեան և 1819 տարւոյն՝ իր Տգամբքը ընդլայնեցուց զայն : Յօլֆերայնի սկզբան Պաւիերա, Վիւրդէմպէրկ և բանի մը փոքրիկ վիճակը ընդդիմանալ ուզեցին այս միութեան . որովհետև Բրուսիոյ բազուկը պիտի տիրէր իրենց վրայ : Եւ սակայն 1833 տարւոյն միաբան հաւանութեամբ ընդունեցան մաքսամիութիւնը : Միևնոյն տարին Սաքսոնիա նաև միացաւ . Պատէն և Նասսաւ դքսութիւնն ալ 1835

ին : Ֆրանգֆիւրդ-օն-Մայնը միացաւ 1836 ին, ուրիշ բանի մը փոքր նահանգը ևս անգամ եղան 1841 ին . Լիւքսեմպուրկայ մեծ դքսութիւնն ալ 1842 ին միացաւ : Վերջապէս մնացեալ ղէմ կեցող գաւառներն ալ 1851—1854 ին միաբանեցան մաքսամիութեան հետ :

Յօլֆերայնը՝ Գերմանական ամեն մտնող և ելլող ապրանսաց վրայ միևնոյն տուրքը կը դնէ : — Այս միութիւնը մեծամեծ ծառայութիւններ կը մատուցանէ, չէ թէ միայն Գերմանիոյ, հապանակ բոլոր Եւրոպիոյ : Առևտրական փոխանցութիւնը որ ժամանակաւ այլևայլ դքսութեանց և կառավարութեանց մաքսատամբքը խափանուած էին այսօրուան օրս առանց դժուարութեան կը կատարին, մաքսամիութեան շնորհած զիրին միջոցներով :

Յօլֆերայնը այսօրուան օրս 37 միլիոն անձ կը բովանդակէ : Յօլֆերայնի վիճակքն են զլիւսւորապէս Բրուսիա, որ քսան ուրիշ վիճակներով Հիւսիսային Գերմանիոյ ղաւեակցութիւնն կը ձևացնէ :

§ 2° — Բրուսիա եւ հիւսիսային Գերմանիոյ  
դաշնակցութիւն .

Դիրբ եւ սահման . — Սահմանն է հիւսիսէն Պալդիկ ծով, Ենդլանտ և Հիւսիսային ծով . — արևմտէն՝ Ստորին-Նահանգք և Պելճիա . — հարաւէն Պատէն , Պաւարիա և Պոհեմիա . — Արևելքէն Ռուսաստան :

Վերոյիշեալ 21 գաւառաց բնակիչքը, որոնք հիւսիսային Գերմանիոյ Դաշնակցութիւնը կը ձևացնեն 29,900,000 անձ հաշուած էր 1867 տարւոյն :

Այս գաւառաց անուանքն հետևեալք են՝

1. Թագաւորութիւն Բրուսիոյ :
2. » » Սաքսոնիոյ :
3. Մեծ-Գիսլութիւն Մէլիպուրկ-Շվեյնից .

- 4. Մեծ-Գխութիւն Օյսէմպուրկ.
- 5. » Սաֆս-Վայմար.
- 6. » Մէկէպուրկ Սդեկից
- 7. Գխութիւն Պրուսսիի
- 8. » Անհալց.
- 9. » Սաֆս-Մայնիկէն
- 10. » Սաֆս-Գոպուրկ-Կօթա.
- 11. » Սաֆս-Այսէնպուրկ.
- 12. Պէտութիւն Լիբբէ-Տէդօլց.
- 13. » Վայստֆ.
- 14. » Շվայցպուրկ-Ռուսօլդաս.
- 15. » Շվարցպուրկ-Սօնսէրսիալդէն.
- 16. » Ռօյս-Կրայց.
- 17. » Ռօյս-Շլայց.
- 18. » Շալմպուրկ-Լիբբէ.
- 19. Ազաս քաղաք Համպուրկ.
- 20. » Լիպտֆ.
- 21. » Պրէմէն.

**Ա.** — **Թագաւորութիւն Բրուսիայ.** — Բրուսիոյ թագաւորութիւնը 1871-1872 ի պատերազմէն առաջ միայն ուժ զաւառ կը պարունակէր, այսինքն՝ բուն Բրուսիա (Արևելեան և արևմտեան Բրուսիա), Բօզէն, Սլեզիա, Բօմէրանիա, Պրանտէպուրկ, Բրուսիական Սաքսոնիա, Վէստֆալիա և Հռենոսական Բրուսիա: Հիմա բոլոր Գերմանական միութեան զլուխն անցած է և իր թագաւորը Գերմանիոյ կայսր կը կոչուի:

§ 3<sup>0</sup> — Գլխաւոր քաղաք և նաւահանգիստ  
վանատաշահի Բրուսիոյ.

**Քէօնիկսպերկ.** — (106,000) Բուն Բրուսիոյ մայրաքաղաքը, Ֆրիշէ-Հաֆ ծոցին վրայ, Բրէկէլի բերնին մօտ: — Մեծ

վաճառականութիւն ցորենոյ, օճառի, մետաքսեղինի, գարեջրոյ և բացում կաշոյ: Բազմամիւ գործարան զլիստորապէս ասուեղինի, բամբակեղինի, վշեղինի և մետաքսի. — զտարան շաքարի, խաղախորդարան: — Միայն պղտիկ նաւերը կրնայ ընդունիլ: Մեծ նաւերը՝

**Փիլաւ** կը կենան, որն որ Քէօնիկսպերկի բուն նաւահանգիստն է: Գեղեցիկ ասղեգործոյ գործարան. վաճառականութիւն թէյի և ցորենոյ:

**Մէմել.** — (18,000) Թագաւորութեան ամենէն հիւսիսային քաղաքն է Գուրիշէ-Հաֆին մտից վրայ. մեծ վաճառականութիւն փայտի և ցորենոյ:

**Փիլսիք.** — (17,000) Նիէմէնի վրայ: Մեծ վաճառականութիւն ցորենոյ, վշոյ, աղի, փայտի, մեղրամոմ. ևն:

**Էլպիկ.** — (28,000) Բազմամիւ գործարաններ. վաճառականութիւն կանեփի, վշոյ և բողասի:

**Տանցիկ.** — (90,000) Եւրոպիոյ ընդարձակագոյն քաղաքաց մէկը և բոլոր Հիւսիսոյ վաճառականութեան հուշակաւոր նաւահանգիստ: Բոլոր աշխարհիս մէջ՝ ցորենոյ արտահանութեան ամենէն մեծ տեղերէն մէկն է: Վաճառականութիւն զաղթականութեանց նպարի, արտահանութիւն ցորենոյ, բողասի, օշնանի, կանեփի: — Նաւարան. — գործարան ասուեայ կերպասուց, արծաթամեղ և ոսկեմեղ երիզի, Տանցիկ անուն ըմպելոյ և այլոց ըմպելեաց: — Լեհաստան վաճառականութեան մթերանոցն է: Զտարան շաքարի, սսմեայ բանուածք, օղոյ թորանոց: — Նաւական շարժումը 4000 նաւ է և առևտուրը 125 միլիոն ֆրանկաց:

**Բօզէն.** — (53,000) Բանուկ վաճառականութիւն ցորենոյ, ասուի, շինութեան փայտի և երկրագործական բերոց:

**Ռավիլց և Պրօսպերկ.** — Բազմամիւ գործարան չուխայի, բանուկ վաճառականութիւն անցիկ սպրանաց:

**Պրէպաւ.** — (172,000) Սլեզիոյ մայրաքաղաքը Օտերի վրայ: Մեծ վաճառականութիւն ասուի և Սլեզիոյ կտաւուց զըլիստոր մթերանոցը: Բազմամիւ գործարան չուխայի, ասուեայ

և մետաքսեայ կերպասուց, Թղթոյ, գլխարկի և նարտաներկուծեան: Վաճառականութիւն հանրային բերոց, Մաճառատանի գինւոյ, տորոնի, կտաւու, վշոյ, չուխայի և բրդոյ: ]

**Կլօկաւ.** (18,000) Բազմամիւ գործարան մասնաւորապէս ճակնդեղի շաքարի: Վաճառականութիւն ցորենոյ:

**Կեօրից և Լիկնից.** — Առաջինն ունի գործարան չուխայի, կտաւու և զարեչրոյ: — Երկրորդը բամբակեղինի, կտաւու և ասղնեգործոյ և վաճառականութիւն տորոնի:

**Նայս.** (19,000) Գործարան կտաւու, չուխայի և նարտաներկուծեան:

**Սդեղդիւն.** — (74,000) Օտէրի վրայ Բոմբերանիոյ մայրաքաղաքը և այսօրուան օրս Բրուսիոյ վաճառականութեան գլխաւոր նաւահանգիստը: Գործարան գլխաւորապէս ասուեղինու, կերպասու, գլխարկի, բամբակեղինի, ժապաւինի, Թղթոյ, օճառի, կաշեղինի. գտարան շաքարի: Նշանաւոր են մանր ձաւարները (semoule): — Նաւարան:

Մեծ վաճառականութիւն ունի Մեծին-Բրիտանիոյ հետ, որուն շատ ցորեն և ոգելից նիւթեր կը ղրկէ, և փոխադարձաբար կ'ընդունի հանքածուխ և նպար: Կանոնաւոր սուրհանդակ շոգենաւներ կը միացընեն այս նաւահանգիստը Փեղրպուրկայ, Սոքրեիլի և Քորեննակի: — Ելումուտըը 4000 նաւ է (առանց ծովեզերեայ նաւարկութեան): — Առևտրոյն արժէքը 200 միլիոն ֆռանգաց է:

**Սդրալուս.** — (27,000) Պալդիկ ծովուն վրայ. գործարան կտաւու, ասուեղինի, անուշադրի, օղւոյ: Բանուկ վաճառականութիւն:

**Պէրլին.** (700,000) Մայրաքաղաք Բրուսիոյ և բոլոր Գերմանական կայսերութեան, Սրբի գետոյն վրայ (Հաւէլ գետոյն գետակցաց մէկը): Կէս դարէ ի վեր շատ ծաղկած է: — Նշանաւոր՝ զանազան և բազմամիւ գործատարքը, որոնց մէջ շատ անուանի են ձուլածոյ երկաթէ ընտիր գործուածքը որ bijouteries de Berlin կ'ըսուին. անուանի են նաև Թղթերը, յախճապակը և ներկերը: Նշանաւոր են նաև չուխան, մետաքսը,

բամբակեայ Թաւիշը, ասրը, կտաւը, կապերտը: Զտարան շաքարի: Գործարան ծխախոտոյ, ընտիր հայելեաց և կաշեղինու: Բազմամիւ երկաթուղիք կը միացընեն զինքը բոլոր Եւրոպիոյ:

**Քոցսալ.** — (43,000) Հաւէլի վրայ. — Թէև արուեստական բաղաք չսեպուիր, սակայն մետաքսեղինի, ասուեղինի, բամբակեղինի և կաշեղինի գործարաններ ունի:

**Փրանցգիւրդ-օն-Օսէր.** — (41,000) Գերմանացի և օտարազգի բերոց մեծ վաճառականութիւն ունի: Հոս տարին երեք անգամ երեւելի տօնավաճառ կ'ըլլայ՝ ուր Եւրոպիոյ ամեն կողմէն վաճառականք կը ղիմեն: Բանուկ վաճառականութիւն մուշտակեղինի, ցորենոյ և վշոյ:

**Մակէպուրկ.** — (79,000) Բանուկ վաճառականութիւն որ մեծաւ դիւրութեամբ կը կատարուի Էլպայի բազմամիւ նաւուց միջոցով: Գործարան ասուեղինի, ժապաւինու, մետաքսեղինի և սէրժի:

**Մէրսպուրկ և Նաւմպուրկ.** — Առաջինը նշանաւոր է զարեչրովը, և երկրորդը անուշահոտութեամբքը:

**Քուէլիկպուրկ.** — Անուանի են ըմպելիքը և զարեչուրը: **Հարպէրօդաս.** — (20,000) Գործարան կապերտի, ասուեղինի և ձեռնոցի:

**Մուլիաւզէն և Նորշաւզէն.** — Գործարան կապերտի, խոշոր կտաւու և ասուեղինի:

**Էրճուրդ.** — (42,000) Գործարան ասուեղինի, վշեղինի և հոջակեալ ժապաւինուց:

**Հանօվէր.** — Վաճառաշահ և արուեստական քաղաք: Գործարան նկարէն կտաւու. գտարան շաքարի:

**Ցայց.** — Ճոխ պղնձահանաց մօտ:

**Գլաւաղալ.** — Հարց անուով հանրային գաւառին մայրաքաղաքը. արծաթոյ և կապարի ճոխ հանքով:

**Լուկէպուրկ.** — (10,000) Արուեստական ծաղկեալ քաղաք, աղի խրամներով և աղային ջրով: Գործարան անօթեղինի, լամեղինի, ասղնեգործոյ: Բանուկ վաճառականութիւն ունի Հարաւային Գերմանիոյ, Համպուրկայ և Լիւպէլի հետ:

**Էմսէն.** — Հանօվէրի ամենէն վաճառաշահ քաղաքը: Նաւարանք: Գործարան առագաստի լաժի, դերձանի և ասեղի են:

**Օսնապուրու.** — (18,000) Նշանաւոր է խոշոր կտաւուքը որ «Օսնապուրկա» կ'անուանուին: Վաճառականութիւն կտաւուց, ապուխտի և երշիկի: Գործարան օճառի և ծխախոտոյ:

**Սլլոնա.** — (67,000) Վաճառաշահ մեծ քաղաք էլլայի վրայ, Համպուրկայ յանդիման՝ նաւարաններով և բազմամիւ գործատամբ: Զտարան շաքարի, գործարան մետաքսի, բամբակեայ կտաւուց, կաշեղինի, լարեղինի, գամբլոդի, չուխայի, զարեջրոյ, օղոյ և երկամեայ թելի. որս բինկայի և ձողածկան: Մեծ վաճառականութիւն անցիկ պարանաց և մմերի: — Դրամատուն աւանդի և փոխատուութեան, որ ի ներկայացման հատուցանելի դրամաճղժեր կը հանէ:

**Քիւլ կամ Քիլ.** — (24,000) Շէշգվիկ-Հոլշայնի շրանցքին արևելեան ծայրը վաճառաշահ նաւահանգիստ. անցիկ ապրանց մեծ վաճառականութիւն ունի:

**Յիլեսպուրկ.** (22,000) Համանուն ծոցին վրայ: Զտարան շաքարի, թորանոց, գործարան թղթոյ: Վաճառաշահ քաղաք:

**Գասսէլ.** — (22,000) Համանուն գաւառին մայրաքաղաքը. վաճառականութիւն շինութեան փայտի, կանեփի և զոհարեղինի: Գործարան յախճապակեոյ, մետաքսեղինի և ժապաւիտու:

**Զմալխան.** — Համբաւոր աղահանօք:

**Հանօու.** — (17,000) Գործարան չուխայի, ասուեղինի, մետաքսի, դերձանի, գլխարկի և յախճապակեոյ: Գերմանիոյ ամենէն պատուական ծխախոտը ունի:

**Վիլպպասէն.** — Հոչակաւոր չորս հանքային աղբիւրներովը:

**Ֆրանգէիւրդ-օն-Մայն.** — (78,000) Գործարան մետաքսեղինի, թաւչոյ, ասուեղինի, հնդիկ կտաւու, ձեւնոցի և երաժշտական գործեաց: Վաճառականութիւն Նորելուկ ապրանաց, զոհարեղինի, Հոննոսի զինւոյ, համբի և բովիճիչոյ:

Համպուրկէ և Հոլանտայէ՝ միջին Գերմանիա ղրկուող ապրանք ասկից կ'անցնին: Տարին երկու անգամ մեծ տոնավաճառ

կ'ըլլայ: — Այս քաղաքս մասնաւորապէս դրամական գործառնութեանց կողմանէ նշանաւոր է:

**Միւնսդեր.** — (28,000) Վաճառականութիւն Հոննոսի զինւոյ, ապխտոյ, զարեջրոյ, դերձանի և կերպասուց: Գործարան բամբակեայ կտաւուց:

**Միւնսէն.** — Գործատուն զարեջրոյ, օղոյ, մոնոյ և սև օճառի. արտահանութիւն ցորենոյ, վշոյ և դերձանի: Զտարան շաքարի, գործարան չուխայի և կտաւու:

**Տօրգմուս.** — ձոխ հանքաց մօտ:

**Թգէրլօն.** — (15,000) Նշանաւոր երկամեղինօքը, երկամեայ և արուրեայ թելերովը:

**Գօլօնը.** — (185,000) Հոննոսի վրայ վաճառաշահ մեծ քաղաք. նշանաւոր թորեցեալ ջրերովը որ Eau de Cologne կ'անուանուին: Գործարան բամբակեղինի, ժապաւիտու, թաւչոյ, ասղնեգործոյ և խեցեղինի:

**Գրէճէլլ.** — (54,000) Մետաքսեղինի, երկրի և ժապաւիտուց կողմանէ Բրուսիոյ ամենէն նշանաւոր քաղաքն է և Գերմանիոյ Լիօն կը կոչուի:

**Տուսէլսօրճ.** (63,000) Հոննոսի վրայ բանուկ վաճառականութիւն բրդոյ և մետաքսէ հիւսուածոց:

**Պօն.** (20,000) Գործարան բամբակեղինի, թորանոց արջասպի եղ, խեցեղէն և մետաքսեղէն:

**Գօպլէնց.** — (27,000) Գործարան ասուեղինի և բամբակեղինի, վաճառականութիւն զինւոյ և բրդոյ, կոածոյ երկամ:

**Էլպէրճէլլ** (65,000) և **Պարմէն.** — Առաջինը շատ արուեստական քաղաք է: Երկուքն ալ ունին գործարան դերձանի, բամբակի, մետաքսի, ասղնեգործոյ, մետաքսեայ և բամբակեայ կերպասուց, կտաւուց, ժապաւիտու, թղթոյ, դանակեղինի: Նշանաւոր են Տանկաստանի կարմիր ներկովը:

**Գրիւր կամ Գրէվ.** (22,000) Մօզելի վրայ: Բանուկ վաճառականութիւն ցորենոյ, Հոլանտայի փայտի և Մօզելի զինւոյ: Գործարան չուխայի, ասուեայ և վշեայ կերպասուց. կտաւու, հնդիկ կտաւու. անօթեղէն և կաշեղէն:

**Սախէն** կամ Էսլաւաբէլ. — (68,000) Նշանաւոր է հանրային շրերովը: Գործարան կաշւոյ, երկաթեայ թելերու, գնդասեղի, ասեղի, չուխայի, զագիմիրի, փերեզակաց ապրանսաց:

§ 4<sup>o</sup> — Հիւսիսային Գերմանիոյ 20 գաւառաց  
ֆանի նը գիսաւոր ֆախաֆ.

**Տրէզքն.** — (156,000) Սաքսոնիոյ մայրաքաղաքը՝ Էլպա գետոյն վրայ: Մեծամեծ գործարաններ ունի մասնաւորապէս շատ աղւոր յախճապակեղինի: Գործատուն նուրբ չուխայի, ժապաւինու, թղթոյ, ձեռնոցի, անկուածոց, հայելւոյ և կաշեղինի:

**Մայսէն.** — (10,000) Տրէզքոն հուշակաւոր յախճապակեղ գործարաններ ունի:

**Լայքցիկ.** — (91,000) Գերմանիոյ զրոց վաճառականութեան զլխաւոր քաղաքը, և նաև Գերմանիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է Սպիտակ Էլսդէրի վրայ: Տարին երեք անգամ մեծ տոնավաճառ կ'ըլլայ ուր կը ժողվուին վաճառականք Եւրոպիոյ ամեն կողմէն, և արևմտեան Ասիայէն: Վաճառականութիւն թաւշոյ, մետաքսեղինի կտաւու, մաղեմադիբական և բնագնական գործեաց ևն:

**Բլաւէն.** — (21,000) Գործարան հնդիկ կտաւու, բեհեզի և ասուեղինի: Բամբակեայ գործուածքը կատարելագործուած են:

**Յրայպէրկ.** — (21,000) Սաքսոնիոյ հանքային գաւառին մայրաքաղաքը: Գործարան արոյրէ գործուածոց. ոսկեայ և արծաթեայ թելեր, հիւսուածք և երիզ:

**Շէմնից.** — (59,000) Հուշակաւոր՝ բամբակեայ գզակեղինովը: Սաքսոնիոյ ամենէն արուեստական քաղաքն է: Մեծ վաճառականութիւն ապակեղինի: Մթերանոց Մակեղոնիոյ բամբակի, մանարան, գործարան բամբակեայ կտաւու և ասուեղինի:

**Կոհաւ և Միրանէ.** — Որոնք իրենց բամբակեղինովը Շէմնիցի կը հաւասարին:

**Սննապէրկ.** — (10,000) Գործարան ասղնեգործոյ, ժապաւինու, մետաքսեայ դերձանի: Շրջակայքը արծաթահանք և մարմարիտնի քարահատք կան:

**Յվիֆաւ.** — (25,000) Գործարան չուխայի, ասուեղինի, բամբակեայ կտաւու և կաշեղինի: Հուշակաւոր արծաթահանք և քարածխոյ մեծ բովը:

**Պոցէն** կամ Պուշիսէն. (12,000) Գործարան թղթոյ, բամբակեայ մանուածոց և ասուեղինի:

**Յիդդաւ.** (14,000) Մեծ վաճառականութիւն համբաւաւոր գարեջրոյ:

**Ռօսդօֆ.** — Մերլէմպուրկ Շվէրինի մէջ ծովային քաղաք է. բանուկ առևտուր ունի Պալդիկի քաղաքաց, Անգղիոյ և Գաղղիոյ հետ:

**Պուռնալիֆ.** — (51,000) Օբէրի վրայ, համանուն դքսութեան մայրաքաղաքն է: Մեծ վաճառականութիւն ասուեղինի, ցորենոյ, զինւոյ, դերձանի և եղինոտ խահուէի (café chicorée) Գործարան կտաւու, չուխայի, յախճապակեայ, խիւսացած թղթոյ (papier mâché) և վերնիճոտ թիթեղի:

**Վօլֆէնպալդէլ.** — (10,000) Օբէրի վրայ. դքսութեան երկրորդ քաղաքն: Արտահանութիւն վոյ, ցորենոյ, գայլուկի, փայտի, կանեփի, ասուի, դերձանի, կտաւու, երկաթեղինի, գարեջրոյ, կաշւոյ, յախճապակեայ և ապակեղինի:

**Վայմար.** — (14,000) Իւմ գետոյն վրայ. թէև վաճառաշահ քաղաք չէ, սակայն ունի բողոսի, աղբորակի և ասուեղինի գործարաններ:

**Սյզրնալ.** (12,000) Ասուեղինի ծաղկեալ արուեստ ունի:

**Կիսսդրօլ.** Նշանաւոր ցորենոյ և ասուի վաճառականութեամբը:

**Քէօրէն.** — Անհալդի մէջ. շաքարի գտարաններ ունի:

**Սօննէպէրկ** կամ Սօնէպէրկ. — Նշանաւոր հայելեօքը, երկաթեղինօքը և խաղալեօքը Սաքս-Մայնիներէն մէջ:

**Աղէնպուրկ.** — (18,000) Մաքս-Աղէնպուրկ զբոս-  
ձեան մայրաքաղաքը. ժապախնու բազմամիւ գործարաններ  
ունի. վաճառականութիւն ցորենոյ, արջառու և փայտի:

**Կօթա.** — (18,000) Մաքս-Գօպուրկ-Կօթա զբոսձեան մայ-  
քաքաղաքը Հայն գետոյն վրայ: Գործարան ասուեղինի, յախ-  
ճապակոյ և բամբակեղինի:

**Գօպուրկ.** — (14,000) Նոյն գաւառին մէջ. անուանի է  
գարեջուրը. գործարան յախճապակոյ:

**Տէղմօղ.** — Բազմամիւ գործարաններ ունի ծովափրիւրէ  
ծիբարշից:

**Արօլսէն.** — Հռչակաւոր հանքային ջրերովը:

§ 5° — Հանսեադիֆ կամ վաճառակից ֆադաֆֆ.

**Համպուրկ.** — (225,000) Գերմանիոյ ամենէն վաճառա-  
շահ նաւահանգիստն է Էլպայի բերանը՝ Բրուսիոյ Սագաւորու-  
թեան հիւսիսակողման կեղրոնը: Իր նաւահանգստին գործու-  
նէութիւնը, օտարազգաց բազմութիւնը, առևտրական յաջողա-  
կութիւնը և ապրանաց ընդարձակ պահարանները, այս բա-  
ղաքս աշխրհիս ամենէն վաճառաշահ քաղաքներէն մէկը ըլլած  
են: Համպուրկ՝ Գերմանիա անցնող անգղիացի և ամերիկացի  
ապրանաց մթերանոցն է: Արտահանութիւն ցորենոյ և Գերմա-  
նիոյ ամենայն բերոց: Վաճառաբերութիւն գաղթականաց նպա-  
րի և Եւրոպիոյ այլևայլ բերոց: Իրամատնական մեծամեծ գոր-  
ծանութիւնք: Զտարան շաքարի, գործարան չուխայի, հնդիկ  
կերպասու, մետաքսեղինի, ձկան եղի, գարեջրոյ, լարեղինի,  
գլխարկեղինի: Մեղրամոմոյ լուացանոց (blanchisseries): Վա-  
ճառական նաւերը թուով 500 են՝ 240,000 տակառաչափով:  
Այս քաղաքը իր նաւերը աշխրհիս ամեն կողմը կը ղրկէ և այլ  
և այլ բերքերէն զատ, գրեթէ բոլոր Գերմանիոյ սպառման հար-  
կաւոր խահուէն և շաքարը կ'ընդունի:

**Պուֆօհաւէն.** — Էլպայի բերանը և աշակողմը: Համ-  
պուրկայ կից նաւահանգիստ մ'է:

**Լիւպէէ.** — (37,000) Երեք վաճառակից քաղաքաց փոքրա-  
գոյնը և ամենէն հիւսիսայինն է Մէքլէնպուրկայ արևմտեան  
կողմը, Դրաւպայի վրայ՝ Պալդիկ ծովուն մօտ: Եւրոպիոյ ամե-  
նէն վաճառաշահ քաղաքաց մէկն է և ազատ: Հարաւոյ Պալ-  
դիկի հետ ունեցած առևտրոյն մթերանոցն է և մեծ վաճառա-  
կանութիւն ունի Տանիմարգայի, Շուետի և Ռուսաստանի հետ:  
Լիւպէք կ'ընդունի Գաղղիոյ գինիները և մետաքսեղէնը, Անգ-  
ղիոյ բամբակեղէնը և այլևայլ բերքը՝ օտար աշխարհաց նպար-  
ները: Եւ կ'արտադրէ Գերմանիոյ հերկագործական բերքը:  
Զտարան շաքարի, գործարան ասուեայ և մետաքսեայ կեր-  
պասուց, օճառի, առագաստի լամբի, սէկի ևն:

**Պրէմէն.** — (75,000) Վէզէրի վրայ, ազատ քաղաք Համ-  
պուրկայ և Օլտէնպուրկայ մէջտեղ: Եւրոպիոյ վաճառաշահ  
քաղաքաց մէկը և Գերմանիոյ ամենայն կողմանց վաճառակա-  
նութեան մթերանոցն է: Գործարան չուխայի, հասարակ և նկտ-  
րէն կտաւու, ասուեղինի, Սզոնոյ, անուանի գարեջրոյ: Զտա-  
րան շաքարի, օղոյ թորանոց: Վաճառականութիւնը գլխաւո-  
րապէս Ամերիկայի, Հնդկաստանի և Զինու հետ է: Կէտի որս:  
Վաճառաբերութիւնքն են ծխախոտ, խահուէ, շաքար, բամ-  
բակ, բրինձ, թէյ, համեմանք, Պորտոյի գինի, ձէթ, մորթ, կի-  
տու ձար, խունկ ևն: Արտահանութիւնքն են հունտ, ցորեն, կեր-  
պաս, ասր, բամբակեայ դիպակներ, մետաքսեղէն, ապակե-  
ղէն, երկամեղէն, խաղալիք և երկամ: Բազմութիւն Գերմանա-  
ցոց այս քաղքիս միջոցով Ամերիկա կը փոխադրին:

**Պրէմէրհաւէն.** — Վէզէրի բերանը, որ մինչև Պրէմէն ել-  
լալ չկրցող նաւերը կ'ընդունի:

§ 6° — Մեսադֆ րոյսֆ եւ կենդանիֆ.

**1. Մեսադֆ.** — Հանքային նիւթք առատապէս կը զըտ-  
նուին Գերմանիոյ մէջ. Անգղիայէն ետքը Եւրոպիոյ մէջ՝ Բրու-

սիա ամեն երկիրներէ աւելի հաճեաժուլս կը բերէ, և մասնա-  
 տորպէս Հոնոնոսական գաւառներէն (Սաարըպրուբ, Սաար-  
 լուի), Վէտոֆալիա և Սլեզիա գաւառներէն կեկէ: — Երկաթ,  
 կապար, արծաթ, պղինձ, զինկ ևն. առատապէս կը գտնուին  
 Հարցի մէջ (Հանսօլէր և Սարսոնիա գաւառները), Վէտոֆալիա,  
 Հոնոնոսական գաւառները և Սլեզիա:

Պալդիկի ծովափանց վրայ և մանաւանդ Գուրիշէ-Հաֆի և  
 Փրիշէ-Հաֆի եզերքը կը ժողուի այն հռչակաւոր ուտանալից  
 զոյացուածիւնն որ սաժ կը կոչուի և որ մեծաւ մասամբ Տան-  
 կաստան և արևելք կը զրկուի և հոն ծխարշից բերան կը շի-  
 նեն. սակայն ասոր գործածութիւնը օր ըստ օրէ նուազելու  
 վրայ է, և ծովափրփրէ ծխարշքը անոնց տեղը կը բռնեն ,  
 այս ետքիները զլիսաւորապէս Աւստրիա և Գերմանիա կը  
 գործուին (մասնաւորապէս Վիէննա):

Բրուսիա՝ 100 էն աւելի հանքային ջրեր ունի, որոնց մէջ  
 նշանաւոր են Էս-լա-Շարէլ, Վիզլատէն, Էմս, Սէլդերս և  
 Հոմպուրկ: Նոր ժամանակներուս՝ Բոմբրանիոյ մէջ Սդէղդինի  
 մօտ զուտ ժայռի աղի անհատնում խաւեր գտնուեցան և Սդէղ-  
 դինէ՝ ցած գնով նաւ կրնայ բարձուիլ:

**Չ. Բոյսլ.** — Անտառք և մացառուտք բազմաթիւ են Գեր-  
 մանիոյ մէջ, և ամենէն շատ գտնուող անտառային ծառերն են  
 եղևին, կաղամախ, ցախ և պիստակ: Այս յետին տարիներուն  
 մէջ՝ պտղատու ծառերը, երկրագործութեան կարևոր նիւթ մը  
 եղաւ, և որմը, շագանակը և նուշը աղէկ կը յաջողին Հոնոնոսի  
 հովտին մէջ, մինչդեռ խնձորը, տանձը, ընկոյզը և ծիրանը ա-  
 մեն տեղ հաւասարապէս կը յաջողին: Գինեբեր երկիրներու մէջ  
 ամենէն աւելի՝ Հոնոնոսական Բրուսիոյ, Նասսաւի և Հոնոն-  
 սական Պաւարիոյ մէջ մշակը մեծ խնամք կը տանին որձոց:  
 Հոնոնոսական գինիներուն ամենէն պատուականը Ռայնկաւ վի-  
 ճակէն կ'ելլէ, որն որ Նասսաւի մէջ բլրոց գօտի մ'է Հոնոնոսի  
 աշակողմը 25 մղոն երկայնութեամբ: Այս երկրիս մէջ Գերմա-  
 նիոյ գինիները Հօբ ընդհանուր անուէն կը կրեն. սակայն տե-  
 սակը բազմաթիւ են, ամենուն զլիսաւոր ընտրելութիւնն ըլ-

լալով իրենց հասոյ համը, հոտը և զարմացման արժանի դի-  
 մացկունութիւնը (1):

Վարսակը, Գերմանացուց ամենէն սիրած արմախիքն է և գետ-  
 նախնձորին հետ միաբան ժողովրդեան զլիսաւոր սնունդը կը  
 կազմէ. և սակայն ցորեան, գարի, հաճար, վուշ, կանեփ և ծխա-  
 խոտ առատապէս կը մշակուի: Վուշը և կանեփը Վէտոֆալիոյ  
 մէջ, ծխախոտը Սարսոնիոյ, Սլեզիոյ և Հէսսի մէջ: Գայլուկը  
 ամենուրեք կ'աճի: Շարարտ ճակնդեղը և մանաւանդ սպի-  
 տակ ճակնդեղը՝ ոչ Սլեզիոյ ճակնդեղ կ'անուանուի, մշակու-  
 թեան մեծ նիւթ մ'է մանաւանդ համանուն գաւառին մէջ: Այս  
 տնկին արմատէն շաքար հանելու գաղափարը Մարկաֆ Գեր-  
 մանացին ունեցաւ 1773 տարւոյն և 1800 ին Աշար Գաղղիացին  
 ի գործ դրաւ զայն և Գերմանիոյ մէջ՝ մտոնց այն արուեստը:  
 300 գործարան կը համրուի, որոնք տարուէ տարի ընդհանուր  
 սպառման՝ 200 միլիոն հազարալիւրմ ճակնդեղի շաքար կը  
 հասցընեն:

Բնակչաց  $\frac{3}{4}$  ըլլ հերկագործութեան կ'ընտրին և պէտք եղա-  
 ծէն աւելի ցորեն կը բուսնի՝ զորս նաւահանգստաց միջոցով օ-  
 տար երկիրներ կը զրկեն: Արօտները պարարտ են և ոչխարք,  
 այծք և երկարք աղէկ կը դարմանուին, և բուրդը արտահա-  
 նութեան մեծ նիւթ մը կը ձևացնէ: Մերիտսի ոչխարները լաւ  
 ընտանեցած են Սարսոնիոյ մէջ:

**Յ. Կենդանիք.** — Գերմանիոյ ամենէն ընտիր երկարները  
 բուն Բրուսիայէ, Հօլշթայնէ և Հանսօլէրէ կուգան: Եզերը ու-  
 ժեղ չեն, սակայն կովերը առատ կաթ կուտան: Արջառ բաւա-  
 կան կը գտնուի:

Բրուսիոյ ամենէն ընտիր ոչխարները՝ մերինոսները և Նէկ-  
 րէղդիներն են: Միայն իրենց բուրդը 150 միլիոն ֆունգ կը  
 բերէ: Ոչխարք մասնաւորապէս Սարսոնիա, Սլեզիա և Պրանտէ-

(1) Dr. Mackay. — Manual of modern geography mathe-  
 matical, physical and political.

պուրկ կը դարմանուին. իսկ խոզք ընդհակառակն Հռենոսական Բրուսիա և Վէսդֆալիա կը դարմանուին: Հաւելէնը սակաւա-  
ծիւ և տեսակաւ ստորին:

§ 7° — *Առեւտուր եւ արուեստք Հիւսիսային  
Գերմանիոյ. արտահանութիւնք եւ  
վաճառարեւութիւնք.*

1868 տարւոյն Յօլֆերայնը 27,319,000 թաւէն ընդունած էր. այսինքն՝ 102,448,000 ֆունդ: Այս գումարին 19,900,000 թաւէնը Բրուսիան ընդունած էր, 2,655,000 Սաքսոնիան, 1,407,000 Պաւարիան, 575,000 Վիւրթեմպերկը և 1,165,000 Պատէնը: — Ելէզովիկ-Հօլշտայնի և Հանսովերի նուսճմանէն ի վեր Բրուսիոյ վաճառական նաւերը աճեցան և 2450 ի հասան: Միևնոյն տարւոյն Բրուսիոյ և Հիւսիսային Գերմանիոյ նաւահանգստաց երթևեկութիւն ընող նաւուց թիւն էր 10420 նաւ 852,000 տկոչափով: Բրուսիոյ և Հիւսիսային Գերմանիոյ արտահանութեան սպրանքն են՝ ցորեն, փայտ, զանազան գինիներ, երկաւր, եղջիւրաւոր կենդանիք, շատ հանքածուխ, ասր, եղ, վուշ, գայլուկ, ծխախոտ, հանքային ջրեր, թորածոյ ըմպելիք, չուխա, տեսակ տեսակ դերձաններ, մետաքսեղէն, մորթ, երկամեայ, պղնձեայ և սրղպատեայ գործուածք, սաժ, փայտեայ ժամացոյց, խաղալիք, ժապաւէն, զիրք, բողաս, և գործարանաց ապրանք: Բրուսիայէ՝ Անգղիա անցնող ապրանքաց մէջ գլխաւորն է ցորեն՝ տարեկան 5 միլիոն սղերլին արժէքով և փայտ 1 միլիոն ոսկւոյ: Հանքածուխ ալ Գերմանիոյ այլ և այլ կողմանց, Գաղղիա և Զուիցերա կը ղրկէ: 1866 ին Բրուսիոյ հանքածխոյ բերքն 27,000,000 տակառաչափի էլած էր: Անգղիայէ Բրուսիա և Հիւսիսային Գերմանիա անցնող ապրանքն են՝ երկաթ (գործեալ և անգործ), ըրնկա, մանուած բամբակ և մետաքս: Գործատունք ընդարձակ և բազմաթիւ են.

բայց գլխաւորապէս տնական սպառմանց նիւթոց կը վերաբերին: Բրուսիոյ գործատանց արդեանց մէջ նշանաւոր են հիւսուածքը, մեքենայք, ճակնդեղի շաքար, յախճապակ, հողէ ամաններ, թուղթ, կաշի և երաժշտական գործիք են: Բամբակը մեծ գործունէութեամբ կը բանուի Էլպերֆէլտ և Պարմէն. վըշեղէնը Պրիւֆէլտ և Լիկնից. դանակեղէնը և զէնքը Սօլինկէն. մետաքսեղէնը և թաւիշը Գրէֆէլդ, ասուեղէնը Բոցտաւ. մինչդեռ Պերլին արուեստական գործեաց գլխատեղին է, այսինքն՝ «Պէրլինու ապրանք» գոհարեղինի, խաղալեաց, երաժշտական և փիլիսոփայական գործեաց են: Գարեջուր և թորածոյ ըմպելիք մեծաւ բանակութեամբ կը պատրաստուին կայսերութեան ամեն կողմը: Դաշնակցութեան միւս վիճակաց գլխաւոր արուեստքն են բամբակեղէն և ասուեղէն և «Տրէզտընի յախճապակ» Սաքսոնիոյ և Պրուսիայի մէջ. գարեջուր, կաշի, թուղթ, փայտեայ և յարդեայ ապրանք, վշեղէն, ևն. փոքրիկ վիճակաց մէջ:

§ 8° — *Հաղորդակցութեան միջոցք.*

1. **Նաւարկելի գետք եւ ջրանցք.** — Բրուսիոյ և Հիւսիսային Գերմանիոյ նաւելի գետերն են՝ Հռենոս, Էլպա, Վէզէր, Օտեր, Վիսդուլա, Բրէկէլ, Մէմէլ կամ Նիէմէն:

Բրուսիոյ և Հիւսիսային Գերմանիոյ այլևայլ վիճակաց նշանաւոր ջրանցքն են,

Քիլ կամ Նլէզովիկ-Հօլշտայնայ ջրանցքը, որ Պալդիկ ծովը Այտերի կը միացնէ որն որ Հիւսիսային ծովը կը թափի (առաջարկութիւն մը կայ Պալդիկէն մինչև Էլպայի բերանը ջրանցք մը բանալու, որուն մէջ ծանրաբեռն նաւեր ևս պիտի կարենան շրջիլ):

Ֆրիսիխ-Վիլհելմ ջրանցքը, Օտերի և Սրբիյի մէջտեղը: Եղեփէնից ջրանցքը, որ Էլպան Դրաւի կը միացնէ: Ֆրիսով ջրանցքը Հաւէլի և Օտերի մէջտեղը:

Հարաւային Գերմանիոյ վիճակաց նշանաւոր ջրի ընծացքն են Հոննոս՝ Մայն, Նէքար և Ռէկնից գետակցօքը: Դանուբ և իր գետակիցքը, Ին, Սալցախ, Ալզմիւլ ևն: Գոսդանցա լճին վրայ շատ նաւեր կը շրջին:

Հարաւային ամենէն մեծ ջրանցքն է Լուդովիկոս կամ Կարոլոս, որ Ռէկնիցը Ալզմիւլի կը միացնէ, որով ըսել կ'ըլլայ թէ նախ և առաջ Հոննոսը Դանուբայ կը միացընէ և յետոյ Հիւսիսային ծովը Սև ծովու:

**2. Երկարուղիք.** — Գերմանիա յամենայն կողմանց բազմաթիւ երկամուղեաց ցանցակերպներով կտրուած է. վեց զլիւսաւոր կեղրոն կը տեսնուի, այսինքն՝

Պէրլին. Բրուսիական ցանցակերպին կեղրոնը.

Վիէննա. Աւստրիական » »

Լայբցիք. Սաքսոն » »

Գասսէլ. —

Միւնիխ. —

Մայնս. —

1<sup>0</sup>. Պէրլին. — Եօթն երկամուղիք կը բաժնուին Պէրլինէ, և կ'երթան՝

Պէրլինէ՝ Սդէդդին.

Պէրլինէ՝ Տանցիկ և Քէօնիկսպէրկ.

Պէրլինէ՝ Գրագովիա, Պրէսլաւէ անցնելով.

Պէրլինէ՝ Տրէզտըն և անտի Վիէննա.

Պէրլինէ՝ Լայբցիք.

Պէրլինէ՝ Համպուրկ և Քիլ.

Պէրլինէ՝ Մակտէպուրկ և անտի Գոլօնեը:

2<sup>0</sup>. Վիէննա. — Տես Աւստրիա ( § 5, 2<sup>0</sup> ):

3<sup>0</sup>. Լայբցիք. — Հինգ երկամուղեաց կեղրոնն է, որոնք կ'երթան՝

Լայբցիքէ՝ Պէրլին.

Լայբցիքէ՝ Տրէզտըն.

Լայբցիքէ՝ Գասսէլ.

Լայբցիքէ՝ Պամպէրկ.

Լայբցիքէ՝ Մակտէպուրկ.

4<sup>0</sup>. Գասսէլ. — Ինն երկամուղեաց կեղրոնն է, որոնք կ'երթան՝ Գասսէլէ՝ Մակտէպուրկ և Պէրլին.

Գասսէլէ՝ Համպուրկ.

Գասսէլէ՝ Պրէմէն.

Գասսէլէ՝ Էմտէն.

Գասսէլէ՝ Գոլօնեը և Տուսէլտորֆ և անտի Պրիւսէլ.

Գասսէլէ՝ Գոպլէնց.

Գասսէլէ՝ Մայնս, Ֆրանգֆիւրդէ անցնելով.

Գասսէլէ՝ Պամպէրկ և անտի Վիէննա.

Գասսէլէ՝ Լայբցիք և անտի Տրէզտըն և Պրիւսլաւ:

5<sup>0</sup>. Միւնիխ. — Չորս երկամուղեաց կեղրոնն է, որոնք կ'երթան՝

Միւնիխէ՝ Լայբցիք, Ռադիզպօնայէ և Էկէրէ անցնելով.

Միւնիխէ՝ Սալցպուրկ } և անտի Վիէննա.

Միւնիխէ՝ Բասսաւ }

Միւնիխէ՝ Քէլ, Աւկսպուրկ, Ուլմ, Շդուդկարդ, Գարլսբուհէ և Ռասդատ քաղաքացմէ անցնելով: Այս գիծը Հոննոսի վրայ կառուցած փառաւոր երկամեայ կամրջոյ մը միջոցով՝ Ալզաս կը մտնայ, և Գաղղիական Բարիզ գացող արևելեան գծոյն կը միանայ:

6<sup>0</sup>. Մայնս. — Վեց երկամուղեաց կեղրոնն է որոնք կ'երթան՝

Մայնսէ՝ Պալ. Տարմշդատէ Գարլսբուհէյէ և Քէլէ անցնելով:

Մայնսէ՝ Գասսէլ, Ֆրանգֆիւրդէ անցնելով, և անտի Պէրլին:

Մայնսէ՝ Պամպէրկ, Ֆրանգֆիւրդէ անցնելով, և անտի Վիէննա, Տրէզտըն և Լայբցիք:

Մայնսէ՝ Լանտո } և Գաղղիոյ արևելեան երկամուղ-

Մայնսէ՝ Սաարլարուբ } աց կը միանան:

Մայնսէ՝ Վէզէլ, Գոլօնեըյէ և Տուսէլտորֆէ անցնելով, և անտի Ռոդէրտամ և Ամլսդէրտամ:

Այս բազմաթիւ ուղիք բանի մը մեծ հաղորդակցութեան զօժեր կը հաստատեն, որոնք աւելի մտադրութեան արժանի են և են՝ Պէրլինէ՛ Վիէննա, Տրէզտընէ՛ անցնելով:

Բարիզէ՛ Վիէննա, Քէլէ և Միւնխիսէ՛ անցնելով:  
Բարիզէ՛ Պէրլին. Շարլըռուա, Լիէժ, Լս-Լա-շաբէլ, Գօլօն-Ել, Միւնխէնէ, Հանսօլէր, և Մակտէպուրկ բաղաբացմէ անցնելով:

Բարիզէ՛ Վարսովիա, Ֆռանգֆիւրդէ և Տրէզտընէ՛ անցնելով:  
Դրիէսդէ՛ Հիւսիսային Գերմանիոյ հաւանագատաց. այսինքն՝ Դրիէսդէ՛ Սդէզդին՝ Վիէննայէ, Պրէսլաւէ և Բօզէնէ՛ անցնելով:

Դրիէսդէ՛ Լիւպէք } Վիէննա, Բրակա, Լայբցիք և Մակտէ-  
Դրիէսդէ՛ Համպուրկ } պուրկէ անցնելով:

Դրիէսդէ՛ Պրէմէն. Վիէննա, Բրակա, Տրէզտըն, Լայբցիք և Հանսօլէր բաղաբացմէ՛ և կամ Վիէննա Պամպէրկ և Գասպէլէ անցնելով:

Դրիէսդէ՛ Օսդանտ և անտի Անզդիա. Վիէննա Պամպէրկ, Ֆրանգֆիւրդ, Գօլօնեք և Պրիւսէլէ՛ անցնելով:

Հիւսիսային Գերմանիոյ և Բրուսիոյ երկամուղիքը 11,577 հզմդր. երկայնք ունին:

Հարաւային Գերմանիոյ երկամուղիքը 4,290 հզմդր. ունին (1871):

§ 9<sup>o</sup> — Հարաւային Գերմանիա. նախագիտելիք

ասինսն եւ դիրք.

Հարաւային Գերմանիոյ սահմանն է հիւսիսային արեւմտքէն Մայն գետը, որով Բրուսիայէն կը բաժնուի: Արեւմտքէն Գաղ-զիա: Հարաւէն Զուիցերա և Դիրօլ: Արեւելքէն Վերին-Աւստրիա և Պոհեմիա. և բնակիչն է 8,567,000 անձ:

Հարաւային Գերմանիոյ վիճակքն են՝

Պաւարիա կամ Պաւիէրա. — Վիւրդէմպէրկ. — Պատէն. — Հէսս-Տարմշդատ. — Լիխտէնշդայն.

§ 10<sup>o</sup> — Դրիսաւոր փաղափ.

**Միւնխիս** կամ Միւնխէն. — (171,000) Պաւարիոյ մայրաքաղաքը, իզար գետոյն վրայ. նշանաւոր է գեղարուեստից և արուեստից մեծամեծ պալատներովը ևն: Գործարան կապերտի, մետաքսեայ ժապաւիտու, ակնեղինի: Վիմագրութիւնը հոս հընարուած է:

**Աւկապուրկ**. — (50,000) Պաւարիոյ հռչակաւոր քաղաքաց մէկը և Իտալիոյ ու Յունաստանի գիւնիներուն համար Գերմանիոյ գլխաւոր մթերանոցը: Դրամատնական և փոխատուութեան գործողութեանց մէջ Ֆրանգֆիւրդէ ետքը Աւկապուրկ կազայ: Գործարան նկարէն կտաւու, բամբակեղինի, մետաքսեղինի և ասուեղինի, ժամացոյցի և երամշտական ու մաղեմաղիքական գործեաց:

**Մէմփինկէն**. — Բանուկ վաճառականութիւն կերպատու: Մեծամեծ գործարանք վշեայ կտաւու, բամբակեղինի, ասուեղինի և Եղծոյ:

**Բասսաւ**. — (13,000) Ին գետոյն Դանուբայ միացման տեղը, աղի մեծ վաճառականութիւն Աւստրիոյ հետ:

**Սմպէրկ**. — (12,000) Երկամահանք և դարբնոց և զինուց գործարան:

**Անքախ**. — (13,000) Գործարան յախճապակուոյ, չուխայի, կերպատու, գլխարկի, երիզի և հայելուոյ:

**Շվապախ**. — (100,000) Վաճառականութիւն ասեղի, զնդասեղի, հնդիկ կտաւու, արծաթեայ և ոսկեայ թելերու, փայտեայ եղջիւրեայ, ոսկրեայ և արուրեայ գործուածոց, որ շրջակայքը կը գտնուին: Հռչակաւոր են գարեջուրը և ալիւրը:

**Էրլանկէն**. — (12,000) Գործարան ձեռնոցի, գլխարկի և նկարէն կտաւու:

**Պամպուլեղ.** —(26,000) Ռէկնիցի վրայ. մեծ վաճառականութիւն զինւոյ, պտղոյ, բանջարի, գայլուկի և մատուտակի: Երկամահանք, պղնձահանք են:

**Շվայցնուրդ.** — Մայն գետոյն վրայ. բանուկ վաճառականութիւն: Գործարան ասուեղինի, բողասի, զինեմբրոյ և բիմիական գործեաց: Հռչակաւոր են այլիքը: Երջակայքը առատ ցորեն, պտուղ, գետնածուխ, ընտիր ձիեր և մարմարիոն կը հասցընեն:

**Սբէյէր կամ Սբիւր** (15,000) Հռենոսի ձախ ափանց վրայ գործարան մեղրամոնոյ, մոնոյ և sel de saturne ի: Վաճառականութիւն շինուծեան փայտի, տորոնի և զինւոյ:

**Նիւրեմպեղ.** —(78,000) Բէկնիցի վրայ (որ Ռէկնիցի գետակիցն է). Խաղալեաց համար Գերմանիոյ գլխաւոր վաճառատեղին, և անուանի բազմամիւ զիւտերովը որ են ժամացոյց, ճօճանակ, օդային հրացան, երկամեայ թէլեր քաշելու կորգաններ (filière), հրազինուց գնդընկեցներ (batterie), պղնձեփոքք, սրինգ (clarinette), արոյր և Մարդին Պէհայմի շինած համբաւաւոր երկրագունտը: Մեծ վաճառականութիւն ունի Հոլանտայի հետ, և բազմամիւ գործարան երաժշտական ու մադեմադիբական գործեաց, դիտակներու, անպարարութիւն նիւծոց, խնդալեաց, պղնձեայ, երկամեայ և պողպատեայ այլ և այլ նիւծոց, զնդասեղի, ասեղի, գամի, յախնապակոյ, փերեզակաց ապրանհաց և աշխարհագրական տախտակներու:

**Շդուդիարդ.** —(76,000) Նէքարի գետակցաց մէջուն վրայ, բարբեր այգեստանաց մէջտեղ: Ծաղկեալ արուեստ. մշակութիւն որմոյ, մեծամեծ գործարանք մետաքսի, չուխայի, ասուի և բամբակի: Պողպատեայ գործուածք:

**Ուլմ.** —(25,000) Դանուբայ վրայ, որ հոսկից կ'սկսի նաւարկելի ըլլալ: Վաճառականութիւն կտաւու, ասուի, երկամի: Դանուբ իջնող ապրանհաց մթերանոցն է և մեծ վաճառականութիւն ունի Վիէնայի հետ: Լուացանոց կտաւուց. գործարան պղնձի, երկամի, կտաւու, կեղևեալ զարւոյ, պաքսիմամի, ծխախոտոյ և լուսափայտի:

**Յրիսրիլսաւէն.** —(2000) Գօսդանցա լճին վրայ բանուկ նաւահանգիստ և Վիւրդէմպէրկական երկամուղեաց հարաւային ծայրը:

**Հայսպրոն.** —(16,000) Նէքարի վրայ նաւահանգիստ. անուանի է չուխան և գլխարկը: Անցիկ ապրանհաց վաճառականութիւն Գաղղիոյ և Մաճանոստանի, Իտալիոյ և Հոլանտայի մէջտեղ:

**Գանդաս.** —(8000) Յաճախեալ բաղանիք: Մշակութիւն որմոյ. գործարան չուխայի, ծխախոտոյ և նարոտաներկութեան:

**Էպիմնկէն.** —(6000) Աշխարհածանօծ անուանի մեքենայից գործարաններ ունի: Կըբանուի նաև ասր, կտաւ, չուխա: Պատուական է զինին:

**Գարլուռիէ.** —(32,000) Գլխաւոր արուեստըն են շոգեշարժ տեղաշարժք. ծխախոտ, ժպպաւէն, մետաքս և բիմիական արգասիք, անուշադր, կահ կարասիք, անօթեղն և գորգ:

**Պասէն կամ Պասէն-Պասէն.** —(9000) Հանքային ջրոց աղբիւրներ, և հոչակաւոր բաղանիք:

**Մանրնիայն.** —(3½,000) Նէքարի և Հռենոսի միացման տեղը՝ բանուկ նաւահանգիստ: Մեծ վաճառականութիւն ծխախոտոյ, տորոնի, պտղոյ, հայելւոյ և կարմրացորենոյ (épeautre):

**Յրիպուրկ-օն-Պրիսկաւ.** — (21,000) Գերմաներէն Յրայպուրկ: Սև-Անտառին փայտերուն վաճառականութիւնը կ'ընէ:

**Գօնդուսց կամ Գօնդուս.** — Զուիցերայի սահմանագլխոց վրայ, ուր որ Հռենոսը Գօսդանցա լճէն կ'ելլէ Լաք-Էն-Ֆէրիէօր մտնելու համար: Մթերանոց մեծ վաճառականութեան ընդմէջ Գերմանիոյ և Զուիցերայի:

**Տարմեդաս.** —(31,000) Տարմ գետոյն վրայ: Գործարան կտաւու և ասուեայ կերպասուց:

**Մայսն կամ Մայնց.** — (43,000) Հռենոսի վրայ: Գետային բանուկ առևտուր, արտահանութիւն երկրին զինւոյն, պըտոյ, չուխայի, երկամի բամբակեղինի, ևն. զորս Հռենոսի ճամբով օտար աշխարհներ կըղրկէ. Գործարան կերպասու, կտա-

ու, սէրժի և յախճապակեոյ : Համբաւաւոր է ապուխտը :  
**Վօրմս**. — (12,000) Հռենոսի մօտ. մեծամեծ գործարանք  
 կաշոյ և սկիւ: Շրջակայքը գտնուող եկեղեցւոյ մը այգեստա-  
 նը Լիպճբուէնիլիս անուանուած պատուական զինին կուտայ  
 որ «Կարն կուսին» կը թարգմանուի:

**Օճճէնպախ**. — (20,000) Մայնոյ վրայ. արուեստական  
 բաղաբ՝ որ աշխարհահամբաւ կառքի գործարաններ ունի: Վա-  
 ճառականութիւն կաշոյ և ծխախոտոյ:

§ 11<sup>0</sup> — Հարաւային Գերմանիոյ մեաւորը,  
 բուսեղեկը եւ կենդանիք.

**1. Մեաւոր**. — Հարաւային Գերմանիոյ այլևայլ վիճակաց  
 զլխաւոր հանքային բերքն են: Պաւարիա. — աղ (ժամանակաւ  
 մենավաճառութիւնը տէրութեան ձեռքն էր), որ ժայռէ կը հա-  
 նեն շոգիացման միջոցով: Երկամ և հանքածուխ շատ տեղուանք.  
 պղինձ, մանկանէզ, սնդիկ և զոպալդ՝ Հռենոսական Պաւարիոյ  
 մէջ:

Վիւրդեմպէրկ. — աղ, երկամ և հանքածուխ առատ կը  
 գտնուին. պղինձ, կապար, պիզմուծ և մոլտաշաքար (malachite)  
 հազուագիւտ են:

Պասէնի հանքային բերքերն են՝ զլխաւորապէս պողլեղ,  
 ծծումբ, արծաթ, երկամ, պղինձ, կապար և հանքածուխ. ոս-  
 կելուացքը որ ժամանակաւ ընդհանուր արուեստ մ'էր Հռենոսի  
 երկայնքը, հիմա աննշան է:

Երկամ, հանքածուխ և աղ առատ է Հէսս-Տարմոցախի մէջ:  
 Բլխաւոր հանքային ջրերն են՝ Գիսպիկէն, Պրիւբէնաւ և Ռօ-  
 զլենիայմ Պաւարիոյ մէջ. Վիլսպաս՝ Վիւրդեմպէրկի մէջ. Պա-  
 սէն-Պասէն՝ Պատէնի մեծ զբտութեան մէջ:

**2. Բուսեղեկ**. — Հարաւային Գերմանիոյ հողոյն  $\frac{3}{5}$  բը  
 մշակուած և շատ բարեբեր է: Գրեթէ ամեն արմտիք ցած դաշ-

տերու մէջ կը բուսնին և ցորենը մեծաւ բանակութեամբ ար-  
 տահանութեան կ'երթայ: Որթը ոռատապէս կը մշակուի Հռե-  
 նոսի և Մայնոյ հովտաց մէջ և սակաւ ինչ Դանուբայ դաշտին  
 մէջ և Գոսդանցա լճին ափանց վրայ: Միայն Պատէն տարուէ  
 տարի 1½ միլիոն անգղիացի կալօն (1) պատուական զինի կու-  
 տայ. Վիւրդեմպէրկ գրեթէ 5 միլիոն կալօն (2). Հռենոսական  
 Պաւարիան մեծ համբաւ ստացած է իր Շոլայն եւ Լայպլէն ա-  
 նուն զինիներուն համար: Գայլուկը և ծխախոտը առատապէս  
 կ'աճի: Եւ Պաւարիան ի վաճառ կը հանէ մեծաւ բանակութեամբ  
 զարեջուր, գրեթէ 100 միլիոն կալօն տարուէ տարի իր բերքն  
 ըլլալով: Հարաւային Գերմանիոյ գրեթէ  $\frac{1}{3}$  բը անտառով ծած-  
 կուած է այսինքն՝ զլխաւորապէս մայրիք և շոճիք: Շվարցվալտ  
 (Սև-Սնտառ) Պատէնի մէջ մասնաւորապէս անտառի է իր  
 բարձրարեք ծառոց անտառներուն համար, որոնց բանի մը  
 տեսակը մինչև 180 Անգղիացի ոտք (մեղր 5½, 85) բարձրու-  
 թեան կը հասնին:

**3. Կենդանիք**. — Գալով ընտանի անասնոց՝ կենդանեաց  
 դարմանը Ալպեանց և այլ լեռնային վիճակաց բուն զբաղ-  
 մունքն է. մինչդեռ երիւարք, ոչխարք, ոչյարք բազմութեամբ  
 կ'աճին հարաւային գաւառաց մէջ: Շերասը ետքի տարիներուն  
 մէջ մտաւ Պաւարիա, և մեղուաց դարմանը Պատէնի մասնաւոր  
 պարագմանց մէկն է:

§ 12<sup>0</sup> — Առեւտուր եւ արուեստք.

Հարաւային Գերմանիոյ ամեն վիճակքն ալ ներքին ըլլալով  
 և ոչ մէկը իրաւունք ունի իր գրացին նախանձեղու, որովհե-  
 տեւ ամենն ալ հուստարապէս բանուկ և յաջող վաճառականու-

(1) Անգղիացի կալօն հեղանիւթոց — իրդ 4,543,438 :  
 (2) Dr. Mackay. — Manual of modern geography....



ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՓՔ

Մեծ մղոն (Մայլէ)	12 առ աստիճան	=	հզմր.	9,27
Հարկ. կամ աշխրհգրկն. մղոն	15 —	=	»	7,41
Մղոն Սաքսոնիոյ	12,2 —	=	»	9,00
Մղոն Բրուսիոյ	14,37—	=	»	7,75

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԱՓՔ

Ոտք (Ֆուս)	Պաւարիոյ	=	հրիւրմր.	29,10
—	Պրէմէնի	=	»	28,92
—	Պրունսվիբի	=	»	28,51
—	Ֆրանգֆիւրդ-օն-Մայնայ	=	»	28,65
—	Օլտէնպուրկայ	=	»	28,33
—	Բրուսիոյ	=	»	31,38
—	Սաքսոնիոյ	=	»	28,33
—	Հռենոսի	=	»	31,38
—	Վիւրդէմպերկայ	=	»	28,64
Շատ գործածական է նաև Բարիզու ոտք		=	»	32,48
Կանգուն (էլլէ) Պատէնի		=	»	60,00
—	Պաւարիոյ	=	»	83,30
—	Պրունսվիբի	=	»	57,07
—	Ֆրանգֆիւրդ-օն-Մայնայ	=	»	54,73
—	Համպուրկայ	=	»	57,30
—	Հէսս-Տարմըատայ	=	»	60,00
—	Բրուսիոյ	=	»	66,69
—	Սաքսոնիոյ	=	»	56,53
—	Վիւրդէմպերկայ	=	»	61,43

ՄԱԿԵՐԵՒՈՅԹ

Մօրկէն	Նիւրէմպերկայ (Պաւարիա)	=	Կալ	47,27
—	Համպուրկայ	=	»	96,52
—	Հանսվրայ	=	»	25,92
—	Բրուսիոյ	=	»	25,53

Մօրկէն Հռենոսի	=	»	25,53
Արտաշաի Սաքսոնիոյ	=	»	55,10

ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՓՔ

Այմր գինւոյ Միւնիխի (Պաւարիա)	=	Լիդր	37,02
Սդուպիւէն Պրէմէնի	=	»	3,20
Վիւրդէլ Ֆրանգֆիւրդ-օն-Մայնայ	=	»	7,37
Համ Համպուրկայ	=	»	144,78
— Հանսվրայ	=	»	155,55
Այմր Բրուսիոյ	=	»	68,69
Այմր Տրէզուրնի	=	«	67,64
Անբէր Մէրլէմպուրկայ	=	»	36,20
Մալդեր Ֆրանգֆիւրդ-օն-Մայնայ	=	»	107,98
Շէֆէլ Համպուրկայ	=	»	105,50
Հիմդէն Հանսվրայ	=	»	31,10
Շէֆէլ Մէրլէմպուրկայ	=	»	42,46
— Բրուսիոյ	=	»	54,94
— Վիւրդէմպերկայ	=	»	178,44
(60 շէֆէլ = 1 լատդ) :			

ԿՇԻՌՔ

Մարք Գոլծիոյ	=	Կրամ	233,77
— Բրուսիոյ	=	»	253,86
— Սաքսոնիոյ	=	»	233,45
— Վիւրդէմպերկայ	=	»	233,90
Լիպրա Պաւարիոյ	=	»	560,00
— Ֆրանգֆիւրդ-օն-Մայնայ	=	»	407,10
— Հանսվրայ	=	»	486,65
— Համպուրկայ	=	»	484,38
— Մէրլէմպուրկայ	=	»	483,28
— Բրուսիոյ	=	»	467,70

Լիպրա Սարսոնիոյ	=	Կրամ	467,14
— Վիւրդէմպէրկայ	=	»	467,74
— Յօլֆէրայնայ	=	»	500,00

**Ծանօթութիւն.** — Սյս յետին տարիներու մէջ Գաղղիական մեղրական դրուժիւնը ընդունելի եղած է Գերմանիա, և 1872 Յունուարի մէկէն ի վեր գործածական եղած պիտի ըլլան: Վերադասեալ պատկերացոյցս կը յայտնէ թէ ինչ աստիճան յարգ պիտի տան Գերմանացիք Գաղղիական մեղրական դրուժեան պարզութեանը:

**Բրուսիոյ փոխառուութեան ընկերութիւնք.** — Բրուսիոյ դրամատուն (օժանդակօքը ի Պրէսլաւ, Տանցիք, Բօզէն և Սղէզդին). — Տէրութեան առանձին դրամատուն. — Հանօվրայ դրամատուն. — Յրանգֆիւրդ-օն-Մայնայ դրամատուն:

**Յելրոդական Վիճակք.** — Համպուրկայ դրամատուն, Դրամատուն Լայքցիկի, դրամատուն Սարսոնիոյ (ի Տրէզտըն), Դրամատուն Պաւարիոյ (ի Միւնիխ). — Արքայական դրամատուն Նիւրէմպէրկայ:

§ 15<sup>o</sup> — Նոր usugուածք. Այգաս և Լօրէնի մեկ մասն.

1870—1871 տարիներու աղէտալի պատերազմներէն ետքը Գաղղիա հարկադրուեցաւ Այգաս և Լօրէնի մէկ մեծ մասը Գերմանիոյ ձգելու, որուն վաճառաշահ բաղաբք են:

**Եղրասպուրի կամ Սղրազպուր.** — (80,000) Վերին Հռենոսի մայրաքաղաքն էր, Հռենոսի ափանց մօտ և երկամուղոյ երկամեայ կամրջով մը միացած է Բէլլի, որ գետոյն ձախ ասփանց վրան է: Երկամուղեաւ հաղորդակցուժիւն ունի Բարիզու

և այլոց բաղաբաց հետ և Հռենոսի միջոցով Հիւսիսային ծովու և միջին Գերմանիոյ հետ: Բանուկ վաճառականութիւն ցորենոյ, կանեփի, գայլուկի, գինւոյ, տորոնի, կնճրակի, ծխախոտոյ, բամբակեայ դերձանի, հիւսուածոց, զինուց, երկամեղինի և քիմիական արգասեաց: Գործարան աշխարհահամբաւ ծովային կօշիկ սրունքի (tiges de mer) որ բոլոր աշխարհիս ինքը կը տարածէ: Հուխայի, կապերտի, կտաւու, մուշտակեղինի, զըլխարկի, ըմպելոյ, բրբմոյ, անխոնի, ճարպի և յախճապակոյ: Յովհաննէս Կուժէնպէրկ հոս գտած է տպագրութեան արուեստը:

**Մէց** (հինն Տիփօտուրում). — (50,000) Մօզէլի մայրաքաղաքը և Մօզէլի բնական և գործեալ բերոց մժերանոցը, այսինքն՝ ցորենոյ, ալեր, շինուժեան փայտի, կաշոյ, թաշոյ, յարդէ գլխարկի, անօժեղինի, Մարրըկմիւնի քիմիական լուսափայտից, Սէն-Լուիսի բիւրեղի ևն: Երկիրը ցորեն, գարի, վուշ, կանեփ կը բերէ: Գործարան օղւոյ, եղի, բայախի. ազնիւ գարեջուր: Գործարան սեղանի լաժի, թզժոյ, ըմպելոյ: Փերեզակաց ապրանք, չուխա, մետաքս, խեցեղէն, երկամ, ցորեն և զանազան կերպասներ: Մեծ վաճառականութիւն համեմի, բովիճէից, չուխայի, մետաքսի, յախճապակոյ, շարի, արուեստաշէն ծաղկանց, կարասուոյ, ստուարածղժոյ, կաշոյ, պողպատեղինի և գարեջրոյ:

**Գօլմար.** — (24,000) Գործարան նուրբ հնդիկ կտաւու, նկարէն կտաւու, սիամական կտաւու, չուխայի, թաշխիւնակի և գրակի: Վաճառատեղի ցորենոյ, ողելից ըմպելեաց, գաղթականաց նպարի, համեմի, բովիճէից, Հաւրի բամբակի, Բրուսիոյ հանրածխոյ և Պուրիօնեըլի ածխոյ:

**Սլոլիւզ.** — Վաճառականութիւն նկարէն կտաւու: Կիզակաւ: **Պիշվիլեր.** — Գործարան խոհանոցի անօժներու, կոածոյ երկամ և երկամէ թել:

**Նէպէրկիլեր.** — (12,000) Նշանաւոր հիւսուածօքը, զինուղը, և մեքենայի գործարաններովը. հնդիկ կտաւ, մետաքսեայ ժապաւէն, բամբակեայ կտաւ, չուխա և շաքարի զտարան:

**Մարրիֆ.** կամ Սէնդ Մարի օ Մին. — Նշանաւոր մանուածօրը և հիւսուածօրը և նկարէն կտաւուրը: Վաճառականութիւն կեռասեղրոյ: Արժամահանք, սղնձահանք և կապարի հանք:

**Յօսնիօճ.** — Նշանաւոր են չուխան ու երկամեղէնը:

**Մօլսիայմ.** — Լուացանոց կտաւու. զղակեղէն երկիրը Շարդիօզի զինին կը հայթայթէ՝ որ Հռենոսի ամենէն պատուական զինին է: Գործարան երկամէ գործուածոց և զինուոց:

**Քլիկէնքալ.** — Գործարան զինուոց և կարմիր պղնձոյ:

**Պար.** — Գործարան զինուոց, կաշուոյ և սպիտակ կաշուոյ: Շրջակայքը բարեբեր այգիներ կան:

**Նիսէլպրօն.** — Հանքային ջրեր ունի:

**Շաղօ-Սալէն.** — Շրջակայքը աղահանք կայ, որոնցմէ առած է իր անունը:

**Վիֆ.** — Աղուճակի ընդարձակ խաւեր կան:

**Թիօնվիլ** Գերմաներէն Տիսէննիօճէն. Մօզէլի վրայ: Գործարան զղակեղինի, խեցեղինի, մետաքսեղինի, փերեզակաց պարանաց և կերպասու:

**Սարրկըմին.** — Լօրէնի մէջ: Վաճառականութիւն ցորենոյ, պտղոյ, շինուծեան փայտի, կաշուոյ և նուրբ խեցեղինի:

**Մէն-Լուի.** — Անուանի են բիւրեղքը:

**Միլիուզ** Գերմաներէն Միլլիաւսէն. — (600.000) Ռօնէ՝ Ռէն գացող ջրանցքին վրայ. գործարան բամբակեղինի, նկարէն կտաւու և մեքենայի:

**Կրաճէնցաւէն.** — Տեղաշարժ մեքենայից գործարաններով:

**Երկարուլիֆ.** — Տես Գաղղիա (§ 7. 3<sup>0</sup> 7<sup>0</sup>):

## Գ Լ Ո Ւ Ն Ժ .

# Ս Պ Ա Ն Ի Ա Ե Ի Բ Ո Ր Դ Ո Ւ Գ Ա Լ



## Ս Պ Ա Ն Ի Ա



Լայնութեան աստիճան 40<sup>0</sup>.  
Մկթ. 465,000 □ հզմդր. — Բն. 16,000,000 անձ.  
Վճուկն. նաւ 4300 — Տկուչի. 390,700. ԵԼ. հզր. — 10,000 հզմդր.  
Խտուծիւն մարդկան առ □ հզրմդ. 36 հոգիք:

§ 1<sup>0</sup> — Նախագիտեղիֆ. դիրֆ, ֆաղափակաւ եւ քնակաւ բաժանուումիֆ .

Սպանիա՝ Բորդուզալի հետ Եւրոպիոյ հարաւային-արեւմտեան ծայրն ընդարձակ ցամաքակղզի մը կը ձևացընէ որ Իբերեան կը կոչուի: — Սահմանն է հիւսիսային-արեւելքէն Գաղղիա, արեւելքէն և հարաւային-արեւելքէն Միջերկրական ծովը, արեւմուտքէն Ատլանտեան ովկիանոսը և Բորդուզալ: Ճիպրալը անդուցը՝ որ Ատլանտեանը Միջերկրականի կը միացընէ, ցամաքակղզւոյն հարաւային ծայրը՝ Ափրիկիոյ հիւսիսային-արեւմտեան ծայրէն, կը բաժնէ: Սպանիա՝ կղզիացեալ ըլլալով, զոգցես թէ Եւրոպիոյ ընդհանրական ընթացքէն դուրս կը մնայ. բայց ծովային գեղեցիկ դիրքը, իւր 3000 հզմդր. տարածութեամբ ափունքը կը միացընեն զինքը աշխարհիս ամեն երկիրներուն և մասնաւորապէս Միջերկրականի բոլոր ափանց, Ափրիկիոյ,

արևմտեան Եւրոպայի և վերջապէս Ամերիկայի՝ որուն յանդիման կ'իյնայ: Ֆիցիսդէրա գլուխը՝ այս ցամաքակղզեոյս հիւսիսային-արևմտեան ծայրը կը ձևացընէ: Տա-Ռոզգա գլուխը (Լիսպոնայի մօտերը) արևմտեան յետին կէտն է: Գարիճա գլուխը ամենէն հարաւային կէտը և Գրեու հրուանդանը ամենէն հիւսիսային արևելեան ծայրն է:

Արևելեան-հարաւային կողմերը՝ օղը շատ տար է, արևմտեան կողմը մեղմ և բարեհաճոյ. հիւսիսային-արևմտեան կողմը խոնաւ, և մէջտեղուանքը բաւական ցուրտ, երկրին բարձրութեան պատճառաւ:

Սպանիա և Դ գաւառ կը բաժնուի, որոնցմէ շատերը իրենց մայրաքաղաքին անունը կը կրեն:

§ 2<sup>o</sup> — Եւրոպայի ընդհանրական բնութիւնը, մերիտոն, եւն.

**I. Բուսական բնութիւնը.** — Սպանիոյ մէջ երկրագործական բերքերը առատ են և շատ աւելի կրնան աճիլ: Գրեթէ ամեն տեղ ցորեն, վարսակ, գարի, եղիպտացորեն և կանեփ կը մշակուի: Ազնիւ է Սպանիոյ ցորենը: Լէոնի թագաւորութիւնը, Էսթրամադուրա, Գասդիլեա, Արակոնա, Անտալուսիա և Մուրսիա առատ ցորեն կը հասցընեն: Պիսգայա, Նաւարրա և Գաղաթնեա վարսակ կը հասցընեն. Կրանտա և Սեվիլեա թագաւորութիւնները (Անտալուսիոյ մէջ) ամենէն շատ գարի և նաև ցորեն կուտան՝ զորոնք արչառոց սննդեան կը գործածեն:

Զիբեցիները՝ ազնիւ եղ կուտան. թովային սամիթը (barille) օշնան կուտայ. բրինձ, շաքարի եղէգ, բամբակենի, անխոն, եղիպտացորեն, բրբուռ, եղջիւրենի թզենի, նոնենի, նարնջենի, կիտրոն, որթ, սպանիական գգիբ (sparte) անուանուած եղէգը՝ որմէ գգրեղէն հիւսուածք կը գործեն, ամենն ալ առատ են Միչելերիականի արհեստի վրայ գտնուող գաւառաց մէջ. մանաւանդ Վալենսիա, որ Սպանիոյ պարսէգ կը կոչուի: Արմաւենիները ևս այս թագաւորութեան մէջ անտառներ և պուրակներ կը ձևացընեն:

գաւորութեան մէջ անտառներ և պուրակներ կը ձևացընեն: Արմաւենները ազնիւ են:

Խահուէն և լեղակը հարաւային կողմերը ընտանեցած են: Ատլանտեանի մասն թէ և արևելեան ծովափանց պարարտ դալարիքը չունի սակայն լի է այգեստանով, ձիթենեօք, արմտեօք, տորոնով, բաղդ խոզկաղինով և կաղնոյ տեսակներով, որոնց վրայ որդան կարմիր կ'ապրի:

Հիւսիսային կողմերը, Արակոնա, Նաւարրա, Կալիսիա, ևն. մարգագետինք և անտառներ ունին. սակայն ընդհանրապէս խօսելով՝ Սպանիոյ մէջ քիչ անտառ կայ: Կալիսիա թէպէտև բարեբեր է, բայց ունի եղիպտացորեն, շագանակ, գետնախնձոր, վուշ և կանեփ: Հին և նոր Գասդիլեաները անբեր են, լի են ամայի դաշտեր, անապատ երկիրներ, խեղճ և զրեթէ չորացեալ դալարիք: Էսթրամադուրա՝ որ Հռովմայեցոց ժամանակ Սպանիոյ մթերանոցն եղած էր, հիմա ամենէն խեղճ գաւառն է:

Գիցիները՝ արտահանութեան մեծ ճիւղ մ'են և շատ աւելի կրնային ըլլալ եթէ այգեստաններու մշակութեան շաւիտով տարուէր: Անուանի են հետևեալ երկիրներուն զինիները այսինքն՝ Ալիզանդէլի Վալենսիոյ մէջ. Մալալա և Վելէգ-Մալալա Կրանտայի մէջ. Խուէրէս, Սանլուիա և Ռոզա (Անտալուսիա), Պ. Ճէյրըպ կը հաշուէ թէ (1844 ին) միայն Խուէրէսէն 40,000 տակառ գինի էլեր է, որոնց 18,000 է Անգղիա շրջուէր է: Գամբին (Գապրա, Լուկէնա) Գորտովայի մէջ. — Գարդանեա Մուրսիոյ մէջ. — Մանգարանէս և Վալսէ-Բէնա, Նոր Գասդիլիոյ մէջ. — Բերալդա Նաւարրայի մէջ. — Ռիպասավիլէ և Պէդանցոս Կալիսիոյ մէջ:

Սպանիոյ օշիները նաև արտահանութեան մեծ իւթ մ'են:

**2. Կենդանիք.** — Սպանիա մեծ հարստութիւն կը զիջէ իւր բրդերը վաճառելով: Մերիտոնները, շատ հուշակաւոր և յարգի ոչխարներ են: Հօտերը բոլոր ամառը թափառական կը շրջին, սակայն ձմեռը մեծ խնամօք փարախներու մէջ կը դարմանուին: Այս ցեղը երբեք դաս բաժնուած և Սպանիոյ այլևայլ

գաւառաց մէջ տարածուած է: Լաւագոյններն Cavage ի և Negrate ի ցեղերն են: Երրորդ ցեղ մը որ Souan կը կոչուի՝ ձմեռը Էսպրամատուրա, Անտալուսիա և Նոր Գասպիլիա կ'անցընէ: Մերինոսը գլխաւորապէս յերկուս կրնան բաժնուիլ. տեղա-կանգ և զնայումն: Տեղականը 8,000,000 զլուխ, և զնայունը գրեթէ 10,000,000: Յետինները Մետաղա ընկերութեան է՝ որ ընդարձակ կալուածներ և չսփազանց արտօնութիւններ ունի: Այն բուրդն յարգի է որուն վրայ միշտ սև կ'երևայ: Վասն զի փոշին՝ այս ոչխարիս յատուկ իւղոտ ստեին վրայ կը հանգչի և այն պատճառաւ սև կ'երևայ: Անփոփոխելի կերպով փորձուած է թէ՛ այնպիսի բուրդերուն ներքևը ամենամաքուր սպիտակ է: Սպանիոյ մէջ գրեթէ 4 միլիոն այժ կայ:

Եղջիւրաւոր անասունը քիչ կը գտնուին: Ամենէն աւելի Կալիսիոյ, Ասորբիասներու և Անտալուսիոյ մէջ կ'երևան: Ասորբիասներու կովերը պարարակ և կաթնտու են: Նոյն գաւառին մէջ փոքրիկ, կայտառ և թեթև նժոյզներ կան: Անտալուսիա փառաւոր ձիեր կը դարմանէ, որոնք արարական ցեղին կը յարաբերին: Վերոյիշեալ գաւառները և Լա Մանզա (Նոր Գասպիլիոյ հարաւակողմը) նշանաւոր են իրենց ջորիներովը, որոնք Սպանիոյ մէջ ձիէն աւելի կը գործածուին իբր զրաստ և նաև աշխատութեան համար: Կալիսիա և Լէոն գաւառները շատ խոզ կը դարմանեն, որոնց ապուխտը Սպանիոյ մէջ առաջին կարգի են: Այս անասնոց միւսը քաղցրահամ կ'ըլլայ՝ որովհետև անուշ խոզկաղինով կը սնանին:

Մեղր առատ է, Գուէնսայինն (Նոր Գասպիլիա) անուանի է: Ա. Սէլմի Իտալացի Առևտրական գիտութեանց ուսուցչին՝ մեղրի սպառման պատկերացուցին մէջ կը նշմարենք թէ՛ Սպանիոյ քնակչաց թիւը 14,000,000 ի կը հաշուէ և մեղրի սպառումը 43,680,000 հզկրմով կը ներկայացնէ, որով անձ զլուխ տարուէ տարի 3120 կրամ կ'իյնայ = 2 քաշ 435 հարիւրորդ քաշի :

Մարախի ամպեր երբեմն երբեմն Անտալուսիոյ և Էսպրէմատուրայի դաշտավայրքը կ'աւերեն և կ'ապականեն:

Սպանիոյ ծովափունքը ձկները կը վխտան: Գլխաւորապէս ործձուկ, աղկեր և անձրուկ կ'որսուի:

**Յ. Միւսալք.** — Հանքերու կողմանէ հարուստ է Սպանիա բայց ըստ արժանւոյն խնամք չեն տանիր և չեն բանեցըներ:

Ժամանակաւ շատ ոսկեհանք փորուած էին, սակայն հիմա երեսի վրայ ձգուած են:

Ամենէն անուանի բովքը կապարի են (ընդհանրապէս արծաթա-Յախառն) մասնաւորապէս Կրանատա, Մուրսիա, և Լէոն գաւառաց մէջ. — Սնդիկի յԱլմատէն, Լա Մանզայի մէջ. — Արծաթահանք ի Կուանզանալ, Սիէրրա-Մորենայի մէջ (Էսպրամատուրա). — Երկաթահանք ընտիր են շատ գաւառաց մէջ, նշանաւոր են Պիսգայայինը և Գաղալոնիայինը: Առատ պղինձ կը գտնուի, որոնց ամենէն ճոխ հաւաքածոյն (gisement) է ի Լուելվա (Անտալուսիա). — Հանգաձուխը, գլխաւորապէս Ասորբիասներու մէջ կը գտնուի, տարուէ տարի 4—500,000 մ. կ. ի կ'ելլայ. կան նաև Անտալուսիոյ, Հին Գասպիլիոյ, Արակոնայի և Գաղալոնիոյ մէջ: Sulfate de soude որուն բովքն Նաւարրայի և Հին Գասպիլիոյ մէջ կը բանին. — Քալամին (զինկի բրածոյ), Սանդանտէրի գաւառներուն մէջ (Հին Գասպիլիոյ հիւսիսակողմն) Պիսգայայի, Կիրուզգոայի և Մուրսիոյ մէջ կը գտնուին նաև զառիկ, անագ, մանկանէզ, աղւոր մարմարիտներ (Պիրենեանց մէջ են.), պորփիրու, աղուճակ Գաղալոնիոյ մէջ և աղի ճահիճներ Վալենսիոյ և Մուրսիոյ մէջ:

§ 5<sup>o</sup> — Ճարտարաբանութիւնք.

Սպանիոյ ճարտարարուեստը նոր ձևացած և զարգանալու վրայ են. և են՝ չուխա (Հին Գասպիլիոյ և Գաղալոնիոյ մէջ). աղւոր մետաքսեղէն (Վալենսիոյ մէջ). բամբակեղէն (Գաղալոնիա). երկաթէ և պղնձէ գործուածք (Պիսգայա և Գաղալոնիա, որոնց զարբնոցները անուանի են)՝ կապարի հալոցներ (Կրանատա և Մուրսիա). կաշի և մորթ (Անտալուսիա, Հին

Գասդիլիա և Գադալունիա). օժտու, անօթեղէն և մասնաւորապէս alcarrazas (Պալէարեան կրզիք, Նոր Գասդիլիա, ևն) : Գզրեղէն հիւսուածք (Վալենսիա). խցան (Գադալունիա). զըլխարկ, ծխախոտ ևն :

§ 4<sup>o</sup> — Հաղորդակցութեան միջոցք.

1. — Նաւարկելի նամբաներ. — Սպանիոյ մէջ խիստ բիչ հաղորդակցութեան միջոց կայ: Ամենէն նաւարկելի գետը Կուասալիվիլի է (1). Էպրօ լի է արգելքներով և խուժերով : Գալիօ բոլոր տարին նաւարկելի չէ: Կուասիանա ալ միայն 72 հազարամեղր միջոցի մէջ նաւելի է: Այս երկրիս համար ջրանցքէն հարկաւոր բան չկայ, բայց այն ալ դժբաղդաբար սակաւածիւ է: Ամենէն երկայն ջրանցքը Կայսեռականն է, որ Էպրօի կողմակի կ'իյնայ, Դուտէլլայէ՝ մինչև Սարակոսա : Գասդիլիա ջրանցքը՝ Էպրօն Տուրօյի կը միացընէ. Օլմէտօյի կամ Սեկովիոյ ջրանցքը և Գամբոսի ջրանցքը առաջնոյն ճիւղերն են: Հուլսգարի կամ Մուրսիոյ ջրանցքը՝ Կարդագինէն Կուատիանայի կը միացընէ: Սան Գարսուի ջրանցքը՝ Էպրօի բերնին պակասաւոր նաւարկութիւնը լեցնելով՝ նաւերը մինչև Դորդոգա կը տանի: Ալպասէղ ջրանցքը Դորդոգայէ Եուզար կ'երթայ:

Ոռոգման շատ ջրանցքներ՝ իրենց ջուրը Սպանիոյ գետերէն կ'առնուն, թէև երկրագործութեան օգուտ ունին բայց նաւարկութեան մեծ փնաս կը հասցընեն:

2. Երկարուղիք. — Սպանիոյ երկամուղիք զրեթէ 4800 հզմղր. տարածութիւն ունին: Բայց երկամուղեաց ցանցակերպը դեռ աւարտած չէ և կը բաղկանայ հինգ մեծ գծերէ որոնց կեդրոնը Մատրիս է, և են՝

(1) Միւրբիլի բացատրութեանը նայելով՝ Սպանիոյ քանի մը գետերուն և քաղաքաց անունը Մարիտանացոց ժամանակէն մնացած է ինչպէս՝  
Արդի Կուատալվիար. — Արպ. Կուատ էլ ապիատ. — Սպիտակ գետ:  
» Կուատալբիլի. — » Կուատ էլ քեպիլի. — Մեծ գետ:  
» Կուատալախարա — » Կուատ էլ հանարա. — Փայրից գետ:

1<sup>o</sup>. Մասրիս Պայօն գացող զիծն, Աւիլա, Վալենսոյիս, Բալենսիա, Պուրկոս, Վիդդոբիա և Սան Սեպաղիանօ քաղաքներէ անցնելով, և Բալենսիայէն Սանդանտէրի վրայ ճիւղով մը:

2<sup>o</sup>. Մասրիս Բերքինեան. Կուասալախարայէ, Սարակոսայէ, Լերիսայէ, Պարսիեռնայէ և Ժիւրոնսէ անցնելով: Ուրիշ զիծ մը Պարսիեռնայէն Վալենսիա կ'երթայ և հետեւեալ զծին կը միանայ:

3. Մասրիս Վալենսիա և Ալիբանդէ. Արանուէզէ, Ճիլուելայէ և Ալպասէղէյէ անցնելով. այս զծէս կը բաժնուին երկու զիծ մէկը Լիսպոնայի և միւսը Գասիլի վրայ:

4<sup>o</sup>. Մասրիս Լիսպոնա. այս զիծը դեռ շինուելու վրայ է, վերինէն կը բաժնուի յԱլքազար և ընդհանրապէս Կուատիանայի ընթացքը կը բռնէ:

5<sup>o</sup>. Մասրիս Գասիլ. — Այս զիծը նաև Մատրիսէ Վալենսիա գացող զծէն կը բաժնուի, և կ'անցնի Անտուարտէ, Գորսովայէ և Սեվիլեայէ. Դորտովայէ ուրիշ ճիւղ մը դէպ ի Մալակա կ'ուղղի:

§ 5<sup>o</sup> — Վաճառաքերութիւն եւ Վաճառահանութիւն

Վաճառաքերութիւն. — Թէպէտև Սպանիոյ ծովային սքանչելի դիրքը առևտրոյ յառաջադիմութեանը մեծ դիւրութիւններ կ'ընծայէ, սակայն տէրութիւնը մինչև հիմա այնպիսի միջոցներ գործածած է որ վաճառականութեան ծաղկելուն մեծ արգելք են և անոր համար ալ յետամնաց է:

Մտնող ապրանքն են՝ օտար աշխարհաց բերք (քաքաօ, շաքար, խահուէ, կիւնամոմն), ցորեն, աղած ձկներ, կարագ, ձէթ, պանիր, բամբակեղեն, ասուեղէն, սաղնեգործ, երկամեղէն, ականակեղէն, զոհարեղէն, նորելուկ ապրանք, երկամեղայ, պղնձեայ և անագէ անօթներ, փայտէ գործուածք, զինկ, խեցեղէն, շինութեան փայտ, զինի, վուշ, կանեփ, աղած միս, ջրի, հաւե-

ղէն, թղթեղէն, զիրք ևն. ընդամենը տարուէ տարի 513 միլիոն ֆունգաց կը հաշուի:

**Վաճառահանութիւն.** — Արտահանութիւնքը մասնաւորապէս երկրին բերքերն են: Տեսակ տեսակ գինի որոնք ընդհանրապէս Անգղիա կ'երթան. օղի, պտուղ (նարինջ, կիտրոն, նուռ, չամիչ, թուզ, նուշ), ձէթի եղ, ասր, անողորկ մետաքս, մերինոս (Տ. 2<sup>0</sup>), Անտալուսիոյ ձիեր, կապար, սնդիկ, գինկ, ծծումբ, անողորկ սնկնենի, ցորեն, ալիւր, աղ, օշնան, խցան, աղած ջրի մէջ աղկեր, կտաւ, ասուեայ և մետաքսեայ երփնեւրանգ դիպակք, կօշիկ, երկամեղէն, հայելի, զոհարեղէն և զործարանէ անցած ծխախոտ: Տարին 360 միլիոն ֆունգաց կ'ելլէ:

Տ 6<sup>0</sup> — Գլխաւոր վաճառաշահ նաւահանգիստք.

Արեւելեան ծովափանց վրայ.

**Ռօզաա.** — Համանուն ծոցին մտիցը վրայ շատ գեղեցիկ և ընդարձակ հանգրուան: Արտահանութիւն սնկոյ և շինուծեան փայտի:

**Բալաօս.** — Փոքր նաւահանգիստ՝ անուանի է խցաններովը:

**Մադաթօ.** — Նաւահանգիստ և միանգամայն արուեստական քաղաք (մասնաւորապէս բամբակեղինի) որ աղ, գինի, և օղի կը վաճառէ օտարաց:

**Պարսեղիւնա** կամ Պարսելիւնէ (ի հնուց Պարսիւնօ). — (200,000) Սպանիոյ առաջին նաւահանգիստը և միանգամայն ամենէն վաճառաշահ և ծաղիկեալ քաղաքը. Նաւարան մը, մեքենայից գործարան և վաճառականութեան մասնաւոր ընկերութիւն մ'ունի՝ որուն նաւերը կարգաւորեալ երթևեկութիւն կ'ընեն: Գլխաւոր գործատուներն են չուխայի, կաշւոյ, մետաքսեղինի, բամբակեղինի, ասուեղինի, աղնեգործոյ, սակերչուծեան, զինուց ևն: Գլխաւոր յարաբերութիւնները Գաղղիոյ, Իտալիոյ և սպանիական Անդիլեանց հետ են: Արտահանութիւնքն

են զլխարկ, մետաքսեղէն, ժապաւէն, հրազէնք, զինի և օղի, ընկոյզ և բանուած պողպատ: Վաճառաբերութիւնքն են բամբակ, շաքար, կինամոմոն, լեղակ, քաքաօ, զունատու փայտ, ձուկ և օտար աշխարհաց բերք: Արտահանութիւնքը 100 միլիոն ֆունգաց կ'ելլէ, իսկ վաճառաբերութիւնքը 220 միլիոնի: Մլլոյ և մտոյ նաւերը 5000 ի կ'ելլեն 6-700,000 տակառաչափով:

Շոգենաւերու կանոնաւոր երթևեկութիւն կայ Պարսեղիւնայի և Գատիզի, Մարսիլեայի, Ճենովայի, Լիսպոնայի, Հաւրի, Ռուանի, Լիվրուլի և Համպուրկայ մէջտեղ:

**Դարրալիւնա.** — (18,000) Ընդարձակ, պատսպարեալ և միանգամայն բանուկ նաւահանգիստ. արտահանութիւնքն են գինի, ողիք, ձէթ, նուշ, ընկոյզ, կանեփ և սնկնենի:

**Դօրոզա.** — (18,000) Լպրոյի բերնին մօտ. մթերանոց անցիկ ապրանաց, Նաւարայի և Արսիւնայի արմտեաց, Պիրենեանց շինութեան փայտերու: Գործարան մետաքսի, ձէթի և նրբագոյն յախճապակոյ: Ձկնորսութեան նաւահանգիստ:

**Պէնիզալթօ.** — (4000) Վաճառականութիւն Յերմակ գինւոյ, գարւոյ և վշոյ:

**Վալենսիա.** — (100,000) Կուատալալիարի բերնին մօտ, 6 հզմիդ: Դէպ ի ներս, Թագաւորութեան մեծագոյն և ծաղկեալ քաղաքներէն մէկն է: Նաւահանգիստն է Կրաօ, քաղքէն երկու հզմիդ. հետու, պատսպարեալ չէ, և միայն պզտիկ նաւեր կրնան մօտենալ: Վալենսիոյ մետաքսի գործարանը՝ Սպանիոյ ընդարձակագոյններէն մէկն է, բայց ղժբաղաբար ծնշուած է ծիծաղելի արգելքով մը, որ չներէր իր ապրանքը ազատապէս արտահանելու Կան նաև ասուեղինի, թղթոյ, կողովի և զգիլի պատրաստուած կօշիկներու (որ Աքբեկաք կը կոչուի), շարի, չուխայի և ժապաւինի գործարաններ:

Արտահանութիւն օշնանի, բրդոյ, համբաւաւոր նարնջի: Վաճառաբերութիւն Լավալի, Դրուայի, Գուրդէյի կտաւուց, Լիօնի կերպասու և դիպակաց, Էդամիի, Ռուանի ապրանաց և Գաղղիոյ խեցեղինի:

**Տէնիս**. — Սքանչելի և յարմար նաւահանգիստ, ուսկից առատ նուշ, նարինջ, չամիչ և թուզ կը զրկուի ի վաճառ:

**Սփիգանդէ**. (30,000) Վաճառաշահ նաւահանգիստ և միանգամայն արուեստական քաղաք ծոցի մը վրայ: Դեռ նոր սկսած է ծաղկիլ, տարին 1000 ի մօտ նաւ կը մտնէ: Գլխաւոր արտահանութիւնքն են նուշ, պարիլեա, ազնիւ գինի, ձէթ: Վաճառարեւութիւնքն են աղկեր, վուշ, ձողաձուկ, ծխախոտ: Անուանի են օճառները:

**Փարդախէնա կամ Կարդագինէ**. — (22,000) Եւրոպիոյ Ընդարձակ և աղւոր քաղաքներէն մէկը: Անուանի է նաւարանը: Գործարան մալխոյ, առագաստի. ունի նաև կապարի, զինկի և պղնձի հանքեր: Վաճառահանութիւն ձիթոյ, ազնիւ բրդոյ, մետաքսի, չամիչի և Սպանիոյ լաւագոյն օշնանի:

**Սկուիլաս**. — Իր զգրեղէնը և մասնաւորապէս արծաճախառն կապարները Գաղղիա կը զրկէ ի վաճառ:

**Սլվէրիա**. — (33,000) Ատենօք ծաղկեալ նաւահանգիստ, բայց հիմա ինկած. Գատիզի, Մարսիլիոյ ևն հետ յարաբերութիւն ունի: Անուանի է կապարի, քալամիսի, զգրեղէնի և խաղողի վաճառականութիւնը:

**Սարա**. — Սպանիոյ ամենէն ճոխ կապարի բովբերուն և քալամիսի հանքերուն մօտ: Արտահանութիւնը կ'ըլլան դէպ ի Գաղղիա, Ամերիկա, Պէլճիս և Անգղիա:

**Մալակա**. — (100,000) Այս դարուս մէջ մեծ համբաւ ստացաւ և ծագաւորութեան երրորդ նաւահանգիստը կը սեպուի, Պարսկերկանայի և Գատիզի դասուն մէջ: Իր վաճառականութեան զլխաւոր նիւթը Մալակա կամ լեաուն (mountain) անուանուած անոյշ և մեղրահամ գինին է, որ քաղըին շրջակայքը գանուող բազմաթիւ բլուրներուն վրայ կը պատրաստուի:

Հողը կը հայժայթէ նաև ազնիւ խաղող և ուրիշ պտուղներ, ծովափանց վրայ շատ անձրուկ կ'որսացուի: Արտահանութիւնքն են չամիչ, լեմոն, գինի, օղի, ձէթ, նարինջ, կիտրոն, թուզ, երկաթ և կապար: Մալակայի նաւահանգիստը ապահով և աղէկ է, բայց ոչ ընդարձակ:

**Վէլէգ-Մալակա**. — Անուանի է խաղող և գինին:

**Մարսիլա**. — Անուանի է պղնձի և երկաթի հանքերուն համար:

**Ճիպրաղար**. — (15,000) Անգղիացոց ձեռքը, Աշխրհիս ամենէն ամուր քաղաքաց մէկը, համանուն նեղուցին վրայ Սպանիոյ հարաւային ծայրը, Ատլանտեանի և Միջերկրականի մէջտեղ: Բազմաթիւ շոգենաւեր հանքածուի կ'առնեն այս քաղաքէս: Ընդհանրապէս Անգղիոյ ապրանք կ'ընդունի, որոնց մեծագոյն մասը բամբակեղէն է: Սպանիոյ, Անգղիոյ և Ամերիկիոյ մէջտեղ վաճառականութեան մեծ մթերանոց է: Կ'ընդունի զլխաւորապէս Ամերիկոյ բերք, շաքար, խահուէ կայն:

**Սլնէգիրաս և Պարիճա**. — Ճիպրաղարի նեղուցին վրայ. Սպանիոյ ամենէն քաղցրահամ նարինջները ունին:

**Գասիզ կամ Գասիչէ**. — Առևտրական պատմութեան մէջ ամենէն հին քաղաքն է: Գարդէսու քաղաքը՝ որ ասոր շրջակայքն էր՝ Փիւնիկեցոց գաղթականութեանց ամենէն առջի և ծաղկեալ կեդրոններէն մէկն էր: Վերջի ժամանակներս երկրորդ կարգի նաւահանգիստ մ'եղաւ առջի պայծառութիւնը կորսնցունելով: Թէև դարձեալ վաճառաշահ է, բայց իւր մահացու հարուածն ընդունած է: Գատիզ՝ Լէոն կղզւոյն վրայ Սպանիոյ զլխաւոր պատերազմական նաւահանգիստն է: Մօտերը աղահանք կան: Վաճառահանութիւնքն են գինի, պտուղ, ցորեան, աղ, սնկնենի, և որթձուկ: Վաճառարեւութիւնքն են Հաւանայի և Մանիլիոյ ծխախոտ (սիկար), բրինձ, կարագ, մետաքսեղէն, կերպաս, դիպակ ևն: Շոգենաւեր կանոնաւոր երթևեկութիւն կ'ընեն Գատիզի, Հաւրի, Սէն Նազէրի, Մարսիլի, Պայօնի, Լիպոնայի, Ճիպրաղարի, Պարսկերկանայի, Ալճէրիի, Օրանի, Լիվրուլի, Հաւանայի մէջտեղ: Նաւարկութեան շարժումը 2000 նաւ է 4-5000 տակառաչափով:

**Քալու**. — Փոքրիկ նաւահանգիստ մ'է, ուսկից 1492 ին Քրիստափոր Գոլոմպոս չուեցաւ Ամերիկան գտնելու համար: Հիմա աննշան է:

**Հուէլպա**. — Օտիէլ պզտիկ գետոյն բերանը՝ փոքրիկ

նաւահանգիստ ձկնորսութեան և ծովեզերեայ նաւարկութեան: Հողը բարեբեր է գինւոյ և ձէթի կողմանէ: Ասոր մօտ պղնձի, մանկանէզի և ծծմբոյ հոյս հանքեր կան, որոնց բերքը մեծաւ մասամբ Գաղղիա կ'երթան:

**Սէվիլեա.** — (100,000) Անտալուսիոյ մէջ Կուստալիքի-վիրի վրայ՝ ուր ինչուան 100 տակառաշափի նաւեր կ'ելլեն: Գործարան յախճապակոյ. արքայական գործարան ծխախոտոյ, մետաքսեղէնի: Վաճառականութիւնը ծաղկած է, շոգենաւեր գինքը կը միացընեն Մարսիլիոյ:

**Վիլիօ.** — Սպանիոյ հիւսիսային-արեւմտեան կողմը՝ Ատլանտեանի վրայ ամենէն ընդարձակ և ապահով նաւահանգիստն է: Արտահանութիւն ձկանց՝ Իտալիոյ համար. կովու, հաւեղէնի և հաւկթի Անգլիոյ և Անտալուսիոյ համար: Հանգստատեղի սպանիական, Գաղղիացի և Անգլիացի շոգենաւերուն:

**Քօնդէվէսա.** — Ազկերի օրս. — Արտահանութիւն արջառու Բորդուգալի համար:

**Գօրուա.** — (30,000) Սքանչելի նաւակայք մ'ունի: Գործատուն առագաստի լամի: Վաճառականութիւն կտաւու և աղկերի: Առևտուրը գլխաւորապէս Ամերիկոյ և Անգլիոյ հետ է:

**Ֆէրոլ.** — Կալիսիոյ մէջ, որուն նաւահանգիստը Շերոպիոյ ընդարձակագոյններէն մէկն է: Առևտուր աղկերի: Գործատուն առագաստի լամի:

**Ճիլոն.** — Ասդուրիաներու գլխաւոր նաւահանգիստն՝ ածխահանքի մօտ, որմէ շատ կը ղրկէ դուրս ի վաճառ: Գործարան ապակեղինի, բիւրեղի:

**Սանդասէր.** — (35,000) Միջին նաւահանգիստ մը. գործատուն մոմոյ, օճառի, երկամի, պղնձանի հալոց. երկամի, պղնձի և զինկի հանք: Մեծ արտահանութիւն ցորենոյ, ալիւրի և ասուրի:

**Պիլպաօ.** — (25,000) Ազնա գետոյն բերնէն 8 հզմղր. դէպի ներս: Վաճառատեղի ընդ մէջ Անգլիոյ, Գաղղիոյ, Տուէտի և Սպանիոյ: Արտահանութիւն ալեր, ցորենոյ, երկամի և մերինոսի բրդոյ (Գաղղիոյ դաշտերը մեծաւ մասամբ հոս կը ղրկեն

իրենց մերինոսի բրդերը արտահանութեան համար): Վաճառամտութիւն գաղթականութեանց նպարի, ձողածկան և կաշուոյ: Շոգենաւերու կանոնաւոր երթևեկութիւն մը այս քաղաքս կը միացնեն Սպանիոյ այլ և այլ նաւահանգիստներուն, Պայօնի, Լոնտրայի և Լիվրբուլի:

**Սան-Սէպտաղիան.** — Թէև ամուր քաղաք է այլ աննշան նաւահանգիստ: Պայօնի և Պօրտօյի հետ ծովային յարաբերութիւններ ունի: Ելլող ապրանքն են ալիւր, արմտիք, զինի. մտնող ապրանքն են շաքար, բարաօ, ձողածուկ, գաղթականաց նպար և այլն: Գործարան խաղախորդութեան և սոււերի:

ՊԱԼԷՍՏԻՆ ԿԴՉԵՍՅ ՄԷՋ ԳԼԽԱԻՈՐ ՆՈՒԱՀԱՆԳԻՍՏԻ

**Քալա.** — (52,000) Մայրգա կղզոյն գլխաւոր քաղաքը, ընդարձակ ծոցի մը խորը՝ ապահով նաւահանգստով: Հաղորդակցութիւնը մասնաւորապէս սպանիական գաղթականութեանց հետ է, ուր կը ղրկէ Մայրգայի բերքերն (գինի, օղի, ըմպելիք, ձէթ, նուշ, սուստ նարինջ և բանդակ). ունի նաև յաճախ յարաբերութիւններ Մարսիլիոյ և Ալճերիոյ հետ: Չուանի աղէկ գործատուններ ունի:

Դարձեալ Մայրգայի մէջ Ալլուսիա աղէկ նաւահանգիստ: **Ֆէլանիս.** — Սպանիոյ ընտիր անօթները (alcarrazas) կը շինէ և առատ գինի և օղի կը ղրկէ դուրս ի վաճառ:

Պ. Գամպասէտ աշխարհագիրը կղզոյն տարեկան բերքը 54,000,000 ուէլի կը հանէ:

Մայրգա կղզին նարնջի և գինւոյ մեծ վաճառականութիւն կ'ընէ, առաջինը մասնաւորապէս Գաղղիա կ'երթայ և մասամբ մը Գաղղալոնիա:

Մինորգայի մէջ **Քորդ-Մաիօն** կամ Մաիօն. — (22,000) Մինորգայի մայրաքաղաքը և միանգամայն գլխաւոր նաւահանգիստը: Գաղղիայէն Ալճերի գացող նաւերը հոս կը հանդիպին: Խաղախոր-

դուժեան և կոշկի գործարաններ. բամբակէ մանուածք զորս Անդիլեան կղզեաց կը դրկէ:

**Իվիցա** կղզին ամենէն փոքրիկն է Պալէարեանց մէջ՝ ցուրտ քամիներ և յորձանքներ ունի սակայն ամեն պտուղ կը հասցընէ, մասնաւորապէս ծուզ: Գլխաւոր քաղաքն են՝

**Լօս Սալինա**. — Հոս արևու տակ ծովու ջուրը կը գոլորժիացընեն և աղը կը ծախեն մինչև 15,000 տկոչփ. տարին:

**Իվիզա** կամ **Իվիցա**. — Կղզւոյն մայրաքաղաքը հարաւային ափանց վրայ, ընդարձակ աղահանք ունի:

§ 7° — Ներքին վաճառաշահ եւ գլխաւոր  
ֆադաֆֆ.

Հիւսիսային արևելքէն սկսեալ՝

**Օլոզ**. — Լի են բամբակի և ասուեղինի գործարանները:

**Վիփ (Vich)**. — Դիպակի անուանի գործարաններ, բամբակի մանոցներ և ածխահանք ունի:

**Ճէրօնա**. — Ձէթի և չորացեալ պտղոյ առևտուր կ'ընէ:

**Գարսօնա**. — Աղուճակի ճոխ հանքեր ունի

**Լէրիսա**. — Ընդարձակ շերամանոցներ ունի:

**Ռէօս (Reus)** Նոր քաղաք է, շատ բանուկ գործարաններ ունի (մետաքս, թաւիշ, ժապաւէն, դաֆղա, բամբակեղէն են.) և արդէն հիմա 30,000 բնակիչ ունի: Վաճառականութիւն գինւոյ օղոյ և կաշոյ:

**Հուէսֆա**. — Պատուական գինի:

**Սարակօսա**. կամ Ջարակօզա. — (60,000) Էպրօյի վեբայ, մետաքսեղինի և նուրբ չուխայի գործարաններով: Վաճառականութիւն ասուի, ցորենոյ և գինւոյ:

**Պուսէլա**. — Էպրօյի վրայ, երկիրը առատ գինի կ'ընծայէ:

**Բամբէլօնա** կամ Բամբլօնա. — (25,000) Յուլիսի մէջ մեծ տօնավաճառներ կ'ըլլան. հոս կը շինուի մատուտակի անուանի հիւթ, կաշի, խոշոր չուխա, խեցեղէն և երկածէ և պղնձեայ գործիք:

**Վիլլորիա**. — (8000) Սպանիոյ գեղեցիկ քաղաքներէն մէկը. խաիրէ գործուածոց, ոպիխասեղինի, անօթեղինի, կաշեգործութեան և զլխարկի գործարաններ ունի: Վաճառականութիւն գինւոյ, ըմպելեաց, երկածի և երիւարի:

**Լէոն**. — Համանուն գաւառին մայրաքաղաքը. հին քաղաք է երկածի, հանքածխոյ և քաօլինի բովբերով հարուստ երկրի մը մէջ:

**Օվիէսօ**. Հիւսիսային կողմը Ատլանտեանի մօտ. գործարան զլխարկի և հրազինուց:

**Լուլլօ**. — Մինօ գետին վրայ անուանի ջերմուկներով. լոսդիյի մեծ որս:

**Օրէնս**. — Մինհօյի վրայ, ապուխտի, չորքուղի, կտաւու և երկրին ազնիւ գինիներու վաճառականութիւնը կ'ընէ. անուանի են նաև ջերմուկը և անագի մեծ հալոցը:

**Ջաֆորա**. — Տուէրօյի վրայ: Գործարան ասուեղինի, զըլխարկի: Երկիրը բարեբեր է. անագի և զոճագի հանք ունի:

**Բալէնսիա**. — Նշանաւոր այգիներովը:

**Վալեսօլիս**. — (40,000) Նշանաւոր ցորենոյ, գինւոյ, կտաւու, թղթոյ, կաշոյ և ոչխարի վաճառականութեամբը:

**Պուրկօս**. — (25,000) Հին Գասգիլիոյ մայրաքաղաքը. Նշանաւոր գինւոյ, ցորենոյ և հանքածխոյ վաճառականութեամբը: Սակայն առջի գործունէութիւնը կորսնցուցած է:

**Սօրիա**. — Տուէրօյի վրայ. մեծ վաճառատեղի ազնիւ և նուրբ ասրի:

**Սեկօվիա**. — Չուխայի գործատուն և հայելոյ հոշակաւոր գործարան ունի: Հրաշալի ջրմուղ մը ունի:

**Ս.վիլա**. — Չուխայի գործատուններ, պղնձի, արծաթի և կապարի հանք:

**Կուսալալարա**. — Մատրիտի արևելեան կողմը. ազնիւ չուխայի գործատուն ունի: Արտահանութիւն ցորենոյ, ձէթի, պտղոյ, մեղրի և չուխայի:

**Պէրուէլ**. — Վաճառականութիւն երկածի, հանքածխոյ և մանկանէզի:

**Գուէնսա.** — Վաճառականութիւն ազնիւ բրդոյ, գինեոյ  
և բրբուռի:

**Մասրիս.** — (300,000) Սպանիոյ մայրաքաղաքը, Սագա-  
ւորութեան կեդրոնը Մանզարանէս գետակին վրայ, ծովէն 680  
մէջը բարձր: Առևտրական դիրքը նպաստաւոր չէ ծովէն հեռի  
ըլլալուն և նաւարկելի գետի պակասութեանը պատճառաւ:  
Ճարտարարուեստքը նաև ժիր չեն. սակայն կը գտնուի յախ-  
ճապակոյ, երկամեղինի, կապերտի, մետաքսեղինի և չուխայի  
գործարաններ:

**Պէհար.** — Չուխայի մեծ վաճառականութիւն կ'ընէ:

**Դօլէսօ.** — (16,000) Դակօ գետոյն վրայ, մետաքսեայ և  
աստուգի դիպակաց բազմամիւլ գործարաններ ունի որոնք ժա-  
մանակաւ մեծ համբաւ ստացած էին: Գործարան զինուոց, չու-  
խայի, դաֆղայի, ընտիր ժապաւինու, Սաշկինակի և այլն:

**Գասուէս.** — (1500) Գործարան անձեղինի:

**Պասսաբու.** — (22,000) Կուատիանայի վրայ, Բորդուզալի  
սահմանին մօտ: Բանուկ վաճառականութիւն կ'ընէ Բորդուզա-  
լի հետ:

**Սլմասէն.** — Հոչակաւոր իր սնդկի ճոխ հանքերովը:

**Սիուսաս-Ռէալ.** — Կուատիանայի վրայ, Նոր Գասդիլիոյ  
մէջ. անուանի է իշեարի և ջրոյ տօնավաճառը:

**Սլպասէդէ.** — Անուանի է արջաուոց տօնավաճառովը,  
զգրեղինովը և գինեովը:

**Սլօ.** — (32,000) Գործարան չուխայի, Թղձոյ, օճառի:  
Երկամի հանք ունի:

**Էլիէ.** — Արուեստից քաղաք՝ ուր ամբաւ զգրեղէն կը պատ-  
րաստեն. շրջակայքը արմաւենեաց անտառներով ծածկած է:

**Օրիսուէլա.** — (2000) Սիկուրայի վրայ, բարեբեր դաշ-  
տի մը մէջ. գործատուն աղի,

**Գօլանա.** — Առատ է պարիլեան:

**Լօրգա.** — (20,000) Մետաքսի և աղբորակի գործարան-  
ներ ունէր. անկարծելի դիպուած մը արգիլեց իրենց յառաջա-  
դիմութիւնը: Երկիրը առատ բողաս կ'ընծայէ:

**Հաւէն.** — (20,000) Անտալուսիոյ մէջ՝ ձիձոյ, ցորենոյ և  
բրդոյ վաճառականութիւն կ'ընէ: Առատ է մետաքսը:

**Գօրսօլա.** — (36,000) Կուատալքիվիրի վրայ: Խալիֆա-  
ներուն ժամանակ 300,000 բնակիչ ունէր. արուեստը մարած  
է. բիչ մը ժապաւէն, ոսկեծեղ արարներ և մարմինացեոյ (սե-  
կացեալ) կաշի կը գործէ, որ ժամանակաւ զօրաօսկան ան-  
ուամբ աշխարհածանօթ նիւթ մ'էր: Սպանիոյ ամենէն ընտիր  
երիւարները ունի, պատուական է գինին. երկիրը առատ նա-  
րինջ և կիտրոն կը հասցընէ:

**Էսիլա, Անդէուէրա և Թօնես.** — Երեքն ալ ծաղ-  
կեալ քաղաքներ են:

Առաջինը Խէնիբի փանց վրայ. բրդոյ, կանեփի և բամբա-  
կի վաճառականութիւն կ'ընէ: Երկրորդը՝ Կրանսայի մէջ  
(§ 1) վաճառականութիւն մետաքսի, բամբակի և կաշու: Բաղ-  
բէն երկու մղոն հեռու հոչակաւոր աղբուր մը կայ որ gravelle  
կոչուած հիւանդութիւնը կը բժշկէ: Երրորդը մետաքսեղինի  
գործարան ունի:

**Կրանեսա.** — (70,000) Համանուն գաւառին մայրաքա-  
ղաքը Խէնիբի վրայ, բարեբեր երկրի մը մէջ: Անուանի է Ալ-  
համպրայի սպաւտը որ ժամանակաւ Մաւրիտանացոց թա-  
գաւորաց ապարանքն էր:

Գործարան մետաքսի, ժապաւինի, չուխայի, կտառու: Վա-  
ճառականութիւն ցորենոյ, իւղոյ, շաքարի, կանեփի, համեղ  
պտուղներու, մեղրամոմոյ, մեղրի և խաղողոյ: Շատ աղէկ մե-  
տաքս ունի: Մարմարիոնի և այլևայլ մետաղներու հանք: Ար-  
քայական գործարան վառօղի և բորակի:

**Ռօլա.** — Գատիզի հիւսիսային կողմը՝ անուանի գինինե-  
րովը:

**Խսէրէս և Խա Ֆրօնդէրա.** — (50,000) Գատիզի մօտ,  
հոչակաւոր՝ պատուական գինիներովը: Վաճառականութիւն  
գինեոյ, ասուի, պտղոյ, չուխայի և փերեզակաց արարներ:

§ 8<sup>0</sup> — Կաշուածք.

Սպանիա ժամանակաւ ընդարձակ կաշուածք ունէր. Ամերիկայի մէջ. բայց բնակչաց շատը ապստամբեցան և Սպանիայէն բաժնուեցան, այնպէս որ հիմա Սպանիա Ամերիկայի մէջ միայն Գոսպա կղզին և Բուէրո-Տիբո կղզին ունի: Ունի նաև Ափրիկոյ մէջ Գանաբեան կղզիները, որոնք Թագաւորութեան 1/49 մասը կը սեպուին: Սէւրա կղզին բանի մը բերդերով՝ Մարոզի ափանց վրայ: Ֆէրնան-սօ-բօ և Աննօպօն կղզիները Կուինէայի ծոցին մէջ. Ուկկիանիոյ մէջ Ֆիլիպպեան և Մարիանեան կղզիները :

Գաղթականութեանց բնակչաց թիւը (առանց Գանարեաններու) գրեթէ 5,000,000 անձ է:

§ 9<sup>0</sup> — Դրամք, չափի և կշիռք.

Դ Ր Ա Մ Ք

Ոսկի . — Տուպլօն 100 ռէալի	Ֆռ.	25,78
Արծաթ .	Տուբօ	» 5,21
	Սկուսօ	» 2,60
	Բէսիէղա	» 1,04
	1/2 Բէսիէղա	» 0,52
	Ռէալ	» 0,26

1849 էն ի վեր Գաղղիական մեղրական դրութիւնը օրինապէս մտած է Սպանիա, սակայն դեռ հետևեալ չափերը կը գործածուին:

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ա Կ Ա Ն Չ Ա Փ Ք

Մղոն (լիկուա) նոր	16,66 առաստիճան = հզմր.	6,675
Մղոն ժմին. կամ ծովային 20. —	—	» 5,562
Մղոն օրինական	26,66 —	» 4,172

Ե Ր Կ Ա Յ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Չ Ա Փ Ք

Ոտք	Մէդր	0,278
Վարա (3 ոտք)	»	0,835
Թիզ (1/4 վարա)		

Ա Ր Տ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն Չ Ա Փ Ք

Ֆանէկատա	Գալ	64,255
Եուկատո = 50 ֆանէկատա		
Արանգատա	»	44,620

Ծ Ո Վ Ա Յ Ի Ն Գ Ր Կ Ա Չ Ա Փ

Պրազա (6 ոտք)	Մէդր	1,696
---------------	------	-------

Ը Ն Դ Ո Ւ Ն Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Չ Ա Փ Ք

Արբօպա (գինէոյ)	Լիդր	16,137
Արբօպա (իւղոյ)	»	12,564
Ցանէկա	»	54,800

Կ Շ Ի Ռ Ք

Մարկ	Կրամ	230,250
Լիպրա	»	460,500

Փոխառուութեան ընկերութիւնք. — Սպանիոյ դրամատուն :

# Ք Ո Ր Դ Ո Ւ Գ Ա Լ



Լայնութեան աստիճան 39°.

Միւլթ. 87,000 □ հզմդր. — Բն. 4,400,000 հոգիք. — Վճուկն.

նաւ 590. — Տկուչի. 158,000 : — Ել. հոգր. 3500 հզմդր. —

Խտուծիւն մարդկան առ □ հզմդր. 50 անձ :

## § 1<sup>0</sup> — Նախագիտելիք, յիտք, բնական եւ բաղաբախտ բաժանմունք.

Բորղուզալ Սպանիական ցամաքակղզւոյն արեւմտեան մասին մէջ է, և Մինհոյի բերնէն մինչև Կուատիանայի բերանը գտնուող միջոցը կը բռնէ: Տարածութիւնը հիւսիսէն հարաւ 550 հզմդր. է և 175 Արեւելքէն Արեւուտը:

Սահմանն է հիւսիսէն և արեւելքէն Սպանիա: Միւս կողմերը Ատլանտիկանը պատած է: Հիւսիսային-արեւմտեան ծայրը Ս. Վինչենցիոս զլուխը կը գտնուի, որ նաև բոլոր Եւրոպիոյ հարաւային արեւմտեան ծայրն է:

Բորղուզալ Եւրոպիոյ հարաւային-արեւմտեան ծայրն ըլլալով, ծովային վաճառականութեան շատ յարմար դիրք ունի, և այն պատճառաւ Ափրիկիոյ, Հնդկաստանի (Բարեյուտոյ զխէն անցնելով) և Ամերիկայի մէջ նոր երկիրներ գտած և այս փորձրիկ ազգը հնգետատաներորդ և վեշտասաներորդ զարեւրուն մէջ այնքան զօրաւոր և հարուստ եղած է (!):

Երկիրը լեռնոտ է, զլիսուոր գօտիներն երկուք են, մէկը Տուրոյի և Դակոյի մէջտեղ, միւսը Դակոյի և Կուատիանայի մէջտեղ:

(1) Պլանքի պատմութիւն վաճառականութեան:

Բորղուզալի գետերը Սպանիոյ գետերուն շարունակութիւնքն են: Գլխաւոր գետերն են Մինհո, Տուրո, Մոնեկիօ և Դակո՝ որ ովկիանո թափուելէն առաջ տեսակ մը ծոց կամ լիճ կը ձևացընէ: Այս խորը Յարդի ծով կ'անուանուի և ասոր բերանը կ'առուցած է Լիսպոնս քաղաքը: Սասա՝ որ Սէդուպալի ծոցը կը թափուի և Կուալիանա: Կլիման տաք է ծովափանց վրայ, սակայն ներքեակողմը քաղցր և ընդհանրապէս շատ առողջ: Բորղուզալի հարաւակողմը յաճախ երկրաշարժ կ'ըլլայ:

Բորղուզալ (առանց Ասորեան կղզեաց և Մատերայի) տասն և եօթն տեսչական գաւառ կը բաժնուի, որոնք իրենց մայրաքաղաքաց անունը կը կրեն. սակայն սովորաբար վեց հին գաւառաց անուանքը կը գործածուին, եւ են՝

Երկուք՝ Տուրոյի հիւսիսակողմը. այսինքն՝ Էնդրէ Տուրո է Մինհո և Դուազ օս Մօնդէս գաւառները: Երկուք մէջտեղանքը այսինքն Պէլրա և Էսդրամասուրա: Երկուք ալ հարաւ, Ալեմբէիօ և Ալվարվէ:

## § 2<sup>0</sup> — Բերք.

1. Բորղուզալի հողը ընդհանրապէս բարեբեր է, բայց երկրագործութիւնը յետամնաց է: Անմշակ ընդարձակ դաշտեր կան, մասնաւորապէս Էսդրամաստուրայի, Ալեմբէիօյի և Ալվարվէյի մէջ: Սակայն սպառման հարկաւոր ցորեն կը հնձուի: Էնդրէ Տուրո է Մինհո, Դուազ օս Մօնդէս և Պէլրա գաւառաց մէջ բաւական արմտիք կը գտնուի, երկու առաջիններուն մէջ մասնաւորապէս եգիպտացորեն, և երրորդին մէջ հաճար կը մշակուի: Յորենը միջին և հարաւային գաւառներու մէջ և վարսակը միայն հարաւային մասին մէջ կը մշակուի:

Էսդրամաստուրա կը հոսացընէ բրինձ, նարինջ և քաղցրահամ կիտրոն Ալվարվէ՝ ցորենեղէն, թուզ, եղջիւրներ և նուշ կուտայ. Ալեմբէիօ և Էնդրէ Տուրո է Մինհո շատ ձիթնի ունին:

Քորդուզալի ձէրը, Եւրոպոյ ամենէն ազնիւ ձէժին կրնայ հաւասարիլ: Վերին Տուրոյի զինիները Քորդուզալի ամենէն պատուական զինիներն են և բորո սնուամբ կը ծախուին: Այս զինոյն տարեկան բերքը 80,000 տակառի կ'ելլէ, և մեծաւ մասամբ Անդղիացիք կը զնեն: Հռչակաւոր են նաև Փարգավէլօսի և Սէղուզալի ճերմակ զինիները, Գորրէս-Վիրաս (Էտղրամատուրայի) կարմիր զինիները: Սերները և ձմեռուկները բազմամիւ և սքանչելի են: Առաջին կորզի հոսեղ տանձեր կը բաղուին շատ տեղուանք: Շագանակը առատ է:

Հասարակ կաղնին, սնկնակաղնին, դաւար կաղնին՝ որ որդան կարմիր կը սնուցանէ, ծովային շոճին, սերմնացան սոճին (pin pignon), և աղտորը այս կլիմային տակ աղէկ կը յաշտին: Անտառները 19,000 հարիւրակալ տարածութիւն ունին. ամենէն ընդարձակը Լիէրայի անտառն է (Էտղրամատուրա) ծովային շոճին ամենէն հստարակ ծառն է:

Շամերոքս (chamœrops) ըսուած տեսակ մը արժուենիս, բուն արմաւենիս և ագաւին (agave) տեղ տեղ կը յաշտին: Մրտենին և դափնին զբօսանաց տեղերու մէջ ամենէն առատ զտնուող ծառերն են: Ծխախոտոյ մշակութիւնը արգիլուած է Քորդուզալի մէջ. միայն Ասորեաններու մէջ մշակելու ազատութիւն կայ:

**2. Կենդանիք.**—Անտառները բիչ են, երկիրը ոչխարաց դարմանին յորմար է: Ոչխարաց բերքը արդի վիճակէն շատ աւելի կրնար ըլլալ: Դուարները բազմամիւ են Պէիրա զաւառին մէջ, սակայն ձմեռը Ալէմթէ հօգաւառը կը գաղթեն: Բրդերնին թէպէտև Սպանիոյ ոչխարաց բրդին պէս ազնիւ և բարակ չէ, սակայն դարձեալ անուանի են և արդիւնքը տարուէ տարի 5 միլիոն հզկովի. կ'ելլէ: Երիւարները փոքրիկ, բայց աղէկ կտգմուածք ունին և թեթև են: Զորիները մեծ և ուժեղ են: Կովերը մասնաւորապէս հիւսիսակողմը սիրուած են, ուր նշանաւոր է Պարագօ ցեղը: 600,000 զլուխ կով, 80,000 ձի 40,000 ջորի, 130,000 էջ, 3,000,000 ոչխար և 1,000,000 էն աւելի այժ կայ: 900,000 խոզ կը համրուի Քորդուզալի մէջ, որոնց մե-

ծագոյն մասը Ալկարվէի մէջ է՝ ուր առատ են խոզակաղնիները:

Շերասը և մեղուն աննշան բերք մը կուտան: Զկանց մեծ որս կ'ըլլայ, բայց մասնաւորապէս աղիերի, գայլաձկան, որձձուկի և բսոտյ:

**3. Միջառք.**—Թէև այլևայլ զաւառաց մէջ հանրէր կան, բայց երեսէ ձգուած են: Ոսկեհանք և արծաթահանք ճոխ և առատ էին, վեշտասաներորդ դարուն մէջ, բայց անոնցմէ միայն Ատիսսայի ոսկեհանքը մնացած է՝ Էտղրամատուրայի մէջ: Երկաթահանք կը գտնուի Իլէիրա, ևն. արծաթախառն կապար Պրաղալի մէջ, անագ, պղինձ (մասնաւորապէս Ալկարվէի մէջ, ուր նշանաւոր է Սաս-Տոմինկոսի բովքը): Մանկանէզ և ուրիշ մետաղք սակաւագիւտ են: Օքորոյի հիւսիսային և հիւսիսային-արևելեան կողմերը արծաթահանք կան, որոնց մէջ զլխաւորը Գապօ-տէ-Պուարզոսինն է: Հանքային ջրոյ բազմամիւ աղբիւրներ կան, որոնց շատը ջերմուկ են: Աղտը մարմարիոնի, ազնիւ երկաթաքարի, կրանիթի, պազալի, անօթեղիսի, կաւու և քաօլիսի բարահատք կան:

§ 3°. — Ճարտարաբանք.

Քորդուզալի մէջ արուեստը յետամնաց են: Սակայն կան բամբակի մանուածք, հասարակ չուխա, ստուեղէն, մետաքսեղէն, բամբակեղէն, չորլաղ և ընտիր անոյշներ, ոսկերչուծիւն, ակնեղէն, սաղեղեղործ, յախճապակի և խեցեղէն: Բորոջ քաղաքը մեծամեծ հալոցներ ունի: Մետաքսի գործարանները ատենօք ծաղկեալ, բաւական ժամանակ ինկած էին, սակայն դարձեալ սկսան վերականգնիլ: Արդի բերքը տարուէ տարի 500 միլիոն բէի է: Իւղերը ազնիւ են (§ 2°): Ոչխարաց և այժերու կաթով շատ պանիր կը պատրաստուին:

§ 4° — Հաղորդակցութեան միջոցք.

Բորդուզալ Երկայն ժամանակ զուրկ մնացած էր գեղեցիկ ճամբաներէ, բայց 1838 էն ի վեր մեծ կարգաւորութիւնը և յառաջադիմութիւնը յայտնուած են այս ճիւղին մէջ: 1856 էն ի վեր Երկաթուղիք սկսած են հաստատուիլ, և արդէն իսկ 1000 հզմր. տարածութիւն ունին, և կը միացնեն Արապոնացի Սինդրայի, Սեզուպալի, Պէհայի, Սանդարէմի, Ապրանդեօի. Գոյիմպրայի, Բորդոյի և սպանիական սահմանագլխոյն, Պասաճոսի ուղղութեամբ:

Նաւելի ջրանցք չկան: Նաւարկելի գլխաւոր գետերն են Դալիօ, Տուրօ, Մոնսիլիօ, Միմիօ, Կուասիանա և Սուսաօ: Մակընթացութիւնը Դալիօյի մէջ մինչև 88 հզմր. կ'ելլէ, և Տուրօյի մէջ մինչև 23 հզմր: Աւազակոյտք այս գետերուն հունը կը լեցնեն: Աշխատանք քանի մը գետերու արգելքը նուազցուցած են:

§ 5° — Վաճառաքերութիւն և վաճառահանութիւն

Վաճաքերութիւնքն են՝ գաղթականաց բերք (շաքար խահուէ Թէյ, բորահիւ, հրուկ (ГОСОУ), փղոսկր), որոնք մասնաւորապէս գաղթականութիւններէ և Պրագիլէ կուզան, չորացեալ ձողաձուկ, կարագ, պանիր, եղիպտացորեն, իւղ, ձի, շորի, բժշկական դեղեր, քիմիական արգասիք, վշոյ իւղ, շինութեան փայտ, առատ երկաթ և պողպատ, կապար, անագ, պըղինձ, պղնձան, հանքածուխ, կուպր, ձիւթ, վուշ, կոնեփ, մետաքս, բրինձ, ցորեն, մանուած բոլոր, մալուխ, երկաթեղէն (Անգղիա), ծխախոտ և ձեռագործ ապրանք:

Այս ապրանքները Բորդուզալ վերստին նաւերու բարձնելով իր անդրածովային գաղթականութեանց կը գրիէ: Մանող ապրանց արժէքը տարուէ տարի 295 միլիոն ֆրանկաց կ'ելլէ:

Արտահանութիւնքն են՝ զինի (22 միլիոն լիդր միայն Բորդոյի զինի, որուն 16 միլիոնը Մեծն Բրիտանիա կ'երթայ), սնկենի,

ազնիւ կիտրոն, նարինջ, ծուզ, եղջիւրենի, չամիչ, աղ, ձէթ, աղտոր, բուրդ, ծծուկ:

Ատրիան կղզեաց բերքն են ներկարարաց մամուռ (orseille) եղիպտացորեն, նարինջ, մանիոզ, շաքար, դափիա, աղ և մորթ: Բորդուզալ Անգլիոյ և Պրագիլի հետ մեծ վաճառականութիւն կ'ընէ: Վաճառականութեան արդիւնքը՝ ընդ ամենը տարին 300 միլիոն ֆրանկաց կը հաշուի:

§ 6° — Գաղթականութիւնք.

Բորդուզալ ատենօք ընդարձակ կալուածներ ունեցած է ինչպէս Պրագիլ և Հնդկաստանի մէկ մեծ մասը: Այսօրուան օրս իւր կալուածները շատ նուազած են: Ատրեան կղզիք և Մաւսէրա որ Թիւ իրենց դրիւքը և Թէ զիւտոց պատմութեամբ Ափրիկոյ կը վերաբերին և գաղթականութիւն չեն սեպուիր, սակայն Կից կղզիք անուամբ Բորդուզալի մասը կը համարին:

Բուն գաղթականութիւններն են՝ Մօզամպիք, Անկոլա, Բորդուզալական Սենեկամպիա, Դալարի գլխոյ կղզի, Խիսանի կղզի, Ս. Թովմաս կղզի, Ափրիկոյ մէջ:

Կօա և ուրիշ քանի մը կալուածներ Հնդկաստանու մէջ. — Մալաիօ Չինաստանի մէջ. — Դիսօր Մալեզոյ մէջ:

§ 7° — Գլխաւոր ֆալսիֆ և ևառահանկիւսք.

Պրականցա. — Դրագ-օս-Մօնդէսի մէջ, զործարան Թաշոյ, և մետաքսեղինի:

Վլաճնա. — Լիմայի բերանը: Արտահանութիւնքն են ձէթ, և այլեայլ իւղեր, բուրդ, պտուղ, սնկենի, բժոժ և քաղբին մէջ շինուած աղիեղորձք:

Պրակա. — (16,000) Վաճառաշահ և արուեստական քաղաք:

**Նիսմարաւէս** . — Ազնիւ կերպաս կը շինէ, և մօտերը հան-  
բային ջրեր ունի:

**Օթորո** կամ պարզապէս Բօրո — (400,000) Վաճառա-  
շահ նաւահանգիստ: Տուրոյի աջ ափանց վրայ և բերնէն չորս  
հզմիր. դէպ ի ներս: Մեծ վաճառականութիւն Բօրոյոյի գինւոյ  
որ մեծաւ մասամբ Անգղիա կը շրջուի ի վաճառ, յետոյ Պրա-  
զիւ, Միացեալ-Նահանգք և Համպուրի, օղտոյ, բացախի, կուպ-  
րի, ձէձի, կորեակի, երկամի և կաշտոյ վաճառականութիւն:  
Ոսկեղէնը Օթորոյի զլխաւոր նիւթերէն մէկն է: — Ամենէն ա-  
ւելի Անգղիոյ և Պրազիլի հետ յարաբերութիւն ունի:

**Վիզէու** . — Անագի ճոխ հանքերու մօտ: — Սեպտեմբերի  
մէջ հոչակաւոր տօնավաճառ կ'ըլլայ:

**Սվէյրօ** . — Վուկայի բերանը, պզտիկ նաւեր կ'ընդունի:  
Ազահանք:

**Գօյնիսպրա** . — (16,000) Մոնտէկոյի վրայ, աւատութիւն  
գինւոյ, ձիթենւոյ և պտղոյ, ներքին աւաւորոյ կեդրոնն է:

**Ճիկիւրա** . — Մոնտէկոյի բերանը բանուկ նաւահանգիստ  
է: Արտահանութիւն գինւոյ, ձիթոյ, նարնջի, աղի և սնկնենւոյ:

**Գառղէլլօ-Պրանցօ** . — Ազնիւ մարմարիսն ունի:

**Բէնիբէ** . — Սքանչելի և ապահով նաւահանգիստ. ծովե-  
զերեայ վաճառականութիւն և զործարան ասուեզինաց:

**Լիսպոնա** կամ Լիսպօա . — (275,000) Բորղուզալի մայ-  
րաքաղաքը և բոլոր Եւրոպիոյ զլխաւոր քաղաքաց մէկը և մի-  
անգամայն Գալոյի վրայ (§ 1<sup>0</sup>.) ընդարձակ և սքանչելի նաւա-  
հանգիստ: Անգղիայէ և Գաղղիայէ՝ Հարաւային Ամերիկա գա-  
ցող սուրհանդակ շոգենաւները հոս կը հանդուրդին: Նաւային բազ-  
մաթիւ յարաբերութիւններ ունի Պօրտոյի, Սէն-Նազըրի, Հաւրի  
Սաուդէմոզընի, Լիվրբուլի, Լոնտրայի, Վլասօզոյի, Ռօդղեր-  
տամի, Պրազիլի հետ են: Գործատուն առագաստի լամբի, մթե-  
րանոց Բորղուզալի բոլոր գաղթականութեանց ապրանաց:

Արտահանութիւն Բորղուզալի բերքերու, Բորղոյի գինւոյ,  
ձէձի, բրդոյ, աղի, թզոյ, խաղողի, նշոյ, կիտրոնի, նարնջի:

Վաճառարեւութիւն ցորենոյ, բթանի, մետաքսեղինի, փերե-

զակաց ապրանաց, երկամեղինի, զոհարեղինի, երկամի, պող-  
պատի, պղնձի, անագի, կապարի, տախտակի, կայմի փայտե-  
րու, կպրոյ, գաղթականաց բերքերու:

**Սէդուպալ** կամ Սէպուպալ զոր Անգղիացիք Սէնդ-Էօպս  
կը կոչեն (20,000) Նաւահանգիստ. տեղի բանուկ վաճառակա-  
նութեան գինւոյ, նարնջի, սնկնենւոյ և աղի (§ 2<sup>0</sup>.)

**Պէհա** . — Ազնիւ գինի:

**Լախօ, Լուլէ, Ֆաթօ, Գաւիւրա և Վիլլա-սա-Բօր-  
դիմաօ** . — Ամենն ալ անուանի նաւահանգիստներ են Բոր-  
ղուզալի հարաւային կողմը. արտահանութիւն թզոյ, նշոյ, եղ-  
ջիւրենւոյ, սնկնենւոյ, աղտորի, եղէգի, նարնջի, գինւոյ, մեղրի,  
հաւկթի, արջաուռ, արմաւենեայ զործուածոց, աղի, աղկերի և  
որթձկան:

**Վիլլա Ռէլալ սէ Սանդօ Անդօսիօ** . — Գուաթիանայի  
բերանը, նոյն գաւառին նաւահանգիստը, Սաօ Տոմիկոյի  
պղնձին մեծ արտահանութիւնը կ'ընէ:

§ 8<sup>0</sup> — Դրամի, Չափի եւ կշիռի.

Դ Բ Ա Մ Ք

(օրէնք 29 Յուլիսի 1864):

Ոսկի	}	Գօրօնա	=	10,000	րէի	Ֆուանգ	55,88
		—	=	5000	=	»	27,94
		—	=	2000	=	»	11,17
		—	=	1000	=	»	5,59
Արծաթ	}	Դէսդօն	=	500	=	»	2,52
		—	=	200	=	»	1,01
		—	=	100	=	»	0,50
		—	=	50	=	»	0,25

Պղնձէ և անագախառն պղնձէ երկրորդական դրամներն 40,  
20, 10, 5 րէի են:

Ընթացք ունեցող հին դրամներ:

Ոսկի 8000 ռէի դրամ կամ լիսպոնին:

Առժաբ 480 ռէի՝ գրուգատ. 12 վինդէմա՝ 240 ռէի. դէտոն 100 ռէի: — Կան նաև թղթէ դրամք, զոնո (1000 միլլէի):

Գաղղիական մէջրական չափքը օրինապէս մտած է Բորդուգալ 1852 ի դեկտեմբեր ամսէն ի վեր: Սակայն սովորաբար դեռ հետևեալները կը զործածուի:

**ՃԱՆԱՊԱՐՀԱԿԱՆ ՉԱՓՔ**

Փարսախ (լէկօա)	18 առ աստիճան	հզմդր.	6,18
Փարսախ ծովային	20 =	»	5,55
Փարսախ օրինական		»	5,00

**ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԱՓՔ**

Ոտք լիսպոնայի	Մէդր	0,3285
Վարա	»	1,0960
Թիզ	»	0,2200
Գրկաչափ	»	2,1920

**ԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՉԱՓՔ**

Ճէյրա	Կալ	58,27
-------	-----	-------

**ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՉԱՓՔ**

Լիսպոնայի ալմուտա (հեղանիւթոց)	Լիդր	16
Դոնէլատա = 50 ալմուտա. — բիրա = 1/2 Դոնէլատա:		
Մօջ (արմտեաց)	Լիդր	828,74
Ֆանէկա	»	55,25

**ԿՇԻՌՔ**

Մարզ Լիսպոնայի (64 օլդազա)	Կրամ	229,49
Արրադէլ (Լիպրա)	»	453,92
Արրօպա (32 լիպրա)	»	14684,80

**Փոխասուութեան գլխաւոր ընկերութիւնք.** — Բորդուգալի դրամատուն. եօթն ուրիշ դրամատուները և վեց խնայութեան արկղ. ևն:

**Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա.**

**ՌՈՒՍԱՍՏԱՆ ԿԱՄ ՌՈՒՍԻԱ**

ՄկԹ. 5,870,000 հզմդր. □ — Բն. 69,000,000 անձ.  
Վճուկն. նաւ 2132. տկչուփ. 180.990: — Ել. հզր. 37,000  
հզմդր. — Խտուծիւն մարդկան առ մի □ հզմդր. 4 անձ:

§ 1° — Նախագիտելիք, ընդհանուր դիրք, քննական եւ քաղաքական քաժանութիւնք.

Այնպիսի կայսերութեան մը կը մտնենք հիմա, որ դրեւը և զինքը բազկացնող զանազան ազգայնութեամբը, զոյցես թէ պաշտօն ունի միջնորդ մ'ըլլալու ընդմէջ Եւրոպիոյ և Ասիոյ և արևմտից քաղաքականութիւնը արեւելից մէջ տարածելու: Ռուսաստան՝ որ թէ Եւրոպական և թէ Ասիական մասերէ ձևացած է՝ բուն հիւսիսոյ զօրութիւն մ'է:

Եւրոպիոյ Ռուսաստանը՝ Եւրոպիոյ արևելակողման կէսը կը բռնէ: Հիւսիսէն սահմանն է Սառուցեալ ծովը, Սպիտակ ծովը և Քարայի ծովը. — Արևմուտքէն Սկանտինաւիա, Պալդի ծովը, Բրուսիա, Աւստրիա, և Ռումանիա. — Հարաւէն՝ Եւրոպիոյ Տանկաստան, Սև ծով, Ազախու ծով, Կովկաս լեռները և Կասպի ծովը. — Արևելքէն Թամարստան, Ուրալ լեռները և Սիպերիա:

Կլիմայն զգալի զանազանութիւն ունի՝ սաստիկ ցրտոյ և հեղցուցիչ տօնոյ: Շատ անգամ սանդիկրատ ջերմաչափը զերօյնէն 40° վար իջնելը տեսնուած է, զորօրինակ ի Փեդրպուրկ և

Մոսկուա: Հարաւային կողմերը ջերմութիւնը շատ անգամ զէ-  
 րօյէն 55° վեր կը հասնի: Հիւսիսային կողմերը նաև ամառը  
 այնքան տաք կ'ընէ որ (բասն և չորս ժամէ երկայն օրերուն  
 պատճառաւ, որոնք սաստիկ վերջալոյսով մը հազիւ անջատ-  
 ուած են) հողածուխներու և անտառոց բնականապէս կիզումը  
 և ճրդեցին ամբողջ գաւառներ լափելը տեսնուած է (ինչպէս  
 1868ին): Քանի որ արևելքէ արևմուտք երթցուի ցուրտն այն-  
 քան կը սաստկանայ:

Զիւնը սեպտեմբերին կ'սկսի երկիրը ծածկել և հազիւ ապ-  
 րիլի մէջ կը հալի: Եւրոպական բանի մը գաւառաց մէջ շատ  
 անգամ ձիւնը բանի մը մէջը թանձրութեամբ կը ծածկէ երկիրը:  
 Ցրտաշունչ բամի մը՝ անաւոր փոթորիկ մը պտոյտի նման կը  
 վերցընէ ձիւնը, և շատ օրեր կը տեւէ: Այս անաւոր երևոյթը  
 Մէդէլ կը կոչուին, որոնք իրենց սանձարձակ ընթացից մէջ,  
 ամբողջ գիւղեր կրնան աւերակ դարձնել:

Եւրոպիոյ Ռուսաստանի զլխաւոր գետերն են. Բէչուրա, հիւ-  
 սիսային Տիլիցա, ՕԳէկա, որ Սառուցեալ Ովկիանոս կը թափին:  
 Դոնցէա, Նեւա, հարաւային Տիլիցա, Նիւմէն, Վիսղուլա  
 Պալդիկ ծով կը թափին. Տնէտդէր, Տնէքեր, Տօն Սև ծով և  
 Ազախու ծով կը թափին. Վոլկա (և գետակիցքը Օքա, Քամա,  
 ևն.) և Ուրալ Կասպից ծովու հարկատու են:

Գլխաւոր լճերն են Լաճոկա, Իլմէն, Բէյբուս, ՕԳէկա հիւ-  
 սիսային կողմերը:

Անուանի են Ռուսաստանի Սդէք կոչուած անապատները:  
 Եւրոպիոյ Ռուսաստանի հարաւակողմը խոտային սդէքներ  
 կան՝ որոնք առատ դալարիք կը բուսցընեն. բայց երբեմն եր-  
 բեմն մարախի ամպեր կ'ապականեն այն դաշտերը:

§ 2<sup>o</sup> — Երկրագործական բերք եւն.

1. Հողոյն ընդհանուր կազմուածքը, բուսեղէն,  
 եւ այլն. — Ռուսաստանի բնական բերքերուն արժէքը 6316  
 միլիոնի կը հասնի:

Եւրոպիոյ Ռուսաստանը լայնածաւալ և տափարակ երկիր  
 մ'է, որուն մէջտեղտեղ բարձրաւանդակ մը կը ձևանայ ծո-  
 վէն 400 մէջը բարձր: Լեհաստան ստորին և ցած գաշտեր ու-  
 նի, և նաև իր անունը (polska) տափարակ երկիր կը թարգ-  
 մանուի:

Այսպիսի ընդարձակ երկիրներու մէջ երկրաբանը տեսակ  
 տեսակ հող կը գտնայ: Գրանիթականը կը գտնուի Ֆինլանտիոյ  
 մէջ, ժլւրասականը և պլուտոնականը Կոմվասու մէջ: Խրիմ  
 խառնուրդ մ'է գածի, հերձաքարի, կաւային և աւազախառն  
 հողոյ. Ուրալը մասնաւորապէս հերձաքարոտ է: Եւրոպիոյ Ռու-  
 սաստանի ներքին դաշտերը կ'ընծայեն տեղ տեղ կրանիթ,  
 կնէյս, ամխային, աղային և ողողական երկրի կոյտեր:

Ռուսաստանի ամենէն հիւսիսային կողմերը անձրակ են, և  
 սակայն բաւական բարձր աստիճաններու տակ հաճար, գարի և  
 վարանկ կը սերմանուի: Միջին գաւառաց մէջ ուր ամենէն բա-  
 րեբեր մասը սեւ երկիր կ'անուանուի՝ հաճար, ցորեն, գարի և  
 կորեակ կը մշակուի և հարաւային կողմը ցորեն և եղիպտացո-  
 րեն: Վարսակը մինչև լայնութեան 67° կը դիմանայ, ցորենը  
 մինչև 60°: Ամենէն ազնիւ ցորենները Քիէվ, Բոտոլիա և Պե-  
 սարապիա գաւառներուն են, յետոյ կուզան Լեհաստանինը և  
 Վոլկայի դաշտերունը:

Եւրոպիոյ Ռուսաստանի մէջ՝ սովորաբար եօթը տարուան մէջ  
 երկու տարի առատութիւն, երկու տարի սովոյ և երեք տարի  
 սովորական բաղման կը համրուի: Արմտեաց տարեկան բերքը  
 560 միլիոն հարիւրալիզը կը հաշուի:

Ամենէն աւելի շահ բերող արմտիքը ցորենն է, բայց դժբաղ-  
 դաբար բերքը կանտնաւոր չէ: Գլիմային դառնութիւնը հնձման  
 առջի օրը կրնայ բոլոր ակնկալութիւնները ի դէրև հանել: Սև ծովու  
 մերձեկայ դաշտերուն մէջ ցորենը՝ մէկի տեղ և կուտայ, մինչ-  
 դեռ աւելի բարեբեր և երջանիկ երկիրներու մէջ յարաբերու-  
 Թիւնը 1 ևն 18 և երբեմն շատ աւելի է: Պրէնէր՝ Ռուսաստա-  
 նը նկարագրելու ատեն Օրէլ, Քուրսք, Դուլյա և Ռիւզան գա-  
 ւառները ալեձև ցորենոյ լայնատարած ծովու մը կը նմանցը-

նէ: Ռուսաստան արմտեաց մեծագոյն մասը կ'ընդգրկէ: Թարեկան արտահանութիւնը երբէք 12 միլիոն հարիւրալիդրը չանցնիր: Այս անբու բերքէն մաս մը Արեւմտեան Երկիրները կ'անցնի հիւսիսէն Ռիկայի, Փեղրպօւրկայ և Տոնցիկի (Բրուսիա) և հարաւէն Օտէսսայի, Թականրոկի, և Կերչի միջոցով: Վուշ և կանեփ առատ կը գտնուին Ռուսաստանի մէջտեղ-ուանքը: Առաջինը տարին 144 միլիոն ֆունտ կը բերէ և Երկրորդը 22 միլիոն: Գետնախնձոր, բանջար գայլուկ և կնճրակը շատ բերք կուտան: Մխախտը մշակութեան զլխաւոր նիւթ մ'է մասնաւորապէս ի Լիւոնիս, Ուրբանիս, Քերսոնէս, Փեղրպուրկ և Մոսկուա գաւառաց մէջ և ի Լեհաստան: Մշակութիւնը ազատ է:

Ռուսաստանի հարաւակողման գիւնները պտտուական են և մասնաւորապէս հիւսիս կը զրկուին: Անուանի են նաև Օտէսսայի գիւնները: Պետարապիտ տարուէ տարի մինչև 10 միլիոն հարիւրալիդր կրնայ հայթայթել: Խրիմ 2 միլիոն: Կովկասու գաւառները 1 միլիոն: Դէրէքի ջրշեղջին մէջ Ղզլարի գիւնին մեծ համբաւ ստացած է: անուանի է նաև Կախէթու գիւնին: Տորոնը՝ Տաղստանի մէջ կը մշակուի, Բամբակը Ամստերիանու մէջ յաջողած է:

Անտառները Ռուսաստանի զլխաւոր հարտութիւններէն մէկն են: Մայրիք, հացիք, փիճիք, կաղամախք և նշդարիք առատ են մինչև 520. շոճք, եղևինք, Սանթրուենիք և ցարասիք ամենէն հասարակ ծառերն են և հիւսիսային կողմերը շատ կը զիմանան: Մասնաւորապէս նովկորոտ և Դվէր գաւառները անտառներով ծածկուած են: Վոխոնսրի անտառը՝ որ դէպ ի Վալտայի լեռները կը տարածուի, մինչև այսօր ծանօթ անտառաց ընդարձակագոյններէն մէկն է: Իսկ հարաւային գաւառք անտառներէ այն աստիճան զուրկ մնացած են որ, շատ զիւղեր փայտի տեղ խոտ և անանոց քակոռ կը վառեն:

**Չ. Անասի կենդանիք.** — Ընտիր երիվարները Տօն, Վիադիս, Օպլիս, Խազան, Մէցէկ գաւառաց ցեղերն են: Ռուս ձին՝ վիաղքաց ցեղին մէկ տեսակը՝ միջահասակ, կորովի և զրե-

Յէ անխոնջ է: Օրով ցեղին ձիերն որ վերոյիշեալէն առաջ կուգան, զեղեցկատեսիլ և ընտիր կառածիգ են: Ամենէն շատ ձի ունեցող գաւառք Օրէնպուրկ, Սիմպիւքսք, Սարաղով, Սամարա և Ամստերիան են: Կայսերութեան մէջ զրեթէ 16 միլիոն ձի կայ: Էջ շատ կը գտնուի հարաւային կողմերը, ուր զրեթէ վայրենի ցեղ մ'ալ կայ ճիղըղայ կոչուած. ուղտն ալ շատ կը տեսնուի:

Հասարակ ոչխարները և մերինոսները զրեթէ 65 հազարաւրամ բուրդ կուտան: Ոչխարները հարաւային գաւառաց մէջ տարածուած են: 45 միլիոն ասրաւոր կենդանի կայ, որոնց 8 միլիոնը մերինոս է:

Ինն միլիոն խոզ կայ՝ որոնց մազը արտահանութեան մեծ նիւթ է: 20,000 բէն կայ Եւրոպիոյ Ռուսաստանի հիւսիսակողմը:

Ամենէն ընտիր կովու ցեղերը հարաւային Ռուսաստանի սղեբներու և Ուրբանիոյ (Ukraine) են:

Մեղրք Ռուսաստանի մէջ և մասնաւորապէս ի Լեհաստան առատ մեղր և մեղրամոմ կուտան: Մեղրաշուր (hydromel) ը որ մեղրով շինուած խմորուն ըմպելիք մ'է՝ շատ գաւառներու մէջ գիւնոյ տեղ կը ծառայէ: Շերասը՝ հարաւային կողմերը կը դարմանուի: Լեհաստանի որդնուկը (kermès) որդան կնճաւորի տեսակ մը, մատիտեղի (polygonum) ցեղի մը վրայ կ'ապրի մասնաւորապէս Ուրբանիոյ մէջ և շատ զործածական գոյն մը կուտայ:

§ 5<sup>o</sup> — Ուր ի Ռուսաստան.

Մուշտակաւոր կենդանիք շատ կը գտնուին հիւսիսակողմն և մանաւանդ Միպերիս:

Մատնաբայլ մսակերք շատ են, և են՝ կղնաբիս, արիս, սաւմոյր, կնքուճ, ևն: Կրծող ցեղն ալ նմանապէս կը ներկայանայ շատ տեսակներով, ալպեան մուկը (marmotte), նապաստակը, մուկը, սկիւռք:

Միւս չորքոտանիներէն նշանակենք նաև գարշահոտը (putois), գայլ, կապոյտ՝ սև և խարտեաշ աղունսք, լուսանունք, գորշագոյն և ճերմակ արջ, ջրաղուէս, Սիպերիոյ ճերմակ նապաստակը՝ զորոնք մեծաւ մասամբ Զինաստան կը զրկեն, կողբ, համադէրը (hamster) որուն մուշտակը շատ անգամ զգեստուց կրկնման (doublure) կը ծառայէ, պէրվիդաբի կամ Սիպերիոյ մուկերը՝ խայտափղետ և գծաւոր մորթերով :

Որսերը Ռուսաստան և Գաղղիա մեծ շահ կը բերեն, որովհետև այս երկու երկիրներուն մէկ մուշտակները լաւագոյն կերպով կը պատրաստեն :

Նշանակենք նաև էյտէր բաղերը՝ որոնց յարգի բոյները հիւսիսային ծովափանց վրայ շատ կը գտնուի :

Ռուսաստանի մուշտակները զլիսաւորապէս Լիբսիա և Ֆըրանգֆիրդ կը ծախուին, մասնաւորապէս այս բաղբաց տօնավաճառներուն ժամանակ՝ որ Զատկին կը բացուին և Սուրբ Միքայէլին կը գոցուին :

Ահաւասիկ այն Ռուս մուշտակաց թիւը՝ որ 1837 տարւոյն Լիբսիոյ վաճառանոցը զրկուեցան (!) :

Ոչխար Աժտերիսանու, անգոյն	մորթ	Թիւ	500
» » գունաւոր	»	»	2000
» » ուրիշ տեսակ	»	»	2000
» Խրիմու	գորշագոյն	»	20,000
» Ուբրանիոյ սև	»	»	20,000
Գորշուկ	»	»	8000
Կնգում, կոյտ 300	»	»	36,000
Նապաստակ Լեհաստանի, կոյտ 400	»	»	42,000
» Ռուսաստանի » 1400	»	»	40,000
Կզնաքիս	»	»	2500
Չանագան մորթեր, պարկ 400.—			
Սկիւռ	»	»	2,000,000

(1) A. Selmi.—Trattato di tecnologia commerciale o mercologia.

§ 4<sup>o</sup> — Հանխային բերք. Ուրալայ բովիք.

Հանքերը՝ Ռուսաստանի զլիսաւոր հարստութիւններէն մէկն են և կ'ընծայեն ոսկի, լուսնուկի կամ բլադին, արծաթ, պղինձ, երկաթ, հանքածուխ, աղ, ևն :

Ոսկին մասնաւորապէս Ուրալ լեռանց արևելեան կողմը և Սիպերիոյ կեղրոնը գտնուող զաւառաց հարաւակողմը կը զբտնուի: 1863 տարւոյն Ռուսաստան գրեթէ 750 ոսկելուացք (lavages d'or) կը գտնուէր, որոնք 76 միլիոն ֆռանգաց բերք մը կուտային. 60,000 աշխատաւոր կ'զբաղէր միայն այս գործողութեան: Ընտիր բերք տուող հանքերը Օլէքսիսքի, Պարիլուսիսքի և Զլադոլսոյ հանքերն են Իրբուսոյի զաւառին մէջ: Յետոյ կուգան Ալշայի ոսկելուացքը :

Բլադիքը կամ լուսնուկին Ուրալայ մէջ կը գտնուի, զլիսաւորապէս Ինիժնի-Գաղիլսք և Կորոպլակոտաղ վիճակին մէջ: Բերքն աննշան է հիմա: Տէրութիւնը ժամանակաւ լուսնուկիէ զրամ մ'ունէր, բայց բանի մը տարիէ ի վեր վերցուած է մէջտեղէն :

Կայսեր ստացուածքն ըլլալով արծաթի և կապարի բովքը՝ բոլորն ալ Ներչինսք վիճակին և Կովկաս և Ալդաի լեռանց մէջ կը գտնուին: 1863ին արծաթոյ բերքը 3 միլիոն ֆռանգէ աւելի էր և կապարինը գրեթէ վեց հարիւր հազար ֆռանգաց :

Պղինձը այնքան առատ է որ՝ ներքին սպառման բաւելէն զատ, շատ ալ կ'աւելնայ: Կայսեր ձեռքն են Ալդայի հանքը որոնք՝ տարին 5 միլիոն հազարակրամի պղինձ կը բերեն. բայց զլիսաւոր հանքը Ուրալ լեռանցն են: 1863 տարւոյն, պղնձահանք թուով 136 էին և 11,000 աշխատաւորով: Պղնձի բերքին արժէքը 10 միլիոն ֆռանգ է: Դահանակը կամ մոլոշաբարը (Ռուսաստանի ամենէն առատ պղնձահանքը), շատ անգամ հըրաշալի գեղեցկութեամբ զանգուածներով կը ներկայանայ և զարդուց յարգի նիւթեր կ'ընծայէ :

Զինկը, որ զլիսաւորապէս Լեհաստան կը գտնուի, 2 միլիոն ֆռանգաց եկամուտ մը կուտայ :

Երկաթն ընտիր է առաջին տեսակի է, բայց միշտ սուղ, և կը գտնուի մասնաւորապէս ի Լեհաստան, Բէյրմ, Վիադա, Օրէն-պուրկ, Օլոնէց և Վոլոտկա: Ուրալայ բերքը ասոնց շատերէն աւելի է: Գայսրն իրեն կը սեպհականէ բոլոր Եւրոպիոյ Ռուսաստանի երկամահանքը: Ռուսաստանի երկամին սուղութեան պատճառը հսնքաց հեռաւորութիւնը և տէրութեան սահմանազըլխոց վրայ գտնուիլն է:

Հանքածուխը քանի մը տարիէ ի վեր կը բանուի Ռուսաստան, բերքը չստիւարէ: Գլխաւոր խաւերը միջին կողմերն են և մասնաւորապէս Տոնեցի ջրէղջիւն մէջ և հարաւային Լեհաստան, Դուրա և Էքադէրինոսլաւ: — Ամբողջական արժէքը 2 միլիոն ֆրանգ է միայն:

Աղը շատ աւատ է և անուանի. երեք տեսակ կը բաժնուի այսինքն աղուճակ, աղի խրամներէ ժողվուող աղը և գործատան աղ: Աղուճակը մասնաւորապէս Ուրալայ գօտուոյն մէջ սփռուած է, ինչպէս նաև Բէյրմ և Օրէնպուրկ գաւառները: Աղի խրամները ցիրոցան կը գտնուին Սև ծովու և Ազախու ծովու եզերքը և Վոլկայի սղէքներուն մէջ: Անուանի է Պոմնիոյ աղը: Ամբողջական բերքը 16 միլիոնի կը հասնի:

Նաւթ առատապէս կը գտնուի Խրիմու արևելեան ծայրը, Թաման ցամաքակղզին (որ առաջնոյն դիմացն է), և Կովկասեան գաւառաց արևելեան ծայրը (Պաքու):

Ֆինլանտիոյ, Օլոնէցի բլուրները շատ ազնիւ և գեղեցիկ մարմարին, կրանիթ կամ որձաքար և սիէնիդ (syenite) կը հայթայթեն: — Եփած կիր պատրաստելու յատուկ կրոյ ածխուտը շատ կը գտնուի միջին գաւառաց մէջ: Անոթեղինի կաւն ալ բաւականապէս կ'երևայ տեղ տեղ: Սամը Լիթուանիոյ անտառաց մէջ և Պալդիկի ծովափանց վրայ կը բաղուի:

§ 5<sup>o</sup> — Այլ ևս այլ շարսարտիքներ.

1. Մեքալֆ. — Թէև Ռուսը վերջի տարիներուս մէջ շատ ճշնեցան արուեստականութեան մէջ բարձր աստիճան մ'ընդու-

նելու, սակայն դեռ ռուսական ճարտարարուեստը զգալի կերպով նուաստ են քան Եւրոպիոյ արեւմտակողման արուեստը: Կայսերութեան բոլոր ճարտարարուեստից ամբողջական արդիւնքը 3500 միլիոն ֆրանգաց կ'ելլէ:

Ճարտարարուեստը՝ Անգղիոյ, Գաղղիոյ և Գերմանիոյ նման նշանաւոր կեղարուներ չունին, հապա ծածկուած են, գեղերու մէջ ցրուած ըլլալով. և սակայն քանի մը մեծ գործարաններ կան: Ահա այս պատճառաւ՝ Ռուսաստան որ ճոխ հանքեր և հարուստ վիճակներ ունի, դեռ արուեստական տէրութեանց կարգը չկրնար անցնիլ:

Երկամէ գործուածք 212 միլիոն ֆրանգաց եկամուտ մը կը բերեն: Պղինձը որով ընտիր ճաշակով և արուեստով կամասներ, խահուէի ջեռուցիչներ և կանթեղ կը շինեն, բազմամիւ աշխատաւոր կ'զբաղեցնէ և երկիրն յաջող արուեստից մէկն է:

Թանկագին մետաղներէ շատ նիւթեր կը պատրաստեն, բայց արեւմտեան երկիրներու գործուածներէն միշտ ստորին են իբրև արուեստ:

Շինութեան նիւթերը գրեթէ 16 միլիոն ֆրանգ կը բերեն: Անոթեղէնը, խեցեղէնը, յախճապակը գրեթէ 12 միլիոն ֆրանգաց արժէք մը կը ներկայացնեն: Հայելին և բիւրեղը արեւմտեան կողմերը և մանաւանդ Լեհաստան կը շինուի. արժէքը 28 միլիոն ֆրանգաց կ'ելլէ:

2. Հիւսելի ցնկեր. — Համբաւաւոր է Ռուսաստանի վուելը՝ տեսակին և թելերուն երկայնութեանը համար: Վշոյ պատրաստութիւնը մեծ արուեստ մ'է և գեղերու մէջ տարածուած՝ ամեն տեղ ոստայնի գործարան կը գտնուի, սակայն մեծամեծ գործարաններ չեն կրնար նշանակուիլ: գործածական հնարքը անկատար են և ընդհանրապէս մինչև հիմա ձեռք կը մանեն: Ամենէն ընտիր կտանները Եւրոսլաւ և Քոստոլու գաւառներէն կուզան: Գործատանց և մանոցաց տարեկան բերքը 460 միլիոն ֆրանգաց կ'ելլէ: Խժուծի, թէլի, վշէ հիւսուածոց և Ֆլանտրիոյ ըսուած նուրբ կտաւու շատ հակեր կը զրկուին օտար աշխարհներ:

Փալով կանգնելին, նախնական պատրաստութեան հնարքը ղեռ սկզբնական են, սակայն սրանչելի առաջաստի լամ, պարան, մալուխ և շատ հաստատունն անպատանդակ կը շինեն: Կանեփի ճարտարարուեստը միջին զաւառաց մէջ կ'ըլլայ, ուր կը մշակուի այս տունկը: 1864 տարւոյն 176 գործատուն կար 5000 աշխատաւորով: Գրեթէ 500,000 բնակիչը, ասղիս անդին ցիրուցան, ձեռքը բնան կը բանին:

Այս դարուս սկիզբը բամբակը ռուսական գործուածոց մէջ չէր մտնար: Անգղիա բամբակ կը հայծայթէր Ռուսաստանի, սակայն 1820 տարիէն ի վեր այս ճարտարարուեստը զարգացաւ և վշոյ բերբին հետ կրնայ հաւասարիլ. 1830 ին բամբակի մուտքը 2,400,000 հզկրմ. էր, 1840 ին 8 միլիոն, 1850 ին 23 միլիոն, 1860 ին 45 միլիոնի ելած էր: Բուն Ռուսական բամբակեղէնը այսօրուան օրս բնակչաց կրնայ բաւել, բայց բանի մը աւանդութեանց հետեւելով՝ բնակչաց շատը լաւ կը համարին օտարաց բերքը գնել: Եւ սակայն բամբակեղէնը 400,000 գործաւոր կ'զբաղեցնէ: Ամբողջ բամբակեղինաց արժէքը 360 միլիոն ֆռանգաց կ'ելլէ:

Ճակնդեղի ւաքարը 88 միլիոն ֆռանգ եկամուտ մը կը բերէ:

Թ՛ղրոյ պատրաստութիւնը բանի մը հազար բազուկ կը գործածէ: Փեղրպուրկայ կառավարութիւնը այս ճիւղիս մէջ նշանաւոր է:

Ճրագուն որ կճատ (չէմէ) ճարպիւղ (եաղ մօմու) ճարպալից ճրագ (սբարմաչէթ մօմու) և օճառ շինելու կը ծառայէ: այն երկիրներէ կուզայ, ուր արջառ և ոչխար կը դարմանուի այսինքն հարաւային և հարաւային-արեւելեան զաւառներէ: Ասոնք բովանդակ 80 միլիոն ֆռանգաց արժէք մը կ'ընծայեն:

Ռուսական կաշիները և մուշակները շատ յարդի են: Նշանաւոր է Խազան կաշիներովը և Աժսէրխան մուշտակներովը և ոչխարի մորթերովը, որոնցմէ դաստակ (manchon) և գղակ կը շինեն ևն: Երկուքը ի միասին 224 միլիոն ֆռանգաց գումար մը կը կազմեն:

§ 6° — Զկնորսութիւն.

Ռուսաստան անբաւ ձուկ կ'սպառէ: Հիւսիսային միշտ սառուցեալ երկիրներու մէջ որսացուած ձկանց բառորդը՝ սառուցեալ վիճակի մէջ կը տեղափոխեն և այլ և այլ երկիրներ կը տանին: Նաև Պալդիկ ծովու բանի մը ձկերը՝ վաճառականութեան մէջ նոյնպէս սառուցեալ վիճակու ծանօթ են: Ռուսք սովորութիւն չունին ձկերը Հոլանտացոց պէս խոնելու (encaquer) հապա սառերով շրջապատած մեծ կարասներու մէջ կ'աղօտեն:

Ազախու ծովը, Տօն, Գուպան և Կասպից ծովը նշանաւոր են իրենց ձկամբքը: Վոլկայի բերանը և Կասպից ծովու այլ և այլ կողմերը մեծամեծ շէնքեր հաստատուած են ձկանց պատրաստութեան: Ամենէն ընդարձակ պատրաստատեղին Գուրայի վրան է, և Պոժիլի Քրոմիսլի կը կոչուի որ ասուածային ձկնաբան կը թարգմանուի: Օր կ'ըլլայ որ, այն պատրաստատեղեաց մէջ 100,000 ֆռանգաց ձուկ կը պատրաստուի: Եւրոպիոյ Ռուսաստանի ձկանց բերքը զրեթէ 80 միլիոն ֆռանգ կը բերէ:

Ռուսաստան բոլոր որսացած ձուկերը սպառելէն ետքը, օտարներէն ալ 8 միլիոն ֆռանգաց բինկա, ձողածուկ, աղկեր, անձրուկ ևն. կը գնէ:

Յիրաւի՝ բնակիչը շատ անգամ ձկով կը սնանին, որովհետև Ռուս եկեղեցին խստիւ կ'արգիլէ միս ուտելը տարւոյն շատ օրերը:

Անոյշ ջրոյ ձկնորսութիւնը, մանաւանդ Թուխու (esturgeon) ի որսը ամենէն նշանաւորն է. այս ձկան բերքերն են ձկնկիթը (խալիար) և ձկնասոսինձը (ich hyocolle) որոնց ամբողջական բերքը 30 միլիոն ֆռանգը կ'անցնի:

Մովսիսի ամեն ձկերէն աւելի միայն ձողածուկը և բինկա ձուկը վաճառականական շահ կը բերեն. միւս ձկերը բոլորն ալ գետային են կամ տարւոյն այլ և այլ եղանակներուն գետե-

րու մէջ կ'ապրին: Ամենէն շատ ձուկ ունեցող գետերը՝ Սև ծով, Ազախու ծով և Կասպից ծով կը թափին: Վոլկա և գետակիցքը (Օբա ևն.) Յուխու որսալու մասնաւոր տեղուանքն են:

Ձկնկիթ կամ խավիար, այս ոռուսական համեղ ուտելիքը, Յուխույի և ուրիշ բանի մը տեսակ ձկանց կիթովը կը պատրաստուի: Երկու տեսակ ձկնկիթ կ'ըլլայ, հեղուկ խավիար որ և հատիկաւոր խավիար կը կոչուի, և պիկն խավիար (բախուսնայեա): Առաջինը ձկան կիթերը ազաշրոյ կամ համեմեալ քացախի մէջ դնելով (mariner) կը պատրաստեն. երկրորդը, ազօտելով և միակերպ դարձնելով՝ որով սաստիկ կը պնդանայ: Առևտրոյ մէջ ամենէն յարգի խավիարը Գալուկայինն է: Խավիարը մեծաւ մասամբ կարասներով կը զրկուի Տանկաստան և Գերմանիոյ և Իտալիոյ այլևայլ կողմերը: Խավիարի վաճառականութեան տեղիքն են Աժտերխան և Թականրոկ:

Ձկնասոսիճնը որ Յուխուի և ուրիշ բանի մը ձկանց լուղական փամփշտովը կը շինուի, արտահանութեան մեծ նիւթ մ'է:

Սառուցեալ Ովկիանոսի մէջ որսուած ծովահորթոյ և մօրսի (morse) եղբէն, մորթէն և յատամանց, զրեթէ Չ միլիոն ֆունգ կը շահի Ռուսաստան:

§ 7<sup>o</sup> — Առեւտուր Արսահանութիւն և

վաճառաքերութիւն.

**Վաճառականութիւն ընդ Ասիոյ.** — Ռուսաստանէ Ասիա անցնող զլխաւոր ապրանքն են՝ բամբակեղէն, առուեղէն, մետաքսեղէն, անողորկ սար, անողորկ բամբակ, արմտիք, զէնք, հանքաբանականայլևայլ նիւթեր, խեցեղէն, մորթ, պղինձ, երկաթ, գործած պղինձ, շաքար, վշէ և կանեփէ շինուած նիւթեր և մանուած բամբակ: — Տարուէ տարի, 80 միլիոն ֆունգաց ապրանք կը զրկէ թէ Չինաստան և Պարսկաստան և թէ Թուրքաստան և Տանկաստան Ասիոյ:

Ասիայէ Ռուսաստան անցնող զլխաւոր ապրանքն են՝ Պէյ, բամբակ, Պարսկաստանի բամբակեղէն, արջառ, կաշի, պտուղ, զուտ շաքար, մորթ, անողորկ մետաքս, բրբուճ, տորոն, ծխախոտ, առուեղէն, ևն: Վաճառաբերութիւնը զրեթէ 100 միլիոն ֆունգաց արժէք մը կը ներկայացնէ:

Ռուսաստանի հետ յարատև առևտուր ընող Ասիոյ զլխաւոր երկիրներն են՝ Պուխարա, Չինաստան, Տանկաստան Ասիոյ և Պարսկաստան: Այս երկիրներէն շատերը աւելի ապրանք կը զրկեն Ռուսաստան քան թէ կ'ընդունին:

**Վաճառականութիւն ընդ Եւրոպիոյ և Ամերիկոյ.** — Եւրոպիոյ հետ Ռուսաստանի առևտրական փոխանցութիւնը կը կատարուին մէկ կողմանէ Պալդիկ ծովով (Նաւահանգիստը՝ Փեդրպուրկ, Րիկա, Ռէվէլ), միւս կողմանէ Սև ծովով և Ազախու ծովով (Նաւահանգիստը՝ Օտէսսա, Թականրոկ, ևն.) և վերջապէս ցամաքով՝ ճամբաներու և երկաթուղեաց միջոցով:

Արևմտեան ազգաց հետ ազատաբար առևտուր ընելու համար Ռուսաստան քիչ ծով ունի իւր ընդարձակածաւալ երկրին համեմատ: Կը ջանայ տիրելու մէկ կողմանէ Պալդիկի և միւս կողմանէ Սև ծովու: Ետտոնց՝ Հիւսիսոյ մեծ տէրութիւնը Նախանձոտ աջօր կը բնէ Սուևտը և Վոսփորոսը: Ասոնք են կ'ըսէ սանս երկու բանալիք, օտարաց ձեռքը անցած:

Թէպէտև Ռուսաց վաճառականութիւնը զսպուած և սանձանուած է, այս երկու անցից պատճառաւ որոնց տէր չեն, սակայն դարձեալ շատ կարևոր յարաբերութիւններ հաստատած են Արևմտեան մեծ տէրութեանց հետ:

Ռուսաստանէ՝ Եւրոպական գաւառաց անցնող զլխաւոր ապրանքն են՝ արմտիք, վուշ, բուրդ, հատկաւ կամ կտաւատ, ճրագու, կանեփ, խոզի մազ, զանազան փայտեր, արջառ, վշոյ խժուճ, մետաքս, եղ, մանուած կանեփ, բողաս, մորթ, զանազան կտաւներ, իւղալից հետեր, չուան, մալուխ, կաշի, կուպր, խավիար, ևն:

Եւրոպայէ և Ամերիկայէ՝ Ռուսաստան մտնող ապրանքն են՝

մասնաւորապէս անմաքուր բամբակ, ներկ, գործուած մեքենական արգասիք, եղ, անզուտ մետաղ, մեքենայ, առատ բուրդ, պտուղ, ձուկ, խահուէ, անզուտ շաքար, մետաքսեղէն, ասուեղէն, մանած բամբակ, ծխախոտ, վշեայ և մետաքսեայ հիւսուածք, քիմիական արգասիք, բամբակեղէն ևն :

Ռուսաստանի՝ զանազոց պաշածնատէրին 1871 ի արտաքին վաճառականութեան վերաբերեալ նոր հրատարակած վիճակագրոց գրքոյն մէջէն հետեւեալ հատուածը անցընենք մենք ալ մեր գրքուկին մէջ, վասն զի շատ պիտանի տեղեկութիւններ կրնանք առնուլ անկից :

Անցեալ տարուան միջոցին մէջ, կ'ըսէ, արտահանութիւնը գրեթէ 352 միլիոն ռուպլի արժէք ունէին, մինչդեռ վաճառաբերութիւնը միայն 315 միլիոն էին : 1869 ի արտահանութիւնը 357 միլիոն էին, մինչդեռ վաճառաբերութիւնը 324 միլիոնի կը հասնէին : Ուստի արտահանութեանց արժէքը 37% աւելցաւ 1870 ին, 1869 ին նկատմամբ : Անցեալ տարի առաւելութիւնը 75% էր 1866 ին վրայ և 109% 1860 ին վրայ : Արտահանութեան ապրանաց մէջ ցորենը ոչ թէ միայն առաջին կարգը կը բռնէ, հապա նաև անով վաճառականութիւնը տարօրինակ կերպով աճեցաւ : 1870 ին դուրս դրկուող ցորենոյ արժէքը 163 միլիոն ռուպլի էր՝ մինչդեռ 1867 ին, Եւրոպական սովոյ տարի մը, մեր ցորենոյ արտահանութիւնը 94 միլիոն ռուպլին չէր անցնէր : 1863 ին՝ ամենէն անյաշող տարին, հազիւ 44 միլիոնի գումար մը կը կազմէր : Յորենէն վերջը արտահանութեան գլխաւոր ապրանքն են կտաւատ և վուշ՝ որ անցեալ տարի 84 միլիոն ռուպլի արժէք մը ներկայացուց : 1870 ին վշոյ արտահանութիւնը անհամեմատելի կերպով բարձրագոյն էր քան զ'1869 ինը, բայց կտաւատինը փոքր ինչ նուազած էր : Անցեալ տարի 57 միլիոնի վուշ դրկեցինք ի վաճառ, մինչդեռ 1869 ին հազիւ 33 միլիոն էր : — Յետոյ կուգայ շինութեան փայտը, 1870 ին 13 միլիոն ռուպլի դուրս դրկեցինք, իսկ 1869 ին 11 միլիոն էր : — Յետոյ կուգան կանեփ, խոզի մազ, արջառ, մորթ և կաշի : Սակայն միւս կողմանէ՝ քանի մը

ապրանաց արտահանութիւնը նուազեցաւ . ինչպէս ճրագուոյ, ոչխարի մորթոյ և վշոյ իւրոյ : 1870 ի պատերազմը մեծ պատճառ մ'եղաւ վաճառաբերութեանց պակասելուն, մասնաւորապէս բամբակի, մետաքսեղինաց, գաղթականաց բերքերու, պտղոց և այլ և այլ սննդարար նիւթոց. սակայն մեքենական նիւթոց մուտքն աւելցաւ : Նշանաւոր բան է որ՝ անցեալ տարուան քաղաքական դէպքերէն ամենևին փոփոխութիւն չկրեւրմպելեաց և նորելուկ ապրանաց մուտքը :

Պալդիկի և Սև ծովու նաւահանգիստները մեր արտահանութեանց մեծագոյն մթերանոցն են, սակայն օտարազգի ապրանաց վաճառաբերութեան գլխաւոր միջոցներն Պալդիկի նաւահանգիստը և մեր արևմտեան սահմանազուխքն են : 1870 ին մեր նաւահանգիստը մտնող նաւուց թիւը առաւելագոյն էր բաղդատմամբ նախընթաց տարւոյն :

Այն երկիրները որոնց հետ շարունակ առևտուր ունինք՝ հետեւեալներն են . և պատկերացոյց մը յերևան կը հանէ մեր արտահանութեանց և վաճառաբերութեանց արժէքը :

ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԻՔ		ՎԱՃԱՌԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՔ	
Մեծն Բրիտանիան, ռուպլի կ'ընդունի	170,000,000	Բրիտանիա կը զրկէ	107,000,000
Բրուսիա	68,000,000	Բրուսիա	126,000,000
Գաղլիա	34,000,000	Գաղլիա	19,000,000
Աւստրիա	14,000,000	Աւստրիա	10,000,000
Տաճկաստան	10,000,000	Տաճկաստան	9,000,000
Հոլանտա	8,000,000	Հանսէտայիք բղբ.	9,000,000
Ֆերմանիա (ի բաց առեալ Բրուսիա)	6,000,000	Պելճիա	6,000,000
Շուետլանդիա	4,000,000	Իտալիա	7,000,000
Պելճիա	7,000,000	Միացեալ-Նա-հանգք	5,000,000

Վաճառականական ազատութիւնն ղեռ ընդունուած չէ, սակայն նախնական նիւթերն ընդհանրապէս ազատ են մաքսէ :

§ 6<sup>o</sup> — Մեծաւեծ տօնավաճառք եւ կտուարակ.

Ռուսաստանի ներքին առևտրոյն մէկ մեծ մասը տօնավաճառով կ'ըլլայ: — 6050 տօնավաճառ կայ, որոնցմէ շատերուն աշխրհիս ամէն կողմէն վաճառականներ կ'երթան: Տօնավաճառաց զրկուող և տարւող ապրանաց արժէքը միջին հաշուով տարուէ տարի 1600 միլիոն ֆրանգաց կ'ելլէ:

Այս տօնավաճառաց զլխաւորն է Նիժնի Նովկորոս, ուր կը ժողովուրն ամեն երկրի վաճառականք, արեւելից և արեւմտից ծագերէն: Ռուսաստանը կը բերէ հոն՝ բամբակեղէն, ասուեղէն, մետաքսեղէն, քծան, մետաղներ, կաշի ևն: Եւրոպական այլևայլ տէրութիւնք ևս կը զրկեն հիւսուածք, բամբակեղէն, զինի, ևն: Զինք կը բերեն իրենց թէյը. Պարսկաստան, Միջին Ասիա և Պոլսարա կը ներկայանան հոն իրենց անմաքուր բամբակովը և անողորկ մետաքսովը: Ռուսաց բամբակեղէնները մասնաւորապէս Զին և Պոլսարացի վաճառականք կը գնեն:

Յետոյ կուգան Իրպիթ, Սրբուհի Մարգարիտա և Պլակովէս-չէնսքի տօնավաճառները Արխանկէլ գաւառին մէջ. Վէրսիէ-կուսք, Իվէր գաւառին մէջ. Ռոստով, Եարոսլաւ գաւառին մէջ. և Քուրսք, Բոլղաւա, Քիէվ, Քիշնէվ, Պէրտիշէվ և Խարքով տօնավաճառները:

Այս տօնավաճառներէն շատը տարին երկու միլիոն ֆրանգ վաճառակ ունին: Նիժնի Նովկորոտի վաճառանոցէն ետքը, ամենէն յաճախուածները Ուբրանիոյ տօնավաճառներն են:

Եւրոպիոյ Ռուսաստանի և Ասիոյ մէջտեղ՝ կառաւաններու միջոցով կարգաւորեալ փոխանցութիւններ կը կատարուին: Այն ճամբով է որ Սիպերիա և Զինաստան՝ մինչև Մոսկուա և Ռուսաստանի մէջտեղուանքը գտնուող այլևայլ քաղաքաց մուշտակ, թէյ, մորթ և յախճապակ կը հասցընեն: Կառաւանները Պոլսարա նաև կանոնաւոր կերպով կ'երթան ու կուգան:

§ 9<sup>o</sup> — Հաղորդակցութեան միջոցք.

**1. Նաւարկելի ցամաքներ.** — Ռուսաստան իր բազմաթիւ գետոց մէջ (§ 1) ներքին նաւարկութեան սքանչելի զբոսութիւն մը ունենալու առաւելութիւնն ունի, և սակայն տարւոյն շատ ամիսներուն մէջ այն ալ կ'ընդհատի սառոյցներուն պատճառաւ:

Մասնաւորապէս Վոլկա գետը, Ռուսաստանի ներքնակողման ամենէն յարմար և լայն երակն է. հոն 35—40,000 նաւ, լաստ կամ լաստափայտ կը շրջին, 7—800 միլիոնի ապրանք տարուբերելով:

Տներեր զժուարանաւելի է քանի մը սահանացը պատճառաւ: — Բազմաթիւ ջրանցք բացուած են՝ Ռուսաստանի գետերը մէկմէկու միացնելու համար: Գլխաւորներն են Վիլնի-Վոլոչոքի ջրանցքը՝ որ Վոլկա գետը իլմէն լճին կը միացընէ. Դիխվիցի ջրանցքը՝ Վոլկայի և Լատոկա լճին մէջտեղը: Մարի ջրանցքը՝ Օնեկա լճին և Պիէլո լճին մէջտեղ՝ որ Վոլկայի ջրշեղջին մէջն է: Լաւոկա ջրանցքը՝ որ Վոլխովէ՝ Նեվա կ'երթայ: Քուպլեմսք ջրանցքը՝ որ Վոլկայի գետակիցը զՇեքսնա կը միացընէ, հիւսիսային Տվինայի գետակցին Սուխոնայի: Հիւսիսային Տվինայի ուրիշ գետակից մ'է: Պերեգինայի ջրանցքը՝ համանուն գետոյն և հարաւային Տվինայի մէջտեղ: Օյիմսքի ջրանցքը՝ Բրիբէղի և Նիէմէնի մէջտեղ. Դէլին ջրանցքը՝ որ Լիվոնիոյ ծոցին կը միացընէ զԷմպախ որ Բէյբուսի լիճը կը թափի. Սախմա ջրանցքը՝ Սախմա լճին և Ֆինլանտիոյ ծոցին մէջտեղ. Արայալկա ջրանցքը՝ ընդմէջ Բրիբէղի՝ Տներերի գետակցոյն և Պուկի, որ Վիսկուլա կը թափի:

**2. Ծովային նաւարկութիւն.** — Ռուսաստանը շրջապատող ծովերը՝ թէպէտև վաճառականութեան մեծ առաւելութիւն մ'են, բայց միշտ նպաստաւոր չեն: Պալդիկը լի է կըղզեակներով և խռթերով և շատ ամիսներ սառոյցով ծածկած:

Սառուցեալ Ովկիանոսը և Սպիտակ ծովը երկայն ժամանակ անմերձենալի են: Սև ծովը՝ որ թէև հարաւային աստիճաններու տակ է, երբեմն քանի մը ծոցերուն մէջ սառ կը կապէ և Պանձր մարտիտուղ և սաստիկ քամիներ ունի, Ազախու ծովը սկալից է և Գուպանի և Տօնի աւազարերու թեամբը կամաց կամաց լեցուցելու վրայ է: Սանձարձակ հովեր, և շատ անգամցած և սկալից ծովափունք՝ սովորաբար կը զժուարացընեն Կասպից ծովու նաւարկութիւնը:

**3. Երկաթուղիք.** — Ռուսաստանի գլխաւոր երկաթուղին Փեդրպուրկէ Մոսկուա է. Մոսկուայէն իր ճիւղերը կը կը բաժնուին դէպ ի նիժնի-Նովկորոս, Ռիազան, Բաղով, Դուրա և Օրէլ: Երկաթուղի մը Փեդրպուրկէն Վարսախա կ'երթայ Վիլնայէն անցնելով և ճիւղեր ունենալով Բովնոյի և Գեօգիկսպէրկի, Ռիկայի և Վիդէպսի վրայ: Վարսախա հաղորդակցութիւն ունի Գրաֆովոյ, Վիէննայի և Պէրլինի հետ: Ֆինլանտիոյ մէջ երկաթուղի մը կայ որ՝ Հելսինկիփօրսէն Դաւապէհուս կ'երթայ:

Նոր երկաթուղի մը հաստատուեցաւ Օսէսայի և Վոլոչիսի մէջտեղ. այս ուղին Կոստանդնուպօլսէ արևմտեան Եւրոպա անցնելու ամենէն կարճ ճամբաներէն մէկն է:

Կոստանդնուպօլսէ Վիէննա երթալը Օտեսայէն անցնելով հինգ օր կը տեւէ, մինչդեռ շատ աւելի ժամանակ կը տեւէ Պուրբըշի ճամբով:

Օսէսա միացած է նաև Ձերնովիչի. և այն երկաթուղւոյն միջոցով կանոնաւոր երթևեկութիւն կ'ըլլայ ընդմէջ Հիւսիսային Գերմանիոյ և Թիֆլիզի:

Թիֆլիզ միացած է նաև Բոդլիի երկաթուղւոյ միջոցով: Ռուսաստանի երկաթուղեաց տարածութիւնը 6900 հազար ամէր է:

**4. Հեռագիր.** — Ռուսաստանի էլեքտրական հեռագրաց մէջ ամենէն նշանաւորը այն գիծն է որ՝ բոլոր Եւրոպիոյ Ռուսաստանը և Սիպերիան արևմուտքէ արևելք կը կտրէ կ'անցնի. Փեդրպուրկէ մինչև Խաղաղական Ովկիանոս և Ձինաստանի

սահմանագլուխքը: Պատրաստութիւն կայ զայն մինչև Ամերիկա ձգելու՝ Ալէուդեան կղզիներէն անցնելով:

**5. Բալլիսի.** — Երբոր գետերը սառոյց կապեն և երկիրը Պանձր ձիւնով ծածկուի, այն եղանակին Ռուսաստան հաղորդակցութեան միջոցներ ունի, որ բարեխառն կլիմաներու մէջ ծանօթ չեն: Ճանապարհորդը և սուրհանդակը սառոյցներու վրայէն արագապէս կը սլանան բալլիսներով՝ որոնց ձի կը լծեն տէրութեան մեծ մասին մէջ: Հիւսիսային կողմերը ռէն և Սիպերիոյ մէջ մասնաւորապէս կորովի շներ կը լծեն՝ ուր այն կենդանեաց ծառայութեան համար կարգաւորեալ իջևաններ հաստատուած են: Գետերը այն ժամանակ հարթ ու տափարակ ճամբաներու տեղ կը ծառայեն, ընդարձակածաւալ դաշտերը ամենէն արդելը չեն կանգնէր: Այս կերպով զացող ապրանք և ճանապարհորդը՝ կայսերութեան առևտրական շարժմանց մէկ մեծ մասը կը կազմեն:

10° — Եւրոպիոյ Ռուսաստանի վաճառաշահ նաւահանգիստքը եւ գլխաւոր ֆաղափը.

**Արխանգէլ.** — (20,000) Սպիտակ ծովուն ծօտ, հիւսիսային Տվինայի վրայ կառուցած՝ հիւսիսային Ռուսաստանի առևտրոյն մթերանոցը և Սիբիցպէրկի և Նոր-Չեմիոյ ձկնորսութեանց մեծ պատրաստութեան տեղի: Յաստատուած նաւահանգիստ է ամառուան եղանակին, տարւոյն մնացած ութ ամիսը սառոյց կը կապէ և անմերձենալի է: Փեդրպուրկայ կառուցմանէն ի վեր առևտրական շարժմունքը շատ պակասած են, սակայն մինչև հիմա Արխանգէլ հիւսիսային Ռուսաստանի արտահանութեան նաւահանգիստն է: Աւեր նաւարան ունի: Վասաուկանութիւն մուշտակի, կիտոյ իւղոյ, ցորենոյ, կայմի և շինութեան փայտի, կտաւատի, երկաթի, կպրոյ, մալխոյ և աղածքի:

Դէպ ի Պալղիկ և Պոթնիոյ և Ֆինլանտիոյ ծոցերը .  
**Ուլէպուրկ, Ապօ, Հէլսինկլաֆուս.** որ շինուածեան ա-  
ղէկ նաւարաններ ունին :

**Փեդրպուրկ Ռուսաց լեզուով Սանկդ Փէդէրպուրկ.** —  
(550,000) Կայսրութեան մայրաքաղաքը, Նէվա գետոյն վրայ  
կառուցած, Ֆինլանտիոյ ծոցին մէջ: Ջրանցից, գետերու և եր-  
կաթուղեաց միջոցով՝ Ռուսաստանի վաճառաշահ քաղաքաց շա-  
տերուն հետ հաղորդակցութիւն ունենալով՝ Ռուսաստանի ապ-  
րանաց գլխաւոր մթերանոցն եղած է: Նաւահանգիստն ալ բաց  
է օտար ապրանաց վաճառաբերութեան, ուսկից դէպ ի Մոս-  
քուա, Նիժնի-Նովկորոտ ևն. կը ճառագայթեն: Գործարան  
հայելւոյ, յախճապակոյ և խեցեղինի, Թղժոյ, կապերտի  
և կաշեղինի: Մթերանոց հարաւային Եւրոպիոյ ապրանաց և  
նպարի: Վաճառականութիւն կաշւոյ, մուշտակի, ձկնաստանձի,  
մեղրամոտոյ և ճրագոյ: Արտաքին նաւարկութեան շարժումն  
6000 նաւ էր 1868 ին, և առևտրոյն արժէքը 600 միլիոն  
ֆրանկաց է:

**Քրոնցլաս.** — Կայսերութեան մեծագոյն նաւարանը, Նէ-  
վայի բերանը՝ Ռիցբար կղզւոյն վրայ, Փեդրպուրկէն 41 հզմղր  
դէպ ի արևմուտք: Զօրաւոր ամրութիւններ ունի ծովու կողմէն  
մայրաքաղաքը պաշտպանելու համար: Պատերազմական նա-  
ւահանգիստ է ուր կը կենայ Ռուսաց հիւսիսային նաւատոր-  
միղը: Հոս կանկ կ'առնուն և ապրանքնին կը պարպեն ծանրա-  
բեռն նաւերը, որ մինչև Փեդրպուրկ չեն կրնար ելլար:

**Ռէլլէլ կամ Ռէլլալ.** — (30,000) Ամուր քաղաք և միանգա-  
մայն նաւահանգիստ Ֆինլանտիոյ ծոցին վրայ: Մեծ վաճառա-  
կանութիւն Անգղիոյ, Գերմանիոյ և Հոլանտայի հետ. արտա-  
հանութիւն ցորենոյ, վշոյ, կանեփի, կաշւոյ և մեղրամոտոյ:

**Ռիկա.** — (70,000) Ամուր քաղաք և բանուկ նաւահան-  
գիստ: Մեծ վաճառականութիւն մուշտակեղինի, կպրոյ, կպրա-  
ձիւթոյ, կտաւատի, ցորենոյ, կտաւու երկաթի, կանեփի, վշոյ,  
կաշւոյ, ճրագոյ, կայմի, շինութեան փայտի, արջառու, երի-  
ւարի ևն: Արևմուտք և մասնաւորապէս Անգղիոյ 100 միլիոն

ֆրանկաց արմտիք, հիւսելի նիւթեր, իւղ ևն. կը ղրկէ: Նաւա-  
կան շարժումն 1800 նաւ է:

**Վիլնա կամ Վիլնօ.** — (50,000) Մեծ վաճառականութիւն  
ցորենոյ և մուշտակի: Վաճառականութիւնը մեծաւ մասամբ  
Հրէից ձեռքն է:

**Վարսովիա կամ Վարսուա.** — (165,000) Լեհաստանի  
մայրաքաղաքը Վիսդուլայի վրայ. մեծ մթերանոց Ռուսաստա-  
նի և միջին Եւրոպիոյ մէջտեղ: Կեդրոն ընդարձակ գործարա-  
նաց ասուեղինի, բամբակեղինի, մետաքսեղինի, շաքարի, մե-  
քենայի, հերկագործական գործեաց և մայշորի (maillechort):

**Քալիսլա կամ Քալիսց.** — Գործարան չուխայի:  
**Լոսս.** — (35,000) Բուն արուեստական բաղաք. գործարան  
չուխայի, բամբակեղինի, խեցեղինի ևն:

**Լիւպլէն.** — (20,000) Միւնտյն ճարտարարուեստքը և  
տարեկան տոնավաճառ մ' ունի:

**Նովկորոս.** — Ատենօք ծաղկած և անուանի էր, իսկ հի-  
մա ինկած. սակայն նշանաւոր են գամերը և հոջակաւոր կա-  
շին:

**Քսոլ.** — Նոյնպէս անկեալ քաղաք. սակայն անուանի են  
հաստատուն կտաւքը, որ շատ աղէկ կուզան հակերը ծածկե-  
լու և ծրարելու:

**Յարսուա.** — (25,000) Վաճառականութիւն ցորենոյ,  
ձկան, վշոյ, տաղաւարի և կտաւու, ռուսական կաշւոյ, վշոյ  
իւղոյ, ևն: Գործարան գամեղինի, դանակեղինի, Թղժոյ, մե-  
տաքսեղինի և խոզի մազէ հիւսուածոց:

**Քոսդրոմա.** — Վոլկա գետոյն ափանց վրայ. նշանաւոր  
պղնձէ գործուածքովը և կտաւովը: Արտահանութիւն ցորենոյ,  
ճրագոյ, փայտէ անօթից և Ռուսաստանի կարմիր և յարգի  
կաշւոյ:

**Ղվեր.** — Ամուր քաղաք, հոս շատ գամեղէն կը շինուի:

**Մոսկուա.** — (450,000) Կայսերութեան երկրորդ մայրա-  
քաղաքը, Ռուսաստանի ամենէն արուեստական գաւառին կեդ-  
րոնը կառուցած՝ Մոսկովա գետոյն վրայ: Այս քաղաքը ընդ-

արձակաձառալ գործարան մը, արուեստասանոց մ'է՛ որ տէրու-  
 թեան միւս մասանց համար կ'աշխատի և ամեն կողմ կը տա-  
 րածէ իւր բամբակեղէնը, ասուեղէնը, կտաւները, մետաքսե-  
 ղէնը, երկրագործական գործիքը են: Եւս առաւել Ասիոյ և  
 Եւրոպիոյ տպրանաց փոխանցութեանց մեծ զիծն է: Յարաբե-  
 րութիւնքը կ'ընդլայնին Չինաստանէ, Պարսկաստանէ և Պու-  
 խարայէ՛ մինչև Լայբցիկ, Վիէննա, Համպուրկ, Լոնտրա, Բա-  
 րիզ, Մարսիլեա և Պորտո :

**Վլասիւիւր.** — Ատենօք ծաղկեալ քաղաք էր, բայց հիմա  
 ինկած :

**Քալուկա.** — (32,000) Գործարան երկամեղինաց, անօ-  
 թեղինաց և մետաքսեղինի: Անուանի է խավիրարը: Վաճառա-  
 կանութիւն ցորենոյ, իւղի, ճրագւոյ, կանեփի և ձիւթոյ:

**Պուլա.** — (60,000) Մեծ և աղւոր քաղաք որուն վաճա-  
 րականները շատ հարուստ են: Վաճառականութիւն Եւրոպիոյ  
 ապրանաց, յոնիական զինւոյ և Տաճկաստանի բերոց: Անուա-  
 նի է զինուոց կայսերական գործարաններովը, բնազնական և  
 չափաբերական գործեաց գործարաններովը:

Գուլայի պողպատաշէն գործիքը Անգղիայիներուն կրնան  
 հաւասարիլ: Երջակայքը շատ անտառ և աղէկ երկամի հանք  
 կան:

**Նիմնիկորոս** կամ Նիմնի-Նովկորոս. — (36,000) Ռու-  
 սաստանի վաճառաշահ քաղաքաց մէկը: Նշանաւոր բամբակե-  
 ղինի և երկամեղինի գործարաններովը: Վաճառականութիւն  
 ցորենոյ, ձկան, և կեղնէ փսիամի: Գործարան օճառի, մալխոյ  
 և կաշեղինի: Երկիրը բարեբեր է. առատ են հասարակ ցորենը  
 և ազնիւ ցորենը. բազմութիւն արջառու, որսի թռչնոց և ձկան.  
 մայրոյ և թանձրութենոյ անտառներ. մարմարիոնի քարա-  
 հատք: (§ 8.)

**Խազան** կամ Քազան. — (63,000) Համանուն գաւառին  
 մայրաքաղաքը Քասանքայի վրայ, Վոլկայի մօտ: Մեծ վաճա-  
 րականութիւն մուշտակի և սէկի: Գործարան կաշեղինի և օ-  
 ճառի: Այս նամբով Եւրոպա կ'անցնին Քաշմիրի շալերը:

Ուրալայ կողմերն են.

**Յերմ.** — Պղնձի և երկամի բովքով և հալոցներով:

**Երպիլ.** — Ռուսաստանի սահմանազխոյն վրայ՝ հոչա-  
 կաւոր է բովքովը, և մեծ տօնավաճառովը, ուր կը ժողվուին  
 Եւրոպիոյ և Ասիոյ վաճառականք:

**Էֆաղէրիսպուրկ.** — Ոսկոյ և արծաթոյ ճոխ հանքերու  
 կեղրոնը. կարևոր դարբնոցներ և զինուոց գործարաններ ունի:

**Պերեզով** Ուրալայ. — Նաև ոսկոյ հանքով:

(Այս վերջի երեք քաղաքը թէև Ուրալայ արևելակողմն են,  
 սակայն Բերմ գաւառէն կախմունք ունին, որն որ Եւրոպիոյ  
 Ռուսաստանի մասնն է :

**Օրէնպուրկ.** — Նոյնպէս սոսմանազխոյն վրայ, աշխրհիս  
 երկու մասանց մէջտեղ մեծ մթերանոց է. յաճախուած է վա-  
 ճառականաց մեծ բազմութենէ՛ որ Հնդկաստանէ, Պուխարայէ  
 և Թամարստանէ կուզան :

**Քէնցա.** — (25,000) Միջին Ռուսաստանի մէջ. գործարան  
 չուխայի, օճառի, ապակւոյ, կաշեղինի, բողասի և երկամե-  
 ղինի :

**Քոզլով.** — Ժամանակաւ միջին Ռուսաստանի ամենէն վա-  
 ճառաշահ քաղաքաց մէկն եղած պիտի ըլլայ:

**Քամպով.** — (30,000) Բանուկ վաճառականութիւն անցիկ  
 ապրանաց. գործարան չուխայի, առագաստի լամի, ապակե-  
 ղինի և բորակի:

**Օրէլ.** — (32,000) Համանուն գաւառին մայրաքաղաքը.  
 մեծ վաճառականութիւն ցորենոյ:

**Քիէվ.** կամ Քիւմ. — (70,000) Ուրբանիոյ մայրաքաղաքը  
 Տնէբերի վրայ: Բանուկ վաճառականութիւն ասուեղինի, մե-  
 տաքսեղինի, արջառու, օղւոյ, ցորենոյ, երկամի, մալխոյ, խե-  
 ցեղինի և շինութեան փայտի: Մեծ տօնավաճառ:

**Քուլպաւա.** — (20,000) Բանուկ վաճառականութիւն եղ-  
 շիւրաւոր կենդանեաց, վշոյ, կանեփի, ցորենոյ և մեղրամոմոյ:

**Խարսով.** — (45,000) Ուրբանիոյ բարեբեր երկրին զլխա-  
 ւոր քաղաքն է, յաճախեալ տօնավաճառներով:

**Վարանձ.** — Համանուն գետակին վրայ: Բանուկ վաճառականութիւն. գործարան չուխայի և արքայաչորյ:

**Սարազով.** — (65,000) Համանուն գաւառին մայրաքաղաքը՝ Վոլկայի մօտ: Բանուկ վաճառականութիւն:

**Աձժէրխան** զոր Եւրոպայիք Ասղախան կը կոչեն. — (45,000) Վոլկա գետոյն մէջ Սէյցա կղզւոյն վրայ, Կասպից ծովէն 50 հզմղր. հեռու: Բնակիչքը մեծաւ մասամբ Ռուս, Գերմանացի, Գաղղիացի և Անգղիացի են: Մձերանոց վաճառականութեան ընդմէջ Ռուսաստանի, Պուխարայի, Պարսկաստանի և Հնդկաստանի: Վաճառարեւութիւն մետաքսի, մետաքսեայ կերպասոց, բամբակի և բամբակեղինի, բեհեզի և քաշմիրի: Արտահանութիւն կտառու, հիւսկէնի, թէլի, պողպատէ գործուածոց, և խավիարի: Երկիրը բարեբեր է Վոլկայի ողողմամբը. շրջակայքը համեղ պտուղներ, խաղող, բամբակ և յարգի մուշտակ կը հայծայծեն: Զկունքը համեղ են և նշանաւոր. այս գաւառին լճերը աղի են: Վաճառականութիւն սէկի, ծովու հորձոյ մորձոյն, ճրագոյ, մատուտակի, արջառու, զինւոյ և մուշտակեղինի:

Ազախու ծովուն շրջակայքը և Սև ծովու վրայ են.

**Ռոսպով.** — Տօն գետոյն վրայ վաճառաշահ նաւահանգիստ, որուն առևտուրը Ազով ի տեղը կը բռնէ: Այս ետքի բաղաքս աւերակ է այսօրուան օրս: Ասոր մօտ է ձեռակերտից կողմանէ երևելի Նախիջեւան քաղաքը, որուն բնակիչքը բոլորն ալ Հայ են:

**Թակսհրակ** կամ Թայղան. — Ազախու ծովուն վրայ բանուկ վաճառականութիւն. թշուառաբար ջրերը ցած ըլլալուն նաւերը հազիւ տասն մղոն կրնան մերձենալ, անկէց զատ Ազախու ծովն ալ տարւոյն ինն ամիսը սառոյց կը կապէ: Եւ սակայն առևտրոյ կարճատև եղանակին մէջ Թակսհրակի նաւական շարժումն համեմատաբար շատ է: Մեծ արտահանութիւն ազնիւ ցորենոյ, վշոյ, ասուի, խավիարի, երկաթի, մալխոյ և ճրագոյ:

**Մարխուբով.** — Արտահանութիւն ցորենոյ, ճրագոյ: Վա-

ճառարեւութիւն նաւուց հարկաւոր նիւթերու, ինչպէս են՝ մալխոյ, երկաթ, պղինձ, կուպր են:

**Թաման.** — Ենիքալէյի նեղուցին մտից վրայ կղզւոյ մը մէջ. անուանի է արդար իւղը (սա եաղը):

**Նէրչ.** — Խրիմու արևելեան ծայրը Սև ծովը Ազախու ծովու միացնող նեղուցին վրայ՝ որ իր անունը կը կրէ: Տեղի մեծ վաճառականութեան ցորենոյ, աղի և կաշոյ:

**Քէճէ** կամ Ֆէոսոյա որ ի հնուց Թէոդոսիա կ'անուանուէր: Իւր դրիցը աղւորութեանը համար «Խրիմու Կոստանդնուպօլիսը» կը կոչուի: Խրիմու Հարաւային-արևելեան ափանց վրայ. միջին դարուն ձենովացւոց ձեռքը շատ բանուկ և ծաղկած նաւահանգիստ էր. հիմա շատ ինկած՝ բայց դարձեալ վերականգնելու վրայ է:

**Սեվասոբով.** — Խրիմու հարաւային-արևմտեան ծայրը. քաղաք մը՝ որ իւր պատերազմական ամուր և աղւոր նաւահանգիստովը և Սև ծովու աւազանին մէջ նպաստաւոր դրիւքը, զոգցես թէ այն ծովուն վրայ տիրելու կոչուած էր, մինչ 1855 տարւոյն սոսկալի պատերազմին աւերեցաւ: Սակայն դարձեալ վերականգնելու վրայ է:

**Էֆաղէրինուպա.** — Ռուսաստանի ճոխ ածխահանաց մէջտեղ:

**Քերոն.** (40,000) Տներերի վրայ՝ շինութեան փայտի և մալխոյ վաճառականութիւն կ'ընէ:

**Նիֆոլայէվ** (35,000) Պուկ գետոյն վրայ՝ կայսերական նաւատորմին համար մեծամեծ նաւարաններ ունի:

**Օսէսա.** — (100,000) զոր Օսմանեանք Հօճա Պէյ կ'անուանեն Սև ծովու վրայ՝ հարաւային Ռուսաստանի վաճառականութեան կեդրոնը և բուն մայրաքաղաքը: Եւրոպոյ ամենէն բանուկ նաւահանգիստներէն մէկը և հարաւային Ռուսաստանի ընդարձակ մթերանոցն է:

Դիլսաւոր արտահանութիւն ըն պինդ և կակուղ ցորեն, որ Միջերկրականի ամեն նաւահանգստաց և արևմտեան Եւրոպոյոյ (Մարսիլեա, Սէղղ ևն.) կը զրկէ. գարի, վարսակ, հաճար, ար-

մտիք, կտաւատ և կանեփի հունտ, աղած կարագ, խավիար, կարփիւր և դեղին մեղրամոմ, առսասան, մալուխ, երկամի ձող, անողորկ և լուացեալ ասք, կովու և եզի չորացեալ կաշի և մորթ, բողաս, օճառ, դեղին և սպիտակ ճրագու և պղինձ:

Վասնաւարներու թիւնքն են Քամբէշէյի փայտ, Լիժիժի խցան, փահուէ, Գօսյի կինամոմոն, Կիպրոսի եղջիւրենի, որդան կարմիր, սէր գինեմբրոյ, Աղեքսանդրիոյ և Զմիւռնիոյ բամբակ, խուճիկ, անագ, Զմիւռնիոյ թուղ, տեսակ տեսակ պանիր, կռէզ, ազնիւ ձէթ մասնաւորապէս Կալլիբօյի (Իտալիա), լեղակ, պըղպեղ, Անգղիոյ կապար, ծծումբ, ռոմ, շաքար, մանաւանդ Հաւանայի սպիտակն, Տաճկաստանի ծխախոտ, Գաղղիոյ ճերմակ գինի և Գաղղիոյ և Արշիպեղագոսի կարմիր գինի: Նաւահանգստին շարժմունքը տարին 3000 նաւ է միայն հեռաւոր նաւարկութեան համար: Արտարին վաճառականութեան արժէքը 480—200 միլիոն ֆրանկաց կ'ելլէ:

Ռուսաստանի հարաւային երկամուղիքը Օտէսսան՝ ռուսական արտահանութեան զլխաւոր նաւահանգիստն ըրած են: Եւ նաև մեծ կարևորութիւն ստացաւ իբրև վաճառաբերութեան նաւահանգիստ Սիւվէյիշի պարանոցին հատմամբը:

**Քիւնէվ.** — Մայրաքաղաք Պեսարայիոյ, անտուանի տօնավաճառ ունի:

**Սֆէրման.** — Պեսարայիոյ մէջ Նիսդէրի վրայ, և ընդարձակ աղահանաց մօտ:

§ 11<sup>o</sup> — Անդրախովկասեան երկիրք.

Ռուսաստան իւր տիրապետութեան սահմանը Կովկասէն անդին ընդլայնելով սքանչելի և բարբեր երկիրներ ստացաւ:

Անդրախովկասեան կոչուած զաւառը Սև ծովու և Կասպից ծովու մէջտեղը՝ Արևելեան Եւրոպիոյ և Ասիոյ կապն է: Երկու զետ ունի Ռիօնի և Գուր: Առաջինը Սև ծովը կը թափի և երկրորդը Կասպից ծով:

Լեբանց կողերուն վրայ և հիւանալի հովտաց մէջ ամենէն փոփոխական փլորայն կը տիրէ, որոնց մէջ են մայրիք, նոճիք, նշդարիք, գիք, կաղնիք, ոփիք, փիճիք, Թանթրուենիք, նշենիք, դեղձիք, Թզենիք, ծիրանիք և սերկեիլի ծառեր, ևն: Որոն աւատ է և ազնիւ զինի կուտայ: Առատապէս բամբակ և մետաքս կը քաղուի և եգիպտացորեն, կորեակ, բրինձ և ծխախոտ կը մշակուի:

**Թիֆլիզ** (Վրացերէն Թիլիս-Քալաֆի) որ տաք ջրոց քաղաք կը Թարգմանուի և զոր մենք սովորաբար Տիլիզ կ'անուանենք. — (60,000) Կուր գետոյն վրայ, հին Վրաստանի թագաւորանիստ քաղաքը, և բոլոր Անդրակովկասեան զաւառաց (1) մայրաքաղաքը: Երջակայից արածեալքը և ուղիքը կարգաւորեալ են և այս երկրիս վաճառականութեան բանուկ և միմիայն քաղաքն է. և Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի և Ասիոյ մէջտեղ մեծ մթերանոց:

Գրեթէ բոլոր առևտուրը Հայոց ձեռքն է: Այս քաղաքը յաճախ յարաբերութիւններ ունի Դէվրիզի հետ Պարսկաստանի մէջ և Էրզրումի և Տրապիզոնի հետ: Միջին Եւրոպայի և Տաճկաստանէ Թիֆլիզ գացող ուղեւոր սովորաբար Սև ծովու ճամբան այսինքն Բողիի կամ Տրապիզոնի ճամբան կը բռնեն:

Սև ծովու մօտ զրեթէ Ռիոնի զետոյն բերանը՝

**Քոդի.** — (8000) Թիֆլիզի նաւահանգիստն է և երկամուղեաւ կապուած: Այս ետքի տարիներուն առաւելութիւն մը ստացաւ Տրապիզոնի վրայ և Պօլսէ Պարսկաստան անցնելու զըլխաւոր ճամբան եղաւ:

**Պաֆու.** — (14,000) Կասպից ծովուն վրայ՝ յաճախուած է Ռուս և Պարսիկ վաճառական նաւերու բազմութենէ մը և հոչակաւոր է իւր նաւթի աղբիւրներովը և հորերովը:

(1) Անդրակովկասեան երկիրը չորս զաւառէ բաղկացած է այսինքն՝ Թիֆլիզ Խուրախիս, Պաֆու և Երիվան, որոնք հետեւեալ հին երկիրներէ մնացած են, Վրաստան, Իմերէթ, Մընկրէլ, Ապազխսան, Կուր, Ռուսի Հայաստան եւ Շիրվան:

§ 8<sup>o</sup> — Դրամք, չափք եւ կշիռք.

Դ Ր Ա Մ Ք

Ոսկի	$\frac{1}{2}$ Իմբերիալ		= Ֆուանգ	20,60
Արծաթ	Ռուպլի	100	բորէքնոց (1)	» 3,92
	—	50	—	» 1,96
	—	25	—	» 0,98
	—	20	—	» 0,78
	—	15	—	» 0,50
	—	10	—	» 0,33
	—	5	—	» 0,16

Դրամաձուլմ շատ զործածական է Ռուսաստան:

Ձ Ա Փ Ք

Հասարակ վերսդ	104,25 առ աստիճան	= հզմդ.	1,0671
Աշխհգրկն. մղոն (6 վերսդ)	17,45	—	= » 6,3741
Լիթուանիոյ մղոն	12,44	—	= » 8,9429
Լեհաստանի մղոն (փրսխ.)	20,	—	= » 5,5625

Ե Ր Կ Ր Ա Գ Ո Ր Ե Ա Կ Ա Ն Ձ Ա Փ Ք

Սաժէն		Մէդր	2,134
Ռաբ		»	0,305
Արշըն = $\frac{1}{3}$ սաժէնի			

Ա Ր Տ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն Ձ Ա Փ Ք

Տեսիադին (2400 սաժէն □) = հարիւրակալ 1,0925

Ը Ն Դ Ո Ի Ն Ա Կ Ո Ի Թ Ե Ա Ն Ձ Ա Փ Ք

Ջէդվէրդ (արմտեաց համար)	= Լիդր	209,90
Վէտրո (հեղանիւթոց)	= »	12,29
Պոչգա »	= »	491,96

(1) Սովորաբար արծաթեայ 100 բորէքնոց ուռպլին 4 ֆուանգաց կը հաշուի:

Կ Շ Ի Ռ Ք

Լիպրա = 9216 տոլի = Կրամ 409,5  
 Բուդ (40 լիպրա կամ ֆունդ) Հազարակրամ 16,38  
 Պերքովէց = 10 բուդ կամ 400 լիպրա:

Փոխասուուրեանց գլխաւոր ընկերութիւնք. — Տէրուձեան դրամատուն և Վարշաւիոյ դրամատուն:



Գ Լ Ո Ի Խ Ժ Բ.

Յ Ո Ի Ն Ա Ս Տ Ա Ն



Միջին Լայնուձեան աստիճան 38<sup>o</sup> հիւսիսային:  
 Մկ.Ս. 53,600 □ հզմդր.  
 Բն. 1,500,000 անձ:



§ 1<sup>o</sup> — Նախագիտելիք, ընդհանուր դիրք, բնական եւ ֆաղսֆական բաժանմունք.

Յունաստան կամ Ելլադա (Hellas) Եւրոպիոյ հարաւային ծայրն է և սահմանն է արեւելքէն Արշիպելագոս. արեւմուտքէն և հարաւէն Յոնիական ծովը և հիւսիսէն Տաճկաստան Եւրոպիոյ:

Յունաստան երկու ցամաքային մասերէ կը բաղկանայ, այս-

ինքն՝ Հիւսիսային Յունաստան, և Մորա Պերակղզին (հինն Բէլղրոնէզ) որ Կորնթոսի պարանոցով միացած են մէկմէկու:

Շատ կղզիներ ևս ունի. ոմանք արևելեան կողմը կ'իյնան Արշիպեղագոսի մէջ, այսինքն՝ Էյրիպոզ կամ Նեկրոքոնդէ, Հիս-րա, Սիրա, Նաբեա, Բարո, Սանդորին ևն. և ոմանք ալ արևմտեան և հարաւային-արևմտեան կողմերը այսինքն՝ Յոնիական կղզիք (Գորժու, Սանդա-Մաւրա, Թէաֆի կամ Իքակէ, Բէ-Փալոնիա, Չանդա, Չէրիկո):

Յունաստան խիստ շատ ծովամուտք և ծովաուաջք ունի. ամեն կողմանէ կը ցցուին Պերակղզիք (Ասսիկէ, Արկոլիս ևն), կը ձևանան ծոցք (Աթենայ և Լերանդիոյ, ևն), խորքք և նաւահան-գիստք:

Այս յարմարութիւնն որ նաւարկութեան շատ նպաստաւոր է, մեծապէս օժանդակ եղած է Յունաստանի առևտրոյն բարգաւաճմանը, որ անուանի էր հին ժամանակաց մէջ և որ կարևոր է նաև հիմա, թէև երկիրը քիչ տարածութիւն ունենայ և ստէպ ստէպ քաղաքական յուզմունք պատճառին:

§ 2<sup>o</sup> — Բերք եւ արուեստք.

Երկրագործութիւնը զանց առնուած է Յունաստանի մէջ, և երկիրը որ ընդհանրապէս բարեբեր է՝ գրեթէ ամենուրեք ողորմելի վիճակի մէջ ձգուած է:

Արմտեաց բերքը անբաւական են. ձիքեցին յաջողած է, մանաւանդ Ատտիկէի և Յոնիական կղզեաց մէջ: Համբաւաւոր, ազնիւ և առատ են Գինիները, ինչպէս են Սանդորինի և Մալ-վազիոյ կամ Կրետական գինիները, (յետինն աւելի Պերմոն կը սեպուի բան թէ գինի, որովհետև մշկահոտ է և մինչև աստիճան մը եփուած), Կիրիա, Սաքըզ ատասը կամ Շիօ, Լիսպոս, Թենետո և Արշիպեղագոսի բանի մը կղզեաց մշկահոտ գինիները Յունաստանի գինի անունը կը կրեն շատ անգամ, որովհետև ատենօք այս կղզիները Յունաստանի ձեռքն էին: Այսպէս կը

կոչուի նաև Նարոլի Սագաւորութեան մէջ պատրաստուող տեսակ մը գինին: Կոքոքոսի ըստած խաղողները համբաւաւոր են, որոնց հատիկը պզտիկ և սև են, և կը գտնուին մասնաւորապէս Մոռա, Չանդա, Բէֆալոնիա և Թէաքի. անբաւ է արտահանութիւնն որ մինչև Ամերիկա կը դրուի:

Կը գտնուին նաև Պուզ, Լեմոն, կիտրոն, նարինջ, նուռ, սակաւ ինչ բրինձ, ճակնդեղ, բամբակ, մեծամեծ ծառեր (մայրիք, եղևին, շոճ, ոփի ևն.), խոզկաղին, գիստոր և թթենի:

Մետաքսը, որդան կարմիրը, մեղրը և սպունգը Յունաստանի գլխաւոր հարստութիւններն են: Արջաուէն աւելի ոչխար և այծ կը դարմանուի: Երևարները ընտիր են: Դորդիլիս լճին մէջ շատ տարուկ կ'որսացուի. Հանքային բերոց մէջ ամենէն աւելի շահ բերողը այլևայլ կողմանց լճերուն աղն է: Հոչակաւոր մարմարիոնցեէ կան Փարոս և Բանդէլիք (Ատտիկիոյ լեռ մը). Պափչաց կաւ (բէֆէ բիլի, terre cimolée) և արծաթի Գիմօլօ (Սիրլատներուն մէկը) որ և զանձաւոր երկիր (Argentièrè) ալ կ'անուանուի. ամիանդ՝ Նեկրօքոնդէ կղզին և քարածիւթ Չանդա կղզւոյն մէջ:

Յունաստանի ճարտարարուեստըը յետամնաց են և են, պատրաստութիւն մետաքսի և մորժոյ՝ իւղ շինել, աղի խրամներէն աղ հանել, նաւաշինութիւն, ձկնորսութիւն և մանաւանդ սպընզի որս: Յոյն կանայք մեծ անուն ստացած են իրենց անկուածոց և ձեռակերտից համար, ուր մասնաւորապէս նկարու ընտիր ճաշակ մը և զանազան երանգաց ակնահասոյ միութիւն կը նուկատուի:

§ 3<sup>o</sup> — Առեւտուր եւ հաղորդակցութեան միջոցք.

Վաճառարբերութիւնք եւ վաճառահանութիւնք. — Յունաստանը առևտրոյ յատուկ գիրք մ'ունի, երջանիկ փամբք, բազմաթիւ կղզեօք և սքանչելի նաւահանդիստներով և Ատիոյ ու Ափրիկիոյ մօտ ըլլալով: Ճարպիկ նաւաստիներ ունի

և անոր համար ալ ծովային վաճառականութիւնը ծաղկած է:

Արևմուտք իրեն կը հայթայթէ պատրաստուած մորթեր, մետաքսեղէն, ասուեղէն, շինութեան փայտ, աղած ձուկ, ձողաձուկ, փերեզակաց ապրանք, զուտ շաքար, անօթեղէն, ապակեղէն և բիւրեղ, անուշաոտութիւնք, նորելուկ ապրանք, մետաղք, կահ կարասիք և գաղձականաց նպար:

Արտահանութիւնքն են պտուղ (մասնաւորապէս Կորնթոսի խաղող), պատուական գինիներ, ձէթ, սաք, մետաքս, սպունգ, խէժ, մեղր, պանիր, ծխախոտ, ճրագու, եղջիւր, անպատրաստ մորթ և տղրուկ:

Առևտուրը մասնաւորապէս Տաճկաստանի, Աւստրիոյ, Իտալիոյ, Գաղլիոյ, Անգլիոյ և Ռուսաստանի հետ է: Նաւարկութեան շարժումները (ծովեզերեայ երթևեկութիւնն ի միասին) 145,000 նաւ է, գրեթէ հինգ միլիոն տակառաջափով:

**Հաղորդակցութեան միջոցք.** — Բոլոր վաճառականութիւնը ծովով կ'ըլլայ: Ներքին ճանապարհք՝ ընդհանրապէս շատ գէշ են և սակայն Աթէնքի մօտ աղէկ ճամբաներ կան: Կարճատև երկամուղի մը 7 հզմղր.) Աթ.ճճէ՛ Բիւրէ կ'երթայ: Նոր երկամուղի մը ձգելու առաջարկութիւն կայ:

§ 4<sup>o</sup> — Գլխաւոր ֆախաբէ և ևաւահանգիստք.

**Աթէճք** կամ Աթինա. — (50,000) Յունաստանի մայրաքաղաքը յԱտտիկէ, համանուն ծոցին մօտ: Ժամանակաւ փայլած էր իբրև որրոց արուեստից, բանաստեղծութեան և փիլիսոփայութեան, և բազմաթիւ իմաստնոց ծննդեան տեղին: Վաճառականութիւն մետաքսի, մեղրամոմոյ, ասուի և ձիւթոյ: Բիւրէ պղտիկ քաղաքը իրեն նաւահանգիստն է:

**Լիպսաէա** կամ Լիվաթի. — Համանուն լճին մօտ. բանուկ վաճառականութիւն ասուի, ցորենոյ և բրինձի:

**Լէբանդա.** — Ամուր քաղաք համանուն ծոցին մտից վրայ:

**Միսուրնկի** կամ Մեղրուկի. — Ուրիշ նաւահանգիստ

մը Յոնիական ծովուն վրայ, Քէֆալոնիոյ յանդիման և մեծ անաւանաց մօտ:

Մոռայի մէջ.

**Դրիբոլի** կամ Դրիբոլիցա. — Թերակղզոյն կեղրոնն է:

**Բագրաս.** — (31,000) Վաճառականութիւն մետաքսի, կաշւոյ, մեղրի, մեղրամոմոյ և պանրոյ: Նուաը, կիտրոնը և նարինջը շատ համեղ են:

**Նաւրիա՝ Ռոմանիոյ.** — Մոռայի վաճառաչան քաղաքաց մէկը, արևելեան ափանց վրայ: Արտահանութիւն Կորնթոսի խաղողոյ, ձիւթոյ, գինւոյ և սպունգի:

**Արգասիա** կամ Քիբարիսիա. — Մոռայի հարաւային-արևմտեան ափանց վրայ բանուկ նաւահանգիստ:

**Նաւարին** (հինն Բիլոս). — Սքանչելի և մեծ նաւահանգիստ է:

**Մանէմպալիա** կամ Նաւրիա Մաւլազիոյ. — Թերակղզոյն հարաւային-արևելեան ափանց վրայ նաւահանգիստ է ասոր մօտ է Միզիքրա, ուր կը ժողվուի Մաւլազիոյ գինին:

**Կուրնոս.** — Համանուն պարանոցին մօտ և քիչ մը հարաւային արևմուտք, դէպ ի Լեբանդիոյ ծոցը և Աթենայ ծոցէն ոչ հեռու: Ժամանակաւ փառաւոր քաղաք էր և վերոյիշեալ ծոցերուն վրայ մէյմէկ նաւահանգիստ ունէր, որոնք յետոյ սկստակով և տղմով լեցուեցան:

Արշիպեղագոսի կղզեաց մէջ են.

**Նէկորոնդէ** կամ Խալսիս. — Էյրիպոզ (Eubée) կղզոյն հարաւային ափանց վրայ նաւահանգիստ է. Եւրիպոյ (Euripe) կամ Նիկորոնդէի կրծին վրայ, որ այս կղզին Ատտիկէյէն կը բաժնէ: Նէկորոնդէ կղզոյն բերքն են ցորեն, պատուական գինի, պտուղ, բամբակ, ձէթ, մեղր, ամիանդ և աղւոր մարմարոն:

**Հէրմապոլիս** կամ Սիրա. — (35,000) Համանուն կղզոյն և Սիբլատներու մայրաքաղաքը. պատսպարեալ նաւահանգատով մը, որ Արշիպեղագոսի առևտրական գործունէութեան կեղրոնն է: Հոս կը հանդպին աւստրիական Լլոյտ ընկերութեան շոգենաւները:

**Նախագահ** կամ Նախագահ. Համանուն կղզւոյն մայրաքաղաքը. կղզւոյն բերքն են համեղ պտուղներ, նարինջ, լեմոն, կիտրոն, ձէթ, նուռ, ծուծ և ծուղ: Վաճառականութիւն զարւոյ, վշոյ, բամբակի, պանրոյ, աղի, մետաքսի, պողոյ և արջառու: Մարմարիոնի բարահատք:

**Փարոս** կամ Փարո. — Համանուն կղզւոյն մայրաքաղաքը, առատ և ազնիւ մարմարիոն ունի: Վաճառականութիւն արմտեաց, գինւոյ, կնձիթի և կտաւու:

**Թինուս**. — Ուրիշ կղզւոյ մը մայրաքաղաքը. պատուական գինի, մեղր, մետաքս, ցորեն և բամբակ ունի:

**Սանգորին** (հինն Թեքա). — Համանուն կղզւոյն մայրաքաղաքը, որուն ստէպ ժամերէ զղրղուած երկիրը, Յունաստանի ամենէն պատուական գինիները կ'ընծայէ: Գարին և բամբակը նաև ազնիւ են: Գործարան ազէկ կտաւու:

**Միլօ**. — Համանուն կղզւոյն մայրաքաղաքը և Միջերկրականի ընդարձակ նաւահանգիստներէն մէկը: Հանքային ջրեր ունի. ազնիւ խաղող, համբաւաւոր գինի և ծուղ. երկամասանք, ծծումբ, պաղլեղ, աղահանք, երկանաքար ևն:

**Հիսրա**. — (18,000) Համանուն պղտիկ կղզւոյն մէջ բանուկ նաւահանգիստ է:

Յոնիական կղզեաց գլխաւոր նաւահանգիստքն են.

**Գորգու** (հինն Գորսիքա). — (25,000) Բոլոր Յոնիական կղզեաց և համանուն կղզւոյն մայրաքաղաքը՝ կղզւոյն արևելեան ափանց վրայ. բանուկ նաւահանգիստ. Ալպանիոյ և Երբիլի (Epire) համբարանողը. մեծ արտահանութիւն ձիթոյ: Հոս կը հանդպին աւստրիական Լիցտ ընկերութեան շոգենաւները:

**Սմոնֆսիլի**. — Սանդա-Մարայի մայրաքաղաքը:

**Վաքի**. — Իմակէի մայրաքաղաքը:

**Աւկուսդոլի**. Բէֆալոնիոյ մայրաքաղաքը, ընդարձակ և ապահով նաւահանգիստ. արտահանութիւն ձիթոյ, Կորնթոսի խաղողոյ և գինւոյ:

**Ջանդա**. — Համանուն կղզւոյն մայրաքաղաքը. վաճառականութիւն ձիթոյ, գինւոյ և ազնիւ խաղողոյ:

§ 9<sup>0</sup> — Գրաւմի, չափի և կշիռի.

Արծաթ Տրախմի (100 Լէքդա) = Սանդիմ 89,54  
Ոսկիէ 40 և 20 տրախմանոց դրամք, և 5, 1/2 և 1/4 տրախմանոց արծաթադրամք կը գտնուին:

1869 տարւոյն՝ Յունուար ամսէն սկսեալ՝ տրախմին հիշտ մէկ ֆունգի արժէք ստացած է, և չափն ալ մէդրական դրոմեան վերածեալ:

Արեւայական բիւր մէդրի կը համապատասխանէ, սղաշիմը հազարամէդրի. սղրէմա հէքդարի. մէկ բիւսն = 100 լիդր. տրախմին կրամ մ'է. միւր 1500 կրամ կը կշռէ. տաղանդ կամ դալէնդը = 100 մին. 100 մին = 150 հզկրմ: Ծովային տակառաւափը 1500 հզկրմ. կը կշռէ:

**Փոխասուուրիան ընկերութիւնք**. — Յոնիական ազգային դրամատուն, հիմնեալ յամին 1854:

Նոր դրամատունը ալ հաստատուած են այս ետքի տարիներու մէջ:

# Գ Լ Ո Ի Խ Ժ Գ.

## Ի Տ Ա Լ Ի Ա



Լայնութեան աստիճան 42°.  
 Մկ.Ձ. 296,250 □ հզմդր.— Բն. 26,300,000 հոգիք.— Վճռկն.  
 նաւ 17,948, —Տկռչփ. 882,829 : — ԵԼ. հզր. 15,976 հզմդր.  
 — Խտուծիւն մարդկան առ □ հզմդր. 85 անձ :

### § 1° — Նախագիտելիք, ղիրք.

Իտալական աշխարհը Եւրոպիոյ համայն գնտին ամենէն երկեւիներէն մէկն է: Հոս տեղի ունեցած են օտարոտի պատահարք և ծնած են բարձրահանճար անձինք: Բնութիւնը առատապէս պարգևած է իր գանձերը և Եւրոպիոյ ամեն երկիրներէ աւելի քարերքեր ըրած է, պայծառ և ջինջ երկիրք, ծիծաղագեղ ծովափունք և սքանչելի ծոցեր տուած: Գետք և հեղեղատք ամենուրեք կը գտնուին և շատ կը ղիւրացնեն ջրաբաշխական զործերը, որ երկրագործութեան ծաղկելուն կը ծառայեն:

Միջերկրական ծովուն մէջ՝ Իրերական և Հելլենական ցամաքակզգեաց մէջտեղ ղիրք ունենալով՝ Արևմտից և Արևելից հանդոյցը կրնայ սեպուելի, և իրացընէ Միջին դարու ժամանակ Իտալիա՝ ծովերու տիրած էր և բոլոր աշխարհիս առևտուրը կը տեսնէր: Վնեետիկ, ճնեօվա և Բիզա իրենց նաւատորմիղը հեռուոր երկիրներ կը ղրկէին և անոնց միջոցով թանկագին

ապրանք Եւրոպական ծովափանց կը բերէին և ներքին քաղաքաց պիտոյքը կը հոգային: (Համառօս պասմութիւն վանառականութեան Մաքս. Հօճմանի):

Բայց այնքան յաջողութիւնք և զօրութիւնք, յետ ամենաբարձր աստիճանին հասնելու հիմնայատակ կործանեցան: Բարեյուտոյ Գլխոյ զիւտը, առևտուրը իտալական երջանիկ անփանցմէ խլեց և դէպ ի Ովկիանոսի երկիրները տարաւ: Իտալիա՝ օտարազգեաց անվախճան պատերազմներու նահատակ եղաւ, որոնք իր հողոյն վրայ իրարու հետ կռուեցան և բռնութեամբ ու զօրութեամբ իրենց մէջ բամեցին զայն: Ամենէն ծաղկեալ քաղաքը հետզհետէ ինկան և հասաւ օր մը, որ ծանր թշուառութեանց չկարենալով ղիմանալ, մարեցաւ Իտալիա անանց վերականգնման յուտոյ:

Եւ սակայն ազատութեան և անկախութեան ոգին երբէք չմարեցաւ Իտալիոյ մէջ: Ալպեան լեռանց ստորոտքը փոքր վիճակ մը զլուխ եղած էր այն շարժմանց, որ օր մը յիշատակելի դէպքերու սուրբ եղան: Այն վիճակը Բիելմօնդէ էր ուր կ'ապաւիներին արքորեալ Իտալացիք և ուր նուաճեալ զաւառները ազատելու համար՝ բանակ մը կը պատրաստուէր: Առաջին յարձակմունքը ղժբաղդաբար չյաջողեցաւ և սակայն Վիչոբո Էմմանուէլ երբէք չվհատեցաւ և ամէն Իտալացի աչք դէպ ի Բիելմօնդէ կը դառնար վստահ սրտով, թէ երկար ժամանակ սնուցած յոյս մը անշուշտ երջանիկ վախճան մը պիտի ունենայ, և թէ այն մեծ վրիժուն առաջին նշանը այս փոքր երկրէն պիտի ելլէ:

Եւ այնպէս ալ եղաւ, գերեզմանական քարը որ զոգցես թէ յաւիտենից համար ղրուած էր այս երկրիս վրայ, չախշախեցաւ, և աշխարհիս վերստին կենդանացած ղշխոյն երեցաւ ժողովրդեան առջև, Իտալիա, և որն որ յետ այնքան ղժբաղդութեանց, կրնայ այսօր ազգաց մեծ խնջոյքը բազմիլ:

Մինչդեռ Իտալիոյ մէջ այս դէպքերը կը պատահէին, արևելից մէջ ալ ուրիշ ամենակարևոր զործ մը կը տեսնուէր, որն որ ցամաքակզգուոյն ապագայ վիճակին վրայ անշուշտ մեծապէս

պիտի ազդէ: Ակնարկուածին ընել կ'ուզենք Սիւէզի պարանոցին կտրմանը հսկայ ձեռնարկուածեանը, որ այս վերջի տարիներուն մէջ ամբողջապէս կատարուեցաւ: Հիմա պէտք է որ Իտալիա իր ոյժը ժողվէ և այնպէս ընէ որ այս դէպքերը իրեն յաջողութեան և մեծութեան աղբիւրը ըլլան:

Աշխարհագրաբար խօսելով Իտալիա երեք անհաւասար մաս կը բաժնուի. ցամաքային, ցամաքակղզական և կղզական, առաջինը հիւսիսակողմանքը կը տարածի, երկրորդը առաջնոյն շարունակութիւնն է և ղէպ ի հարաւ խոտորնակի՝ հիւսիսային-արմտեան և հարաւային-արեւելեան ուղղութեամբ, վերջապէս երրորդը կը բաղկանայ կղզիներէ և կղզեաց խումբերէ, որոնք աստ և անդ Իտալիոյ լայնատարած ծովափանց մօտ կը գտնուին:

Իտալիոյ բնական սահմանքը ծովը և Ալպեան լեռինքն են: Քաղաքականապէս սահմանն է հիւսիսէն Չուիցերա, Դիրոլ և Ալպեանք. արեւելքէն Կրիցիա և Իսդրիա և Ադրիական ու Յոնիական ծովերը. հարաւէն Միջերկրական ծովը. արեւմտքէն Տիրենեան ծովը և Ալպեան լեռինք որ գՊաղլիան կը բաժնեն.

Գլխաւոր լեռներն են Ալպեան (հիւսիսակողմ) որոնց բարձր զագածները՝ յաւերժական ձեամբ ծածկուած են: Նշանաւոր են Մօնդէ Պիանքօ (4810 մէր բարձր ծովու հարթութենէն). Մօն 2էնիզիօ (Գաղղիա § 7. 6<sup>0</sup>): Աբէնիցի լեռինք բոլոր ցամաքակղզոյն երկայնութեամբ կը տարածուին: Երեք գլխաւոր հրաբուխային լեռ կան. Վեզուվիօ (Նաբօլիոյ մօտ) Էդնա (Սիկիլիոյ մէջ) և Մորոմպօլի (Լիբարի կղզեաց մէջ):

Մեծն Նաբօլէոն ըսած է թէ ՎՄովային մեծ զօրութիւն մ'ուռնենալու համար Իտալիոյ պէս նպաստաւոր դիրք ունեցող երկիր չկայ Եւրոպիոյ մէջ՝ վասն զի Եւրոպիոյ կեդրոնը կ'իյնայ և Միջերկրականի մէջ երկնցած է և 5,842 հազարամէր ծովափունք ունի կղզիներովը հանդերձ. այսինքն՝ Իբերիոյ ծովափանցմէ 1/3 աւելի տարածեալ և Գաղղիոյ ծովափանց կրկինը:

Ինչպէս որ վերը ըսինք՝ Իտալիոյ հողը շատ բարեբեր է և

այն պատճառաւ և բարեխառնութեանը ժանդակութեամբը նարինջ, թռնիկ, արմաւ, որթ, և բարեխառն գօտւոյ տեսակ տեսակ բերքերը առատապէս կը բուսնին և կը ծլին:

§ 2<sup>0</sup> — Երկրագործական բերք եւն.

**1. Գոյսք.** — Արմսիք. Մշակելի երկիրներուն զրեթէ կէսն արմտեաց համար պահուած է. սակայն սովորապէս այս սնունդս ներքին սպառման չբաւեր: Տարուէ տարի օտարներէն 6,500,000 հարիւրալիդր կը գնէ: — Բրիւնը և մասնաւորապէս համբաւաւոր ռիզոնէն Բօյի խոնաւ զաշտերուն մէջ կը մշակուի: Բրնձի մշակութիւնը շատ տարածած է Իտալիոյ մէջ. մանաւանդ թէ Եւրոպիոյ ամենէն ընդարձակ բրնձի զաշտերն ունի: Արտահանութիւնը տարուէ տարի 21 միլիոն ֆունց կ'ընծայէ: — Գետնախնձոր շատ կը գտնուի, այնպէս որ երկիրը 9,513,043 հարիւրալիդր կը բերէ և բնակչաց առատապէս բաւելէն զատ 1/2 միլիոն ֆունցի ալ դուրս կը զրկուի: — Եգիպտացորեցը առատ է, մասնաւորապէս Լոմպարտիա և Վենետիկ: Գարի և վարսակ ըստ բաւականին կը գտնուի: Շագանակը առատ է, արտահանութիւնը 450 միլիոն ֆունցի կը հասնի:

Զէքի իւղոյ մեծ վաճառականութիւն կ'ընէ Իտալիա. Այս բերքը 1,561,430 հարիւրալիդր կը հասնի, 200 միլիոն արժէքով: Արտահանութիւնը մասնաւորապէս ղէպ ի Գաղղիա և Անգղիա կ'ըլլայ և անուանի է. 1866 ին՝ 642,635 մ. կ. ի ելած էր: Զիւնին զրեթէ բոլոր Իտալիոյ զաւառներուն մէջ կը մշակուի և պատուական է. բայց առատապէս են Բիէմոնդէ, ձենովայի շրջակայքը Գալապրիա, Լիկորիա, Լոմպարտիա, Դոսկանա, Ադրիականի բլուրները, Բուլեա:

Որքը առատապէս մշակուած է. գինին 28,879,900 հարիւրալիդրի զուճար մը կազմէ 1,014,700,000 ֆունցի արժէքով: Սիկիլիա ամենէն աւելի գինի կը հայթայթէ, յետոյ Էմիլիա,

Բիեննոնդէ, Լէմարբէ, Վենետիկ գաւառը, Նարոլիդան, Ումպրիա Դոսկանա, Լոմպարտիա և Սարտենիա:

Վաճառարեւոյթիւնը միայն 166,388 հարիւրակալ է, մինչդեռ վաճառահանութիւնը 295,573 ի կ'ելլէ. զլիւստորագլէս Անգղիա, Զուիցերա և Սմերիկա կը ղրկուին: Պտուղները առատ են. նարնջի, կիտրոնի, լեմոնի, ևն. վաճառահանութիւնը 34 միլիոն ֆռանգ կը բերէ: Իւզալից հետերը 13 միլիոն, նուշ 7 միլիոն: Թուզ, պիստակ, եղջիւր, ձիթապտուղ և արմաւ շատ կը ծախուին:

Իտալիա՝ անխոն նաև կը մշակէ, որ մասնաւորապէս Գաղղիա և Հոլանտա կը ղրկուի Լիվոնոյի միջոցով: Գայլուկ Ալեքսանդրիոյ շրջակայքը, մատուտակ և մանանայ Նաքոլի մէջ կը գտնուի:

Վուզ և կանեփ. — Վշոյ բերքը տարին 135 հազար մ. կ. ի կ'ելլէ: Իսկ կանեփինը 500 հազար մ. կ.: Այս բերքերուն մանոցները 300,000 գեղացի կ'աշխատեցնեն և 6 1/2 միլիոն ֆռանգի բերք մը կուտան: Մերենաւոր ամենէն մեծ գործարանները Պորնեսա և Զիդէրիօրէ կուտակալուծեան մէջ են: Բայց մասնաւորապէս ձեռագործ շատ կը շինուի, և հազարաւոր կանայք տանց մէջ արագապէս մանուածք կը պատրաստեն:

Բամբակ. — Բամբակը յաջողաբար կը մշակուի Սալեմիդանո, Գալապրիա, Սարտենիա և Սիկիլիա, 60 միլիոն ֆռանգի բերք մը կուտան:

Տորոնը և աղտորը հարաւային գաւառներու մէջ կը հասնին: Սիկիլիա աղտորի վաճառականութենէ տարին 2 միլիոն ֆռանգ կը շահի: Գրքում Նաքոլի մէջ կը գտնուի:

Ծխախոտը՝ Անգոնա, Պէնէվէնդօ, Դերրա տի Լափօրօ, Զիդէրիօրէ, Օղրանդօ, Ումպրիա, Վիչենցա և Սարտենիա գաւառները կը մշակուի: Սակայն գործարանները օտար աշխարհներէ շատ տերև կը գնեն:

Իտալիոյ մէջ անտառները բազմաթիւ են, զրեծէ ամեն կողմը կ'երևան. լի են շոճիք, մայրիք, սօսիք, եղևինք այսինքն այն ամեն ծառերը՝ որ շինութեան և նաւաշինութեան և երկամուղ-

եաց հաստատման շատ աղէկ կը յարմարին: Առատ են նաև պտղատու ծառերը, ընկոյզ, շագանակ, նուշ ևն:

**Վենեչիանիս.** — Իտալիոյ մէջ 21 միլիոն անասուն կայ: 3,700,000 եզ. 1 միլիոն ձի, ընտիր են Բոլեզինի, Բատովանի, Հոովմայի և Գալապրիոյ ցեղերը: Ոչխար 12 միլիոն: Դօսկանայի և Նաքոլիդանի մէջ զրեծէ 40 հազար գոմէջ նաև կը գտնուի:

Արջառոց զարմանը ամենէն աւելի Բիէմօնդէ, Լոմպարտիա, Բարմա, Մօտենա և Դոսկանա յառաջացած է: Իտալիոյ ընտիր կովերը Բիէմօնդէ, Ռօմանիա և Վալդէլլինա կը մեծնան:

Լաւազոյն ոչխարները 8 միլիոնի չափ են և Բիէմօնդէ, Պերկամասկօ Ապրուցցի, Բուլեա, Վենետիկ, Մօտենա և Սիկիլեա են. կը դարմանուին: — Բուրդ. Իտալիոյ ամենէն ընտիր բերքերը Ասգօլի, Գիէդի, Անգօնա, Փօճճիա, Լուզգա և Պարի գաւառներէն կուգան: Սակայն այս բերքիս վաճառարեւոյթիւնը անհամեմատելի կերպով բարձր է քան զվաճառահանութիւնը: 1866 ին մուտքը 78,868,000 ֆռանգ և ելքն 4 1/2 միլիոն էր:

Շերասը լաւ կը մեծնայ՝ ՊՊենուոյ առատութեան պատճառաւ և Իտալիոյ հարստութիւններէն մէկն է, այնպէս որ Գաղղիոյ գործարանաց հարկաւոր մետաքսին մեծագոյն մասը կը հայծայծէ: Այս յարգի նիւթին վաճառարեւոյթիւնը 1866 ին 17,676 հազարակրամ բոժի եղաւ: Անողորկ մետաքսին 3/5 ը երկրին մէջ կը բանուի, մնացածն ալ օտարաց կը ղրկուի:

Իտալիա՝ իւր անողորկ մետաքսները Գաղղիայէն զատ կը ղրկէ նաև Զուիցերա, Հունտասկան գաւառաց, Անգղիա, Ռուսաստան, Սպանիա և Ստորին-Նահանգաց՝ ուր մեծ համբաւ կը կրեն:

Իտալիա՝ 3 միլիոն խոզ ունի: Մսերնին մեծաւ մասամբ երշիկի համար կը պահուի: Անուանի են Ֆիրենցէլի, Վերօնայի, Պօլօնիոյ և Ֆերրարայի երշիկները (mortadella) և Մօտենայի ապուխտը: 5 միլիոն ֆռանգի չափ օտարաց կը ղրկուի:

**3. Զկնորսութիւն.** — Դոսկանայի ծովեզերքն որթձկանորսը 2675 մ. կ. ի բերք կուտայ. Սարտենիա 10 հազար մ. կ.

կը հանէ նոյն ձկէն: Իտալիոյ ծովափանց վրայ աղկերի որսը 7,500 մ. կ. ի կ'ելլէ: Քիօճճիայի (Վենետիոյ մօտ) ծովային ձրկներսուծիւնը տարուէ տարի 4 միլիոն ֆուանգ կը բերէ: Ամենէն շատ ձկնորսուծիւն Նաբօլիի ծովեզերքը կ'ըլլայ՝ ուր 4570 նաւ ի գործ կը դրուին:

Բուսնի որսը զլխաւորապէս Սարտենիա, ձենովայի ծոցը, Գորսիգա, Սիկիլիա և Ափրիկիոյ ծովեզերքը կ'ըլլայ: 1867 ին Իտալիայէն 308 նաւ գացին, որոնց 277 հատը Նաբօլի գաւառէն էր: Բերքը 1,200,000 ֆուանգաց էր նոյն տարւոյն մէջ: Բուստը Իտալիոյ մասնաւոր արուեստագործութեան՝ զլխաւոր նիւթերէն մէկն է: Լիվօնօ, ձենովա, Նաբօլի՝ բուստ յարդելու և փայլեցնելու կզբաղին: Այս արուեստին բերքը 5 միլիոն է: Անողորկ բուստի արտահանութիւնը 1868 ին 9,104 հազարա-կրամի ելաւ, 319 հազար միլիոն արժէքով:

**4. Միսոլ.** — Մարմարիոն եւ կրամիք. — Մարմարիոն և կրամիք առատապէս կը գտնուին Իտալիա և եւրոպական համբաւ մ'ունին: Մարմարիոնը այլ և այլ տեսակ կը գտնուի. Բիէմօնդէ արձանի յարմար զանազան մարմարիոններ ունի, կանաչ, կապոյտ և գորշագոյն: Նոյն տեսակները առատապէս կը գտնուին Լիվուրիա: Վերօնա, Պելլուօնօ, և Վիչենցա ունին նաև կարմիր, դեղին և երկնագոյն մարմարիոն: Գարրարայի, Մասսայի և Սերրավեցցայիները ամենէն պատուականներն են:

Կրամիք առատապէս կը գտնուի Պաւենօ, Լակօ-Մանօիօրէ-յի շրջակայքը, Բալլանցա և Սարտենիա, ուսկից ալապասոր նաև կու գայ:

Իտալիոյ մէջ 45 երկամի բովը կան, որոնց մէջ 2000 գործաւոր կ'աշխատին: Էլպա կղզին ամենէն աւելի կը հայթայթէ յետոյ կուզան Լօմպարտիա, Սարտենիա, Բիէմօնդէ և Նաբօլի-դանօ:

Պղնձի բովը բաւական բազմամիւ են: Գլխաւորը և անուանին Մոնդէգադինիյի հանքն է, կան նաև Լիվուրիա, Գոսկանա, Սարտենիա, Պելլուօնօ, ևն: Կապարի և արծժի հանքերը 13 հատ են և զրեթէ 3 միլիոնի արժէք մը կը ներկայացնեն:

Ալպեանր, Լիվուրեան Ապենինեանք, Օրբօ, Դիչինօ և Բօ զե-տերուն աւազները ոսկեխառն նիւթեր կ'ընծայեն, սակայն փոքրիկ քանակութեամբ:

Սնդիկ, զինկ, ծարրաբար, նիքէլ, մանկանէզ խիստ քիչ կ'երևան Իտալիոյ մէջ:

Յօրլի, Բէզարօ, Ուրպինօ, և մասնաւորապէս Սիկիլիա ծծմբի ամենէն ճոյս հանքերն ունին: Այս նիւթիս համար 22,000 աշխատաւոր կ'ըբաղին: Օտար ազգաց աւելի անզուտ ծծումբ կը զրկեն քան թէ մաքրած: Միայն Սիկիլիա տարուէ տարի 30 միլիոն ֆուանգաց արտահանութիւն ունի: Անզղիա շատ կը զնէ այս նիւթէս:

Բօցցօլանա՝ որ ծեփի տեղ կը գործածուի, Նաբօլիի մօտ Բօցցօլի քաղքին անուամբը կը կոչուի, և հրաբոլխային կղզի-դանաց բնական լուծումն է, ծակտակէն կ'երևայ Վեզուվիօ լե-րան և Ջիլիդա-Վէքքիայի շրջակայքը, և կաւային կերպարա-նօք Էդնայի կողմերը: Այս յետինը շատ յարգի է:

§ 6° — Հաղորդակցութեան միջոցք.

**1. Նաւարկելի նամբաներ.** — Գլխաւոր գետերն են Ատիճէ, Բօ, Անօ, Դեվերէ կամ Տիբերիս, Վոլղոնօնօ, Դիչինօ, Բիալէ և Պրենդա, Լիվենցա, Բէսքարա: Բայց միայն Անօ, Տիբերիս և Վոլղոնօնօ նաւարկելի են:

Գլխաւոր ջրանցքներն են՝ Նաւիլիօ Կրանէ Միլանօ արևմտեան կողմն որ Դիչինօ գետոյն կը միանայ. Գանալէ սէլլա Մարդէգանա, Միլանէն Արտա գետը կ'երթայ, արևելեան կողմէն անցնելով. Գանալէ Տի Բալիա Միլանէն՝ Դիչինօ կ'երթայ հարաւէն. Գանալ Պիանցօ Ատիճէն՝ Բօյի կը միացնէ. Գանալէ Տի Լօրէօ Ատիճէն զարձեւալ Գանալ Պիանցօյի կը միացնէ: Նաւիլիօ Տի Պրենդա մօրդա, Վենետիկէն մինչև Բատոնա. Գանալէ Տի Բիզա, Բիզան Լիվօնօյի կը միացնէ. Գանալ Տի Չեմո, Պոլոնեան Ֆերրարայի կը միացնէ. Գանալէ Գալուր այս ետքի

տարիներու ջրաբաշխական մեծագոյն գործերէն մէկն է ևն: (§ 7.) :

2. **Նրկաբուզիւի**. — Իտալական երկամուղեաց գծերը հետևեալներն են :

1<sup>0</sup>. Դուրինէ՝ Սուզա և անկից Շամպէրի և Լիօն. (Մօն Սընիէ անցնելով):

2<sup>0</sup>. Դուրինէ՝ Գօնի :

3<sup>0</sup>. Դուրինէ՝ Վենետիկ. Միլանէ, Վերօնայէ և Բատուաէն անցնելով :

4<sup>0</sup>. Դուրինէ՝ Օդրանդօ և Ալեքսանդրիա և կ'անցնի Բիաչենցայէ, Պոլօնեայէ, Անգօնայէ, Փօճճիայէ, Պարիէ, Պրինտիզիէ և Լէչչէյէ: Պարիէն երկու կը բաժնուի, ճիւղերէն մէկը պիտի ուղղի Դարանդօյի վրայ և անկից Ռէճճիօ պիտի երթայ:

5<sup>0</sup>. Ճնօվայէ՝ Նարօլի. Սրեցիայէ, Բիզայէ, Լիվօնօյէ, Չիվիդա-Վիքքիայէ, Հոովմէ և Գաբուաէ անցնելով: Այս գիծը դեռ ընցած չէ իր բոլոր տարածութեան մէջ. Նաբօլիէն ալ ինչուան Դարանդօ պիտի ձգուի:

6<sup>0</sup>. Ֆիրենցէյէ՝ Հոովմ երկու գիծ. մէկը Արեցցօյէ անցնելով, միւսն Սիենայէ. երկուքն ալ դեռ ընցած չեն իրենց բովանդակ տարածութեանը մէջ:

7<sup>0</sup>. Լիվօնօյէն՝ Պօլօնեա և Ֆերրարա. Բիսոյայէն անցնելով և Բիսոյայէն Ֆիրենցէի վրայ ճիւղով մը:

8<sup>0</sup>. Հոովմէ՝ Անգօնա. Սիփոլէզայէն անցնելով:

9<sup>0</sup>. Նաբօլիէն՝ Փօճճիա:

Ինչուան հիմա հաստատուած երկամուղեաց գծերուն երկայնութիւնը գրեթէ 6000 հղումդր. է:

§ 4<sup>0</sup>—Վաճառարեւորքիւն եւ վաճառահանութիւն

**Մանող ապրանքն են՝** ասուեղէն, բժօժ, մետաքսեղէն և բամբակեղէն, շաքար, զանազան իւղեր, երկամ, երկամեղէն, փերեզակաց ապրանք, քիմիական արգասիք, շինութեան փայտ,

ցորեն, խաճուէ, մեքենայ, քման և վշէ մանուածք, բիւրեղ, ապակի, օճառ, ծխախոտ, մեղրամոմ, ձի, ջորի, էջ, ըմպելիք, անուշադր, բուրդ, անողորկ մետաքս, գոյն, իւղ, այծ, ոչխար, վարսակ, պղինձ, անօթեղէն, ածուխ, պանիր, ժամացոյց, ոսկի, արծաթ, վառելու փայտ, առատ բամբակ, անգուտ և գտած ծծումբ, արմտիք, բանուած երկամ, ցորեն, զունաւոր նիւթեր, բժշկական նիւթեր, մորթ, զինի, օղի, Բարիգու ապրանք, աղած ձուկ, հանքային իւղ, անգուտ շաքար, ձեռակերտ ապրանք, հանքածուխ: Մտնող ապրանց արժէքը 908 միլիոն ֆրանգ է:

**Նլլող ապրանքն են.** — Բրինձ, ալիւր, հայս, Սելսոնայս, դրմած (մաքառնա), կանեփ, աղտոր, զինի, ձէթի իւղ, պտուղ, պանիր, կարագ, մոմ, մորթ, բուրդ, մետաքս, աղած միւս մեղր, մեղրամոմ, մարմարիոն, բուստ, ծծումբ, օջան, սէրգինեմբրոյ, յարդէ զլիարկ, ներդաշնակաւոր լարեր, իւղ, կով, անողորկ կամ սանտրուած կանեփ և վուշ, սերմանիք, ճարպ, այծ, ոչխար, քման, պղինձ, երկամեղէն, փերեզակաց ապրանք, ալապսոյր, հուշա ըմպելիք, բժօժ, կողով, ապակեղէն, անօթեղէն, արմտիք, անձրուկ, Սուլթ, տորոն, որթձուկ, վարդաւիշկ, երածշտական տեսակ տեսակ գործիք, յարդ, ջորի ևն:

Արտահանութեան արժէքն է 600 միլիոն ֆրանգ :

§ 5<sup>0</sup> — Գլխաւոր նաւահանգիստք.

**Սաֆաէօ.** — (11,000) Պզտիկ նաւահանգիստ. իւղոյ, լեմոնի և կիտրոնի վաճառականութիւն կ'ընէ Գաղղիոյ հետ:

**Բօրդօ Մաուրիցցիօ** (7000) Լիվուրիոյ ազնուագոյն իւղը կուտայ: Գործարան օճառի, մոմի, զլիարկի, Սելսոնայսի: Դուրս կը զրկէ և կ'ընդունի արմտիք, նարար, պանիր, զինի, բայց մասնաւորապէս ազնիւ իւղ, հայս, կանեփ, բրինձ, նարինջ և ջոր պտուղ կը զրկուի զուրս:

**Օճէլիա.** (8000) Փոքրիկ նաւահանգիստ. զուրս կը զրկէ ձէթ և պտուղ :

**Սալօնա.** (20,000) ձենօվայի միակից նաւահանգիստ. նաւարկութեան և վաճառականական շարժման կարևոր տեղի մ'է. տարին 2000 նաւ կ'ելլեն և կը մտնեն: Հողը բարեբեր է. ձիթենիք, որթ, թուզ, կիտրոն, խնձոր, նուշ և թթենի լաւ կը մեծանան: Գործարան խեցեղինի, ապակեղինի, մոմոյ, թղթոյ, առագաստի, հասարակ կտաւու, պարանի և օճառի:

**Վօլդրի** (12,000) Գործարան բրդոյ և չուխայի. մանարան բամբակի և բրդոյ, հաստ թէլի և խաղախորդութեան գործարան:

**Ճեւօվա.** (130,000) Համանուն ծոցին վրայ: Կեղրոն Բիզայէ՝ Նիս, դէպ ի Գաղղիա և դէպ ի հիւսիսային Իտալիա գացող երկաթուղեաց: Ծովու ճամբով կապուած է բոլոր Իտալիոյ ափանց, կղզիներուն, Տանկաստանի, Թունուզի, Եգիպտոսի, Հնդկաստանի, Գաղղիոյ և Ամերիկայի:

Տէրութիւնը այլևայլ նորանոր աշխատութիւններ շինել տրւած է՝ ապրանքը զիւրաւ նաւերէ շոգեկառաց փոխադրելու համար, բայրին և նաւահանգստին հետ աւելի պատշաճ և նոր հաղորդակցութեան ճամբաներ բացած և նաւամատոյցները կառուցած է:

Նաւահանգիստը մեծագոյն նաւերն ալ կ'ընդունի և լի է soffreով և ընդհանուր վաճառատեղիներով: Տարուան մը մէջ ձենօվայի նաւահանգիստը զրուող ապրանաց արժէքը 81 միլիոն ֆրանգէն բարձր է: Վաճառականութիւնը 400 միլիոնի կը հասնի, նաւարկութիւնը 20,000 նաւ է (ծովեզերեայ նաւարկութեամբ հանդերձ) առևտուրը մասնաւորապէս Անգղիոյ, Գաղղիոյ, Ամերիկայի, Հոլանտայի և Պելճիոյ հետ է:

Քաղքին և շրջակայից գլխաւոր արուեստքն են թաւիշ, ազգի ազգի կերպաններ, հայս, թելահայս: Գործարան երիզի, չուխայի, մետաքսեղինի, պագէնի, զառնաւուխտի, թղթոյ, Պէրլինի հիւսկէնի (tricot), բուստի և ոսկեղինի: Հարիւրաւոր գործատուներ արծաթաթէլ հիւսկէն (filigrane) է շինուածոց կ'գրաղին:

Մտնող ապրանքն են՝ ցորեն, շաքար, մետաղ, հիւսուածք, խահուէ, հանքածուխ, ոգելից նիւթեր, բրդեղէն:

Ելող ապրանքն են՝ բրինձ, ձէթի իւղ, թուզ, անողորկ մետաքս, ակնակապ զարդեր, պանիր, կարագ և սննդարար հայսեր: — Կոտղանդնուպօլիս տարին 250,000 պարկէն աւելի բրինձ կ'ընդունի: — Հոս ծնաւ Գրիստափոր Գոլումպոս:

**Սրէցիա.** — (11,000) Պատերազմական և վաճառաշահ նաւահանգիստ, Իտալիոյ ազնուագոյն ձէթն ունի:

**Մասսա.** — (8000) Վաճառականութիւն իւղոյ, օճառի մետաքսեայ կերպատուց: Աղւոր մարմարիոնի հանք:

**Վիարէնցիօ.** — (8000) Փոքրիկ նաւահանգիստ. բանուկ վաճառականութիւն. գործարան առագաստի լամի:

**Լիվօնօ.** — (100,000) ձենօվայի ծոցին վրայ, Միջերկրականի մեծ մթերանոցներէն մէկը: Կեղրոն սուրհանդակ նաւերու, սակից կ'ելլեն Դոսկանայի ամեն շոգեկառքները: (Մինչև անցեալ տարիները Լիվօնօ ինչպէս նաև Վենետիկ և Իտալիոյ ուրիշ քանի մը նաւահանգիստք ազատ էին, սակայն այս տարիէս սկսեալ այն արտօնութիւնը բարձան): Լիվօնօ՝ Առնօ գետոյն և նաև ուղղակի Բիզայի միացած է Ֆոսսօ Տէի Նաւիչէլլիի միջոցով:

Գործարան զինեմբրոյ, օճառի, ոպնիազեղինի, ալապաղրէ և բուստէ շինուածոց, յարդէ գլխարկներու, սնկոյ, թղթոյ, ըմպելեաց, մոմոյ, մեղրամոմոյ, կնքամոմոյ, բիւրեղի, ապակոյ բորակի ևն պղնձի և արոյրի ձուլարան: Բուստոյ և անձրուկի որս:

Բանուկ վաճառականութիւն ունի Անգղիոյ, Մարսիլիոյ, Միջերկրականի այլ և այլ նաւահանգստաց և Տանկաստանի նաւահանգիստներուն հետ:

Լիվօնօ իրեն հարկաւոր ապրանքը մասնաւորապէս Անգղիայէն կ'ընդունի:

Վաճառաբերութիւնքն են՝ Սև ծովու արմտիք, արևելքի բամբակ, բուրդ և անողորկ մետաքս, Գաղղիական շաքար, խեցեղէն, լամեղէն, ազնիւ գինի, Անգղիական բամբակեղէն, նպար, զարդուց նիւթեր, փայտ, մետաքսեղէն, դանակեղէն, մետաղ, աղած ձուկ, երկաթեղէն ևն:

Վաճառահանութիւնքն են՝ անողորկ և բանուած մետաքս, ձէթի իւղ, յարդէ զլիարկ, Էլպա կղզւոյն երկամը, Թուղթ, մարմարիոն, բորակ, բողաս, ծծումբ, ալպասդր, բուստ, մալուխ, չուխա, բուրդ, սպունգ, կանեփ, ճրագու և անձրուկ : Նաւահանգստին շարժումն գրեթէ 8000 նաւ է : Վաճառամտութիւնը 200 միլիոն ֆուանգ է և վաճառահանութիւնը 100 միլիոն :

**Բորդո Ֆերրայօ** — (4,500) Էլպա կղզւոյն զլիաւոր բազարը : Աղահանը : Արտահանութիւն աղի, երկամի, մարմարիոնի և ձկան :

**Զիվիդա-Վէֆիա** . — (12,000 Փորրիկ նաւահանգիստ : Նաւահանգստին շարժումը 1400 նաւ է : Արտահանութիւնքն են ծծումբ, Դօֆայի պաղլեղ, օշնան, ձէթ, արմտիք, մերխոսի բուրդ, փայտ, անձրուկ : Վաճառաբերութիւնքն են՝ գինի, չուխա, Թէլ, մետաքս, աղած ձուկ : Վաճառաբերութիւն վաճառահանութեանէն աւելի է :

**Ռօմա** կամ Հռոմ (217,000) Տիբերիս գետոյն վրայ մեծ քաղաք է, բայց գրեթէ առւտրական սահմանեալ շարժումը մ'ունի : Մտնող նաւերը Թէև պղտիկ են՝ սակայն դարձեալ դժուարաւ Տիբերիսը կ'ելլեն : Քաղաքը զանազան գործարաններ ունի միշին տեսակ չուխայի, բրդեղինի, մետաքսեղինի, պինդ շոհի, սուտ մարգարտոյ, կնքամտոյ, արուեստաշէն ծաղկանց, ներդաշնակաւոր լարերու, երկամեղինի, բուստէ և մօզաիքայէ կերտուածոց, հայսի, օճառի, ապակոյ և բիւրեղի, մեղրամտոյ, խաղախորդութեան, շարի, ժապաւնի, զանաւառութտոյ, Թաւշոյ, ընտիր պազէնի, պաղլեղի, կիպրոսի փոշոյ, (բուտրա), խեցեղինի :

Վաճառահանութիւն պաղլեղի, Բօցցօլանայի, ձէթի, անխոնի, բողասի, արմտեաց, կաշոյ, հնութիւններու (antiquités) և գեղարուեստից նիւթերու : Վաճառամտութիւն նպարի, բովիճէից լեղակի, աղած ձկան, ազնիւ գինւոյ, մեղրամտոյ, ամեն տեսակ հիւսուածոց, մանուած բամբակի են :

**Կաէդա** . (16,000) Տիբերենեան ծովուն վրայ գրեթէ կղզիա-

ցեալ քաղաք : Նաւահանգիստն ընդարձակ է և գրեթէ ամեն հովերէ պատասպարուած : Վաճառականութիւնն աննշան է : Հողը բերրի է և ձկն, արմտիք, գինի, պտուղ և մասնաւորապէս նարինջ կը հասցընէ :

**Վարուա** . — (14,000) Վոլորուոյի վրայ ամուր քաղաք . բանուկ վաճառականութիւն . անուանի են սեխերը :

**Նաբօլի** . (400,000) Հինն Բանդէօք որ յետոյ Բալէթօլիս կոչուեցաւ : Տիբերենեան ծովուն վրայ և համանուն սրանչէլի ծոցին մէջ : Վաճառականական ընդարձակ նաւահանգիստ բայց ոչ այնքան վաճառաշահ : Իտալական տէրութիւնը խնամք տանելու վրայ է և նորանոր աշխատութիւնք հետզհետէ սկսելու վրայ են : Չորս կողմը ցիր և ցան կղզիները նաւահանգստին չորս մուտքը կը ձևացնեն : Նաւական շարժումը 5000 նաւ է, մէկ միլիոն տակառաչափով :

Դլխաւոր արուեստագիտութիւնքն են՝ բրդէ, կաշիէ, մորթէ բանուածք, սէկ, ձեռնոց, աղիքէ լար, ոսկրէ և մեղրամով բանուածք, մոտ, զլխարկ, ժապաւէն, մետաքսեղէն, տամակեան կերպաս, դիպակ, յարդի Թաւիշ, բժան, բամբակեղէն, օճառ, Թուղթ, ապակեղէն : Ոսկերչութիւն, երիզ և ոսկեթել անկուածներ, ըմպելիք, Թելահայս, չուխա, բեհեզ, անուշահոտութիւնք և խեցեղէն :

Արտահանութիւնքն են՝ ոսկր, օղի, շիշ, նուշ, գինեմրուր, բուստէ զարդեր, (օղ, ապարանշան), ոգիք, Թուղ . ընտիր ցորեն, վշոյ և կանեփի հոճուտ, դրամճ, բուրդ, ազնիւ գինի, պլտուղ, մատուտակի հիւթ :

Մտնող ապրանքն են՝ շաքար, խահուէ, քարաօ, լեղակ, գաղթականաց բերք, համեմ, Պաղլոյ զլխարկ, ոսկեայ և արծաթեայ դիպակներ, բարիզու նորեղուկ ապրանք և զոհարեղէն . անուանի բամբակեղէն, Գերմանիոյ երկամեղէն, ժամացոյց, կապար, պղինձ, աղածոյք, ծխախոտ :

Նաբօլիի մօտ գործարան մը կայ ուր շատ տեսակ մեքենայ կը շինուին :

**Պասպէլլամարէ** . — (23,000) Նաբօլի ծոցին վրայ, վերո-

յիշեալ բաղբէն 25 հազարամէր դէպ ի հարաւ: Անկեալ նա-  
ւահանգիստ մ'է՛ բայց տէրութիւնը զայն ընդարձակելու և  
պատասպարելու կը ջանայ:

Տէրութեան ծովային մեծ նաւարաններէն մէկն է: Անուանի  
է հանքային ջուրը:

**Ռէճճիօ** (30,000) Իտալիոյ հարաւային ծայրը, Սիկիլիոյ  
անցից վրայ, Մեսսինայի յանդիման, 13 հզմէր. հեռու: Գոր-  
ծարան զգալի, մանարան մետաքսի. ոգիք: Առատ են կիտրո-  
նը և նարինջը, որոնք իր վաճառականութեանը զլիսաւոր նիւ-  
թերն են: Իւղն ալ շատ ազնիւ է:

**Պարանզօ**. — (22,000) Համանուն ծոցին վրայ: Ժամա-  
նակաւ Իտալիոյ զինուորական կարեւոր նաւահանգիստներէն  
մէկը պիտի ըլլայ: Ընդարձակ և ապահով է: Վաճառականու-  
թիւն երկրին ազնիւ զինուոյն և բրդոյ:

**Կալիբօլի**. — (14,000) Գարանդոյի ծոցին մէջ, կղզեկի  
մը վրայ: Նաւերը շատ ձէժ կ'ընդունին այս նաւահանգստէն:  
Գործարան բեհեզի, բամբակի և բրդոյ: Որձկան մեծ որս: Եր-  
կիրը մասնաւորապէս բամբակ կ'ընծայէ:

**Օդրանզօ**. — (7,000) Փոքրիկ նաւահանգիստ Յոնիական  
ծովուն վրայ: Բանուկ վաճառականութիւն. արտահանութիւն  
ձիթոյ և ծղոյ:

**Պրինսիպի**. — (10,000) Կարեւոր նաւահանգիստ: Ամենէն  
մեծ նաւերը ևս կ'ընդունի: Այս նաւահանգիստն արեւելքէ Իտա-  
լիա եկող ապրանսոց ամենէն մօտ կայարանն է. և իրաւցընէ  
միշտ լի է նաւերով: 1863 ին նաւարկութեան շարժումը 81,  
646 տակառաչափի կ'ելլէր, իսկ 1867 ին 302,734 տուցի. և  
նոյն ատեն ղեռ Սիւէզի պարանոցը կտրուած չէր: Պրինսիպի  
Եւրոպիոյ և Ասիոյ հետ ունեցած երազ առևտրոյն մեծ զիծն  
պիտի ըլլայ օր մը (1):

(1) N. Stivieri. Geografia e statistica commerciale del  
regno d'Italia.

Արտահանութիւն զինուոյ և ձիթոյ: Լլոյտի ընկերութեան շո-  
գենաներուն հանգստատեղիներէն մէկն է:

**Պարի**. — (32,000) Բանուկ վաճառականութիւն Բուլեայի  
ձիթոյ վաճառատեղիներէն մէկը: Գործարան բամբակի, չու-  
խայի, օճառի մետաքսեղինի:

**Անգոնա**. — (55,000) Առևտրական և զինուորական նշա-  
նաւոր նաւահանգիստ: Հոս կը հանդպին Լլոյտի ընկերութեան  
նաւերը: Գործարան մալխոյ, արեւելքի համար առաջատի  
լամի, բամբակեղինի, թաղիքէ զլխարկի, մոմոյ, օճառի, զինե-  
մբոյ և խեցեղինի: Նաւարան: Գլխաւոր վաճառականութիւնը  
Անգլիոյ, Աւստրիոյ, Գաղղիոյ և Օսմանեան պետութեան հետ  
է. ընդամենը 70 միլիոն ֆրանկի գործ կը տեսնէ: Արտահա-  
նութիւն զինեմբոյ, մետաքսի, բրդոյ, Ռօմանիոյ կանեփի,  
փայտի, մալխոյ, բողափի, ծծմբի, մորժոյ, պտղոյ, մոմոյ, ձե-  
ռակերտից, ձկան, իւղոյ, մետաղի, վշոյ, հնտոյ: Վաճառաբե-  
րութիւն մանուած բամբակի, գոհարեղինի, երկաթեղինի, մո-  
մոյ, զաղժականութեանց և Հնդկաստանի նպարի: Երկաթուղ-  
եաւ միացած է Իտալիոյ ներքին քաղաքաց:

**Վեհեցիա** կամ Վեհեցիկ. — (135,000) Աղբիականի ա-  
րևմտեան ափանց վրայ, համանուն լճակին մէջ՝ 72 մեծ և 48  
փոքրիկ կղզեաց վրայ: Վեհեցիկ ցամաքի հետ կապուած է  
3,601 մէր կրկան կամրջով մը: Ասոր վրայէն կ'անցնի եր-  
կաթուղի մը, որ մինչև Մէսոպոտիայի քաղաքը ուղղակի եր-  
թաւով երկու ճիւղ կը բամբուի, մէկը դէպ ի Գրիէտոյ և միւսը  
դէպ ի Պօլօնեա: Շոգենաւերու կանոնաւոր երթևեկութեամբ  
միացած է զլիսաւորապէս Գրիէտոյի, Տալմացիոյ, Եգիպտոսի,  
րևելիցա և բուր ծովային Իտալիոյ:

Վեհեցիկ ատենօք շատ երևելի էր, յետոյ օտարազգեաց  
լուծին տակ ընկճուեցաւ և իր առջի պայծառութիւնը կորսն-  
ցուց, բայց հիմա առջի ազատութիւնը ձեռք բերած ըլլալով՝  
վերականգնելու վրայ է: Նաւարան: Վեհեցիոյ զլխաւոր ար-  
ուեստագլխութիւններն են՝ ծեծուած ոսկի, ապակի, ընտիր  
հայելի և ապակեղէն, բրդեղէն և մետաքսեղէն, ոսկոյ պէս

միշտ փայլուն ուլունք (պօնճուք), առագաստի լար, մալուխ, խաղախորդուծիւն, պողպատէ, երկամէ և պղնձէ բանուածք, օւղոյ թորանոց, վարդաւիչք, շաքարի զտարան, գործարան քացախի, միջին տեսակ մոմոյ, օճառի, լաւ ոսկերչուճեան, զեղեցիկ մօզաքիւս, գործարան թերեւեկէի կն:

Արտահանութեան նիւթերն են՝ ցորեն ոսկիէ և արծաթէ գանգուր Թրժուր (cannetille) բրինձ, վուշ, անողորկ և բանուած մետարս, Թուղթ, բրդէ ձեւակերտ, պտուղ, պանիր, գինեմրուր, կանեփ, մալուխ, փայտ, թերեւեկէ, ապակեղէն բիւրեղ և հայելի որ իր ծովակներն մէջ Մուրանօ կղզին կը շինուին:

Վաճառաբերութիւնքն են՝ հունտ, իւղ, շաքար, խահուէ, բամբակ, գունատու փայտ, լեղակ, բամբակեղէն, երկամեղէն, աղածք և պղպեղ:

ՍԻԿԻԼԻՈՅ ՔԱՆՈՒՈՐ ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏԲՆ ԵՆ

**Մէսսիմա**. — (110,000) Պատերազմական և առևտրական կարևոր նաւահանգիստ: Նաւային շարժմունքը տարին զրեթէ միլիոն մը տակառաչափի կ'ելլէ, Գործարան մորթեղինի, բամբակի, մետաքսեղինի: Վաճառականութիւն իւղոյ, հասարակ ցորենոյ, զինւոյ, ըմպելեաց և մասնաւորապէս Սիկիլիոյ մետաքսի: Հոս կը հանդպին Մէսսաժըրի Մարիզիմ ընկերութեան շոգենաւները:

**Բալեւօ**. — (200,000) Սիկիլիոյ զլխաւոր քաղաքը և Միջերկրականի աղւոր նաւահանգիստներէն մէկն հաղորդակցութիւն ունի Նաթոլիի, Լիվօնօյի, ձեւօվայի, Գալեարիի և Մալլայի հետ: Նաւահանգստին շարժմունքը 400,000 տակառաչափ է:

Հալոց. գործարան բամբակի, յարդէ զլխարկի, մետաքսեղինի, ձեւնոցի, զինեմրոյ, ժանգառի, օճառի, ողբրի, Թրժոյ: Արտահանութիւն պտղոյ, ծծմբի, իւղոյ, աղտորի, անոյշ և դառն նշոյ, զինւոյ, աղկերի, աղած ձկանց, որձձկան, անձրուկի

քացախի, օւղոյ, բստոյ, աղի, կանեփի, Թղոյ, զխտորի կայն: Մտնող ապրանքն են՝ շաքար, ոգելից ըմպելիք, ձեւակերտ ապրանք կայն:

**Ճիւնէնցի**. — (19,000) Փոքրիկ նաւահանգիստ, Սիկիլիոյ հարաւային ափանց վրայ: Ծծմբոյ մեծ հանք ունի: Արտահանութիւն արմտեաց, ծծմբոյ, իւղոյ, օշնանի և կաւէ անօթից:

**Սիրակուգա**. — (20,000) Անկեալ քաղաք՝ որ ժամանակաւ աշխրհիս անաջին նաւահանգիստներէն մէկն էր: Արտահանութիւնն է որձձուկ, ձէթ, մեղր և մշկահոտ զինի:

**Գաղանիա**. — (70,000) Բարեբեր երկրի մը մէջ կարևոր նաւահանգիստ: Նաւային շարժմունքը տարուէ տարի 100,000 տակառաչափ է:

Մեծամեծ գործարաններ մետաքսեղինի, թէլի և բամբակեայ հիւտուածոց: Սամեայ, բստեայ և լաւայէ նիւթեր: Երկրին բերքը և արտահանութիւնքն են՝ ցորեն, ձէթ, պտուղ, զինի, սած:

ՍԱՐՏՅԵՆԻՈՅ ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏԲ

**Գալեարի**. — (30,000) Բուն նաւահանգիստ չունի, այլ պատսպարեալ հանգրուան մը: Նաւային շարժմունքը 150,000 տկէփի. կը հասնի:

Հողը մասնաւորապէս զինի, արմտիք և փայտ կը հասցընէ: Գործարան ծխախոտոյ: Որձձկան որս: Երկամանք, աղահանք և մարմարիոնի քարահատք:

Կղզոյն հիւսիսային-արեւմտեան ափանց վրայ կը գտնուի նաև Բօրդօ Դօրթէս՝ որ Սասսարի (25,000) քաղքին նաւահանգիստն է:

**Օրիսպանօ**. — (7,000) Ընդարձակ և պատսպարուած նաւահանգիստ: Գործարան հողէ անօթներու: Վաճառականութիւն ձիւթոյ, զինւոյ և ձկան:

§ 6° — Եւրֆին անասարուես եւ վաճառաշահ  
զլխաւոր ֆաղափ.

**Ուսինէ.** — (25,000) Ծաղկեալ քաղաք, բազմութիւն մե-  
տաքսի մանոցաց, վշոյ եւ կանեփի հիւտոյ: Վաճառականութիւն  
մորթոյ, կաշոյ, չուխայի, մետաքսեղինի, գինւոյ եւ փայտի:  
Զտարան շաքարի, գործարան թղթոյ եւ ըմպելեաց:

**Գրեվիգօ.** — (23,000) Գործարան բրդեայ, բամբակեայ,  
վշեայ եւ քմանէ հիւտուածոց, թղթոյ, պղնձեայ եւ երկամեայ  
բանուածոց:

**Բասօվա կամ Բասուա.** — (54,000) Ընկուզի փայտէ կա-  
րասիք. գործարան մետաքսեղինի, ժապաւինի, ներդաշնակա-  
ւոր լարերու, մոմոյ, օղոյ, չուխայի, վարդաւիշկի եւ ըմպելեաց:

**Վիչէնցա.** — (35,000) Մետաքսեղէն, թաւշ, դիպակ,  
վշէ կերպաս, ծաղիրէ գլխարկ, ոսկեղէն եւ խեցեղէն:

**Վէրօնա.** — (54,000) Ատիճէի վրայ ամուր քաղաք. գոր-  
ծարան մետաքսեղինի, բամբակեղինի, ասուեղինի, չուխայի,  
ապակոյ եւ կաշեղինի եւ ոսկեղինի. զտարան շաքարի: Վա-  
ճառահանութիւն մետաքսի, չուխայի, իւղոյ, գինւոյ, բրնձի:  
Վաճառամտութիւն մուշտակի, բրդոյ, երկաթի եւ զաղժակա-  
նաց նպարի:

**Մանգօվա կամ Մանդուա.** — (30,000) Մինչիոյ գետոյն  
վրայ ամուր քաղաք. զլխաւոր արուեստագիտութիւնքն են՝  
մետաքսէ մանուածք, ապակի, կաշի, կտաւ, մուշտակ եւ օճառ:

**Գօօօ.** — (21,000) Համանուն լճին հարաւային ծայրը:  
Նշանաւոր պատրաստութիւնքն են մետաքս, բրդեղէն, օճառ,  
ջրաբաշխական գործիք եւ մեքենայ. ծաղիրէ զլխարկ. գործա-  
րան մորթեղինի, վշէ, կանեփի եւ բամբակէ թելերու:

**Պերկամօ.** — (35,000) Ատուեղէն, մետաքսեղէն, սնդուա,  
կապերտ: Արտահանութիւն մանուած մետաքսի, երկամի,  
պանրոյ, չուխայի: Վաճառամտութիւն բրդոյ, մորթոյ, կաշոյ  
եւ նպարի:

**Պրեւիա.** — (38,000) Դանակեղէն, երկամեղէն, զէնք,

ձել, մետաքս, բամբակ, մոմ, իւղ, խաղախորդութիւն: Վաճա-  
ռահանութիւն երկամի, ցորենոյ, վշոյ, պանրոյ: Կ'ընդունի չու-  
խա, մետաքսեղէն եւ նպար:

**Միլանօ.** կամ Միլան. — (232,000) Օլոնայի վրայ, շրջա-  
պատուած նաւելի ջրանցքներով՝ որոնցմէ Նաւիլիօ-Կրանտէն իր  
նաւահանգիստը կրնայ սեպուիլ (§ 3): Միլան՝ Լօմպարտոյ  
առևտրոյն եւ արուեստից զլխատեղին է: Գործարան մետաք-  
սեղինի, ոսկեթել եւ արծաթաթել երիզներու, արուեստաշէն  
ժաղկանց, թաւշոյ, կապերպի, տամասկեան կերպասու, սնդըս-  
եայ բողբու, թիւլի, նորելուկ ապրանսաց, շալի, բամբակեղի-  
նի, ժամացուցի, կառքի, մեղրամոմոյ, երկամէ եւ պողպատէ  
նիւթոց, թղթոյ, գինուց, կօշիկի, ապակոյ, քիւրեղի եւ հայելոյ:  
Մաղախորդարան, շաքարի զտարան: Թաղիրէ եւ մետաքսէ  
զլխարկ: Գործարան մոմոյ, ծխախոտոյ, չորջուղի, ըմպելեաց  
եւ օճառի:

Միլանի արտահանութիւնը զլխաւորապէս հետեւեալ ապ-  
րանքներէ կը բաղկանայ. բրինձ, ցորեն, վուշ, կանեփ, պա-  
նիր, երշիկ եւ մաշնաւորապէս մետաքսեղէն եւ Զինու մետաքսէ  
կերպաս: Վաճառամտութիւն զաղժականաց նպարի, Գաղչիոյ  
Բորդուզալի, Սպանիոյ եւ Կիպրոսի գինիներու, երկամեղինի,  
չուխայի, մուշտակի, նուրբ կտաւու, Լիօնի եւ Բարիզու կեր-  
պասու եւ ժապաւինու, Գաղչիոյ գոհարեղինի, հայն:

**Դօրինօ** կամ Դուրին. — (200,000) Բօ գետոյն ձախ ա-  
փանց վրայ, Իտալական երկամուղեաց զլխաւոր կեդրոններէն  
մէկը: Մեծ կեդրոն գրեթէ բոլոր մետաքսեղինի որ Բիէմօնցէի  
արտահանութեան զլխաւոր նիւթերէն մէկը կը կազմէ: Թան-  
կազին են իւր գործարանաց թաւիշները: Դուրինի ճարտա-  
րութեանց եւ վաճառականութեան զլխաւոր նիւթերն են՝ յախ-  
ճապակ, ըմպելիք, ապակի, կերպաս, երկամ, երկամեղէն, ևն:  
Գործարան չուխայի, շաքի, վարդաւիշկի, ձեռնոցի, մետաք-  
սեղինի, ասուեղինի, բամբակեղինի եւ ծխախոտոյ: Զինարան:  
Մեծ վաճառականութիւն բրնձի եւ ձիթոյ:

**Բաւիա.** — (31,000) Լօմպարտոյ մէջ: Գործարան մե-

տարսի և մեղրամոմոյ : Վաճառականութիւն բրնձի, զինւոյ.  
մետաքսի, հայսի, պանրոյ և արմտեաց :

**Ալէքսանտրիա.** — (54,000) Դանարո գետոյն աջ ափանց  
վրայ : Վաճառականութիւնը Դուրիւնի, ձնօվայի և Միլանու  
հետ է : Գործարան մետաքսեղինի, չուխայի, մեղրամոմոյ,  
հայսի և ըմպելեաց :

**Պարմանեօլա.** — (15,000) Բիեմօնդէի մետաքսին զըլ-  
խաւոր վաճառատեղին է : Մեծ վաճառականութիւն կանեփի  
և արմտեաց :

**Ռիպլեցա.** — (30,000) Ամուր քաղաք : Գործարան մո-  
մոյ, գամի, ըմպելեաց, ժապաւինի, բամբակեղինի և խեցեղի-  
նի : Երկամի և պղնձի բովբ : Փարածիւթոյ և կաւիճի հանք :  
Վաճառականութիւն ցորենոյ, մետաքսի, զինւոյ, համեմի, բամ-  
բակի, ալածքի և պանրոյ :

**Քարմա.** — (46,000) Գործարան մետաքսեղինի, մոմոյ,  
ֆիւղէնի, ապակոյ, մեղրամոմոյ, անօթեղինի, օճառի, զարե-  
ջրոյ, մետաքսէ և թաղիքէ զլիարկներու և ըմպելեաց : Բորակի  
զտարան, խաղախորդութիւն : Վաճառականութիւն մետաքսի,  
բրնձի, բրդոյ, բարմէճիանա պանրոյ, կանեփի, եգիպտացորե-  
նոյ և խոզեղինի :

**Մօսէնա.** — (32,000) Գործարան բամբակի, մետաքսի,  
զլիարկի, թելի և քացախի : Վաճառականութիւն մետաքսի,  
ցորենոյ, զինւոյ և քարածիւթոյ :

**Պոլօնեա.** — (97,000) Գործարան ծխախոտոյ, մետաքսե-  
ղինի, մետաքսեայ սնդոյ, թաւշոյ, թաղիքի, յարդէ զլիարկնե-  
րու, տամասկեան կերպասու, շարի, թղթոյ և օճառի : Վաճառա-  
կանութիւն կանեփի, վշոյ, մեղրի, մեղրամոմոյ, երշիկի (§ 2, 29):

**Ֆալէցա.** — (10,000) Գործարան խեցեղինի, զինեմբրոյ  
և մետաքսի : Արտահանութիւն մետաքսեայ կերպասուց, թղթոյ,  
թմանի, զինւոյ և անօթեղինի :

**Լուֆա.** — (26,000) Վաճառականութիւն ձիթոյ, թղթոյ,  
մետաքսի, մարմարիտի, ատուեղինի և չուխայի :

**Ֆիլէնցէ կամ Ֆիլօրէցա.** — (158,000) Իտալիոյ զլիա-

ւոր քաղաքաց մէկը՝ Աւնօ գետոյն վրայ : Դոսկանեան վաճա-  
ռականութեան զլիատեղին է : Գործարան դաֆղայի՝ որ իր  
անուամբը կը կոչուի. մետաքսի՝ որուն համար հազարաւոր  
գործաւորներ կ'ըբաղին. յարդէ զլիարկներու, մօզաիքի, անու-  
շահոտութեանց, կառքեղինի, յախճապակոյ, մեղրամոմոյ, կա-  
պերտի, զոհարեղինի, ըմպելեաց, չորթլաղի, վարդակշիկի,  
թղթոյ, տամասկեան կերպասու, երիզի, զանախոտոյ և ներկի :  
Բրդեղէնը՝ որուն համար ժ.Գ. զարուն մէջ 30,000 գործաւոր  
կ'աշխատէր, հիմա անկման վիճակի մէջ է :

**Սիէնա.** — (23,000) Գործարան հասարակ չուխայի, աս-  
ուեղինի, մետաքսեղինի, զլիարկի, ներդաշնակաւոր լարերու  
և Սիէնայի ըսուած մարմարիտի :

**Քէրուհիա.** — (25,000) Գործարան մետաքսի, չուխայի,  
կապերտի, թաղիքի և մեղրամոմոյ : Խաղախորդութիւն :

**Ֆօլինեօ.** — (16,000) Գործարան ատուեղինի, մետաքսե-  
ղինի և մեղրամոմոյ :

**Մքօլէգօ.** — (18,000) Գործարան զլիարկի, բրդէ հիւսուա-  
ծոց : Խաղախորդութիւն : Մարմարիտի և ալպապղրի հանքեր :

**Ֆօճինա.** — (28,000) Վաճառականութիւն և գործարան  
բրդոյ : Առատութիւն արմտեաց : Ազնիւ զինի և ձէծ :

**Պագէրքա.** — (30,000) Գործարան մետաքսեղինի : Վաճա-  
ռականութիւն զինւոյ և մետաքսի :

**Ավէլլինօ.** — (22,000) Գործարան բրդոյ և զլիարկի : Ար-  
տահանութիւն ցորենոյ, շագանակի և կաղինի :

**Լէչչէ.** — (22,000) Գործարան ծխախոտոյ, բրդոյ, վշոյ,  
կիտուածոց և արուեստաշէն ծաղկանց : Վաճառականութիւն  
բամբակի, ձիթոյ, պտղոյ, զինւոյ և մետաքսի :

**Պօզէնցա.** — (16,000) Գործարան խեցեղինի, սղոզպտի  
և երկամէ գործուածոց : Վաճառականութիւն մետաքսեղինի և  
դանակեղինի :

Սիկիլիոյ մէջ .

**Պալդանիզէղգա.** — (21,000) Արտահանութիւն ցորենոյ,  
զինւոյ և ձիթոյ : Սնդկի հանք :

**Պօսիգա.** — (29,000) Գործարան բամբակեղինի: Արտա-  
հանութիւն ցորենոյ, բրնձի, ձիթոյ, կանեփի և արջառու:

**Սասարի.** — (25,000) Աննշան վաճառականութիւն: Եր-  
կիրը բարեբեր է արմտօք, զինուով, ձիթենուով և պտղով: Գոր-  
ծարան ծխախոտոյ:

§ 7<sup>o</sup> — Ոռոգութիւնք և ցանափեցումն.

Իտալական ցամաքակղզին՝ բազմաթիւ գետերով ոռոգուած  
ըլլալով, ջրաբաշխական նշանաւոր դրութիւններ ունի. ար-  
դարև, պէտք է ջրերու ընթացքը կանոնաւորել և ըստ պիտոյից  
ողողումն արգիլել և երկիրը պաշտպանել: Արդի աշխատանաց  
վախճանն մի միայն յարատև հսկողութիւն մը կ'ուզէ, բայց  
գծրաղղաբար շատ երկիրներ երեսէ՛ ձգուած էին: Ոռոգմունքը  
մասնաւորապէս շատ են և լաւ կերպով կը կատարուին Լօմ-  
պարտիա, Վենետիկ և Բիեմօնդէ գաւառաց մէջ. շատերուն  
նպատակն որիզատաններու ողողումն է:

Իտալիոյ մէջ սկիզբ ունեցած է կտրուածիւնն colmatage) որ  
ի բնութենէ ընկղմած ցած երկիրները հողով բարձրացնելու  
վրայ կը կայանայ, զոր նոյն ինքն ջրով բշել և տեղաւորել կու-  
տան:

Շատոց սկսած և շարունակուած գործոց մէջ նշանակելու  
արժանի են՝ Դոսկանայի մէջ Վալ տէ Քիանայիներն Առնօյի և  
Տիրերիսի ջրշեղչներուն մէջ: Մօտէնա, Պօլօնեսա, Ֆէրրարա և  
Ռավէննա գաւառներուն մէջ՝ ետեւէ եղած են Ռէնօյի և իր գե-  
տակցացը մասնաւոր հանգամանաց յաղթելու, որոնց բարձրա-  
ցեալ հունը վատառողջ զեղում մը կը պատճառէ:

Դավուր ջրանցքը՝ Բօէն սկսեալ (Քիլվասոյի վերի կողմը) յե-  
տին ժամանակներու ջրաբաշխական մեծ գործերէն մէկն է:  
Այս ջրանցքը 80 հզմդր. երկայնութիւն ունի. ոռոգելով կ'անց-  
նի Վերչէլլա և Նովարրա գաւառները, ինչպէս նաև Լօմէլլի-  
նէն: 6¼ միլիոն ֆունտայ ծախու ելաւ:

Անդադար կը նորոգեն Բօի և իր գետակցաց Թումբերը, միշտ

վը ցամբեցնեն Դոսկանայի Մարէմ ճախճախուտները, և Նարօ-  
լիի և Ռավէննայի տղմուտները: Վենետիկ գաւառին մէջ շատ  
ցամաքեցումներ կան՝ որոնք դեռ աւարտած չեն: Արդէն իսկ,  
Վերօնայի մեծ ձորերը գրեթէ բոլորովին փոխուած են: Բօլչգի-  
նիոյ և Բատովանի ցած երկիրներուն մէջ, շոգեշարժ մեքենա-  
յից միջոցով յաջողած են ջուրը պարպելու, և ծովուն հարթու-  
թեամբ և երբեմն աւելի ցած 32,000 հրկլ. երկիր մշակելու:  
Ֆուչինօ լիճը ցամաքեցուելու վրայ է. երբ այս ընդարձակ լի-  
ճը բոլորովին պարպուի՝ երկրագործութիւնը 16,000 հրկլ.  
սքանչելի ողողական երկիր պիտի շահի: Վերչապէս մեծ  
խնամքով Լափօ Մաճճիօրէյէն և Լուկանօ լճէն ջրանցքներ բաց-  
ուեցան՝ Լօմպարտիոյ ամենարարձր դաշտերը ոռոգելու համար:

§ 8<sup>o</sup> — Ճարտարաւեստք.

Արուեստները, կամաց կամաց իրենց առջի գործունէութիւնը  
և սլացն առնելու վրայ են: Սակայն Անգլիոյ և Գաղղիոյ ար-  
ուեստից հաւասարելէն դեռ շատ հեռու են: Այլ և այլ պատ-  
ճառներ իր ընթացքն ընդհատեցին. 1<sup>o</sup>. հարաւային ժողովրդոց  
անհոգութիւնը. 2<sup>o</sup>. կառավարութեանց ողբալի անտարբերու-  
թիւնը և քաղաքական խռովութիւնները: Քանի մը տարիէ ի  
վեր եռանդ մը կը տեսնուի և արդի Իտալիա՝ յառաջադիմու-  
թեան բարեկամ ըլլալով, հասարակաց բարեօրոյթեան ճամբուն  
մէջ հսկայաքայլ կը յառաջադիմէ:

Հիւսելի զիխաւոր ճարտարարուեստքն են՝

Միսսինիլէն, մասնաւորապէս կեդրոնացեալ ի Լօմպարտիա  
և ի Վենետիկ. կտաւ, բամբակ, ասր, Թաւիշ, աղւնեգործ. ևն:  
Միայն 200 մանարան կայ, որոնք 450,000 մանոց (broche) ու-  
նին: Պօլօնեսա, Պրէշեսա և Ալէքսանդրիա բաւական ընտիր կը-  
տաւ կը գործեն: Հիւսելի ճարտարարուեստից շատ ճիւղերը  
ժամանակու աւելի ծաղկած էին բան Թէ հիմա: Շերամաբու-  
ծութիւնը որ շատ բարգաւաճած ժ.Գ. ժ.Ե. և ժ.Ձ. դարերուն մէջ՝

հիմա շատ անկած է : Եւ սակայն հիւսիսակողմանց քանի մը արուեստագիտոց հարստութեան մեծ աղբիւր մ'է : 240 միլիոն ֆռանգաց 4,200,000 հզկրմ. անողորկ մետաքս կը հայժայթէ :

Իտալիա բոլոր իր մետաքսները չվատներ և անկեց կը զրկէ Գաղլիա, Անգլիա և Գերմանիա : Պոլոնիոյ մետաքսը Թուրի և Լիոնի ամենէն գեղեցիկ չուխաններուն բաղադրութեանը մէջ կը մտնէ : Գոսկրնայի մէջ 4-5,000 մեքենայ կայ, որ նուրբ կերպասներ, տեսակ տեսակ ողորկած և կոկոս մետաքսեղէն կը գործեն : Նմանապէս Լիկուրիա և Բիլմոնդէ՝ հազարաւոր մեքենաներ թախիշ և դափղա գործելու կը բանին : (Տես Դօրինօ) :

Մնացեալ բերքերէն անուանի են՝ կարագը, պանիրը և հայսերը : Կարագի և պանիրոյ վաճառականութիւնը 200 միլիոն ֆռանգ կը բերէ : Ամենէն յարգի են Լոմպարտիոյ պանիրները, սակայն հռչակաւորագոյնն է Բարմենիան : Հոյսաշինութիւնը բազմաթիւ գործարաններ կը գրաղեցնէ : Սալօնայէ՝ ձէնօվա երթալու կարծ անցքին մէջ միայն՝ 150 հատ կը համբուրուի, որոնք մասնաւորապէս թելահայտ կը պատրուտեն : Հըռչակաւոր դրամանք մասնաւորապէս հին Նաբօլի թագաւորութեան մէջ կը շինուի : Իտալիոյ հայտերուն արտահանութիւնը 2 միլիոն ֆռանգաց կը հաշուի :

Նշանաւոր է Բալերմօյի գարեջուրը : Յիշենք նաև Իտալական շինութեանց մէջ յարդէ գլխաւիկները, որոնք տարեկան գրեթէ 12 միլիոնի արժէք մը կը ներկայացնեն :

Մետաղական ճարտարարուեստը յաջող չէ, և սակայն Գոսկանայի և Դիւնիլի մէջ քանի մը ձուլարան կը գտնուի : Բաւական ընտիր դանակի գործարաններ կան Միլան, Պրէշիա, Փիրէնցէ, Բիսոզյա, Գամբուսսօ : Զէնք և հրազենք մասնաւորապէս Լոմպարտիայէ և Բիեմօնդէյէ կուզան : Բնտանեկան կենաց, երկրագործութեան և արուեստից պիտանի գործիքը Լեքքոյի շրջակայքը կը պատրաստուին :

Պատուական և յարգի են Դուրինի, Լիվօնօյի և Նաբօլիի ակնեղէնները : Անուանի է Վենետիկ՝ բանուած ոսկեղ գործարաններովը. Նաբօլի բուստէ զարդերովը, (սպարօշ, օղակ, դաս-

տակ, գնդասեղ, ևն) . Հռովմ և Բէրուճիա և Վենետիկ մօզաիկաներովը . Գոսկանա, Լոմպարտիա և Վենետիկ իրենց սպակեղէնովը . Հիւսիսային Իտալիոյ այլևայլ քաղաքները՝ ինչպէս Վէրօնա և Գրէմօնա, երաժշտական գործիներովը . Փիրէնցէ և Միլան բրուտովը : Բայց Իտալիա հիմա խեցեղինաց այն նշանաւոր կեղանն չէ՝ որ Միչին Գարուն Ֆաւէնցայի և Ռօմանիոյ և Լէմարքէներու անունը հանց :

Անուանի են Սբէցիայի, ձէնօվայի, Լիվօնօյի, Անգօնայի, Նաբօլիի և Գասդալլէմարայի նաւարանները :

§ 9<sup>o</sup> — Մաշրա կղզիներ.

Մաշրա կղզին որ բնականաբար Իտալիոյ կը միանայ՝ Անգղիական կալուած է, իր կից երկու կղզիներովը, Կօցցօ և Գօմիւնօ . ամենակարևոր կայարան մ'է, Միչերկրականը ձեւացընող երկու մեծ ջրշէղջից անձուկ տեղը, Եւրոպիոյ և Աֆրիկիոյ Արևելքի և Արևմտեան Եւրոպիոյ մէջտեղը : Այս կղզիս ժայռ մ'էր՝ զոր անուանի ձիււորքըն Մաշրայի իրենց խնամքը բարեբեր ըրին՝ ինչուան նաև Սիկիլիայէն հող բերելով : Այս պզտիկ կղզին ծակկուած է քաղաքներով, գեղերով և հիանալի մշակութեամբ՝ որոնց պտուղքը, մասնաւորապէս նարինջը գլխաւոր բերքն են : Եւրոպիոյ ամենախիտ բնակչին ունի, 100,000 բն. 255 □ հզմգրի. վրայ, որ է ըսել 392 բն. առ մի □ հզմգր : Մայրաքաղաքն է Լաւալլէ (60,000) Միչերկրականի բանուկ նաւահանգիստներէն մէկն է, տարին 6,000 նաւ կը մտնայ և 100 միլիոնի գործ կը տեսնուի :

Մաշրա ծովային հեռագրով միացած է Սիկիլիոյ և անկից Իտալիոյ և Յանիական կղզեաց . միացած է նաև Գարսալուուսի՝ Աֆրիկիոյ մէջ, ուսկից ուրիշ ծովային հեռագիր մը կեւլէ՝ որ Պէնդազի կը հանդպի և յետոյ Աղբքասնդրիս կ'անցնի :

§ 10<sup>0</sup> — Դրամք, չափի եւ կշիռք.

Իտալիոյ դրամքը, չափք և կշիռքը Գաղղիոյ հետ ամենին նման են, բայց մէրական դրոժիւնը դեռ բոլորովին թափանցած չէ, մասնաւորապէս Սարտենիա կղզին ուր հետեւեալքը կը զործածուին :

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԱՓՔ

Բալմա = 0 մ, 263. — Դրապուզօ = 12 Բալմա. — Գաննա = 8 Բալմա :

ՄԱԿԵՐԵԻՈՅԹԻ ՉԱՓՔ

Ռէսդիէրա կամ Ռազիէրա = 139 կալ, 535:

ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ՉԱՓՔ

(Արմտեաց) Սղարէլլօ կամ Մոճճիօ (8 իմպուղի) = 49 լիդր, 17. — Ռօզիէրօ = 3 1/2 սղարէլլի. — (զինւոյ) Քուարդիէրէ = 5 լիդ, 026. — Պաղոօ = 100 Քուարդիէրէ = 5 հրլըր: — (ձիժոյ) Պարիլ 33 լիդ, 6 :

ԿՇԻՌՔ

Լիպրա = 405 կրամ, 77. — Գանդարէլլօ = 4 բուպիի կամ 10 1/2 լիպրա:

Ճանապարհական կամ երկրաչափական չափերու համար՝ բոլոր Իտալիոյ մէջ հազարամէրդէն զատ ստէպ իտալական մղոնը կը զործածուի, 60 առ աստիճան = 1 հզմղր. 854:

Փոխառուութեան ընկերութիւնք. — Իտալական դրամատուն ի Ֆիրէնցէ.

Ազգային դրամատուն ի Ֆիրէնցէ. 200 միլիոն ֆռանդ դրամազլխով .

Ազգային դրամատուն Գոսկանական.

Փոխատուութեան գոսկանական դրամատուն. 40 միլիոն ֆռ. Նարօլիի դրամատուն.

Սիկիլիոյ դրամատուն.

Կարեսական վարկ. 50 միլիոն ֆռ. դրամազլխով:

Եւ շատ ժողովրդեան դրամատուններ ի Պօլօնիա, Պրէշիա, Փօտօնօ, Փօմօ, Գրէմօնա, Ֆալէնցա, Լօտի, Մանդօվա, Միլան, Բատուա, Բարմա, Բիալէնցա, Սիէնա, Վէրօնա, և Վենետիկ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ.

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ Ա Մ

Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն

Ե Ի Ր Ո Պ Ի Ո Յ Ե Ի Ա Ս Ի Ո Յ

Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն Ե Ի Ր Ո Պ Ի Ո Յ

ՄկԹ. (պարունակեալ Արշիպեղազոսի կղզիքը) 525,374 □ հազարամէրդ:

Հիւսիսային լայնութեան միջին աստիճան 39<sup>0</sup> և 48<sup>0</sup>:

Երկայնութեան աստիճան 13<sup>0</sup> 30 և 27<sup>0</sup> 20 արևելեան երկայնութեան:

Բնակիչք 18,487,000: — Խտութիւն մարդկան առ մի □ հզմ. 35 անձ :

§ 1<sup>0</sup>. — Դիրք. սահման. նկարագրութիւն  
ծովախանց եւ ցամաքային սահմանագլխոց.

**Սահմանք.** — Եւրոպիոյ Տասնկաստանի սահմանն է հիւսիս-  
սէն Դանուբ, Սերվիոյ և Սաւայի հպատակ պետութիւնք. արևելքէն Պեսարապիա, Սև ծովը և Վոսփորոս. հարաւէն Մար-  
մարա ծովը, Արշիպելագոս և Յունաստան. արևմուտքէն Յո-  
նիական ծովը, Օղրանդոյի ջրանցքը, Ադրիական ծովը, Գարա-  
տաղ և Աւստրիական Տալմացիա:

Եւրոպիոյ Տասնկաստանի լայնքը 1000 հազարամէր է և ա-  
մենէն երկայն տեղը 1250 հազարամէր ունի:

**Ծովափութեամբ.** — Եւրոպիոյ Տասնկաստանի ծովափունքը  
2682 հզմր. տարածութիւն ունին հինգ ծովերու վրայ, որ են  
Սև ծով, Մարմարա, Արշիպելագոս, Յոնիական ծով, և Ադ-  
րիական:

Սև ծովու փոխունքը ընդհանրապէս բիչ խորշ և ծոց ունին.  
հիւսիսակողմը Դանուբայ բերաններուն մօտ ցած են, և կը սե-  
պանան հարաւային կողմը, ուր Պալքան և Սղրանծա լեռինք ի-  
րենց ստորտը ծովուն մէջ կ'երկնցընեն: Դանուբը՝ որուն բե-  
րանը 1856 ի Բարիզու դաշնադրութենէն առաջ Ռուսաստանի  
ձեռքն էր, երեք ճիւղ կը բաժնուի ծով Սափելու ժամանակ. որ  
են Քիլիս, Սուլիմա և Ս. Գլորգ: Միայն Սուլիմայի ճիւղը  
նաւարկելի է. Սուլիմա քաղաքը այս ճիւղին վրայ կառուցած  
նաւահանգիստ մ'է:

Դանուբայ հարաւային կողմը կը գտնուի Ռազլէյն լիճը, յե-  
տոյ Քէօսթէնէ նաւահանգիստը կուգայ որ Զլրնալօսայի  
կապուած է երկամուղով մը:

Քալիաբա գլուխը շրջելէն ետքը Վոտնայի ծոցը կուգայ,  
որուն վրայ է Վառնա պատերազմական և վաճառաշահ քա-  
ղաքը որ երկամուղով մը Դանուբայ վրայ եղող Ռուսնուք քաղ-  
քին կը միանայ:

Հոն Էմիլնէ գլուխը կը նշմարուի Պալքանայ արևելեան ծայ-

րը) և Պուրղազ քաղաքը որ բաւական աղէկ հանգրուան մը ունի:  
Ծովափունքը ասկէ վար հարաւային-արևելեան ուղղութիւն  
մը կը բռնէ և Վոսփորոս մտնալէն առաջ կը նշմարուին Զիզլ-  
պօլու, Միսիա, Տէրֆոզ, և Քիլիս:

Վոսփորոսը Եւրոպիոյ և Ասիոյ մէջտեղ նեղ անցք մ'է խիստ  
բանուկ, որուն տեսարանը հիանալի է:

Մարմարա ծովուն մօտ ցած Կաղանդուպօլիս փառա-  
ւոր քաղաքը կը գտնուի՝ որ աշխարհիս սքանչելի նաւահան-  
գիստներէն մէկն ունի, ընդարձակ և խոր և որ Ոսկեղջիւր  
կ'անուանուի:

Մարմարա ծովուն հիւսիսային փոխունքը բիչ ծովառաջք և  
ծովամէջք ունին, ցած և աւազուտ են մինչև Ռոսնոսո. Ռո-  
սնոսոյէն մինչև Կէլիպօլուսի ցամաքաղզիւն բարձր և ապա-  
ռածուտ են. և Թէլիք սաղլըն ալ նաւընդիստ ծովեղբրքը կ'ե-  
զերէ: Այն ծովափանց նշանաւոր տեղիքն են Քիլիսի-Չէմէմէնէ,  
Պէօլիսի Զէմէմէնէ, Սիլիվի (հինն Սէլիմպիա), Էրէկի (Հէ-  
րաքէ), Ռոսնոսո, որ Էտիւրնէյի Վիլայէթին վաճառատեղինե-  
րէն մէկն է, և Կէլիպօլու:

Չամաք-Քալիսի նեղուցէն անդին կուգայ Մարիցա գետոյն  
բերանը, ուր կանգնուած է Էնէզ կամ Էնոս պղտիկ քաղաքը՝ որ  
Էտիւրնէյի նաւահանգիստը կը սեպուի: Այն ծովափանց վրայ  
կը գտնուին նաև Մարօնիա, Գալալա և Օրժանո նաւահան-  
գիստքը. ինչպէս նաև Մէսոպոլ, Սղրուսա և Գարաուս գետե-  
րուն բերանները. նոյն տեղուանք կը ձևանան նաև Ռէնիսիայի  
Այնոռոզի, Գասսահիսայի և Սէլանիկի ծոցերը: Այս վերջինիս  
խորը կանգնուած է Սէլանիկ մեծ քաղաքը՝ Մակեդոնիոյ բեր-  
բերուն վաճառատեղին:

Աւելի հեռու Վօլօյի ծոցը կը ձևանայ որուն խորն է հա-  
մանուն քաղաքը Թեսալիոյ բնական նաւահանգիստը:

Յոնիական ծովու և Ադրիականի ծովեղբրքը ապառաժուտ  
են և բիչ են նշանաւոր նաւահանգիստք: Ադրիականի վրայ  
անուանի են Տուլչինէօ և Անդիալարի, որոնք Շիոսբայի երկու  
նաւահանգիստներն են:

**Յամաֆային Եպիսկոպոսութիւն.** — Յամաբային սահմանազուլիսը 3186 հազարամէր տարածութիւն ունին և հիւսիսային և հարաւային կողմերը կը գտնուին: Տանկաստանի հարաւային կողմը անջատուած է Յունաստանէ միայն սահմանազլիսոյ գծով մը՝ որ Վլօլօյի ծոցէն մինչև Արդայի ծոցը կ'երթայ (Յոնիական ծովուն վրայ):

Հիւսիսային-արևմտեան կողմը Գարատաղի և Տանկաստանի բաժանմունքը դեռ լաւ մը որոշուած չեն. այս փոքրիկ վիճակը Վերին-Ալպանիոյ, Պոսնիոյ և Հերցեկովինի մէջտեղ փակուած է: Այս յետին զաւառիս և աւստրիական Տալմացիոյ մէջտեղ, սահմանազուլիսը Տինարական Ալպեանց զագածանց շտկութիւնը կը բռնէ, մինչև Ուննա, Սաւալի աշակողմեան գետակցաց մէկը: Ուննայի միացման կետէն մինչև Տրին գետոյն միացման կէտը՝ Սաւան Օսմանեան պետութեան սահմանը կը սեպուի:

Սերվիոյ կողմի սահմանազուլիսը ձևացած է Տրին և Դիմոֆ գետերէ և անոնց մէջտեղ գտնուող լեռանց ծամածաւա զօտով մը: Սակայն այն կողմանէ, Սերվիան՝ Տանկաստանի հպատակ զաւառը, օտարազգի յարձակմանց դէմ պատուար մ'է և բուն սահմանազուլիսը կը ձևացնեն Դանուբը և Սաւա: Դիմոֆի միացման կետէն մինչև Սև ծով՝ Դանուբը Տանկաստանի սահմանը կը գծէ:

**Հրուանդանց և կղզիք.** — Լիկուեդիպա զուլիսը Ալպանիոյ արևմտեան ափանց վրան է. Բալիուրի, Տրաբանօ և Մոնդէ-Սանդօ Մակեդոնիոյ ափանց վրայ՝ երեք թերակղզոյ ծայրերն են: Հէլլէս-Պուռնու Չանաբ-Քալէսիլի մտից արևմտեան կողմը. Քալաքիս Պուլղարստանի արևելեան կողմը. Էսիլնէ՝ Ռումէլիի հիւսիսային-արևելեան կողմը:

Օսմանեան Պետութեան ձեռքն եղող կղզիքն են՝ Կիւրիս կամ Գանճիա, Մհարանդօ ևն. Արշիպեղագոսի մտից վրայ: Լեմնու կամ Սդալիմէն, Խմպոս, Սամոդրակի, Թաոնո կամ Թաոսու և Սդրաղի, Արշիպեղագոսի հիւսիսակողմը: Փոքր Ասիոյ ափանց մօտ են նաև Լեսպոս, Շիօկամ Սաբրզ, Ռոսոս և Կիպ-

րոս կամ Գրպրզ, որոնք աւելի ասիական մասին կը վերաբերին կամ թէ Եւրոպիոյ Տանկաստանի:

**ԼԵՐԻՆԸ.** — Եւրոպիոյ Տանկաստանի մէջ երեք գլխաւոր լեռանց զօտի կայ՝ և են Արևմտեան կամ Հելլենական զօտի. Պալքանայ կամ Հէմլիսի զօտի և Արևելեան Կարպատեանք: (\*)

§ 2<sup>o</sup> — Հաղորդակցութեան միջոցք.

**Շուվք, ծոցք, և Գեղուցք.** — Տանկաստանը շրջապատող ծովերն են՝ Ադրիական և Յոնիական ծով՝ Տանկաստանի և Իտալիոյ մէջտեղ. Արշիպեղագոս՝ Թեսալիոյ և Անատոլիոյ մէջտեղ. Մարմարա ծովը Թրակիոյ և Անատոլիոյ մէջտեղ. Սև ծով՝ Եւրոպիոյ Տանկաստանի և Կովկասու մէջտեղ:

Տրին, Ավոնա և Արդա ծոցերը՝ Ալպանիոյ արևմտեան կողմը. Օդրանդօ Գեղուցը՝ Յոնիական և Ադրիական ծովերը մէկմէկու միացնելով. Գորժուլի անցը՝ Գորժու կղզոյն և Ալպանիոյ մէջտեղ. Վլօլօյի ծոցը՝ Թեսալիոյ հարաւային արևելեան կողմը. Սէլանիկի, Քասսանդրոյի, Մոնդէ-Սանդօյի, Քոնդէսայի և Սարոսի ծոցերը՝ Ռումէլիոյ հարաւային կողմը. Չանաբ-Քալէսիլի Գեղուցը՝ Արշիպեղագոսը Մարմարա ծովուն միացնելով. և Վուսիորոս կամ ջրանց Կոստանդնուպօլսոյ, որ Մարմարան Սև ծովու կը միացնէ. Պուրպալի ծոցն ալ Ռումէլիի հիւսիսային-արևելեան կողմն է Սև ծովու վրայ:

**ԳԵՍԸ.** — Եւրոպիոյ Տանկաստանի գետերը յերիս խումբս բաժնուած են՝ այսինքն.

1<sup>o</sup>. Ադրիական և Յոնիական ծովերը Թափող գետերը այսինքն՝ արևմտակողմանք:

(1) Օսմանեան Պետութեան վրայ մինչև հիմա գրուած աշխարհացոյց տախտակաց նշանաւորները H. Kiepert և Carl Graf Դերին փորագրեալ տախտակքն են որոնք անպատճառ մեր ընթերցողը պէտք են աչքէ անցնել. քաղաքաց զիք վրայ որոշ տեղեկութիւն ստանալու համար:

2<sup>0</sup>. Հարաւակողմանք, այսինքն Արշիպեղագոս և Մարմարա Սափող գետերը, որոնց մէջ նշանաւոր է Վարսուր և Մարիցա (հինն Հէպրը):

3<sup>0</sup>. Արևելակողմանք՝ Սև ծով Սափող գետերը, որոնց մէջ գլխաւորն է Դամուր կամ Դունա գետը:

Ամենուն ծանօթ է թէ որքան անուանի է այս գետը վաճառականութեան շնորհած առաւելութեամբը, և թէ ինչ գործունէութիւն կը տիրէ իր գլխաւոր նաւահանգստացը մէջ, ինչպէս Կալաց և Պրաիլա:

Սակայն դժբաղդարար այս գետոյն բերանը միշտ տղմով և սկով կը լեցուի և անդադար աշխատանաց պէտք է զիմել՝ նաւարկութիւնը չխափանելու համար:

Դանուբայ երեք բերաններէն ամենէն նշանաւորը Քիլիաինն է Մորտավիոյ և Տաճկաստանի սահմանագլխոց վրայ. սակայն նաւարկութիւնը դժուարին է, այս պատճառաւ առաջարկութիւն կայ հոն ջրանցք մը բանալու, որ Դանուբայ իբրև բերան ծառայէ:

Ամենէն հարաւային ճիւղը, այսինքն Ս. Գեորգը, որ Տաճկաստանի սահմանին վրայ կը վերջանայ, լի է աւազակութեամբ, որոնց դէմն առնել գրեթէ անկարելի է:

Միջին բերանը (Սուլիմա), նոյնպէս Տաճկաստանի սահմանին վրայ, թէպէտև ամենէն պզտիկն է՝ սակայն շողանաւները այն ճամբով կ'երթանկեն, և այս ճիւղին վրայ աւելի դիւրին է պէտք եղած Սուրբերը կանգնել:

1856 տարւոյն՝ Բարիզի դաշնադրութեան մէկ յօդուածը ի գործ դնելու համար, Եւրոպական յանձնարարական ժողով մը հաստատուած է ի Կալաց. և իր վրան առած է Դանուբայ նաւարկութեան միջոցը լաւացնելը:

Աշխատանաց և գործոցը ծախքը գոցելու համար Սուլիմայի բերանը նաւարկութեան իրաւունք մը դրած է, որ տարուէ տարի մէկ միլիոն ֆրանգէն աւելի կը բերէ:

Ստորին Դանուբայ նաւարկութեան շարժմունքը հիմա, միայն ելլց համար 3500 նաւ է 600,000 տակառաչափով:

Դանուբը 2800 հազարամէտր երկայնք ունի. բայց Պէլլրատէն սկսեալ մինչև Սև ծով միայն 1134 հազարամէտր է:

Գլխաւոր նաւահանգիստքն են Պէլլրաս, Վիսին, Նիֆօթոլի, Ռուսնուգ, Սիլիստրիա, Խպրաիլա, Կալաց և Սուլիմա:

Դանուբը Նոյեմբերէն մինչև Մարտ աննաւարկելի է, ուստի նոյն ամիսներուն Վիլննա և միջին Եւրոպա գացող ապրանք և ճանապարհորդք Դրիէպի ճամբան կը բռնեն:

Դանուբայ գետակիցքը բազմաթիւ են և գլխաւորներն են՝ Սաւա, Մորաւա, Ալուդա. Տուսլովիցա, Սէրէք և Բուրք:

**Լիճք.** — Գլխաւոր լճերն են՝ Օլսիսա. Ալպանիոյ և Մակեդոնիոյ մէջտեղ. Շֆոսրայի լիճը. Եանիմա լիճ, Ալպանիոյ հարաւային-արևելեան կողմը. Բրէզպա հելլենական գոտոյն մօտ, և Ռազլէն Դանուբայ բերաններուն մօտ. ևն:

**Ցամաքային ուղղիւք.** — Ցամաքային ճամբաները շատ գէշ են և շատ անզամ հազիւ յորդուած են շաւիղները, և փոխանցութիւնը շատ դանդաղութեամբ և դժուարութեամբ կը կատարուին ձիու և զրաստի օգնութեամբ: Ամենէն նշանաւոր ճամբան այն է որ Պէլլրատը Կոստանդնուպօլսոյ կը միացնէ Էտիրնէյէն անցնելով: Սակայն առևտրական փոխանցութեանց բուն գործունէութիւնը ծովու և Դանուբայ միջոցով կ'ըլայ:

Ցամաքային ճամբաներու պակասութիւնը զգալի է և արուեստից և ներքին առևտրոյ յետամնաց ըլլալուն գլխաւոր պատճառն է:

Պէտք են խոստովանիլ թէ Տաճկաստանը Եւրոպիոյ ամենէն բերրի և ամենէն հարուստ և հանքաւոր երկիրներէն մէկն է ի բնէ սակայն եթէ Եւրոպական որևիցէ տէրութեանց հետ բաղդատներ, կը տեսնենք թէ միշտ վերջինը կը մնայ:

Վաճառական մը, թէև ուզէ ներքին այլևայլ բաղաբաց հետ առևտուր ընել, և ապահով շահ մը գտնայ այն բաղաբաց ապրանքն բերել տալով. սակայն կրնանք ըսել թէ ձեռք չզարներ այն գործին: Այնքան անկանոնութիւններ, դժուարութիւններ և ուշամնացութիւն կը գտնայ. այնքան անբաւ ծախքեր ընելու կ'ստիպուի որ, կը հարկադրուի այն ներքին առևտուրը

Յուզու և միեւնոյն ապրանքը օտար երկիրներէ բերել տալու և իր այսինչ առ հարիւր վաստակովը բաւականաաւու: Եւ իրաւցընէ աւելի զիրին է Մարտիկայէ, Վիէնայէ և Ռուսաստանէ որկիցէ ապրանք բերել Կոստանդնուպօլիս, բան թէ մեր ներքին քանի մը քաղաքներէն:

Այս ետքի տարիներուս մէջ հետեւեալ ճամբաները տէրութիւնը բանալ տուաւ: Այսինքն՝

Արդայէ՛ Եանեա: — Մանասրէ՛ Սէլանիկ: — Սէլանիկէ՛ Սէրէս: — Ֆիլիպպէյէ՛ Էսիրնէ: — Իսլիմեայէ՛ Պուրղազ: — Ռուսնուզէ՛ Թըրնօվա: — Պիէլայէ՛ Վիխեբան: — Թըրնօվայէ՛ Կապրօվա, ևն:

**Երկաթուղիք.** — Երկաթուղիք դեռ նոր մտած են Տանկաստան, և զժուած շաւիղքն ալ կարծ են. և սակայն երկաթուղի մը Տապուհան կանցնի Զըրնավոսայէն (Գանուբայ վրայ) մինչև Քէօսքէնէ (Սև ծովու վրայ) երթալով 66 հազարամէդր երկայնութեամբ. և ուրիշ զիծ մը Ռուսնուզէն Վառնա (նաև Գանուբէն Սև ծով) 220 հազարամէդր երկայն :

Նոր զիծ մը Կոստանդնուպօլիսը Էսիրնէյի Սէլանիկի և Պէլկրասի կը միացընէ. սակայն առ այժմ Մաքրի-Քէօյէն, Այի-Սղէճանօյէն, Քիւչիւբ-Չէֆմէնէյէն, Հաւամի-Տէրէսիյէն, Հասըմ Քէօյիւյէն, Չարայնայէն, Չօրլույէն ևն. անցնելով Էտիրնէ, Ֆիլիպպէ և Մարամպէյ կ'երթայ: Սէլանիկ միացած է Իսկիւսպի և Միդրօվիցայի ևն: Էսիրնէյէն երկրորդական զիծ մ'ալ դէպ ի Տէսէ Աղան կ'ուղչի, որն որ ծովու վրայ նաւահանգիստ է:

**Հեռագիր.** -- Եւրօպիոյ Տանկաստանի ցամաքային և ծովային հեռագիրքը ի միասին 1867 տարւոյն 6425,5 հազարամէդր էր. որոնց 6410 հազարամէդրը ցամաքային էին և 15,5ը ծովային: Սակայն այն տարիէն ի վեր հեռագրական զժերը աւելցան: Իշխանաց կղզիքը հաղորդակցութեան սկսան Կոստանդնուպօլսոյ հետ՝ Գարդալի ճամբով և Գ.ստըբէօյիւէն անցած գծին միջոցով: Արշիպեղագոսի մէջ քանի մը կղզիք ծովային հեռագրով մէկմէկու միացան: Կոստանդնուպօլիս ծովային նոր հեռագրական զժով մը միացած է Օտէսայի:

Իոլոր Օսմանեան պետութեան հեռագրաց վարչութիւնը տարուէ տարի 48,976 քէսէյի գումար մը կ'ընդունի (քէսէ մը 500 դահեկանաց կը հաւասարի):

**Նաւարկութիւն.** — Եւրոպիոյ Տանկաստանի գլխաւոր նաւահանգիստք:

Գանուբայ և Սև ծովու վրայ են. Իպրաիլա, Կալաց, Իսմաիլա, Սուլիմա, Քէօսքէնէ, Վառնա և Պուրղազ:

Մարմարայի վրայ՝ Կոստանդնուպօլիս, Ռօսօսոյ և Կէլիպօլս:

Արշիպեղագոսի և Միչերկրականի վրայ՝ Էնէզ կամ Էնոս, Քավալա, Օրճանօ, Սէլանիկ, Վօլօ Գանէա, Ռէդիմօ:

Ադրիականի վրայ կը գտնանք՝ Անդիվարի, Ալէսսիօ, Ավլօնա, Պուքրինդօ և Բեւիլէզա:

Նաւարկութիւնը երկու մաս կը բաժնուի. առաջինը հեռաւոր նաւարկութիւն և երկրորդը ծովեզերեայ նաւարկութիւն:

Արևելից այլևայլ նաւահանգստաց նաւարկութիւնը մասամբ մը օտարագրի նաւային ընկերութեանց ձեռքն է, որոնք արագապէս կը տանին, բիչ ծախքով և ապահովագրութեամբ, և ասոնց սուրհանդակ նաւերը կանոնաւոր և արագ երթևեկութիւն կ'ընեն և զտէրութիւնը և բնակիչքը կը զոհացընեն: Սակայն ծովեզերեայ և գետային նաւարկութիւնը մեծաւ մասամբ Օսմանեանց և հպատակաց ձեռքն է և բաւական շահ կը բերէ:

Տանկաստան երթևեկութիւն ընող նաւերու ընկերութեանց անուանքն են:

Մէսսօլըրի Մարիդիմ.

Գոմբաննի Մարաէյեէզ տը նավիկասիօն ա վարէօր, Մարք Ֆրէսսինէ Բէր է Ֆիս.

Լիոյտ Աուսդրիազօ.

Գոմբաննի էմիրսիէն Նըտիվիէ.

Պէօրնս էնտ Մգ. Իվէրս.

Պիպի էնտ Գօ.

Բարբայանի Պրօտըրս.

Գումրանեի Ռիւս տը նալիկասիօն ա վարէօր է տը Գօմէրս. Ֆէվաիտի Օամանիէ .

Ազիզիէ .

Լա Դրինարրիա. ևն .

Մովեզերեայ և մերձեկայ տեղերու նաւարկութեան համար նշանենը Շիրքէթի Խայրիէ ընկերութիւնը և Ազիզիէ ընկերութիւնը, որոնք Վոսփորոսի գիւղօրէից, Կղզեաց և Մարմարայի վրայ մերձեկայ գիւղերու երթևեկութիւն կ'ընեն :

Կան նաև նաւաձիգ շոգենաւուց ընկերութիւններ :

Նաւարկութեան հետեւալ պատկերացոյցը մի միայն պաշտօնական մուրհակն է (document officiel) որ Օամանեան նաւահանգստաց առևտրական գործողութեանց վրայ ժողուած ըլլայ : Որովհետև Օամանեան պետութիւնը, Տանկաստանի օտարաց հետ ունեցած ընդհանուր առևտրոյն ցանկն չհրատարակեր : Ուստի մեր պատկերացոյցը եօթը տարուան շրջան մը կը բովանդակէ 1859 ևն 1866 : Նաւարկութեան ընդհանուր շարժմունքը որ 1859 ին 138,916 նաւ կը հաշուէր, 8,530,504 տակաւաւալով, բարձրացաւ 1866 ին 177,987 նաւուց 11,639,864 տակաւաւալի կշռելով : Ուրեմն Տանկաստանի նաւահանգստաց առևտրոյն մէջ զգալի առաւելութիւն մը կը յայտնուի այն իրի ժամանակուան համեմատ, այսինքն՝ 39,000 նաւ աւելի կ'ելլայ 1859 ին նաւարկութեան շարժման վրայ, 3,000,000 տակաւաւալով :

**ՕՍՄԱՆԵԱՆ ՆԱԻԱԶԱՆԳՄԱՍԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱԲՌՈՒԿ**

1859ԷՆ ՄԻՆՁԵՒ 1866

Տ Ա Ր Ի	ԱՐԵՎԱՍՏԱՆՈՐ	ՏԱԿԱՐԱՆԱՎ	ՇՈՒՔՆԱԻ	ՏԱԿԱՐԱՆԱՎ	Գ Ո Ւ Մ Մ Ը	
					ՆԱԻ	ՏԱԿԱՐԱՆԱՎ
1859 — 1860	436,883	7,655,183	2,033	875,521	138,916	8,530,504
1860 — 1861	439,352	7,885,810	2,212	990,287	441,564	8,846,093
1861 — 1862	433,673	7,735,293	1,916	867,650	435,591	8,602,943
1862 — 1863	457,723	7,519,626	2,985	991,913	460,708	8,511,539
1863 — 1864	473,400	8,147,554	5,581	2,274,502	478,981	10,422,056
1864 — 1865	478,058	9,424,609	7,408	3,232,732	485,466	12,677,391
1865 — 1866	471,544	8,615,710	6,443	5,024,154	477,987	11,639,864

Եւ այս նաւուց թուոյն մէջէն 1866 տարւոյն, միայն կոստանդուպօլիս մանող նաւուց թիւը 35,936 նաւ էր, 3,865,966 տակաւաւալով :

# Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն Ա Ս Ի Ո Յ



Լայնուժեան աստիճան Սինոպի մօտ. 42<sup>0</sup> հիւսիսային  
 » » Եփրատայ բերանը 30<sup>0</sup> »  
 Երկայնուժեան » Չանաքքալէյի բերանը 24<sup>0</sup> արեւելեան  
 » » Պարսկային ծոց 46<sup>0</sup> »  
 Մակերևոյթ (Կիպրոս կղզւոյն հետ). 1,728,000 □ հզմղր.  
 Բնակիչ 16,000,000 անձ:  
 Խտուժիւն մարդկան առ մի □ հզմղր. 17 անձ :

**Սահմանք.** — Հիւսիսէն Սև ծով. — Հարաւէն Պարսկա-  
 յին ծոց և Արապիստան. — Արեւելքէն Պարսկաստան և Վրաս-  
 տան. — Արևմտքէն Մարմարա ծովը. — Արշիպելագոս և  
 Միջերկրական ծով:

**Ծովք.** — Հիւսիսակողմը Սև ծով. Հարաւակողմը Պարսկա-  
 յին ծոց. Արևմտակողմը Միջերկրական և Մարմարա:

		Բարձուժիւն													
<b>Լեռիքք.</b> — Տօրոս, Եփրատայ մօտ.		մէղր	3000												
Ողիմպոս (Քէշիշ տաղը) Պրուսայի մօտ		»	2700												
Խոս (Էտրէմիտի ծոցին մէջ)		»	1700												
Էրֆիշ տաղ		»	4000												
Լիբանան	<table border="0"> <tr> <td> <table border="0"> <tr> <td>Գարմէլ</td> <td rowspan="3">} գրեթէ</td> <td rowspan="3">»</td> <td rowspan="3">3-4000</td> </tr> <tr> <td>Էպալ</td> </tr> <tr> <td>Կերէզիմ</td> </tr> </table> </td> <td></td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>Մասիս կամ Արարատ (Երևանի մօտ)</td> <td></td> <td>»</td> <td>5000</td> </tr> </table>	<table border="0"> <tr> <td>Գարմէլ</td> <td rowspan="3">} գրեթէ</td> <td rowspan="3">»</td> <td rowspan="3">3-4000</td> </tr> <tr> <td>Էպալ</td> </tr> <tr> <td>Կերէզիմ</td> </tr> </table>	Գարմէլ	} գրեթէ	»	3-4000	Էպալ	Կերէզիմ				Մասիս կամ Արարատ (Երևանի մօտ)		»	5000
<table border="0"> <tr> <td>Գարմէլ</td> <td rowspan="3">} գրեթէ</td> <td rowspan="3">»</td> <td rowspan="3">3-4000</td> </tr> <tr> <td>Էպալ</td> </tr> <tr> <td>Կերէզիմ</td> </tr> </table>	Գարմէլ	} գրեթէ	»				3-4000	Էպալ	Կերէզիմ						
Գարմէլ	} գրեթէ							»	3-4000						
Էպալ															
Կերէզիմ															
Մասիս կամ Արարատ (Երևանի մօտ)		»	5000												

**Պետք.** — Դըզըլ ըրմաք (հինն Ալիս). — Եէշիլ ըրմաք  
 (Իրիս). Սաքարիա (Սանկարիուս). Պէօյլեք Մէնտէրէ (Մէան-  
 տըք). Քիւչիւք Մէնտէրէ (Քախտըք). Պաքըր չայը (Քախրուս).

Ետիք չայը (Հէրմուս). Սիհուն չայը (Սարուս). Ճիհուն (Քիրա-  
 մուս). Աազի (Օրօնդէս). Եփրատ. Տէնէն (Տիգրիս). Էլ-Շէրիա  
 (Յորդանան) :

Սակայն միայն Եփրատ, Տէնէն, Էլ-Շէրիա, Պէօյլեք Մէն-  
 տէրէ և Սաքարիա նաւարկելի են: — Սաքարիան բոլորովին  
 նաւարկելի ընելու և Ատափազար, Կէյլէ, Լէֆթէ և բանի մը  
 ուրիշ բազարները և զիւղաքաղաքները վաճառաշահ ընելու  
 և նաւարկուժեան 200 հազարամէղր երկայնուժեամբ միջոց մը  
 աւելցնելու խնդիրը արդէն իսկ լուծուած է և ի գործ դրուելը  
 կը մնայ: Այսպիսով Ասիոյ Տանկաստանի բերքը և ածուխքը և  
 մետաղքը մեծաւ դիւրութեամբ և ցած գնով պիտի կրնան իջ-  
 նալ և երկրին արուեստից ծաղկմանը մեծապէս ձեռնտու պի-  
 տի ըլլայ այս ջրանցքը:

**Լիքք.** — Թուզլա կէօլիւ. Վան կէօլիւ. Ասֆալիդ և Իգ-  
 նիք կէօլիւ :

<b>Երկարուղիք.</b> — Զմիւռնիայէ Այսըն	հզմղ. 135
Զմիւռնիայէ Գասապա	» 98
Իւսկիտարէ (Կ.Պօլիս) Իզնիմիտ	» 93
	հազարամէղր 326

Նոր գիծ մ'ալ բացուեցաւ Իզմիրէ մինչև Ալաշէհիր:

**Ելեհրական հեռագիր.** — 7360 հզմղր. երկայնք ունի:

**Նաւահանգիստք.** — Սև ծովու վրայ Սինօպ, Օրտու, Ու-  
 նիա, Ամասրա, Ինէպօլու, Էրէկլի, Քիրասուն. — Մարմարայի  
 վրայ Պանտրմա, Կէմէլիք, Մուտանիա. Չանաքքալէյի նեղուցին  
 վրայ Գալիի սուլթանիէ. Միջերկրականի վրայ Գարա աղան:

**Ծովեզերք եւ ցամառային սահմանագիծք.** — Ծո-  
 վեզերք 5097 հազարամէղր. ցամառային սահմանագիծք 3645  
 հազարամէղր :

§ 3<sup>o</sup> — Առեւտուր եւ բերք. վաճառաբերութիւնք  
եւ վաճառահանութիւնք. արուեստ  
Օսմանեան պետութեան.

**Առեւտուր.** — Օսմանեան պետութեան առուտուրը շատ  
յետամնաց է, երբ մտածենք թէ ինչ կրնար ըլլալ այն նպաստաւոր  
գործիք մէջ: Բուն արուեստագիտութեան և մեծ վաճառա-  
կանութեան ոգին մտած չէ Տաճկաստան: Բայց թէ և առևտրոյ  
մէջ մեծ գործունէութիւն չտիրէր, և ձակայն կանոնադրութիւն-  
ներով խափանուած չէ: Տէրութիւնը օտարաց այնպիսի առա-  
ւելութիւններ շնորհած է որ Գաղղիոյ և Անգղիոյ մէջ տեղի տեղի  
ունեցող դաշնադրութենէն առաջ, և ոչ մէկ տէրութեան մէջ ըս-  
ուած էր: Զարմացմամբ կը տեսնենք թէ՛ Օսմանեան Սուլթանքե-  
րէք դարէ ի վեր գերազանցեր են արդի ամենայնհոգն տնտե-  
սագետքը, տնտեսագիտական հայեցողութեանց կատարման  
մէջ: Աւելն ազգէ առաջ իրենք հրամայեցին առևտրոյ բացար-  
ձակ ազատութիւնը:

Վաճառահանութեան և վաճառաբերութեան թիւերուն պաշ-  
տօնական մտերհակները կը պակսին մեզի:

Արտահանութեանց <sup>7</sup>/<sub>8</sub> բը նախնական նիւթեր են այսինքն  
բուրդ, մետաքս, բամբակ, այծու մազ (Սիֆտիք), կաշի, Դա-  
նուբայ ջրէղջին արջառը, ոչխար, Պուլղարստանի ցորեն, իւղ,  
Զմիւռնիոյ թուզ, նուշ, տեսակ տեսակ ծխախոտ, զխտոր, խոզ-  
կաղին, կնճիթ, ափիոն, Ծէրէպէնդին, բաշ, խաղող, կապերտ,  
ալամար, բժոժ (զօզա), արմտիք, կնճիթի իւղ, մեղրամոմ,  
վարդի իւղ, սպունգ ևն: Այս տէրութեան փոխանցութեանց մեծ  
մասը Արտսիոյ, Պուխարայի և Պարսկաստանի ապրանքն են որ  
Եւրոպա կ'անցնին:

Տաճկաստան կ'ընդունի Եւրոպացւոցմէ նկարէն կտաւ, կեր-  
պաս, դիպակիք, զլխարկ, մապաւէն, փերեզակաց ապրանք,  
չուխա, բազիմիր, ասուեղէն, կօշիկ, ճերմակեղէն, կահ կարա-  
սիք, տեսակ տեսակ վառարաններ (սօպա), դանակեղէն. երկա-

թեղէն, զէնք, շաքար, խահուէ, բրինձ, կարագ, պանիր, չորքո-  
լած, անօթեղէն, ապակեղէն, ակնեղէն, պարսիմած, բամբակե-  
ղէն, ձէթ, արդար իւղ (սա-եալը), աղկեր, խափիար, կազ,  
կնճրակի իւղ, ցորեն և ալիւր. լուսնափայտ (Ֆոսֆոր), Թղթե-  
ղէն, լամեղէն, թանաք, ասուեայ դերձան, բամբակեայ դերձան,  
մալուխ, ժամացոյց, կառք, ձի, մետաքսեղէն, ծծումբ, կանճիփէ  
և վշէ հիւսուածք, ճարպ, ճրագու, չոր պտուղք, հովանոց, զիրք,  
որդան կարմիր, պղինձ, անագ և ամեն տեսակ մետաղ, հան-  
քածուխ, գարեջուր, տեսակ տեսակ զինի, և ըմպելիք. զգես-  
տեղէն, վառօղ ևն:

Եւրոպական տէրութեանց Տաճկաստանի հետ ունեցած առև-  
տրական շարժումները վեշտասանբերորդ դարէն կ'սկսի: Գաղղիա  
այս առևտրոյն զուլսն էր շատ ժամանակ. և իր դրօշակովը  
Տաճկաստան կուզային ուրիշ ազգաց նաւերը:

Այսօրուան օրս առաջնութիւնը Անգղիացւոց ձեռքն է, և կը  
դրկեն Տաճկաստանի՝ բամբակէ հիւսուածք, դերձան, հանքա-  
ծաւս, բանուած երկամ և պղինձ և ամեն տեսակ մետաղ: ա-  
նագ, վշէ հիւսուածք, պղպեղ, որդան կարմիր, գարեջուր,  
զգեստեղէն, ասուեղէն, դանակեղէն, երկամեղէն, երկամեայ  
անկողինք, գամեղէն, վառօղ, ձի, կօշիկ, պարսիմաս, պանիր,  
կապերտ բամբակեղէն, Թուղթ այսինքն 5,866,000 սղ. ոսկւոյ  
(1868) որոնց <sup>2</sup>/<sub>3</sub> բը բամբակեայ լամեղէն և զգեստեղէն և  
մանուած ասր էին:

Իսկ փոխադարձաբար Մեծն Բրիտանիա կ'ընդունի Տաճ-  
կաստանէ բամբակ, արմտիք, իւղալից հնտեր, այծու մազ, տո-  
րոն, թուզ, խաղող, ափիոն, ալամար, ցորեն. 4,137,000 անգ.  
ոսկւոյ: Յարենը և բամբակը իւրաքանչիւրը 1,000,000 ոսկւոյ  
ըլլալով (1868 ին): Տարուէ տարի գրեթէ 3000 անգղիացի նաւ  
կը մտնէ Կոստանդնուպօլսոյ նաւահանգստին մէջ:

Յետոյ կուզայ Գաղղիա. — Տաճկաստան կը դրկէ Գաղղիոյ՝  
մետաքս, մետաքսէ հիւսուածք, բուրդ, բամբակ, իւղալից հըն-  
տեր, չամիչ, զինի (խիտ քիչ), կապերտ, ձէթ և աղած միս  
ևն: — Փոխադարձաբար Գաղղիայէն կ'ընդունի, բամբակէ հիւս-

ուածք, մետաքսեղէն, ասուեղէն, ժապաւէն, փերեզովաց ապրանք, պածուճանաց նիւթեր, լաթեղէն, զգեստեղէն, կանանց հանդերձանք, կօշիկք, ձեռնոց, ասղնեզործք, զոհարեղէն, ժամացոյց, կապերտ, ճերմակեղէն, անուշահոտուժիւնք, օճառ հոտաւէտ, Գոլոնիոյ ջուր, չորբլաթ, խահուէ, շաքար, մում, դիպակք, նորեւրուկ ապրանք, Բարիզու ապրանք, բուսանըրի, պարսիմատ, զէնք, Թղթեղէն, զիրք, ազնիւ գինիներ, ըմպելիք, օշի, պատրաստուած մորթ, գետնախնձոր, գալթականաց նըպար, յախճապակ, ապակեղէն, հայելի, կահ կարասիք, անկուածք, որսի կապար, զամեղէն, թանաք, գլխարկ, կաշի, չուխա, քաղիմիր, զառնաւոխտ, թաւիշ, ոսկեղէն, անօթեղէն, դանակեղէն, խաղալիք, ներկ, կառք, և կառեղէն ևն: Գաղղիոյ զրկած ապրանաց արժէքը 135 միլիոն ֆրանկաց և ընդունած ապրանքը 65 միլիոնի կ'ելլեն:

Տանկաստան կը զրկէ Իտալիոյ ցորեն (31 1/2 միլիոն ֆր.) արմտիք, զուռատու նիւթեր, տորոն, աղտոր, հնտեղէն, ասուեայ բամբակ (խիստ շատ), բուրդ (շատ) բաշ և մորթ, բժշկական նիւթեր, ծխախոտոյ տերեւներ, անուշադր, մեղրամում, օճառ, հասնար, ձի, ջորի, էշ, ոչխար, այծ ևն. 38,660,000 ֆրանկաց(1863 ին):

Եւ փոխադարձաբար Իտալիայէն կ'ընդունի բրինձ կամ ուրզոնէ (7 միլիոն ֆր.) արմտիք, ներկարարութեան և կաշեզործութեան նիւթեր, հնտեղէն, տեսակ տեսակ պտուղ, ձէթ, մետաքսէ հիւսուածք, անզուտ և զուտ ծծումբ, կանեփեայ և վշեայ հիւսուածք, ամեն տեսակ ճարպ, ևն. 12,540,000 ֆր.(1868 ին):

Բանուկ առևտուր ունի նաև Աւստրիոյ (և շատ մորթ կը զրկէ Ի Դրիէսդ) և Յունաստանի, Ռուսաստանի և Պելճիոյ հետ:

§ 4° — Եւրոպիոյ և Ասիոյ Տանկաստանի այլեւայլ երկիրներուն առևտրոյն և արուեստից յիշայ հաւմտոս տեղեկութիւնք.

**Շֆոսրա.** — 1863 մինչ 1867 առևտրական շարժումներ. Երոտրայի վաճառատեղին Աւստրիոյ ամենէն բանուկ տեղն

է, և այս գաւառս Ադրիականի ափանց վրայ կ'ընդլայնի. Երոտրայի վաճառարեբրութիւնք են՝ զլիաւորապէս բամբակէ հիւսուածք, մետաքսեղէն, ասուեղէն, երկաթեղէն, մետաղք (պողպատ, պղինձ), արմտիք, զաղթականաց նպար, աղ, աղկեր, ըմպելիք, եզիպտացորեն, ցորեն, կտաւ, օճառ և ապրուստի վերարեբեալ նիւթեր: Երկրին բերքն են արջառ և փայտ՝ որոնց արտահանութիւնն արգիլուած է, բուրդ, մորթ, մեղրամում, մետաքս ձէթ և գինի:

Անաւասիկ 1863 է մինչև 1866 Երոտրա տեղի ունեցող փոխանցութեանց արժէքը:

Վաճառարեբրութիւնք.	—	Վաճառահանութիւնք.	—	Գումար
1863	— ֆր. 4,927,000	ֆր. 4,128,000	ֆր. 9,055,000	
1864	— » 4,734,000	» 2,546,000	» 7,280,000	
1865	— » 5,951,000	» 2,006,000	» 7,257,000	
1866	— » 6,199,000	» 1,984,000	» 8,183,000	

1867 Տարւոյն առևտուր

Երոտրայի 1867 տարւոյն առևտրական շարժումն հետեւեալ թուոց մէջ կը բովանդակուի այսինքն

Վաճառարեբրութիւնք	ֆրանգ	5,418,205
Վաճառահանութիւնք	»	2,157,577
Գումար	»	7,575,782

Հերցէկովին. Առևտուր. —

Այս երկրին բնակիչքը ցիւր ու ցան են և արուեստն ալ զրեթէ աննշան է: Անսանոց դարձանը՝ որ երկրին զլիաւոր ապրուստը և եկամտուն է, միւնչոյն վիճակին մէջ է, ինչ որ էր առաջին դարերուն:

1857 տարիէն ի վեր, որ տարւոյն բարձրագոյն դուռը հարկադրուեցաւ Հերցէկովինի մէջ խումբ մը զինուորաց պահելու, Գարատաղին զնացքին վարմունքին պատճառաւ, վաճառարեբրութեանց արժէքը կը գերազանցէ արտահանութեանց արժէքը:

1866 ին երկուքն ի միասին գրեթէ 6 միլիոն ֆռանգաց հաւան, որոնց 3 1/2 միլիոնը մտից էին և 2,340,000ը էլից :

Իսկ 1867 ին արտահանութիւնը և վաճառարբերութիւնը ի միասին 7,986,301 ֆռանգաց էլած էին. այսինքն՝

Վաճառարբերութիւնը	ֆռանգ	4,650,656
Վաճառահանութիւնը	»	3,335 645
	Գումար	» 7,986 301
1866 զուճարն	»	5,835,595
Առաւելութիւն ֆռանգաց		2,150,706

**Մակեդոնիա.** Սեչանիկ. — Առևտուր 1864—1867 : —

Մակեդոնիոյ զլխաւոր նաւահանգիստը Սեչանիկ է, որուն օտարաց հետ ունեցած փոխանցութիւնըը հետեւեալ կերպով կը դասին :

	Վաճառարբերութիւնը. — Վաճառահանութիւնը	
1864—1865	ֆռ. 20,158,000	ֆռ. 27,371,000
1865—1866	» 18,771,000	» 24,567,000
1866—1867	» 22,891,570	» 29,779,000
1867—1868	» 20,816,876	» 45,125,030

1866 առտորոյն զուճարն է	ֆռանգ	52,670,570
1867 » »	»	65,941,906
Առաւելութիւն ֆռանգաց		13,271,336

Դուրս զրկուած ապրանաց արժէքը որ 1866 տարւոյն 29,779,000 ֆռանգաց էր, 1867 ին 45,125,030 ֆռանգաց էլած էր: Առաւելութիւնն 15,346,000 ֆռանգաց է. այս նշանաւոր անմունքը նախ և առաջ արմտեաց արտահանութեան նորացոյց զարգացումէն և յետոյ բամբակի արտահանութեան անօժմէն առաջ կուգայ:

Մինչդեռ 1867 տարւոյն սովը Եւրոպիոյ զլխաւոր երկիրներուն, Ալճէրիի և արևմտեան Ափրիկէի վրայ սաստկապէս կը ճնշէր, ընդհակառակն Մակեդոնիա և շրջակայքը, արտաքոյ

կարգի կուծք մը ունեցան և կարող ևս եղան Եւրոպիոյ վաճառատեղեաց մէկ մասին ցորեն, գարի և վարսակ հայթայթելու:

Ահս այն պատճառաւ Սեչանիկի նաւահանգիստը 1867 ին 3,510,000 քիլէ ցորեն հանեց 79,900,000 դահեկանաց և 60 դահեկան 28 փարս միջին զնով (ֆռ. 13,80):

1867 ին Սեչանիկէ էլլող 3,510,000 քիլէ արմտեաց մեծ մասը Գաղղիա և Ալճէրի գնաց (2,001,900 քիլէ կամ 741,090 հարիւրալիոր). Անգղիան ընդունեցաւ (642,840 քիլէ) և Իտալիա (230,600 քիլէ) ևն: Աւստրիան որ դիւրութեամբ Դանուբայ ջրշեղջէն ընդունեցաւ իր արմտիքը և Սպանիա որ շատ ուշ մտածեց նաւահանգստացը մէջ արմտիք մտցնելը, խիստ քիչ արմտիք ընդունեցան Սեչանիկէ:

Արմտիքէ ետքը արտահանութեան մէջ կուգայ բամբակը: — 1867 ին 72,009 հակ զրկուեցաւ 21,600,000 ֆռանգաց, որն որ 1866 ին 26,000 հակ էր 12,900,000 ֆռանգով:

Սեչանիկի բամբակը ընդունողներն են զլխաւորապէս Գաղղիա յետոյ կուգան Աւստրիա, Իտալիա և Անգղիա:

Արմտիքէ և բամբակէ զատ Սեչանիկի զլխաւոր արտահանութիւնըն են:

Մետաքս 217 հակ, 1,861,443 ֆռանգաց, որոնք գրեթէ ամենն ալ Գաղղիա զրկուեցան:

Բժոժը 1,536 հակ էր 1867 ին, 1,446,560, ֆռանգաց:

Մակեդոնիոյ բրդերը առջի պատիւնին կորսնցուցին Եւրոպիոյ վաճառատեղեաց վրայ, որովհետև Եւրոպացիք և մանաւանդ Անգղիացիք Աւստրալիայէն կ'ընդունին բուրդը, որ Թէ բանակութեամբ և Թէ տեսակաւ կը գերազանցէ ամեն երկրի բրդերը: — 1867 ին միայն 3200 հակ զրկուեցաւ (620,800 ֆռ.) մինչդեռ 1866 ին 4,400 հակ էր 838,000 ֆռանգաց:

Շերասի սերմն արտահանութեանց զուճարին մէջ միայն 95,700 ֆռ. կը բռնէ. որն որ 1866 ի Թուրքի կէսն անգամ չէ: Գանի մը տարիէ ի վեր շերասնեբուն մէջ մտած հիւանդութիւնն կը յայտնէ մեզի այս նուազման պատճառը և շերամարոյժք ստիպուած են օտար երկիրներ դիմելու՝ որպէս զի առողջ հըն-

տեր գտնեն: Եւ բոլորովին յոյսերնին կտրած են Մակեդոնիոյ, Ասորոց և Կովկասու հետերէն:

Մորթերու արտահանութեան մէջ առաւելութիւն մը կը տեսնուի 1867 տարւոյն. Իտալիա, Աւստրիա և Գաղղիա 2350 հակ գնեցին 671,200 ֆրանկաց, և 1866 ին վրայ հակ գլուխ 6—7 ֆրանկ միջին գնոյ առաւելութեամբ մը:

Արտահանութեան միւս ապրանքն են՝ տղրուկ, ծխախոտ, ապա, այլևայլ հունտը ևն:

**Ռուսիի.** — Գլխաւոր վաճառատեղեաց առևտուրը. Վառնա, Կէլիպօլու, Էսիրնէ, Ֆիլիպպի, Էսիրնէյի բուրդը, Բժոժ, Գըզանըլի վաղի իւղը:

Օսմանեան պետութեան այս ընդարձակ գաւառին առևտրական մեծամեծ կեդրոնն են Էտիրնէ և Ֆիլիպպէ ներքին կողմերը: Յետոյ կուգան իր նաւահանգիստըր Վառնա Սև ծովու վրայ. Ռոտտոսո և Կէլիպօլու Մարմարա ծովուն վրայ. Էնէզ համանուն ծոցին վրայ որ զինքը Էտիրնէի միացնող զետի մը բերանը գտնուելով՝ այն քաղքին նաւահանգիստը կրնայ սեպուել. վերջապէս Մարքի և Գավալա՝ Թրակիոյ և Մակեդոնիոյ ծովափանց վրայ:

1867 տարւոյն Վառնայի նաւահանգստին առևտրական և նաւային շարժումն:

Վառնայի նաւահանգստին առևտրական շարժումն հետեւեալն էր:

Վաճառարեւութիւնը	Ֆրանկ	19,595,000 + 19,883,544	Վառնայի նաւահանգստին առևտրական շարժումն
Վաճառահանութիւնը	»	21,031,000 + 3,245,700	
Գումար	»	40,626,000 + 23,129,244	
1866 ի գումարն	»	31,605,000 + 20,009,623	
Տրբրթ. ի նպատ. 1867 տարւոյ	»	9,024,000 + 3,419,621	

Կէլիպօլույի նաւահանգստին ընդհանուր առևտուրն  
1867 տարւոյն:

Վաճառարեւութիւնը	Ֆրանկ	634,569
Վաճառահանութիւնը	»	823,756
Գումար	»	1,458,505

**Էսիրնէ.** — 1864 տարւոյն Էտիրնէյի օտարաց հետ ունեցած փոխանցութեանց արժէքը 36 միլիոն դահեկանաց էր (գրեթէ 8 միլիոն ֆրանկ), որոնց 7 միլիոնը վաճառարեւութիւնը էին գլխաւորապէս գաղթականաց նպար, բամբակեայ դերձան և հիւսուածք, ասուեղէն ևն. և 28 1/2 միլիոնը արտահանութիւնը էին, բաղկացեալ մեծաւ մասամբ ի ցորնոյ, աղտոտ բրդէ (laine en suint) բժոժէ, մետաքսէ և վարդի իւղէ և վարդի ջրէ: Էտիրնէյի բուրդը՝ բոլոր Ռուսիի գաւառին ամենէն ազիւն բուրդն է, և մինչև հիմա շատ յարգ ունէր ի Մարսիլեա. սակայն այս յետին տարիներու մէջ խնդրողը պակասած են և դանդաղութիւն մը մտած է բրդոյ վաճառականութեան մէջ: Կերևայ թէ Գաղղիացիք Աւստրալիոյ բրդերը կը վերադասեն Ռուսիի բրդոյն, թէև նաւարկութեան և յԱնգլիոյ փոխաբերութեան (transit) ծախքն ալ ծանր ըլլայ:

Էտիրնէյի բրդոյ բերքն 1855ին 900,000 բաշ էր, 1866ին 1,200,000 և 1867ին 950,000. բայց այս նաւահանգստէն ելլող բանակութիւնը յաջորդաբար առաջին տարին 700,000, երկրորդ տարին 1 միլիոն և երրորդ տարին 650,000 բաշ էին: Միջին զինը որ 1865ին 11-12 դահեկան էր, 1866ին 12-13 դահեկանաց ելաւ. սակայն 1867ին 9-10ի իջաւ: 1870ին մինչև 8ի իջաւ: 1871ին ելաւ 11 1/2-12ի և 1872ին 11-12ի մէջտեղն էր:

1872 ին Մարսիլեա 50 բիլոն 180 ֆրանկաց ելաւ նրբաթելն (ֆիլնո), միջին զինը 150 ֆրանկ է:

Վաճառականը քաշ գլուխ 1 դահեկան՝ մաքրելու և արկղման (emballage) ծախք և մինչև Ռոտտոսո նամբու ծախք կը հաշ-

ուեն: Սակայն անկէջ զամ 3 0/0 կշոոյ կորուստ կայ (dèchet) մարքուէլէն ետքը և վաճառումը 10 0/0 սեաւ բուրդ խառնելու պայմանաւ կ'ըլլայ:

§ 5<sup>o</sup> — Էտիրնէյի գաւառին և քոյոյ բերքը և առեւտուրը .

Էտիրնէյի վիլայէթին աշխարհագրական և կլիմայական վիճակը եզականապէս ձեռնտու կ'ըլլան արջառոց դարմանին: Էտիրնէյի վիլայէթին հիւսիսակողմը լայնածաւալ լեռանցած մէջքով բարձրաբերձ լեռինք առատ եւ պարարտ արօտներ կ'ընծայեն ամառուան եղանակին: Հարաւակողմը ընդարձակ զաշտաւայրք են ուր խաշինք ձմեռուան եղանակին բարեխառն կլիմայ մը և ցրտոյն սաստկութեան դէմ ապաստաններ կը գտնեն: Ահա այս պատճառներու համար Էտիրնէյի արջառքը բազմաթիւ են:

Հետեւեալ պատկերացոյցը 1867ին վիլայէթին սանձագներուն մէջի ոչխարաց և այծերու թիւը և արժէքը կը ցուցնէ:

ՍԱՆՃԱԳՔ	ոչխարաց թիւը	40 դ <sup>6</sup> . հատը	այծերու թիւը	30 դ <sup>6</sup> . հատը
Էտիրնէ	1,210,000	48,400,000	200,000	6,000,000
Ֆիլիպպէ	1,429,000	56,800,000	215,000	6,450,000
Սիմնեա	1,022,000	40,880,000	205,000	6,150,000
Կէլիպօլու	540,000	21,600,000	98,000	2,940,000
Ռոտոսոօ	320,000	12,800,000	60,000	1,800,000
Գումար	4,521,000	180,480,000	778,000	23,340,000

Այս վերոյիշեալ թուոց մէջէն 36,000 մերինոս դարմանուած էին և Օսմանեան պետութեան ծախիւրը սնած:

**Բուրդ.** — Բրդոյ երկու գլխաւոր տեսակները երկրին մէջ են բըվըրճըք (զանգրամազ) և զարապաշ (սև գլուխ): Առաջինն աւելի յարգի է, կակուղ և միանգամայն զանգուր, ուժեղ և տա-

րածական և սանտրի և երկամեայ կամ փշեայ զգելու սանտրի յարմար է:

Երկրորդ տեսակը, Թեսալիոյ ոչխարաց բրդոյն կը նմանի. կարծր, քիչ դիւրակոր և կարճ է:

Բըվըրճըքը Գաղղիոյ մէջ մեծ յարգ ունի և Տանկաստանի ամեն բրդերէն վեր կը դասի և առաջին կարգը կը բռնէ մերինոսէն ետքը: Բըվըրճըքը հայժայթող գաւառաց մէջ նշանաւոր են Գամապաղ և Այտոս: Այս գաւառաց ոչխարներուն միսը շատ յարգ ունի ի Կոստանդնուպօլիս:

Բրդոյն <sup>1</sup>/<sub>3</sub> բը օտարաց կը դրկուի, մանաւանդ Մարսիլեա. մնացածը երկրին մէջ զանազան չուխաներ պատրաստելու կը զործածուի:

Կը հաշուի թէ 1867 ի արտահանութիւնն 940,000 բաշը չէր անցած: Ասոր պատճառն ալ Աւստրալիոյ բրդերուն մեծաւ քանակութեամբ Եւրոպա մտնալն է:

**Ֆիլիպպէ.** — Ռուսիայի միւս ներքին վաճառատեղոյն այսինքն Ֆիլիպպէյի առևտուրը շատ աւելի է քան թէ Էտիրնէյինը: Որովհետև 1864 ին Ֆիլիպպէյի առևտուրը (Տանկաստանի այլևայլ բաղաբաց հետ ըրած զործերն ի միասին) 21 <sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն ֆուանդաց կ'ելլէր, որ հետեւեալ կերպով կրնայ դասուիլ. այսինքն Անգղիա զրկած էր ապրանք 5,091,000 ֆուանդաց, Աւստրիա 2,817,000 ֆուանդաց և Գաղղիա 1,205,000 ֆուանդաց:

Իսկ Ֆիլիպպէյի արտահանութեանց մէջ Գաղղիա ամեն երկիրներէ աւելի ապրանք ընդունած էր, այսինքն 3,620,000 ֆու. յետոյ Անգղիա 2,105,000 և Աւստրիա միայն 583,000 ֆուանդաց:

Այս առևտուրը կազմող գլխաւոր ապրանքն էին.

1<sup>o</sup> Վ Ա Ճ Ա Ռ Ա Բ Բ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Բմբկէյ. կտաւ ֆու.	1,850,000		Հնդիկ կերպաս ֆու.	1,184,000
Չուխա	» 1,602,000		Մուշտակ	» 741,000

Քալիբրոզ	Ֆռ.	695,000	Բովինայր	Ֆռ.	232,000
Շարար	»	465,000	Խահուէ	»	232,000
Մանած բամբակ	»	462,000	Ապակեղէն	»	216,000
Լեղակ	»	460,000	Որդան կարմիր	»	150,000
Պղինձ	»	348,000	Զանազանք	»	1,270,000

20 ՎԱ Ճ Ա Ռ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Կակուղ ցորեն	Ֆռ.	2,726,000	Կարծր ցորեն	Ֆռ.	770,000
Զուխա	»	1,620,000	Ծխախոտ	»	600,000
Բրինձ	»	1,204,000	Կնճիթ	»	591,000
Ալիւր	»	900,000	Վարդի իւղ	»	443,000
Բամբակ	»	840,000	Մետաքս	»	438,000

Վարդի իւղ. — Վարդի իւղոյ շինութեան սկիզբն շատ հին է, և Սաքըզի կամ Շիրոյի վարդենին որ վարդի իւղոյ յատուկ է, յաշտոպէս կը ծլի ծաղկի Բըզանլըբի և շրջակայից հովտաց մէջ, զորոնք Պալքանաց հարաւային կողերէն իջնող բազմաթիւ գետակք կ'ոռոգեն:

Վարդենոյ մշակութեան պարագոյր գաւառն Դոնա-Պալքանայ հարաւային կողմը կ'իյնայ Ֆիլիպպէյէ եօթն ժամ հեռու, և կը բովանդակէ Ֆիլիպպէյի, Բըզանլըբի, Զըբբանի և Սլիմնիոյ վիճակաց մէկ մասը:

Բըզանլըբ պզտիկ քաղաք մ'է ուր 8000 Պուլղար 4000 Մահմետականք կը գտնուին, և Ֆիլիպպէյէն 16 ժամ դէպ ի հիւսիս կ'իյնայ և վարդի իւղոյ առւտրոյն և բերքին կեղդոն կըրնայ սեպտիլ:

Գարթիօ և ուրիշ քանի մը երկրորդական զիւղօրէք նաև կը պարագլին այս զիւրին և բաւական շահաւոր վաճառականութեան, բայց ոչ ինչպէս Բըզանլըբ: Ֆիլիպպէյի շրջակայքը շատ տեղուանք ջանացին Սաքըզի վարդը ընտանեցնել. սակայն դեռևս հողոյն կամ գէշ մշակութիւն պատճառու՝ մինչև հիմա արդիւնքն ոչինչ են: Միայն Տէյիլրմէն-Տէրէ մտած է վար-

դի մշակութիւնը. այս զիւղս Ֆիլիպպէյէն երկու ժամ միշոց հեռու է, Ռոտոր լերան ստորոտը. բայց բերքն աննշան է, որովհետև մշակութիւնն միայն մէկ մարդու ձեռքն է:

Երկու տեսակ վարդ կը մշակուի. մէկն վարդեղոյն (փէմպէ) և որ է հասարակ վարդն. միւսն ալ սպիտակ վարդ, որն որ քիչ քանակութեամբ կը խառնեն առաջնոյն, Թորեցման (distillation) համար: Եթէ սպիտակ վարդն առանձին մզուի շատ զօրաւոր իւղ կուտայ. սակայն հոտը միւսին պէս բնաց համոյ չգար:

Վարդենեաց քաղուը Մայիս ամսոյն 10-20 ին կակսի օղոյն բարեխառնութեան համեմատ, և զրեթէ երեք շաբաթ կը տևէ: Կանուխ առաւօտանց ցողալից ժողուած վարդերը, պէտք է նոյն օրը մզել, չէ թէ անոյշ հոտին մէկ մեծ մասը կը ցնդի: Սակայն մզիչէ (alambic) անցնելէն առաջ պէտք է վարդերը արևէ պաշտպանուած և զով տեղ մը տարածել: Անձրևով լուացուած և կամ փթթած օրը չժողուած և չմզուած վարդերը նաև մեծ փաս կը կրեն:

Վարդենեաց դաշտերու գործածուած արտավարական չափը 850նիւմն է 1600 կանգնոյ: Արտավար զլուխ բերքը 400 քաշ ծաղիկ է, որ 10 քաշին 1 մըմալ և կէս վարդի իւղ կուտան:

Այս ծաղկանց քաղուըն եթէ զով օղով կամ ամպամած երկնից տակ ըլլայ՝ 9-10 քաշ վարդ՝ կրնան մէկ մըսքալ իւղ տալ: Իսկ եթէ կիզիչ արեգական տակ քաղուի, այն ատեն 16-20 քաշ վարդ պէտք կ'ըլլայ՝ մէկ մըսքալ իւղ տալու:

Բըզանլըբ քաղքին մէջ 1867 տարւոյն յիսուն հատ մզիչ գործիք կային, ամենն ալ գործոյ վրայ: Այս մզիչներէն իւրաքանչիւրը 8-9 քաշ վարդ կ'ընդունի. վարդերուն վրայ որոշեալ չափով տաք ջուր կը լեցնեն. և ամենն ալ եռացման վիճակին մէջ կը մնան կէս ժամու չափ: Վարդեղուըրը մզչաց հընձաններուն դրսի կողմը գտնուող շիշերու մէջ կ'առնեն, դարձեալ կ'եռացնեն և վերստին շիշերու մէջ կ'առնեն: Ահա այն ատեն իւղը (ղեղնագոյն) ջրին երեսը կ'ըլլէ, ուսկից փոքրիկ ձագարով մը կը ժողուեն զայն. այս ձագարը ծակ մը ունի, որմէ իւղին խառնուած ջրերը կը ծորեն:

Այս ձեռնարկութեան պարսպող զործաւորք, ընդհանրապէս կանայք և զստերք են. որոնք հազիւ օրը 100 փարայ կրնան շահիլ՝ իրենց կերակրովը հանդերձ: Վարդի իւղը վերցնելէն ետքը, մնացած ջուրը երրորդ անգամուան համար միջին մէջ կը պարպեն նորաբողբոջ վարդերու վրայ, և կամ կը պահեն և իբրև վարդի ջուր կը ծախեն: Վարդի ջուրը մեծաւ քանակութեամբ այլևայլ տեղուանք կը զրկուի Պուրղազի նաւահանգիստին միջոցով. մէկ մասն ալ երկրին մէջ կը մնայ և զանազան պիտոյից կը գործածուի. օրինակի համար ուղղափառ եկեղեցւոյ կրօնքէն եղողներուն. զեղալստաւաց և Օսմանեան խոհանոցաց են. ևն:

Ամենայն ծախիւք հանդերձ մէկ մաքալ վարդի իւղին զինը 8 զանեկանաց կը հաշուի: Վաճառման զինը կը տարբերի, առատութեան տարին 9-13 զանեկանաց, միջին բերոց տարիներուն 14-17 զանեկանաց և անյաշող տարիներուն 18-22 զանեկանաց: 1867 տարւոյն մաքալին զինը 19 զանեկանաց էր:

Վարդի իւղը գնողները 20-30 օ/ո խորդենոյ խկութիւն (essence de geranium) կը խառնեն. այս խորդենին Անատոլւոյէն կ'ընդունին Կոողանդնուպօլսոյ միջոցով. մէկ մաքալը 20 փարայ կ'արժէ: Սակայն այս խառնուրդը խաբէութիւն չեն սեպեր և Եւրոպացի վաճառականք լաւ կը ճանչնան:

1866 տարւոյն 700,000 մաքալ վարդի իւղ արտահանութեան զնաց :

Վարդի իւղը մեծ խնամքով զօղած (soudé) պղնձէ անօթնեջուռ մէջ կը դնեն, և այնպէս արտահանութեան կը զրկուի: Ամենէն հաւանական հաշուով Գաղղիա կը զրկուի 30 օ/ո, Անգղիա 20 օ/ո, Գերմանիա և Իտալիա 30 օ/ո, և Միացեալ Նահանգաց 40 օ/ո: 40 օ/ո ն ալ Տաճկաստանի և Արաբիոյ մէջ կ'սպառի:

Այս Թանկագին նիւթոյս առևտուրն մեծաւ մասամբ օտար ազգաց ձեռքն է, որոնք իրենց զործակատարները կը զրկեն թրւն վաճառման տեղը և հոն կը գնեն: Մարսիլեա վարդի իւղոյ զլխաւոր վաճառատեղիներէն մէկն է :

### § 6° — Օսմանեան պետրեան արուեստից վրայ հաւստոս տեղեկութիւնք.

Կապերս կամ Գարգ. — Օսմանեան ձեռագործական արգասեաց մէջ առաջին կարգի են կապերտը և կարասեաց ազգի ազգի կերպասքը:

Գարերէ ի վեր արեւելեան արուեստագիտութեան սքանչելի բերքը, Անգղիոյ հետ բազմամիւ յարարերութեանց պատճառեղած էին. բայց Գաղղիա զուրկ մնացած էր, որովհետև մըտնող ապրանսաց օ/ո ին 100 տուրք կը պահանջէր: Այսօրուան օրս մարսի տուրքը գրեթէ 100 ին 15 ի իշած ըլլալով, Տաճկաստան շագատուէն Գաղղիա կրնայ մոցընել իւր կապերտը:

Առուեայ կապերտից հիւսման արուեստագիտութիւնը բոլոր Օսմանեան պետութեան մէջ տարածուած է: Թէ Եւրոպիոյ, թէ Ասիոյ և թէ Ափրիկիոյ Տաճկաստանին մէջ տեղ չկայ որ այս կապերտներով ընտանիք չգբաղին: Ամենուրեք արք գոյներ կը պատրաստեն, բուրդը կը ներկեն և կանայք զործիքներու առջեւ՝ քաղաքաց մէջ, զիւղօրէից մէջ և մինչև Ստախուական ցեղերու ստալաւարաց տակ կ'աշխատին:

Սակայն այս ապրանքիս համար երեք մեծ կեդրոններ կրնանք նշանել. այսինքն՝ Նախ և առաջ Զմիւռնիա և շրջակայքը, յետոյ Դօնիա, և Դանուբայ ամբողջ վիլայէթը :

Կոստանդնուպօլիս կը պատրաստուին ոսկեհոուն օծոցներ, ոսկի և արծաթ անկուածօք սպիտակ կամ կեռասեգոյն մետաքսէ զորգեր: Էհրամները Ֆիլիպպէ կը շինուին: Թաղիք և ֆայէները Պրուսայէն կուզան :

Զմիւռնիոյ մօտ՝ Ուււաք գեղին մէջ կապերտի երկու մեծ գործարան կայ. մէկը Հաճի Ուլի էֆէնտիին տեսչութեանը տակ և միւսը Պ. Շիֆմանի, երկուքն ալ նշանաւոր են զուսոց փայլքովը, զիմացկոտութեամբը, ընտիր ճաշակովը և երանգաց մէկմէկու աղէկ յարմարութեամբը: Գործածուած զուսոց մէջ զըլ-

խաւորներն են՝ ճերմակ, կարմիր, փայլուն կապոյտ, մուժ կապոյտ, կանաչ, դեղին և նարնջեզոյն:

Տեսակ մը զորզ կայ զիժ զիժ որ Սրբալը կ'ըսուի. ամենէն աղւորը յԱսորւոց կուգայ և վեց զոյն ունի. ճերմակ, մանիշակ, սև, կանաչ, կարմիր և դեղին:

Այսքն կը շինուին կարճ բրդէ և ընդհանրապէս քիչ մը ստուար կապերտները որ Տէօշէմէ և կամ Եիւրիւք կը կոչուին և որոնց հիւտուածոց մէջ մեծաւ քանակութեամբ այժուստե (քիժքիժ) կը մտնէ:

Սէճաւէճերը մասնաւորապէս Սարուխան կը շինուին, Ջմիւռնիայէ քիչ հեռու:

Ջմիւռնիոյ շրջակայքը ինչպէս որ վերն ըսինք մեծամեծ զործարաններ կան, մասնաւորապէս Ոււաք, Գուլէ և Սարուխան, որոնք ընդհանրապէս Եւրոպացւոց տեսչութեան տակ են:

Տանկաստանի զորգերուն երեք զլխաւոր յատկութիւններն են՝ ստուարութիւն հիւտուածոյ, փայլ և հաստատութիւն գունոց, և դիմացկունութիւն:

Մերենայք Տանկաստան մտնելէն ի վեր կապերտները հետզհետէ լուցան, բայց առանց Օսմանեան ճաշակը կորսնցընելու:

Այս զործարանաց մէկուն մէջ միայն տարուէ տարի գրեթէ 120,000 բառակուսի արշըն կապերտ կը շինուի ամէն մեծութենէ և ամեն տեսակէ: 300 զործիք ունի, որոնց առջև 3000 աշխատաւոր կանայք անընդհատ կ'աշխատին:

Օսմանեան պետութեան կապերտից, կարասւոյ զիւլակաց և այլ և այլ ձեռագործաց  $\frac{1}{10}$  քը՝ տեղացւոց կը բաւէ, մնացած  $\frac{9}{10}$  քը օտար աշխարհներ կը զրկուի: Թէև Անգղիա և Գաղղիա ալ Տանկաստան զորգեր կը զրկեն, սակայն տեսակներն ստորնագոյն է և զինով ցած:

Օսմանեան պետութեան կապերտից և այլևայլ ձեռագործաց բերքը հետեւեալ կերպով կը բաժնուի:

Ջմիւռնիա և շրջակայքը (տեղացւոց և Եւրոպացւոց զործա-

բանները միանգամայն)	Ֆռ.	9,000,000
Օսմանեան պետութեան բոլոր ուրիշ կողմերը (տեղացւոց զործարանները և ձեռակերտ աշխատութիւնը:	»	4,500,000
	Գումար	» 13,500 000
Տեղացւոց սպառման = $\frac{1}{10}$	»	1,350,000
Տարբերութիւն	»	12,150,000

Այս 12,150,000 ֆրանգաց տարբերութիւնն՝ Տանկաստանի կարասւոյ զիւլակաց և կապերտից տարեկան արտահանութեան միջին թիւը կը ներկայացնէ:

§ 7<sup>o</sup> — Բուռասիակ, կենդանիակ, հսակային եւ արուեստիակ քերֆ.

Ափիոն. — Տանկաստանի ափիոնի բերքը առւտրոյ մէջ մեծ տեղ մը կը բռնէ և արտահանութեան զլխաւոր նիւթերէն մէկն է: Նշանաւոր են Պօրտուր և Համիտ սանճագիները ուր առատապէս կ'աճին խաւիաք, ուսկից կ'ելլէ ափիոնը:

Խաշխաշք գարնան սկիզբը բաւական կը ծլին ու կը բողբօջեն և գրեթէ տասն հարիւրորդամէր բարձրութիւն կ'ունենան: Սակայն զժրաղղաբար սառնամանիք շատ անգամ տնկերը վըտանգի մէջ կը ձգեն. ուստի Մարտ ամսոյն վերջերը կամ Ապրիլի սկիզբները երկրորդ անգամ մ'ալ մշակք խաշխաշի հունտը կը սերմանեն կամ առաջուց պատրաստուած դաշտի մը վրայ և կամ միւսոյն հողը ամբողջ հերկելով:

Գարնան սերմանիքը շատ զէջ կ'ըլլան, որովհետև աշնան սերմուքը (առաջինք) անհաւասարելի կերպով բարձրագոյն են տեսակաւ և թէ քանակութեամբ: Վաճառու և երկու կրամ հունտ կը բաւեն արտաւար մը երկրի մշակմանը:

Գարնան եղանակին խաշխաշքը զիրաւ կը մեծնայ, փոճովը



Աֆիոն Գարահիսարը կամ Ռօպայ Մեքանդիլէշատ կը զըտ- նուի և 7 1/2-9 մօրֆինա ունի :

Ամենէն ստորին տեսակը Դօնիայինն է միայն 7-8 0/10 մօրֆի- նայով և աւելքա (հասարակ) անուամբ կը ծախուի :

Աֆիոնի զինը զլիսաւորապէս տարեկան քաղումէն կը կախ- ուի: Այս ետքի տարիներուն մէջ աֆիոնի բերքը 4-7000 կո- ղովի էին (150 լիպրանոց)։ Միջին բարեբերութեան տարւոյ մը մէջ (4000 կողով քիւճէ) միջին հաշուով չէքի մը (1) աֆիոնի զինը 200 դահեկան (ոսկին 118 դահեկանի = 3 1/2 ֆո. 1/2 հա- զարակրամը = 23 շիլին 7 բէնա անգղիական լիպրան. մինչ- դեռ 7000 քիւֆէյով բերքի տարուան մը մէջ չէքիլին զինը 120 դահեկանաց կ'իջնէ = 20 ֆո. 46 սանդիմ 1/2 հազարակրամը = 14 շիլին 2 բէնա անգղիական լիպրան, յանձնեալ ըջմիււռնիա:

Աֆիոնի զնոյն փոփոխութեանց նշանաւոր պատճառներէն են նաև՝

1. Զմիւռնիոյ և Լոնտրայի շտեմարանաց մէջ (որոնք արփիո- նի զլիսաւոր վաճառատեղիքն են) յետին քաղումէն մնացեալ պաշարքը:

2. Ամերիկայի աֆիոնի զնումը, որ քանի մը տարիէ ի վեր անբաւ աֆիոն կը բարձայ իր արևմտեան գաւառաց համար, որ բժիշկներէ աւելի գաղթական Ձինաց կը ծառայէ (Գալիֆոռ- նիոյ երկամուղւոյն շինութենէն ի վեր) որոնք շատ կը ծխեն:

3. Պարսկաստանի և Հնդկաստանի քաղմունքը: Պարսկաս- տան քանի մը տարիէ ի վեր յաջողաբար աֆիոն կը մշակէ և եւրոպական վաճառատեղիք լցած էին պարսկական աֆիոնով, երբ 1871 ի սովը որ տառապեցուց զՊարսկաստան, աֆիոնի մշակութիւնն ալ կասեցուց: Հնդկաստան որ աֆիոնի բերքին բնատեղին է, որչափ ալ շատ քաղում ունենայ, չի կրնար եր- բէք Ձինաստանի պիտոյիցը բաւել և կը հարկադրուի Զմիւռ- նիայէ կամ Լոնտրայէ զնելու:

(1) Աֆիոնը մասնաւոր կշռով մը կը դնուի և կը ծախուի այսինքն ծանր քա- շերով կը կշռեն և յետոյ չէքիլի կը վերածնեն: Մէկ չէքիւն = 5 5/8 բաշի = 250 տերգէմ:

4. Զեռքէ ձեռք անցնելով շահընկալութեան (speculation) ապրանք մը ըլլալը, որով Օգոստոսէն սկսեալ մինչև ցվերջ Մա- յիսի, զիները այնքան կը բարձրանան որ եւրոպական վա- ճառատեղիք աւելի աժան կը ծախենն աֆիոնը քան զբնա- տեղիքը: —

Մագաաբէն (մասդիքա, սաբըզ) զազի խէ- ժին (քիթի) պէս անուշահոտ ռետին մ'է, որ պիստակենւոյ կեղևը հերձելով կ'ստացուի: Այս ծառը առատապէս կը մեծ- նայ Սաբըզ սասար:

Սաբըզ ատասըլի տարեկան բերքը 4500-5000 բանձար է: Ժամանակաւ մագաաբէլի բերքը տասնապատիկ էր: Եւրոպա հազիւ 80 բանձար կը գնէ. բժշկական բաղադրութեանց մէջ քիչ կը մտնէ և չրդեղ (վերնիճ) և ղոճ (լէօք) շինելու կը ծա- ռայէ:

Արևելից մէջ սպառումը անբաւ է, և իբրև կարիք եղած է Յոյն, Հայ և Օսմանցի կանանց որ այս մագաաբէն կը ծամեն, ըսելով թէ ալոսները կը մաքրէ և լնտերքը կը զօրացնէ:

Մագաաբէն օղւոյ բաղադրութեան մէջ ալ կը մտնէ. սա- կայն քիչ քանակութեամբ:

Բաւրբալի. — Ամերիկայի պատերազմէն 1862 ին առաջ, Փոքր Ասիոյ բամբակի մշակութիւնն աննշան էր, քաղումը 12,000 հակը երբէք անցած չէր և զրեթէ միայն 5000 հակը ար- տահանութեան կ'երթար. մնացեալը երկրին մէջ կ'սպառէր: Բամբակի մաքրումը շատ հին ոճով և չրքեր կոչուած ձեռաց գործիքով կատարուելուն պատճառաւ կենդինարկարժէքը 280- 320 դահեկանը երբէք չանցաւ:

Սակայն այն մեծ պատերազմէն ի վեր բամբակի բերքը զրե- թէ 150,000 հակի հասաւ, կենդինարը 500 դահեկան արժէքով: -3 1/2 մարբարանք ուր 700 մաքրիչ կանայք կ'աշխատին օրը 2000 կենդինար բամբակի սերմերը իրենց փոճովէն կը գտանեն:

Օսմանեան պետութեան բամբակի բովանդակ բերքը 850,000 հակի կ'ելլէ, հակը 3 1/2 կենդինար կշռելով և այսպէս կը բաշ- խուի:

Նեղիստոսի բերք	450,000 հակ	4 1/2	կենդինարնոց
Ռուսկի (Սէլանիք, Սէրէզ)	220,000	» 1 1/4	»
Կիպրոս	5,000	» 5 1/2	»
Զմիւռնիա	75,000	» 3 1/2	»
Չանաքքաւէսի (Կէլիպօլու)	5,000	» 3 1/2	»
Տրապիզոն	10,000	» 3 1/2	»
Ատանա	75,000	» 2 1/2	»
Պէյրուժ (լիբանան) և Հալէպ	10,000	» 3	»
(Ասորիք)	850,000 հակ		ընդամենը

Բամբակի մշակութիւնը կը տարածի Կիպրոս կղզին, Ռուսկի մէջ (Սէլանիք, Սէրէզ) և Փոքր Ասիոյ հիւսիսակողմը մինչև Պազըր և Ետիք չայընի հովիտը և հարաւակողմանք մինչև Բիւշիւք Մէնտերէյի և Պէօյիւք Մէնտերէյի հովիտը : Հիւսիսակողմանց (Աքհիսար, Գըրբաղաճ, Պէրկամա, Գասապա, Մանիսա և Մէնէմէն) բերքը քիչ մը խորդ սակայն փայլուն հերմակ է : Հարաւակողմանց բերքը (Պայընտըր, Թիբէ, Էստէմիշ, Սուպուճա, Այտըն, Տէնիզլի) աւելի մետաքսաւոր է, բայց սպիտակը ղեղնի կը գարնէ : Նշանաւոր են նաև Հալէպ, Շամ, Ատանա, Մուսուլ և Պասրա : Սակայն մաքրումը, մետաքսնեւորուն անհաւասարութեան բաղդատմամբ կշռոյ նշանաւոր կորուստ մը կը պատճառէ :

Բաց ի Զըբըրը ըսուած բամբակէն որ տեղացի գործիքով կը մաքրուի, ամեն վերոյիշեալ բամբակներուն տեսակները գրեթէ միևնոյն գնով կը ծախուին. Զըբըրըր ասոնցմէ միջին հաշուով գրեթէ 3-4 և երբեմն 5 % նուազ կ'արժէ : Զըբըրըր հազիւ թէ բոլոր բաղման 1/3 քը կրնայ ներկայացնել և ոչ այն իսկ : Միւս բամբակներուն տեսակի տարբերութիւնքը, կամ պատեհական են (բողբոջման ժամանակ օդոյն ազդեցութենէն) և կամ բաղման և մաքրուելու զանազան կերպերէն առաջ կուզան (1) :

(1) Carl, von Scherzer.— La province de Smyrne, au point de vue géographique, économique et intellectuel.

Օրինակի համար շատ տնկարանաց մէջ, զեղացին բաղման եղանակին և կամ քիչ ատեն ետքը բամբակը փոճովէն կը զատէ և այնպէս կը ծախէ իր բերքը և միայն մաքրուելը կը մնայ : Ուրիշ տեղուանք ալ (հաւանականապէս երկրագործաց մեծ դերութեան համար) ապրուոնը նախնական վիճակին մէջ ծախելու կր հասնեն. անկից կը հետևի որ տեղափոխութեան ժամանակ փոճովը խտտանալով երբ մաքրուելու երթայ, բերքին վրայ առանց աղտեղութիւն թողլու, պարունակած էն չի զատուիր :

Արտահանութեան ելած բամբակին մեծ մասը Սպանիա կը գնէ : 35-40,000 հակ կ'առնու, որոնք սպանիական մասնաւորապէս կարճ մետաքսով բամբակներու համար կազմուած մանրաններու մէջ կ'անցնին : Փոքր Ասիոյ բերքն ալ ընդհանրապէս կարճ մետաքսով է : Մնացորդը Անգղիա, Աստորիա, Իտալիա, Գաղղիա և Ռուսաստան կ'երթան :

Փոքր Ասիոյ մէջ մշակուած բամբակը ընդհանրապէս տեղացի (եւրլի) բամբակ է, անկէ ետքը կուգայ հիւսիսային Ամերիկայի Սի Այլընճը (Sea island) : Թէև այս ետքինը աւելի բերք ունի, երաշտի կը զիմանայ և յարգի և ծանկագին է, Փոքր Ասիա չկրնար մշակուել որովհետև Ամերիկայի սերմին փոճովը պտուղը հասուննալուն պէս կը պայծի և այն ատեն բամբակ բերքը կը տանի և բաղումը հարկաւորապէս երլիյէն ծախաւոր և դժուարին կ'ըլլայ :

Ուրիշ բան մ'ալ, ամերիկական սերմը շուտ կ'ապականէ և եթէ երկու տարին մէկ անգամ սերմը չնորոգուի, մետաքսը երլիյէն կարճ կը մնայ : Տէրութիւնը միայն կրնայ գործոց այս վիճակին դարձան մը տալ, և ասոր համար ալ բաւական է Մեծն Բրիտանիոյ Հնդկաստան գործածած օրինակին հետևիլը, և այս ալ է, տէրութեան ցած գիներով մշակաց դալար սերմանիք բաշխելը :

Սերմանումը սովորաբար Ապրիլէն մինչև 15 Մայիս կը տևէ, արտավար մը հողոյ 3-5 քաշ սերմն կը բաւէ :

Երլի տեսակին արմատը 6-10 փոճով ունի և պարարտու-

Ձեան տարւոյ մը մէջ 5 կենդինար սերմն կը հայթայթէ: Միշին հաշուով արտավար մը երկիր բամբակի մշակութեան բերքը երկու կենդինարի կը հաշուեն (ամենէն շատ):

Քաղումը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներուն կ'ըլլայ կանանց և տղայոց ձեռքով որոնք 5-6 դահեկան կ'առնուն:

Առանց երկրայութեան կրնանք ըսել թէ Փոքր Ասիոյ բամբակի բերքը տասնապատիկ կրնայ անցնուիլ, առանց երկնչելու թէ բերոց ծանր քանակութեան մը տակ գիները կը 5նշին և կ'իյնան, վաւն զի բամբակը բոլոր գետին բնակչաց առաւելագոյն մասին զգեստոցը նախնական նիւթն է և սպառումն ալ տարուէ տարի աւելնալու վրայ է: Եւ եթէ բամբակի մշակութիւնը կատարելագործուի Ասորիք, Թարսուս և Իսկէնտէրուն և շրջակայքը անբաւ բերք կրնան հասցընել:

Բոլոր աշխարհիս բամբակի սպառումը հաշուած է թէ 6 1/2 միլիոն հակի կ'էլլէ այսինքն 2,590,000,000 անգղիական ոսկւոյ:

Այս վեցուկէս միլիոն հակին վրայ, Մեծն Բրիտանիա միայն շաբաթը 60,000 հակ կը գործէ, մինչդեռ բոլոր Եւրոպա շաբաթը 49,000 հակ կրնայ մանել:

Այս մշրձաւորական հաշուէն կը հետեի թէ Եւրոպական տէրութիւնք տարեկան հետեւեալ քանակութիւնները կ'սպառեն:

Մեծն Բրիտանիա	1,200,000,000	ոսկւոյ
Գաղղիա	300,000,000	»
Գերմանիա	200,000,000	»
Ռուսաստան	150,000,000	»
Հոլանտա	45,000,000	»
Աւստրիա	45,000,000	»
Սպանիա	45,000,000	»
Իտալիա	35 000,000	»
ի միասին	2,020,000,000	»

Այս գործեալ բամբակի սպառումը անձ զլուխ հաշուելով, կուգայ Անգղիոյ համար անձ զլուխ 9 ոսկի, Գաղղիա 4, Գեր-

մանիա և Աւստրիա 2, Տանկաստան հազիւ 1, հիւսիսային Ամերիկա 12 ոսկի:

1870 տարւոյն Հիւսիսային Ամերիկա 87 1/4 մանարան ունէր 7,114,000 մանոցով որոնք 881,564 հակ բամբակ մանեցին: Այս 87 1/4 մանարաններէն 738 հատը հիւսիսային Նահանգաց են 6,851,779 մանոցով և 109 հատը հարաւային Նահանգաց 1,011,985 մանոցով:

Աշխարհիս բամբակ բերող զանազան երկիրներուն տարեկան քաղումը 1872 տարւոյն 6,950,000 հակի ելած էր, որն որ հետեւեալ կերպով կը բաշխի. այսինքն՝

Ամերիկայի Միացեալ Նահանգք	5,500 000	հակ
Արևելեան Հնդկաստան	2,000,000	»
Եգիպտոս	450,000	»
Օսմանեան պետութիւն	400,000	»
Պրագիլ և Բէրու	500,000	»
Արևմտեան Հնդկաստան	100,000	»
ի միասին	6,950,000	»

Բամբակի ամբողջական բերքը հազիւ տարեկան պիտոյքը կրնայ հոգալ և 100,000 գործաւորաց վիճակը մի միայն Միացեալ Նահանգաց արդի քաղմանէն կը կախուի: Միայն Միացեալ Նահանգք բոլոր գետիս հարկաւոր բամբակին ամենէն մեծ մասը կը հասցընեն, այսինքն 3 1/2 միլիոն հակ կամ 1,351,000,000 անգղիացի ոսկւոյ ապրանք, մինչդեռ Պրագիլ, Հնդկաստան, Փոքր Ասիա, և այլն ի միասին հազիւ թէ 5 միլիոնի հակ բերք կը բերեն:

Հիւսիսային Ամերիկայէ ետքը, բամբակի մշակի յարմար Փոքր Ասիայէ զատ հող և կլիմայ չկայ բոլոր աշխարհիս վրայ: Փառլաբելի բան է թէ Օսմանեան պետութիւնը ժամնդակ ըլլայ այս մշակութեան յառաջադիմութեանը և մշակին ու երկրագործին տեսակ տեսակ դիւրութիւններ շնորհէ, և բոլորովին հիմնայատակ կործանէ ու վերցընէ այն հարստահարական միջոցները, որոնք այսօրուան օրս չէ թէ միայն բամբակի ար-

ուեստին հապա նաև երկրագործութեան ճիւղերուն զարգացմանը և բարեբերութեանը ամենևին հակառակ են:

Խոզկաղին. — Ներկարարաց գործածած խոզկաղինը (բաւաճուտ. vélanédes կամ valonea), ֆուէրֆուս էկիլոբս անունով կաղնույ մը բերքն է, որ Ուշաք, Պօրլու, Տէմիրճի, Կէօրտիզ և Ատալա (Աքհիսարի մօտ), Նազը (Այտընի մօտ), Պուլտուր, Սօքիա, Պալաթ, Էսկի Ստամպոլ (Պօհնա ատաւայի մօտերը), Այվալըք և Միտիլի կը մեծնայ: Տարեկան բերքը գրեթէ 600,000 կենդինարի է, 48,000,000 դահեկան արժէքով և զլիւստրապէս Անգղիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ ներկարարաց կը ծախուի:

Բուսաբերութեան տեղեաց վրայ, անմաքուր և անզուտ բերքը բաղման առատութեանը կամ նուազութեանը և ուզողաց ախորժին համեմատ քաշը 50-60 փարայ կ'արժէ. այսինքն կենդինարը 50-70 դահեկան: Փոխադրութիւնըրը տեղ տեղ ուղտով և տեղ տեղ ալ երկամուղւոյ միջոցով կ'ըլլան մինչև Զմիւռնիա, ուր կը զտեն ու կը մաքրեն և այնպէս կ'արտահանեն:

Բերք հասցնող երկիրներէն մինչև Զմիւռնիա, տեղւոյն հեռաւորութեան համեմատ 8-20 դահեկան կենդինարին փոխադրութեան ծախք կ'երթայ: Մաքսի տուրքը ծախողին վրայ են: Հազարաւոր մարդիկ կենդինար զլուխ 3 դահեկանի կ'աշխատին խոզկաղին մաքրելու և պարկերու մէջ զետեղելու համար:

Հոկտեմբերէն մինչև Փետրվար ամսոյն վերջերը խոզկաղինը պարկերով կ'արտահանուի որպէս զի չիմորի. Մարտէն սկսեալ առանց պարկի արտահանութեան կ'երթայ և շատ անգամ առազատաւորներով:

Խոզկաղինըրը մեծաւ մասամբ Անգղիա կ'երթան:

1872 տարւոյն պատկերացոյցն է

Անգղիա	535,411	կենդինար
Աւստրիա	148,675	»
Իտալիա	38,779	»
Մնացեալ տէրութիւնը	16,875	»
	739,740	» ի միասին արժէքով

63,707,200 դահեկան:

Բաց ի խոզկաղինէն արտահանութեան ապրանց մէջ կը գտնուի նաև զխտորը (մազը, noix de galles) որ խոզկաղնոյն և տեսակ տեսակ կաղնեաց պտղոյն և կամ պտղոյն ցողունին վրայ տեսակ մը միջատի խայթուածէն առաջ եկած ելունդն է, ինչպէս որ պիտի տեսնանք:

Գիսուր. — Սիւնիքս ֆուէրֆուս Ֆօլիի ըսուած (չորս Սև ունեցող միջատը, որոնց երկու ձևերը փոքրագոյն են միւս երկու ձևերէն) ցեղէն Սիւնիքս միջատը որ գիտորըրը առաջ կը բերէ խիստ երկայն խայթոց մը ունի, որով տնկերը ծակելով իւր կիճը կը տեղաւորէ: Այն խայթահարած կէտը ուռելով ելունդ մը կը ծնանի՝ որուն մէջ կիճէն ելած թրժուրը կը սնանի և կը մեծնայ և վերջապէս թևաւոր միջատ մ'ըլլալով, ներքնակողմէն չորացեալ գիտորըրը կը կրծէ, կը ծակէ և անկից կը թռչի:

Քանի որ թրժուրը՝ որ ընդհանրապէս գիտորին կեղրոնը պզտիկ խոռոչի մը մէջ կ'ապրի և կը սնանի, գիտորին ամենէն հիւթաւոր ատենն է, և այն վիճակին մէջ գտնուող հիւթը կաղնոյն ուրիշ ամեն կողմը գտնուող հիւթերէն աւելի բնաղաղ (tannin) ունի, որն որ ներկարարը և խաղախորդը շատ կը փնտռեն:

Գիտորըրը մասնաւորապէս Ալաշէհիբ. Գուլա, Մանիսա, Ուշաք և Պերլամա քաղաքաց շրջակայքէն կուզայ:

Նոր զխտորները, որոնց մէջ դեռ միջատը կ'ապրի, նսեմագոյն, ծանր և պինդ են և սև զխտոր և կանաչ գիտոր կ'ըսուին: Սպիտակ կամ դեղին գիտորները՝ անոնք են որոնց միջատները փախած են և այս ալ յայտնի յայտ երևան տեսնուող ծակերէն և խայթուածներէն. կազմուածքն սպիգային և թեթևագոյն են և բնաղաղն ալ նուազ է:

Չորրորդ տեսակ մ'ալ կայ, պզտիկ մնացած և որուն միջատը փախած է և որ չընկիր կամ պսակաւոր գիտոր կը կոչուի: Միւս գիտորներէն քիչ մը պզտիկ և դեղնագոյն է և ճերմակ տեսակէն աւելի բնաղաղ ունի:

Տարեկան բերքը 2000-2500 պարկ է, 2 կենդինար կը շուրջի: Բոլոր բերքը՝ մաքրուելէն ետքը Եւրոպա և Ամերիկա կ'եր-

Սայ, մասնաւորապէս Անգղիա, Գերմանիա և Աւստրիա:

Ալաժար. — Ալաժարը (ճէհրի) մաշի (պիզէլեա) մեծութեամբ մրգիկ մ'է, վերնակողմը տափակ և վերի կողմը սայրացած: Փայլուն և ձիթապտոյղ գունով չոր սերմ կը պարունակէ: Ներկարարք շատ կը գործածեն իբրև դեղին ներկ:

Ասիական մասնաւորապէս Գայսերի, Գոնիա, Թօզար, Ամասիա, Իսկիլիէք, Եոզկար և Գուռու բողաբաց շրջակայքը կը մշակուի: Առաջին տեսակ ալաժարը պէտք է որ կանաչ հընտիկներ ունենայ և դեռահաս ըլլայ: Վասն զի գունատու նիւթը պտոյն հասուննալու եղանակին առատ կ'ըլլայ անկին մէջ ուստի բաղումը ածապարելու և խնամօք չորցընելով պահելու է: Եթէ չոր և հովատուն տեղ մը պահուի, տեսակին լաւագոյն կ'ըլլայ: Եթէ պտուղը անկին վրայ հասուննալու ժողովի մըրգիկները կը սկսնան. ուստի պէտք է հսկել որ սև մրգիկները, կանաչ մրգիկներուն չխառնուին:

Երկրորդ տեսակ ալաժարը նաև կանաչ և դեռահաս անկերէն կը բաղուի, սակայն առաջինէն փոքրագոյն է և անոր համար մէկդի ժողուած է: Վաճառածախը խիստ քիչ կ'ըլլային այս երկրորդ տեսակին վրայ, որովհետև օտար մարմիններու հետ միշտ խառն կ'ըլլայ, մասնաւորապէս Մօրէյի հետով խառն է, որն որ թէև ալաժարին կը նմանի և դեղին գոյն տուող նիւթ ալ ունի, սակայն առաջինները կ'ապականէ: Յիշուած խորդախումբանց համար գնիչք մէկդի ձգած են այս տեսակին առևտուրը, ասկից գատ ալ առաջնոյն և երկրորդին մէջ 2-3 դահեկան տարբերութիւն կայ քաշ զուլուի:

Գնոյն բարձր ըլլալուն համար, ներկարարք ալաժարը ուրիշ նիւթով մը կը փոխանակեն:

Սովորաբար քաղման եղանակին, այսինքն Օզոստու ամսոյն գիները աւելի ցած կ'ըլլան: Նաւահանգստաց պիտոյից համեմատ կ'ամենայ ու կը սուղնայ, անկից է որ մեծ տարբերութիւն կը գտնուի Զմիւռնիոյ, Կոստանդնուպօլսոյ և Հալէպի գիներուն մէջ:

Տարեկան արտահանութիւնը 250,000 քաշի կը հասնի

6,000,000 դահեկան արժէքով. Անգղիա ամեն երկիրներէ աւելի կ'ստուէ, ետքը կուզան Գերմանիա, Զուիցերա, Գաղղիա և Ռուսաստան:

Տարն (ftof պոյա, garance). — Առաջին տեսակները (ամբողջ բերքին 30 % ը) կուզան Պագր, Կէլէմպէ և Էրէկիլիէն. Գուլա, Կէօրիզ, Տէմիւրի և Գարամուհի բերքը (40 %) և վերջապէս Գաբարմի, Շապհանէյի, Երլսրզի և Ալազադայի բերքը վարի աստիճանի են: Երկու տեսակներուն զինք 15 % տարբերութիւն ունի:

Տորոն ներքին քաղաքներէն 2 1/2-3 կենդինարնոց տուրակներով կ'իջնայ Զմիւռնիա, և հոն երբ ծախուելու ըլլաք հակերու մէջ կը զետեղեն: Թէպէտև Գաղղիա, Իտալիա և Յունաստան ալ շատ տորոն կը հասցընեն, և սակայն այնչափ սպառում կ'ըլլայ, որ այս անկին մշակումը Փոքր Ասիոյ արուեստագիտաց անբաւ շահեր կուտայ: Կը գտնուի նաև Կիպրոս և Ասորիք:

Զմիւռնիոյ գաւառին տարեկան բերքը 6 1/2-7 կենդինարնոց 10,000 հակ է, որ միջին հաշուով կենդինարը 315 դահեկանէն 18,000,000 դահեկանի զուժար մը կը ներկայացնէ:

Տորոնի մշակումը սովորաբար Մարտ ամսոյն կ'սկսի և մինչև աշուն կը տևէ. քաղումը Յուլիս ամսոյն կ'սկսի և Սեպտեմբերին կը լննայ. ընդհանրապէս տորոնին արմատը հինգ վեց տարի հողոյ տակ կը ձգեն, այսպէսով արմատը կ'ազնուանայ և կը նրբանայ: Արտավար մը երկիր 10-20 կենդինար արմատ կուտայ:

Սովորութիւնը այնպէս է որ տորոնի արմատով լեցուն պարկի մը մէջ քաշ մը հողէ աւելի պիտի չգտնուի: Եթէ գտնուելու ըլլայ, ետքէն զեղջ մը կ'ըլլուի ինպատու գնողին:

Տահկաստանէ Անգղիա զրկուող տորոնը 500,000 օսմանցի ոսկոյ արժէք ունի:

Ձիթոյ իւր կամ ձէք. — Անբաւ շահու աղբիւր մ'ալ ձիթներն է որ չոր և կրային հողերու վրայ կ'աճի լեբանց դարևանդից վրայ. սակայն մեծ խնամք կը պահանջէ, պէտք է որ

մրուի, ուղղուի և կրկնարորուի (biner): Եւ սակայն տուած հասոյթը հարիւրապատիկ անգամ կը փոխարինէ մշակութեանը նեղութիւնները: Մէկ մաս հաստութեամբ նորարդորոջ թուփ մը 20 դահեկան կ'արժէ, 10-15 տարուան բազկի հաստութեամբ ծառ մը 50 դահեկան կ'արժէ, միջին մեծութեամբ ծառ մը 200-400 դահեկան Տարօրինակ ծառեր մինչև 1000 դահեկանաց: Եւ Միտիլիի, Այվալըք և Էտրէմիտի ձիթենիք՝ կարգուելու օրիորդաց օժիտը կը կողգմեն, և աղջկան մը հարստութիւնը ձիթենեաց թիւը հաշուելով կը գտնուի:

Ձէթը (զէյթ եաղը) երկրին ամենէն առատ և շահաւոր բերքերէն մէկն է և կը պատրաստուի մասնաւորապէս Այվալըք, Էտրէմիտ և Միտիլիի ասաւր, և ներքին գաւտուաց մէջ (Այսընք, և Պայընքը) և Կէմլէյիք, Մուտանիա, Կայն:

Ամենէն պատուական ձէթը Այվալըքէ, Էտրէմիտ և Այտընէ կուգայ: Միտիլիի ձէթը թէև տեսակաւ ընտիր է, սակայն առաջիններուն պէս յարդելի չէ, որովհետև անոնց յստակութիւնը և ղեղին զոյնը չունի և կանաչի կը գործնէ:

Բաց ի Այտընէ, ներքին ամէն գաւառաց ձէթը տեսակաւ ստորին է, թանձր և զոց զոնով:

Առատութեան տարւոյ մը մէջ Ձմիւռնիոյ գաւառին ձիթոյ բերքը միջին հաշուով 233-257,000 բանձարի կ'ելնէ և հետևեալ կերպով կը բաժնուի.

Այտըն	75 էն 80,000	բանձար
Միտիլիի	55 էն 65,000	»
Էտրէմիտ	75 էն 80,000	»
Այվալըք		
Վուրլա	10 էն 12,000	»
Սուսամ ատասը	18 էն 21,000	»
Ընդ ամենը	233 էն 257,000	բանձար

Միջին քաղման տարի մը ձիթոյ արտահանութեանը արգելք կ'ըլլայ, որովհետև վաճառման տեղոյն վրայ աւելի սուղ կը

ծախուի քան թէ եւրոպական նաւահանգստաց մէջ: Ձմիւռնիա գաւառը, Գոստանդնուպոլիս, և Աև ծովու ծովային քաղաքք իրենց յատուկ սպառման համար տարեկան քաղման 100-110 հազար կենդինարը կը բառնան, մնացեալը օտար երկիրներ կ'երթայ՝

այսինքն	35 0/0	Մարսիլիա
»	30 0/0	Դրիէսք
»	20 0/0	Անգղիա
»	15 0/0	Գերմանիա

Առևտուրը սովորաբար Յունուարի մէջ և Փետրուարի կը կատարուի ապրանքը Ապրիլի կամ Մայիսի յանձնուելու պայմանաւ և զնոյը տեսած առևտրոյն 2/3 բը կանխաւ կ'ընդունի: Ձիթոյ առևտուրը օրինական դրութենէ մը նեղուած է որ չներէր մշակաց իրենց վրայ դրուած տասանորդ տուրքը (dimes, օնտալը) չտալէն առաջ իրենց պարտիւզաց ձիթապտուղըը ճնշեն:

Արևելից մէջ ինչպէս որ ամեն զործոց վրայ դանդաղութիւն մը կը տիրէ, այս բանիս մէջ ոչ կալուածատեարք տասանորդըը հատուցանելու անհոգ կ'ըլլան, անոր համար ձիթենեաց մշակք կամ վարձակալը կը հարկադրուին ձիթապտուղըը աղօտելու որպէս զի չփտտին և այն վիճակի մէջ ամիսներով կը պահեն մինչև որ ազատ ըլլան ձիթապտուղըը աղօրիք տանելու, ուր կը հանեն ձէթը:

Ձիթապտուղը աղած և ամիսներով դիզուած պահուելուն պատճառաւ իրենց թարմութիւնը և բնական տեսակին կը կորսնցնեն, այնպէս որ այս ձիթապտուղը բերքը շատ աւելի ազնիւ կրնար ըլլալ հիմակուան ձէթերէն:

Խաղող եւ բազաբր. — Տեսակ տեսակ խաղող հասցնող երկիրներն են.

1<sup>o</sup> Ձէսմ (Մարքը ատասըլին յանդիման), յետոյ Սլազադա, Ռէյսէրէ և Գադաբաւալիա, որոնք կը բերեն տարին 80-90.000 բանձար կարմիր խաղող ուղղոյններով հանդերձ. 35-40.000 բանձար սև խաղող խոշոր պտղով, 12-15,000 բանձար բազաբր փոքրիկ պտղով և առանց կորիզի:

Եօթը տարիէ ի վեր Զէշ Այի այգեպանը (3/4 րը Յոյն և 1/4 Օսմանցի) կարմիր խողովները ողկոյղներէն կը փրցնեն և այնպէս ծախու կը հանեն, և արդէն իսկ քաղման կէսէն աւելի էլէմէ վիճակի մէջ կ'երևայ առանց ողկուզի:

Զէշմէյի կարմիր խողովներուն 3/4 րը Համպուրկ, Պրէմէն, Սդէզդին, Ամսդերտամ և Դրիէսդ կ'երթայ և միայն 1/4 ր Անգղիա: Բազաքըները մասնաւորապէս Անգղիա և Աւստրիա (Դրիէսդ) կ'երթան: Գերմանիա և Հոլանտա նաև կը գնեն: Խոշոր պտղով սև խողովները մեծաւ մասամբ Կոստանդնուպօլիս, Սէշանիկ և դանտըբուկան գաւառները կ'երթան: Արտադրութեանց մէկ մասն ալ Մարսիլիա, Հառ և Ռուան կ'երթայ:

2º. Վուրլա, Զմիւռնիոյ ծոցին մէջ և այս նաւահանգստէն Զէշմէ երթալու կէս ճամբուն վրայ, տարուէ տարի 60-70,000 քանծար կարմիր խողով և 35-40,000 քանծար բազաքը կը հասցընէ:

1º. Վուրլայի կարմիր էլէմէներուն 2/3 րը Դրիէսդ, Գերմանիա և Հոլանտա կ'երթայ, մնացորդը Եգիպտոս, Անգղիա և հարաւային Ռուսաստան, ընդհակառակն բազաքըները մեծաւ մասամբ Դրիէսդ և Անգղիա կ'երթան, և փոքր ինչ Գերմանիա, Հոլանտա և Եգիպտոս:

3º. Գարապուրուն Զէշմէյի և Վուրլայի մէջտեղ Զմիւռնիոյ ծոցին հրուանդաններէն մէկուն վրայ, տարին 20-25,000 քանծար առաջին տեսակ բազաքը կը հասցընէ, Բերքին կէսը և նաև ամենէն ազնիւ տեսակը հարաւային Ռուսաստան (Օտէսա, Թականբոկ) կը զրկուի: մնացորդը Անգղիա, Աւստրիա (Դրիէսդ) և Եգիպտոս կ'երթայ:

4º. Զմիւռնիոյ շրջակայքը (Նիմֆի, Թօրպալը, Սիվրի-Նիսար, Սէտիբէոյ և Պուճու) Երլի ըսուած տեսակը կը հասցընեն:

5º. Ֆօլիէրի. տարին 40-50,000 քանծար սև խողով խոշոր պտղով և 7-8000 կարմիր խողով և 4-6000 բազաքը կը հասցնէ:

6º. Գուշ տոտալլի (Սքալա-Նօվա) յանդիման Սուլամ ասար տարին 35-50 հազար քանծար կարմիր միսէք խողով և 15-20,000 քանծար խոշոր պտղով սև խողով կը հասցընէ:

Քօս կղզին կամ Սքանֆէոյ ձօվա ծոցին հանդէպ տարին 15-30,000 քանծար կարմիր խողով կը հասցնէ: Թիբէ, Պայրնսքը, Այսրն և Մէլլասա վիճակները տարին 300 հազար կենդինար մանր խողով կը հասցընեն:

Խաղողոյ բաղումը սովորաբար Օգոստոս ամսոյն կ'ըլլայ: Պտուղները իրենց ողկոյզէն կը փրցնեն և տաշտ (Թէրնէ) մը ջրոյ մէջ կը նետեն, որուն մէջ նախ և առաջ փայտի մոխիր կեռացնեն մէկ հարիւրամասն խաղով, յետոյ 8-10 օր արևու տակ կը թողուն: (1)

Խաղողը Կ. Պոլսոյ քանծարով կը ծախուի = 44 բաշ = 100 լիպրա Վիէննայի = 56 հզլրմ:

Թուզ. — Թղենին տարւոյն մէկ մեծ մասը պտուղ կուտայ: Առաջին թղերը Յունիս ամսոյն կը հասնին. յետոյ կուզան ամառուան թղերը որուն կըբաղին Զմիւռնիոյ գաւառին բնակչաց շտաբ և առատապէս նաւահանգիստ կ'իջնայ Հոկտեմբերի մէջ և Նոյեմբերի սկիզբները: Շատ անգամ թղենին երրորդ անգամ պտուղ կուտայ, որն որ երբեմն տերևները ինչպէն ետքը կը հատուննայ: Արտահանութեան զրկուող չոր թղերը զլիսաւորապէս Այսլանի դաշտերէն կուզան Զմիւռնիա, երկամուղոյ միջոցով:

Տարուէ տարի 200 000 քանծարի կ'ըլլէ Զմիւռնիոյ նաւահանգստէն արտահանութեան զրկուող ներքին գաւառաց թղերը:

Թղերը միմիայն Զմիւռնիա բազաքը կը մաքրուին և տփերու մէջ կը զրկուին:

Անուանի են Էրպլէյի, Էլէմէ և Այսրն բաղաբաց թղերը. ամենէն պատուական թուզը էլէմէյէն կուգայ:

1872 տարւոյն Զմիւռնիոյ նաւահանգստէն արտահանուող թղերը 213,000 քանծար էին:

Արտահանութեան երկիրքն են Անգղիա, Ամերիկա, Աւստրիա,

(1) T. M. Stockel. nigociant à Smyrne.

Ռուսաստան, Գերմանիա, Կ.Պոլիս (13,000 քանժար), Եգիպտոս և Գաղղիա:

Գազի խեժ (բիծրէ, gomme adraganthe). — սաղրակալու ըսուած տեսակ տեսակ Սփերու հիւժն է, որ հերձմամբ և երբեմն միմիայն օդոյն ազդեցութեամբը կ'ըստացուի: Այս խեժը տուող սաղրակալները արաղապէս կ'աճին Փոքր Ասիոյ մէջ և զլիսաւորապէս բարձր լեռանց վրայ և շատ առատ են ի Գաւառահիսար, Եալովաչ, Պուլսուր, Մուսուլ և Գարաման և տեսակաւ շատ աւելի ազնիւ են քան թէ Մօսայի, Ասորոց և Եգիպտոսի խեժերը:

Գազի խեժը կը գտնուի սպիտակ, դեղին կամ կարմրագոյն երակներով, տափակաձև և գալարեալ և երբեմն ժապաւինեալ (գորտէլս պիչիմինտէ) վիճակի մէջ. այս զանազանութիւնները խեժին ազատապէս արևու տակ ծորելէն և կամ մարդու ձեռաց օգնութեամբ վազելէն առաջ կուզան: Որչափ որ տնկէն ծորող հիւժը բաց տեղ թողուի. այնչափ ալ խեժը կայլականման կը պնդանայ և գոյնը գոց կ'ըլլայ: Այն ատեն հիւժը որչափ ալ մաքուր և զուտ ըլլայ, դարձեալ արժէքը կը կորսնցունէ:

Եալովաչ և Պուլսուր մինչև այսօր զուտ, սպիտակ և հատորաւոր խեժեր հասցուցած են, որով հիւժերու քաղման ժամանակ յարատե հսկում մը կը յայտնուի այն զաւառաց մշակներուն կողմանէ, մինչդեռ Գարահիսար, Մուսուլ և Գարաման աւելի հասարակ խեժեր կը հայժայժեն:

Գազի խեժին ցօղունը գարնան և ամառուան եղանակներուն կը հերձեն: Բաղումը ընդհանրապէս սեպտեմբեր ամսոյն մէջ կ'ըլլայ. երբ առաջին անձրևները սկսին, այս գործողութեան արգելք կ'ըլլան:

Այս բերքին սպառումը տարուէ տարի աւելնալու վրայ է և մեծաւ մասամբ, Անդղիացի Գաղղիացի և Զուրիցերացի արարուեստագէտք կը գնեն կերպաս ներկելու և դոճի պատրաստութեան համար:

Կճճիթ (սուսամ). — Այս բերքը որ խղալից հնտերուն ա-

մենէն նշանաւորն է, Գարամանի մէջ Մերսինի և Թարսուսի մերձեկայրը և Մ'ւնտերկի ջրշէղջին մէջ Այսրն, Թօսպալը և Այասուլուք բաղաբաց մօտերը կը մշակուի: Կնճիթի մշակութիւնը տարուէ տարի աճելու վրայ է և տարեկան բերքը 65 քաշնոց 140 000 պարկի կ'ելլէ այսինքն 220,000 քանժարի: Այս բերքին ամենէն մեծ մասը Մարտիլիա կ'երթայ, ուր կնճիթին իւղը կը հանեն, և ամենէն ընտիր տեսակը առևտրոյ մէջ իւրի սք սեղամ սք ժրու ասսամ անունը կը կրէ, և ամենէն նուրբ ձէթէն աւելի ազնիւ է և անուշահոտութեանց բաղադրութեան մէջ կը մտնէ:

Կանեփը և սեւ կորեակը (բէնէվիր). — Այսրն, Նագլը և Տէնիզի բաղաբաց շրջակայրը, յԱսուի և Բիւրսիսանի մէջ թէև առատապէս կ'աճի սովայն զեռ ևս մշակութիւնն ոչինչ է, եթէ բիշ մը աւելի խնամք տարուելու ըլլայ կանեփի մշակութեան, արտահանութեան զլիսաւոր նիւթ մը կրնայ ըլլալ. Անատոլոյի կանեփը, զալուկ դեղնագոյն և զրեթէ սպիտակ է, ուժեղ, շատ երկայն և կտաւ շինելու յատուկ:

Տգրուկ. — Ասկից տասն տարի առաջ տգրուկի արտահանութիւնը անբաւ էր և մասնաւոր խնամոց նիւթ մ'էր. սակայն հիմա առջի կարևորութիւնը շատ պակասած է, որովհետև արդի բժշկականութիւնը, արիւննանութիւնը շատ նուազցնելով, տգրուկի գործածութիւնն ալ ի հարկէ վերաց:

Տարեկան արտահանութիւնը 5-6000 քաշ է և 5-5 քաշնոց սնտուկներով կամ տակաւներով կը դրկուի ի վաճառ: Բնատեղիքն են իւրսիսան, Այսրն, Սաղալիս, Իւրարդա և Գօնիա: Եիմուրեան փայտք եւ կայմք. — Պոսիլոյ, Ալլաանիոյ, Պուլլարասանի և Սեւ ծովու ափանց վրայ առատապէս կը գտնուին:

Օճառ. Անուանի են Բրէվէզայի, Կիլիսի, Հալէպի, Անսիոնոյ, Շամայ, Թարսպուլուս էս Շամայ, Սիսիլիոյի և Զալուրնիոյ օճառները. սպառումը անչափ է:

Հանգայի ջրեր. — Փայիզ Պէյի. (ժ. Տէլլա Սուտա) փորձերուն և լուծմանց հետեւելով՝ Պուսայի մօտ Խյնէկէօլի ջուրը

Վիշի ջրոյն հետ միևնոյն հանգամանքն ունի և նաև աւելի բարձր աստիճանով. և Մանասուրի ջուրը Գոնդրբուէվիշ ջրոյն կըրնան հաւասարիլ: Անուանի են Ձիքիլի ջուրը և Պուուայի, Գորույի և Թօգարի բաղանիքը:

Մեղր. — Մեղրը գլխաւորապէս Մուզլա, Պայլըր (Սև ծովու վրայ Վառնայի հիւսիսակողմը), Միլա, Այտըն, Էնկիւրիւ և Տիւրոս բաղաքներէն և Ռատոս կղզիէն կուզան: Տարեկան բերքը 70 000 բաշ կը հաշուի 56,000 ֆունց արժէքով, և բանի մը բողաքաց բերքը մեծաւ մասամբ Զմիւռնիոյ նաւահանգստին միջոցաւ Կոստանդնուպօլիս, Աղերսանդրիա և Օտէսսա կերթայ 1 և 1 1/2 կենդինար կշռող տակառներով:

Մեղրամով. — Զմիւռնիոյ մեղրամովը, իր գտնութեանը և կատարեալ մարբութեանը համար Զմիւռնիոյ վաճառատեղոյն գլխաւոր արտահանութիւններէն մէկն է: Փոքր Ասիոյ մեղուն որ ամենէն արուեստական ցեղէն է, փեթակ անգամ չունի և բացօթեայ մնալուն համար շատ անգամ կը վնասուի կլիմային անկանոնութեանց պատճառաւ:

Մեղուներու խմբերը մեծաւ առատութեամբ կը գտնուին Մուզլա, Միլա, Սաղանէ և Մէղրէ անտառախիտ գաւառներուն մէջ և Ռատոս կղզին ուր իրենց խորխիւր ծառերու կոծղին վրայ կը շինեն և զեղացիք Մայիս ամսէն ժողովելու կ'սկսին:

Թէև մեղրամովը նախ և առաջ բուն ելած տեղոյն վրայ կը մարբեն և կը գտնեն բայց Զմիւռնիա ինչնալուն երկրորդ անգամ մ'ալ կը նային և կը գտնեն, ապահով բլլալուն համար Ոէ խարդախութիւն մտած չէ բաղադրութեանը մէջ, վասն զի խարդախութիւնը զրեթէ անպակաս են վաճառականութեան մէջ:

Փոքրիկ մեղուաց շինած մեղրամովը աղւոր յարդագոյն ղեղին է իսկ մեծ մեղուաց մեղրամովը կարմրագոյն ղեղին է: Այս երկու տեսակներն ալ խառն կը ծախուին կտաւէ պարկերով և կամ տակառներու մէջ:

Առաջին տեսակ մարուր մեղրամովոյ բաշը 23 զահեկանաց կուզայ այսինքն 50 հազարակրամը 218 ֆունցաց: Առատու-

Սեան տարւոյ մը մէջ զրեթէ 3000 կենդինար մեղր կրնայ բաղուել 770,000 ֆունց արժէքով:

Էնկիւրիւշի մեղրամովը մեղրին պէս պատուական չէ, արուեստարար խօսելով ուր որ ազնիւ մեղր կը գտնուի նոյն ազնուութեամբ մեղրամով չկրնար շինուիլ:

Արմսիփ եւ ծխախոս. — Ամենուն ծանօթ է թէ հերկագործութեան բուն նպատակն արմտիք հասցնել է. արմտեաց ցեղին մէջ կը զատին սովորաբար ցորենը. կարմրացորենը, վարսակը, հաճարը, գարին, եգիպտացորենը, կորեակը, բրինձը և սև ցորեանը, որոնք ամենն ալ բաց ի յետինէն սիզական (graminée) տեսակէն են. սև ցորենոյ հատը հիւթ մը ունի, զոր երկանաբայը յալիւր կը փոխէ և զրեթէ ամեն ժողովրդեան գլխաւոր սնունդը կը կազմէ, մանաւանդ քաղաքականացեալ ազգաց: Օսմանեան պետութեան հողը շատ բարբեր է և իր բերքը առեւտրոյ մէջ յարգուած են:

Հաճարը ընդհանրապէս Տանկաստանի մէջ աւելի կը մշակուի քան թէ ցորենը. որովհետև ցրտոյն աւելի կը դիմանայ, այնպէս որ մինչև ծովու երեսէն 1000 մէր բարձր տեղուանք ևս կը բուսի, ուր անկարելի է ցորենոյ մշակութիւնը:

Ընտիր են Թաքար-Պազարհրի, Կիւզէլ Հիսարի և Ֆիլիպպիլի գարինները, այս երկու ետքիններուն մէջ սակայն յարդ կը խառնեն, մինչդեռ առաջինը զուտ են:

Վարսակի մշակութիւնը երեսի վրայ ձգուած է:

Եգիպտացորենոյ մշակութիւնը Օսմանեան պետութեան ամեն գաւառաց մէջ սիրուած է: Անուանի են Գարսընա-Գրիսլայիլի և Ֆիլիպպիլի եգիպտացորենը: Դանուբայ գաւառը առեւտրոյ մէջ փնտռուող շատ յարգի եգիպտացորեն կը հասցնէ. այս բերքն օրէ օր աճելու վրայ է. նշանաւոր են նաև Վառնայիցները, որոնց հատիկը աւելի խոշոր է և նուազ կը կշռէ քան թէ Կալայիցը: Անուանիլ նաև Մամսոնի եգիպտացորենը, սակայն Մարսիլիոյ վաճառատեղոյն վրայ յարդ չունի, որովհետև բիչ մը կարմրագոյն է, և Մարսիլիացիք ղեղնագոյնիք և ճերմակները կը վերադասեն: Եգիպտացորենոյ մշակութիւնը շահաւէտ

արուեստ մ'է. որովհետև ընդհանուր կարծեաց հետևելով, եզրիպտացորենոյ հատ մը Տանկաստանի մէջ 300 հատ կը բերէ: Դանուբոյ ջրշեղջին և Պուլղարստանի մէջ՝ եզրիպտացորենէ մնունդ մը կը պատրաստեն որ Մամալիկա կը կոչուի:

Բրինձը շատ կողմանք կը մշակուի: Անուանի է թարա-Պագարնքի և Ֆիլիպպէ. նշանաւոր են նաև Գասդամուցիի և Թաւ-Բէօփիլիյի կարմիր բրինձը Պիլղայիցները մաքուր, ճերմակ և խոշոր հատիկներ ունին:

Թէև այս արմտիքը երկրագործութեան կարևոր նիւթ մ'է և ցորենոյ չչաշողած տարին անընդեան առատ աղբիւրներ կ'ընծայէ, սակայն եւրոպական տէրութիւնք ասոր մշակութիւնը յետս ձգած են, որովհետև քանի անգամ որ բրնձի մշակութեան ձեռք զարկած են՝ բազմաթիւ հիւանդութիւն ծածկած են որիզատանաց շրջակայքը, և փորձուած է թէ բրնձի մշակք երբէք առողջ երկիրներու բնակչոյ միջին տարիքին չեն հասնիր և կը վախճանին: Բրնձի բերքն 1 ին 20 է:

Կորեակը՝ որմէ սլաւական զաւառաց մէջ սօգա անուանով քմպելիք մը կը շինեն, կը գտնուի զլսաւորապէս Լազաքէ, Թուրքա և Ֆիլիպպէ:

Կակուղ ցորեանը կը հասնի Պուրդազ և Վառնա և կարծր ցորենը Իսմայիլ և բոլոր Ռումէլի:

Բոլոր տնտեսագէտք Տանկաստանի երկրաբանութեան համար համաձայն կ'ենեն թէ Ձկայ երկիր մը որ Տանկաստանի պէս ամեն բերք հաւաքեալ ունենայ. ասոր պատճառն է երկրին տարածութիւնը և հիանալի բարեբերութիւնը՝ այսօրուան օրս անգամ բաւական ցորեն արտահանութեան կ'երթայ: Սակայն միևնոյն տնտեսագէտք համաձայն կ'ըսեն թէ այն արտահանութեան երկրագործութեան յառաջադիմութիւնը չչափուիր. և չորս գլխաւոր պատճառօք երկրագործութիւնը յետամնաց է. այսինքն՝ Ա. Բուզկի պակասութիւն. Բ. Դրամագլխոց պակասութիւն. Գ. Մշակոց տղիտութիւն. Դ. Կարգաւորեալ հաղորդակցութեան ճամբաներու պակասութիւն:

Մխախոս. — Երկրագործական բերոց մէջ նշանաւոր կարգ

մը կը բռնէ ձխախոտը և տարեկան քաղման առատութեամբը Օսմանեան պետութեան մեծ հատոյթ մը կը ձևացընէ:

Մի առ մի բնենք իւրաքանչիւր զաւառին բերքը:

Սէլանիկի զաւառը տասը տեսակ ձխախոտ ունի. որոնք եւնիճէ-Գարասու, Սարը-Շապան, Տրամա, Բրալիչա, և Գավալայէն կուգան:

Ենիճէ-Գարասու տարուէ տարի 692,500 բաշ ձխախոտ կուտայ և ասոնց 99,000 բաշըը Տէրութեան ամենէն պատուական ձխախոտն են: Ենիճէ և Սարը-Շապան՝ մէկ ոտք ձխախոտ քսան, քսանըմինգ տերև կ'ունենայ. մինչդեռ Տրամա և շրջակայքը քսանըմինգէն մինչև երեսուն տերև կը հասցընեն:

Սարը-Շապանի ձխախոտը՝ Ենիճէ-Գարասույէն ևտըը ամենէն մեծ համբաւը ստացած է և տարին 292,000 բաշէն աւելի կը բերէ:

Տրամա և շրջակայքը՝ տարեկան քաղումը 633,000 բաշ ձխախոտ կը հասցընեն:

Բրուլիչա և Գավալա ի միասին 458,000 բաշ կը բերեն :

Եանիա զաւառին մէջ մշակուած ձխախոտըը բազաատութեամբ Սէլանիկի զաւառին ձխախոտներուն, տեսակաւ ստորնագոյն է, թէև գոյնը աւելի աղւոր ալ ըլլայ: Եանիա զաւառին ամենէն ընտիր ձխախոտըը Էրմիլէ, Բէրբալ, Գարաման և Կէսիկ զիւղերէն կ'ելլէ: Տարուէ տարի 48,000 բաշի կը հասնի: Եւ սակայն ուրիշ ձխախոտոյ խառնուելով աղէկ ձխախոտ կ'ըլլայ: Սովորաբար Բիւրսըչանի և Չամբլի հետ կը խառնեն: Էտիրնէյի վիլայէթին ձխախոտըը բիշ են քանակութեամբ և տեսակաւ ստորին:

Ռումէլիի ձխախոտոյ տարեկան արտահանութեան վրայ զաղափար մը տալու համար բաւական կը համարիմ օտարազգի հիւպատոսի մը առ տէրութիւնն ուղղած վիճակագրէն (rapport) էն յողուած թիւքը դնելը:

Արդարև այն վիճակագրին հետևելով 1860 տարւոյն Գավալայի նաւահանգստին ձխախոտոյ արտահանութիւնքն էին 400,000 հազարակրամ ղէպ ի Գաղլիա, 550,000 Անգլիա, և

գրեթէ 650,000 Աւստրիոյ համար: Միայն այս նաւահանգստէն ելլող ծխախոտը 3,400,000 հազարակրամ է և օտարազգեաց վաճառուած ծխախոտոյ  $\frac{2}{3}$  բը կը կազմէ: Մնացորդը տէրու- թեան այլևայլ կողմանք կ'սպառուին:

Զմուռնիոյ գաւառը որ ճոխ է ամեն տեսակ բերօք, բողոզա- տուծեամբ բարեբերութեանը՝ խիստ բիշ ծխախոտ կը հասցը- նէ: Զմիւռնիոյ գաւառին լաւագոյն ծխախոտքը Սարայ-Ալթը և Գիւրսէն-Գարիեսիլէն կուգան:

Երևտավէնտիկեար գաւառին մէջ ալ բիշ ծխախոտ կը մշակ- ուի:

Թրապուզանի գաւառին մէջ խիստ շատ ծխախոտ կը բողոզի և ածան կը ծախուի և խառնուրդի համար առաջին կարգի ծխախոտ է աղուոր գոյն մը և հաճոյ ճաշակ մը կուտայ:

Թրապուզանի գաւառին մէջ ընտիր ծխախոտ բերող տեղ- ուանքն են Պաժրա (Ալանամի միասին). Չարշէմպիհի և Սամ- առն: Ասոնց տարեկան բերքն 550 է 650 հազար պամմանի է:

Փորձուած է թէ Պաֆրայի և Ալանամի ծխախոտքը ժամա- նակաւ գեղեցիկ գոյն մը և ընտիր ու հաճոյական ճաշակ մը կ'ստանան. մինչդեռ ընդհակառակն Սամսոնի, Չարշէմպիհի և ուրիշ քանի մը տեղերու ծխախոտքը սպառման առաջին ա- միսներուն ամենահաճոյ կերպարանք և համ մ'ունին. սակայն երկու կամ երեք տարիէ ետքը կը կորսնցունեն այս յատկու- թիւններէն շատը:

Սախտայի գաւառը (յԱսորիս) երկու տեսակ ծխախոտ կը հասցընէ, մէկը Մէհալիէ-Պէնի-Ալիլէն և միւսը Սէսէր-Քիլէ- յէն կուգայ, առաջինը Լաքաբիէ անուամբ կը ծախուի և միւսը Ապու-Ռէհա: Այս ետքի ծխախոտը մեծաւ մասամբ Եգիպտոս և Եւրոպա կը ղրկուի:

Ծխախոտոյ մշակութիւնը Տանկաստանի հերկագործական զբաղմանց մէկն է: Բարեխառնութիւնը և հողոյն բնութիւնը ղիւրացուցած են այս տնկին մշակութիւնը Եւրոպիոյ և թէ Ասիոյ Տանկաստանի մէջ:

Շատ գաւառաց մէջ և մանաւանդ Մակեդոնիոյ մէջ երկրին

$\frac{1}{10}$  բը ծխախոտոյ մշակութեան պահուած է, և ինչպէս որ տե- սանք տեսակաւ ալ ընտիր են:

Ծխախոտոյ տեղական սպառումը ամեն երկիրներէ աւելի է Տանկաստանի մէջ: Անկարելի է հաշուել թէ որչափ ծխա- խոտ կ'սպառուի տարւոյ մը մէջ, վասն զի գրեթէ ամեն մարդ շատ կանայք և նաև մանկտիր ևս կը ծխեն: Սակայն այսչափ կրնանք ըսել թէ Տանկաստանի ամբողջ բնակչաց զոնէ մէկ քա- ոորդը կը ծխեն և անձ զլուսի միջին հաշուով 6 բաշ ծխախոտ կ'երթայ տարին:

Հիւսեյի նիւթ մեքախու եւայլն.— Նշանաւոր են Զմիւռնիոյ, Ամասիոյ, Շիրոյի և Եանեսայի կանեփքը: Կանեփեայ լարք թէ և ածան են գոտի, սակայն աղէկ պատրաստուած չեն, թոյլ և ղի- մացկուն չեն. և ահա այս պատճառաւ հարկադրուած ենք Եւրոպայէ շատ չուան ընդունելու, մինչդեռ Տանկաստան իրեն անատապկու բաւեցնելէն զատ օտարազգաց ևս անբաւ չուան կրնար ծախել, որովհետև նախնական նիւթը, կանեփը առատ է և ածան:

Ընդհակառակն քծանէ լարերը և առասանները հազուադիւս կատարելագործութեամբ շինուած են. սակայն գներնին շատ բարձր են:

Բուրդը բոլոր Օսմանեան պետութեան մէջ առևտրոյ մեծ նիւթ մ'է մանաւանդ Պուլղարստանի և Դանուբայ չրշեղջին մէջ, որք մեծաւ բանակութեամբ Դրանսիլվանիա և Կարիցիա կը ղրկեն ի վաճառ, ինչպէս նաև ի Մորաւիա և Սլեւիա: Այս ապրանքը նաև Դանուբայ միջոցով մինչև Վիէննա, և ծո- վու միջոցով Դրիէսց, Մարսիլիա և նաև Ղորանտա կը ղրկեն. իսկ հասարակ բրդերը երկրին մէջ կ'սպառուի: Առևտրոյ մէջ Չուրբաքա, Նիցիլ և Դուրցիլանա անունները կը կրեն:

Առաջինը ճերմակ կամ աղբրէկ, երկայն և հուասար է. երկրորդը սև և ճերմակ խառն է և երրորդը որ ամենէն հասա- րակ տեսակն է սև կամ մոխրագոյն է:

Դանուբայ գաւառին արտահանութեան ղրկած բուրդը չիղայս կ'անուանուի և ընտիր է:

Զմիւռնիոյ վաճառականութեան մէջ ծանօթ երեք տեսակ բրդերը երկնեւն են որ շրջակայոց և Գօ՛րայի ու Գարա-Հիւսարի խաշունց բերքն են: (տես § 5. Էտիրնէյի բուրդը:)

Մինչև հիմա անկատար վիճակադրոց հետեւելով՝ միջին հաշուով բրդոյ արտահանութիւնն Գանուբական գաւառաց կ'ելլէ 2.150.000 բաշի առ տարի: Զմիւռնիոյ՝ 3.200.000 բաշ: Էնէզի և Ռոտտոյոյի նաւահանգիստներէն 6.000.000 բաշ բուրդ կ'ելլէ: Սէլանիկի նաւահանգիստը 2.500.000 բաշ կը զրկէ օտարաց: Էնկիւրիւյի այժու մագերուն արտահանութիւնը տարուէ տարի 312.000 բաշի կ'ելլէ: Շամայ գաւառին արտահանութիւնը 624.000 բաշի և Լաթաքիէյինը 235.000 բաշի կ'ելլէ: Ուտի միջին հաշուով Օսմանեան պետութեան բրդոյ տարեկան արտահանութեան բովանդակ գումարը 14,674,000 բաշի կուզայ:

Շերամբուժութիւնը Օսմանեան պետութեան բոլոր ասիական գաւառաց և մանաւանդ Ռումէլիյի և Պուլըարստանի մէջ տարածուած է:

Ամենէն աղւոր երեցող սանկական բժոժները Մանասքրի, Քոնովայի, Սէլանիկի և Կոստանդնուպոլսոյ են. յետոյ կուզան Զմիւռնիա և Խիւսալէցսիկեարի վիլայէթը (Պրուսա, Իզմիրիս, Ասաբազար, Կէյլէ, Ագ-Հիսար, Գարամուսալ, Եալովա, Կեմէլիք, Բազար Բէոյ, Մուսանիա, Մահլըն, Պանքսմա, Գարուսաղ, Էրսէք, Տէմիրսէք, Օվաքէոյ, Բիքէ, Հարմանքըզ, Ճէպէլի, Ասրանոս, Եէնիքէնի, Իյնէկէոյ, Եարհիսար, Իզմիր Լէքէ, Սէոյիւս, Կէոլ-պազար, Պիլէնիք, Բիւպլի, Իյնէսար, Թօրպալը, Նարլը խան Սիլալ, Պարբէրի, Բէօրահեա), Գօնալիի, Ամասիա, և Պիղա սանճագներ:

Ուրիշ շատ տեղուանք նաև շերամբուժութեան կ'զբաղին. թմենիք շատ տեղուանք կը տեսնուին և այս պիտանի ծառոց մեծամեծ անտառներ կը գտնուին Սև ծովու ափանց վրայ:

Մէկ տիրոջ մ'շերամի սերմն, ընդհանուր կարծեաց հետեւելով 3 բաշ և 50 տիրոջ մ' բժոժ կուտայ, որմէ 195 տիրոջ մ' մետքս կ'ելլէ:

Պրուսա քաղաքը բազմաթիւ մետաքսի զործարաններ ունի ըստ եւրոպական ոճոյ. զրեթէ հարիւր մանարան կայ, իւրաքանչիւրը 40-60 ճախարակ ունենալով, որոնք ամենը ի միասին 5000 ճախարակ կը ձևացընեն: Մանուածքը այնքան տարածուած են այս քաղքիս մէջ որ կրնանք ըսել թէ տասը տան վրայ չորսը բանի մը ճախարակ ունին որոնց վրայ ձեռք բաւական մետաքս կարծ կը զործեն:

Պրուսայի կայսերական մանարանը մեծ շէնք մ'է ուր 60 ճախարակ կը բանին, որոնք ամիսը 200-240 բաշ ճերմակ և ղեղին աղւոր անթափ (խամ) մետաքս կրնան հասցընել: Այս մանարանին բերքը միջին հաշուով տարուէ տարի 792,000 զահեկանաց գումար մը կը ձևացընէ:

Պրուսայի համբաւաւոր մանարանաց մէջ անուանի են Պ. Պրոդի զործատուներ, յետոյ Պ. Սարիմ-Մանասայ երկու մանարանքը, որուն զործատան նիշը F. M. Լիոնի վաճառականութեան մէջ ծանօթ է և բաւական գումար մը կը ձևացընէ. այս զործատանց բերքը սքանչելի են:

Այս երկու զործատանց իւրաքանչիւրն ալ նմանապէս 60 ական ճախարակ կը բովանդակեն: Ի միասին տարուէ տարի 200 հակ մանուած մետաքս կը հայթայթեն, իւրաքանչիւր հակ 50-65 բաշ կշռելով: Այս 10,500 բաշի (14,375 հազարակրամ) միջին քանակութիւնը ամբողջապէս արտահանութեան կ'երթայ: Գաղղիական առևտուրը Պ. Սարիմ-Մանասայ մետաքսին բաշին 80 ֆունց կը վճարէ (63 ֆունց հազարակրամը) միջին ընթացքով: Այս երկու մանարանաց խառն (brut) եկամուտը տարին 920,000 ֆունց է:

Անզործ մետաքսի, բժոժի, շերամի սերմանց և այլ շերամբուժութեան բերոց արտահանութեան վաճառականութիւնը Օսմանեան պետութեան համար տարեկան անբաւ եկամտոյ մը աղբիւրն է: Այսօրուան օրս ծանօթ է մեզի թէ՛ միջին տարւոյ մը մէջ միայն Պրուսա քաղաքը 40 միլիոն ֆունցից անզործ մետաքս կը զրկէ ի վաճառ, յետոյ կուզայ Զմիւռնիա 25 միլիոն ֆունցից մետաքսի արտահանութեամբ. Էտիրնէ՛ Ռումէլիյի

նաւահանգստաց միջոցով ամեն տարի արտաքին վաճառակա-  
նութեան 14 միլիոնի շերասական բերք կը մատակարարէ:  
Վերջապէս տէրութեան ուրիշ վաճառատեղիք Նկոտրա, Վօլօ,  
Թրապուզան, Էրզրում, Սամսոն, Թրիբօլի (Ասորիք) Իմպրօ,  
Սամորակէ, Սաբբզ և Կիրիտ կղզիք, Կիպրոս՝ ուր երեք մա-  
նարանք միայն 508,000 ֆունդնոց մետաքս կը հասցնեն վա-  
ճառականութեան, և որով ընդհանուր հարստութեան իրենց բա-  
ժինը կը բերեն: Բոլոր այս վերոյիշեալ տեղուանք ի միասին  
100 միլիոն ֆունդէն աւելի բարձր գումար մը կը կազմեն:

Գաղղիական առևտուրը այս բերոց մեծ մասն կը գնէ և մէկ  
պզտիկ մասն ալ Անգղիոյ նաւահանգստաց կ'ուղղի:

### Մեւսաղփ.

Ամեն յարգի մետաղք ցիր և ցան սփռուած են բոլոր Ասիոյ  
և Եւրոպիոյ Տանկաստանի մէջ:

Թէև բնութիւնը ինքնին ճօխ է և առատապէս ամեն պիտո-  
յից համար յարգի մետաղք, աղ, մարմարիոն և այլն իր ծոցոյն  
մէջ պահած է, սակայն այս թանկագին գանձերէն շատերը ան-  
ժանօթ ու աննշան մնացած են և տէրութիւնը ետևէ չէ եղած  
նորանոր բովք և հանք ի լոյս ընծայելու, շատերը թէև ծանօթ  
են, սակայն անխնամ երեսի վրայ՝ ողորմելի վիճակի մէջ ձըզ-  
ուած են: Ապա թէ ոչ եթէ լաւ մը բնենք, մեր երկիրը ամեն  
եւրոպական տէրութիւններէ աւելի հարուստ է ի բնուստ: Ամեն  
ուրիք տեսակ տեսակ հանք կը յայտնուին և յերևան կ'ելլեն,  
սակայն չենք գիտցած մինչև այսօր անոնց մեզի ընծայած բեր-  
քը մեզի օգտակար ընել և արուեստքը և երկիրը բարգաւաճել:

Համառօտ ցուցակով մը յերևան հանեմ քանի մը գլխաւոր  
հանքը մի առ մի. սակայն պատուական ընթերցողը ներեն մե-  
զի մեր տկարութիւնը, որովհետև արգելք և խափանք պակաս  
եղած չեն այս զբոբիկիս շարադրութեան ժամանակ, և արդէն  
իսկ ամենքս ալ գիտենք թէ Օսմանեանք իրենք անգամ իրենց  
հայրենեաց մետաղացը վրայ գոնէ բիչ մը լոյս տալու զիրք  
կամ տետր մը չունին:

**Ոսկի.** — Էջիճ չայր ջրէղջին մէջ՝ ուր ժամանակաւ Բախ-  
դար համբաւաւոր էր ոսկեբեր աւազօրք, Հանի-Բէօյիւ (Ամա-  
սիոյ մօտ) Սարայ սաղր և Ալլոնիցա (Դրաւնիքի մօտ), Վօլօյի  
կողմերը և բոլոր կապարահանաց մէջ: Վալախիոյ գետեր ոս-  
կեբեր աւազներ կը բշեն: Ոսկելուացը Դիմօք և Բէք գետերուն  
եզերքը կը կատարուին:

**Արծաթ.** — Եէնի-Պազար, Տրիմաք, Պէհիք, Սըվազ, Քէ-  
պան, Շապան-Գարահիսար, Խչ-Բէօյիւ, Օրսու (Սամսոնէն  
8 ժամ հեռու, ծովափանց մօտ), Հանի-Բէօյիւ, Պուլարա-  
ղը (Դօնիս), Բօզան սաղր, Կիւմիւլիսանէ, Պաքր չայր:

**Արծաթախառն կապար.** — Թէսալիա, Էպրուզ մա-  
նաւորապէս Էրէնիք լեռան վրայ Տէփէտէլէնի հարաւակողմը.  
Բէլլինց լեռան կողին վրայ՝ Վօլօյի կողմերը. Բարաղօլա, Օխ-  
րիսա, Քիււղէնիլ, Բալքանիլ, Ամասիա, ձանիկ, Խուկիւպ,  
Սէլանիկ, Իզմիր, Թրապուզան, Կիւմիւլիսանէ, Պոսնա, Սը-  
վազ, Պուսովազ, Տրամա, Հանի-Բէօյիւ, Նիքդա, Իզմիս,  
Ասանա, Պօզուք, Արղանի լեռանց վրայ Դուլուսի մօտ. Քիան,  
Սարուխան: Այս հանքերուն շատերը բանուած չեն:

**Հանգաձուլ.** — Սերվիա, Ալպանիա, Ռուսէլի, Եան-  
եա Դրաւնիքի մօտ Պալքանաց ստորոտը՝ Կրէէ, Եէտի Բուլէ-  
յէն բիչ հեռու Քիլմիլի և Չոնկլ Տաղը, Իզմիր, Այսըն, Մէն-  
դէշէ, Գարահիսար, Էրէկիլի:

Էրէկլիլիի հանքածուխը թէև Անգղիոյ հանքածխոյ չհաւա-  
սարիք, սակայն շատ աղէկ կը գործածուի գործարանաց և  
չողենաւուց:

**ՍՈՂԻԿ.** — Ֆոյնիցա, Սիւրդիսա, և Քրիսսիօլօ, այս ե-  
րբքն ալ երեսի վրայ ձգուած են:

**Աղուճակ.** — Առատապէս կը գտնուի Փոքր Ասիա և մա-  
նաւանդ Քրզլլ-Լիման, սակայն շահաւոր չէ առևտուրն և  
ղծարդաբար չեն բանուիր, որովհետև հաղորդակցութեան մի-  
ջոցը կը պակսին, սպառողքը հայժայժողաց հետ հաղորդակ-  
ցութեան ղենլու համար:

**Սըկաթ.** — Պոսնիա, Սերվիա, Պուլարասան, Վալախիա,

Վիլհելմս, Վոյնիցա, Պուսսովաց, Վիսսոֆ, Պալան լեբինը, Տարու, Սամախով, Մէյսան, Նովի Մէյսան, Սարը-Մէյսան:

**Ադախանգ.** — Տանկաստանի աղահանքը բազմամիւ են. Ռիմնիք, Օքնա, Պոզուք, Ֆոլերի կամ Ֆոչա, Գոնիա, Բոչ-Հիւար Իզմիրի մօտ, Գըպըրգ, Հայէպ, Ճէպուլ, Չամ ալքը, Ասա քեփէ, Չանկըրը, Չանսարըր, Մէնէմէն, Գուս ասսար, Գարապաւ, Սեօլիս, Բանայիա-Փօսորի, Գազըրը, Գարաւէլիս, Կիւլ պահնէսի :

Ճէպուլ կամ Հալէպի աղահանքը Սէպա անուամբ երկու լճերէ ձևացած է, որոնք ամառը կը պնդանան. տարին 16,-250,000 բաշի կ'ելլէ բերքը : Նմանապէս Կիպրոս կղզւոյն Քուլլա, Լիմասոլ և Քորմախիզ բաղաբաց աղերն ալ նշանաւոր են. առաջինէն 6 հազարամեղր հեռու լիճ մը կայ 8 հազարամեղր շրջապատով. ամառը այս լճին ջրերը կը պնդանան և Օդոստոս ամառն կը բերեզանան :

Կան նաև Ռուսնուգ, Ահ էօլու (Անքէալոս), Սէլանիք, Վօլօ, Սէֆըրոս, Գարապուրուն, Պէրաք, Գալալա, Վալոնա, Նարսա, Պոսնա, Էնոս, Ենիկէօլիւ, Գարա-աղան, Գուլէի, Սարը-Շապան, Էրգոն, Խարբուք, Տիարպէֆիւր, Պաղսաս, Ճիսսէ, Պուլսուր, Վան, Ասանա, Սյվալը, Միսիլի, Կէմլէիք, Կիբիս, Լիմնոս կղզին, Իմպրոս կղզին Սէլանիկի մօտ. Տանկաստանի աղի բերքն տարին 200 միլիոն հազարակրամի կ'ելլեն :

**Պղինձ.** — Սարը Էար (Կոստանդնուպօլիս), Թրապուզան, Պուրա ի Նուհաս, Կիւմիւիսանէ, Արղանի, Բալվանիլ, Բիւսքէնիլ, Էլէն (Թրապուզանի մօտ), Գազըրը, Գոնիայի պղնձահանքը բոլոր աշխարհիս ամենէն ճոխ պղնձահանաց մէկն է. Թօգաք, Թօգաթի պղինձը երեք տեսակ է. 1<sup>o</sup> Կարմիր Թօգաթ. 2<sup>o</sup> Թօգաթ աղւոր վարդեգոյն. 3<sup>o</sup> Թօգաթ վարդեգոյն: Թօգաթը տարին 300,000 բաշ պղինձ կուտայ և Էլէոնը 350,000 բաշ:

**Պողտի.** — Լիմնէս (Շապան-Գարահիսարայ մօտ), Շապանէ (Բէօթահիա), Թրապուզան:

**Մարմարիոն.** — Պալան լեբին, Մարմարա կղզի,

Պանսրմա, Ֆէնէր պահնէսի (Կոստանդնուպօլիս) :

**Վանակն** (cristal de roche). — Սօփիա, Ճանիկ, Պոսնիա և Սամոս կղզին:

**Քարածիւք** (pétrole). — Վալախիա (Ուլաճ):

**Շճումք.** — Մուսուլ, Շէրուզան, Օխրի:

**Շովալիփուր.** — Մանիսսա, Էսկիեքիլ, Բէօթահիա, Գարահիսար:

**Կալիք.** — Շամ, Գոնիա, Օխրի և Բէօսքէնէ:

**Կապար.** — Ամապիա, Ճանիկ, Իսկիւպ, Սէլանիկ, Չիլուքիա, Թրապուզան, Պոսնիա, Սըվազ, Պուսսովաց, Տրամա, Նիֆա, Արղանի, Ասանա, Հանի քէօլիւ, Պուլլար Տաղը, Իզմիս, Պոզուք, Բիսն, Սարուխան, Գարապոլա, և Սամոս կղզի: — Շատերը բանուած չեն :

**Քրածոյք.** — Որոնց մէջ պղինձը՝ հրաբարի, կապարի, կալյոց հետ խառն կը գտնուի, Թրապուզան, Արղանի, Խարբուք, Պողսա, Էրգոն, Գասքամպօլու, Մուսուլ, Պալքէսի, Գըպըրգ, Պոսնա. Գարասալ :

**Հալոցք.** — Բիսուրա, Բալանգա, Ռիէֆա, Սամախով (Պալքան լեբանց մէջ Կոստանդնուպօլիսէ 30 ասպարէզ դէպ ի հիւսիս, Վառնայի արևմտեան կողմը, 12 հրահալէբաց հալոց ունի և տարին 12 միլիոն հազարակրամ երկամ կը հայթայթէ զամբիլինի, դանտիկիլինի կայն): Ռաուլայի հալոցը, Արշիպէղազոսի վրայ Գալալայէն 4 ասպարէզ հեռու, տարուէ տարի 5 միլիոն հազարակրամ ձուլածոյ երկամ կը հայթայթէ:

Կան նաև Էյրի Բալանգայի (Մակեդոնիա) Սէրայէվօյի (Պոսնիա) Պուզէնի-Մէյսանի, Սլարի-Մէյսանի և Լամէնկրասի հալոցները կայլն:

Սակայն հրահալէբաց ձոյլը ամենէն անկատար և հիւսօրէն միջոցներով ըլլալուն տեղ կայ որ մետաղին վրայ 100 ին 20 կը կորսուի: (1)

(1) S. E. Salaheddine Bey. — La Turquie, à l'Exposition universelle de 1867.

Մովսիսիփուր. — Մովսիսիփուրը (լիւլէ Թաշը) Թէև ներքին գաւառներու բերք մ'է, սակայն Չմիւռնիոյ նաւահանգստին զլխաւոր արտահանութիւններէն մէկն է: Գլխաւոր հանքերը Էսկիշէհիբին հարաւային արևելեան կողմը կ'իյնան: Այս քաղքիս բնակիչքը 12,000 հոգի են Հայ և Օսմանցի և ամէնն ալ ծովափրփուրի հանմանը և արտահանութեանը կը պարպին: Մովսիսիփուրոյ գլխաւոր խաւերը քաղքէն 1-3 մղոն հեռու են և «Սէփէթճի օճաղը և Քէմիքճի օճաղը կը կոչուին :

Այս ապրանքը բուն ելած տեղը կը գնուի և չափ ու կշիռ չունի, հապա աւանդութեամբ առաջ եկած քանակութեամբ մը կը ծախուի որ է «երեք պարկ կամ պիւր արապա տօլուսու» և ասոր զինը տեսակին համաձայն կը տարբերի. երեք պարկին զինն է 500 էն մինչև 3000 դահեկան:

Մովսիսիփուրը հողէն հանուած ժամանակէն մինչև որ օտարաց ծախուելու կերպարանն առնու, իր ծանրութիւնը և ծաւալին  $\frac{2}{3}$  կը կորսնցնէ, Թէ շոշափմամբ, Թէ մաքրուելով և Թէ չորցուելով: Որովհետև հողէն լաւ մը զատելէն ետքը, ծովափրփուրը ամառուան եղանակին 5 կամ 6 օր և ձմեռը 8 կամ 10 օր լաւ պատսպարուած և չերմ տեղերու մէջ կը չորցընեն և ետքը մեղրամոմով փայլեցնելով բամբակով պատած սնտուկներու մէջ կը զետեղեն որպէս զի չշոշափուին: Մնտուկները 24 էն մինչև 35 քաշ կը կշռեն ծովափրփուրոյ կտորուանաց մեծութեանը կամ պղտիկութեանը նայելով:

Միջին տեսակ ծովափրփուրոյ սնտուկ մը հիմա 12 Օսմանցի ոսկի կ'արժէ, բայց այոր զինը եւրոպական վաճառատեղեաց սպառումէն կը կախուի :

Մովսիսիփուրը մեծաւ մասամբ Վիէննա և Գերմանիա կ'երթայ և արտահանութիւնը տարուէ տարի 8-10,000 սնտուկ է գրեթէ 3,000,000 ֆրանկ արժէքով:

Տէրութիւնը այս ապրանքէն 25% տուրք կ'առնու, այսինքն 12  $\frac{1}{2}$ % անզուտ ապրանքէն և 12  $\frac{1}{2}$ % արտահանութեան ժամանակ. բաց ասկից սնտուկ զլուխ ալ՝ մաքսային տուրք մը կ'առնու:

**Կեհդաւիք.** — Եւրոպիոյ մէջ 3 միլիոն զլուխ արջառէն աւելի չկայ. սակայն պարարտ արօտից օգնութեամբ արջառք ուժեղ են, նա մանաւանդ Պոսնիոյ, Սերվիոյ և Վալաքիոյ մէջ: Եղջիւրաւոր անասունք միայն հերկման և բեռանց համար կը դարմանուին և ոչ իրենց մտոյն համար. Տանկաստանի բնակիչք ընդհանրապէս եղջիւրաւոր կենդանիք չեն ուտեր: Պուլղարստանի, Բարձր-Ալպանիոյ և Թրակիոյ զոմէշք ևս միայն վերոյիշելոց համար կը դարմանուին:

Մոլտաւիան հասակաւ պղտիկ շատ ձիեր կը մեծցընէ, որոնք Ռուս ցեղին հետ նմանութիւն մ'ունին: Ռումէլի և Թեսալիա ևս շատ ձի կը մատակարարեն Յունաստանի:

Ոչխարք բազմաթիւ են Ռումէլի, Թեսալիա, Վալաքիա և Պոսնիա. բրդերնին բաւական աղէկ է բայց ոչ միշտ ընտիր: Այժք լեռանց վրայ կը մեծնան: Այս անասնոց միսը Տանկաստանի բնակչաց զլխաւոր սնունդն է: Խոզք բազմաթիւ են և վայրենի վիճակի մէջ կ'ապրին շատ գաւառաց մէջ:

Ասիոյ մէջ. Երիվարք բաւական աղւոր և արաբական ցեղէն են. ջրիք կորովի են. էշք Եգիպտոսի էշերուն չեն հաւասարիր: Ուղտք բազմաթիւ են և մեծամեծ ծառայութիւններ կը մատուցանեն. բազմաթիւ ոչխարու և այծու հօտեր Փոքր Ասիոյ դաշտավայրից և բլերց վրայ կ'ապրին: Ամենուն ծանօթ է Էնկիլիւրիւի այժը որուն երկայն ստեղ մետաքսափայլ է և արուսեկի պէս սպիտակ: Անգղիա այս մետաքսին մէկ մեծ մասը կ'սպառէ:

Ոչխարք առատ բուրդ կը հայժայթեն, սակայն ընդհանրապէս տեսակաւ ստորին :

Յարգի սպունգը կ'որսացուի Ասորոց արիանց վրայ (Լաթաքիէյէն մինչև ի Թրիբօլի) և բոլոր Արշիպեղագոսի արիանց վրայ: Ամեն տարի 300 մակոյկ Յոյնք և Արարացիք այս յարգի պողիպտոք որսալու կ'երթան, որն որ առւտրոյ մեծ նիւթ մ'է: Որք Յունիս ամսոյն առաջին օրերուն կ'սկսի և հոկտեմբերի հետ կը լննայ :

Շերասը և մեղուն ազնիւ բերք կուտան: Անուանի է Էնկիւ-

րիւյի մեղրը: Սակայն մարտի ամսեր ամբողջ գաւառներ կ'ապականեն:

Բիւրտիստան և Ասորիք առատ տգրուկ կ'որսացուի:

Մաւկեղէնք. — Մորթավաճառքը նշանաւոր են Անատոլոյի մանաւանդ Զմիւռնիոյ գաւառին մէջ: Վահառականք սովորութիւն ըրած են և ապրանքը ընդունելէն 3-4 ամիս առաջ այն ապրանքը ինչ արժէք որ ունենայ անոր  $\frac{2}{3}$  քը կանխիկ իբրև առհաւատչեայ, վաճառատեղին կը համրեն: Նապաստակի, այծու և գառնուկի մորթէն զատ, ուրիշ ամեն տեսակ մորթերը ներքին գաւառներէն կուզան ուղտի բեռով (200 քաշ) և կամ երկամուղով:

Զմիւռնիոյ գաւառէն տարին 40,000 կովու և եզան մաշկ կ'ելլէ, հատը 4-5 քաշ ծանրութեամբ և քաշը  $10^{\frac{3}{4}}$ - $13^{\frac{1}{2}}$  դահեկանաց = 100 հազարակրամը 175-220 ֆռանգաց: Այս ապրանքը զլիւստրապէս Իտալիա կ'երթայ, ուր թեթև մաշկերը աւելի կը յարգեն: Այծու և պղտիկ գառնկան մորթքը Զմիւռնիոյ շրջակայքէն կուզան 15,000 ի չափ և Դիկտեմբերէն մինչև Մարտ կը ծախուին 6,55-8,90 դահեկանաց = 1,35-1,90 ֆռանգաց: Տասներկու այծու մորթը  $2^{\frac{1}{2}}$ -3 հազարակրամ, և տասներկու գառնուկի մորթը 4-6 հազարակրամ կը կշռեն: Մորթոյ արտահանութիւնը շատ աւելի կրնար ըլլալ եթէ չորացումը աւելի խնամօք կատարուէր:

30,000 էգ խարբուզ (chevrettes) կը ծախուի Յուլիսէն մինչև Նոյեմբեր. 12 հատը 8-11 հազարակրամ կը կշռեն և հատը  $8^{\frac{3}{4}}$ -9 դահեկանաց կը ծախուի = 1,90-2 ֆռանգաց, և կուզան Մասլը, Բըրբաղան, Ազհիսար և Բընիբի գաւառներէն. ծովեզերեայ տեղերուն ապրանքը վարի աստիճանի են:

Մայիսէն Յուլիս 110,000 հատ գառնուկի մորթ կ'իջնայ նաւահանգստաց, տասներկու հատը 10-12 հազարակրամ կուզայ և հատը  $8^{\frac{3}{4}}$ - $9^{\frac{1}{2}}$  դահեկանաց կը ծախուի: Այս բերքին  $\frac{6}{8}$  քը Անգղիան կը գնէ և  $\frac{2}{8}$  քը Դրիէսը:

Ոչխարի մորթը տեղացի խաղախորդք կը գնեն: 1872 տարւոյն բրդոյ գնոյն բարձրութեանը պատճառաւ, շատ մորթ ղըր-

կուեցաւ Անգղիա, այս մորթերը  $1^{\frac{1}{2}}$ -2 քաշ կը կշռէին և հատը  $13^{\frac{1}{2}}$ - $15^{\frac{3}{4}}$  դահեկանաց = 3-3,50 ֆռանգաց ծախուեցան:

Զմեռուան եղանակին գրեթէ 40,000 նոխազի և այծու մորթ կուզայ Զմիւռնիա բոլոր շրջակայքէն: Այծը  $1-1^{\frac{1}{2}}$  քաշ, և նոխազը  $1^{\frac{1}{2}}$ -2 քաշ կը կշռէ: 3 տարի է որ այս ապրանքը Գաղղիա և մասնաւորապէս Իտալիա ղրկուելու սկսան, և իրենց տեսակին և վաճառատեղեաց առևտրոյն համեմատ բարձր և կամ ցած գնով կը ծախուի այսինքն քաշը  $10^{\frac{1}{2}}$ - $13^{\frac{1}{2}}$  դահեկանաց = հազարակրամը 170-220 ֆռանգաց:

Տարուան մը մէջ 550-400,000 նապաստակի մորթ կ'ելլայ յարտահանութիւն. ասոնց 100 հատը մէկ ծրար կ'ըլլան և 160-250 դահեկանաց =  $37^{\frac{1}{2}}$ -55 ֆռանգաց կը ծախուին:

Մաշկեղինի առևտուրը կանխիկ ստակով կը կատարուի:

### § 8<sup>o</sup> — Երկրաբանութիւն և երկրագործութիւն.

Տանկատանի փլորայն գրեթէ միևնոյն կը համարին եւրոպական հարաւային երկու մեծ ցամաքակղզեաց փլորային հետ: Եւ սակայն մեծ զանազանութիւն կայ Դանուբայ շրջեղջին և Պալքանայ հարաւակողման գաւառաց բուսաբերութեան մէջ: Դանուբայ շրջեղջին անտառացը փայտերն են շոճիք, փիճիք, կաղնիք (որ Վալքնէա խոզկաղնիը կուտայ, որն որ խաղախորդուց կը ծառայէ), Թանթրուենիք և ցախք. ասոնցմէ զատ տանձի, խնձորի, կեռասի և ծիրանի ծառերը ընդարձակածաւալ գաւառաց մէջ երկիրը կը ծածկեն:

Պալքանայ հարաւակողման գաւառաց մէջ այս ծառերը միայն լեռնակողմանք կը գտնուին. մինչդեռ ցած երկիրներու մէջ կը մեծնան հացիք, եղջիւրենիք, նշենիք, ժանտամզենիք, ընկուզենիք, շագանակ, տոսախ, մրտենիք և դափնին: Պոսնիոյ մէջ կը գտնուին նաև շոճույ և եղևինի անտառներ:

Զիմենին Ալպանիոյ ծովափանց զաշտերուն մէջ կը յաջողի, ուր նաև նարինջ և կիտրոն կը մեծնան:

Որժը ամեն գաւառաց մէջ կը մշակուի, թէև Դանուբայ հովտին մէջ խաղողը շարքարային նիւթ քիչ ունենայ: Արտահանութեան համար քիչ մը զինի կը պատրաստուի, սակայն այն ալ անչափ անհոգութեամբ կը պատրաստեն որ ծով անցնելու չգար: Մինչդեռ Կրետէ և Կիպրոս Վենետիկեցոց ձեռքն էին, այն ատեն բոլոր Եւրոպիոյ՝ սեղանի պատուական զինիներ կը հայթայթէին: Հիմա այն ժամանակուան հետ բաղդատելով՝ երկու կղզեաց բերքն ի միասին, առաջնոյն  $\frac{1}{10}$  ն չելներ:

Այգեստան, զինի եւ մասքիֆա. — Եթէ Տասկաստանի մէջ այգեստանաց ինչպէս որ պէտք է խնամք ասարուի, եւրոպացոց ամենապատուական զինիներ զրկելով ընդլայնեալ արտահանութիւն մը կը բացուի: Առ այժմ Ալճորոզ, Չանաֆ-Քալէսի, Պոհնա ասասը, Սաֆրզ ասասը, Բաւա լիմանը, Լիբանան, Պէլուս և Գրպրզ առատ զինի կը հայթայթեն:

Բոլոր Անատոլոյի զինւոյ բերքը 80,000 տակառ կ'ելլայ (տակառը 50 քաշ կը կշռէ):

Գինւոյ բերքին մեծ մասը երկրին մէջ կ'սպառուի և հազիւ թէ 10,000 տակառ այսինքն 500,000 քաշ Ռուսաստան կը զրկուի: Եթէ այգեստան մը լաւ խնամուի արտավար զրուի 20-30 կենդինար խաղող կրնայ բերել: Քանի մը տարիէ ի վեր է որ Մարտ ամսոյն մէջ որժերը ծծմբել սկսան: Եթէ այգեխնամքը լաւագոյն կերպով կատարուէին, Փոքր Ասիոյ բերքը չէ թէ տասնապատիկ անգամ կ'աւելնար, հասպայնպէս քաղցրահամ զինիներ կը հասցնէր որ Սպանիոյ ընտիր զինիներուն կը հաւասարէին: Եւ ասոր փորձն ալ եղած է 1875 տարւոյն Վիէնայի աշխարհահանդէսին մէջ ուր զրուած էին Զմիւռնիոյ վիլայէթին զինիները:

Խաղողով տեսակ մը մասքիֆա ըստած օղի կը պատրաստեն, ասոր արտահանութիւնը տարին 200,000 կալոնի կ'ելլայ, քաշը 4 էն մինչև 10 դանեկան կ'արժէ: Օղւոյ զլխաւոր գործարանք են Ալվալըֆ և Սաֆրզ ասասը: —

Պտղատու ծառերը առատ են, մասնաւորապէս Ալպանիա: Պալքանաց հարաւային ստորոտը, մանաւանդ Էտիրնէյի դաշ-

տավայրը նշանաւոր է վարդենեաց առատութեամբը, որոցմէ հռչակաւոր վարդի խղը կը պատրաստեն: Ունկի մը (once) վարդի իւզ պատրաստելու համար 300,000 վարդ պէտք է, և սակայն ամենամաքուր և զուտ է և շատ բարձր գնով կը ծախուի: Ափիոնը և ուրիշ բովիճայք, որոց կողմանէ շատ անուանի է Տասկաստան՝ ասիական գաւառաց մէջ կը գտնուին: (§ 7.)

Ի գործ զրուած երկրագործութեան զրուիւնն ողորմելի բան է, և միայն երկրին մէկ պզտիկ մասը (հաւանականապէս  $\frac{1}{6}$  ը) մշակուած է: Եւ սակայն երկիրը ինքնին շատ կողմանք քարեբեր է և շատ յարմար արմտեաց բուսաբերութեան քան թէ Եւրոպիոյ ուրիշ տէրութիւնները:

Եգիպտացորենը հարաւակողմանք կը մշակուի. բրինձը, բամբակը և գարին միջակողմանք. ցորենը, գարին և կորեակը մասնաւորապէս Մոլտաւիոյ մէջ կը մեծնայ:

Ասիոյ Տասկաստանի հիւանալի փլորայն ամեն տեսակ բուսեղէն կը բովանդակէ:

Լեբանց վրայ կը տարածին մայրեաց և կաղնեաց և այլևայլ բարձրարեքծ ծառոց անտառներ: Ստորին գաւառաց մէջ կ'աճին ու կը բուսնին արմտիք, ձիթենիք, թթենիք, նոնենիք, մըրտենիք, տեսակ տեսակ հերձիք (որոնցմէ համեղ մազտաքէ մը կ'ելլէ), պիտակ, Սէրէպէնդի ծառը (ուսկից ազնուագոյն թէրէպանդինը կ'ելլէ), եղջիւրենիք, թզենիք, արմաւենիք. որթ, կնճիթը որ ազնիւ իւզ մը կուտայ. բամբակենին օր ըստ օրէ յաջողաբար աճման վրայ է. ծխախոտ, տորոն կայլն: Կաղնիք խոզկաղին և զխոտը կը բերեն, մանաւանդ Քիւրտիստանի լեբանց վրայ: Խաշխաշի հիւթէն ափիոնը կը բաղեն, որ պիտանի նիւթ մ'է բժշկութեան մէջ, և սակայն տեղացի ազգք չափազանցութեամբ գէշ զործածութիւն մը կ'ընեն: Տեսակ մը կանեփ ալ կայ որմէ հաճիւ կոչուած Թմբեցուցիչ նիւթ մը կ'ելլէ:

Հայաստանի փլորայն Դիւրոյայ և Հեւլիետիոյ փլորային կը նմանի: Փոքր Ասիոյ և մանաւանդ արեւմտեան և հարաւային Անատոլոյի փլորայն շատ աղւոր է և Սիկիլիոյ և Սպանիոյ բուսաբերութեան զրեթէ կը համապատասխանէ: Ասիոյ Տաս-

կաստանը բոլոր աշխարհիս վրայ փիտոնի բերքին ամենահըռ-  
չակ գաւառն է: 1867 ին միայն Չիլեական 4000 սնտուկ ա-  
փիտոն հանեց ի վաճառ: յԱտրիս՝ ձիթենին, Յզենին, կիտրոնը,  
նարինջը, լեմոնը, նուռը և որձը առատապէս կ'աճին ցած  
դաշտավայրից մէջ. մինչդեռ ժանտաձզենիք, նոճիք, մայրիք  
և ՅՅենիք լեռանց կողերը կը հովանաւորեն:

Պաղեստին այն «Աւետեաց երկիրն» է որ Աստուած իր ժո-  
ղովրդեան համար ընտրեց և համբաւաւոր է իբրև «երկիր վար-  
սակի, հաճաբի, որձոյ, Յզենեաց, նոնենոյ, ձիթոյ և մեղրի»:

Միջագետք համբաւաւոր է իր արմաններուն համար որ  
սննդեան զխաւոր նիւթ մ'է. երկիրը առատ վարսակ, հաճար,  
բրինձ և եգիպտացորեն կը բերէ և նաև ծխախոտ, կանեփ և  
բամբակ:

§ 9<sup>o</sup> — Արուեստ.

Տաճկաստանի մէջ արուեստից յետամնացումեան և պակա-  
սուժեան պատճառն միևնոյնն է ինչ որ կ'արդիւէ երկրագոր-  
ծութեան բարգաւաճումը. այսինքն՝ 1<sup>o</sup> հին, երեսէ ձգուած  
ոճիբը, գործիք և այլն գործածելը. 2<sup>o</sup> արուեստաւորաց բարձր  
աւուրջէքը. 3<sup>o</sup> արտահանութեան մաքսը, տուրքը:

Անա այս պատճառներուն համար արուեստը օր ըստ օրէ  
պակասած են. այնպէս որ ժամանակաւ Հալէպ քառասուն  
հազար գործիք ըլլալը գիտցող անձինք դեռ ողջ են: Այս գոր-  
ծիք՝ լաթ, կտաւ, դիպակ և կերպաս կը գործէին. 1857 տար-  
ւոյն 5560 գործիք մնացած էին. այսօրուան օրս դեռ շատ պա-  
կասած են: Ուր են Տիարպէթիբի, Պրուսայի և Մուսուլի թա-  
ւիշքը և մետաքսեայ դիպակը. նոյն քաղաքը երեսուն տարի  
առաջ գործածներնուն  $\frac{1}{10}$ ը անգամ չեն կրնար գործել:  
1812 տարւոյն Շկոտրա և Թունալոտա կտաւ և կերպաս կը գոր-  
ծէին երկու հազար գործեօք. 1841 տարւոյն գործիք՝ թուով  
200 ի իջած էին, հիմա շատ աւելի պակասած են: Ատեօք  
Տաճկաստանի բամբակի և մետաքսի բերքը ներքին սպառման

բաւելէն զատ արևելից և արևմտից ի վաճառ ևս կը շրջուէ-  
ին. հիմա ներքին սպառման չբաւելէն զատ, Անգղիայէն ըն-  
դունտող բամբակը որ 1827 տարւոյն միայն 464,874 սուկոյ  
էր, 1858ին 2,847,386ի ելաւ և 1861ին 4,225,395ի բարձ-  
րացաւ, հիմա 5 միլիոնը գտած է. իսկ Տաճկաստանէ Անգղիա  
գրկուող բամբակը տարուէ տարի 20-25 հազար սուկոյ չափ  
հազիւ կը բռնէ:

Եւ սակայն քանի մը արուեստից գործարանք մինչև հիմա  
հաստատ մնացած և երկրին օգտաւէտ են, մասնաւորապէս Իզ-  
միրի կապերտից և օթոցներու գործարանքը, անկուածք, ձեռա-  
գործ ապրանք, օյա, երիզ, ժպպաւէն, ոսկեճելք, արծաթա-  
ձեւք, զրիչ, սնտուկ, անօթեղէնք և օճառք յառաջացեալ ար-  
ուեստք են: Բոլոր արևելից մէջ ամեն գործք՝ տեղացւոց սովո-  
րուժեանց և ճաշակին համեմատ շինուած ըլլալով հոն կը գոր-  
ծածուի. անա այս ալ զլիսաւոր պատճառ մ'է արտահանու-  
թեան չըրկուելուն որովհետև ուրիշ տեղուանք ստակ չընէր:  
Անօթեղէնը կը շինուի Էյրպ (Կոստանդնուպօլիս), Ռուսնօք,  
Դալա՛ի Սուլթանիէ և Սաքքզ ատասը:

§ 10<sup>o</sup> — Եւրոպիոյ եւ Ասիոյ Տաճկաստանի  
վաճառուշահ նաւահանգիստք.

Արիսական ծովուն վրայ են.

**Անգիլարի.** — Շկոտրայէն 30 հազարամէղր է դէպ ի  
հիւսիս. Ալպանիոյ Շկոտրայի և Գարատաղի բերոց նաւահան-  
գիստն է և այսօրուան օրս Պար իսկէլէսի կ'անուանուի: Ալ-  
պանիոյ բերքը քիչ ըլլալով արտահանութիւնն ալ աննշան է.  
վաճառարեւութիւնքն Մալղա և Շիրա կզգեաց բերքն են և  
Լըյոտ ընկերութեան շոգենաւներով կուզան:

**Տուրացո** կամ Տիւրան հինն Տիրափիւտ (40,000). —  
Այսօրուան օրս անցնող զարձոյ նաւուց հանդպելէն զատ առու-  
տուր մը չունի. սակայն պիտի գայ անշուշտ օր մը որ շրջա-

կայքը գտնուող երկամահանք բանուին և արտահանուածեան նաւահանգիստ մ'ըլլայ :

**Սււլոնիա** կամ Լավալոն. — (8000) Սքանչելի նաւահանգիստ և Լլոյտ ընկերութեան շոգենաւուց հանգստատեղեաց մէկն է. Իտալիա՝ Պրինտիզին Պարլիյի և երկամուղեաւ Անգոնայի միացնելէն ի վեր, Ստորին Ալպանիոյ բերքը այս նաւահանգստին միջոցով Պարի կ'իջնէ :

Արտահանուածիւն արչառու և ալեր, Վալոնէայի կամ խոզկաղնի, որ քաղբին անուամբը այսպէս կը կոչուի: Զինարան: Յոնիական ծովուն վրայ՝

**Բարկա.** — Գորֆու կղզւոյն յանդիման, ժայռի մը վրայ ըլլալով բերքը՝ զինին, պտուղը, ձիւնոյ իւղը և ծխախոտը Գորֆու կղզին կ'անցնին և անտի կ'արտահանուի :

**Բրէվէլա.** — Արդա ծոցին մտիցը վրայ ամենէն սքանչելի նաւահանգստաց մէկն է. Լլոյտի շոգենաւները ամեն շաբաթ կը մտնեն և ամեն մտնելուն անբաւ ապրանք կը բառնան. Օսմանեան, Յոյն, Իտալական, Աւստրիական և Անգղիական զրոշակօք նաւեր անդադար կը յաճախեն այս նաւահանգիստը :

**Մաբրի.** — Արշիպեղագոսի վրայ Կէլիպոլոյէն 100 հազարամէր յարեմուտս նաւահանգիստ մ'է. դարձեալ Մաբրի՝ Անատոլոյի ծովափանց վրայ համանուն փոքր ծոցին մէջ պատըսպարեալ նաւահանգիստ մ'է որուն վրայ ալ պիտի խօսինք :

**Էնէզ** կամ Էնոս. — Համանուն ծոցին վրայ Մէրիճ կամ Մարիցա գետոյն բերնին մօտ, որով Էտիրնէյի նաւահանգիստը կը կոչուի. 1872 ին Ռուսիայի երկամուղեաց ընկերութիւնը Տէտէ աղած նաւահանգիստ մը շինել տուաւ. Էնոսի բնակիչք որչափ ալ տէրութեան իմացուցին թէ Էնոսի դիրքն աւելի աղէկ է իբրև նաւահանգիստ, սակայն ընկերութիւնը համարաւնոցներ և տեսակ տեսակ խանութներ աճապարանօք կանգնած ըլլալուն ի Տէտէ աղած՝ Էնոսի բնակչաց ձայնը չսուեցաւ : (Էտիրնէ, բուրդ, տես (§ 5.)):

**Գաւալա** կամ Լագալալ. — (4500) Անպատսպար և բիչ

յաճախուած նաւահանգիստ մ'է. բերքն են եգիպտացորեն, վարսակ, ցորեն, կիճիթ, բամբակ և բուրդ, և ծխախոտ: Մակեդոնիոյ (Սէրէզի) ծխախոտոյ արտահանութեան զլխաւոր նաւահանգիստն է. տարին 11 միլիոն հազարակրամ ծխախոտ կը դրկէ ի վաճառ:

**Սէլանիք** հինն Թեսալոնիա. — (70,000) Մակեդոնիոյ ընդարձակ նաւահանգիստը և Եւրոպիոյ Տաճկաստանին երկրորդ վաճառաշահ քաղաքն: Ետքի տարիներու տէրութիւնը ծովը երկու հարիւր մէրրի չափ միջոց լեցնելով խոշոր նաւամատոյց մը շինել տուաւ, և երկամուղիք ևս սկսան:

1871 տարւոյն Սէլանիքի վաճառաբերութիւնքն էին բրինձ, շաքար, խահուէ, լեղակ, որդան կարմիր. պղպեղ, կինամոմոն, մեխակ, Պրագլիի փայտ, Գամբէլէյի և ձաբոնի փայտ, կապար, անագ, Գաղղիոյ և Պելճիոյ չուխա, Գաղղիոյ ձուղթ, նուշ, ժանգառ, ևայլն 29,590,000 ֆրանկաց: Արտահանութիւնքն էին մետաքս, ցորեն, շերասի սերմն, բամբակ, բուրդ, մեղրամոմ, կաշի, պաղլեղ, սպունգ, ծխախոտ և տղրուկ 33,702,000 ֆրանկաց: Անգղիոյ՝ Սէլանիքի հետ ունեցած առևտուրը տարին 11,970,000 ֆրանկաց կ'ելլէ: — Գործարան կապերտից, մետաքսեղինու և բամբակեղինուց:

**Վօլօ** հինն Իօլլոս. (4000) — Համանուն ծոցին վրայ Թեսալիոյ նաւահանգիստը. 1855 էն ի վեր Լլոյտի շոգենաւուց հոս հանդպիլը այս քաղբին առևտրոյն զործունէութիւն մը տպաւորած է: Տարեկան արտահանութիւնքն են 11 միլիոն ֆրանկաց և վաճառաբերութիւնքն 21 միլիոն ֆրանկաց ապրանք են: Արտահանութիւնքն են զլխաւորապէս ձէթ, բուրդ, բոժոժ, մետաքս, ծխախոտ, մորթ, չոր պտուղք, մեղրամոմ և սպունգ:

Այս նոր քաղբին կաշեգործութեան, ծխախոտոյ, մետաքսի և ներկի գործարանքն անուանի են:

Առևտուրը զլխաւորապէս Եանիա և Սէլանիք քաղաքաց ու Մոռայի հետ է :

**Վոսսանդուպոլիս** կամ Սսամպոյ որ Տէրսասէք և Ասիքանէ ալ կը կոչուի. հինն Բիւզանդիոն. — Բոլոր Օս-

մանեան Պետուժեան մայրաքաղաքը և ամենէն վաճառաշահ ու բանուկ քաղաքը. (800,000 անձ տեղացի բնակիչք և որ արուարձանաց շարժուն բնակչօք հանդերձ՝ 1 միլիոն անձ կը հաշուեն) :

Հրաշալի կերպով կանգնուած է Թրակիան Վոսիտրոսի հարաւային մտից վրայ . ի կցորդութիւն Եւրոպիոյ և Ասիոյ, Արևելից և արևմտից, և միանգամայն Հիւսիսոյ և հարաւոյ (մէկ կողմանէ Սև ծովով և միւս կողմանէ Միջերկրականով) : Հին աշխարհիս կեդրոնն է և այն պատճառաւ ալ Մեծն Պետրոս ըսած է թէ «Կոստանդնուպօլսոյ տիրող Թագաւորը բոլոր աշխարհիս Թագաւորը կ'ըլլայ » : Նաւահանգիստն 1600 մէղր լայնք և 6800 մէղր երկայնք ունի և 1000 նաւ և ամենէն մեծ նաւերն անգամ կ'ըդունի և Ոսկեղջիւր կը կոչուի :

Ըստ աւետրոյ Կոստանդնուպօլիս այսօրուան օրս բոլոր Եւրոպիոյ մէջ երրորդ կարգի նաւահանգիւտ է . առաջինը Լիվրբուր, երկրորդ Լոնտրա և երրորդ Կոստանդնուպօլիս հաւասար Մարսիլիոյ . տարուէ տարի Կոստանդնուպօլսոյ նաւահանգիստը 30 հազար նաւ կը մտնեն ու կ'ելլեն ամեն դրօշակօք և 6 միլիոն տակառաջափ բերօք : Ամեն ազգէ աւելի անդղիական աւստրիական և գաղղիական շոգենաւք կը յաճախեն այս նաւահանգիստը (տես § 2. նաւարկութիւն) :

Վաճառաբերութիւնքն են Գաղղիոյ, Գերմանիոյ և Պելճիոյ չուխա, քաղիմիր, Իտալիոյ և Եգիպտոսի բրինձ, երկրին և Իտալիոյ ձէժը . պատուական կահ կարասիք . Ռուսաստանի խավիար, ալիւր, ձի, Լոնտրայի և Չուիցերայի ու Գաղղիոյ ժամացոյցք, Վիէնայի և Կրացի գարնջուր, Էյլ և Բորդըր, Գաղղիոյ և Իտալիոյ ազնիւ գինիներ, առատ խահուէ, մոմ, Հոլանտայի և Գաղղիոյ շաքար, Լիոնի և Բարիզու մետաքսեղէն, Անգղիոյ և Գերմանիոյ դանակեղէնք, դերձանք, զիբք, կառք, պղինձ, անագ, երկաթ, բափուր, սնդիկ, որդան կարմիր և բոլոր աշխարհիս բերքը :

Արտահանութիւնքն են բուրդ (գասապ-պաշը), եզան մորթ, դեղին մեղրամոմ, պաղլեղ, բամբակ, փայտ, այծու մազ, մազ-

տաքէ, ներքին քաղաքաց և արևելից նաւահանգստաց ապանք, և անցիկ ապրանաց մեծ վաճառականութիւն :

Նաւարկութիւնք բանի մը տարիէ ի վեր հիանալի կերպով բարգաւաճեցաւ Կոստանդնուպօլսոյ նաւահանգստին մէջ :

Կոստանդնուպօլիս ոչինչ տուրք մը կը պահանջէ օտարազգի նաւերէն և ազատ նաւահանգստաց կարգը կրնայ դասուիլ :

Առևտուրը զլիսաւորապէս Յունաց, Հայոց և Հրէից ձեռքն է :

Այս քաղաքս գործնական յարաբերութիւններ ունի ծովային Եւրոպիոյ հետ (Օտէսա, Իրիէսը, Լիվօնօ, Մարսիլիա, Պորտօ, Հաւր, Սաուդէմբղըն, Լոնտրա, Անվէրսս Ռորդէրտամ, Լիվըրբուր, Մէսսինա, ևն.) և Արևմտեան Ասիոյ հետ (Թրապուզան, Չիլուսիա, Պէյրուժ) և Ափրիկիոյ հիւսիսակողման հետ (Իսթէնպէրիէ) : (Նաւային ընկերութեանց համար տես § 2.) : Կոստանդնուպօլիս Տանկաստանի առևտրական գործառնութեանց երեք քառորդը կը կատարէ :

Փոխատուութեան ընկերութիւնք և զրամատուըք հետզհետէ աւելնալու վրայ են ի Կոստանդնուպօլիս (Ղալաթիա) : Դրամատանց բանի մը զլիսաւորքը իրենց յատուկ անուամբը դասենք հոս .

Պանք էմբէրիալ օթթօման (զրամագլուխ Լ.Օ. 10,000,000)	
Սօսիէճէ ժէնէրալ » ( » » 2,000,000)	
Դրէտի ժէնէրալ » ( » » 2,200,000)	
Դրէտի Լիօնէ, ներկայացուցիչԳաղղիոյ համանուն զրամատան եւ այլ բազումք :	

Պօլիս բիշ գործարան կայ . զլիսաւորներն են մետաքսի, բամբակի, Ճաչիլօլի ըսուած Թաշկինակներու, կտաւու, հաստ Թղթոյ, սէկի, կօշկաց ևն : Կայսերական զինարան, ֆէսարան և նաւարան : Պղնձեայ պատերազմական երաժշտութեան գործիք շինելը նոր սկսած է : Պօլսոյ մէջ զմելիինի, մկրատի, և մաքրայի տարեկան արդիւնքը 20 միլիոն դահեկանաց կ'ելլէ :

Հռչակաւոր է Պօլիս, օյա ըսուած ձեռագործոց համար, որոնք երկու տեսակ են, պարզ և ոսկեթել : Պարզ օյաները երկ-

րին մէջ կը ծախուին. իսկ ոսկեծելք մասամբ մը Եգիպտոս և Զմիւռնիա և մեծաւ մասամբ Գերմանիա, Անգղիա և Գաղղիա կ'երթան :

Պօլսոյ և Զմիւռնիոյ Յոյն և Հայ կանայք մեծ համբաւ ունին իրենց ձեռակերտ ապրանցքը, անկուածոց և ասղնեգործոցը համար :

Անձեղինաց նոր գործարան մը բացուեցաւ 1856 տարւոյն՝ Պօլսոյ Էյուպին մէջ: Գրեթէ բոլոր Կոստանդնուպօլսոյ կը բաւեցընէ իր ապրանքը, և օր ըստ օրէ անգղիական և գերմանական այս տեսակ վաճառքերու թիւնքը նուազելու վրայ են:

**Սիլիվրի** հիւն Սէլիմլիա. — Կոստանդնուպօլսէն 80 հազարամէրը յարեմուտս. Մարմարա ծովուն վրայ Ռումէլիյի նաւահանգստաց մէկն է:

**Կէլիպօլու.** — (50,000) Արևելից և արևմտից նաւերուն հանգստատեղին է: Կէլիպօլու նաւահանգստին բերքը տարուէ տարի 3,646,000 ֆռանգաց կ'ելլէ, ասոնց 2 միլիոն 215 հազարը անցիկ ապրանք են և 795 հազարը արտահանութիւնք և 636 հազարը վաճառքերու թիւնք են: 1870 տարւոյն Կէլիպօլույի վաճառքերու թիւնքն, արտահանութիւնքը և անցիկ ապրանքը 3,930,000 ֆռանգաց էին: Անցիկ ապրանքը են ընդհանրապէս Էտիրնէյի, Ատուրոց և Եգիպտոսի արտահանութիւնքը: Վաճառականութիւն բրդոյ և բամբակի: (§ 4.):

**Ռօսօսղօ** կամ Թէֆիր սաղը կամ Թէֆնուր սաղը. — (40000) Մարմարա ծովուն վրայ. վաճառքերու թիւնքը շատ են. արտահանութիւնքն են բուրդ և արմտիք: — Այս ալ Էտիրնէյի նաւահանգիստը կը սեպուի:

**Պանսումա.** — Մարմարա ծովուն հարաւային ափանց վրայ, Անատօլուի մէջ Պալքէտրի բաղքին նաւահանգիստն է: Ազնիւ մարմարիտնի բարահատք: Բժոժի, կնճիթի, արմըտեաց և բրդոյ արտահանութիւնն արգիլեալ է:

**Կէմլէիք.** — (8000) Համանուն ծոցին վրայ Պրուսայի նաւահանգիստը (25 հազարամէրը հեռու): Գործարան ձիթոյ: Գլխաւոր արտահանութիւնն է ձիթապտուղ, ազնիւ ձիթոյ իւղ և բժոժ:

**Մուսանեա.** — (15,000) Պրուսայի արևմտեան կողմը և 21 հազարամէրը հեռու. առևտրոյ կարևոր նաւահանգիստ մ'է: Արտահանութիւն աղբորակի, զինւոյ, պտղոյ և գործեալ ապրանաց:

**Իզմիս** կամ Իզմիմիս, հիւն Նիկոմիդիա. — (14,000) Համանուն ծոցին վրայ, Եւրոպայի վաճառականք բժոժի վաճառատեղին կ'անուանեն: Գործարան մետաքսի. Անատօլույի զըլխաւոր նաւահանգստաց մէկն է: Վաճառականութիւն մետաքսի, բրդոյ, բամբակի, ցորենոյ, կտաւու, պտղոյ, ևն: Նոր ժամանակներուս՝ Իւսկիւտարէ (Կ. Պօլիս) ելլող երկաթուղւոյ զիծ մը միացուց զայն մայրաքաղքին և քանի մը տարիէ նոյն զիծը առաջ երթալով պիտի միանայ նաև Էնկիւրիւ և այլ ներքին քաղաքաց: — Նաւարան:

**Իզմիր** կամ Զմիւռնիա. — (150,000) Արշիպեղագոսի վրայ Անատօլույի զլխաւոր վաճառաշահ նաւահանգիստը Միսիլլի կղզւոյն և Գարապուրուներին մէջտեղ: Եւրոպոյ, Արաբիոյ, Կիւրծիստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի վաճառականաց առևտրոյ մեծ տեղի: 1871 տարւոյն վաճառքերու թիւնքն էին 89,670,000 ֆռանգաց և արտահանութիւնքն էին 113,507,500 ֆռանգաց:

Վաճառքերու թիւնքն են հիւսուածք, երկաթեղէն, յախճապակ, ապակեղէն, գործիք, դանակեղէն, մետաղք, զոհարեղէն, ժամացոյց, հանքածուխ, պատրաստուած ձխախոտ, զինի, օղի և ըմպելիք:

Արտահանութիւնքն են տորոն, խոզկաղին, իւժժ, ափսոն, հաշիշ, զխտոր, չամիչ, թուզ, արմաւ, ձխախոտ, բուրդ, մետաքս, բժոժ, արմտիք, ձիթոյ և կնճիթի իւղ (սուսամ եաղը), մեղրամոմ, վարդի իւղ, սպունգ, մորթ, Սարուխանի, Գուլայի և Ուշաքի կապերտք, որք Զմիւռնիոյ կապերտք կ'անուանուին, և բամբակ (1871 ին բամբակի արտահանութիւնքն էին Սպանիոյ համար 20,128 հակ, Աւստրիոյ համար 18,385 հակ, Իտալիոյ 6285, Անգղիոյ 4605, Գաղղիոյ 1804, Ռուսաստանի 110, Հոլանտայի 28):

վաճառաբերութեանց մէջէն հրազէնք, ապակի, անօթեղէնք և եւրոպական յախճապակը Պելճիայէն կուզան. խահուէ և նպարեղէն Ամբրիկայէն. չուխա, զգեստեղէն, ոսկեծել երկզք, ժամացոյց, ոսկերչական ապրանք, սէկ և կաշի, թուղթ, շաքար, մետաքսեղէն Գաղղիայէն. սրղպատեայ և երկաթեայ ապրանք, զամ, հանքածուխ, գետնախնձոր ևայլն Անգղիայէն: Եզիպտոս, Աւստրիա, Իտալիա և Յունաստան ևս այս վաճառականութեան մասնակից են:

Նաւահանգստին շարժումն 1 միլիոն տակառաչափ է 2950 նււտով, ամենն ալ շոգենաւ ըլլալով:

**Գուռ ասաւր.** — Իզմիրէն 66 հազարամէր դէպ ի հարաւ Սքալա Նովայի ծոցին մէջ. Իզմիրէն ետքը Անատոլոյի ամենէն բանուկ նաւահանգիստը. մեծ վաճառականութիւն խահուէի, բրնձի, բծանի և թռչնոյ կերի (բէնէվիր, alpiste):

**Մաւրի.** — Միշերկրականէ ձևացեալ աղւոր ծոցի մը խորը սքանչելի նաւահանգիստ է .

**Աթալիա.** — (15,000) Միշերկրականի վրայ համառուն ծոցին մէջ Անատոլոյի գլխաւոր վաճառաշահ քաղաքաց մէկը: Շրջակայից բերքն են պարէն, խաշխաշ, ափիոն, գազի խէժ (բիթրէ), խէժ, աղտոր, կաղին, ընկոյզ, սալէպ, կուպր և գորգ ևայլն:

Մեծ արտահանութիւն ցորենոյ, զարւոյ, սիսուան, կնճիթի, բամբակի, բրդոյ, բժոժի, շերասի սերմանց, դեղին մեղրամոմոյ, այծու մորթոյ, լուբիայի, շինութեան փայտերու, անխոնի, խոզկաղնոյ ևայլն:

Վաճառաբերութիւնքն են խահուէ, շաքար, պղպեղ, բրինձ, ձէթ, գինի և ըմպելիք, օճառ, ամեն տեսակ մետաղ, ապակեղէն, անօթեղէն, երկաթեղէն, անուշաղբ, չուխա, կահ կարասիք ևայլն:

**Մէրսին.** — Թարսուսի նաւահանգիստն է, քաղաքը Գարսուս գետին բերնէն 6 ժամ հեռու ըլլալով: Գաղղիացի սուրհանդակ շոգենաւները Մէրսին հանդպելու սկսելէն ի վեր՝ առեւտուրը զգալի կերպով աճեցաւ:

Արտահանութիւնքն են առատ ցորեն, կնճիթ, տղրուկ, բամբակ, զխտոր, տորոն, դեղին մեղրամոմ, մորթ և հիւսելի նիւթք ևայլն:

Մէրսին ներքին քաղաքաց, Էրզրումի ևայլն և մինչև Սամսոնի նաւահանգիստը կրնայ սեպուել, որովհետև ապրանք շատ անգամ փոխանակ սև ծովու ճամբով Մարսիլիա և այլ նաւահանգստաց զրկուելու: Մէրսինի ճամբով կը զրկուին և փոխադարձաբար:

**Իսկէնքերու.** — Հալէպի նաւահանգիստը և 140 հազարամէրը ի յարեմուտս. այս պղտիկ քաղաքս բոլոր Ասորւոց ամենէն բանուկ նաւահանգիստն է ելլմտից կողմանէ, սակայն օղը վատառողջ և տոչորիչ է: Հալէպի արտահանութիւնքն էին 1870 տարւոյն 40,482,000 ֆռանգաց և վաճառաբերութիւնքն 36,472,000 ֆռանգաց ապրանք:

**Լաբափի.** — (7000) Մեծ արտահանութիւն ցորենոյ, աղւոր սպիգոյ և ծխախոտոյ (ամենուրեք պատուական): Գործարան օճառի:

**Թարապուլուս Էս Շամ** կամ Թրիբոլի. — (15,000) Գաղղիացի և Ռուս շոգենաւուց գլխաւոր հանգստատեղեաց մէկն: Արտահանութիւնքն են ձէթ, ծխախոտ, մետաքս, ընտիր սպունգ, օճառ, բամբակեղէն և ասուեղէն, նարինջ, լեմոն և պտուղք: Գործարան օճառի:

**Պէլուս.** — (85,000) Հնուց ի վեր Շամայ և Լիբանանունաւահանգիստը և Ասորւոց ամենէն վաճառաշահ և գործունեայ քաղաքը. Դամասկոսի հետ շարունակ յարաբերութիւններունի:

Վաճառաբերութիւնքը տարին 30 միլիոն ֆռանգաց կ'ելլեն և են բամբակեղէն, ասուեղէն, երկաթ, գաղթականաց նպար, Իտալիոյ բրինձ, երկաթեղէն, մեքենայ և Բարիզու կահ կարասիք և այլն: Եւ արտահանութիւնքը 38 միլիոն ֆռանգաց և են զխտոր, տորոն, անողորկ մետաքս, մանած մետաքս, բժոժ (1,800,000 ֆռանգաց և ամբողջն ալ Գաղղիա կ'երթայ) բուրդ, ձէթ, բամբակ, Ատալիոյ և Թարապուլուսի արմտիք և սպունգ: Նաւահանգստին շարժումն 6000 նաւ է:

**Սախա** հինն Սիդոն. — Արքեայէն 80 հազարամէզը դէպ ի հիւսիս նաւահանգիստ մ'է. առջի պայծառութեանը կէտը ևս մնացած չէ. արտահանութիւն սպնդոյ, լեղակի, բժոժի ծխախոտոյ և մետաքսի:

**Սուր** հինն Տիւրոս. — Արքեայէն 56 հազարամէզը դէպ ի հիւսիս. առևտուրը մասնաւորապէս Գահիրէյի և Տամիաի հետ է և զլիաւոր արտահանութիւնն է ծխախոտ: Տիւրոս որ Փիւնիկեցեց ժամանակ աշխրհիս ամենահռչակ նաւահանգիստն էր, այսօրուան օրս անանուն և տղմով լի է և անբաւ աշխատանաց պէտք ունի վերականգնելու համար:

**Սփեւա**. — (12,000) Միջերկրականի ծոցերէն մէկուն խորըն ամուր քաղաք և նաւահանգիստ որ և Սէն Ժան Տաքրը կը կոչուի. արտահանութիւն ձիթոյ, կնճճի, շինութեան փայտի և այլն: Ասորոց բամբակին վաճառականութեան մթերանոցն է:

**Քաիճա**. — Արքեայէն երկու ժամ դէպ ի հարաւ, և որ Արքեայի կից նաւահանգիստ մ'է. արտահանութիւն ձիթոյ, կնճճի և բամբակի:

**Տաճա** հինն Յոպպէ. — Երուսաղէմի և Նապլուզի (Սաճարիա և Գազա) նաւահանգիստը և Պաղեստինու մի միայն ծովային քաղաքը: Գաղղիոյ Մէսսաժըրի Մարիիմ ընկերութեան, Աւստրիոյ Լըյոտ ընկերութեան և Օտէսսայի Ռուս շոգենաւք և այլևայլ Անգղիացի և Գաղղիացի ընկերութեանց նաւեր կը յաճախեն այս նաւահանգիստը: Հանգստատեղի է Երուսաղէմի և Պաղեստինու ապրանքը բարձոյ փոքր նաւուց:

Քաղաքը իր արևելեան մասանց մէջ ծածկուած է նարնջի, կիտրոնի և ուրիշ պտղոց պարտէզներով: Մեծ վաճառականութիւն ձիթոյ, գարւոյ, կորեակի (տարը), հասուն պտղոց, հասարակ ապակեղինի, Բեճղեհէմի և Երուսաղէմայ ուխտաւորաց վարդարաններու և այլ շքերմերանդական նիւթոց: Կարևոր օճառի գործարաններ որոնց բերքը Ասորիք, Եգիպտոս, Կիպրոս և Գարաման կը ղրկուին:

Վաճառաբերութիւնքն են նպար, Եմէնի խահուէ որ Եգիպտոսէն կուզայ, Ամերիկայի խահուէ, շաքար, պղպեղ, կինա-

մոնն. Գաղղիոյ, Անգղիոյ և Զուիցերայի գործարանաց բերք. Լիոնի մետաքսեղէն, Գաղղիոյ և Դրիէտօղի երկաթեղէն. Վենետկոյ և Գարամանիոյ փայտ և տախտակ, Տամիաի և ձենովայի բրինձ, և այլն: Երկու հեռագրական գծեր կը միացնեն Եաֆան Եւրոպիոյ:

Սև ծովու նաւահանգիստք.

**Պուրղազ**. — Եւրոպիոյ Տանկաստանի մէջ՝ ցորենոյ վաճառականութեան կողմանէ Վառնայի կը հաւասարի. և նաւահանգիստը պատասպարուած է:

**Պալչք**. — Տոպրուճայի նաւահանգիստը, մեծ արտահանութիւն արմտեաց. նաւահանգիստը Վառնայէն ապահով է: Անուանի է մեղրը:

**Վառնա**. — (22,000) Երկաթուղի մը ունի որ Դանուբայ և Ռուստուզի կը միացնէ զինքը, և որ այսօրուան օրս Արևելից և արևմտից անցաւորաց սրբնծաց երթևեկութեան կը ծառայէ:

Երկրին և Պուրղաստանի առևտուրը Վառնայի միջոցով կը կատարուի. տարուէ տարի վաճառաբերութիւնքն 16,563,500 և արտահանութիւնքը 18,373,000 ֆռանգաց կը հաշուի: Արտահանութիւնքն են մասնաւորապէս արմտիք և բուրդ:

**Քէօսքէցնէ**. — Այս նաւահանգիստը երկաթուղեաւ Զըրնափոտա քաղքին միանալէն ի վեր վաճառականութեան բարօրութիւնը աւելցաւ և երկիրը սկսաւ զարգանալ. 1870 տարուոյն վաճառաբերութիւնքը հազիւ 640,000 ֆռանգաց էին իսկ արտահանութիւնքը 33,000,000 ֆռանգը կ'անցէին:

**Էլեկլի** կամ Պէնտէլէկլի հինն Հէրակլէ. — Փոքր Ասիոյ ծովափանց վրայ. արտահանութիւն շինութեան փայտի, մեղրամոմոյ, մետաքսի և այլևայլ բերոց՝ որոնք փոքր նաւերը այս նաւահանգստին կը հրաւիրեն: Երջակայքը ընտիր հանքածխոյրովք կան:

**Իյնէպօլու**. — Նաև Փոքր Ասիոյ ծովափանց վրայ. Գասղամունի քաղքին նաւահանգիստն է և սուրհանդակ շոգենաւուց հանգստատեղի:

**Սիցօպ**. — Երկուցն փայտից մեծ վաճառատեղի է և շոգենաւուց հանգստատեղի:

**Սամսօն.** — Համանուն ծոցին մէջ Պաղտատի վաճառաբերութեանց նաւահանգիստն է: Գլխաւոր բերքն է ծխախոտ: Արտահանութիւն արմտեաց, կապերտի, ծխախոտոյ, մետաքսի և պղնձի:

**Քիւրեսօն.** — Թրապուզան քաղքին արևմտակողմը՝ Վոնա ծոցին խորը. հին Հայաստանի նաւահանգիստ է կ'ըսուի: Գըլխաւոր արտահանութիւնն է կաղին: Մէսսսժըրիյի շոգենաւք կը հանդպին հոս:

**Թրապուզան** կամ Տրապիզոն. — (60,000) Սև ծովու ափական ափանց առևտրական ամենէն մեծ և վտճառաշահ նաւահանգիստն է. մթերանոց մեծ վաճառականութեան ընդմէջ Ներուպիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի և Անդրակովկասեան երկիրներու:

Մտնող ապրանքն են՝ Անգղիոյ բամբակեայ հիւսուածք և մանուածք, գէնք, ժամացոյց, շաքար, խահուէ, ռոմ, Անգղիոյ և Ռուսաստանի երկաթ, պողպատ և անագ, թուղթ, պղպեղ և համեմանք. օճառ, ցորեն և արմտիք Ռուսաստանի: Կ'ընդունի Գաղղիայէն շաքար, մետաքսեղէն, նորելուկ ապրանք, ոսկեթելք, չուխա և քաղիմիր, կաշի, Բարիզու զամ, աղածոյք, Բրովանսի ձէթ, Շամբանիճյ, Պորտոյի գինի և այլևայլ պատուական գինիներ. Բարիզու ապրանք և այլն:

Արտահանութիւնքն են մասնաւորապէս պղինձ, մեղրամոմ, գիտորք, տոսախի փայտ, լուբիա, կաղին, եգիպտացորեն, մալուխ, կտաւ, կանեփ, ծխախոտ, տզրուկ, մետաքս, եզան մորթ, այծու մորթ, ասր, բրինձ, խնձոր, սիսեռ:

Թրապուզանի միջոցով Պարսկաստանի արտահանութիւնքն են մետաքս և հիւսուածք:

Տարեկան առևտուրը 200 միլիոն ֆրանկաց է և հանապազօր առաջատուար և շոգենաւք անդադար կ'ելլեն ու կը մտնեն: Օսմանցի, Գաղղիացի, Ռուս և Աւստրիական շոգենաւք կանոնաւոր երթևեկութիւն կ'ընեն: Քանի մը տարիէ ի վեր այս քաղաքս իր առջի գործունէութիւնը կորսնցուց վաճառականաց Պարսկաստան երթալու ապրանքը մեծաւ մասամբ Բօթիյի ճամ-

բով զրկելնուն պատճառաւ. և երկրորդաբար Վրացւոց գաղթականութիւնն որոնք իրենց պիտոյքը հողալու կուզային հոս:

**Պարու.** — (8000) Սև ծովու վրայ Տանկաստանի յետին նաւահանգիստը. ձոռոխ գետին բերնէն 6 հազարամէր հեռու. երկիրն բարեբեր է և կը հասցընէ առատապէս թուզ, նուռ, և խաղող:

§ 11<sup>o</sup> — Եւրոպիոյ Տաճկաստանի ներքին վաճառուշահ ֆաղափ.

**Էսիրնէ** կամ Ադրիանուպօլիս. — (110,000) Մէրիճ կամ Մարիցա գետոյն վրայ, Ռումէլիյի մէջ: Երկամուղոյ միջոցով միացած է Տէտէ աղածի, Ֆիլիպէյի, Սէլանիքի և Կոստանդնուպօլսոյ:

Արտահանութիւն յարզի բրդոյ, բամբակի, մետաքսի, պատուական զինւոյ, վարդի իւզոյ, պտղոյ, պանրոյ, խոզկաղնի, արմտեաց ևն: Վաճառաբերութիւնքն են մասնաւորապէս Անգղիոյ բամբակեղէն և երկամեղէն և Գերմանիոյ չուխա: Վաճառականութիւնը մասնաւորապէս Յունաց ձեռքն է: Գլխաւոր արուեստը խաղախորդութիւն է: (Տես § ):

**Քրք-Քիլիսէ.** — (20,000) Կարագ և ազնիւ պանիր ունի զոր Կոստանդնուպօլիս կը զրկեն:

**Տէմօքիս.** — (16,000) Մարիցայի ափանց վրայ արուեստական քաղաք. տուն բրդեղինի, գործարան կերպասուց, ասուի և մետաքսի: Վաճառականութիւն արմտեաց և բժժով:

**Իսլիմիէ** կամ Սէլիվնօ. — (22,000) Պալքան լեռանց գըլխաւոր անցից օտ՝ Երկամէ Դրունք կը կոչուի: Կայսերական գործարան չուխայի և հրագիւնուց վարդիււղոյ: Վաճառականութիւն ասուեղինուց, զինուց և այլն: Կարևոր տոնավաճառք:

**Ուզունճօվա.** — Կարևոր է իր յաճախեալ տոնավաճառքը:

**Քրզանլը.** — Պալքան լեռանց ստորոտը: Գործարան և վաճառականութիւն ազնիւ և զուտ վարդի իւզոյ և վարդեջրոյ

որ մեծ համբաւ ստացած են բոլոր Տանկաստանի մէջ : (Տես § 4) :

**Ֆիլիպէ կամ Ֆիլիբրոլի.** — (45,000) Մարիցա գետոյն վրայ, նշանաւոր արմտեաց, զինւոյ, ծխախոտոյ, վարդի իւրոյ բերօքը կայլն: Գործարան խոշոր չուխայի: Արտահանութիւն ցորենոյ Մարսիլիոյ համար և այլն: Որիզաստան: Բանուկ վաճառականութիւն և ծաղկեալ արուեստ: (Տես § 4.)

**Չարպիս.** — Ռուսիայի երկամուղոյ զլխաւոր կայա-  
րանաց մէկն է, էտիրնէյէ Կոստանդնուպօլիս երթալու ճամ-  
բուն վրայ :

**Փարս-Պագարնք.** — (8000) Շրջակայքը ընդարձա-  
կածաւալ որիզաստաններ ունի:

**Ենիքէ հինն Բէլլա.** — Համանուն լճին և ծովուն մէջտեղ  
եղող դաշտը կը տիրէ: Անուանի է ծխախոտը:

**Մանասքր կամ Պիդօլի.** — (50,000) Տանկաստանի պա-  
տերազմական նշանաւոր դրից մէկը:

**Սէրէզ.** — (30,000) Օրֆանօ ծոցէն քիչ հեռու. մեծ վա-  
ճառականութիւն բամբակի, և Եւրոպիոյ Տանկաստանի բամ-  
բակի մշակութեան և վաճառականութեան կեդրոնը: Շրջակայ-  
քը համբաւաւոր ծխախոտ կը հասցընեն: Ունի նաև որի-  
զաստաններ:

**Տրամա.** — (4500) Գավալայէն 32 հազարամէդր ներս :  
Գործարան տաղաւարի կտաւու և վաճառականութիւն սզրու-  
կի :

**Օլսիսա կամ ձիուսդանսիլ.** — (6000) Համանուն լճին  
վրայ. մեծ վաճառականութիւն ձկանց: Արծաթահանք, պղնձ-  
ահանք և ծծումբ:

**Սար-Շապան.** — Մակեդոնիոյ մէջ. պատուական ծխա-  
խոտ :

**Սդրումնիցա.** — Ջերմուկը ունի:

**Էլպասան.** — Համանուն գետոյն ափանց վրայ երկամե-  
ղինի և պղնձէ գործեաց գործատամբք:

**Սօճիա հինն Սարսիսա.** — (60,000) Պալքանաց մէկ զըլ-

խաւոր անցից վրայ. Տանկաստանի ամուր բաղաբայ մէկը:  
Ծաղկեալ արուեստ ունի: Գործեալ երկամք, խաղախորդու-  
թիւն և զոհարեղէն:

**Սիսօլա.** — (42,000) Դանուբայ վրայ վաճառաշահ բա-  
ղաք և Ֆիլիպէյի նաւահանգիստը: Առևտուր անցիկ ապրանաց  
և արմտեաց:

**Նիֆօլի.** — Բլէվնայի և Լոֆչայի նաւահանգիստը: Վա-  
ճառականութիւն արմտեաց և մետաքսի:

**Ճումաս.** — Մեծ տոնավաճառ ունի:

**Սիլիպոլիա.** — (20,000) Նշանաւոր ամրութեամբքը. վա-  
ճառականութիւն արմտեաց, շինութեան փայտի կայլն:

**Շումլա.** — (30,000) Արուեստական և վաճառաշահ մեծ  
բաղաք: Եւրոպիոյ ամենէն ամուր դրից մէկը: Բազմաթիւ մա-  
նոցք և գործարանք մետաքսի. խաղախորդարան. ձուլածոյք  
պղնձի: Գործարանք կամսայեղինի և Թիթեղի:

**Սամաֆոճ.** — (5000) ձոխ երկամահանք: Սամաքոֆայ  
գործատունք տարին 12 միլիոն հազարակրամ երկամ կը հաս-  
ցընեն գամեղինի, դանակեղինի կայլն:

**Փոնցօլա.** — (25,000) Պուլղարստանի ամենէն գեղեցիկ  
բաղաքը՝ Պալքանաց մօտ. նարտաներկութիւն բամբակէ դեր-  
ձանի և կարմիր մետաքսի: Գործարան խոշոր չուխայի, և շե-  
րամարուծութիւն:

**Վիսին.** — (20,000) Պատերազմական ամուր բաղաք է.  
Մեծ վաճառականութիւն արմտեաց, աղած ձկանց և զոհարե-  
ղինի:

**Ռուսնուզ.** — (30,000) Դանուբ գետոյն վրայ ձիուրճէ-  
վօյի յանդիման (Պուքրէշի նաւահանգիստը): Երկամուղեաւ  
միացած է Վառնայի: Գործարան սէկի և կերպասու, բամբա-  
կեղինի և ասուեղինի կայլն:

**Լարիսսա.** — (30,000) Բենէ գետոյն եզերքը մեծ բաղաք  
Թեսալիոյ մէջ: Բազմաթիւ գործարանք բամբակի, մետաքսի,  
սէկի, ծխախոտոյ: Հօշակաւոր կարմիր ներկ: Կեդրոն ընդար-  
ձակ վաճառականութեան, մասնաւորապէս սննդեան վերաբեր-

եալ նիւթոց այսինքն՝ ցորենոյ, վարսակի, եգիպտացորենոյ ցարւոյ և իւղալից հետոց:

**Թուրքալօս.** — (6000) Լարիսայէ 6 ժամ հեռու պղզտիկ և աղւոր քաղաք մը, հռչակաւոր նուրբ կերպասուց զորժարանօքը:

Ունի նաև բամբակեայ և մետաքսեայ հիւսուածք որ եւրոպական վաճառականութեան մէջ պուրս սը լա կրէս կ'անուանուին :

**Տուրքինա.** — (6000) Ծաղկեալ իր շրջակայքը զտնուող երկամահանաց պատճառաւ, որոնց բերքը իր դարբնոցաց մէջ կը բանուին :

**Լօփ-Քալանքա.** — Սօֆիայի նաւահանգիստը. անցիկ ապրանաց, արմտեաց և մետաքսի վաճառականութիւն:

**Եանքա.** — (40,000) Համանուն լճին վրայ. վաճառաբրուծիւնքն են մանուած բամբակ, բամբակեղէն և ասուեղէն, չուխա, մետաքսեղէն, երկամեղէն, փերեզակաց ապրանք, բացուած երկամ և ձօղ, կաշի, նպար, կան կարասիք, հրագէնք, հասարակ զինիներ, թղթեղէն և այլն:

Արտահանութիւնքն են՝ արմտիք, կտաւատ, ձէթ, աղտոտ և լուացուած բուրդ, անողորկ մորթ, մուշտակ, խոզկաղին, որդան կարմիր, մեղր, մեղրամոմ, ծխախոտ, բամբակ, կուպր, տղրուկ, պտուղ և անասուն, շերասի սերմն և խոշոր հիւսուած:

**Արնիքօփապրօ.** — (8000) Բանուկ վաճառականութիւն արմտեաց:

**Արդա.** — (6000) Համանուն գետոյն վրայ. արտահանութիւնքն են ձէթ, եգիպտացորեն, արմտիք, վարսակ, բուրդ, խոզկաղին, աղած ձուկ, կոզի, պանիր, կտաւատ և այլն:

Վաճառաբրուծիւնքն են Անգղիոյ բոմբակեղէն, երկամ և երկամեղէն, Աւստրիոյ չուխայք:

**Պէրաք.** — (4000) Վիսուսա գետոյն վրայ, ծովէն 48 հազարամէր հեռու, ներքին և արտաքին ծաղկեալ վաճառականութիւն: Ձիթոյ և արմտեաց և միջին Ալպանիոյ ձիու նշանաւոր վաճառականութիւն ունի:

**Շիքսա.** — (30,000) Պոյանա լճին եզերքը Վերին Ալպանիոյ մայրաքաղաքն է: Ներքին քաղաքաց հետ ծաղկեալ առևտուր ունի: Գործարան զինուց: Արտահանութիւն բրդոյ, մորթեղինի, մետաքսեղինի, ձիթոյ և երկրին զինուցն:

Վաճառաբրուծիւնքն են աղկեր, օճառ, եգիպտացորեն, կտաւ, ցորեն, արմտիք և նպար, և այլն:

**Պոսնա սէրայ.** — (70,000) Գործարան զինուց և երկամէ և պղնձեայ անօթից, ասուեղինի և բամբակի և ոսկեղինի. խաղախորդութիւն: Մեծ վաճառականութիւն անցիկ ապրանաց,

Արտահանութիւն արմտեաց, սալրջիլի, եղջիւրաւոր կենդանեաց, խոզի, փայտի, երկամի, մորթոյ, մուշտակի, մեղրամոմոյ, և ասուի:

Վաճառաբրուծիւնքն են բամբակեղէն, հիւսուածք, մետաքսեղէն և փերեզակաց ապրանք:

**Իրաւնիք.** — (8000) Շրջակայքը՝ Սլանիցա գեղը կը զտնուի, ուր հոխ ոսկեհանք կան:

**Մոսսար.** — (10,000) Նարէնդայի վրայ. վաճառականութիւն հասարակ բրդոյ, անողորկ մորթոյ և մեղրամոմոյ:

**Պանքալօփա.** — Օսմանեան Խրուածիստանի մէջ. շերջակայքը երկամահանք և զարբնոցք կան :

§ 12° Ռուսնիս կաւ Միսցեալ Պետրիւնի Ռուսնիոյ

(Վիճակ հարկատու տէրութեան).

Մկւթ. 121,200 □ հզմր. բն. 4,500,000 անձ.

Ռուսնիս անուանակոչութեամբ կը հասկընանք Մոլտաւիա և Վալաքիա գաւառները զոր մենք Ուլան և Պուլցան կը կո-

չենք: Դանուբ գետը այս գաւառաց հարաւակողմը կէս շրջանակ մը կը ձևացընէ և զանոնք բոլորովին կը բաժնէ Տասկաստանէն. հիւսիսակողմանքն ալ Կարպաթեան լեռանց գօտուով ծածկած է:

Վալաքիոյ վանառաշահ քաղաքն են՝

**Պուլքէօ** կամ **Պուլքէտլ**. — (130,000) Վալաքիոյ և միւսանգամայն բոլոր Ռումանիոյ մայրաքաղաքը Տումպակիցայի վրայ (Դանուբայ գետակցաց մէկը): Լէքսիքանի թաղը մասնաւորապէս առևտրոյ պահուած է:

Բարիզ կը զրկէ իրեն շատ զարդու նիւթեր, պահուածանք, նորելուկ ապրանք, կան կարասիք, սննդեան նիւթեր, բանդակ, գիրք են: Պուքրէշ Փորր Բարիզ ևս կը կոչուի բնակչացը քաղցըր բնութեանը և տեսութեանը համար:

**Պրահլա** կամ Խաբայիլա կամ Պրահիլով. — (50,000) Դանուբայ վրայ ամուր քաղաք և մեծ յու ազատ նաւահանգիստ որ 300 տակառաչափով նաւերը կրնայ ընդունիլ. Վալաքիոյ առևտրոյն զլխաւոր վանառատեղին է: Մեծ արտահանութիւն արմտեաց, ճրագւոյ, գինւոյ, ասուի, կտաւտի, մորթոյ, արջառու, քարածիւթոյ, ևն: Տարուէ տարի ամենագրի դրօշակօր 2000 նաւ՝ կը բերեն շաքար, զործեալ ապրանք, երկաթ, բրինձ, ձէթ, չոր պտուղ, ռոմ և Տասկաստանի, Յունաստանի, Գաղղիոյ և Անգղիոյ այլևայլ ապրանք:

Կանոնաւոր երթևեկութիւն Աւստրիական Լլոյտի շոգենաւուց շաքարը երկու անգամ Կոստանդնուպօլսէ՝ Իպրայիլա: Մէսամքրի ընկերութեան շոգենաւուց՝ շաքարը մի անգամ. և միացած է Վիէնայի՝ Դանուբայ ընկերութեան միջոցով:

**Ճուրճէվօ**. — (10,000) Դանուբայ վրայ նաւահանգիստ մէ, ուր երթևեկութիւն կ'ընեն Դանուբայ ընկերութեան շոգենաւը. վանառականութիւն արմտեաց, ևն: Երկամուղեաւ միացած է Պուքրէշի:

Մոլտաւիոյ մէջ՝

**Կալաց**. — (60,000) Դանուբայ վրայ ազատ և բանուկ նաւահանգիստ, որուն արտահանութիւնք են ցորեն, կաշի,

սէկ, ճրագու, շինութեան և կայմի փայտ, փայտէ գամ, բուրդ, աղուճակ, ևն: Կանոնաւոր յարաբերութիւններ ունի Միչերկրականի հետ և Սև ծովու ափանց հետ (Օտէսսա, Մարսիլեա, Կոստանդնուպօլիս, ևն):

Շոգենաւուց կանոնաւոր երթևեկութեամբ միացած է Պէլլրատի՝ Դանուբայ ծամրով. աւստրիական նաւեր և երկամուղիք Մանաստանի կը կապեն զՎալաց:

Վանառականութիւնը մեծաւ մասամբ Յունաց և Անգղիացուց ձեռքն է: Տարուէ տարի 70 միլիոն ֆռանգաց գործ կը տեսնուի:

Նաւարկութեան շարժումն 2000 նաւ է:

§ 15<sup>0</sup> Սէրվիա կամ Սըրպ

(Հարկատու Օսմանեան Պետութեան)

Մկւթ. 41,800 □ հզմդր. բն. 1,200,000 անձ:

Սէրվիա՝ Ռումանիոյ արևմտակողմը կ'լինայ, Դանուբայ և Սաւայի մէջտեղ. արևելակողմանքը Զար Տաղլիի լեռինք կը բարձրանան: Սէրվիա ընդհանրապէս լեռնային երկիր մէ. զլխաւոր հարստութիւնքն են արօտք և անտառք (մանաւանդ մայրիք). և սակայն արջառը սակաւաթիւ է: Շատ խոզ ունի. զորս ամառուան եղանակին անտառաց մէջ կ'արձկեն. զլխաւոր արմտին եգիպտացորենն է, յետոյ ցորենը: Վուշ, կանեփ, սակաւ ինչ բամբակ, ձխախոտ և որթ կը մշակուի. կան նաև երկամահանք, պղնձահանք, սնդիկ, ածխահանք, սակայն գրեթէ ամենն ալ երեսի վրայ անգործ ձգուած են: Առատ տգրուկ կորսացուի, որոնք մասնաւորապէս Գաղղիա կը զրկուին:

Գործեալ ապրանք գրեթէ չգտնուիր, առևտուրն ալ աննշան է: Եւ սակայն Դանուբայ նաւական շարժումը գործուէնութիւն մը տպաւորած է գետափանց վրայ, և

**Պէլկրաս.** — (25,000) որ Դանուբայ և Սաւայի միացման տեղը պետութեան մայրաքաղաքն է՝ մէկ կողմանէ Աւստրիոյ և Արևմտից և ի միւսում Ստորին Դանուբայ՝ և Տանկաստանի մէջտեղ բանուկ մթերանոց մը եղած է:

Աւստրիոյ և բոլոր Եւրոպիոյ գործեալ ապրանք կը մտնեն այս քաղաքը: Մեծ վաճառականութիւն այժու և ոչխարի մորթոյ, կաշոյ, արմտեաց, գիտորի, բրդոյ կայլն:

**Շէկօդիւն.** — (4000) վաճառականութիւն ցորենոյ, ծաղկեալ մշակութիւն որթոյ:

**Սէմէնսրիա.** — (5000) Մորավայի և Դանուբայ միացման տեղը Երկրին երկրորդ քաղաքն է. բանուկ վաճառականութիւն Մորավայի հովտին բերոցը:

**Վալիէվօ.** — (3000) վաճառականութիւն արջառու: Սէրվիոյ զլխաւոր յարաբերութիւնքն Աւստրիոյ, Տանկաստանի և Վալաքիոյ հետ են:

Վաճառաբերութիւնքը 30-35 միլիոն ֆունսնզաց կ'ելլեն. արտահանութիւնքը 25-30 միլիոն. իսկ անցիկ ապրանաց վաճառականութիւնը 5-6 միլիոն ֆունսնզաց:

§ 14° — Մօնղէնեկիւրօ կամ Գարսուսայ

Մկ.Ց. 6600 □ հզմդր. բն. 200,000

Այս փոքր երկիրը Ալպանիոյ և Պոնիոյ մէջտեղ կ'իյնայ՝ և Ադրիականի մօտ. սակայն յամենայնի ապառած լերինք ցցուած ըլլալով չկրնար ծովափանց օգուտը քաղել:

Առևտուրն Աւստրիոյ մէջ Գաղղարոյի միջոցով կը կատարուի: Գլխաւոր հարստութիւնքը արօտը և փայտն են. սակաւ ինչ ցորեն, որթ, կանեփ, ծխախոտ կը մշակուի և շատ սոխ և սխտոր: Շերասք լաւ կը բուծուին: Մայրաքաղաքն է:

**Տէրդիլիւնէ.** — Պզտիկ քաղաք մը, որուն վաճառականութիւնը աննշան է:

§ 15° — Ասիոյ Տանկաստանի վաճառաշահ ֆալսաֆֆ.

**Էնկիւրիւ.** — (50,000) Զաքարիա գետոյն վրայ, համբաւաւոր իր այժու մազի վաճառականութեամբը, մեղրովը և ապուխտովը (բաստրմա):

**Սյվալքի.** — (30,000) Արտահանութիւնձիթոյ, անձափ մեղրամոմոյ, հասարակ մետաքսի. վաճառաբերութիւն շաքարի, խահուէի, չուխայի, բամբակեղինի, երկամեղինի, և փերեզակաց ապրանաց:

**Պալքէֆիւնա.** — (15,000) Պրուսայէ Իզմիր երթալու ճամբուն վրայ. նշանաւոր բամբակի բերօքը. շրջակայից բերքն են բժոժ, զխտոր, խոզկաղին, տորոն, ափիոն և զուճատու փայտ:

**Պիլէնիֆ.** — (7000) վաճառականութիւն բժոժի և մետաքսի:

**Պօլու.** — (15000) Պօլիս գացող կարաւանք աստի կ'անցնին: **Պրուսա հինն Պիքիցի.** — (60,000) Արուեստական քաղաք Ողիմպոս կամ Քէշիշ տաղը լերան ստորոտը. համբաւաւոր և յանախեալ ծծմբային բաղանիք:

Վաճառականութիւն անողորկ մետաքսի, բժոժի և մանուած մետաքսի Գաղղիական ոճով մանարաններ (տես 337 երէս):

Գործարան սեղանի լաթի և բամբակեայ թաւշոյ. մետաքսի հիւսոցներ. և համբաւաւոր գինւոյ այգեստաններ:

**Էսկի-Շէիքի** հինն Sorիլէա. — (12,000) Պրուսայի հարաւային-արևելեան կողմը փոքրիկ քաղաք մ'է, Քէօձահիայէ 60 հազարամէղր հեռու. նշանաւոր է ծովափրփուրը, որ մեծաւ մասամբ Վիէննա կ'երթայ Կոստանդնուպօլսոյ և կամ Զմիւռնիոյ ճամբով:

**Գարաւիսար** կամ Ա.Քիօն-Գարաիսար. — (60,000) Մեծ վաճառահանութիւն ափիոնի: Բազմաթիւ գործարանք խոշոր գորգերու և թաղեաց:

Երկաթի բրոմատի հանք, որ անզղիացի ընկերութեան մը

ձեռքն է, ծովափրփրոյ հանք որ աւստրիական ընկերութեան մը ձեռքն է. վաճառականութիւն տգրուկի:

**Քէօքսիա.** — (50,000) Յարզի յախճապակոյ գործարանք. վաճառականութիւն ցորենոյ, աղած մորձոյ, ափիոնի, ասուի, անօթեղինի և այլն:

**Գօնիա.** — (25,000) Մեծ վաճառականութիւն ցորենոյ, հասարակ բրդոյ: Գործարան ընտիր կապերտի:

Բերքն են առատ ալածար, կնճիթ և կտաւատ: Արտահանութիւն մորձոյ և եղջեր:

**Թարսուս.** — (30,000) Նաւահանգիստն է Մէրսին և Գաղղիոյ հետ շարունակաւ տրական յարաբերութիւններ ունի:

**Թօզար.** — (100,000) Գրզըլ-ըրմագ գետոյն ճիւղերէն մէկուն վրայ. բազմաթիւ գործարանք կտաւու, մետաքսեղինի, բամբակեղինի, Զմիւռնիոյ անուանուած կապերտոյց և պղնձէ անօթից:

Թօզամ կարուաններու կեցրոնական կէտն է և Զմիւռնիոյ ապրանաց մթերանոցը: Ճոխ պղնձահանք:

**Գայսէրի.** — Ամասիոյ հարաւային-արեւմտեան կողմը. վաճառականութիւն սէկի. անուանի է ապուխտը:

**Կիւզէլ-Հիսար** կամ Այսըն (30,000) և **Ոււսաբ.** (28,000) Գործարանք գորգոյ, կտաւու և բամբակի:

**Աւանա.** — (15,000) Սիյհունի բերնէն քիչ հեռու. մեծ արտահանութիւն բամբակի, ասուի և կնճի:

**Էրզրում** կամ Կարին. — (80,000) Եփրատայ բլիսման աղբիւրէն 2 ժամ հեռու. տեղի հռչակաւոր զինուց շինութեան և Տրապիզոնի, Տարսուսի և Թիֆլիզի մէջտեղ վաճառականութեան մթերանոց: Այս քաղքիս մէջ տարին 440 միլիոն դահեկանաց առևտուր կ'ըլլայ:

Արտահանութիւնքն են չամիչ, պղինձ, անողորկ մետաքս, նուրբ ասուիք և Հայաստանի ու Մուսուլի այժու մագ, առական Հայաստանէ եկող ոչխարի մորթ, հանդերձ իրենց մազերուն. եզան և զոմէշի մորթք, դեղին մեղրամոմ, Գիւրտիստանի կանաչ տգրուկ, և գխտոր:

Մտնող ապրանքն են զլխաւորապէս՝ գաղղիական շաքար, անգղիական բամբակեղէնք, խահուէ, Զուիցերայի, Գերմանիոյ և Լիօնի մետաքսեղէնք, զերմանական չուխա և այլն: Շրջակայքը մետաքսային մագերով ոչխարներ և այժեր կը դարմանուին և արծաթահանք կը բանուին:

**Կիւմիւլեյանէ.** — Թրապուզանի մօտ. ճոխ պղնձահանք:

**Մալաթիա.** — Անուանի է ափիոնը և գազի խէժը:

**Շապան-Գարաիսար.** — Արծաթախառն կապարի հանք:

**Սօզկար.** — Անուանի է բուրդը:

**Ս.մասիս.** — Եշիլ-ըրմագի մօտ՝ Թօզամայ հիւսիսային-արևմտեան կողմը: — Բաղանիք: — Մետաքս, տորոն և զինի: Ասոր մօտ է Հաճի-Բէյոյիւ, որ արծաթախառն կապարի ճոխ հանք ունի:

**Տիարպէֆիւր** կամ Ամիդ. — (50,000) Շատ ինկած է առջի պայծառութենէն և սակայն դարձեալ վաճառաշահ քաղաք է և կարաւանաց միջոցով միացած է Պաղատա և Հալէպ քաղաքաց:

Գործարան սէկի, անօթեղինի, պղնձեղինի, մետաքսեղինի և բամբակեղինի:

**Պաղեսաս** հինն Բաբելոն. — (80,000) Տիգրիսի ափանց վրայ, Միջագետաց Պարսկաստանի, Թիւրքիստանի, Արաբիոյ և Հնդկաստանի հետ ունեցած վաճառականութեան կեցրոնը: Գործարան Հնդկաստանի պողպատով շինուած դանակեղինի, որ գերազանց է բան գիւմասիկոսինը:

**Պարսա.** — (15,000) Շաղ-էլ-Արապի աջ ափանց վրայ ուր 500 տակառաչափով նաւեր կրնան երթեկուցութիւն ընել: Արտահանութիւն արմաւի, վարդի իւրոյ, ճիւղ և այլն: Այս նաւահանգստիս մէջ ընդհանրապէս անգղիացի նաւեր կը տեսնուին, և անգղիական շոգենաւուց զիժ մը Պարսան կը միացնէ Պոմպայի, հանդպելով Ապուշէհր, Մաշքաթ և Գարաշի:

**Տիմիւ-էլ-Շամ** կամ Շամ կամ Գամասկոս. — (200,000) Պէյրուձայ հետ միատեղ Ասորոց ամենէն վաճառաշահ քա-

ղաքն է: Հոս կը պատրաստեն հիւսուածք և կերպասք (տամակա), որ հռչակաւոր են բոլոր Արևելից մէջ. հիւսուած մետաքս, արևելից մէջ մեծ յարգ ունեցող վերարկուներ (մանդո), կապերտներ, կօշիկք, ծխախոտ, նարկիլէ, ոգիք, անուշեղէն, բամբակեղէն ևայլն:

Շամայ անուանուած հռչակաւոր զէնքը Շամայ չեն, հապա Խորասան կը շինուին:

Պէյրուճայ միջոցով մեծ արտահանումիւն ունի: Տեղական առևտուրն Մէքքէ գացող և սուրբ բաղքէն դարձող 40-50,000 ուխտաւորաց տարեկան անցըովը կը սնանի: Զանազան կանոնաւոր կարաւաններ Շամը Պաղտստայ և Տասկաստանի մեծամեծ բաղաքաց կը միացընեն:

**Մուսուլ.** — (32,000) Վաճառաշահ և արուեստական:մեծ բաղաք Տիգրիսի աջ ափանց վրայ և Նինուէյի աւերակաց մօտ: Արտահանումիւն ասուի և այժու մազի Եւրոպիոյ՝ համար:

Գործարան ասուեայ. բամբակեայ և բաշեայ հիւսուածոց. կան նաև բազմամիւ խաղախորդարանք, նարօտաներկումիւնք և կերպասուց վրայ տպարանք: Գործարան ղեղին սէկի:

**Հալէպ.** — (80,000) Հիւսիսային Ասորեոց, Միջագետաց և Իրագ-Արապիյի առևտրոյն մեկրանոցը: Այս բաղաքը Լաթաքիէյի և Իսքէնտէրունի միջոցով կ'ընդունի անգղիական և զաղղիական ապրանք, հիւսուածք, երկամեղէն, խեցեղէն, երկամ և զաղթականաց նպար:

Արտահանումիւնքն են ասր, մետաքս, գխտոր, մեղրամոմ, կնճիթ, ուղտոյ մազ:

Գլխաւոր արուեստն է նարօտաներկումիւն:

**Ս.Սքափիէ** կամ Սնիոփ. — (15,000) Առջի պայծառու-ծիւնն կորսնցուցած է:

**Փամիլէ, Համա, Հէմա.** — Երբքն ալ Աազի զետոյն վրայ կանգնուած ցորենոյ բարեւետ երկրի մը մէջ:

**Երուսաղէմ.** — Աւերակօք ծածկեալ՝ տխուր և յիշատակաց բաղաք: Արուեստքը յետամնաց են: Եւ սակայն կը պատ-

րաստուիւն առատապէս օճառ և ուխտաւորաց համար չերմեանդական նիւթեր:

Կան նաև այլևայլ յիշատակելի բաղաքք զորս մեր զրբոյկը չկրնար բովանդակել:

§ 16° — Կղզիք.

**Կիրիս** կամ Կրէսէ որ և **Պանօիա**. Միջերկրական ծովուն մէջ.— Մակերևոյթն է 280 հազարամէղր երկայնութեամբ և 80 լայնք: Բնակիչքը 170,000 անձ են. ունի պատուական և նաև հասարակ զինիներ, զաֆրան, մեղր, բուրդ, կիտրոն, նարինջ, շագանակ, ցորեն, հաճար, վարսակ, գարի և կտաւատ: Բազմամիւ գործարանք օճառի. երկու ամխահանք: Կընդունի Գաղղիայէ օշնան, խեցեղէն, անօթեղէն, կաշի, չոր և աղած ձկունք և կը ղրկէ Գաղղիոյ՝ ձէթ, բուրդ, կտաւատ, սպունգ, ևայլն: — Գլխաւոր բաղաքքն են՝

**Պանօիա.** — (20,000) Կղզւոյն մայրաքաղաքը. Վենետկեցոց տիրապետութեան ժամանակին հետ բաղապատելով շատ ինկած բաղաք է: Փոքրիկ նաւահանգիստ: Բազմամիւ գործարանք օճառի. վաճառականութիւն ձիթոյ, օճառի, չամչի և եղջիւրենոյ:

**Պանօէա.** — Գանտիայէ 96 հազարամէղր հեռու փոքր նաւահանգիստ. 5 հազարամէղր հեռուն Սուտայէ ձևացեալ հանգրուանը կը գտնուի, որ ամենէն ծանր նաւերը ևս կ'ընդունի: Վաճառականութիւն ձիթոյ, օճառի, ցորենոյ, գարւոյ, բամբակեղինի, հնդիկ կտաւու, չուխայի, մետաքսեղինի, ևն: Բազմամիւ գործարանք օճառի:

**Ռէքիսօ.** — (8000) Պզտիկ նաւահանգիստ. վաճառականութիւն ձիթոյ, օճառի և եղջիւրենոյ ևայլն: —

**Սղանօիա.** — Գանտիոյ հիւսիսային-արևելեան կողմը կղզեակ մը՝ նշանաւոր մարմարիտնի և ածելոյ բարի բարահատօքը: —

**Սուսա.** — Աղահանօքը նշանաւոր կղզեակ մը :

**ԹԷՃԵՏՈՒ** կամ Պօհնա ասաւր. — Անուանի է զինին: —

**Միֆիլի** հինն Աւայոս (1). — Բանուկ վաճառականու-  
թեամբը և բարեբերութեամբը նշանաւոր կղզի մը 90,000  
բնակչօք, որոնց  $\frac{3}{4}$  քը Յոյն են:

Երկրին հարստութիւնքն են խոզկաղին, բամբակ, բուրդ,  
կնճիթ, բակլա, ցորեն, զինի, պատուական օղի որ Սաքզ ա-  
տասըյինին կը հաւասարի, գարի, պտուղ, քիչ մը բժոժ և գըլ-  
խաւորապէս ձիթոյ իւղ (որոյ բերքը տարին 250,000 կենդի-  
նարը կ'անցնի որուն  $\frac{1}{3}$  քը կղզւոյն մէջ կ'սպառուի և մնացեալը  
Կոստանդնուպօլիս, Իզմիր, Դրիէսդ, Մարսիլիա, Լոնտրա և  
Սև ծով կ'երթայ):

Վաճառաբերութիւնքն են կաշի, երկամեղէն, գաղթականաց  
նպար ևայլն: Գլխաւոր բաղաքն է՝

**Միֆիլի.** — (10,000) Ծաղկեալ, որուն զլխաւոր արուեստն  
օճառ է: Կղզւոյն մէջ օճառի վաճառն գործարան կայ, որոնց  
բերքը Կիրիտի օճառին թէև չհաւասարիր, սակայն շատ ստո-  
րին ալ չէ. օճառի արտադրութիւնքը այս վերջի երեք տա-  
րիներուն իւրաքանչիւրին մէջ 80-100 հազար կենդինար էր: —

**Ռօսօս** կամ Ռասօս կղզին Անատօլուի ափանց մօտ է  
25,000 բնակչօք, աղէկ նաւահանդիստ մ'ունի, սակայն անցքը  
միայն 3 մէր խորութիւն ունի, և ձմեռուան եղանակին նաւա-  
հանգիստը ղժուարամտոյց է: Ռասօս՝ ծովափանց և մերձե-  
կայ կղզեաց այլևայլ ապրանաց մթերանոցն է. Ասորիք գա-  
ցող գաղղիական, աստրիական, ռուս և օսմանեան շոգենա-  
ուց հանգստատեղի է:

Կղզւոյն բերքը և արտահանութիւնքն են բժոժ, չոր պտուղք,  
հասուն պտուղք, բանջարեղէն, քիչ մը ձէթ և զինի:

Վաճառաբերութիւնքն են գաղթականաց նպար, գործեալ  
բամբակ, Անգղիոյ բամբակեղէնք, գերմանական և գաղղիական

չուխա, կաշի, փերեզակաց ապրանք, գերմանական և անգ-  
ղիական դանակեղէնք և երկամեղէնք:

Արտահանութիւնքը մասնաւորապէս ծովափանց և կղզեաց  
կ'երթան և են՝ արմտիք, կնճիթ, տախտակ, մեղրամոմ, տղրուկ  
և սպունգ:

**Սիւմի.** — Ռոսօսի մօտ կղզի մը, վաճառատեղի Սբօրատ-  
նէրու սպնգոց. (200 մակոյկ որս): —

**Սամսու** կամ Սուսամ ասաւր. — Երկիրը առատ ցորեն,  
բամբակ, նուռ, ազնիւ զինի, մետաքս և նուշ կը հասցնէ: —

**Շիօ** կամ Սագրզ. — (14,000) Համանուն կղզւոյն մայրա-  
քաղաքը. քաղքին հարաւակողմը և գրեթէ 1 մղոն տեղ հեռու  
Գամբոս անուևով դաշտ մը կայ, որուն բերքն միմիայն նարինջ  
և կիտրոն են: Արտահանութիւն մազտաքէյի, զինւոյ կայլն: —

**Պըպրզ** կամ Կիպրոս 150,000 բնակչօք՝ Միջերկրականի  
ամենէն մեծ և բարեբեր կղզեաց մէկը. բերքն են՝ զինի, ձէթ,  
եղջիւրենի, ցորեն, գարի, մետաքս, բամբակ, սպունգ, օղի և  
արմտիք:

Գլխաւոր բաղաքն են՝

**Նիքոսիա.** — (20,000) Կղզւոյն մայրաքաղաքը. գործա-  
րան հնդիկ կտաւու և մետաքսեայ նուրբ կերպասուց:

**Լարնաքա.** — (12,000) Կղզւոյն հարաւային-արևելեան  
ծովափանց վրայ աղէկ հանգրուան. աղահանք:

Արտահանութիւնքն են անտորկ մետաքս, բոլոր Տանկաս-  
տանի ամենէն ընտիր ու սպիտակ բամբակը, տարին 4500-  
8000 հակ. հակը 112 հազարակրամ կըռելով. բուրդ, զինի,  
եղջիւրենի, իւղ, չոր պտուղ, իւրալից պտուղք, ոչխարի, այծու,  
գառնուկի և կովու մորթ, աղ, օղի, Նիքոսիոյ հնդիկ կտաւ,  
և այլն:

Վաճառաբերութիւնքն են՝ բամբակեղէն, չուխա, շաքար,  
խահուէ, խեցեղէն, ապակեղէն, չոր և աղած ձուկ, ասուեղէն,  
մանուած բամբակ, արմտիք, ալիւր, ծխախոտ, բացուած կա-  
պար, երկամ, երկամեղէն, բրինձ, պղինձ, և այլն:

**Լիմասօլ** կամ Լիմիսսօ. — (7000) Կղզւոյն հարաւային-

(1) Dr. Bargigli. L'île de Mytilène.

արևելեան փանց վրայ նաւահանգիստ մը, ուսկից արտահանուածեան կ'երթան կղզւոյն ամենապատուական զինիներ: — Գլխաւոր բերքն են՝ զինի, ձէթ, պանիր, օղի, աղ և կենդանիք: Կիւրոս կղզին տարին 400,000 հարիւրալիղը ցորեն և 600,000 հարիւրալիղը գարի կը հասցնէ: Բամբակը Վենետիկեաց ժամանակն անգամ կղզւոյն զլխաւոր բերքը մէկն էր և բնակիչք զայն ոսկերոյս կը կոչէին, անկից հանած մեծամեծ շահերուն համար:

§ 8<sup>o</sup> — Դրամք, չափք եւ կշիռք.

Ոսկեդրամք

Դահեկան. — Տանկական կշիռք. — Գաղղիական կշիռք

յարգ 0,916,50	}	500 = տիրեւ 11 զրամ 0 1/2 կրամ 36,682
		250 » 5 » 10 » 18,041
		100 » 2 » 0 1/2 » 7,216
		50 » 1 » 0 1/4 » 3,608
		25 » 0 » 0 1/8 » 1,804

Արծաթադրամք

յարգ 0,850	}	դհ. 20 տրեւ 7 զրամ 08 կրամ 24,055
		10 » 5 » 12 » 12,027
		5 » 1 » 14 » 6,013
		2 » 0 » 12 » 2,405
		1 » 0 » 06 » 1,202
		20 փրյ = 1/2 » 0 » 03 » 0,604

Պղնձեդրամք

Փարս 40 = 1 զհկն. տրեւ 6 զրամ 10,21 1/3 կրամ 21,382
» 20 » 3 » 05,10 2/3 » 10,691
» 10 » 1 » 10,21 2/3 » 5,345
» 5 » 0 » 13,10 1/2 » 2,672
» 1 » 0 » 02,21 1/4 » 0,534

Ե Ր Կ Ա Յ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Չ Ա Փ Ք

1<sup>o</sup> Ձիրա'ի միմարի կամ ճարտարապետական կանգուն, ունի սաղ փարմագ 24. սաղ փարմագը սաղըր փարմագ կամ հաղղ 42 և հաղղը նօրդա 12. — Ուստի՝

Ձիրա'ի միմարի = 24	288	3456	=	մէդր	0,758
բարմագ	12	144	=	»	0,031
հաղղ	12		=	»	0,002,6
		նօրդա	=	»	0,000,2

2<sup>o</sup> Չօհանը արշընը կամ կանգուն սաւեղինաց, ունի ուուպ կամ բառորդ 8 և ոուպը կիրան 2. — Ուստի՝

Չօհանը արշընը = 8	16		=	մէդր	0,680
	ոուպ	2	=	»	0,085
		կիրան	=	»	0,042,5

3<sup>o</sup> Էնտագէ կամ կանգուն կերպասեղինաց ունի ոուպ 8 և ոուպը կիրան 2.

Էնտագէ = 8	16		=	մէդր	0,658
	ոուպ	2	=	»	0,082,3
		կիրան	=	»	0,041,2

Մ Ա Կ Ե Ր Ե Ւ Ո Ւ Թ Ա Կ Ա Ն Չ Ա Փ Ք

1<sup>o</sup> Քառակուսի զիրա ունի քառակուսի բարմագ 576, և քառակուսի հաղղ 829 1/4 = □ մ. 0,57,45,64

2<sup>o</sup> Քառակուսի արշըն ունի քառակուսի ոուպ 64 և քառակուսի կիրան 256 = □ մ. 0,46,24

3<sup>o</sup> Քառակուսի Էնտագէ ունի քառակուսի ոուպ 64 և քառակուսի կիրան 256 = □ մ. 0,42,25

4<sup>o</sup> Տէօնիւմ կամ արտավար ունի քառակուսի զիրա 1600 = □ մ. 919,30

Ը Ն Դ Ո Ւ Ն Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Չ Ա Փ Ք

1<sup>o</sup> Հեղանիւթոց՝ խորանարդ զիրա ունի խորանարդ բարմագ 1382 1/2 և խորնրդ հաղղ 23,887,872 = խորնրդ մ. 0,435,519,512

20 Արժուեաց և ընդեղինաց քիլէ կամ բոռ ունի բուծու 8.  
 Բիլէ 8 = լիդր 37  
 բուծու » 4,625

Կ Շ Ի Ռ Ք

Օրքա ունի տիրոնէմ 400 և տիրոնէմ ունի գրած 16. —  
 Օրքա = տիրոնէմ 400 = գրած 6400 հզրկրմ. 1,282,945  
 » = » 16 = կրամ 3,207, 36  
 Գրած = » 0,000, 20  
 Ձէքի ունի քանձար 4, քանձարը ունի օրքա 44 և լտարա 100. —  
 Ձէքի (176 օրքա) 4 176 400 = հզկրմ. 225,798  
 քանձար 44 100 = » 056,449  
 օրքա լտարա

Այս չափերէ և կշիռքէ զատ կան ուրիշ զանազաններ որ Չմիւռնիա, Դամասկոս, Աքքեա, Կիպրոս և Կրեաէ կը գործածուին, սակայն աւելորդ կը սեպենք զանոնք հոս դասելը: Մանաւանդ թէ Կայսերական հրամանագիր մը մեղրական չափք և կշիռքը գործածելը հրամայած է 1869 տարւոյն Սեպտեմբերի 14/26 էն ի վեր և այս օրէնքը ի գործ պիտի դրուէր 1871 տարւոյն Մարտի 1/13 էն սկսելով:

Տէրուժիւնը մէղրական դրուծեան հետեւելով իր չափք և կշիռքը միւռնոյն օրինակով չափած է և իւրաքանչիւր չափին զանազան անուններ տուած է զորս պէտք է գիտնալ.

Ուստի փոքր պատկերացոյցով մը մէղրական չափուց համապատասխանող անունները հետեւեալ երեսին մէջ դիմաց գիմաց ղենքը :

Յ Ո Ւ Յ Ա Կ Մ Է Գ Ր Ա Կ Ա Ն Չ Ա Փ Ո Ւ Յ Ե Ի Կ Շ Ռ Ո Յ

Տուեալ ամուսն

ՔՈՒՂ ԿԱՄ ԵՐԱՍՏՆՈՒՔԻՆԻՅ  
 Գրած Ի աշարի  
 Մի մ աշարի  
 Քերտի աշարի  
 Եզրի գիրա  
 Աշարի գիրա  
 Միշարի գիրա

ԱՍՔ ԿԱՄ ՄԱԿԵՆՆՈՅՑ  
 Մուրազպահ աշարի  
 ձէրիպ

ՀԱՃՄ ԿԱՄ ԸՆԳՈՒՆԱԿՈՒԹՈՒՆ  
 Էջէք  
 Օնուց  
 Քիւնի աշարի  
 Զարիք

Մէղր կը ներկայացնէ մերձաւորական երկրային միջոցի քաւորդին  
 1,100,000,000 մուղ կամ բնուէ հասարակագործ միջոցը որ լաւ է Եւրոպիոյ շրջանակը երկու բնուներ անցնելով և միջոցի մը ուղղութեամբ 40,000,000 մէղր է:

400 մէղր կամ անն մէկ կողմէ տանն մէղր ունեցող քաւորու մը  
 10000 » կամ 400 մէղր անն մէկ կողմանէ քաւորու մը մտերմութիւնը

1 կորանար տանորդակէր կամ անն մէկ կողմէ 1 տանորդակէր տունեցող խորանարդ մը  
 10 մէղր  
 100 մէղր  
 110 մէղր

Արժէք

Մէղր կը ներկայացնէ մերձաւորական երկրային միջոցի քաւորդին  
 1,100,000,000 մուղ կամ բնուէ հասարակագործ միջոցը որ լաւ է Եւրոպիոյ շրջանակը երկու բնուներ անցնելով և միջոցի մը ուղղութեամբ 40,000,000 մէղր է:

400 մէղր կամ անն մէկ կողմէ տանն մէղր ունեցող քաւորու մը  
 10000 » կամ 400 մէղր անն մէկ կողմանէ քաւորու մը մտերմութիւնը

1 կորանար տանորդակէր կամ անն մէկ կողմէ 1 տանորդակէր տունեցող խորանարդ մը  
 10 մէղր  
 100 մէղր  
 110 մէղր

Կրան Օրքանոց հանած 1 խորանարդ հարիւրողակէր ջրոյ ծանրութիւնն է, քաւորութեան մէջ կրուած, և որուն խտութիւնն է անդիլիստ շերտաշափին 40—45 մէջ

Կրան Օրքանոց հանած 1 խորանարդ հարիւրողակէր ջրոյ ծանրութիւնն է, քաւորութեան մէջ կրուած, և որուն խտութիւնն է անդիլիստ շերտաշափին 40—45 մէջ

Կրան Օրքանոց հանած 1 խորանարդ հարիւրողակէր ջրոյ ծանրութիւնն է, քաւորութեան մէջ կրուած, և որուն խտութիւնն է անդիլիստ շերտաշափին 40—45 մէջ

Տաճկական ամենայն կշիռը բաղդատուեցան ի Բարիզ յամին 1847, գաղղիական միօրինակ կշռոյն հետ Պ.Տըլէօյլի ձեռօք, որն որ Կոստանդնուպօլսոյ փողերանոցին մէջ զետեղուած լուսնակիէ միօրինակ կշիռն շինեց:

Յամին 1841 Դեկտեմբեր 28 ին Օսմանեան Պետութեան կաճօք, երկայնութեան չափը բաղդատուեցան ի Բարիզ լուսնուկիէ գաղղիական միօրինակ մէղրին հետ, հրամանաւ երկրագործութեան և առևտրոյ պաշտօնակալին և ի ձեռն Բիէր Անժուան Քիւչ անուն հաշուեզննիչին:

Ընթերցողաց զիրութեան համար հետեւեալ պատկերացուցով Օսմանեան կշռոց և չափուց արժէքը զրինք ընդ բաղդատութեամբ Գաղղիական չափուց և կշռոց :



**ՄԷԿՐԱԿԱՆ ԶԱՓՈՒՑ ԱՐՃԻՔԸ ՕՍՄԱՆՆԱՆ ԶԱՓՈՒՑ ԲԱՂԴԱՏՈՒԹՆԱԾԸ**

Մ Է Կ Ր Ա Կ Ա Ն Զ Ա Փ Ք		ՕՍՄԱՆՆԱՆ ԶԱՓՔ	
Մեր	10	4000	Ձեռք 4,319
Ձեռք առնել	Տառադրություններ	100 10 10	Ձեռք Բր. Բր. Գր. Գր. 1, 7- 7 - 11
Մեր	Հանձնարարություններ	Հանձնարարություններ	Արձաձեռք 1, 7, 5
Մեր	.....	.....	Ինքնուրույն 1-8, 6
Մեր	.....	.....	.....
<input type="checkbox"/> Մեր	100 <input type="checkbox"/> Տառադր	10,000 400 <input type="checkbox"/> Հանձնարար	<input type="checkbox"/> Ձեռք 4,74,05
Վարձավճարներ	.....	.....	<input type="checkbox"/> Արձաձեռք 2,16,26
.....			
Վարձավճարներ	.....	.....	.....
Հանձնարարություն (հետև)	100 էսև	10,700 <input type="checkbox"/> Մ.	Տեղիում 10,877,81
Արձաձեռք (համարային առնել)	.....	100 <input type="checkbox"/> Մեր	0,108,78
Ինքնուրույններ	1000 Ինք. տառադր	1,000,000 1,000,000 1,000	Ինք. վեր 2,296,108
Հանձնարարություններ	10 Տառադրներ	100   1000 10   100 1000   10	Վեր 2,70,3
Լիք	(Էսևներ) Տառադրներ (պարֆ)	.....	0,037,05
Մերձավորություն (10 էսևներ)	1000	1,000,000	Վեր 17,714,92
Կենտրոն	100	100,000	0+ա 779
Հանձնարար	Հանձնարար	1000	Տեղիում 311 -
Կրթ	Կրթ	Կրթ	Վեր 4,988,5





85

2013

« Ազգային գրադարան



NL0045744

Բ-41

